



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ОПИСЬ КОПИЙ РУССКОЙ КЛАССИКИ
БИБЛИОТЕКА РУССКОЙ КЛАССИКИ

А.Н. Толстой

ВОЙНА
И
МИР

В ЧЕТЫРЕХ ТОМАХ



ТОМ
ПЕРВЫЙ

Перевод
Степана Зорьяна

Լ. Ա. Մալուխյ

ՊԱՏԵՐԱԶՍ

ԵՎ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

ՉՈՐՍ ԿԱՏՈՐՈՎ



ԿԱՏՈՐ
ԱՌԱՋՐՆ

Թարգմանաբարձր
Արեֆան Զորյան

ԵՐԲ ՆՈՐԻՑ ԿԱՐԳՈՒՄ ԵՍ «ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ
ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ»...

S 70301 (911) 242 75 «Տ»
701 (01) 74

Առաջաբանը՝ Լևոն Մկրտչյանի

«Պատերազմ և խաղաղություն» թվով
կարգալուց հետո ձեռք չի՝ թվում,
արդյոք, որ փոխվում է մարզու
աշքերի գույնը, նույնիսկ շուրթ
թերի ձևը: Գրքերը վերափո-
խում են մարդու օրգանիզմը, այո,
փոխում նրա արյունը, նրա արտա-
քինը....

ԿՈՌԵՅՑ ԶՈՒԿՈՎՍԿԻ

1

Լև Տոլստոյը «Պատերազմ և խաղաղություն» վեպի վերջաբանում, խոսելով տպագրության տարածման մասին, այն համարում է «տգիտության հզորագույն զինք»: Առաջին հայացքից Տոլստոյի՝ տարօրինակ թվացող միտքը պարզ է ու այժմեական. տգիտ ու անարժան գրքերը (որպիսիք ոչ մի գրիչ չէր ընդօրինակի) տպագրության շնորհիվ հազարավոր օրինակներով հայտնվում են հրապարակի վրա:

Հենց այստեղ՝ վերջաբանում էլ Տոլստոյը նշում է, որ եթե եվրոպական պատերազմների «նպատակը գաղափարների տարածումը լիներ, ապա այդ բանը տպագրությունը շատ ավելի լավ կկատարեր, քան զինվորները»:

Տոլստոյի վերաբերմունքը տպագրության նկատմամբ չէ, որ երկակի էր: Նրա վերաբերմունքը երկակի էր գրվող և տպագրվող գրքերի նկատմամբ:

«Պատերազմ և խաղաղություն» ըստ էության բանավեճ է, բանավեճ պատմաբանների և 1812 թվականի պատմական դարաշրջանի մասին գրած նրանց գրքերի դեմ, որ կարդում էին Տոլստոյի ժամանակակիցները:

Տոլստոյը համամիտ չէր և չէր էլ կարող համամիտ լինել իր ժամանակակից պատմաբանների շատ դրույթներին. «Մեր չկա և պետք էլ չէ, ասում են: Դեռ ավելին, պետք է ապացուցել առաջընթացը, ցույց տալ, որ առաջ ամեն ինչ ավելի վատ է եղել»:

Տոլստոյը «վերականգնեց ժամանակը այն պայմանները, որոնց մեջ կատարվել էին բոլոր անցքերը», վերականգնեց ճշմարտությունը, որ աղափարվել էր ժամանակի հայտնի պատմաբանների աշխատություններում, որոնք դարաշրջանի ոգին բացատրում էին առանձին անհատ-հերոսների բնավորությունը: Նոր ձևով նկարագրվեց ոչ միայն հայտնի դարաշրջանը (գեղարվեստական ստեղծագործության համար դա քիչ կլիներ): Ցույց տրվեց մարդը՝ ժամանակի մեջ, մարդու կախումը ժամանակից, ինչպես ժողովուրդն է ասում՝ «...նորա համար, որ մարդս էլ չգիտէ, իր ժամանակը, ինչպես որ ձուկերը բռնը-»

© «Հայաստան» հրատարակչություն,
բարգմանված է հայերեն, 1975

վում են շար ուղակնով, եւ ինչպէս որ թռչունները բռնվում են ծուղակի մէջ՝ նրանց նման էլ բռնվում են մարդկանց սրդիները որդալթի մէջ մի շար ժամանակում, երբ լանկարծ ընկնում է նորանց վերայ»:

Պատմաբանները չէին հասկանում, թե ինչն էր տանջում բիրլիական փիւլիսոփային: Տոլստոյն էլ չէր հասկանում այդ պատմաբաններին:

Մարդը շփոթ էր ժամանակը ... Տոլստոյը տարված էր իր ժամանակը և իր վեպի հերոսների ժամանակը ճանաչելու գաղափարով: Անհրաժեշտ էր բացահայտել մարդուն ժամանակի մեջ: Այն էակը, որն իր վրա չի կրում աշխարհի ազդեցութիւնները, ժամանակից դուրս է և պատճառները կախում չունի, նա արդեն մարդ չէ՞, — գրում էր Տոլստոյը, գեղարվեստական պատումն ընդհատելով գիտական փաստարկներով, պատմութեան և պատմաբանների տխուր մասին առաջ քաշած գիտական թեզերով:

Տոլստոյը որոշ հայտնի անձանց ընավորութիւնն ու ճակատագիրը բացատրում էր ժամանակի իրադարձութիւններով: Վերնելով բուն իրադարձութիւնները, և թե որպիսի կապ են ունեցել պատմական անձինք մասսաների հետ, մենք տեսանք, որ պատմական անձինք և նրանց հրամանները կախման մեջ են տվլալ իրադարձութիւնից: Տոլստոյը ցույց տվեց, որ այսպէս կոչված, մյուսները վրա ունեցած իշխանութիւնը... իր իսկական նշանակութեամբ միայն ամենամեծ կախումն է նրանցից»:

Նապոլեոնը կախում ունի այն մարդկանցից, որոնց վրա նա իշխում էր: Տոլստոյի այդ միտքը սրված ու չափազանցված է (աչ միայն Նապոլեոնի վերաբերմամբ): Թերևս կարելի էր ավելի զգուշ տրտահայտվել, ասել, որ Նապոլեոնն ավելի կախում ունի իր ենթականերից, քան նրանք՝ Նապոլեոնից: Սակայն այսպիսի զգուշութիւնը հատուկ չէ Տոլստոյին, այն հակասում է տոլստոյական անկեղծութեանն ու անզիջողականութեանը:



«Մենքից ամեն մեկը, եթե ոչ ավելի, համենայն դեպս ոչ պակաս մարդ է, քան մեծն Նապոլեոնը», — նշում էր Տոլստոյը: Տոլստոյի համար Նապոլեոնը հերոս չէր, քանի որ հերոսի համբավ ունի և կարծում էր, թե վճռում է մարդկանց և ժողովուրդների ճակատագրերը: Այդպէս շատերն էին մտածում: 1812 թվականի հունիսին Ալեքսանդր Առաջինը Նապոլեոնին գրում էր. «Ճեղք մեծութիւնը տակավին հնարավորութիւն ունի մարդկութիւնն ազատելու նոր պատերազմի աղետներից»: Սակայն Տոլստոյը, հավատարիմ մնալով իր ըմբռնմանը (պատմական իրադարձութիւնների մեջ պատմական անձանց դերն աննշան է), պնդում էր. «Նապոլեոնն իր գործունեութեան ամբողջ ժամանակաշրջանում նման է այն երեխային, որը կառնթի ներսը կապված թելերից բռնած, երևակայում է, թե ինքն է վարում: Տոլստոյն է՛լ ավելի մեծ ընդհանրացումներ է կատարում. «Պատմութեան օրինքներն ուսումնասիրելու համար մենք պետք է բոլորովին փոխենք քննութեան առարկան, հանդիստ թողենք թագավորներին, մինիստրներին և գեներալներին և

ուսումնասիրենք այն միտեսակ, անսահմանորեն փոքր տարրերը, որոնք ղեկավարում են մասսաներին»:

Կուսուզովը, շեշտում է Տոլստոյը, հերոս չէր համարվում: Տոլստոյը նրան բարձրացրեց և ընդունեց որպէս հերոս: Կուսուզովը մտածում է Տոլստոյի նման: Նա գիտե, որ պատերազմի ելքը կախված է հազարավոր այլևայլ պատճառներից, դրա համար էլ Աուտերլիցի ճակատամարտից առաջ հրավիրված ռազմական խորհրդի ժամանակ ննջում է (ավելի մեծ արհամարհանք հավաքված զինվորական աստիճանավորների, նրանց պլանների, նրանց տաքացած դատողութիւնների ու վեճերի նկատմամբ, քան դա էր, նա չէր կարող արտահայտել):

Այս տեսակետից հատկանշական են նաև 1812 թվականի պատերազմից առաջ թաղավորի մոտ հրավիրված ոչ պաշտոնական ռազմական խորհրդում իշխան Անդրեյի մտքերն այն մասին, որ արևա և շի կարող լինել ոչ մի ռազմական գիտութիւն, ուստի և շի կարող լինել ոչ մի, այսպէս կոչված, ռազմական հանճար...»:

Գրութիւնն ունի մի կարծիք, ըստ որի Տոլստոյն իբրև թե հանգել է պատմական անցքերի նախասահմանվածութեան և ճակատագրի անխուսափելիութեան գաղափարին: Պարզ է մի բան, Տոլստոյն ուզում էր որոշել այն ուժը, որի շնորհիվ ժողովրդական մասսաները շարժման մեջ են մտնում. զինվում են, սպանում միմյանց, գրավում ու ավերում երկրներ, հանկարծ սկսում են անել այն ամենը, ինչ թվում է, թե հակառակ է մարդու էութեանը: Տոլստոյը գտնում է, որ այդ ուժը հասնալ մեզ համար անհայտ, բազմաթիվ գումարտիկների գումարն է: Դա ոչ թե նախասահմանվածութիւնն է ճակատագրի անխուսափելիութիւնն է, այլ մեզ համար անհայտ ինչ-որ բան: Խորհրդածելով 12 թվականի պատերազմի ծագման պատճառների մասին, Տոլստոյը եզրակացնում է. «Մերմն բոլոր այդ պատճառները, միլիարդավոր պատճառներ, զուգապիպեցին նրա համար, որ առաջացնեն այն, ինչ եղաւ»:

Ինչպիսի՞ նպատակներ ու գաղափարներ են հետապնդում ժողովուրդների շարժումը, նրանց բախումները, պատերազմները, արյունալի ողորդութիւնները: Տոլստոյն ընդունում է այնպիսի նպատակներ, որոնք անբացատրելի են մեր շատերի տեսակէտներից: Ճիշտ այդպէս էլ, հավաստիացնում է նա, ոչխարների հոտը չի կարողանում հասկանալ, թե ինչ նպատակների համար է նրանցքը մեկը գիրացվում: Թե ինչի համար է գիրացվում ոչխարը (մորթվում է մսի համար), հեշտութեամբ կարող ենք հասկանալ, եթե դադարենք մտածել, որ այդ բոլորը արվում է շիրենց ոչխարային նպատակների համար: Նպատակներն այլ են, դրանք ոչխարային գիտակցութեան սահմաններից դուրս են: Ճիշտ այդպէս էլ, ըստ Տոլստոյի, կան նպատակներ, որոնք դուրս են մարդկային գիտակցութեան սահմաններից: Եվ ո՞վ գիտե, թե ում ոչխարներն ենք մենք, և ինչպիսի վերջնական նպատակների համար ենք նախատեսված:

Կիւլեկտիկական և պատմական մատերիալիզմի մեթոդին, ինչպէս նաև

Տոլստոյի մասին գրած Վ. Ի. Լենինի հողվածներին ծանոթ ժամանակակից ընթերցողի համար ակնհայտ են Տոլստոյի փիլիսոփայության թույլ կողմերը: Այնուամենայնիվ, «Պատերազմ և խաղաղություն» վեպի այն էջերը, որոնցում Տոլստոյը խոսում է պատմության իր րմբունման և ժամանակի մեջ մարդու ունեցած տեղի մասին, կարծում ենք, ընդմիջտ կպահպանեն իրենց նշանակությունը և կմնան որպես դրքի ամենաուժեղ էջեր:

Այս հարցերը, որ այդպիսի տազնապալի համառությունը և կոպիտ անկեղծությունը (Տոլստոյի կոպիտ անկեղծությունը, ճիշտ է, շփոթեցնում, բայց հաճախ էլ լավ համոզում է) դրել է Տոլստոյը, որպես կանոն, չլինի հուզում ժամանակի վիպասաններին: Տոլստոյն արհամարհում էր գրական կանոնները, հաշվի չէր առնում վեպի ընդունված ձևերը և բազմիցս նշում էր, որ «Պատերազմ և խաղաղություն» վեպ չէ, առավել ևս՝ պոեմ, ոչ էլ, մանավանդ, պատմական ժամանակագրություն: «Պատերազմ և խաղաղություն» այն է, ինչ ցանկացել և կարողացել է արտահայտել հեղինակը այն ձևով, ինչ ձևով որ արտահայտվել է: Ինչպես միշտ, բովանդակությունը պայմանավորել է ձևը: Այլ կերպ և ավելի ստույգ ասած՝ այն, ինչ ցանկացած և կարողացավ արտահայտել հեղինակը, ոչ թե պայմանավորում, այլ ջարդում էր ավանդական վեպի ձևերը:



Պատմության մասին Տոլստոյի տեսակետը հիմնովին բացատրում է հերոս-նապոլեոններին: Պատմությունը կերտում են մարդիկ, նրանք հերոսներ չեն և հերոսության մասին չեն էլ մտածում: «...Բանակում, որը նահանջում էր Մոսկվայից այն կողմ, — բանավիճորեն բացահայտում է իր միտքը Տոլստոյը, — գրեթե չէին խոսում և չէին մտածում Մոսկվայի մասին և, նայելով նրա ահագին հրդեհին, ոչ ոք չէր երդվում՝ վրեժխնդիր չլինի ֆրանսիացիներից, այլ մտածում էին ոտձիկի՝ հե՛ և՛յ: Բաժնի մասին, որը կայանի մասին, նպարավաճառուհի Մատրոշկայի մասին և նման բաները:

Աուստերլիցի ճակատամարտից առաջ իշխան Անդրեյը մտածում է սյուրազորությունների և փառքի մասին («Կուսուկովին փոխում են և նշանակվում է ինքը...»): Փառքը ցանկալի է ու քաղցր, նրա մասին մտորելն անգամ արեցնում է և այրում: Ընվ որքան էլ թանկ ու սիրելի են ինձ շատ մարդիկ՝ հայր, բուլը, կին՝ ինձ համար ամենաթանկ մարդիկ, — սակայն ինչքան էլ սարսափելի ու անբնական թվա, ես նրանց բոլորին կտամ փառքի մի վայրկյանի համար, մարդկանց վրա իշխելու, նվաճելու համար մարդկանց սերը, որոնց ես չեմ ճանաչում և չեմ ճանաչելու, ահա այդ մարդկանց սերը նվաճելու համար:

Իշխան Անդրեյի այս խորհրդածությունները ընդհատվում են սպասարկների ձայներով:

«Տի՛տ, այ Տի՛տ:

— Հը, — պատասխանեց ծերունին:

— Տի՛տ, գնա բանիդ, — ասում էր հանաքչի կառապանը:

— Թո՛ւ, գրողը տանի քեզ, — պատասխանեց Տիտը սպասարկների և ծառաների ծիծաղի տակ:

Փառքի մասին իշխան Անդրեյի խորհրդածությունները և սպասարկների կատակը տրված են միևնույն պարբերությունում: Եվ այդ միասնությունը (հակադրության օրենքով) ավելի է բնորոշում փառքի խոհերի և ցածր խոսակցությունների ներքին կապը: Հասա ակ յոդովորըը ճակատամարտից առաջ փառքի մասին չի մտածում, նա պարում է իր սովորական կյանքով՝ կատակում է, ուրախանում, դիմանում է պատերազմի դժվարություններին, տառապում է, մեռնում, բայց չի հայտարարում իր զգացմունքների մասին:

Աուստերլիցի տանուլ տված ճակատամարտից հետո էլ շարունակվում է նույն կատակը: Այս անգամ կատակը լսում է Նիկոլայ Իստոպոլը, որ հենց նոր տեսել էր շփոթված և վշտացած Ալեքսանդր Առաջինին:

«Տի՛տ, այ Տի՛տ — ասավ ձիավանը:

— Ի՛նչ ա, — ցրված հարցրեց ծերունին:

— Տի՛տ, գնա բանիդ,

— Ի՛, հիմար, թո՛ւ, — բարկացած թթելով՝ ասավ ծերունին:

Տոլստոյը կրկնել է միևնույն հնարը: Այն կարծես շրջանակում է Աուստերլիցի ճակատամարտի նկարագրությունը. այդ կատակը մենք լսում ենք ճակատամարտից առաջ և հետո, երբ այն տանուլ է տրված, ու թվում է, թե ճակատամարտը բոլորովին չի աղդել մարդկանց վրա՝ նույնն են և՛ մարդիկ, և՛ նրանց կատակները:



Տոլստոյը նկարագրել է հասարակ մարդկանց և անհատների իրոք հերոսական արարքները: Պատմությունը կերտում են այն մարդիկ, որոնք, որպես կանոն, անհայտ են պատմաբաններին: Պատմության հերոսների մասին գրում են գրողները:

Շենգրաբենի ճակատամարտում աչքի ընկավ կապիտան Տուշինը: Նա օրվա հերոսն է, նրա վաշտը, որի մասին մոռացել էին ճակատամարտի ետոն պահին հաշտողները էր հրդեհել Շենգրաբեն գյուղը և կանգնեցնել ֆրանսիացիների առաջադաշտումը: «Ոչ ոք Տուշինին չէր հրամայել, թե ուր և ինչի վրա պիտի կրակի, և նա, խորհրդակցելով իր վերակա Ջախարչենկոյի հետ, սրին հարգում էր մեծապես, որոշել էր, որ լավ կլինի, եթե գյուղը հրդեհի: Տուշինը հերոս էր, սակայն նա ոչ միայն ուշադրության շարժանացավ, այլ և իշխան Բագրատիոնի կողմից նույնիսկ պատժվեց: Տուշինին պաշտպանեց իշխան Անդրեյը. «Այ, շնորհակալ եմ, փրկեցիր, սիրելիս, — ասավ Տուշինը նրան»:

Տուշինը չի մտածում անարդարության մասին, չի վրդովվում և չի զրտնում, որ արժանի է շնորհակալության և ոչ թե գայրուկթի: «Մենք պետք է կռվենք, իսկ մեզ պետք է նախատեն, այդպես է կարգը, — կարող էր մտածել Տուշինը: Սակայն նա չի կարող այդպես մտածել, քանի որ էությունը ուրիշ է

և ամբողջ կատարվածի մեջ ոչինչ անսովոր չէ տեսնում. ճակատամարտ է եղել, որին մասնակցել է նաև ինքք, իսկ այն, որ ղեկավարությունը նրան նախատում է... դե, ղեկավարություն է, ու գիտի ինչ է տեսնում: Տուշինի համար այդ գործում մտածելու բան չկար. փրկեցին (նա գտնում է այդ հիշող բառը) և լավ է: Սակայն դա ծանր է իշխան Անդրեյի համար, ես իրեն վատ է զգում այն մտքից, որ դեռ հարկ է լինում փրկել Տուշինին:

Հարկ է լինում փրկել պատերազմի ես մի հերոսի 'Իենիսովին: Այս անդամ արդեն փրկողը Նիկոլայ Ռոստովն էր:

Տուշինի և Իենիսովի ճակատագրերի սրող ընդհանրությունը, հավանաբար, ընդգծվում է նաև նրանով, որ նրանք էլ ընկնում են միևնույն գիտություն հիվանդանոցը: Ռոստովը եղավ այդ հիվանդանոցում, տեսավ, թե ինչ առաջափնի պայմաններում են գտնվում վիրավորները. 400 հիվանդի մի քիչ էր ընկնում: Մարդ վար, որ բուժիր, մարդ վար, որ մեռածներին դուրս տաներ: Դա ոչ թե հիվանդանոց էր, այլ, ինչպես բժշկին էր ասում, բորոտների տուն: Եվ ճակատագրի բերումով հենց այստեղ, այս հրեշավոր հաստատությունն են ընկնում պատերազմի հերոսները:

Ռոստովի շարժարաններն ապարդյուն անցան: Թագավորը շնորհ անձեղ Դենիսովին: Ռոստովին թվում էր, թե Դենիսովի շնորհանքն էր իմանալով, թագավորը կասի, «ես երբանիկ եմ, երբ կարող եմ բարիք անել, իսկ անբարեգրությունն ուղղել»՝ ամենամեծ երջանկությունն է: Մինչդեռ թագավորը ցուցադրաբար ասաց. «Զե՛մ կարող, գեներալ (ներում հայցելու Դենիսովի խնդրանքը հաղորդել էր գեներալը— Լ. Մ.), շնորհ կարող երա համար, որ որենքս ինձից ուժեղ է»:

Հաշտություն էր հայտարարված: Ճառախոսությունների և ցուցադրական արարքների ժամանակ էր: Թագավորը պատկերավոր ֆրազ ասաց և զննաց Նապոլեոնի հետ տեսակցելու, իսկ վերջինս ցանկություն հայտնեց Պաուստովին շնորհներով պարգևատրել ամենաքաջ ուս զինվորին: Ամենաքաջերին Ռոստովը տեսել էր հիվանդանոցային դոճաքում, Վալայն պարգևատրեցին Ռոստովը տեսել էր հիվանդանոցային դոճաքում, Վալայն պարգևատրեցին պատահական մի գիևվորի, որովհետև պետք էր ինչ-որ մեկին (իսկ թե ում՝ կարևոր չէ) պարգևատրել, պետք էր մասնակցել Նապոլեոնի տված ներխայցմանը: Պարգևատրման այդ տեսարանը (խաղը) Տուշտովը նկարագրել է խոր երգիծանքով:

Տուշինի պատմությունը տե՛ս զարմանք պատճառեց իշխան Անդրեյին: Իենիսովի հետ պատահածը ցնցեց Նիկոլայ Ռոստովին: Նա տառապում էր մտածելով հիվանդանոցի վիրավորների մասին, շեր հանգստանում այն մտքից, թե ինչպես պարգևատրեցին առաջին պատահած գիևվորին, իսկ, ահա, Դենիսովին շնորհեցին, մտածում էր հաշտության մասին և ոչինչ չէր հասկանում. «Ե՛լ ինչու՞» համար են կտրված ձեռները, ոտները, սպանված մարդիկ:

«Պատերազմ և խաղաղություն» վեպի հերոսներից Ռոստովն էր ամենից ավելի հավատարիմ հպատակը: Զուր չէ, որ մյուսներից ավելի շատ ես է տեսնում թագավորին, հայտնվում է այնտեղ, ուր թագավորն է: Նրա ոգևորությունն անսահման է, երբ տեսնում է թագավորին:

(«Թագավորի լուրաքանչյուր խոսքը Ռոստովին երկնքից լավող ձայն էր թվում»): Պատահական չէ, որ հետագայում իր արտահայտած կարծիքներով նա այդքան խստորեն սահմանազատվում է Պիեռից. «Երբ դուք գաղտնի ընկերություն կազմեք, սկսեք ընդդիմանալ հառավարությունը, ինչ տեսակ էլ նա լինի, ես գիտեմ, որ իմ պարտքն է հնազանդել իմ կառավարությանը: Եվ եթե հիմա Արակչևը կարգադրի ինձ հեծելազորում գալ ձեզ վրա և կոտորել — մի վայրկյան իսկ չեմ մտածի և կգամ»:

Եվ այդ նույն Ռոստովը հանկարծ սկսեց տատանվել, նրան տանջում են կասկածները. իսկ զուցե թագավորը լավ չէ՞ վարվում: Նա վախեցավ իրենից, իր կասկածներից և հանկարծ սկսեց գոռալ՝ ի զարմանա զրուցակցի (զրույցը բուրոսովին այլ հարցի շուրջ էր), թե թագավորն իրավացի է, թե նրանք շնորհ կարող դատել թագավորի և նրա արարքների մասին: Ռոստովն ինքն իր վրա էր թաղվում, իրեն էր սանձում:

Ալեքսանդր Առաջինին, որին հակադրված է Նապոլեոնը, Տուշտովը շնորհում էր պատկերներ: Թագավորի նկատմամբ իր վեհաքերում լուստովը փոքր-ինչ հիշեցնում է հենց իրեն՝ Տուշտովին: Սակայն Ռոստովը, որ շտապում էր խեղդել ծագած կասկածները (կասկածի տեղիք էին տալիս թագավորի արարքները), այնքան հավատարիմ էր իրեն, իր քննադատությանը և այնքան հեռու Տուշտովից...

Այն միտքը, որ պատերազմի հերոսները (փոքր և ուրիշների կողմից ընկատված մարդիկ) կամ արհամարհվել էին, կամ էլ ստվերում էին մնացել վեպի կարևոր մտքերից է: Տուշտովն անդրադառնում է այդ մտքին և Դոխտուրովի (մեկ ուրիշ տեղ էլ՝ Կանովիցիների) մասին գրում. «Ու շատ հերոսներ են նկարագրվել, մեզ հասել՝ ոտանավորներով թե արձակ, բայց Դոխտուրովի մասին գրեթե խոսք չկա... Դոխտուրովի մասին այդ լուստովը հենց ամենից ավելի է ապացուցում նրա արժանիքները»:

Տուշտովը եզրակացնում է. լուստովյան մատենը արժանիքների ապացույց է: Ահա թե ինչու նրա սիրած հերոսները (եթե անգամ ճանաչված պատմական անձնք են) ներկայացված են սովորական ձևով, ո՛չ ազմկալից և ոչ էլ հանդիսավոր հանգամանքներում, և սիրելի են նրանք բոլորովին այլ՝ մարտական գործերով: Ոչ թե որևէ սիրանքով (սովյալ դեպքում սա այնքան էլ հիշող բնորոշում չէ), այլ գործերով ընդհանրապես: «Իսկապես, — բանավիճում էր Տուշտովը, — միշտ չէ, որ սպիտակ ձին հեծած, հեռադիտակն աշքերին թշնամու կողմն էր ցույց տալիս»: Տուշտովին խոտապես օտար էր սպիտակ ձին հեծած հերոսի ավանդական կերպարը: Հերոսների կյանքն այդպես ցուցադրական չէ: Սպիտակ ձին միշտակ վեպերին է բնորոշ:

Պյոտրովի մասին ասում են, իբր նա պնդում էր, թե մարդկային կյանքի իմաստն այն է, որ նայի՝ ու նայի երկնքին: Մարդը նայում է երկնքին ու հասկանում իրեն, իր երկրային գործերը, նա հանկարծ հասկանում է ֆրեն Գուլգո հարցերի ունայնությունը...

Առատերկրից ճակատամարտում իշխան Անդրեյը վիրավոր ընկնում է մեղք վրա: Ուշքի բարձր, նա աչքերը բաց արեց՝ հույս ունենալով տեսնել, թե ինչով վերջացավ ֆրանսիացիների և թագաժողովների կռիվը... Բայց օդին շտապով: Նրա գլխավեր են ալիս ոչինչ չկար, բացի կրկնից — քարձք

երկնքից, որ պարզ շէր, բայց և այնպես անսահման բարձր էր. նրա երեսին ճանդարտ սողում էին մոխրագույն ամպերը: Որքա՞ն հանգիստ, անդորր ու հանդիսավոր է. բոլորովին այնպես չէ, ինչպես վազելուս միջոցին,— մտածեց իշխան Անդրեյը,— այնպես չէ, ինչպես որ մե՛ր վազելու, գոչելու և կովելու միջոցին. բոլորովին այնպես չէ, երբ ֆրանսիացիին ու թնդանոթածիզը՝ կատաղած ու վախեցած դժմքերով, փարատին ուզում էին խել իրար ձեռից,— ամպերն էլ կարծես բոլորովին այլ կերպ են սողում այս բարձր, անսահման երկնքի երեսին: Ինչպե՞ս է, որ ես առաջ չեմ տեսել այս բարձր երկնքը»:

Պատերազմ և... երկինք՝ այս հակադրությունը զարմացրել էր իշխան Անդրեյին. «... Ամպերն էլ կարծես բոլորովին այլ կերպ են սողում այս բարձր, անսահման երկնքի երեսին»: Հակադրությունը շփազանց մեծ է, շփազանց անհամատեղելի, և իշխան Անդրեյը շարունակ կրկնում է. «Բոլորովին այլ կերպ են...», «այլ կերպ են...», «բոլորովին այլ կերպ են...», «բոլորովին այլ կերպ են...»:

Իշխան Անդրեյը, որ երազում էր ճակատամարտում մեծ փառք ձեռք բերել, այժմ բոլորովին այլ, իսկական լույսի տակ է տեսնում կյանքը: Մինչև վերջերս նա սխալ էր մտածում, քանի որ անտեսել էր մարդկային ամեն մի գործում (խնդրում) անհրաժեշտ գումարեկիներից մեկը՝ երկինքը:

Պատերազմի խամանակ մարդու համար բոլորովին այլ կերպ, նորովի ընկալված բնապատկերը Տոլստոյը նկարագրել է ռուսների և ֆրանսիացիների առաջին իսկ ռազմական բախման ժամանակ, երբ թշնամու կողմից գեղակոծվող Դենիսովի հեծելավաշտը հրդեհում էր էնս գետի կամուրջը.

«— Ծո՞օ, թողե՛ք, ի սեր քրիստոսի,— պուռաց վիրավորը...»

Նիկոլայ Ռոստովը շրջից ու կարծես ինչ-որ բան որոնելով, սկսեց նայել գետի հեռուն, Դանուբի լրճերին, երկնքին ու արևին: Ինչպե՞ս գեղեցիկ էր թվում երկինքը, որքա՞ն կապույտ, անդորր ու խորունկ... Միայն իմ և այս արևի մեջ այնքան երջանկություն կա, իսկ այստեղ... հառաչանք, տանջանք և սարսափ. և այս անորոշությունը, այս շտապողականությունը...— մտածում էր Ռոստովը:

Սակայն Նիկոլայ Ռոստովը չէր կարողանում զարգացնել այս մտքերը. նա իր էությունը հակված չէր փիլիսոփայական դատողություններ ասելու: Պետք էր մեկ ուրիշ մարդ, և այդ մարդը մշտապես և տանջալիորեն խորհրդածող, կյանքի և մահվան փիլիսոփայական խնդիրներով տարված իշխան Անդրեյն էր: Ինչպե՞ս է, որ ես առաջ չեմ տեսել այս բարձր երկնքը,— զարմանում էր նա: Իհարկե, իշխան Անդրեյն առաջ էլ տեսել էր երկինքը, բայց նա առաջին անգամ էր տեսնում պատերազմը, միմյանց սպանող մարդկանց և երկինքը, անհուն երկինքը ... Եվ նա ուրիշ մարդ է դառնում, հանկարծ հասկանում է կյանքում իր համար կարևոր թվացող խնդիրների պնդողությունն ու ունայնությունը: Նապոլեոնը՝ նրա հերոսը, նրա կուռքը, հիմա արդեն վիրավոր, երկինք նայող իշխան Անդրեյին թվում է այնքան փոքրիկ, չնչին մի մարդ՝ համեմատությունը այն բանի, ինչ կատարվում էր իր հոգու և այս բարձր, սողացող ամպերով անհուն երկնքի միջև:

Վիրավոր իշխանի համար երկինքը մեծագույն հայտնություն էր նա նորից ու նորից անդրադառնում է երկնքին. մի զեպրում բարձր, մի այլ ան-

գամ՝ բարձր ու անհուն, ապա՝ բարձր, արդար ու բարի, հետո՝ պայուսպես բարձր (այս որոշիչը կրկնվում է) և վերջապես՝ երկնքին, որ նրան հանգստություն էր խոստանում: Իշխան Անդրեյը ստուգում է իր հայացքների ճշտությունը, ստուգում է իրեն, իր կյանքը: Նա կարծես թե կանգնած է երկնային դատաստանի առջև, և նրա հոգին մաքրվում է ամեն տեսակ պատահական, չնչին բաներից, ու նա երջանիկ է...:

Տարիներ անց, գարնանային զարթոնքի զգացումով համակված, բանաստեղծի խոսքերով ասած՝ կյանքի ու սիրո համար վերածնված իշխան Անդրեյը հանկարծ կհիշի իր կյանքի լավագույն լուսկները, դրանց մեջ նաև «Աուստերլիցյն իր բարձր երկնքով»:

Աուստերլիցյց հետո իշխան Անդրեյը տեսել է երկինքը իր կյանքի ճակատագրական ու շրջադարձային պահերին: Իշխան Անդրեյը ծանր ապրեց կնոջ մահը. նրան թվում էր, թե իր կյանքը վերջացած է, բայց տեսավ բարձր երկինքը, ու հոգում հանկարծ խնդագին ու կենսուրախ զարթից մի ինչ-որ բան, որ վաղուց նիրհել, լուել էր, մի ինչ-որ լավագույն բան, որ կար նրա մեջ:

Աուստերլիցյց հետո իշխան Անդրեյի կյանքում մի մեծ երջանկություն կար՝ Նատաշայի սերը, և նա մի անգամ էլ տեսավ երկինքը: Դա Օտրադնոնում էր, այն անմոռանալի գեղերը, երբ Նատաշան ուզում էր երկինքը թլուչել: («Այսպես նստեի ծալապատիկ, այ այսպես, ծնկներս պիղի ըռնած, որքան կարելի է պինդ, որ թուչի: Ա՛յ, այսպես»):

Աուստերլիցյց հետո իշխան Անդրեյին վիճակված էր ողբերգություն ապրել՝ նրան դավաճանել էր Նատաշան, և նա այլևս չէր տեսնում երկինքը, նույնիսկ վախենում էր հիշել այն խոհերը, թորոնք առաջին անգամ պաշարեցին նրան Աուստերլիցի դաշտում՝ երկնքին նայելիս:

Աուստերլիցյց հետո իշխան Անդրեյը մասնակցում է Բորոգինոյի ճակատամարտին, բայց նա արդեն բոլորովին այլ մարդ է: Նա չի մտածում փառք ձեռք բերելու հնարավորություն, անձնական սխրագործություն, մեծարման մասին: Հիմա նա պատերազմը համարում է ամենալավի գործը կյանքում: Զորավարների կողմից ղեկավարվող մարդիկ (իսկ զորավարները ճամառվում են նշանավոր և նույնիսկ հանճարեղ) ոչնչացնում են մարդկանց: Հիմա իշխան Անդրեյի համար պատերազմը ատելի է: 1805 թվականին նա պատերազմ էր գնում փառաբանվելու համար, 1812 թվականին նա պատերազմ էր գնում կովելու և մեռնելու վճռականությամբ՝ որպես հայրենասեր, որպես ռուս: Սկսվում են երեխաներիս, հորս և խոսում են պատերազմի կանոնների և զեպի թշնամին մեծահոգի լինելու մասին»:

Իշխան Անդրեյի այն միտքը, թե պետք չէ գերիներ վերցնել, կարող էր դաժան թվալ: Բայց այն ծնվել է ոչ թե դաժան, այլ իր տունն ու իր երկիրը պաշտպանելու վճռականությամբ լի հոգում: Այդ պատճառով էլ Պիեռը, բարևսիրտ Պիեռը «լիովին, լիովին» համաձայն է իշխան Անդրեյի հետ:



1812 թվականին, ի տարբերություն 1805 թվականի պատերազմի, ռուս ժողովուրդը պաշտպանում էր իր հողը, իր հայրենիքը: Ահա թե ինչու 12 թվա-

կտե՛ի պատերազմը ժողովրդական է, նայե՛նական: Վատերազմի այս ժողովրդական, համառուական բնույթը բոլորից լավ հասկանում էր դիմազոր հրամանատար Թարկւայ-դե-Տոլլիին փոխարինած Գուտուզովը: Թարկւայը ամեն ինչով լավ էր, ընդգծում է Տոլստոյը, բայց նա շունը ամենակարևորը՝ հայրենիքի զգացումը, հենց այն զգացումը, որ ապրում էր յուրաքանչյուր ուսու մարդու մեջ: Թարկւայը շատ բան էր հասկանում, բայց իս չկարողացավ, ինչպես ասում էր իշխան Անդրեյը, «հասկանալ, որ մենք առաջին անգամ էինք կռուվում այնտեղ (Մոսկովնայում — Լ. Մ.) ուսական հողի համար: Եթանի Ռուսաստանը առողջ էր, — մեկնաբանում էր իր միտքը իշխան Անդրեյը: — նրան կարող էր ծառայել օտարը, և հիանալի մեծիտք էր, բայց երբ երկիրը վտանգի մեջ է, հարկավոր է քո, հարազատ մարդը: Այդպիսի հարուզատ մարդ էր Գուտուզովը: Եթակ գլխավորը, — մտածում էր իշխան Անդրեյը, — թե ինչու ես հավատում նրան, այդ այն է, որ նա ուս է, չնայած ժանկարի վեպին և Ֆրանսիական առածներին»:

Ժողովրդական պատերազմում ամեն ինչ որոշում է ժողովուրդը, և ժողովրդին, ուս յողովրդին հասկացող մարդիկ են պետք: Տոլստոյը զարգացնում է այդ միտքը. «...Այն, ինչ ասավ Գուտուզովը, բխում էր ոչ թե խորամանկ նկատառումներից, այլ զգացմունքից, որ կար ինչպես գլխավոր հրամանատարի սրտում, նույնպես և յուրաքանչյուր ուս մարդ, ոչ թե կշռադատումների ու եղրակացութունների հիման վրա, այլ այն զգացումի հիման վրա, որը կա մեր մեջ և եղել է մեր հայրերի մեջ, կարող էր զուշակել այն, ինչ կատարվեց»:

Տոլստոյը բանավիճում էր: Բանն այն է, որ խորամանկ նկատառումներից ելնում և խորամանկ կշռադատումներով էին գործում օտարերկրացիները, հիմնականում՝ ուսական բանակում ծառայող և հրամանատարական պաշտոններ գրավող գերմանացիները, որոնց հովանավորում էր արքունիքը: Տոլստոյը խոսում է Եմրոնովի հայտնի կատակի մասին, որն իրր թե թագավորից խնդրել էր միայն մի ողորմածութուն — իրեն գերմանացի զարմնելու: Ռուսներին հրամայող գերմանացիները, թվում է, թե իրենց ռազմական արվեստի կանոններում հաշվի էին առնում ամեն ինչ, սակայն միշտ էլ բաց էին թողնում հիմնականը՝ այն, ինչ անհրաժեշտ էր զգալ ուսական ժողովրդական պատերազմում: Եթե իս Գավիդովն իր ուսական հոստատությունը առաջինն զգաց նշանակություն այն սարսափելի մահակի, որը, ռազմական արվեստի կանոնը չհարցնելով, ոչնչացնում էր Ֆրանսիացիներին, և նրան է պատկանում պատերազմի այդ եղանակն օրինականցնելու առաջին քայլի փառքը»:

Օտարերկրացիները էին կարող հասկանալ ուսական ժողովրդական պատերազմի բնույթը: Եթե ուս մարդ...», ասուս մարդու հոգում եղած զգացում...», ասուսական հոստատություն...» այս բոլորը ոչ թե առեղծվածային, այլ պարզ հասկացություններ են, այս բառերի ետևում կանգնած են իրենց տան, իրենց հայրենիքի համար մարտնչող մարդիկ: Երբ Բորոդինոյի ճակատամարտից առաջ վոլցոգներ և Կլաուզիցը գտնում էին, թե պատերազմը պետք է տեղափոխվի բաց տարածություն վրա, իշխան Անդրեյը զայրույթով նշում է, որ այդ ատարածություն մեջ՝ Լիսին Գորիում, մնացել են հայրը, որդին և քուրբը: Եվ շարունակում Եկող գերմանացի պարոնները վաղը ճա-

կատամարտը չեն շահի, այլ միայն կփշացնեն, որքան ուս ունեն. որովհետև նրա գերմանական զխում միայն դատողություններ են, որ կորեկի արժեք շունեն, իսկ սրաներում չկա այն, ինչ պետք է վաղվա համար, այն, ինչ կա Տիմոխինի մեջ»:

Այնքանոր Առաջինին հասած ամենակարևոր տեղեկություններից մեկը ուսներին կողմից Մոսկվան թողնելու լուրն է, որը բերում է ուսներին շիմացող և նախքան պատերազմը Մոսկվան երեք շտեսած Ֆրանսիացի Միշոն: Իր մասին Միշոն ասում է, որ ինքը, Եթե և օտարերկրացի է, բայց հոգով ու սրտով ուս է: Միշոն հեզանքով է ներկայացված: Նրա պնդումներն այն մասին, թե ինքը հոգով ու սրտով ուս է, ծաղրվում են: Հայտնելով ուս թագավորի համար չափազանց կարևոր նշանակություն ունեցող այդ լուրը, Միշոն բառախաղ է թույլ տալիս: Թագավորի այն հարցին, թե արդյոք չի՞ նկատել նա ուսական բանակում ընկճված տրամադրություն, Միշոն մի ամբողջ ներկայացում է խաղում:

«— Արքա՛, թույլ կտա՞ք արդյոք խոսել պարզ, ինչպես վայել է ազնիվ զորականին, — ասավ նա, որպեսզի ժամանակ շահի»:

— Գնդապետ, ես միշտ էլ այդ եմ պահանջում, — ասավ թագավորը: — Ոչինչ մի թաքցրեք, ես ուզում եմ անպայման ամբողջ ճշմարտությունն իմանալ»:

— Թագավոր, — ասավ Միշոն, մի նուրբ, հազիվ նկատելի ժպիտ շորթերին, կարողանալով պատրաստել արդեն իր պատասխանը՝ թեթև ու հարգալիք՝ ողորմած տիրոջը:

— Թագավոր, ամբողջ բանակը, զորապետներից սկսած մինչև վերջին զինվորը, առանց բացառություն, ես թողի մեծ, հուսահատական երկյուղի մեջ:

— Ինչպե՞ս թե, — խիստ խոստովելով, ընդհատեց թագավորը: — Կարո՞ղ են արդյոք իմ ուսներն ընկճվել անհաղթություններից... Երբե՞ք... Հենց որան էլ սպասում էր Միշոն իր բառախաղն ասելու:

— Թագավոր, — ասավ նա թեթև-զվարթ հարգանքի արտահայտությամբ, — նրանք վախենում են միայն այն բանից, որ ձեր մեծությունը հանկարծ իր բարեհոգությունը չլճնի հաշտություն կնքել: Նրանք այրվում են կռվելու ցանկությունից և իրենց կյանքի զոհարելությամբ ապացուցելու ձեր մեծությունը, թե որքան նվիրված են ձեզ...»:

Ռուս մարդը երեք այդպես չէր վարվի: Այդ ծանր պահին նա կատակի ու բառախաղի սիրտ չէր ունեւ: Եվ սա ամենալավ ապացույցն է, որ Միշոյի վիշտն էլ ուրիշ էր, Ես ուրիշ էլ պետք է լիներ, ոչ այն, ինչը ուս մարդկանց վիշտն էր»:

1812 թվականի պատերազմի ժամանակ ուս մարդիկ ազատագրեցին Ռուսաստանը. ժողովրդական պատերազմի նպատակը իրականացավ: Հետագան՝ պատերազմը Ռուսաստանի սահմաններից դուրս, Տոլստոյին չէր հետաքրքրում:

12 թվականի պատերազմը, ասում է Տոլստոյը, Եթե սրտին թանկ, ժողովրդական նշանակությունից բացի ուներ նաև համավրոպական նշանակություն: Տոլստոյի համար օտար էին պատերազմի եվրոպական նպատակ-

ները, Ռուսաստանի ազատագրումով նրա համար վերջանում է պատերազմը։ Այն, ամբողջում է նաև Կուստուզովի համար։ Կուստուզովը չէր հասկանում մի, թե ինչ էր նշանակում Եվրոպա, հավասարակշռություն, նապոլեոնի այն, և Ռուսաստանի պատերազմի հետևանքները, նրանից հետո, երբ թշնամիներն ուղևորված էր, Ռուսաստանն ազատված և իր փառքի բարձր աստիճանին հասցված, ռուս մարդը կամ ռուս ալլևս անելիք չունենի։ Ժողովուրդական պատերազմի ներկայացուցչին ոչինչ էր մնում, բացի մահից։

Տոլստոյը Կուստուզովին անվանում է ռուս ժողովուրդի ներկայացուցիչ։ Թուս Ժողովուրդին Վրաստանում և խաղաղութան ռուսում ներկայացնում է նաև հեղինակը։ Տոլստոյը միշտ էլ գտնում էր, որ կյանքի գլխավոր շարժիչ ուժը ժողովուրդն է։ Ժողովուրդը որոշակի արժեք ունի նաև նրա սիրելի հերոս-ներին՝ իշխաններին ու կոմսերին համար։ Գյուլագիններին ազատագրած իշխաններին՝ իշխաններին ու կոմսերին համար։ Գյուլագիններին ազատագրած իշխաններին՝ իշխաններին, Նիկոլայ Թուստովը, որ ժմիանգամայն միատեսակ էր հետևում իր կերպարով, Նիկոլայ Թուստովը, որ ժմիանգամայն միատեսակ էր հետևում իր կերպարով, Նիկոլայ Թուստովը... Իսկ որքան էր հիանում Տոլստոյը նատաշալով, որը սկզբում էր ըմբռնել այն բոլորը, ինչ կար Անիսայի և Անիսայի հոր, մորաբորո և մոր մեջ և ամեն մի ռուս մարդու մեջ։

Տոլստոյը մշտապես ընդգծում է այն, ինչ կա իր հերոսների և ամեն մի ռուս մարդու մեջ, ինչ ընդհանուր է նրանց համար (այս արտահայտություններ բազմաթիվ կոկնկում է)։ Նա խոսում է իր հերոսների գագաթունքների և ապրումների տիպականության մասին։ Վրաստանում և խաղաղությունն ըստ էության ժողովրդական, ռուսական ստեղծագործություն է։



Գերությունից ազատվելուց հետո Պիեռ Բեզուսովը մտածում է, թե ինչ լավ է, ինչ հիանալի է ապրելը։ Ինչ որ սկիզբն ու ֆրանսիացիք այլևս չկան։ Պիեռ համար նրա կինը՝ իր կյանքն անփառունակ ավարտած գեղեցկուհի էլին, և Ռուսաստանում իր անփառունակ վախճանը գտած ֆրանսիական բանակը՝ միևնույն կարգի երևույթներ են։ Եվ մեկը, և՛ մյուսը նրա համար աղետ էին։

Պիեռին վիճակված էր անցնել բազմաթիվ փորձությունների միջով։ Նա ապրում էր ներքին լարված կյանքով։ Արտաքինից հանգիստ ու ցրված Պիեռը այրվում էր իրեն տանող բազմաթիվ փիլիսոփայական և, դրանցից ոչ պակաս բարդ, սովորական, ամենօրյա կյանքին վերաբերող հարցերին հասու լինելու ցանկությամբ։

Կյանքի դժվարին րոպեին (Գոլոթովի հետ մենամարտելուց և կնոջ հետ բացատրելուց հետո) Պիեռը հանդիպում է մասուն Օսիպ Բազդեևին։ Երբ հարցախոսում էր Պիեռը հանդիպում էր մասուն Օսիպ Բազդեևին։ Երբ հարցախոսում էր Պիեռը հանդիպում էր մասուն Օսիպ Բազդեևին։ Երբ հարցախոսում էր Պիեռը հանդիպում էր մասուն Օսիպ Բազդեևին։ Երբ հարցախոսում էր Պիեռը հանդիպում էր մասուն Օսիպ Բազդեևին։

տել նրա մաքրության մասին։ Միայն ինքս ինձ ներքուստ մաքրելով, կարող եմ մաքրության հասցնել ընդունվող հեղուկը։

Պիեռը բերմորեն ձգտում էր ներքին մաքրման։ Բազդեևի փաստարկները համոզում են նրան. չէ՞ որ իսկպպես անհնարին է աղտոտ անոթում մաքրության մեջ պահել ամենամաքուր հեղուկը։ Պիեռը մասուն է դառնում։ Նրա խոսքերով մասունությունը պետական ու կրոնական կապանքներից ազատագրված նույն քրիստոնեությունն է։ Պիեռը փորձում է ապրել ըստ Աստվածաշնչի, ըստ հավասարության, եղբայրության և սիրո քրիստոնեական ուսմունքի։ Հայտնի է, թե ինչպես էր Տոլստոյին տանչում Աստվածաշնչի և հավատացյալներին արարքների միջև առաջացած խզումը։ Պիեռն ուզում էր հաղթահարել այդ խզումը։ Նա չէր կարողանում հասկանալ, թե ինչպես մարդիկ մեծարում են մի տեսակ օրհնքները, իսկ ապրում բոլորովին այլ օրհնքներով։ Եվ երբ բոլորս,— տարակուսում էր նա,— դավանում ենք քրիստոնեական այն օրհնքը, որը պատվիրում է մեզ՝ ներել մեզ վրախոսողներին և սիրել մեծազորներին, մի օրհնք, որի գորությունամբ ենք Մոսկվայում կանգնեցրել ենք քառասունք-քառասուկից եկեղեցի, իսկ երեկ խարազանով ձաղկեցինք փայտ, շող մարդուն, և նույն սիրո ու ներողամտության օրհնքի սպասավորը՝ քահանային, խաչը տվեց զինվորին համբուրելու՝ մահապատից առաջ։ Սակայն աշխարհն ու աշխարհիկ մարդիկ (եղբայր մասունները նույնպես) կարողում էին Աստվածաշունչը և ապրում ոչ թե աստծո բարոցով, այլ աշխարհիկ օրհնքներով։ Մի՞թե դա չէր պատճառը, որ հասարակությունը չհասկացավ Պիեռին, բայց սիրեց նրա անբարոյական կնոջը։ Պիեռը հիասթափվում է։ Խորապես վերապրելով իր անհաջողությունները, նա փորձում է ապրել ինչպես պատահի, սակայն հոգու և մտքի ներքին աշխատանքը երբեք չի լքում նրան։ Անտարբեր լինելով ամեն ինչի նկատմամբ, նա ապրում էր հաճախում, այցելում էր հենց այնպես, և սարսափով մտածում, թե թաանդանի մարդիկ, իր նման այդ ապուրքս ու այդ կյանքն են մտել իրենց բոլոր ատամներով և մազերով և վերջը այնտեղից դուրս եկել առանց ատամների ու մազերի։

Պիեռը փորձում էր որևէ բանով զբաղվել, վերանալ առօրյա հոգեկոտորից ու իրականությունից, հեռանալ իրեն տանող հարցերից, բայց նրան չէր հաջողվում կանգնեցնել մտքի անընդհատ աշխատանքը։ Եվ Պիեռը չէր լսած այն պատմությունը, թե ինչպես պատերազմում զինվորները։— ճիշտ է, պաշտպանված, բայց հրաձգությունը ներքո լինելով, երբ անելու բան չեն ունենում, փութաբաշանորեն մի որևէ զբաղմունք են որոնում իրենց համար, որպեսզի ավելի հեշտ տանեն վտանգը։ Եվ Պիեռին բոլոր մարդիկ թվում էին այդպիսի զինվորներ, որ ուզում են փրկվել կյանքից, ոմանք փառասիրությունով, ոմանք թղթախաղով, ոմանք օրհնքներ գրելով, ոմանք կանանցով, ոմանք խաղաչիքներով, ոմանք ձիերով, ոմանք քաղաքականությամբ, ոմանք որսորդությամբ, ոմանք գինով, ոմանք պետական գործերով։

Պիեռն ուզում էր ապրել, սակայն պետք էր փրկվել այդ կյանքից և զուտ մնալ, իսկական կյանք, որն, ավա՜ղ, չկար։ Մի ժամանակ նա մտածում էր, որ ճշմարիտը ոչ թե այստեղ է՝ երկրի վրա, այլ այնտեղ՝ տիեզերքում։ Երկրի վրա, հենց այս երկրի վրա (Պիեռը ցույց տվեց դաշտը) չկա ճշմարտություն,—

ամեն ինչ սուտ է ու շարիք, բայց աշխարհում, ամբողջ աշխարհում կա՝ երջմարտություն և մենք հիմա երկրի զավակներն ենք, իսկ հավիտենական զավակներն ենք ամբողջ աշխարհի: Պիեռը մտածում էր ապագայի և ապագա մարդկանց մասին, որոնք պետք է լինեն ավելի կատարյալ ևակներ. «Մի՞թե ես չեմ տեսնում, որ ես այս անթիվ անհամար էակների մեջ, ուր երևան է գալիս աստվածությունը,— բարձրագույն ուժը, ինչպես կուզեք անվանեցեք,— ես մի օղակն եմ, մի աստիճանը՝ ստորին էակներից դեպի բարձր էակները»: Պիեռի այս մտքերը բնություն հետ նրա սերտ կապի, կյանքից և իրենից դժգոհ լինելու վկայությունն են: Գրանք ապացուցում են, թե ինչպիսի սրբության և փիլիսոփայական խորության էր հանդուժ իրականության հետ ունեցած նրա խզումը:

Պիեռի կյանքը երկար ժամանակ այնպես էր ընթանում, որ նա չէր կարողանում հաշտվել կյանքի հետ: Նա անընդհատ մտածում էր, որոնում և տառապում հուզական տանջանքներից: Այդ որոնումներում Պիեռը շատ հատազատ էր իշխան Անդրեյին. նրանք երկուսն էլ տեսնում էին երկինքը, հասարակատ էր իշխան Անդրեյին. նրանք երկուսն էլ տեսնում էին երկինքը, հասարակատ բնությունը. «Ջրնվորը չթողեց ինձ: Բռնեցին ինձ, փակեցին— Գեղանում բնությունը. «Ջրնվորը չթողեց ինձ: Բռնեցին ինձ, փակեցին— Գեղանում մեջ են պահում ինձ: Ու՛մ, ինձ, ինձ — իմ անմահ հոգին: Ընդհատ հա՛... հա՛-հա՛-հա՛...»: Պիեռը նայեց երկինքին, դեպի անհունը զնացող, շողերով խաղացող աստղերին. «Եվ այս բոլորն իմն է, և այս բոլորն իմ մեջ է, և այս բոլորը ես եմ,— մտածում էր Պիեռը: Եվ այս բոլորին ձերբակալելու ու նստեցրել են բարաքում, տախտակներով պարսպած բարաքում»:

Պիեռը մտածում էր ազատության մասին, այն մասին, որ ինքը, թեև գերի, ազատ է տեսնելու և զգալու բնությունը: Իսկ պատերազմն ու զինությունը անհեթեթություն են, դրանք հակառակ են բնությանը. ընդհանրապես և մարդկային բնությանը՝ մասնավորապես, քանի որ մարդը հենց նույն բնությանն է: Ուստի մեծագույն անմտություն է ձերբակալել և փակել տակ պահել մարդուն, երկիրը, աստղերը...

Տառապանքներն ավելի մաքուր ու ավելի լավը դարձրին Պիեռին: Տառապանքը մարդու փորձաքարն է, սնա դարձել է մի տեսակ մաքուր, կոկ, թարմ, կարծես բաղնիքից ելած. դու հասկանում ես — բարոյապես — բաղնիքից: Ընդհատ էր— ասում է նատաշան: Պիեռն անցավ այնպիսի փորձությունների միջով (հիասթափություն, ամոթ, կեղծիք), որոնցից չէին կարող խուսափել ազնիվ ու մտածող մարդիկ: Պիեռը թանկ վճարեց իր երջանկության, նատաշայի սիրո և իր ընտանիքի համար...

3

«Պատերազմ և խաղաղություն» վեպի վերջաբանում իր սիրած հերոսուհու՝ Նատաշա Ռոստովայի մասին Տոլստոյը գրել է. «Այժմ (յոթ տարվա ամուսնությունից հետո — Լ. Ս.) հաճախ երևում էր միայն նրա դեմքն ու մարմինը, իսկ հոգին բնավ չէր երևում: Երևում էր միայն ուժեղ, գեղեցիկ էջը: Գրված է խիստ, գուցե և կոպիտ: Սակայն Տոլստոյը չէր փոխել իր քննող վերաբերմունքը Նատաշայի հանդեպ: Նա ասում էր կնոջ մասին բարձրաշխարհիկ հասարակության մեջ տիրող կարծիքը և

միտումնավոր խստությունը գրում իր իղբալի մասին: Բարձրաշխարհիկ հասարակության համար կնոջ իղբալը էլինն էր, Տոլստոյինը՝ Նատաշան: «Պատերազմ և խաղաղությունը» պատերազմի, պատմության, կյանքի և մարդու կոչման, կնոջ և ընտանիքի մասին բարձրաշխարհիկ հասարակության ունեցած կարծիքը հերքող ստեղծագործություն է: Հատկապես այստեղ Տոլստոյն առաջին անգամ և լիովին դրսևորեց իր մեծագույն անհամաձայնությունն այն աշխարհի հետ, ուր նա ապրում էր:

Նատաշա Ռոստովյան իշխան Անդրեյի և Պիեռի նման հավատարիմ էր բնությունը: Ընդհատ էր, նա դատողություններ չի անում և ճշարկ չի համարում խելոք լինելը, բայց ապրում է հավատարիմ իր կանացի էությունը (ս... նատաշայի բոլոր պրոթիվումները սկիզբն էին միայն ընտանիք, ամուսին ունենալու պահանջի), հետևաբար նաև՝ բնության էությունը:

Նատաշան հարկ չի համարում խելոք լինել, որովհետև ի վիճակի է ներքին զգացողությանը ճանաչել աշխարհն ու մարդկանց: Զգացողությունը բանականությունից նորր է, զգացողությանը կարելի է հասկանալ այն, ինչ բանականության համար աղոթ է և անորոշ: Բորիսի մասին Նատաշան ասում է. «Ետ լավն է, շատ-շատ լավն է, Բայց այնքան էլ իմ ճաշակին չէ, նա այնպես սահմանափակ է, նեղ՝ սեղանատան ժամացույցի նման... Չե՞ք հասկանում... Նեղ, գուցե, հասարակ, պարզ... Մի՞թե չեք հասկանում: Ա՛յ, երկու լինկան կհասկանա... Բեզուխովը՝ կապույտ, մուգ-կապույտ է, կապույտա ուր, իսկ նա՝ քառանկյունի: Խելոքով դա չի հասկացվում: Ներքմբո՞նձամբ օժտված Նատաշան զգում է և հասկանում: Նա հարուստ և կենսալիք խառնվածք ունի:

Սոնյան, սիրելի ու բոլորին սիրող Սոնյան, մնում է մենակ, առանց ամուսնու, որովհետև նրա մեջ անդամարար է դրսևորված կյանքի այդ բնավորություն, անսպառ զգացումը: Եվ հենց դրա համար էլ (և ոչ թե որևէ այլ պատճառով) նա չի փախել իր սիրած մարդու հետ, ինչպես զա ուզում էր անել Նատաշան: Չի՞ փախել, և չի՞ թունավորվի, եթե իմանա, որ սիրած մարդը սրիկա է: Սոնյան, ինչպես Նատաշան է ասում, անպտուղ ծաղիկ է: Պատահական չէ, որ Նատաշան հասկացավ Սոնյայի բնավորության սահմանափակությունը: Հեղշելով ավետարանական ասույթը՝ «Որ ունիցի՞ տուցի և որ ոչ ունիցի՞՝ բարձր է ի նմանե», Նատաշան ասում է. «Նա՛ Սոնյան — շունեցող է. ինչու՞» — չգիտեմ,— նրա մեջ թերևս չկա էգոիզմ,— ես չգիտեմ, բայց նրանից կառնվի և ամենը առնվից: Երբեմն ես նրան սարսափելի խղճում եմ. ես առաջ սատիկ ցանկանում էի, որ Nicolas-ն ամուսնանա նրա հետ, բայց միշտ էլ կարձնա նախազգում էի, որ այդ չի լինելու: Սոնյան անպտուղ ծաղիկ է. գիտես, ինչպես՞ է ելակի վրա: Երբեմն խղճում եմ նրան, բայց երբեմն էլ մտածում եմ, որ նա այդ չի զգում, ինչպես կզգայինք մենք»:

Այն, ինչ Նատաշան էգոիզմ է անվանում, պարզապես սեփական ընտանիք ունենալու, կին և մայր լինելու ձգտում է: Նա Սոնյայի նման չէր կարող առանց ամուսնու ապրել: Նատաշային ամուսին էր պետք... Միբեռու, ամուսնու և ընտանիքի համար ապրելու ընդունակ համարելով իրեն՝ Նատաշան ստառապում և շատ ծանր էր տանում մենակությունը:

Նա ինքն իրեն խղճում էր. ափսոսում, որ այդպես իզուր կորչում է այդ

ամբողջ ժամանակամիջոցում, մինչդեռ զգում էր, որ ինքն այնքան ընդու-
նակ էր սիրելու և սիրվելու:

«Մայրիկ, ես նրան եմ ուզում: Ինչու՞ համար եմ ես այսպես կորչում,
մայրիկ...»:

«Եվ գլխավորը,— ես պառավում եմ,— այ թե ինչ: էլ չի լինի այն, ինչ
այժմ կա մեզս»:

«Այն միտքը, թե իր լավագույն ժամանակը այդպես իզուր է կորչում,
ինչը որ սակայն կարող էր գործադրել նրան սիրելու համար,— շարունակ
տանջում էր նատաշային»:

Այս ծանր ապրումները (կյանքն այդպես իզուր կորչում է), ինչ-որ շա-
փով նախապատրաստեցին նատաշայի «անկումը»՝ նրա սերը Անատոլի Կու-
րազինի նկատմամբ: Ահա թե ում համար նա կապրի... Սակայն նատաշայի
այս հրապուրանքը ողորդական վախճան ունեցավ իր համար: Եվ նույն միտ-
քը՝ առաջվանից ավելի ուժեղ, սկսեց տանջել նրան՝ ապրում է իզուր, որևէ
մեկի համար անօգուտ, ահալն եմ, ջահել, և գիտեմ, որ հիմա բարի եմ, առաջ
ես վատն էի, իսկ հիմա բարի եմ, ես գիտեմ,— մտածում էր նա,— իսկ այս-
պես իզուր, որևէ մեկի համար անօգուտ, անցնում են լավագույն տարիներս»:

Բոլոր այս մեծ տառապանքներն անծանոթ են Սոնյային, անծանոթ են
նաև ընտանեկան կյանքի ուրախությունները:



Սոնյային Տոլստոյը խզճում էր, էլենին՝ ատում: Էլենն ամուսնացած էր
(նրան ամուսնացրին Պիեռի հետ), բայց նա չէր ուզում ընտանիք, երեխա ու-
նենալ: Ամուսնությունից մի քանի տարի անց, նատաշան գարմանում էր
«Ի՞նչ հիմարություններ— մեղրամիս, և որ իսկական երջանկությունը առաջ՝
չըջանում է լինում: Ընդհակառակն, հիմա ամենալավն է»: Մինչդեռ էլենը
երբեք չիմացավ սիրո իսկական ուրախությունները: Ահա թե ինչպես է նկա-
րագրված նրա առաջին համբույրը Պիեռի հետ.

«— Ա՛հ, վերցրեք այդ... — նա ցույց տվեց ակնոցը:— Պիեռը ակնոցը
վերցրեց, և նրա աչքերը, ակնոցը վերցրած մարդկանց աչքերի տարօրինակ
արտահայտությունից դատ, վախեցած, հարցական նայվածք ունեին: Նա ու-
զեց կռանալ, համբուրել էլենի ձեռքը, բայց էլենը գլխի արագ ու մոլեգին
շարժումով շուրթերը հպեց Պիեռի շրթունքներին: Նրա դեմքը՝ իր փոխված
և անհաճոց-ցրված արտահայտությամբ՝ գարմացրեց Պիեռին»:

Էլենը (հակառակ նատաշայի) ձգտում էր ապրել իր և իր գեղեցիկ մարմնի
համար: Նա սիրում էր իր մարմինը, սիրում էր ցուցադրել այն: Նկարագրե-
լով էլենին օպերայում՝ Տոլստոյն ընդգծում է. «Մերի էլենը նրա կողքին
նստած...», «Վոմսուհի Բեզուխովան վեր կացավ, դարձավ դեպի Ռոստովների
օթյակը (նրա կուրծքը բուրբուլի մերկ էր)...»:

Էլենին սիրահարված էր նրա եղբայրը՝ Անատոլը, նա էլ սիրահարված էր
և զրորը: «Անատոլը գալիս էր նրա մոտ նրանից փող վերցնելու և համբուրում
էր նրա բաց ուսերը: Նա Անատոլին փող չէր տալիս, բայց թողնում էր, որ նա

իրեն համբուրի...»: Էլենը հավատափոխ դարձավ կաթոլիկություն լուրջանք,
որպեսզի Պիեռի հետ իր ամուսնությունը շեղյալ համարի և ամուսնանա կա-
րևոր դիրք ունեցող իր երկու սիրեկաններից որևէ մեկի հետ: Նրա համար բա-
րոյական ոչ մի սկզբունք չկա: Գոյություն չունեին դրանք նաև բարձր հասա-
րակության համար, որը դատապարտում էր ասնբարոյական Պիեռին և այն-
պես կարեկցում «դժբախտ» էլենին, քանի որ վերջինս չէր կարողանում որո-
շել, թե երկու սիրեկաններից որի հետ ամուսնանա: Հայրը նրան խորհուրդ
էր տալիս վարվել այնպես, ինչպես թելադրում է... սիրտը: (Արատավոր
մարդիկ միշտ էլ ճիշտ և լավ են ասում: Ահա և իշխան Վասիլին ասաց սրտի
մասին): Բիլիբիդը հարցնում է էլենին, թե ինչպես կընդունի նրա ամուսնա-
նալուց ցանկությունը ամուսինը՝ Պիեռը. հարցնում է,— հեղուկ է Տոլստո-
յը,— «իր ամուր հռչակի հետևանքով լվախենալով վարկաբեկել իրեն այդ
միամիտ հարցով»: Տոլստոյը ծաղրում է բարձրաշխարհիկ հասարակությունն
ու նրա դատողությունները: «Իսկապես կային,— կծու սարկավածով նկատում
է նա,— նախապաշարունակ մեջ քարացած որոշ մարդիկ, որ, չկարողանա-
լով ըմբռնել հարցի բուն էությունը, այդ մտահաջցումի մեջ տեսնում էին
ամուսնություն խորհրդի անարգում»:

Տոլստոյին ատելի է ոչ միայն էլենը, այլև Կուրազինների ամբողջ ընտա-
նիքը, որն ախտավոր և քայքայված ընտանիքի իսկական մարմնացումն է,
«Եթե ամուսնության նպատակը ընտանիքն է,— գրում է Տոլստոյը,— ապա
նա, ով կցանկանա ունենալ շատ կին ու մարդ, թերևս շատ բավականություն
ստանա, բայց ոչ մի դեպքում ընտանիք չի ունենա»: Կուրազինների ընտանի-
քում ընտանիք չկա, և այդպիսի ընտանիքի երեխաներն ի վիճակի էլ չեն իրենց
ընտանիքներն ունենալ:

Կուրազինները շրջապատին միայն դժբախտություն են բերում: Չկա
ստորություն, որին նրանք ընդունակ չլինեն: Նրանք ուզում են մյուսանից
ավելի շատ օրիցնել կյանքից: Եվ կարծես իրենց նպատակների մեջ նրանք
առաջադիմում են, կարծես թե անսկզբունքայնությունը, զուգակցված անբա-
րոյականության հետ, հաջողակ է դարձնում նրանց: Արդյունքը՝ շահած կյան-
քըն է, որը, սակայն, ինչպես պարզվում է, տանու է տրված:



Կյանքը կարելի է հաջողված համարել, եթե այն բարոյապես մաքուր է
եղել:

«Պատերազմ և խաղաղություն» վեպի երկու հերոսները՝ Բորիս Գրու-
բեցկոյը և Նիկոլայ Ռոստովը, ամուսնանում են հարուստ հարսնացուների
հետ և դրանով իսկ կարգավորում իրենց նյութական վիճակը: Սակայն նրանք
բոլորովին տարբեր մարդիկ են, և վեպում տարբեր ձևով էլ մեկնաբանվում են
նրանց արարքները: Գրուբեցկոյը կարիերիստ է: «Նա մոտենում և ծանոթու-
թյուն էր հաստատում միայն այն մարդկանց հետ, որոնք իրենից բարձր էին,
ուստի և կարող էին օգտակար լինել: Նա սիրում էր Պետերբուրգը և արհամար-
հում Մոսկվան: Գրուբեցկոյը իր հարուստ, բայց լսիրած հարսնացուի հա-

մար կերկերուն ձայնով կարգում է «Քշվառ կիզան», ամուսնանում է շփ-
բած կնոջ հետ, ինքն իրեն միտքարելով, «որ միշտ էլ կարող է այնպես դա-
սավորել իր կյանքը, որ թիչ տեսնի նրան»։ Կարողություն ձեռք բերելու համար
նա ստիպված է շատ բան զիջել։ Հայրնացուցի կարողությունը Բորիսի
համար խայծ է։ Հենց սրան էլ ձգտում է նա այդքան տենդորեն։

Նիկոլայ Ռոստովի համար հարսնացուի կարողությունը խոշորագույն է ի-
րենց սիրո ճանապարհին։ «Հարուստ ժառանգուհու հետ ամուսնանալու միտ-
քը, որին առաջարկում էին նրան ազնվականուհիները, նրան զզվելի էր թվում»։
Եվ եթե նա, այնուամենայնիվ, ամուսնանում է իշխանուհի Մարիայի հետ,
ապա միայն այն պատճառով, որ նրանց սերը փոխադարձ էր։ Նիկոլայ Ռոս-
տովի անշահախանդիր սերը ցույց տալու համար Տոլստոյը, չնայած վեպի
ավանդական ձևերի հանդեպ ունեցած անբարյացակամ վերաբերմունքին,
հնարավոր է համարել «Պատերազմ և խաղաղություն» մեջ մտցնել սիրահա-
րական վեպերին հատուկ մի տեսարան (Նիկոլայ Ռոստովի հանդիպումը Իշ-
խանուհի Մարիայի հետ Բոգոչարովյուում), երիտասարդ սպան (ասպետը)
փրկում է աղջկան, այստեղից էլ ծնվում է նրանց սերը։ Սակայն այս ուսման-
տիկ միջադեպից հետո էլ, նախքան ամուսնանալը, Նիկոլայ Ռոստովը և Իշ-
խանուհի Մարիան շատ են խորհում և շատ բան վերապրում։

Նիկոլայ Ռոստովը ամուսնանում է սիրելով, Բորիս Գրուբոցկոյը՝ հաշվե-
նդկատությունից։



«Պատերազմ և խաղաղություն» վեպի հերոսների մասին կարելի է դա-
տել ըստ նրանց ընտանիքների։ Նատաշան՝ Տոլստոյի ամենասիրելի հերոսու-
հին, ծնվել է ընտանիքի և ընտանեկան երջանկության համար։ «Անարկան»,
որի մեջ միանգամայն խորասուզվեց Նատաշան, — ընտանիքն էր, այսինքն՝
ամուսինը, որին պետք էր պահել այնպես, որպեսզի նա անբաժան պատկա-
հեք իրեն, տանը, — և երեխաները, որոնց պետք էր կրել արգանքում, մենչև
կերակրել և դաստիարակել»։

Ընտանիքի պրոբլեմը շատ էր զբաղեցնում Տոլստոյին։ Վերջաբանում
նա ներկայացնում է Նիկոլայ Ռոստովի և Պիեռ Բեզուխովի ընտանիքները,
որոնք վիճում են ժամանակի այրող հարցերի շուրջ։ Գրանք հրշանիկ ընտա-
նիքներ են, միմյանց պատկանող մարդիկ։ Բայց հետևում է, արդյոք, այստե-
ղից, թե ընտանեկան հետաքրքրություններով ապրող այս մարդիկ իրենց
հետո են պահում այն ամենից, ինչ տեղի է ունենում աշխարհում, և դիտում
իսկ հասարակական պատկերության իրավունք ունեն։ Իհարկե՝ ոչ, քանի որ
ընտանեկան հետաքրքրությունները չեն կարող սահմանափակվել ընտանե-
կան միջոցառումով, դրանք, վերջին հաշվով, զուտ ընտանեկան չեն։ Ընտանիք-
ների հայրեր՝ Նիկոլայ Ռոստովն ու Պիեռ Բեզուխովը, վիճում են քաղաքա-
կան թիմաներով, ժողովրդաված են իրենց երեխաների ապագայով։ Եվ ավելի
բարձր բան չկա (ընտանիքում և հասարակության մեջ), քան երեխաների շա-
հերը։ Անձնական միշտ էլ միահյուսվում է հասարակականին։

Նատաշային սիրահարված Պիեռին թվում էր, թե ամենակարևորը իր
սերն է, որ աշխարհում գրանից ավելի կարևոր բան չկա։ Պիեռի զգացումները
բարձր էին ու մաքուր։ «Եհ, թեկուզ և ինչ-որ մեկը կողոպտել է պետությունն
ու թագավորին, իսկ պետությունը և թագավորը նրան պատիվ ու հարգանք
են տալիս, իսկ Նատաշան երեկ ժպտաց ինձ և խնդրեց իր մոտ գնալ, և ես
սիրում եմ նրան, և երբեք ոչ ոք չի իմանա այդքան, — խորհում էր Պիեռը։ Սա-
կայն դառնալով երջանիկ ամուսին և հայր, նա չնեփակվեց իր զգացմունք-
ների մեջ, չսահմանափակեց իր հասարակական գործունեությունը։ Վեր-
ջաբանում Պիեռը վրդովվում է. « Գե, և ամեն բան կործանվում է։ Դատա-
րաններում՝ գողություն, բանակում՝ միայն մահակ, քայլամարտություն.
լուսավորությունը խեղդում են։ Ինչը ջահել է, ազնիվ խորտակում են։
Պիեռը չերմարեն քարոզում է հասարակական ակտիվություն, ապացուցում,
որ պետք է համախմբվել, մխրճվել կյանքի մեջ, նոր ուղղություն տալ կյան-
քին։ Այդ նպատակով էլ Պիեռն ու նրա համախոհներն ակտիվություն են կազ-
մում։ Նատաշային բացատրելով իր գործունեությունն ակտիվության, Պիեռն ա-
սում է. «Իմ ամբողջ միտքն այն է, որ եթե արատավոր մարդիկ կապված են
իրար հետ և ուժ են կազմում, ապա ազնիվ մարդիկ էլ նույնը պետք է անեն։
Որքան պարզ է»։

Պիեռն ասում է իր նշանավոր խոսքը, որը թերևս ամենանշանավորն է
«Պատերազմ և խաղաղություն» վեպում։ Ամեն ինչ այնքան պարզ է և,
ավա՞ղ, այնքան բարդ։ Արատավոր մարդիկ կապված են միմյանց հետ,
մինչդեռ պարզվում է, որ ազնիվ մարդկանց համար այնքան էլ դյուրին չէ
միևեռյան անել։ Պիեռն ասում է, որ Պետերբուրգում ամեն ինչ կազմալու-
ծվել էր, և որ «իրեն հաջողվեց բոլորին միացնել»։

Տոլստոյը մտադիր էր վեպ գրել դեկարրիստի մասին։ Մտահղացումը
խիստ փոխվեց։ Նա գրեց «Պատերազմ և խաղաղությունը», սակայն չը-
մտացավ իր սկզբնական մտադրությունը։ 1820 թվականի Պիեռի մեջ ճանաչ-
վում է դեկարրիստը։ Տոլստոյը համամիտ է Պիեռի գաղափարներին։ Նա ա-
սում է, որ այդ գաղափարներին է պատկանում ապագան։ Նիկոլային կան
Անդրեյի որդին, երդվում է Պիեռին չանել այն, որից անգամ ետ (հայրը — Լ. Ս.)
գոհ կմնար...»։

Նիկոլային կարող էր մի ամբողջ կյանք ապրել,
ավարտվում է վերջաբանի առաջին մասը, և մենք հրաժեշտ ենք տալիս «Պա-
տերազմ և խաղաղություն» վեպի հերոսներին։ (Երկրորդ մասը նվիրված է
ընդհանուր փոխոստիպական հարցերին)։ Նիկոլային կերպարն անհրաժեշտ
էր Տոլստոյին, որպեսզի գիրքն անավարտ թողնելու նա գիտակցաբար ընդհա-
տում է պատմությունը։



1876 թվականի ապրիլին Լ. Ն. Տոլստոյը և քննադատ Ն. Ն. Ստրախովը
նամակներ են փոխանակում։ Ստրախովը հարցնում է, թե, արդյոք ճիշտ է
ինքն հասկացել «Աննա Կարենինայի» գաղափարը. «Երևոք ինձ երբեք ոչինչ

չեք ասել այդ գաղափարի մասին (կամ գուցե ե՞ս չեմ հասկացել)»։ Տոլստոյը պատասխանում է. «...Ձեր դատողությունն իմ վեպի մասին ճիշտ է, բայց ամեն ինչ չէ, որ ճիշտ է, այսինքն ամեն բան էլ ճիշտ է, սակայն ձեր ասածը չի արտահայտում այն ամենը, ինչ ես ցանկացել եմ ասել... Եթե ես ուզեմ այի բռնորով ասել այն ամենը, ինչ ցանկացել եմ արտահայտել վեպում, ապա պետք է գրեի հենց այն վեպը, որ գրել եմ առաջուց։ Իսկ եթե կարճատես քննադատները կարծում են, թե ես ցանկացել եմ նկարագրել սոսկ այն, ինչ ինձ դուր է եկել,— թե ինչպես է ճաշում Սրբոնսկին և ինչ ուտեր ունի Կարենինան,— սխալվում եմ։ Այն ամենը, գրեթե այն ամենը, ինչ ես գրել եմ, գրել եմ ելնելով իրար շղթաված մտքերն ի մի հավաքելու անհրաժեշտությունից, որպեսզի այդ մտքերը մարմնավորվեն. բայց բառերով առանձին արտահայտված յուրաքանչյուր միտք կորցնում է իր իմաստը, ահավոր շփոթվածությունում, երբ դիտվում է այն շղթայից դուրս, որին հյուսված է։ Իսկ այդ շղթան հյուսված է (կարծում եմ) ոչ թե մտքից, այլ ինչ-որ ուրիշ բանից, և այդ շղթայակցման հիմքը ոչ մի կերպ հնարավոր չէ արտահայտել ուղղակի բառերով, այլ կարելի է արտահայտել անուղղակիորեն՝ բառերով նկարագրելով կերպարներ, գործողություններ, իրավիճակներ։

Ի՞նչ եթե քննադատներն այժմ արդեն հասկանում և հողվածում կարողանում են արտահայտել այն, ինչ ես ուզում եմ ասել, ապա ես շնորհավորում եմ նրանց...»։

Տոլստոյը նշում է այն անլուծելի հակասությունը, որ կա գեղարվեստական ստեղծագործության և դրանց նվիրված ուսումնասիրությունների և հողվածների միջև։ Սակայն հենց այդ հակասության շնորհիվ էլ հնարավոր է անհրաժեշտ է դառնում քննադատության գոյությունը։ Եթե հողվածում հնարավոր լիներ ասել այն ամենը, ինչ ասված է վեպում, ապա ավելորդ կդառնար կա՛մ վիպասանի, կա՛մ քննադատի գործունեությունը։

Քննադատությունը ծագել է գեղարվեստական ստեղծագործությունը մեկնաբանելու անհրաժեշտությունից։ Մեկնաբանելու և ճանաչելու այս անհրաժեշտությունն էլ հենց դառնում է գեղարվեստական գրականության գոյության կարևոր ձևերից մեկը։ Չէ՞ որ երբ մարում է մեկնաբանելու պահանջը, մարում է նաև հետաքրքրությունը տվյալ ստեղծագործության նկատմամբ։ Այնպիսի հավերժական գրքեր, ինչպիսին է Պատերազմ և խաղաղությունը, հենց նրա համար են հավերժական, որ կարդացվում և նորից ու նորից մեկնաբանվում են բոլոր ժամանակներում։

Ուզում ենք հասկանալ հանճարին։



Լ. Ն. Տոլստոյի «Պատերազմ և խաղաղությունը» թարգմանել է հայ գրականության նշանավոր վարպետներից մեկը՝ Ստ. Զորյանը, մի հեղինակ, որի ստեղծագործական անհատականության ձևավորման գործում անտարակույս է Լ. Տոլստոյի դերը։

Ստ. Զորյանը տարբեր առիթներով (Վ. Տերյանի մասին հուշերում, մի շարք հողվածներում) անիրազարձի է իր այս թարգմանության հանգամանք-

ներին, սկզբունքներին և, մասնավորապես, Լ. Տոլստոյի ստեղծագործությունը։ Իր մի հողվածում Ստ. Զորյանը գրել է. «Որպես և Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն», «Կազակներ» և մի քանի այլ մանր էրթերի թարգմանիչ՝ անհրաժեշտ եմ զգում ընդգծել այստեղ մի հանգամանք. ընայած նրա երկերի թարգմանության դժվարության, և ստեղծագործական մեծ ուրախություն էի ապրում՝ այնքան խոր հայտնաբերություններ էի հանդիպում ու շատ բան էի սովորում։ Թափանցելով նրա մեթոդի և արվեստի մեջ՝ մարդ ավելի է զգում նրա վարպետությունը. սակավ խոսքերով շատ բան ասել, քիչ, բայց բնորոշ խոսքերով կենդանացնել պերսոնաժներին՝ շոշափելի լինելու աստիճան։

Այո, և և Տոլստոյի հանճարեղ երկերից շատ բան կարող է սովորել յուրաքանչյուր մարդ, մանավանդ գրողը, առավել ևս՝ երիտասարդ գրողը»։

Ստ. Զորյանը «Պատերազմ և խաղաղությունը», հավանաբար, թարգմանել է վեպի 1931 թվականի հրատարակությունից, որը լույս է տեսել պրոֆ. Ա. Գրուզինսկու մեկնաբանություններով և ծանոթագրություններով։ Թարգմանության վերջում բերված են նաև այդ մեկնաբանությունների և ծանոթագրությունների մեծ մասը։ Սակայն, ինչպես ասում է Ստ. Զորյանը մի սուպրադրված հարցազրույցում, վեպը թարգմանելիս նա օգտվել է նաև վեպի այլ հրատարակություններից։

Վեպի թարգմանությունը առաջին անգամ լույս է ընծայել Պետական հրատարակությունը 1935—1940 թվականներին, երկրորդ անգամ՝ Լև Տոլստոյի երկերի տասնհատորյակում (3—6 հատորներ, Հայպետհրատ, 1948—1950 թթ.)։

Լևոն Մկրտչյան

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

I

— Eh bien, mon prince. Gênes et Lucques ne sont plus que des apanages, des կալվածները, de la famille Buonaparte. Non, je vous prévient, que si vous ne me dites pas, que nous avons la guerre, si vous vous permettez encore de pallier toutes les infamies, toutes les atrocités de cet Antichrist (ma parole, j'y crois)—je ne vous connais plus, vous n'êtes plus mon ami, vous n'êtes plus իմ հավատարիմ ստրուկը, comme vous dites¹. է, բարև ձեզ, բարև: Je vois que je vous fais peur², նստեցեք և պատմեցեք:

Այսպես էր խոսում 1805 թվի հուլիսին հայտնի Աննա Պավլովնա Շերերը, կայսրուհի Մարիա Յեռոգորովնայի մերձավոր ֆրեյլինան, դիմավորելով նշանավոր ու բարձրաստիճան իշխան Վասիլին, որ առաջին եկողն էր նրա երեկույթին: Մի քանի օր էր Աննա Պավլովնան հազում էր. իր ասելով՝ գրիպ

¹ «է, իշխան, Ջենովան ու Լուկան Բուոնապարտի տոհմի կալվածներն են: Այ, ես ձեզ նախազգուշացնում եմ, եթե ինձ չեք ասի, որ մենք պատերազմ ունենք, եթե դուք էլի թույլ կտաք ձեզ պաշտպանել այդ նեոի (ես, իսկապես, հավատում եմ, որ նա նեո է) գարշելի ու սարսափելի արարքները,— ես ձեզ այլևս չեմ ճանաչում, դուք այլևս իմ բարեկամը չեք դուք այլևս իմ հավատարիմ ստրուկը չեք. ինչպես դուք եք ասում, (Ֆրանս.):»

² Տեսնում եմ, որ ես ձեզ վախեցնում եմ:

ունենր (գրիպն այն ժամանակ նոր բառ էր, որ գործ էին ածում շատ սակավ մարդիկ): Առավոտյան կարմրազգեստ լաքեյի միջոցով ցրած բոլոր հրավիրատուների մեջ նա միատեսակ գրեկ էր.

«Si vous n'avez rien de mieux à faire, M. le comte (կամ mon prince), et si la perspective de passer ea soirée chez une pauvre malade ne vous effraye pas trop, je serai charmée de vous voir chez moi entre 7 et 10 heures. Annette Scherer»¹.

— Dieu, quelle virulente sortie!² — այդպիսի ընդունելությունից բնավ չշփոթվելով պատասխանեց ներս մտնող իշխանը՝ հագին պալատական ասեղնագործ նշանազգեստ, երկարաձիտ գուլպաներ, կոշիկներ. կուրծքն աստղերով զարդարած, տափակ դեմքին պայծառ արտահայտություն:

Նա խոսում էր այն ընտիր ֆրանսերենով, որով ոչ միայն խոսում, այլև մտածում էին մեր պապերը, և այն հանդարտ, հովանավորող ինտոնացիաներով, որ հատուկ են բարձր շքանում ապրած և պալատում ծերացած նշանավոր մարդուն: Նա մտեցավ Աննա Պավլովնային, համբուրեց նրա ձեռք՝ դեմ անելով նրան անուշահոտ յուղերով օծված ու փայլուն իր ճաղատն ու հանգիստ նստեց բազմոցի վրա:

— Avant tout dites moi, comment vous allez, chère amie?³ Հանգստացրեք ձեր բարեկամին, — ասավ նա, ձայնը չփոխելով և մի եղանակով, որի մեջ, քաղաքավարության ու համակրանքի ետև, զգացվում էր անտարբերություն և անգամ հեգնանք:

— Ի՞նչպես կարելի է առողջ լինել... երբ բարոյապես տանջվում ես: Միթե կարո՞ղ է զգացմունք ունեցող մարդը հանգիստ լինել մեր օրերին, — ասավ Աննա Պավլովնան: — Դուք, հույս ունեմ, ամբողջ երեկոն կմնաք ինձ մոտ:

¹ Եթե դուք, կոմս (կամ իշխան) նկատի չունենք ոչինչ ավելի լավը և եթե երեկոն թշվառ հիվանդին հետ անցկացնելու հեռանկարը ձեզ շատ չի վախեցնում, շատ ուրախ կլինեմ ձեզ այսօր տեսնել իմ տանը յոթ և տասը ժամերի արանքում: Աննետ Շերեր:

² Օ՞, որպիսի դժան հարձակում:

³ Նախ և առաջ ասեք ինչպե՞ս է ձեր առողջությունը, սիրելի բարեկամ,

— Իսկ անգլիական դեսպանի հանդե՞սր: Այսօր շորեքշաբթի է: Պետք է երևամ այնտեղ, — ասավ իշխանը: — Աղջիկս կգա իմ ետևից և կտանի ինձ:

— Կարծում էի այսօրվա տոնը հետաձգված է: Je vous avoue que toutes ces fêtes et tous ces feux d'artifice commencent à devenir insipides¹.

— Եթե իմանային՝ դուք այդ ցանկանում եք, տոնը կհետաձգեին, — ասավ իշխանը, ըստ սովորության, լարած ժամացույցի պես, ասելով բաներ, որոնց նա չէր էլ ուզի, որ հավատան:

— Ne me tourmentez pas. Eh bien, qu'a-t-on décidé par rapport à la dépêche de Novosilzoff? Vous savez tout².

— Ինչպե՞ս ասեմ, — ասավ իշխանը սառը, ձանձրագին եղանակով: — Qu'a-t-on décidé? On a décidé que Buona-parta a brûlé ses vaisseaux, et je crois que nous sommes en train de brûler les nôtres³. — Իշխան վասիլին միշտ խոսում էր ծուլորեն, ինչպես դերասանն է ասում հին պիեսի դերը: Աննա Պավլովնա Շերերը, ընդհակառակը, շնայած իր քառասունամյա տարիքին, լի էր աշխույժով ու եռանդով:

Խանդավառ կին լինելը դարձել էր նրա հասարակական գիրքը, և երբեմն, անգամ երբ նա այդ չէր էլ ուզում, որպեսզի չհիասթափեցնի իրեն ճանաչող մարդկանց՝ դառնում էր խանդավառ: Զուսպ ժպիտը, որ շարունակ խաղում էր Աննա Պավլովնայի դեմքին, թեև չէր սազում նրա մաշված դիմագծերին, արտահայտում էր, ինչպես երես առած երեխաների մոտ, իր սիրելի պակասության մշտական գիտակցությունը, պակասություն, որից նա չի ուզում, չի կարող և կարևոր չի համարում ուղղվել:

Քաղաքական գործերին վերաբերող զրույցի կեսին՝ Աննա Պավլովնան տաքացավ:

¹ Խոստովանում եմ՝ բոլոր այդ հանդեսներն ու հրավառությունները անտանելի են դառնում:

² Ինձ մի տանջե՛ր: Հը, ի՞նչ որոշեցին նովոսիլցևի հեռագրի առթիվ: Դուք բոլորը գիտեք:

³ Ի՞նչ որոշեցին: Որոշեցին, որ Բուտնապարտն այրել է իր բոլոր նավերը, և հենք նույնպես, կարծեմ, պատրաստ ենք այրել մերը:

— Ա՛խ, Ավստրիայի մասին մի՛ խոսեք ինձ հետ: Ես, գուցե ոչինչ չեմ հասկանում, բայց Ավստրիան երբեք պատե-
րազմ չի ցանկացել և չի ցանկանում: Նա դավաճանում է
մեզ: Ռուսաստանը մենա՛կ պետք է դառնա Եվրոպայի փրկի-
չը: Մեր բարերարը գիտի իր բարձր կոչումը և հավատարիմ
կհնա դրան: Ահա մի բան, որին ես հավատում եմ: Մեր բարի և
սքանչելի թագավորին սպասում է մեծագույն մի դեր այս
աշխարհում, և նա այնքան առաքինի ու բարի է, որ աստված
կօգնի նրան, և նա կիրազործի իր կոչումը՝ կճնշի ունուցիցիայի
հիդրան, որն այժմ էլ ավելի սարսափելի է դարձել՝ հանձին
այդ մարդասպանի ու շարագործի: Մենք մենակ պետք է քա-
վենք անմեղի արյունը... Ո՛ւմ վրա պետք է հույս դնենք, հարց-
նում եմ ձեզ... Անգլիան իր վաճառականական հոգով չի ըմ-
բռնի և չի կարող ըմբռնել Ալեքսանդր կայսեր հոգու ամբողջ
մեծությունը: Նա հրաժարվեց պարպել Մալթան: Նա մեր
գործողութունների մեջ հետին մտքեր է փնտրում: Ի՞նչ են
ասել նրանք Նովոսիլցեին... Ոչինչ: Նրանք չեն ըմբռնել, և
չեն կարող ըմբռնել անձնազոհությունը մեր կայսեր, որ ոչինչ
չի ցանկանում իր համար, այլ ամեն ինչ ցանկանում է աշխար-
հի բարօրության համար: Եվ ի՞նչ խոստացան նրանք: Ոչինչ է
եվ ինչ էլ խոստացել են, այն էլ չի լինի: Պրուսիան հայտարա-
րել է արդեն, թե Բոնապարտն անհաղթելի է և թե ամբողջ
Եվրոպան ոչինչ չի կարող նրա դեմ... Եվ ես չեմ հավատում
թե՛ Հարդենբերգի և թե Հաուզվիցի ո՛չ մի խոսքին: Cette
fameuse neutralité prussienne, ce n'est qu'un piège¹. Ես
հավատում եմ միայն աստծուն և մեր սիրելի թագավորի բարձր
ճակատագրին: Նա կփրկի Եվրոպան... — Նա հանկարծ կանգ
առավ ու հեզնորեն ժպտաց իր բունկման վրա:

— Ես կարծում եմ, — ասավ իշխանը ժպտալով, — եթե
մեր սիրելի Վինցենտերոզեյի փոխարեն ձե՛զ ուղարկեինք,
դուք գրոհով կառնեիք պրուսական թագավորի համաձայնու-
թյունը: Դուք այնպես պերճախոս եք: Դուք ինձ թեյ կտա՞ք:

— Իսկույն: A propos, — ավելացրեց նա, կրկին հանգստա-
նալով, — այսօր ինձ մոտ երկու շատ հեռաքրքրական մարդիկ
են լինելու, le vicomte de Mortemart, il est allié aux Mont-

morency par les Rohans¹. Ֆրանսիայի լավագույն տոհմե-
րից մեկը: Դա լավ վտարանդիներից մեկն է, իսկականներից:
Եվ հետո l'abbé Morio². Դուք ճանաչո՞ւմ եք այդ խորա՛միտ
մարդուն: Թագավորն ընդունել է նրան: Գիտե՞ք:

— Ա՛: Շատ ուրախ կլինեմ, — ասավ իշխանը: — Ասա-
ցեք, — ավելացրեց նա, կարծես հենց նոր միայն հիշելով ինչ-
որ բան և առանձնապես անփուլթ, մինչդեռ այն, ինչի մասին
հարցնում էր, նրա այցելության գլխավոր նպատակն էր, —
ճի՞շտ է, որ l'impératrice-mère³ ցանկանում է, որ բարոն
Ֆունկեն նշանակվի առաջին քարտուղար Վեննայում: C'est
un pauvre sire, ce baron, à ce qu'il paraît⁴. — Իշխան Վասի-
լին ցանկանում է իր որդու համար ձեռք բերել այդ պաշտոնը,
որ սակայն կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի միջոցով չա-
նում էին տալ բարոնին:

Աննա Պավլովնան գրեթե փակեց աչքերը ի նշան այն բանի,
որ ոչ ինքը, ոչ ուրիշ մեկը չեն կարող դատել այն բանի մասին,
թե ինչն է հաճելի կամ ինչն է դուր գալիս կայսրուհուն:

— Monsieur le baron de Funke a été recommandé à
l'impératrice-mère par sa soeur⁵, — ասավ նա տխրագին,
չոր եղանակով: Այն վայրկյանին, երբ Աննա Պավլովնան հիշեց
կայսրուհուն, նրա դեմքը հանկարծ ընդունեց հավատարմու-
թյան և հարգանքի խորին ու անկեղծ արտահայտություն,
միացած մի տխրության հետ, որ պատահում էր նրան ամեն
անգամ, երբ զրույցի մեջ հիշում էր իր բարձր հովանավորու-
հուն: Նա ասավ, որ նորին մեծությունը բարեհաճել է բարոն
Ֆունկեին ցույց տալ beaucoup d'estime⁶, ու նրա նայվածքը
նորից մշուշվեց տխրությամբ:

Իշխանն անտարբեր լուեց: Աննա Պավլովնան իրեն հատուկ
պալատական և կանացի ճարպիկությամբ ու տակտի արագու-
թյամբ, կամեցավ և՛ խայթել իշխանին, որ համարձակվեց

¹ Ի դեպ — վիկոնտ Մորտեմարը. նա ազգակցութուն ունի Սոնմո-
րանսիի հետ Ռոզանների միջոցով:

² Աբբա Մորիո:

³ Մայր-կայսրուհին:

⁴ Այդ բարոնը, կարծեմ, խղճուկ անձնավորութուն է:

⁵ Բարոն Ֆունկեին մայր-կայսրուհուն հանձնարարել է իր քույրը:

⁶ Շատ հարգանք:

¹ Պրուսիայի այդ տխրահույզ ընդունությունը — թակարդ է միայն:

այդպէս արտահայտել կայսրուհու հանձնարարած մարդու մասին, և միևնույն ժամանակ մխիթարել նրան:

— Mais à propos de votre famille¹, — ասով նա, — գիտե՞ք, որ ձեր դուստրը այն օրից, երբ սկսել է հասարակութեան մեջ երևալ, fait les délices de tout le monde. On la trouve belle, comme le jour².

Իշխանը գլուխը խոնարհեց ի նշան հարգանքի և երախտագիտութեան:

— Ես հաճախ մտածում եմ, — շարունակեց Աննա Պավլովնան բոսնիական լուսթյունից հետո, նստած տեղը մոտենալով իշխանին և սիրալիր ժպտալով, կարծես դրանով արտահայտելով, որ քաղաքական ու աշխարհիկ գրույցները վերջացան և այժմ սկսվում է մտերմականը, — ես հաճախ մտածում եմ, թե ինչպէս երբեմն անարդար կերպով է բաշխվում կյանքի երջանկությունը: Ինչո՞ւ համար է բախտը ձեզ տվել այդպիսի երկու հիանալի զավակներ (բացի Անատոլիից, կրտսերից, ես նրան չեմ սիրում, — ավելացրեց նա անառարկելի ձևով, հոնքերը բարձրացնելով), այդպիսի սքանչելի զավակներ: Իսկ դուք, ճիշտն ասած՝ շատ քիչ եք գնահատում նրանց և դրա համար նրանց արժանի չեք:

Եվ նա ժպտաց իր խանդավառ ժպիտով:

— Que voulez-vous? Lafater aurait dit que je n'ai pas la bosse de la paternité³, — ասով իշխանը:

— Թողեք հանաքները: Ես ցանկանում էի լուրջ խոսել ձեզ հետ: Գիտե՞ք, ես դժգոհ եմ ձեր կրտսեր որդուց: Խոսքը մեր մեջ (Աննա Պավլովնայի դեմքը տխուր արտահայտություն ընդունեց), նրա մասին խոսում էին մայր-կայսրուհու մոտ և խղճում ձեզ...

Իշխանը չէր պատասխանում, բայց Աննա Պավլովնան անխոս, խորհրդավորութեամբ նայելով նրան, սպասում էր պատասխանի: Իշխան Վասիլին հոնքերը կիտեց:

¹ Ի դեպ ձեր ընտանիքի մասին:

² Դարձել է ողջ հասարակութեան հիացման առարկան: Նրան գտնում են գեղեցիկ, ինչպէս լույսը:

³ Ի՞նչ եք ուզում դուք: Լաֆատերը կասեր, թե ես ծնողական սիրո ուսուցիչ չունեմ:

— Դուք ի՞նչ եք ցանկանում, որ ես անեմ, — ասով նա վերջապես: — Դուք գիտե՞ք, որ ես նրանց կրթութեան, դաստիարակութեան համար արել եմ բոլորը, ինչ կարող է մի հայր, և երկուսն էլ դուրս եկան des imbéciles¹. Իպպոլիտը, զոնե, հանգիստ հիմար է, իսկ Անատոլը — անհանգիստ: Ահա միակ տարբերությունը, — ասով նա, ժպտալով ավելի անբնական ու ոգևորված, քան սովորաբար, և այդ միջոցին նրա բերանի մոտերքը գոյացած կնճիռներում առանձնապես երևան եկավ ինչ-որ անսպասելի կոպիտ ու տհաճ մի բան:

— Եվ ինչո՞ւ են ձեզ նման մարդիկ զավակներ ունենում: Եթե դուք հայր չլինեիք, ես ոչ մի բանում չէի կարող հանգիմանել ձեզ, — ասով Աննա Պավլովնան, աչքերը մտախոհ վեր բարձրացնելով:

— Je suis votre² հավատարիմ ստրուկը, et à vous seule je puis l'avouer. Իմ զավակները — ce sont les entraves de mon existence³. Դա իմ խաչն է: Ես այսպէս եմ բացատրում ինձ: Que voulez vous⁴... — նա լռեց, մի շարժումով արտահայտելով իր հնազանդությունը դաժան ճակատագրին:

Աննա Պավլովնան մտածմունքի մեջ ընկավ:

— Դուք երբեք չեք մտածել ձեր անառակ որդի Անատոլիին ամուսնացնելու մասին: Ասում են, — ասով Աննա Պավլովնան, — թե պառավ աղջիկները ont la manie des mariages⁵. Ես տակավին այդ թուլությունը չեմ զգում մեջս, բայց ես մի petite personne⁶ ունեմ, որը շատ դժբախտ է իր հոր հետ, une parente à nous, une princesse⁷ Բալկոնսկայան:

Իշխան Վասիլին չէր պատասխանում, թեև աշխարհիկ մարդկանց հատուկ՝ կոահելու և հիշելու արագութեամբ, գլխի շարժումով ցույց տվեց, թե նկատի առավ այդ տեղեկությունները:

¹ Հիմարներ:

² Ես ձեր...

³ Միայն ձեզ կարող եմ խոստովանել: Իմ զավակները — իմ գոյութեան բռն են:

⁴ Ի՞նչ արած:

⁵ Ամուսնացնելու մանիա ունեն:

⁶ Փոքրիկ անձնավորություն:

⁷ Մեր աղգականուհին է, իշխանադուստր...

— Ո՛չ, գուր գիտեք, որ այդ Անատոլն ինձ տարեկան 40 000 է նստում, — ասավ նա, ըստ երևույթին, անկարող լինելով զսպել իր մտքերի տխուր ընթացքը: Նա լռեց:

— Ի՛նչ կլինի հինգ տարի հետո, եթե այդպես շարունակվի: Voilà l'avantage d'être père¹. Զեր այդ իշխանադուստրը հարո՛ւստ է:

— Հայրը շատ հարուստ է և ժլատ: Ապրում է գյուղում: Գիտեք, դա հայտնի իշխան Բալկոնսկին է, որ պաշտոնանկ է արված դեռ հանգուցյալ կայսեր օրոք և պրուսական թագավոր Տորչոքումն է ստացել: Նա շատ խելացի մարդ է, բայց տարօրինակություններով և՛ ծանր բնավորության տեր: La pauvre petite est malheureuse, comme les pierres². Իշխանագուստը հղբայր ունի, այն, որ վերջերս ամուսնացավ Lise Մեյնենի հետ, կուտուզովի ադյուտանտն է: Նա այսօր լինելու է ինձ մոտ:

— Ecoutez, chère Annette³, — ասավ իշխանը, բռնելով հանկարծ իր խոսակցի ձեռն ու շփտես ինչու՝ այն դեպի վար թեքելով: — Arrangez-moi cette affaire et je suis votre⁴ հավատարիմ ստրուկը à tout jamais (pan — comme mon կառավարիչը m'écrit des⁵ գեկուցագրերը покой-ер-и): Նա լավ ընտանիքից է և հարուստ: Ա՛յն, ինչ հարկավոր է ինձ:

Նվ նա իրեն հատուկ ազատ ու մտերմական, նուրբ շարժումներով, բռնեց Ֆրեյլինայի ձեռք, համբուրեց այն և, համբուրելով, ճոճեց՝ բազկաթոռի մեջ ընկողմանած ու հայացքն այլ կողմ ուղղելով:

— Attendez⁶, — ասավ Աննա Պավլովնան, կուահելով: — Ես այսօր իսկ Lise-ի (երիտասարդ Բալկոնսկու կնոջ) հետ կըխոսեմ: Նվ, թերևս, հաջողի: Ce sera dans votre famille, que je ferai mon apprentissage de vieille fille⁷.

¹ Անա հայր լինելու առավելությունը:

² Խեղճ դժբախտ է, ինչպես քարերը:

³ Լանցեք, սիրելի Աննետ:

⁴ Գլուխ բերեք այդ բանը ինձ համար, և ես ընդմիտ ձեր...

⁵ Ինչպես գրում է իմ կառավարիչը:

⁶ Սպասեցեք:

⁷ Ես ձեր ընտանիքում կսկսեմ սովորել պառավ աղջիկ արհեստը:

Աննա Պավլովնայի հյուրասրահն սկսեց կամաց-կամաց լցվել: Եկան Պետերբուրգի մեծամեծները, մարդիկ ամենատարբեր հասակի ու բնավորության, բայց միևնույն հասարակությանը պատկանող. եկավ իշխան Վասիլիի դուստրը՝ գեղեցկուհի էլենը. նա եկել էր հոր ետևից, որպեսզի նրա հետ միասին գնան դեսպանի տոնախմբության: Նա շիֆրով էր և պարահանդեսի զգեստով: Եկավ նաև հայտնի, ինչպես la femme la plus séduisante de Pétersbourg¹, ջահել փոքրիկ իշխանուհի Բալկոնսկայան, որ ամուսնացել էր անցյալ ձմեռ և այժմ բարձր շրջաններում չէր լինում իր հղիության պատճառով, բայց տակավին գնում էր փոքրիկ հավաքույթներ: Եկավ իշխան Իպպոլիտը, իշխան Վասիլիի որդին՝ Մորտեմարի հետ, որին և ներկայացրեց. եկավ և Մորիտ աբբան և շատ ուրիշները:

— Դուք դեռ չե՞ք տեսել կամ ծանոթ չե՞ք ma tante-ին, — ասում էր Աննա Պավլովնան եկող հյուրերին և, ամենայն լըրջությամբ, տանում նրանց ցցուն ժապավեններով զարդարված փոքրիկ պառավի մոտ, որ դուրս էր եկել մյուս սենյակից, երբ հյուրերն սկսեցին գալ, տալիս էր նրանց անունները, դանդաղորեն նայվածքը հյուրից դարձնելով ma tante-ի վրա, և ապա հեռանում:

Բոլոր հյուրերը ողջույնի այդ ծեսը կատարում էին ամենքին անհայտ, ամենքին անհետաքրքիր և անհարկավոր մորաքրոջ առաջ: Աննա Պավլովնան տխուր, հանդիսավոր համակրությանմբ հետևում էր նրանց ողջույններին, լուելայն հավանություն տալով նրանց: Ma tante-ն յուրաքանչյուրի հետ միևնույն արտահայտություններով խոսում էր հյուրի առողջության մասին, իր առողջության մասին, և նորին մեծության կայսրուհու առողջության մասին, որ հիմա, փառք ասածու, ավելի լավ էր: Մոտեցող բոլոր հյուրերը, քաղաքավարությունից զրդված՝ շտապողականություն չցուցահանելով, ծանր պարտականություն կատարողի թեթև զգացումով էին հեռանում պառավից, որպեսզի ամբողջ երեկոյի ընթացքում էլ ոչ մի անգամ չմոտենան նրան:

¹ Պետերբուրգի ամենահմայիչ կինը:

Ձահել իշխանուհի Բալկոնսկայան եկել էր ձեռագործի սովեկար թավշյա պայուսակը հետը: Նրա սիրունիկ, սևին տվող բեղիկներով վերին շուրթը կարճ էր ատամների համար, բայց այդպես ավելի ևս դուրեկան էր բացվում և էլ ավելի դուրեկան ձգվում էր երբեմն ու հասնում ներքին շուրթին: Ինչպես այդ միշտ պատահում է միանգամայն գրավիչ կանանց, նրա պակասությունը — շուրթի կարճությունը և կիսաբաց բերանը — թվում էին նրան առանձնահատուկ, միայն նրան սեփական մի գեղեցկություն: Բոլորն ուրախությունը էին նայում այդ, առողջությամբ ու աշխույժով լեցուն ապագա լավիկ մորը, որ այնպես թեթևությամբ էր տանում իր հղիությունը: Սերերին և ձանձրացող, մռայլ երիտասարդներին թվում էր, թե նրան նայելով և նրա հետ մի փոքր խոսելով՝ իրենք ևս զվարթանում, նրան են նմանում: Ով խոսում էր հետը և յուրաքանչյուր խոսքին տեսնում նրա փոքրիկ պայծառ ժպիտն ու շարունակ երևացող ճերմակ փայլուն ատամները, նա մտածում էր, որ ինքն այսօր առանձնապես սիրալիր է: Եվ այդպես կարծում էր ամեն մեկը:

Փոքրիկ իշխանուհին, երեբալով, մանր արագ քայլերով, ձեռագործի պայուսակը ձեռին պտտեց սեղանի շուրջը և, ուրախ-ուրախ զգեստները կարգի բերելով, նստեց բազմոցին, արծաթե ինքնաեռի մոտ, և կարծես բոլորը, ինչ նա անում էր՝ *partie de plaisir*¹ էր իր և բոլոր շրջապատողների համար:

— J'ai apporté mon ouvrage², — ասավ նա, բանալով իր պայուսակը և դիմելով բոլորին միասին:

— Նայեցեք, Annette, ne me jouez pas un mauvais tour, — դիմեց նա տանտիրուհուն: — Vous m'avez écrit, que c'était une toute petite soirée: voyez, comme je suis attifée³.

Եվ նա ձեռները տարածեց, որ ցույց տա իր, ժանյակավոր մոխրագույն նուրբ զգեստը, որ կրծքից մի փոքր ցած գոտևորած էր լայն ժապավենով:

¹ Զվարճություն:

² Ես ձեռագործս վերցրել եմ:

³ Ինչ հետ վատ հանաքներ մի անեք, դուք ինձ գրել էիք, որ բոլորովին փոքրիկ երեկույթ է: Ծեսնում եք որքան վատ եմ հագնված:

— Soyez tranquille, Lise, vous serez toujours la plus jolie¹, — պատասխանեց Աննա Պավլովնան:

— Vous savez, mon mari m'abandonne, — շարունակեց նա նույն եղանակով, դիմելով գեներալին, — il va se faire tuer. Dites moi, pourquoi cette vilaine guerre?² — ասաց նա իշխան Վասիլիին և, պատասխանի չսպասելով, դիմեց իշխան Վասիլիի դուստր գեղեցկուհի էլենին:

— Quelle délicieuse personne, que cette petite princesse!³ — ասավ իշխան Վասիլին կամաց Աննա Պավլովնային:

Շուտով, փոքրիկ իշխանուհուց հետո, ներս մտավ մի հաղթանդամ հաստ երիտասարդ՝ խուզած գլխով, ակնոցով, հագած այն ժամանակվա ձեռք բաց փայլուն վարտիք, բարձր ժաքո և կինամոնագույն Ֆրակ: Այս հաստ երիտասարդը ապօրինի զավակն էր Եկատերինյան նշանավոր ավագանի կոմս Բեզուխովի, որ այժմ մահամերձ էր Մոսկվայում: Նա տակավին ոչ մի տեղ չէր ծառայում, նոր միայն եկել էր արտասահմանից, ուր ուսում էր առնում և առաջին անգամն էր լինում հասարակության մեջ: Աննա Պավլովնան ողջունեց նրան գլխի այնպիսի շարժումով, որով ողջունում էր իր սալոնի ամենաստոր կարգի մարդկանց: Բայց, շնայած այդ անհասարակ տեսակի ողջունին, ներս մտնող Պիեռին տեսնելով՝ Աննա Պավլովնայի դեմքին երևաց անհանգստություն ու երկյուղ, նման այն բանին, որ արտահայտվում է ինչ-որ շափազանց վիթխարի և տեղին անպատշաճ բան տեսնելիս: Թեև, իսկապես, Պիեռը փոքր-ինչ խոշոր էր սենյակում եղած մյուս տղամարդկանցից, բայց այդ վախը կարող էր վերաբերել միայն այն խելացի և միաժամանակ երկչուտ, դիտող ու բնական նայվածքին, որով տարբերվում էր նա հյուրասրահում եղածներից:

— C'est bien aimable à vous, monsieur Pierre, d'être venu voir une pauvre malade⁴, — ասավ Աննա Պավլովնան,

¹ Հանգիստ եղեք, կից, դուք էլի բոլորից լավը կլինեք:

² Դուք գիտեք, ամուսինս լքում է ինձ: Գնում է մահի առաջ: Ասացեք ինչու՞ համար է այս զգվելի պատերազմը:

³ Ի՞նչ շքեղ անձնավորություն է այս փոքրիկ իշխանուհին:

⁴ Այդ մեծ սիրալիրություն է ձեր կողմից, մըսյո Պիեռ, որ թշվառ հիվանդիս այցի եկաք:

երկյուղալի նայվածքներ փոխանակելով իր մորաքրոջ հետ, որի մոտ տարավ Պիեռին: Պիեռն ինչ-որ անհասկանալի բաներ վրա տվեց և շարունակեց աչքերով որոնել ինչ-որ բան: Նա ուրախ-ուրախ ժպտաց, գլխով բարեկեղծ փոքրիկ իշխանուհուն, որպես մոտիկ ծանոթի, և մոտեցավ մորաքրոջը: Աննա Պավլովնայի երկյուղն իզուր չէր, որովհետև Պիեռը մինչև վերջը չլսելով մորաքրոջ խոսքը նորին մեծություն կայրուհուն առողջության մասին, հեռացավ նրանից: Աննա Պավլովնան վախեցած կանգնեցրեց նրան ասելով.

— Դուք Մորիո աբբային չե՞ք ճանաչում. շատ հետաքրքրական մարդ է...

— Այո, լսել եմ նրա հաճիտենական խաղաղության ծրարագրի մասին, և դա շատ հետաքրքրական է, բայց հագել թե հնարավոր...

— Կարծո՞ւմ եք... — ասավ Աննա Պավլովնան, որպեսզի մի բան ասած լինի և նորից շարունակի իր տանտիրուհու զբաղումները, բայց Պիեռը կրկնակի անքաղաքավարությունն արավ: Առաջինը նա, զրուցակցի խոսքը կիսատ թողնելով, հեռացավ հիմա էլ զրույցով զբաղեցրեց Աննա Պավլովնային, որ ուզում էր հեռանալ նրանից: Նա, գլուխը կոացնելով և մեծ ոտներն իրարից հեռու դնելով, սկսեց ապացուցել Աննա Պավլովնային, թե ինչու է ինքը կարծում, որ աբբայի ծրագիրը ցնորք է:

— Մենք հետո կխոսենք, — ասավ Աննա Պավլովնան ժրպատյով:

Նվ, անփորձ, ապրելու կերպը շիմացող երիտասարդից բաժանվելով, դարձավ իր տանտիրուհու զբաղումներին ու շարունակեց ակառն դնել ու նայել շուրջը, պատրաստ՝ օգնության հասնելու այն կետին, ուր թուլանում էր զրույցը: Ինչպես մանարանի տերը, բանվորներին իրենց տեղերը նրատեցնելով, անցուղարձ է անում արհեստանոցում, բայց նրկատելով իլիկի կանգնելը կամ անսովոր բարձր ճուխը, շտապ վրա է հասնում, պահում-կանգնեցնում կամ հարկավոր ընթացքը տալիս, այդպես էլ Աննա Պավլովնան, անցուղարձ անելով իր հյուրասրահում, մոտենում էր լուսծ կամ շափաղանց շատ խոտոզ խմբին և մի խոսքով կամ տեղափոխումով կրկին լարում էր համաչափ. մայելուչ, խոսամեքենան: Բայց

բոլոր այդ հոգսերի մեջ նկատելի էր, որ նա առանձնաւ: Էս անհանգիստ էր Պիեռի համար: Նա հոգածությամբ նայում էր Պիեռին այն ժամանակ, երբ Պիեռը մոտեցավ լսելու այն, ինչ խոսվում էր Մորտեմարի շուրջը, և գնաց դեպի ուրիշ մի խումբ, ուր խոսում էր աբբան: Արտասահմանում կրթված Պիեռի համար Աննա Պավլովնայի այս երեկույթն առաջինն էր, որ տեսնում էր Ռուսաստանում: Նա գիտեր, որ այստեղ հավաքված է Պետերբուրգի ամբողջ ինտելիգենցիան, և նա, ինչպես երեխան խաղալիքների խանութում, հափշտակված էր: Նա շարունակ վախենում էր բաց թողնել խելացի զրույցները, որ կարող էր լսել: Նայելով այստեղ հավաքվածների ինքնալստահ և նուրբ դեմքերի արտահայտություններին, նա շարունակ սպասում էր ինչ-որ առանձին խելոք մի բանի: Վերջապես, մոտեցավ նա Մորիոյին: Զրույցը նրան հետաքրքրական երևաց, և նա կանգ առավ, առիթի սպասելով իր մտքերն արտահայտելու, ինչպես այդ սիրում են երիտասարդները:

III

Աննա Պավլովնայի երեկույթն սկսվել էր: Իլիկներն ամեն կողմից աղմկում էին համաչափ ու անլուելի: Բացի ma tante-ից, որի կողքին նստել էր միայն մի հասակավոր կին՝ արտասովակալած, նիհար դեմքով, որ փոքր-ինչ օտար էր թվում այս փայլուն հասարակության մեջ, բազմությունը բաժանվել էր երեք խմբի: Մեկում, ուր տղամարդիկ ավելի մեծ թիվ էին կազմում՝ կենտրոնը աբբան էր, մյուսում՝ ջահելների մոտ՝ գեղեցկուհի-իշխանազուստր էլենը, իշխան Վասիլիի դուստրը, և լավիկ, կարմրադեմ, ջահելության համեմատ շատ գիբուկ փոքրիկ իշխանուհի Բալկոնսկայան: Երրորդում՝ Մորտեմարն ու Աննա Պավլովնան:

Վիկոնտը սիրունատես, նուրբ դիմագծերով ու ձևերով երիտասարդ էր, ըստ երևույթին իրեն նշանավոր համարող, բայց արեկիրթ լինելով, համեստորեն թույլ էր տալիս, որ իրեն օգտվի այն հասարակությունը, որի մեջ գտնվում է Աննա Պավլովնան, ըստ երևույթին, նրանով հյուրասիրում էր ի, հյուրերին: Ինչպես լավ մետր-գ՝ օտելը, որպես մի գերի: յան-սքանչելիք, մատուցում է տավարի մսի այն

կտորը, որ ուտել չէիր ուզի, եթե տեսնեիր այն կեղտոտ խոհանոցում, այնպես էլ Աննա Պավլովնան իր հյուրերին այդ երեկո մատուցեց նախ վիկոնտին, ապա արքային, ինչպես մի գնբեմական, ընտիր բան: Մորտեմարի խմբում իսկույն խոսք բացվեց էնգիենի հերցոգի սպանության մասին: Վիկոնտն ասավ, թե էնգիենի հերցոգն իր մեծահոգության զոհն է, և որ Իոնաւարտի կատաղությունն առանձին պատճառներ է ունեցել:

— Ah! voyons. Contez-nous cela, vicomte¹, — ասավ Աննա Պավլովնան, ուրախությամբ զգալով, որ այդ ֆրագը հնչեց մի տեսակ à la Louis XV², — contez-nous cela, vicomte.

Վիկոնտը գլուխն իջեցրեց ի նշան հնազանդության և հարգալիր ժպտաց: Աննա Պավլովնան պտտվեց վիկոնտի շուրջը և բոլորին հրավիրեց լսելու նրա պատմութունը:

— Le vicomte a été personnellement connu de monseigneur³, — շնչաց Աննա Պավլովնան մեկին: — Le vicomte est un parfait conteur⁴, — ասավ նա մի ուրիշին: — Comme on voit l'homme de la bonne compagnie⁵, — ասավ նա երրորդին. և վիկոնտը մատուցվեց հասարակությանը՝ իր համար ամենաշահավետ կողմով, ինչպես վրան կանաչ ցանված ոռոգի:

Վիկոնտն արդեն ուզեց սկսել իր պատմութունը և թեթև ժպտաց:

— S'éclaircissez-vous, chère Hélène⁶, — ասավ Աննա Պավլովնան գեղեցկուհի-իշխանադստեր, որ նստել էր մի քիչ հեռու, կազմելով մյուս խմբի կենտրոնը:

Իշխանադուստր էլենը ժպտում էր. նա վեր կացավ միանգամայն գեղեցիկ կնոջ նույն անփոփոխ ժպտով, որով մտել էր հյուրասրահ: Թեթևակի շրշելով իր պարահանդեսային ճերմակ զգեստը, որ զարդարված էր բաղեղածև ու մամուռա-

նման զարդերով, և փայլելով ուսերի ճերմակությամբ, մագերի ու աղամանդների փայլով, նա անցավ իր առջև ճանապարհ բացող տղամարդկանց արանքով և ուղիղ, առանց որևէ մեկին նայելու, բայց բոլորին ժպտալով և կարծես յուրաքանչյուրին իրավունք տալով հիանալու իր հասակի, լեցուն ուսերի (որ շատ բաց էին այն ժամանակվա մոդայով) կրծքի ու մեջքի գեղեցկությամբ, և կարծես իր հետ բերելով պարահանդեսի շուքը, մոտեցավ Աննա Պավլովնային: Էլենն այնքան գեղեցիկ էր, որ նրա մեջ նկատելի չէր ոչ միայն կոկետության հետք, այլ, ընդհակառակը, նա կարծես ամաչում էր իր անկասկած և անչափ ուժեղ հաղթական-ներգործող գեղեցկության համար: Նա կարծես ցանկանում ու չէր կարողանում նվազեցնել իր գեղեցկության ներգործությունը: «Quelle belle personne!»¹ — ասում էր յուրաքանչյուր տեսնող:

Կարծես ինչ-որ անսովոր բանից զարմացած՝ վիկոնտն ուսերը թոթվեց և աչքերը խոնարհեց այն միջոցին, երբ էլ'նը նստեց իր առջև ու լուսավորեց նրան ևս նույն անփոփոխ ժպտով:

— Madame, je crains pour mes moyens devant un pareil auditoire², — ասավ նա ժպտերես գլուխը թեքելով:

Իշխանադուստրը իր բաց լեցուն թևով կոթնեց փոքրիկ սեղանին և հարկավոր չհամարեց որևէ բան ասել: Նա ժպտալով սպասում էր: Զրույցի ամբողջ ընթացքում նա նստած էր ուղիղ, նայելով երբեմն մերթ իր գեղեցիկ գերուկ ձեռին, որ սեղանին սեղմելուց փոխել էր իր ձեռք, մերթ՝ էլ ավելի գեղեցիկ կրծքին, որի վրա ուղղում էր գոհարաշար մանյակը. մի քանի անգամ ուղղում էր շրջագգեստի ծալքերը և, երբ զրույցը տպավորութուն էր թողնում, նայում էր Աննա Պավլովնային և իսկույն եթ զեմքին տալիս էր այն արտահայտությունը, որ կար ֆրեյլինայի դեմքին, և ապա նորից հանգիստ էր ստանում շողուն ժպտի մեջ: Էլենից հետո տեղափոխվեց և փոքրիկ իշխանուհին թեյասեղանի մոտից:

¹ Դե, պատմեցեք մեզ այդ, վիկոնտ:

² Լուրդովիկոս XV ոճով:

³ Վիկոնտն անձամբ ծանոթ է եղել հերցոգին:

⁴ Վիկոնտը պատմելու զարմանալի վարպետ է:

⁵ Ինչպես իսկույն հայտնի է լինում լավ հասարակության մարդը:

⁶ Սիրելի էլեն:

¹ Ինչ գեղեցկուհի է:

² Նա, իսկապես, վախենում եմ թե իմ ընդունակություններով չբավարարեմ մի այսպիսի հասարակության:

— Attendez moi, je vais prendre mon ouvrage¹, — *ասավ նա*: — Voyons, à quoi pensez-vous?, — *դարձավ նա իշխան Իպպոլիտին*: — Apportez-moi mon ridicule².

Իշխանուհին ժպտալով ու բոլորի հետ խոսելով, հանկարծ տեղափոխություն կատարեց և, նստելով, ուրախ-ուրախ ուղղվեց:

— Հիմա ինձ լավ եմ զգում, — *ասավ նա և, խնդրելով ըսկրսել, ինքը ձեռագործը ձեռն առավ*:

Իշխան Իպպոլիտը բերեց նրա սիդիկյուլը, անցավ նրա ետևը ու, բազկաթուղ մոտեցնելով, նստեց նրա կողքին:

Le charmant Hyppolyte³ զարմացնում էր նրանով, որ անսովոր կերպով նման էր գեղեցկուհի քրոջը, և մանավանդ նրանով, որ շնայած այդ նմանության, չափազանց տգեղ էր: Նրա դիմագծերը նույնն էին, ինչ որ քրոջը, բայց քրոջ ամեն ինչը փայլում էր կենսուրախ, ինքնագոհ, ջահել, անփոփոխ ժպիտով և մարմնի արտասովոր դասական գեղեցկությամբ. եղբայրը, ընդհակառակը. նրա դեմքը մշուշված էր ապուշու-թյամբ և արտահայտում էր մշտական ինքնավստահ անբավականություն, իսկ մարմինը նիհար էր ու թույլ: Աչքերը, քիթը, բերանը — բոլորը կարծես սեղմվում-դառնում էր մի անորոշ ու տխուր ժամածոություն, իսկ ձեռներն ու ոտները միշտ անբնական դիրք էին ընդունում:

— Ce n'est pas une histoire de revenants?⁴ — *ասավ նա, իշխանուհու կողքին նստելով և հապճեպ լորենտն աչքերին դնելով, կարծես առանց այդ գործիքի չէր կարող խոսել*:

— Mais non, mon cher⁵, — *ուսերը թոթվելով՝ ասավ զարմացած պատմողը*:

— C'est que je déteste les histoires de revenants⁶, — *ասավ նա այնպիսի եղանակով, որից երևաց, թե նա այդ խոս-*

քերն ասելուց հետո արդեն հասկացավ, թե ի՛նչ էին նշանակում:

Այդ խոսքերի ինքնավստահ եղանակից ոչ ոք չկարողացավ հասկանալ՝ նրա ասածները շատ խելացի, թե շատ հիմար բան էին: Նա հագել էր մութ-կանաչ ֆուսկ, շուրթիներ և բաշմակներ, իսկ պանթալոնը ուներ՝ *cuisse de nymphe effrayée*¹ գույն, ինչպես ինքն էր ասում:

Vicomte² շատ լավ պատմեց այդ ժամանակները բերնեբերան անցնող այն պատմությունը, թե էնգլիենի հերցոգը գաղտնի գնում է Փարիզ III-Georges-ի³ հետ տեսակցելու, և թե այնտեղ հանդիպում է Բոնապարտին, որ նույնպես վայելում էր նշանավոր դերասանուհու ողորմածությունը, և թե այնտեղ, հերցոգին հանդիպելով, Նապոլեոնը պատահաբար ուշաթափվում է (որին նա ենթակա էր) ու մնում հերցոգի ձեռքին, որից սակայն հերցոգը չի օգտվում, բայց թե Բոնապարտը հետագայում այդ իսկ մեծահոգության համար մահվամբ վրեժխնդիր է լինում հերցոգից:

Պատմությունը շատ հաճելի ու հետաքրքրական էր, մանավանդ այն տեղում, ուր ախոյանները հանկարծ ճանաչում են իրար, և կանայք, թվում էր, հուզված էին:

— Charmant⁴, — *ասավ Աննա Պավլովնան, հարցական նայելով փոքրիկ իշխանուհուն*:

— Charmant, — *շնչաց փոքրիկ իշխանուհին, ասելը ձեռագործի մեջ խրելով, կարծես ի նշան այն բանի, որ պատմության հետաքրքրականությունն ու գրավչությունը խանգարում են իրեն ձեռագործը շարունակելու*:

Վիկոնտը գնահատեց այդ լռելյայն գովասանքը և, գոհությամբ ժպտալով, շարունակեց. բայց այդ ժամանակ Աննա Պավլովնան, որ շարունակ նայում էր իր համար վտանգավոր երիտասարդին, նկատեց, որ նա մի տեսակ տաքացած ու բարձր խոսում է արբայի հետ, ուստի շտապեց վտանգավոր տեղը՝ օգնության: Իրոք, Պիեռին հաջողել էր զրույցի բռնվել

¹ Սպասեցեք, ձեռագործս վերցնեմ:

² Ի՛նչի մասին եք մտածում: Բերեք իմ սիդիկյուլը:

³ «Հմայիչ Իպպոլիտը»:

⁴ Այդ պատմությունն ուրվականների մասին չէ՞:

⁵ Բոլորովին ոչ:

⁶ Բանն այն է, որ ես տանել չեմ կարող որևէ պատմություն ուրվականների մասին:

¹ «Վախեցած նիմֆայի ազդրերի»:

² Վիկոնտը:

³ Սաղմուազել Ժորժի:

⁴ Սքանչելի է:

արբայի հետ քաղաքական հավասարակշռութեան մասին, և արբան, ըստ երևույթին, հետաքրքրված երիտասարդի պարզամիտ բորբոքումով, բացատրում էր նրան իր սիրած գաղափարը: Երկուսն էլ լսում ու խոսում էին շափազանց աշխույժ ու բնականորեն, և այդ էր որ դուր շեկավ Աննա Պավլովնային:

— Միշոքը — եվրոպական հավասարակշռությունը և droit des gens¹, — ասում էր արբան: — Բավական է, որ մի հզոր պետություն, ինչպես Ռուսաստանը (որ հռչակված է իր բարբարոսությունը) անշահախնդիր կերպով անցնի մի դաշնակցության գլուխ, որի նպատակն է եվրոպայի հավասարակշռությունը, — և նա կփրկի աշխարհը:

— Իսկ ի՞նչպես կգտնեք դուք մի այդպիսի հավասարակշռություն, — սկսեց Պիեռը. բայց այդ ժամանակ մոտեցավ Աննա Պավլովնան և, խստությամբ Պիեռին նայելով, հարցրեց իտալացուն, թե նա ինչպես է տանում այստեղի կլիման: Իտալացու դեմքը փոխվեց հանկարծ և ընդունեց վիրավորական կեղծ արտահայտություն, որն, ըստ երևույթին, սովորական էր նրա համար՝ կանանց հետ զրուցելիս:

— Ես այնքան հմայված եմ հասարակության մտքի ու զարգացման հրապույրներով, մանավանդ կանանց հասարակության, ուր ընդունվելու բախտն ունեցա, որ էլ ժամանակ չունեցա կլիմայի մասին մտածելու, — ասավ նա:

Ձեռից շթողնելով այլևս արբային ու Պիեռին՝ Աննա Պավլովնան՝ հսկելու հարմարության համար՝ նրանց միացրեց ընդհանուր խմբին:

Այդ միջոցին հյուրասրահ մտավ մի նոր անձնավորություն: Դա երիտասարդ իշխան Անդրեյ Բալկոնսկին էր՝ փոքրիկ իշխանուհու ամուսինը: Իշխան Բալկոնսկին կարճահասակ, շատ գեղեցիկ երիտասարդ էր, շեշտված ու չոր դիմագծերով: Նրա կերպարանքի վրա ամեն ինչ, սկսած նրա հոգնած տաղտուկ նայվածքից մինչև հանդարտ, համաչափ քայլվածքը ամենասուր հակադրություն էր ներկայացնում իր փոքրիկ աշխույժ կնոջ համեմատությամբ: Հյուրասրահում գտնվողները, ըստ երևույթին, ոչ միայն ծանոթ էին նրան,

¹ Սարդկանց իրավունքը:

այլև ծանծրացրել էին նրան այնպես, որ նրանց նայելն ու լսելն անգամ շատ ծանծրալի էր նրա համար: Եվ ամենից ավելի նրան ծանծրացրել էր, կարծես, իր գեղեցիկ կնոջ դեմքը: Նա իր սիրուն դեմքը տգեղացնող մի ծամածուծությամբ երեսը դարձրեց կնոջից: Համբուրեց Աննա Պավլովնայի ձեռը և, աչքերը կկոցելով, մի հայացք նետեց հասարակության վրա:

— Vous vous enrôlez pour la guerre, mon prince?² — ասավ Աննա Պավլովնան:

— Le général Koutouzoff, — ասավ Բալկոնսկին, Ֆրանսացու պես շեշտելով վերջին Zoff վանկը, — a bien voulu de moi pour aide-de-camp³...

— Et Lise, votre femme?⁴

— Նա գյուղ պիտի գնա:

— Մեղք չե՞ք գործում, որ մեզ զրկում եք ձեր սքանչելի կնոջ ներկայությունից:

— André⁵, — ասավ կինը, դիմելով ամուսնուն նույն կողմն եղանակով, որով դիմում էր և կողմնակի մարդկանց, — ինչպիսի՞ պատմություն արավ մեզ վիկոնտը m-ile Ժորժի և Բոնապարտի մասին:

Իշխան Անդրեյը դեմքը խոժոռեց ու շրջվեց: Պիեռը, որ իշխան Անդրեյի հյուրասրահ մտնելուց ի վեր ուրախ բարեկամական հայացքը չէր հեռացնում նրանից, մոտեցավ ու բռնեց նրա ձեռը: Իշխան Անդրեյը, առանց նայելու, դեմքը ծամածոց՝ արտահայտելով իր դժգոհությունը ձեռը բռնողի դեմ, բայց, տեսնելով Պիեռի ժպտուն երեսը, ինքն ևս ժպտաց անսպասելի բարի ու հաճելի ժպիտով:

— Ա՛յ թե ինչ... Դու էլ ե՞ս մեծ հասարակության մեջ, — ասավ նա Պիեռին:

— Գիտեի, որ դուք լինելու եք այստեղ, — պատասխանեց Պիեռը: — Գալու եմ ձեզ մոտ ընթրիքի, — ավելացրեց նա կամաց, որպեսզի շխանգարի վիկոնտին, որը շարունակում էր իր պատմությունը: — Կարելի՞ է:

¹ Դուք պատերազմ գնալու պատրաստությունն եք տեսնում, իշխան:

² Գնե՞նք այն կուտուզովր բարեհաճում է նշանակել ինձ իրեն աղյուտանտը:

³ Իսկ կիզան, ձեր կինը:

⁴ Անդրեյ:

— Ոչ, չի կարելի, ասով իշխան Անդրեյը ծիծաղելով, ձեռի սեղմումով հասկացնելով Պիեռին, որ այդ մասին հարցնելն ավելորդ է:

Նա ուզում էր էլի ինչ-որ բան ասել, բայց այդ միջոցին տեղից ելավ իշխան Վասիլին իր աղջկա հետ, և երկու երիտասարդները ոտքի ելան՝ նրանց ճանապարհ տալու:

— Դուք ինձ ներեցեք, սիրելի վիկոնտ,— ասավ իշխան Վասիլին ֆրանսացուն, սիրալիր ցած քաշելով նրա թեքը գեպի աթոռը, որպեսզի նա ոտքի չկանգնի:— Գեապանի այդ գծրախտ տոնախմբությունը զրկում է ինձ հաճույքից և ընդհատում է ձեզ: Շատ ցավում եմ, որ թողնում եմ ձեր հիասթափանչ երեկոն,— ասավ նա Աննա Պավլովնային:

Նրա դուստրը՝ էլենը, զգեստի ծալքերը թեթևակի պահած, անցավ աթոռների արանքով. ժպիտը նրա գեղեցիկ դեմքին փայլում էր էլ ավելի պայծառ: Պիեռը գրեթե երկյուղալի, սթանյացած աչքերով նայեց այդ գեղեցկուհուն, երբ նա անցնում էր իր կողքով:

— Շատ գեղեցիկ է,— ասավ իշխան Անդրեյը:

— Շա՛տ,— ասավ Պիեռը:

Նրանց մոտով անցնելիս՝ իշխան Վասիլին բռնեց Պիեռի ձեռքը և դարձավ Աննա Պավլովնային:

— Կրթեցեք այս արջին,— ասվ նա:— Ահա մի ամիս է ապրում է ինձ մոտ և առաջին անգամն եմ տեսնում սրան հասարակության մեջ: Երիտասարդի համար ոչ մի բան այնքան կրթնոր չի, որքան խելացի կանանց շրջանը:

IV

Աննա Պավլովնան ժպտաց և խոստացավ զբաղվել Պիեռով, որը, նա գիտեր, հոր կողմից ազգական է իշխան Վասիլին: *Ma tante*-ի մոտ նստած տարիքոտ կինը հապճեպ վեր կացավ և նախասենյակում հասավ իշխան Վասիլին: Նրա դեմքից չբացավ նախկին կեղծ հետաքրքրությունը: Նրա բարի լացակումած դեմքը արտահայտում էր միայն անհանգստություն և երկյուղ:

— Ի՞նչ կասեք, իշխան, Բորիսիս մասին,— ասավ նա: (Նա Բորիս անունը արտասանեց Ուն առանձնապես շեշտե-

լով):— Ես այլևս Պետերբուրգում մնալ չեմ կարող: Ասացեք, ի՞նչ լուր կարող եմ տանել իմ խեղճ որդուն:

Չնայած որ իշխան Վասիլին դժկամությամբ և գրեթե անքաղաքավարությամբ էր լսում տարիքոտ կնոջը և անգամ արտահայտում էր անհամբերություն, այդ կինը սիրալիր ժպտում էր նրան և, որպեսզի նա չզնա, բռնեց նրա ձեռը:

— Բավական է մի խոսք ասեք թագավորին, և որդիս ուղագակի կփոխադրվի գվարդիա,— խնդրեց կինը:

— Հավատացեք, որ ձեռիցս եկածը կանեմ, իշխանուհի,— պատասխանեց իշխան Վասիլին,— բայց ինձ համար դժվար է թագավորին խնդրել. խորհուրդ կտայի ձեզ՝ իշխան Գոլիցինի միջոցով դիմել Ռուսյանցևին. այդ ավելի խելացի կլինեի:

Տարիքոտ կինը կրում էր իշխանուհի Դրուբեցկայա անունը, որ Ռուսաստանի լավագույն տոհմերից մեկի անունն էր, բայց իշխանուհին աղքատ էր, վաղուց քաշվել էր բարձր շրջաններից և իր նախկին կապերը կորցրել: Նա այժմ եկել էր խնդրելու միակ որդուն գվարդիայում տեղավորելու համար: Միա՛յն իշխան Վասիլին տեսնելու համար էր եկել Աննա Պավլովնայի երեկույթին, միա՛յն դրա համար էր լսում վիկոնտի պատմությունը: Նա վախեցավ իշխան Վասիլիի խոսքերից. նրա երբեմնի գեղեցիկ դեմքի վրա զայրույթ երևաց, բայց դա տևեց միայն մի վայրկյան: Նորից ժպտաց ու ավելի պինդ բռնեց իշխան Վասիլիի ձեռքը:

— Լսեցեք, իշխան,— ասավ նա,— ես երբեք չեմ խնդրած ձեզ, երբեք չեմ խնդրելու, երբեք չեմ հիշեցրել ձեզ, թե որքան հայրս բարյացակամ էր դեպի ձեզ: Բայց այժմ, աստժո անունով աղերսում եմ ձեզ, արեք այդ բանը որդուս համար, և ես ձեզ կհամարեմ բարերար,— շտապ ավելացրեց նա:— Ոչ, մի՛ բարկանաք, այլ խոստացեք: Ես Գոլիցինին խնդրեցի՝ մերժեց: *Soyez le bon enfant que vous avez été*¹,— ասավ նա, ջանալով ժպտալ, այն ժամանակ, երբ աչքերում արտասուք կար:

— Հայրիկ, մենք ուշանում ենք,— սիրուն գլուխն անտիկ ուսերի վրա դարձնելով ասավ իշխանագուռուհի էլենը, որ սպասում էր դռների մոտ:

¹ Եղբք բարեմիտ ինչպես եղել եք:

Սակայն հասարակութեան մեջ ունեցած ազդեցութիւնը մի կապիտալ է, որը պետք է պահպանել, որպէսզի չկորչի իշխան Վասիլին այդ բանը գիտեր, և պարզ գիտակցելով, որ եթե սկսի բոլոր իրեն դիմողների համար թագավորին խնդրել, շուտով ինքը կզրկվի իր համար խնդրելու հնարավորութիւնից, ուստի իր ազդեցութիւնը շատ սակավ էր գործադրում: Իշխանուհի Գրուբեցկայայի գործում, սակայն, նոր հիշեցումից հետո, նա մի տեսակ խղճի խայթ զգաց: Կինը հիշեցրեց նրան ճշմարտութիւնը. իր ծառայութեան առաջին քայլերով՝ նրա հորն էր պարտական: Բացի դրանից՝ այդ կնոջ վարմունքից զգաց, որ նա ա՛յն կանացից, մանավանդ այն մայրերից է, որոնք եթե մի բան մտադրեն, ետ չեն կանգնի, մինչև որ իրենց ցանկութիւնը չկատարվի. հակառակ դեպքում պատրաստ են ամեն օր, ամեն վայրկյան դիմումներ անել և անգամ անհաճո տեսարաններ սարքել: Այս վերջին մտքից նա տատանվեց:

— Chère Աննա Միխայլովնա, — ասավ նա սովորական մտերմութեամբ և ձանձրուցի շեշտով, — ինձ համար գրեթե անկարելի է ձեր խնդիրը կատարել. բայց որպէսզի ապացուցեմ, թե որքան եմ սիրում ձեզ և հարգում ձեր հանգուցյալ հոր հիշատակը, կանեմ անկարելին. ձեր որդին կփոխադրվի զվարդիա. ահա ձեզ ձեռս: Գո՛հ եք:

— Միրելիս, դուք բարեբար եք: Այլ բան չէի էլ սպասում ձեզանից. գիտեի, թե որքա՞ն բարի եք:

Իշխանն ուզեց գնալ:

— Սպասեք, երկու խոսք էլ: Une fois passé aux gardes...¹ — Իշխանուհին կանգ առավ: — Դուք Միխայլի Իլարիոնովիչ Կուտուզովի հետ լավ եք. Բորիսին հանձնարարեցեք նրան որպէս աղյուտանտ, և այն ժամանակ արդեն...

Իշխան Վասիլին ժպտաց:

— Այդ չեմ խոստանում: Դուք չգիտեք, թե այն օրից, ինչ Կուտուզովը նշանակվել է գլխավոր հրամանատար, ինչպէս են պաշարում նրան այդպիսի խնդիրներով: Ինքն ասավ ինձ, որ Մոսկվայի բոլոր ազնվական տիկիները խոսքերնին մեկ

¹ Քանի որ նա փոխադրվելու է զվարդիա:

են արել — իրենց բոլոր որդիներին տալու նրան՝ իբրև աղյուտանտ:

— Ոչ, խոստացեք. ես ձեզ չեմ թողնի իմ սիրելի, իմ բարեբար...

— Հայրի՛կ, նույն եղանակով կրկնեց գեղեցկուհին, — Ուշա՛նում ենք:

— Դե, au revoir¹, ցտեսութիւն: Տեսնո՞ւմ եք:

— Ուրեմն վաղը կգեկուցե՞ք թագավորին:

— Անպայման. բայց Կուտուզովին — չեմ խոստանում:

— Ոչ, խոստացեք, խոստացեք, Basile², — ասավ Աննա Միխայլովնան նրա ետևից, ջահել պշրուհու ժպիտով, որ մի ժամանակ երևի հատուկ էր եղել նրան, բայց հիմա բնավ չէր սազում նրա մաշված դեմքին:

Նա, երևի, մոռացավ իր տարիքը և, ըստ սովորութեան, գործ դրեց իր կանացի վաղեմի բոլոր միջոցները: Բայց հենց որ իշխանը դուրս գնաց՝ դեմքն ընդունեց նորից նախկին սառն ու շինծու արտահայտութիւնը: Նա վերադարձավ այն խմբակը, ուր վիկոնտը շարունակում էր իր պատմութիւնը, և նորից ձևացրեց թե լսում է, սպասելով գնալու ժամին, որովհետև իր գործը վերջացրել էր արդեն:

— Բայց ինչպե՞ս եք գտնում այն վերջին կատակերգութիւնը du sacre de Milan³, — ասավ Աննա Պավլովնան: — Et la nouvelle comédie des peuples de Gênes et de Lucques, qui viennent présenter leurs vœux à M. Buonaparte. M. Buonaparte assis sur un trône, et exauçant les vœux des nations! Adorable! Non, mais c'est à en devenir folle! On dirait que le monde entier a perdu la tête⁴.

Իշխան Անդրեյը ծիծաղեց՝ ուղիղ Աննա Պավլովնայի երեսին նայելով:

— «Dieu me le donne, gare à qui la touche», — ասավ

¹ Ցտեսութիւն:

² Բազիլի:

³ Միլանի օժուժը:

⁴ Եվ ահա նոր կատակերգութիւն. Ջենովայի և Լուկայի ժողովուրդները իրենց ցանկութիւններն են հայտնում պարոն Բուոնապարտին: Եվ պարոն Բուոնապարտը գահին նստած՝ կատարում է ազգերի ցանկութիւնը: Է՛, սքանչելի է: Ոչ, այդ սենեկով ցնորվել կարելի է: Կարելի է կարծել, թե աշխարհը գլուխը կորցրել է:

նա (Բոնապարտի խոսքերը թագադրութեան միջոցին)։— On dit qu'il a été très beau en prononçant ces paroles¹, — ալեւազարեաց նա և մի անգամ էլ այդ խոսքերը կրկնեց իտալերեն. «Dio mi la dona, guai a chi la tocca».

— J'espère enfin, — շարունակեց Աննա Պավլովնան, — que ça a été la goutte d'eau qui fera déborder le verre. Les souverains ne peuvent plus supporter cet homme, qui menace tout².

— Les souverains? Je ne parle pas de la Russie, — ասով վիկոնտը քաղաքավարութեամբ և անհույս։— Les souverains, madame! Qu'ont ils fait pour Louis XVII, pour la reine, pour madame Elisabeth? Rien, — շարունակեց նա ոգևորվելով։— Et croyez-moi, ils subissent la punition pour leur trahison de la cause des Bourbons. Les souverains? Ils envoient des ambassadeurs complimenter l'usurpateur³.

Եվ նա, արհամարհանքով հառաչելով, նորից փոխեց դիրքը։ Իշխան Իպպոլիտը, որ լուսնետով երկար նայում էր վիկոնտին, այս խոսքերից հետո հանկարծ ամբողջ մարմնով դարձավ փոքրիկ իշխանուհուն և, նրանից ասել խնդրելով, սկսեց ասելով սեղանի վրա նկարել Կոնդեյի տոհմանիշը ու սկսեց բացատրել այն մի այնպիսի լրջութեամբ, կարծես իշխանուհին խնդրել էր այդ։

— Bâton de gueules, engrêlé de gueules d'azur — maison Condé⁴, — ասում էր նա։

¹ Անտոված ինձ թագ տվեց։ Վա՛յ նրան, ով կղիպչի սրան։— ասում են այս խոսքերն արտասանելու ժամանակ շատ գեղեցիկ էր։

² Հույս ունեմ, որ դա եղավ, վերջապես, այն կաթիլը, որ պիտի լցնի բաժակը։ Վեհապետներն այլևս չեն կարող հանդուրժել այդ մարդուն, որ սպառնում է բոլորին։

³ Վեհապետների խոսքս Ռուսաստանի մասին չէ։ Վեհապետները, տիպիկն Բայց ինչ արին նրանք Լյուդովիկոս XVII համար, թագուհու համար, տիկ. Նլիզավետայի համար։ Ոչինչ։ Եվ, հավատացե՛ք ինձ, նրանք կրում են իրենց պատիժը Բուրբոնների գործին դավաճանելու համար։ Վեհապետներ, նրանք զեպպաններ են ուղարկում ողջունելու գահը հափշտակողին։

⁴ Այս ֆրազը բառացի անթարգմանելի է, որովհետև կազմված է պայմանական հերալդիկ տերմիններից, ոչ բոլորովին ճիշտ դարձած։ Ընդհանուր իմաստը այս է։— Կոնդեյի տոհմանիշը ներկայացնում է վահան՝ կարմիր ու կապույտ նեղիկ ատամնավոր շերտերով։

Իշխանուհին ժպտերես լսում էր նրան։

— Եթե Բոնապարտը մի տարի ևս մնա Ֆրանսիայի գահի վրա, — շարունակեց վիկոնտն սկսած զրույցը, ուրիշների խոսքը չլսող մարդու տեսքով և իրեն բոլորից ալելի լավ հայտնի գործի մեջ միայն իր մտքերի ընթացքին հետևելով, — այն ժամանակ բանը բանից կանցնի։ Բանսարկութեամբ, բոնութեամբ, հալածանքներով, մահապատիժներով հասարակութունը, ես նկատի ունեմ բարձր ֆրանսական հասարակութունը, ընդմիշտ կոչնչանա և այն ժամանակ...

Նա ուսերը սեղմեց ու ձեռները տարածեց։ Պիեռն ուզեց ինչ որ բան ասել. խոսակցութունը նրան հետաքրքրում էր. բայց Աննա Պավլովնան, որ նրան հսկում էր, ընդմիջեց։

— Ալեքսանդր կայսրը, — ասավ նա տխրութեամբ, մի բան, որ միշտ անբաժան էր նրա խոսքից, երբ խնդրել վերաբերում էր կայսերական ընտանիքին, — հայտարարեց, որ իրենց՝ ֆրանսացիներին պիտի թողնի վարչաձևի ընտրութունը։ Եվ ես կարծում եմ, կասկած չկա, որ ամբողջ ազգը, հափշտակչից ազատվելով, կնետվի իր օրինավոր թագավորի բազումների մեջ, — ասավ Աննա Պավլովնան, աշխատելով սիրալիք լինել էմիգրանտի ու միապետականի հետ։

— Այդ կասկածելի է, — ասավ իշխան Անդրեյը։— Պարոն վիկոնտը միանգամայն իրավացի կերպով ենթադրում է, որ բանը բանից անցել է։ Ես կարծում եմ դժվար կլինի վերադառնալ դեպի հինը։

— Որքան լսել եմ, — կարմրելով նորից խոսակցության մեջ մտավ Պիեռը, — համարյա ամբողջ ազնվականությունն անցել է արդեն Բոնապարտի կողմը։

— Այդ բոնապարտիստներն են ասում, — ասավ վիկոնտը, առանց Պիեռին նայելու։— Այժմ դժվար է Ֆրանսիայի հասարակական կարծիքն իմանալ։

— Bonaparte l'a dit¹, — ասավ իշխան Անդրեյը քմծիծաղով։

Նկատելի էր, որ վիկոնտը դուր չէր գալիս նրան, և որ նա, թեև չէր նայում վիկոնտին, բայց իր խոսքերն ուղղված էին նրա դեմ։

¹ Այդ ասել է Բոնապարտը։

— «Je leur ai montré le chemin de la gloire», — **ասավ նա կարճ լուռթյունից հետո, դարձյալ նապոլեոնի խոսքերը կրկնելով.** — «ils n'en ont pas voulu; je leur ai ouvert mes antichambres, ils se sont precipités en foule»... Je ne sais pas à quel point il a eu le droit de le dire¹.

— **Aucun², — առարկեց վիկոնտը:** — **Հերցոգի սպանությունից հետո ամենաաշատու մարդիկ անգամ դադարեցին նրան հերոս համարելուց:** Si même ça été un héros pour certaines gens, — **ասավ վիկոնտը, դառնալով Աննա Պավլովնային,** — depuis l'assassinat du duc il y a un martyr de plus dans le ciel, un héros de moins sur la terre³.

Աննա Պավլովնան ու մյուսները հագիվ կարողացան ժրպիտներով գնահատել վիկոնտի այդ խոսքերը, երբ Պիեռը կրկին միջամտեց խոսակցության, և Աննա Պավլովնան, որը թեև նախագգում էր, որ Պիեռը մի անվայել բան պիտի ասի, այլևս չկարողացավ կանգնեցնել նրան:

— **էնգիների հերցոգի սպանությունը,** — **ասավ մըսյո Պիեռը,** — **պետական անհրաժեշտություն էր. և ես հնց այդ բանի մեջ եմ տեսնում նապոլեոնի հոգու մեծությունը, որ նա չվախեցավ մենակ իր վրա վերցնել այդ գործի ամբողջ պատասխանատվությունը:**

— **Dieu! mon Dieu!⁴ — շնչաց Աննա Պավլովնան սարսափահար:**

— **Comment, monsieur Pierre, vous trouvez que l'assassinat est grandeur d'âme⁵,** — **ասավ փոքրիկ իշխանուհին ժպտալով և ձեռագործը մոտեցնելով իրեն:**

— **Ա՛հ: Օ՛հ,** — **լսվեցին տարբեր ձայներ:**

¹ «Ըստ ցույց տվի նրանց փառքի ճանապարհը — նրանք չուզեցին այն. ես նրանց առչե բաց արի իմ նախասենյակները — նրանք ներս խուժեցին խմբերով... Զգիտե՛մ՝ որ աստիճան իրավունք ունեի նա այդպես ասելու:»

² Ոչ մի:

³ Եթե նա հերոս էր մի քանի մարդկանց համար, ապա հերցոգի սպանությունից հետո՞ մի նահատակ ևս ավելացավ երկնքում և մի հերոս պակասեց երկրի վրա:

⁴ Աստված իմ, աստված:

⁵ Ի՛նչպես, մըսյո Պիեռ, սպանության մեջ տեսնում եք հոգու մեծություն:

— **Capital!¹ — ասավ իշխան Իպպոլիտը անգլերին և սկսեց ձեռի ափը խփել ծունկին:**

Վիկոնտն ուսերը թոթվեց միայն: Պիեռը ակնոցի վերևից հաղթական նայեց ունկնդիրներին:

— **Ես այսպես խոսում եմ նրա համար,** — **շարունակեց նա հանդգնաբար,** — **որովհետև Բուրբոնները փախան ուսլուցիայից, ժողովրդին մատնելով անիշխանության. և միայն նապոլեոնը կարողացավ հասկանալ ուսլուցիան, հաղթել նրան, և այդ իսկ պատճառով՝ հանրային բարօրության համար նա չէր կարող կանգ առնել մի մարդու կյանքի առջև:**

— **Զէ՛ի՞ք ցանկանա արդյոք անցնել մյուս սեղանը,** — **ասավ Աննա Պավլովնան:**

Բայց Պիեռն, առանց պատասխանելու, շարունակեց խոսքը:

— **Ոչ,** — **ասում էր նա ավելի ու ավելի ոգևորվելով:** **Նապոլեոնը մեծ է, որովհետև նա ավելի բարձր կանգնեց ուսլուցիայից, ճնշեց նրա շարարկությունները, պահելով բուրբոն լավ բաները — թե՛ քաղաքացիական հավասարությունը, թե՛ խոսքի ու մամուլի զգալությունը — և միայն այդ պատճառով իշխանություն ձեռք բերեց:**

— **Այո, եթե նա իշխանությունը վերցնելով, չգործադրեր այն սպանության համար, այլ հանձներ այն օրինավոր թագավորին,** — **ասավ վիկոնտը,** — **այն ժամանակ ես էլ նրան մեծ մարդ կկոչեի:**

— **Նա այդ չէր կարող անել: Ժողովուրդն իշխանությունը նրան հանձնեց միա՛յն նրա համար, որպեսզի նա ժողովրդին ազատի Բուրբոններից, և նրա՛ համար, որովհետև ժողովուրդը նրա մեջ մեծ մարդ էր տեսնում: Ռևոլուցիան մեծ գործ էր, — շարունակեց մըսյո Պիեռը, այդ հանդգնությամբ և միջանկյալ նախադասությամբ արտահայտելով իր ետուն ջահելությունը ու ամեն բան լիովին ասելու ցանկությունը:**

— **Ռևոլուցիան և արքայասպանությունը մե՞ծ գործ է... Դրանից հետո... բայց չե՞ք ուզում արդյոք անցնել մյուս սեղանը,** — **կրկնեց Աննա Պավլովնան:**

¹ Հրաշալի է:

— Contrat social¹, — ասալ վիկոնտը հեզ ժպիտու՛:

— Խոսքս արքայասելանության մասին չէ, այլ գաղափարներին:

— Այո, կողոպուտի, սպանութեան և արքայասպանութեան գաղափարներին, — նորից ընդմիջեց հեզնական ձայնը:

— Դրանք ծայրահեղութիւններ էին, իհարկե՛. բայց ու՛րիշուցիայի ամբողջ նշանակութիւնը դրանցում չէ, այլ մարդու իրավունքներին, նախապաշարունակներից ազատագրվելու, քաղաքացիներին իրավահավասարութեան մեջ. և բոլոր այդ գաղափարները նապոլեոնին իրենց ուժի մեջ պահեց:

— Ազատութիւն և հավասարութիւն, — ասալ վիկոնտն արհամարհանքով, կարծես վճռելով, վերջապես, լրջորեն ապացուցել այդ պատանուն՝ նրա խոսքերի ամբողջ հիմարութիւններ, — սրտոտ խոսքեր, որ վաղուց արդեն վարկաբեկված են: Ո՞վ չի սիրում ազատութիւնն ու հավասարութիւնը: Դեռ մեր փրկիչը ազատութիւն և հավասարութիւն է քարոզել: Մի՞թե անուղիցիայից հետո մարդիկ ավելի երջանիկ դարձան: Ընդհակառակը: Մենք ազատութիւն էինք ցանկանում, իսկ Բոնապարտը ոչնչացրեց այն:

Իշխան Անդրեյը ժպտերես նայում էր մերթ Պիեռին, մերթ վիկոնտին, մերթ տանտիրուհուն: Առաջին վայրկյանին Աննա Պավլովնան, չնայած իր աշխարհիկ վարվելակերպին, սարսափեց Պիեռի վարքից, բայց, երբ տեսավ, որ, չնայած Պիեռի որբապիղծ խոսքերին, վիկոնտն իրեն չի կորցնում, և երբ համոզվեց, որ այլևս անկարելի է այդ խոսակցութեանը վիշտալ, նա հավաքեց իր ուժերը և վիկոնտին միանալով, հարձակվեց Պիեռի վրա:

— Mais, mon cher m-r Pierre², — ասալ Աննա Պավլովնան, — ինչպե՛ս եք հասկանում այդ մեծ մարդուն, որ առանց դատի և անմեղ տեղը մահապատժի ենթարկեց հերցոգին, վերջապես, մի սոսկ մարդու:

— Ես կհարցնեի, — ասալ վիկոնտը, — ինչպե՛ս է monsieur-ը բացատրում Բոյումերի 18-ը: Ի՛նչ մի՞թե խարե՛ւ-

յութիւն չէ: C'est un escamotage qui ne ressemble nullement à la manière d'agir d'un grand homme¹.

— Իսկ Աֆրիկայում սպանված գերինե՛րը, — ասալ փոքրիկ իշխանուհին: — Սոսկալի է: — Եվ նա ուսերը ցնցեց:

— C'est un roturier, vous aurez beau dire², — ասալ իշխան Իպպոլիտը:

Մըսյո Պիեռը չգիտեր ո՛րին պատասխանի, նայեց բոլորին ու ժպտաց: Նրա ժպիտը նման չէր մյուս մարդկանց ժպտին: Երբ նա ժպտում էր, հանկարծ, վայրկենապես՝ լուրջ և փոքր ինչ մոռալ դեմքը շքանում էր և երևան էր գալիս մի ուրիշը — մանկական, բարի, նույնիսկ հիմարավուն մի դեմք, որ կարծես թողութիւն էր հայցում:

Վիկոնտը, որ առաջին անգամն էր տեսնում նրան, հասկացավ, որ այդ յակոբինը այնքան էլ սարսափելի չէ, ինչպես իր խոսքերը: Բոլորը լռեցին:

— Ինչպե՛ս, դուք ուզում եք, որ բոլորիդ միանգամից պատասխանի, — ասալ իշխան Անդրեյը: — Դրա հետ միասին պետք է պետական մարդու գործերի մեջ զանազանել մասնավոր անհատի, գորավարի և կայսեր արարքները: Ինձ այսպես է թվում:

— Այո, այո, իհարկե՛, — վրա բերեց Պիեռը, — ուրախանալով այդ վերահաս օգնութիւնից:

— Չի կարելի շտստովանել, — շարունակեց իշխան Անդրեյը, — նապոլեոնը որպես մարդ՝ մեծ է Արկոլյան կամուրջի վրա, Յաֆայի հիվանդանոցում, ուր ձեռք էր տալիս ժանտախտավորներին, սակայն... սակայն կան այլ արարքներ, որոնք արդարացնել ղժվար է:

Իշխան Անդրեյը, ըստ երևութիւն, կամենալով մեղմել Պիեռի խոսքերի անհարմարութիւնը՝ ոտքի ելավ՝ մեկնելու և նշան արավ կնոջը:

Հանկարծ իշխան Իպպոլիտը վեր կացավ և, ձեռի նշաններով բոլորին կանգնեցնելով ու խնդրելով նստել, ասալ.

¹ «Հասարակական դաշինք»: Ռուսո:

² Բայց, սիրելի պ. Պիեռ:

¹ Այդ խարդախութիւնն ամենևին նման չէ մեծ մարդու վարմունքին:

² Ինչ էլ որ ասեք, բախտախնդիրի մեկն է:

— Ah! aujourd'hui on m'a raconté une anecdote moscovite, charmante; il faut que je vous en régale. Vous m'excusez, vicomte, il faut que je raconte en russe. Autrement on ne sentira pas le sel de l'histoire¹.

Եվ իշխան Իպպոլիտն սկսեց ուսուցնել խոսել այնպիսի առողջանությամբ, որով խոսում են Ռուսաստանում մի տարի ապրած ֆրանսացիները: Բոլորը կանգ առան. այնպես եռանդուն, համառորեն ուշադրություն էր պահանջում իշխան Իպպոլիտը դեպի իր պատմությունը:

— Moscou-ում տիկին կա, une dame. Շատ ժլատ: նա իր կառքի համար կարիք է ունեցել երկու valets de pied². Եվ շատ բարձրահասակներին: Այդպես է եղել նրա ճաշակը: նա ունեցել է նաև une femme de chambre³, ավելի բարձրահասակ: Տիկինն ասում է...

Այստեղ իշխան Իպպոլիտը մտմտաց, ըստ երևույթին դժվարանում էր հիշել:

— Տիկինն ասում է... այո, ասում է «աղջիկ (à la femme de chambre), հագիր livrée⁴ և միասին, կառքով գնանք faire des visites»⁵.

Այստեղ իշխան Իպպոլիտը փոթկաց և իր ունկնդիրներից ավելի շուտ քրքշաց, ինչ որ պատմողի համար աննպաստ տպավորություն գործեց: Սակայն շատերը, դրանց թվում և տարիքոտ կիներ ու Աննա Պավլովնան, ժպտացին:

— Տիկինը գնում է: Հանկարծ սաստիկ քամի է բարձրանում: Աղջիկը կորցնում է գլխարկը և երկար մազերը շող են անցնում...

Այստեղ իշխան Իպպոլիտն այլևս չկարողացավ զսպել իրեն ու սկսեց բարձրաձայն ծիծաղել և ծիծաղի միջից ասել.

— Եվ ամբողջ աշխարհն իմանում է...

Անեկդոտը դրանով էլ վերջացավ: Թեև անհասկանալի մը-

նաց, թե ինչու նա պատմեց այդ և ինչու ուզեց անպայման ուսուցնել պատմել, սակայն Աննա Պավլովնան և մյուսները գնահատեցին իշխան Իպպոլիտի շնորհքը, որ այնպես հաճելի կերպով փակեց մրսյո Պիեռի անդուրեկան և անհաճո վարմունքի տպավորությունը: Անեկդոտից հետո խոսակցությունը մանր, աննշան զրույցների բաժանվեց. խոսեցին ապագա և անցյալ պարահանդեսների, ներկայացումների մասին, և այն մասին, թե հ'րբ և ո'ւր պիտի հանդիպեն:

V

Շնորհակալություն հայտնելով Աննա Պավլովնային իր charmante soirée-ի¹ համար՝ հյուրերն սկսեցին ցրվել:

Պիեռն անշնորհք ու կոպիտ էր: Հաստ, սովորականից բարձր հասակով, լայն, մեծ կարմիր ձեռներով, — նա, ինչպես ասում են, շգիտեր սալոն մտնելու և առավել ևս այնտեղից դուրս գալու ձևը, այսինքն դուրս գալու միջոցին մի հաճելի բան ասել: Բացի դրանից՝ ցրված էր: Ոտքի ելնելով՝ նա իր գլխարկի փոխարեն վերցրեց մի գեներալի ցցունազարդ եռանկյունի գլխարկը և նրա փետրազարդ ցցունքը ձիգ տալով ձեռին պահեց այնքան, մինչև որ գեներալը խնդրեց վերադարձնել: Սակայն նրա ցրվածությունը, սալոն մտնելու և այնտեղ խոսելու անճարակությունը փրկում էր բարեհոգի, պարզասիրտ և համեստ բնավորությունը: Աննա Պավլովնան դարձավ նրան և քրիստոնեական հեղուկյամբ նրա անվայել վարմունքը ներելով, գլուխը շարժեց ու ասավ:

— Հույս ունեմ, որ նորից կհանդիպեմ ձեզ, բայց հույս ունեմ նույնպես, որ դուք ձեր կարծիքները կփոխեք, իմ սիրելի մրսյո Պիեռ, — ասավ նա:

Աննա Պավլովնայի այդ խոսքերին՝ Պիեռը շպատասխանեց, միայն խոնարհվեց և մի անգամ ևս ժպտաց բոլորին. և այդ ժպիտը ոչինչ չէր ասում, բացի այն, թե՛ «կարծիքները՝ կարծիքներ, բայց տեսնում եք որքա՛ն բարի և լավ երիտասարդ եմ»: Թե բոլորը, թե Աննա Պավլովնան ակամա զգացին այդ:

¹ Հիանալի երեկույթ:

¹ Այսօր ինձ պատմեցին մոսկովյան մի հիանալի անեկդոտ. պետք է ձեզ հյուրասիրել նրանով. ներքեք, վիկոնտ, ես կպատմեմ ուսուցնեն, այլպես անեկդոտի ամբողջ համը կկորչի:

² Լաքեյ:

³ Սպասուհի:

⁴ Լիվրեյ:

⁵ Այցելություններ անելու:

Իշխան Անդրեյը դուրս եկավ նախասենյակ և, մինչ լա-
քեյը նրա ուսերին կզցեր թիկնոցը, անտարբեր ականջ էր
զնում իր կնոջ շաղակրատանքին՝ իշխան Իպպոլիտի հետ, որ
նույնպես դուրս էր եկել նախասենյակ: Իշխան Իպպոլիտը
կանգնել էր սիրունիկ հղի իշխանուհու կողքին և համառորեն
ուղիղ նրա դեմքին էր նայում իր լուռնետով:

— Գնացեք ներս, Annete, կմտնեք, — ասավ փոքրիկ իշ-
խանուհին, հրաժեշտ տալով Աննա Պավլովնային: — C'est
arrêté¹, — ավելացրեց նա կամաց:

Աննա Պավլովնան արդեն հաջողել էր կիզայի հետ խոսել
նշանախոսության մասին, որ ուզում էր գլուխ բերել Անա-
տոլիի և փոքրիկ իշխանուհու տալոջ միջև:

— Հույս դուք եք, սիրելիս, — ասավ Աննա Պավլովնան
նույնպես կամաց, — դուք կզրեք ձեր տալոջը և ինձ կասեք,
comment le père envisagera la chose. Au revoir², — և նա-
խասենյակից հեռացավ:

Իշխան Իպպոլիտը մոտեցավ փոքրիկ իշխանուհուն և,
կրեսը նրան մոտեցնելով, սկսեց ինչ-որ շնչալ:

Նրկու լաքեյները, մեկը իշխանուհունը, մյուսը Իպպոլի-
տինը, սպասելով թե երբ կվերջացնեն նրանք իրենց խոսակ-
ցությունը, շալն ու ռեդինգոթը ձեռներին՝ կանգնել ականջ
էին դնում իրենց համար անհասկանալի ֆրանսերենը՝ այն-
պիսի դեմքերով, որ կարծես հասկանում էին ի՛նչ է ասվում,
բայց չէին ուզում ցույց տալ այդ: Իշխանուհին, ինչպես միշտ,
խոսում էր ժպտալով և լսում ծիծաղելով:

— Շատ ուրախ եմ, որ դեսպանի մոտ չգնացի, — ասում
էր իշխան Իպպոլիտը. — ձանձրալի է... Հիանալի երեկո էր,
այնպես չէ՞, հիանալի:

— Ասում են պարահանդեսը շատ լավն է լինելու, — պա-
տասխանեց իշխանուհին, բեղիկներով շուրթը վեր քաշելով: —
Բոլոր գեղեցիկ կանայք այնտեղ են լինելու:

— Ոչ բոլորը, որովհետև դուք այնտեղ չպիտի լինեք, —
ասավ իշխան Իպպոլիտը ուրախ-ուրախ ծիծաղելով և, շալն
առնելով լաքեյի ձեռից, անգամ հրելով նրան, սկսեց ծածկել

իշխանուհուն: Անճարակությունից թե գիտմամբ (այդ ոչ ոք
չէր կարող սրտել) նա երկար ժամանակ ձեռները չէր հեռաց-
նում իշխանուհուց, երբ շալն արգեն վրան էր գցել, ու կարծես
գրկել էր ջահել կնոջը:

Իշխանուհին վայելչորեն, բայց միշտ ժպտալով, ետ քաշ-
վեց, շուտ եկավ ու նայեց ամուսնուն: Իշխան Անդրեյի աչքերը
փակ էին — այնպես նա հոգնած ու քնաթ էր երևում:

— Դուք պատրաստ եք, — հարցրեց նա կնոջը, հայաց-
քով շափելով նրան:

Իշխան Իպպոլիտն արագ-արագ հագավ իր ռեդինգոթը,
որը, ըստ նոր ձեռի, շատ երկար էր, և մեջը վաթաթվելով՝
վազեց դեպի դուռը, իշխանուհու ետևից, որին լաքեյը կառեթ
էր նստեցնում:

— Princesse, au revoir¹, — գոչեց նա, լեզվով շփոթվե-
լով այնպես, ինչպես ոտներն էին շփոթվում ռեդինգոթի մեջ:

Իշխանուհին, փեշերը հավաքելով, կառեթ նստեց, ամու-
սինն իր թուրն էր ուղղում. իշխան Իպպոլիտը, ծառայություն
մատուցելու պատրվակով, բոլորին խանգարում էր:

— Թույլ տվեք, պարոն, — չոր-անհաճո դիմեց իշխան
Անդրեյը ուսերեն իշխան Իպպոլիտին, որ խանգարում էր
իրեն առաջ անցնելու:

— Ըս քեզ սպասում եմ, Պիեռ, — սիրալիք ու քնքշանքով
ասավ նույն իշխան Անդրեյը:

Ցորեյտորը շարժվեց, և կառեթի անիվները դրդացին:
Իշխան Իպպոլիտը, դրան առջև կանգնած, ծիծաղում էր ընդ-
հատումներով, սպասելով վիկոնտին, որին խոստացել էր իր
կառքով տուն հասցնել:

— Eh bien, mon cher, votre petite princesse est très
bien, très bien, — ասավ վիկոնտը, Իպպոլիտի հետ կառեթ
նստելով: — Mais très bien. — Նա համբուրեց իր մատների
ծայրերը: — Et tout-à-fait française².

Իպպոլիտը, փոթկալով, ծիծաղեց:

¹ Իշխանուհի, ցտեսություն:

² է՛հ, իմ թանկագին, ձեր փոքրիկ իշխանուհին շատ սիրուն է: Նա ափ-
բուն է և կատարյալ ֆրանսուհի:

¹ վճռված է:

² Ի՛նչպես է հայրը նայում այդ բանին: Ցտեսութուն:

— Et savez-vous que vous êtes terrible avec votre petit air innocent, — շարունակեց վիկոնտը: — Je plains le pauvre mari, ce petit officier, qui se donne des airs de prince régnant¹.

Իպպոլիտը նորից փոթկաց և ասավ ծիծաղելով.

— Et vous disiez, que les dames russes ne valaient pas les dames françaises. Il faut savoir s'y prendre².

Պիեռը, շուտ տեղ հասնելով, տանու մարդու պես անցավ իշխան Անդրեյի առանձնասենյակը և անմիջապես, ըստ սովորութեան, պառկեց բազմոցին, վերջրեց դարակից առաջին պատահած գիրքը (Կեսարի... հիշատակարանն էր) և, թիկն տված, սկսեց մեջտեղից կարդալ:

— Այդ ի՞նչ արիր m-lle Շերերին: Նա հիմա բոլորովին կհիվանդանա, — ասավ իշխան Անդրեյը առանձնասենյակ մըտնելով և իր փոքրիկ ճերմակ ձեռները տրորելով:

Պիեռը դարձավ ամբողջ մարմնով, այնպես որ բազմոցը ճոնչաց. աշխույժ դեմքը դարձրեց դեպի իշխան Անդրեյը, ժրպտաց և ձեռը թափ տվեց:

— Ոչ, այդ արբան շատ հետաքրքրական մարդ է, միայն թե բանն այնպես չի հասկանում... Իմ կարծիքով՝ հավիտենական խաղաղությունը հնարավոր է, բայց ես չեմ կարողանում, ինչպես այդ արտահայտեմ... սակայն ոչ քաղաքական հավասարակշռութեամբ...

Իշխան Անդրեյն, ըստ երևույթին, չէր հետաքրքրվում այդ վերացական խոսակցություններով:

— Չի կարելի, mon cher³, ամեն տեղ ասել այն, ինչ մտածում ես: Հը, որոշեցիր, վերջապես, մի բան: Կավալերգա՞րդ ես դառնալու թե դիվանագետ, — հարցրեց իշխան Անդրեյը թուպական լուսթյունից հետո:

Պիեռը նստեց բազմոցին, ոտքերը տակը դնելով:

¹ Բայց գիտե՞ք, դուք սարսափելի մարդ եք, շնայած ձեր անմեղ արտաքինին: Եվ խղճում եմ թշվառ ամուսնուն, այդ փոքրիկ սպային, որ իրեն մեծ մարդ է երևակայում:

² Իսկ դուք ասում էիք, թե ոուս կանայք վատ են ֆրանսուհիներին: Գէր խոսքերը պետք է ես վերցնեք:

³ Սիրելիս:

— Կարող եք երևակայել, դեռ չգիտեմ ինչ անեմ: Թե՛ մեկը, թե՛ մյուսը դուր չեն գալիս ինձ:

— Բայց չէ՞ որ պետք է մի բան որոշել: Հայրդ սպասում է:

Պիեռը տասը տարեկան հասակից դաստիարակ-աբբայի հետ ուղարկվել էր արտասահման, ուր նա մնացել էր մինչ քսան տարեկան հասակը: Երբ Մոսկվա վերադարձավ՝ հայրը աբբային արձակեց և երիտասարդին ասավ. «Այժմ գնա Պետերբուրգ՝ տես և ընտրիր: Ես ամեն բանի համաձայն եմ: Ահա քեզ նամակ՝ իշխան Վասիլիի անունով, և ահա քեզ դրամ: Գրիր ամեն բանի մասին, և ես ամեն բանում կօգնեմ քեզ»:

Պիեռն արդեն երեք ամիս էր ինչ ընտրություն էր անում և ոչինչ չէր որոշել: Հենց այդ ընտրութեան մասին էր, որ խոսում էր իշխան Անդրեյը: Պիեռը ճակատը շփեց:

— Բայց նա պետք է որ մասոն լինի, — ասավ նա, — երեկույթին տեսած աբբային հիշելով:

— Այդ բոլորը զառանցանքներ են, — նորից ընդհատեց նրան իշխան Անդրեյը, — ավելի լավ է գործի մասին խոսենք Նիգա՞ր հեծելազորի գլխավորացում...

— Ոչ, չեղա. բայց ահա թե ինչ մտածեցի և ինչ եմ ուզում ասել ձեզ: Հիմա պատերազմում ենք Նապոլեոնի դեմ: Եթե այդ պատերազմը լիներ հանուն ազատութեան, կհասկանայի, ինքս առաջինը կմտնեի զինվորական ծառայութեան մեջ. բայց օգնել Անգլիային ու Ավստրիային՝ աշխարհիս մեծագույն մարդու դեմ կովելու... դա լավ չի...

Իշխան Անդրեյը, Պիեռի երեխայական խոսքերի վրա, ուսերը ցնցեց միայն: Նա այնպիսի տեսք ընդունեց, թե շարժի պատասխան տալ այնպիսի հիմարությունների. բայց իսկայես այդ միամիտ հարցին դժվար էր ուրիշ պատասխան տալ, քան իշխան Անդրեյի պատասխանն էր.

— Եթե բոլորն էլ իրենց համոզմունքների թելադրութեամբ պատերազմեին, էլ պատերազմ չէր լինի, — ասավ նա:

— Եվ այդ հիանալի բան կլիներ, — ասավ Պիեռը:

Իշխան Անդրեյը մպտաց:

— Գուցե հիանալի լիներ, բայց այդ երբեք չի լինի...

— Էհ, դուք ինչո՞ւ համար եք պատերազմ գնում, — հարցրեց Պիեռը:

— Ինչո՞ւ համար. չգիտեմ: Այդպես պետք է: Բացի դրանից, ես գնում եմ... — Նա կանգ առավ: — Ես գնում եմ նրա համար, որովհետև կյանքը, այս կյանքը — սրտովս չի:

VI

Հարեան սենյակից լավեց կանացի զգեստների խշխշոց: Իշխան Անդրեյը բնից արթնացողի պես ցնցվեց և նրա դեմքն ընդունեց Աննա Պավլովնայի հյուրասրահում ունեցած արտահայտությունը: Պիեռը ոտներն իջեցրեց բազմոցից: Ներս մտավ իշխանուհին: Նա արդեն հագել էր մի ուրիշ, տնային, բայց նույնքան գեղեցիկ ու թարմ զգեստ: Իշխան Անդրեյը վեր կացավ ու քաղաքավարութամբ բազկաթոռ առաջարկեց նրան:

— Հաճախ մտածում եմ թե ինչու, — խոսեց նա, ինչպես միշտ ֆրանսերեն, արագութամբ ու հոգնածութամբ բազկաթոռին նստելով, — ինչո՞ւ Աննետը չի ամուսնացել: Որքան բոլորդ էլ անխելք եք, messieurs, որ նրա հետ չեք ամուսնացել: Դուք ինձ ներեցեք, բայց պիտի ասեմ, ոչինչ չեք հասկանում կանանցից: Ի՞նչ վիճասերն եք եղել, մըսյո Պիեռ:

— Ես ձեր ամուսնու հետ էլ վիճում եմ շարունակ. չեմ հասկանում, թե ինչո՞ւ է ուզում գնալ պատերազմ, — ասավ Պիեռն առանց քաշվելու (որ այնքան սովորական է երիտասարդ մարդու և երիտասարդ կնոջ հարաբերությունների մեջ) դիմելով իշխանուհուն:

Իշխանուհին ցնցվեց: Ըստ երևույթին, Պիեռի խոսքերը դիպան նրա սրտին:

— Ա՛խ, ես էլ նույնն եմ ասում, — ասավ նա: — Չեմ հասկանում, բացարձակապես չեմ հասկանում. ինչո՞ւ մարդիկ չեն կարողանում ապրել առանց պատերազմի: Ինչո՞ւ մենք՝ կանայքս ոչինչ չենք ցանկանում, ոչինչ այդպիսի բան չենք ուզում: Այ, դուք դատավոր եղեք: Ես միշտ ասում եմ. նա այստեղ հորեղբոր աղյուտանտն է, ամենափայլուն դիրքն ունի: Բոլորը նրան լավ ճանաչում, գնահատում են: Մի քանի օր առաջ Ապրաքսինների մոտ լսեցի, թե ինչպես մի կին հարցնում էր. «C'est ça le fameux prince André?». Ma parole

d'honneur¹. — Իշխանուհին ծիծաղեց: — Նա ամեն տեղ այդպես է ընդունված: Նա շատ հեշտութամբ կարող է ֆլիգելադյուտանտ դառնալ: Գիտեք, թագավորը շատ ողորմածաբար է խոսել հետը: Մենք Աննետի հետ խոսեցինք, որ դա շատ հեշտութամբ կարելի է գլուխ բերել: Ի՞նչ եք կարծում:

Պիեռը նայեց իշխան Անդրեյին և, նկատելով, որ այդ խոսակցությունը դուր չի գալիս բարեկամին, ոչինչ չպատասխանեց:

— Ե՛րբ եք մեկնում, — հարցրեց նա:

— Ah! ne me parlez pas de ce départ, ne m'en parlez pas. Je ne veux pas en entendre parler², — խոսեց իշխանուհին այնպիսի քմահաճ-չարաճճի եղանակով, որով խոսում էր Իպպոլիտի հետ հյուրասրահում, և որն այնպես, ախներև, չէր սազում ընտանեկան շրջանին, ուր Պիեռն ընտանիքի անդամի պես էր: — Այսօր, երբ մտածում էի, թե պետք է ընդհատել բոլոր այդ թանկագին հարաբերությունները... Եվ հետո, գիտե՞ս, André (նա խորհրդավոր կերպով աչքով արավ ամուսնուն): J'ai peur, j'ai peur³, — շնչաց նա, մեջքը դողացնելով:

Ամուսինը նրան նայեց այնպիսի տեսքով, կարծես զարմացած էր, նկատելով, որ իրենից և Պիեռից բացի ուրիշ մեկն էլ կա սենյակում. և սառը քաղաքավարութամբ դարձավ կնոջը.

— Ի՞նչից ես վախենում, կիզա: Ես չեմ կարողանում հասկանալ, — ասավ նա:

— Ահա թե ինչպես բոլոր տղամարդիկ եսամոլ են. բոլորը, բոլորը եսամոլ են: Ինքն իր քմահաճույքի համար, աստված գիտի թե ինչու, թողնում է ինձ ու մենակ բանտարկում գյուղում:

— Հորս և քրոջս մոտ ես լինելու, այդ մի մոռանա, — ասավ իշխան Անդրեյը հանդարտ:

— Միևնույն է՝ մենակ եմ լինելու, առանց իմ բարեկամների... Եվ ուզում է, որ չվախենամ:

¹ «Դա նշանավոր իշխան Անդրե՛յն է»: Ազնիվ խոսք:

² Ա՛խ, մի խոսեք այդ մեկնումի մասին: Մի՛ խոսեք: Այդ մասին լսել անգամ չեմ ուզում:

³ Ես վախենում եմ, ես վախենում եմ:

Նա խոսում էր արդեն դժգոհությամբ. վերին շուրթը բարձրացավ, դեմքին տալով ոչ թե ուրախ, այլ գազանային, սկյուռային արտահայտություն: Նա լռեց, կարծես անհարմար համարելով Պիեռի ներկայությամբ խոսել իր հղիության մասին, մինչդեռ բանի էությունը հենց այդ էր:

— Այսուամենայնիվ ես չհասկացա, de quoi vous avez peur¹, — ասավ իշխան Անդրեյը դանդաղորեն, աչքը չհեռացնելով կնոջից:

Իշխանուհին կարմրեց և ձեռները թափահարեց հուսահատ:

— Non, André, je dis, que vous avez tellement, tellement changé²...

— Բժիշկդ կարգադրել է քեզ շուտ պառկել, — ասավ իշխան Անդրեյը: — Կավ կանես գնաս պառկես:

Իշխանուհին ոչինչ չասավ, և հանկարծ բեղիկներով կարճ շուրթը դողդողաց. իշխան Անդրեյը ոտքի ելավ և, ուսերը թոթվելով, սկսեց գնալ-գալ սենյակում:

Պիեռն ակնոցների միջից զարմացած ու միամտորեն նայեց մեկ նրան, մեկ իշխանուհուն և տեղից շարժվեց, կարծես ինքը նույնպես ուզում էր վեր կենալ, բայց հետո փոշմանեց:

— Ինչ անեմ որ մըսյո Պիեռն այստեղ է, — հանկարծ ասավ փոքրիկ իշխանուհին և նրա սիրունիկ դեմքը հանկարծ լացի արտահայտություն ընդունեց: — Ես վաղուց ուզում էի ասել քեզ, Անդրեյ, թե ինչու վերաբերմունքդ փոխել ես դեպի ինձ: Ես ի՞նչ եմ արել քեզ: Դու բանակ ես գնում, ինձ չես խըղճում: Ի՞նչ է պատճառը:

— Lise! — ասավ միայն իշխան Անդրեյը. սակայն այդ խոսքի մեջ կար և թախանձանք, և՛ սպառնալիք, և՛, որ զլխավորն է, հաստատ համոզում, թե կինը կզղջա իր խոսքերի համար. բայց իշխանուհին շարունակեց արագ-արագ.

— Դու ինձ վերաբերվում ես ինչպես հիվանդի կամ երեխայի: Ես ամեն բան տեսնում եմ: Մի՞թե այդպես էիր վեց ամիս առաջ:

— Lise, խնդրում եմ ձեզ վերջ տաք, — ասավ իշխան Անդրեյը ավելի խիստ:

Պիեռը, որ այս խոսակցության միջոցին հուզվում էր ավելի ու ավելի, վեր կացավ՝ մոտեցավ իշխանուհուն: Թվում էր նա արտասուք տեսնել չէր կարող ու ինքն ևս պատրաստ էր արտասվել:

— Հանգստացեք, իշխանուհի: Ձեզ այդպես թվում է, որովհետև, հավատացնում եմ ձեզ, ես ինքս զգացել եմ... ինչից... որովհետև... Ոչ, ներեցեք, կողմնակի մարդն այստեղ ավելորդ է... Ոչ, հանգստացեք... Մնաք բարով...
Իշխան Անդրեյը՝ ձեռից բռնելով՝ կանգնեցրեց նրան:

— Ոչ, կաց, Պիեռ: Իշխանուհին այնքան բարի է, որ չի ցանկանա զրկել ինձ այս երեկոն քեզ հետ անցկացնելու հաճույքից:

— Ոչ, նա միայն իր մասին է մտածում, — ասավ իշխանուհին, չկարողանալով զսպել բարկության արցունքները:

— Lise, — խստությամբ ասավ իշխան Անդրեյը այնպիսի տոնով, որ ցույց էր տալիս, թե համբերությունն սպառված է:

Հանկարծ իշխանուհու սիրունիկ դեմքի բարկացած-սկյուռային արտահայտությունը փոխվեց վախի, զրավիչ և կարեկցություն հարուցող արտահայտության. հոնքերի տակից, գեղեցիկ աչքերով նայեց ամուսնուն, և նրա դեմքի վրա երևաց այն խոնարհ ու երախտագետ արտահայտությունը, որպիսին ունենում է պոչն արագ-արագ ու թեթև շարժող շունը:

— Mon Dieu, mon Dieu¹, — ասավ իշխանուհին և մի ձեռքով զգեստի փեշերը հավաքելով, մոտեցավ ամուսնուն ու համբուրեց նրա ճակատը:

— Bonsoir, Lise², — ասավ իշխան Անդրեյը, ոտքի ելնելով և քաղաքավարությամբ համբուրեց նրա ձեռը, ինչպես մի օտար կնոջ ձեռ:

Բարեկամները լուռ էին: Ոչ մեկը և ոչ մյուսը չէր կարողանում խոսակցություն սկսել: Պիեռը նայում էր իշխան Անդրեյին, իշխան Անդրեյը ճակատը շփում էր իր փոքրիկ ձեռքով:

¹ Ինչի՞ց ես վախենում:

² Ոչ, Անդրեյ, ես ասում եմ — դու այնպես, այնպես փոխվել ես:

¹ Աստված իմ, աստված իմ:

² Բարի գիշեր, կիզա:

— Գնանք ընթրենք, — ասավ նա հառաչելով և, ոտքի հընելով, գնաց դեպի դուռը:

Նրանք մտան գեղեցիկ, փարթամորեն նորոգված ճաշարահոլ: Ամեն բան՝ անձեռոցիկներից սկսած մինչև արծաթեղենը, հախճապակյա և բյուրեղյա ամանները՝ կրում էին նորության այն առանձին դրոշմը, որ հատուկ է երիտասարդ ամուսինների տան համար: Ընթրիքի կիսին իշխան Անդրեյը արմուկներով հենվեց սեղանին և վաղուց սրտումը բան ունեցող և հանկարծ արտահայտվել վճռող մարդու նման՝ նյարդային հուզումով, խոսել սկսեց.

— Երբեք, երբեք չամուսնանաս, բարեկամս. ահա քեզ խորհուրդս. մի ամուսնանար այնքան ժամանակ, մինչև ինքդ չասես քեզ, թե արել ես բոլորը, ինչ կարող էիր, և այնքան ժամանակ, մինչև շղաղարես ընտրածդ կնոջը սիրելուց, մինչև լավ չճանաչես նրան, այլապես կսխալվես շարաշար և անուղղելի կերպով: Ամուսնացիր ծերության հասակում, երբ ոչ մի բանի պիտանի չես լինի... Թե չէ ամեն բան կկորչի, ամեն բան, ինչ որ լավ է ու վտեմ քեզ համար: Ամեն ինչ կվատանվի մանր բաների վրա: Այո՛, այո՛, այո՛: Այդպես զարմացած մի նայիր ինձ: Եթե քեզնից որեէ սպասելիք ունենաս ապագայում, ամեն քայլափոխիդ պիտի զգաս, որ ամեն ինչ վերջացած է քեզ համար, ամեն բան փակված է, բացի հյուրասրահից, ուր պալատական լաքեյի և ապուշի հետ պիտի մնաս միևնույն աստիճանի վրա... Ահա՛...

Նա ձեռը թափահարեց ուժգին:

Պիեռն ակնոցը վերցրեց, որից նրա դեմքը փոխվեց, արտահայտելով էլ ավելի բարեսրտութուն, ու զարմացած բարեկամին նայեց:

— Կինս, — շարունակեց իշխան Անդրեյը, — սքանչելի կին է: Այն հազվագյուտ կանանցից մեկը, որի հետ կարող ես ապահով լինել պատվիրդ համար. բայց, աստված իմ, այժմ ինչ ասես չէի տա, որ ամուսնացած չլինեի: Սա միայն քեզ եմ ասում, որովհետև սիրում եմ քեզ:

Իշխան Անդրեյը այս խոսքերն ասելիս բնավ նման չէր այն Բալկոնսկուն, որ Աննա Պավլովնայի բազկաթոռին փոված, աչքերը կկոցելով, ատամների արանքից ֆրանսերեն դարձվածքներ էր արտասանում: Նրա ոսկրոտ դեմքը դառում էր

յուրաքանչյուր մկանի նյարդային դողով. աչքերը, ուր առաջ կյանքի կրակը հանգած էր թվում, հիմա փայլում էին ցլուռ ու պայծառ փայլով: Նկատելի էր, որ ինչքան կենսագուրկ էր թվում սովորական ժամանակ, այնքան ավելի եռանդուն էր այդ գրեթե հիվանդագին գրգռումի վայրկյաններին:

— Դու չես հասկանում, թե ինչու եմ այս բաները ասում, — շարունակեց նա: — Սա չէ՞ որ կյանքի մի ամբողջ պատմություն է: Դու ասում ես՝ Բոնապարտն ու իր կարիերան, — ասավ նա, թեև Պիեռը չէր էլ խոսել Բոնապարտի մասին: — Դու ասում ես՝ Բոնապարտը. բայց Բոնապարտը, երբ աշխատում էր, քայլ առ քայլ դիմում էր դեպի իր նպատակը, նա ազատ էր, ոչինչ չունեիր իր նպատակից բացի, — և հասավ իր նպատակին: Բայց կապվիր կնոջ հետ — շղթայված կալանավորի պես կկորցնես ազատությունդ: Եվ բոլորը, ունեցածդ հույսերն ու եռանդը, շարունակ կճնշեն քեզ և զղջումով կտանջեն: Հյուրասրահներ, բամբասանքներ, պարահանդեսներ, սնամիտություն, ոչնչություն — ահա այն կախարդական շրջանը, որից դուրս գալ չեմ կարողանում: Ես այժմ գնում եմ պատերազմ, մի մեծ պատերազմ, որի նմանը չի եղել, բայց ես ո՛րինչ չգիտեմ և ոչ մի բանի պետք չեմ: Je suis très aimable et très caustique¹, — շարունակեց իշխան Անդրեյը, — Աննա Պավլովնայի մոտ էլ ունկնդրում են ինձ: Եվ այդ տխմար հասարակությունը, առանց որի կինս ապրել չի կարողանում, և այդ կանայք... Եթե իմանայիր միայն, թե ի՞նչ բան են toutes les femmes distinguées² և առհասարակ կանայք: Հայրս իրավացի է: Ամեն բանի մեջ եսասիրություն, սնամիտություն, բթամտություն, մանրություն — ահա կանայք, երբ տեսնում ես այնպես, ինչպես կան: Նայում ես նրանց հասարակության մեջ, թվում է թե մի բան են, բայց ոչ ի՞նչ, ոչ ի՞նչ: Այո, մի ամուսնացիր, հոգիս, մի ամուսնացիր, — վերջացրեց իշխան Անդրեյը:

— Ինձ ծիծաղելի է թվում, — ասավ Պիեռը, — որ զույգ ձեզ, անընդունակ եք համարում, իսկ ձեր կյանքը — փշացած կյանք: Ձեզ համար ամեն բան նոր է սկսվում: Եվ դուք...

¹ Ես շատ սիրալիր եմ և լավ խայթող:

² Բարձր դասի բոլոր այդ կանայք:

Պիեռը շատավ, թե զուր ինչ, բայց նրա խոսքի եղանակն արդեն ցույց էր տալիս, թե որքան բարձր է գնահատում նա իր բարեկամին և որքան շատ բան է սպասում նրանից ապագայում:

«Ինչո՞ւ է այդպես խոսում», մտածեց Պիեռը: Պիեռն իշխան Անդրեյին համարում էր բոլոր կատարելությունների տիպար հենց նրա համար, որ իշխան Անդրեյը մեծագույն շափով իր մեջ միացնում էր այն բոլոր հատկությունները, ինչ ինքը՝ Պիեռը չունեիր, հատկություններ, որոնք կարելի է արտահայտել մի մոտավոր հասկացողությամբ — կամքի ուժ: Պիեռը միշտ զարմանում էր իշխան Անդրեյի՝ ամեն տեսակ մարդկանց հետ հանգիստ վարվելու ընդունակության վրա, նրա անօրինակ հիշողության, շատ կօրդացած լինելու (նա ամեն ինչ կարդում էր, ամեն բան գիտեր, ամեն ինչի մասին հասկացողություն ուներ) և մանավանդ նրա աշխատելու և սովորելու ընդունակության վրա: Եթե հաճախ Պիեռին զարմացնում էր այն, որ իշխան Անդրեյը զերծ է երազկոտ փիլիսոփայություն անելու հակումից (դեպի որն առանձնապես հակամետ էր Պիեռը), դա համարում էր ոչ թե պակասություն, այլ ուժ:

Ամենալավ, բարեկամական և պարզ հարաբերությունների մեջ անպամ շոգոթորթությունն ու գովասանքը անհրաժեշտ են, ինչպես յուրը անիվներին, որպեսզի ճանապարհ կտրեն:

— Je suis un homme fini¹, — ասավ իշխան Անդրեյը, — ինչ կարիք կա իմ մասին խոսելու: Արի խոսենք քո մասին, — ասավ նա, լռելով ու ժպտալով իր մխիթարական մտքերի վրա:

Այդ ժպտը նույն վայրկյանին անդրադարձավ Պիեռի դեմքին:

— Իմ մասին ի՞նչ խոսենք, — ասավ Պիեռը դեմքին անհոգ, ուրախ ժպտով շինելով: Ես ի՞նչ եմ որ: Je suis un bâtard². — Եվ նա հանկարծ կարմրատակեց: Նկատելի էր, որ նա այդ ասելու համար մեծ ջանք էր գործ դրել: — Sans nom, sans fortune³.

¹ ևս վերջացած մարդ եմ:

² ևս ապօրինի զավակ եմ:

³ Առանց անունի, առանց կարողության:

Եվ իսկապես... — նա շատավ, թե իսկապես ինչ: — Եվ առայժմ ազատ եմ, և ինձ լավ եմ զգում: Սիբայն չգիտեմ, թե ինչ գործ անեմ: Կուզեի լրջորեն խորհրդակցել ձեզ հետ:

Իշխան Անդրեյը բարի աչքերով նրան էր նայում: Բայց նրա բարեկամական, սիրալիր հայացքի մեջ, այնուամենայնիվ, արտահայտվում էր իր գերազանցության գիտակցությունը:

— Ես քեզ սիրում եմ առանձնապես նրա համար, որովհետև դու միակ կենդանի մարդն ես մեր հասարակության մեջ: Քս բանը լավ է: Ընտրիր, ինչ ուզում ես. միևնույն է: Դու քեզ ամեն տեղ լավ կզգաս, բայց մի բան. մի այցելիր այդ Կուրագիններին և թո՛ղ այդ կյանքը: Այնպես չեն սազում քեզ այդ խրախճանքները, հուսարությունը և այլն...

— Que voulez-vous, mon cher, — ասավ Պիեռը, ուսերը թոթվելով, — les femmes, mon cher, les femmes!¹.

— Չեմ հասկանում, — պատասխանեց Անդրեյը: — Les femmes comme il faut², այդ այլ բան է. բայց Կուրագինի les femmes, les femmes et le vin³, չեմ հասկանում:

Պիեռն ապրում էր իշխան Վասիլի Կուրագինի տանը և մասնակցում էր նրա Անատոլ որդու զեղխ կյանքին, այն Անատոլի, որին ուղղելու համար պատրաստվում էին ամուսնացնել իշխան Անդրեյի քրոջ հետ:

— Գիտեք ինչ, — ասավ Պիեռը, կարծես մի անսպասելի գեղեցիկ միտք հղանալով, — ճիշտ. ես այդ վաղուց եմ մտածել: Այս պայմաններում ես չեմ կարողանում որևէ բան ո՛չ որոշել, ո՛չ էլ խորհել: Գլուխս ցավում է, դրամ էլ չկա: Այսօր նորից կանչել է, բայց չեմ գնա:

— Ազնիվ խոսք տուր, որ այլևս չես գնա:

— Ազնի՞վ խոսք:

Գիշերվա ժամը երկուսն էր արդեն, երբ Պիեռը գնաց իր բարեկամի մոտից: Հունիսյան գիշեր էր, Պետերբուրգի պայծառ գիշերներից մեկը: Պիեռը կառք նստեց՝ տուն գնալու մտադրությամբ: Բայց քանի մոտենում էր տանը, այնքան

¹ Ի՞նչ ես ուզում, սիրելիս. կանայք, սիրելիս, կանայք:

² Կարգին կանայք:

³ Կանայք, կանայք և գինի:

ավելի զգում էր, որ անհնարին է քնել այդ գիշեր, որ ավելի նման էր երեկոյի կամ առավոտի: Ամայի փողոցները երևում էին մինչև հեռուները: Ճամփին Պիեռը հիշեց, որ այդ երեկո Անատոլ Կուրագինի մոտ հավաքվելու էր թուղթ խաղացողների սովորական խումբը, որից հետո սովորաբար լինում էր կերուխում, որը վերջանում էր Պիեռի սիրած զվարճութուններից մեկով:

«Լավ կլինե՞ր Կուրագինի մոտ գնալի», մտածեց Պիեռը:

Սակայն անմիջապես հիշեց իշխան Անդրեյին տված ազնիվ խոսքը՝ էլ չզնալ Կուրագինի մոտ: Բայց անմիջապես, ինչպես այդ հատուկ է թուլամորթ կոչվող մարդկանց, նա բուռն ցանկութուն ունեցավ մի անգամ ևս փորձել իրեն այնքան ծանոթ շվայտ կյանքը, ու վճռեց գնալ: Եվ իսկույն մտածեց, որ տրված խոսքը նշանակութուն չունի, որովհետև իշխան Անդրեյին խոսք տալուց առաջ, նա Անատոլին նույնպես խոսք էր տվել՝ լինել նրա մոտ: Վերջապես մտածեց, որ բոլոր այդ ազնիվ խոսքերը այնպիսի պայմանական բաներ են, որ չունեն որևէ որոշ իմաստ, մանավանդ եթե մարդ մտածի, որ վաղն իսկ կարող է մեռնել կամ իրեն կարող է մի այնպիսի անսովոր բան պատահել, որ էլ ոչ ազնիվ խոսք կմնա, ոչ անազնիվ: Իր վճիռներն ու ենթադրությունները ոչնչացնող այսպիսի դատողություններ հաճախ էին անցնում Պիեռի մտքով: Նա գրեթե Կուրագինի մոտ:

Հասնելով հեծանդի զորանոցների մոտ գտնվող մի մեծ տան, ուր ապրում էր Անատոլը, Պիեռը, կառքից իջնելով, բարձրացավ այդ տան լուսավորված աստիճաններով, և բաց դռնից մտավ ներս: Նախասենյակում ոչ ոք չկար. այդտեղ ընկած էին դատարկ շշեր, թիկնոցներ, կրկնակոշիկներ: Գինու հոտ էր գալիս. հեռավոր խոսակցություն ու բացականչություններ էին լսվում:

Խաղերն ու ընթրիքը վերջացել էին արդեն, բայց հյուրերը դեռ չէին ցրվել: Պիեռը թիկնոցը գցեց մի կողմ ու մտավ առաջին սենյակը, ուր կային ընթրիքի մնացորդներ և մի լաքեյ, որ կարծելով իրեն մարդ չի տեսնում, դատարկում էր կիսատ բաժակները: Երրորդ սենյակից լսվում էին քաշքշոցի, քրթիչի ձայներ, ծանոթ բացականչություններ և արջի ոռնոց: Ութ երիտասարդներ մտահոգ խմբվել էին բաց պատուհանի մոտ

Երեք հոգի գրադված էին մի շահել արջուկով. դրանցից մեկը արջին շղթայով բաշելով՝ վախեցնում էր մյուսներին:

— Ստիվենսի կողմից տալիս եմ հարյուր, — կանչեց մեկը:

— Տես, օգնել չի կարելի, — գոչեց մյուսը:

— Ես Դոլոխովի կողմն եմ, — գոռաց երրորդը: — Կտրի՛ր, Կուրագին:

— Դե, արջը թողեք, այստեղ գրազ են գալիս:

— Մի շնչով, այլապես տարված է, — գոռում էր չորրորդը:

— Յա՛կով, մի շիշ բեր, Յա՛կով, — ձայն տվեց ինքը՝ գեղեցիկ, բարձրահասակ տանտերը, որ կուրծքը բաց, բարակ շապիկով կանգնել էր բազմութան մեջ: — Սպասեցեք, պարոններ: Ահա և Պետրուշան, սիրելի բարեկամս, — դարձավ նա Պիեռին:

Ուրիշ մի ոչ-բարձրահասակ, պայծառ կապույտ աչքերով մարդու ձայնը, որ բոլոր այդ գինովցած ձայների մեջ զարմացնում էր իր զգաստ արտահայտությամբ, կանչում էր պատուհանից. «Արի՛ այստեղ — գրազը կտրի»: Դա Սեմյոնովյան գնդի սպա Դոլոխովն էր՝ հայտնի խաղամուլ ու մենամարտի սիրահար, որ ապրում էր Անատոլի հետ միասին: Պիեռը, շուրջը նայելով, ուրախ ժպտաց:

— Բան չեմ հասկանում: Ի՞նչ կա:

— Կացեք, սա հարբած չի: Եիջը տուր, — ասավ Անատոլը և, սեղանից բաժակը վերցնելով, մոտեցավ Պիեռին:

— Նախ և առաջ խմի՛ր:

Պիեռն սկսեց խմել բաժակ բաժակի ետևից, հոնքերի տակից նայելով հարբած հյուրերին, որոնք նորից խմբվեցին լուսամուտի մոտ, միևնույն ժամանակ ականջ դնելով նրանց խոսակցությանը: Անատոլը գինի էր լցնում նրա բաժակը և պատմում, թե Դոլոխովը գրազ է բռնում այստեղ գտնվող անզլիացի ծովազնաց Ստիվենսի հետ, որ ինքը՝ Դոլոխովը երրորդ հարկի պատուհանում նստած և ոտները դեպի դուրս կախած մի շիշ ոռմ պիտի խմի:

— Դե բոլորը խմի՛ր, — ասավ Անատոլը, վերջին բաժակը Պիեռին տալով, — թե չէ բաց չեմ թողնի:

— Ոչ, չեմ ուզում, — ասավ Պիեռը և Անատոլին հրելով մոտեցավ լուսամուտին:

Դոլոխովը անգլիացու ձեռք բռնած՝ պարզ ու որոշ թվում էր գրագի պայմանները, դիմելով գլխավորապես Անատոլին և Պիեռին:

Դոլոխովը միջահասակ մարդ էր՝ գանգրահեր ու պայծառ, կապույտ աչքերով: Քսանուհինգ տարեկան էր: Ինչպես բուրբ հետևակ սպաները՝ նա էլ բեղեր չէր պահում, և նրա բերանը, որ դեմքի ամենաաչքի ընկնող մասն էր, երևում էր ամբողջությամբ: Այդ բերանի գծերը կորացած էին զարմանալի նրբությամբ: Մեջտեղից՝ վերին շուրթը եռանդուն կերպով սեպածև իջնում էր ներքին պինդ շուրթի վրա, և բերանի անկյուններում շարունակ երկու յուրատեսակ ժպիտներ էին գոյանում, յուրաքանչյուր կողմում մեկը: Եվ այդ բոլորը միասին, մանավանդ աչքերի հանդուգն, լպիրշ ու խելացի հայացքը, այնպիսի տպավորություն էր անում, որ չէր կարելի շնկատել այդ դեմքը: Դոլոխովը հարուստ չէր, և կապեր էլ չունեի հասարակության մեջ: Եվ չնայած որ Անատոլը տասնյակ հազարներ էր ծախսում, Դոլոխովը նրա հետ էր պարում և կարողացել էր իրեն պահել այնպես, որ բոլոր նրանց ճանաչողները Դոլոխովին ավելի էին հարգում, քան Անատոլին: Դոլոխովը խաղում էր ամեն խաղ և միշտ տանում էր: Որքան էլ խմեր՝ մտքի պայծառությունը չէր կորցնում: Թե՛ Կուրագինը, թե՛ Դոլոխովը այն ժամանակները հայտնի էին Պետերբուրգի կոնծաբանների և ստահակների աշխարհում:

Ռոմի շիշը բերել էին. շրջանակը, որ արգելում էր լուսամուտի դրսի կողմի թեքություն վրա նստելու, սկսեցին պոկել երկու լաքեյ միասին, հայտնապես շտապելով ու շփոթվելով շրջապատող պարոնների խորհուրդներից ու գողնումներից:

Անատոլին հաղթական տեսքով պատուհանին մոտեցավ: Նա ուզում էր որևէ բան կտորել: Լաքեյներին մի կողմ հրելով՝ շրջանակը քաշեց դեպի իրեն, բայց շրջանակը մնաց տեղում, նա ջարդեց ապակին:

— Հապա, դու փորձիր, հսկա, — դարձավ նա Պիեռին:

Պիեռը ձեռք գցեց շրջանակի թեք ձողերին, ձիգ տվեց և ճոնշոցով տեղահան արավ կաղնյա շրջանակը:

— Ամբողջովին հանիր, թե չէ կկարծեն մի տեղից բռնել եմ, — ասավ Դոլոխովը:

— Անգլիացին պարծենում է... հա... լա... վ է... — ասում էր Անատոլը:

— Լավ է, — ասավ Պիեռը, նայելով Դոլոխովին, որ ոտմի շիշը ձեռին մոտենում էր լուսամուտին, որտեղից երևում էին երկնքի վրա իրար ձուլվող վերջալույսն ու արշալույսը:

Դոլոխովը ոտմի շիշը ձեռին թռավ լուսամուտը: «Լսեցե՛ք», գոչեց նա, լուսամուտի գոգին կանգնելով և սենյակում գտնվողներին դիմելով: Բոլորը լռեցին:

— Ես գրագ եմ բռնում (նա խոսում էր ֆրանսերեն, որ անգլիացին հասկանա իրեն, և այնքան էլ լավ չէր խոսում այդ լեզվով): Գրագ եմ բռնում հիսուն ոսկով, ուզո՞ւմ եք հարյուր, — ավելացրեց նա, անգլիացուն դիմելով:

— Ոչ, հիսուն, — ասավ անգլիացին:

— Լավ, հիսուն ոսկով, — որ ես խմում եմ ոտմի շիշն ամբողջությամբ, մի շնչով, առանց բերնիցս հեռացնելու, խմում եմ՝ լուսամուտից դուրս նստած, ահա այս տեղում (նա կոացավ և ցույց տվեց լուսամուտի դրսի կողմի թեքությունը) առանց որևէ բանից բռնելու... Այդպե՛ս է...

— Շատ լավ, — ասավ անգլիացին:

Անատոլին դարձավ անգլիացուն և, նրա ֆռակի կոճակը բռնելով ու վերևից նրան նայելով (անգլիացին կարճահասակ էր), սկսեց անզլերեն կրկնել նրան գրագի պայմանները:

— Կա՛ց, — պոռաց Դոլոխովը, շշով պատուհանը թակելով, որ ուշադրություն դարձնեն իր վրա: — Կաց, Կուրագին. լսեցե՛ք: Եթե ուրիշ մեկն այս նույնն անի, ես տալիս եմ հարյուր ոսկի: Հասկանո՞ւմ եք:

Անգլիացին գլխով արավ, առանց հասկացնելու, թե մտադիր է արդյոք այս նոր գրագը բռնելու թե ոչ: Անատոլն անգլիացուն չէր թողնում և, չնայած որ նա գլխի շարժումով հասկացնել տվեց, թե ըմբռնել է ամեն ինչ, Անատոլը Դոլոխովի խոսքերը թարգմանեց անզլերեն: Մի նիհար, ջահել տղա, հուսար-սպա, որ այդ երկկո տանուլ էր տվել խաղի մեջ, լուսամուտը բարձրացավ, գլուխը հանեց ու նայեց ցած:

— Ո՛ւ... ո՛ւ... ո՛ւ... — բացականչեց նա, լուսամուտից ներքև մայթերը դիտելով:

— Հանդարտ, — պոռաց Դոլոխովը և պատուհանից քա-

չեց սպային, որը, խթաններն իրար խճողելով, անշնորհք կերպով թռավ սենյակը:

Շիշը դնելով լուսամուտի գոգին, որ վերցնելը հեշտ լինի, Գոլոխովն զգուշությամբ և կամացուկ մտավ լուսամուտի մեջ: Ոտները կախելով և երկու ձեռքով լուսամուտի կողերը բռնելով՝ նա փորձեց հավասարակշռութունը, տեղավորվեց, ձեռները թողեց, շարժվեց դեպի աջ, դեպի ձախ ու շիշը վերցրեց: Անատուր բերեց երկու մոմ ու դրեց լուսամուտի գոգը, չնայած որ բոլորովին լույս էր արգեն: Սպիտակ շապիկով Գոլոխովի մեջքը և գանգրահներ գլուխը լուսավորվեցին երկու կողմից: Բոլորը խմբվեցին լուսամուտի մոտ: Առջևը կանգնած էր անգլիացին: Պիեռը ժպտում ու ոչինչ չէր ասում: Ներկաներից մեկը, որ մյուսներից ավելի տարիքով էր, վախեցած ու զայրացած դեմքով, առաջ անցավ հանկարծ և ուզեց բռնել Գոլոխովի շապիկից:

— Պարոններ, այս հիմարությունն է. մարդը կընկնի՝ կըմեռնի, — ասավ այդ ավելի խոհեմ մարդը:

Անատուրը կանգնեցրեց նրան:

— Ձեռ մի՛ տա. կվախեցնես՝ կընկնի-կմեռնի: Հը՞... Այն ժամանակ ի՞նչ... Հը՞...

Գոլոխովը գլուխը դարձրեց, ուղղվելով ու ձեռներին հենված:

— Եթե մեկը նորից դեպի ինձ է եկել, — ասավ նա, բառերը հազիվ արտասանելով սեղմած ու նուրբ շրթերի արանքից, — ես նրան անմիջապես կիջեցնեմ այ այտեղ: Դե՛...

«Դե՛» ասելով՝ նա շուտ եկավ նորից, ձեռները թողեց, շիշը վերցրեց, մոտեցրեց բերանին, գլուխը ետ գցեց և ազատ ձեռք վեր բարձրացրեց հավասարակշռության համար: Լաքեյներից մեկը, որ կոտրած ապակու կոտորանքներն էր հավաքում, կանգ առավ կռացած գիրքով, աչքերը չհեռացնելով լուսամուտից և Գոլոխովի մեջքից: Անատուրը դիք կանգնել էր՝ աչքերը շուտ: Անգլիացին, շրթունքը դուրս գցած, նայում էր կողքանց: Այն տարիքոտ ապան, որ ազում էր արգելել այդ բանը, վաղեց դեպի սենյակի անկյունը և պառկեց բազմոցին՝ երեսը պատին դարձրած: Պիեռը երեսը ծածկել էր, և մի նըվաղ, մոռացված ժպիտ մնացել էր նրա դեմքին, թեև այդ դեմքն արտահայտում էր ահ ու սաքսափ: Բալորը բեռնից

Պիեռը ձեռները հեռացրեց աչքերից. Գոլոխովը նստած էր նույն դիրքով, միայն գլուխն էր ետ թեքվել, այնպես որ ծոծրակի գանգուր մազերը դիպչում էին շապկի օձիքին, և ձեռը շի հետ միասին բարձրանում էր ավելի ու ավելի, դողողալով ու ճիգ գործ դնելով: Շիշն ըստ երևույթին դատարկվում էր և դրա հետ միասին բարձրանում, ծուելով Գոլոխովի գլուխը: «Ինչո՞ւ այսպես երկար տևեց», մտածեց Պիեռը: Նրան թվում էր, թե կես ժամից ավելի է անցել: Հանկարծ Գոլոխովը մեջքով շարժում արավ դեպի ետ, և նրա ձեռը դողաց նյարդային դողով. այդ ցնցումը բավական էր, որ թեք մակարդակի վրա նստած մարմինը շարժվեր տեղից: Նա ամբողջովին շարժվեց, և նրա ձեռներն ու գլուխը, ճիգեր թափելով, դուրացին առաջվանից ավելի սաստիկ: Ձեռի մեկը բարձրացավ լուսամուտի գոգից բռնելու, բայց նորից իջավ: Պիեռը նորից աչքերը ծածկեց, որոշելով՝ էլ երբեք չբանալ: Հանկարծ զգաց, որ շուրջը բոլորը շարժվեցին: Նայեց. Գոլոխովը կանգնած էր լուսամուտի գոգին, դեմքը գունատ էր և ուրախ:

— Դատարկ է:

Նա շիշը նետեց անգլիացուն, որը ճարպկորեն բռնեց այն: Գոլոխովը լուսամուտից ցած թռավ: Նրանից ոտմի ուժեղ հոտ էր փչում:

— Հինալի՛ էր: Կեցցե՛ս: Ա՛յ բեզ գրագ: Գրողը ձեզ տանի, — լսվում էր ամեն կողմից:

Անգլիացին, քսակը հանելով, դրամը համրեց: Գոլոխովը հոնքերը կիտեց և լուռ էր: Պիեռը թռավ լուսամուտը:

— Պարո՛նայք: Ո՞վ է ուզում գրագ գալ ինձ հետ: Ես էլ այդ կանեմ, — հանկարծ բացականչեց նա: — Գրագն էլ հարկավոր չի: Հրամայի՛ մի շիշ բերեն: Ես կանեմ... հրամայի՛ բերեն:

— Թող, թող, — ասավ Գոլոխովը ժպտալով:

— Ի՞նչ է պատահել քեզ. խելքդ թոցրե՞լ ես: Ո՞վ կթողնի: Քո գլուխը սանդուղի վրա էլ պատվում է, — խոսեցին այս ու այն կողմից:

— Կիմեմ, մի շիշ ոտմ ավե՛ք, — բղավեց Պիեռը, վճռականորեն ու հարբած շարժումով սեղանին խփելով, և մտավ լուսամուտի մեջ:

Նրա ձեռները բռնեցին. բայց նա այնքան ուժեղ էր, որ հեռու էր հրում իրեն մոտեցողներին:

— Ոչ, դրան այդպես ոչ մի կերպ չես կարող կոտրել, — ասավ Անատոլը, — կացեք, ես նրան կխաբամ: Ես գրագ եմ բռնում քեզ հետ, բայց վաղը, իսկ հիմա մենք բոլորս գնում ենք-ի մոտ:

— Գնանք, — բացականչեց Պիեռը, — գնա՛նք... Արջն էլ տանենք հետներս...

Նա բռնեց արջին և, նրան գրկելով ու բարձրացնելով, սկսեց սենյակի մեջ պտույտներ անել:

VII

Իշխան Վասիլին՝ Աննա Պավլովնայի երեկույթում իշխանուհի Դրուբեցկայային տված խոստումը կատարեց, որ վերաբերում էր նրա միակ որդի Բորիսին: Նրա մասին զեկուցվեց թագավորին, և նա, ոչ օրինակ այլոց, փոխադրվեց Սեմյոնովյան գնդի գվարդիան՝ վառակիրի պաշտոնով: Բայց, չընայած Աննա Միխայլովնայի բոլոր ջանքերին ու դիմումներին, Բորիսն այնպես էլ չնշանակվեց Կուտուզովի այդուտանտ կամ նրա շտաբին կից: Աննա Պավլովնայի երեկույթից հետո Աննա Միխայլովնան շուտով վերադարձավ Մոսկվա՝ ուղիղ իր հարուստ ազգական Ռոստովների տունը, ուր իջեվանում էր Մոսկվա եղած միջոցին և ուր մանկությունից դաստիարակվել ու տարիներով ապրել էր իր պաշտելի Բորիսկան, որ հենց նոր զինվորական էր դարձել և անմիջապես գրվարդիա փոխադրվել՝ իբրև վառակիր: Գվարդիան արդեն դուրս էր եկել Պետերբուրգից օգոստոսի 10-ին, և Բորիսը, որ մնացել էր Մոսկվայում զգեստավորվելու համար, գորթին պիտի հասներ Ռաձիվիլով տանող ճանապարհին:

Ռոստովների տանը, Նատալիայի տոնի առթիվ, մոր և կրտսեր աղջկա անվանակոչությունն էր տոնվում: Առավոտից սկսած, անդադար, եռազույգ ձիերով լծված կառքեր էին գալիս ու գնում, շնորհավորողներ բերելով Ռոստովների մեծ, ամբողջ Մոսկվային հայտնի տունը, որ գտնվում էր Պովարսկայա փողոցի վրա: Կոմսուհին իր մեծ սիրուն աղջկա և, մեկը մյուսին փոխարինող հյուրերի հետ, նստել էին հյուրասրահում:

Կոմսուհին նիհար դեմքով արևելյան տիպի կին էր, քառասունհինգ տարեկան, ըստ երևույթին մաշված՝ տասներկու երեխա բերելուց: Շարժումների և խոսակցության դանդաղ-կոտուրթունքը, որ առաջանում էր ուժասպառությունից, ներքան տալիս էր մի պատկանելի տեսք, որ հարգանք էր ներշնչում: Իշխանուհի Աննա Միխայլովնա Դրուբեցկայան, որպես տանու մարդ, այդտեղ նստած, օգնում էր հյուրերը ընդունելու և զրույցով զբաղեցնելու գործին: Երիտասարդներն անցել էին հտեի սենյակները, կարևոր չհամարելով մասնակցել այցելուներ ընդունելուն: Կոմսը դիմավորում և ճանապարհ էր դնում հյուրերին, բոլորին էլ ճաշի հրավիրելով:

«Շատ և շատ շնորհակալ եմ, ma chère կամ mon cher¹ (ma chère կամ mon cher նա ասում էր անխտիր բոլորին, բնավ տարբերություն չդնելով իրենից բարձր կամ ցած կանգնածների միջև) թե իմ և թե թանկագին անվանակոչյալների կողմից: Բայց տեսեք ա՛յ, կգաք ճաշելու: Դուք ինձ կվիրավորեք, mon cher. Սրտանց խնդրում եմ ամբողջ ընտանիքի կողմից, ma chère».

Լիքը, ուրախ և մաքուր ածիլած դեմքի միատեսակ արտահայտությամբ, ձեռների միատեսակ ամուր սեղմումով և գլխի թեթևակի խոնարհումներով այդ խոսքերն ասում էր բոլորին անխտիր, անփոփոխ կերպով: Մի հյուրին ճամփա դնելով՝ կոմսը վերադառնում էր հյուրասրահում մնացած այր կամ կին հյուրի մոտ. բազկաթոռն առաջ քաշելով, լավ ապրել սիրող և ապրել իմացող մարդու տեսքով, աշխուժորեն ոտներն իրարից հեռու և ձեռները ծնկներին դնելով, նա օրորվում էր վեհորեն, գուշակություններ անում եղանակի մասին, խորհրդակցում առողջության մասին, երբեմն ոռուսերենով, երբեմն շատ վատ, բայց ինքնավստահ ֆրանսերենով, և նորից հոգնած, բայց տղամարդու պարտականությունը կատարելու ամուր գիտակցությամբ, գնում էր ճամփու դռնելու, ցանցառ մազերը ճաղատի վրա ուղղելով, և կրկին հրավիրում ճաշի: Երբեմն նախասենյակից վերադառնալով՝ նա ծաղիկների և սպասավորների սենյակների միջից անցնելով, մտնում էր ընդարձակ մարմարյա դահլիճը, ուր սեղան էին պատրաստում ութսուն մարդու համար, և նայելով աբ-

¹ Սիրելի:

ժաթ ու հախճապակի բերող, սեղաններ սարքող և շերտավոր կտավի սփռոցներ փողո սպասավորներին, նա իր մոտ էր կանչում Դմիտրի Վասիլևիչին, իր բոլոր գործերը վարող ազնվականին, և ասում. «Դե՛, դե՛, Միտենկա, տես, ամեն բան լավ լինի: Այդպես, այդպես, — ասում էր նա, բավականութամբ նայելով բացված ահագին սեղանին: — Գլխավորը սպասքափորումն է: Այո... Եվ նա ինքնագոհ հռոտալիով՝ գնում էր նորից հյուրասրահ:

— Մարիա Լվովնա Կարագինան իր դստեր հետ. — թավ ձայնով հայտնեց կոմսուհու լաքեյը, հյուրասրահի դռնից մտնելով:

Կոմսուհին մտածեց և հոտ քաշեց ամուսնու պատկերով զարդարված քթախոտի ոսկե տուփից:

— Հոգիս հանեցին այս այցելությունները, — ասավ նա: — է՛հ, սա արդեն վերջինը կլինի: Շատ մեծամիտն է ու շմահավան: Խնդրի՛ր, — ասավ լաքեյին մի տխուր ձայնով, որ կարծես ասում էր. «Դե, արդեն հոգիս հանեցիք»:

Բարձրահասակ, գիրուկ, հպարտ տեսքով մի կին՝ իր կլորադեմ աղջկա հետ, զգեստների աղմուկով, մտան հյուրասրահ:

«Chère comtesse, il y a si longtemps... elle a été alitée la pauvre enfant... au bal des Razoumowsky... et la comtesse Apraksine... j'ai été si heureuse...¹» լավեցին կա այցի աշխույժ, իրար ընդհատող ձայներ, խառնվելով զգեստների աղմուկին ու աթոռների շարժումին: Սկզբից մի խոսակցություն, որ տևում է այնքան, որ հենց առաջին ընդմիջումին վեր են կենում և, զգեստներով աղմկելով, ասում. «Je suis bien charmée: la santé de maman... et la comtesse Apraksine»², և, դարձյալ զգեստների աղմուկով, անցնում նախասենյակ, մուշտակ կամ թիկնոց հագնում ու մեկնում: Խոսակցություն բացվեց քաղաքի այն ժամանակվա գլխավոր նորություն — Եկատերինայի ժամանակի հայտնի հարուստ և գե-

¹ Թանկագին կոմսուհի, որքան ժամանակ է... աղջիկս ստիպված էր պռակել անկողնում, խեղճը... Ռազումովսկիների պարահանդեսում... և կոմսուհի Ապրասինան... ես այնքան երջանիկ էի:

² Ես հիացած եմ... մամայի առողջությունը... և կոմսուհի Ապրասինան:

ղեցիկ ծերունի կոմս Բեզուխովի հիվանդութան և նրա ապօրինի որդի Պիեռի՝ մասին, որն իրեն այնպես անկարգ էր պահել Աննա Պավլովնա Շերերի երեկույթին:

— Ես շատ խղճում եմ ծերունի կոմսին, — ասավ հյուրը, — նրա առողջությունն առանց այն էլ վատ է, իսկ հիմա որդու պատճառած վիշտը կսպանի նրան:

— Ինչպե՛ս, — հարցրեց կոմսուհին, կարծես չգիտեր ինչի մասին է խոսում հյուրը, թեև տասնուհինգ անգամ արդեն լսել էր կոմս Բեզուխովի վշտի պատճառի մասին:

— Ահա այժմյան դաստիարակությունը, — ասաց հյուրը, — դեռ արտասահմանում այդ երիտասարդը թողնված է եղել ինքն իրեն, իսկ հիմա Պետերբուրգում, ասում են, այնպիսի սարսափելի բաներ է արել, որ ոստիկանությունը նրան արտաքսել է այնտեղից:

— Մի՛ թե, — ասավ կոմսուհին:

— Նա վատ ընկերներ է ընտրել, — միջամտեց իշխանուհի Աննա Միխայլովնան: — Իշխան Վասիլիի որդին, նա և մի ինչ-որ Դոլոխով, այդ երեքը, ասում են, սարսափելի բաներ են արել: Եվ երկուսը պատժվել են. Դոլոխովին աստիճանազուրկ են արել և հասարակ զինվոր դարձրել, Բեզուխովի որդուն աքսորել են Մոսկվա: Իսկ Անատոլի Կուրագինին — հայրն ազատել է մի կերպ: Բայց և այնպես արտաքսել են Պետերբուրգից:

— Բայց ի՞նչ են արել, — հարցրեց կոմսուհին:

— Դրանք կատարյալ ավազակներ են, մանավանդ Դոլոխովը, — ասում էր հյուրը: — Նա Մարիա Իվանովնա Դոլոխովայի որդին է, այդպիսի մի հարգելի կնոջ որդի և ի՛նչ... Կարող եք երևակայել, դրանք երեքով ձեռք են բերում մի արջ, նստեցնում են կառեթ և տանում դերասանուհիներին մոտ: Ոստիկանությունը վրա է հասնում դրանց զսպելու: Դրանք բռնում են ոստիկանական թաղապետին և մեջքը կապում արջի մեջքին ու թողնում Մոյկայի մեջ, արջը լողում է, իսկ թաղապետը նրա վրա:

— Հետաքրքրական կերպարանք կունենար թաղապետը, ma chère, — բացականչեց կոմսը, ծիծաղից թուլանալով:

— Ախ, ինչ սարսափելի է: Այստեղ ծիծաղելու ի՞նչ կա, կոմս:

Բայց կանայք իրենք էլ ակամա ծիծաղեցին:

— Հագիվ են կարողանում այդ թշվառին փրկել, — շարունակեց հյուրը: — Եվ դա կոմս Կիրիլ Վլադիմիրովիչ Բեզուխովի որդին է այդպես խելացի զվարճանում, — ավելացրեց նա: — Բայց ասում են, թե շատ կրթված ու խելոք մարդ է: Ահա արտասահմանի կրուժյունն ո՛ւր հասցրեց: Հույս ունեմ, որ նրան այստեղ ոչ ոք չի ընդունի, չնայած իր հարստության: Ուզեցին ծանոթացնել ինձ: Կարականապես հրաժարվեցի. աղջիկների տեր եմ:

— Ինչո՞ւ համար եք ասում, թե այդ երիտասարդն այնքան հարուստ է, — հարցրեց կոմսուհին, մի կողմ թեքվելով աղջիկներից, որոնք անմիջապես ձևացրին, թե չեն լսում: — Ձե՞ որ կոմսը միայն ապօրինի զավակներ ունի: Կարծեմ... այդ Պիեռն էլ ապօրինի է:

Հյուրը ձեռք թափ տվեց:

— Նա, կարծեմ, քսան ապօրինի զավակ ունի:

Իշխանուհի Աննա Միխայլովնան խոսովեց խոսակցության, ըստ երևույթին, կամենալով ցույց տալ իր կապերը և բարձր շրջանի բոլոր հանգամանքների մասին ունեցած իր տեղյակությունը:

— Ահա բանն ինչու՞մ է, — ասավ նա խորհրդավորությամբ և նույնպես կիսաշշուկով: — Կոմս Կիրիլ Վլադիմիրովիչի համբավը հայտնի է... Նա իր զավակների հաշիվն էլ մոռացել է, բայց այդ Պիեռը նրա սիրելին էր:

— Որքա՞ն լավն էր ծերուկը, — ասավ կոմսուհին, — դեռ անցյալ տարի: Ավելի գեղեցիկ տղամարդ չեմ տեսել:

— Հիմա շատ է փոխվել, — ասավ Աննա Միխայլովնան: — Հա, ես ուզում էի ասել, շարունակեց նա, — որ կնոջ կողմից նրա կալվածների անմիջական ժառանգն իշխան Վասիլին է, բայց հայրը Պիեռին շատ էր սիրում, զբաղվեց նրա դաստիարակությունը և գրեց թագավորին... այնպես որ ոչ ոք չգիտե, եթե մեռնի (նա այնքան վատ է, որ յուրաքանչյուր վայրկյան սպասում են այդ բանին, և Lorrain¹ եկավ Պետերբուրգից) ո՛ւմ է մնալու այդ ահագին կարողությունը, Պիեռին թե իշխան Վասիլին: Քառասուն հազար ճորտ և միլիոններ

ես այդ լավ գիտեմ, որովհետև ինքր, իշխան Վասիլին է ինձ ասել: Բացի դրանից՝ Կիրիլ Վլադիմիրովիչն ինձ՝ մորս կույսից՝ քեռի է գալիս երրորդ պորտով: Բորիսիս կնքահայրն էլ նա է եղել, — ավելացրեց նա, կարծես այդ հանգամանքին ոչ մի նշանակություն չտալով:

— Իշխան Վասիլին երեկ եկել է Մոսկվա: Ինձ ասին, թե վերաքննության գործով է գնում, — ասավ հյուրը:

— Այո, բայց, entre nous¹, — ասավ իշխանուհին, — դա պատրվակ է. նա եկել է իսկապես կոմս Կիրիլ Վլադիմիրովիչի մոտ, լսելով, որ նա այդքան վատ է:

— Սակայն, ma chère, դա հիանալի բան է, — ասավ կոմսը, նկատելով, որ հյուրն իրեն չի լսում, գիմեց արդեն օրիորդներին: — Հետաքրքրական կերպարանք կունենար այդ լեզուպետը, երևակայում եմ:

Եվ նա, երևակայելով, թե ինչպես թաղապետը ձեռները կթափահարեր, նորից քրքջաց իր գիլ ու թավ ծիծաղով, որ ցնցում էր նրա ամբողջ մարմինը. այդպես ծիծաղում են միշտ լավ կերած և լավ խմած մարդիկ: — Այդպես, խնդրում եմ, գալ ճաշի, — ասավ նա:

VIII

Կոմսուհին տիրեց: Կոմսուհին նայում էր հյուրին հաճելիորեն ժպտալով, ասենք, չթաքցնելով և այն, թե ինքն այժմ բնավ չի վշտանա, եթե հյուրը վեր կենա ու գնա: Հյուրի աղջիկը զգեստներն ուղղում էր արդեն, հարցականորեն մոլը նայելով, երբ հանկարծ հարևան սենյակից մի քանի տղամարդկային ու կանացի ոտքերի վազք, ընկնող աթոսի դրոզը լսվեց, և վազեվազ սենյակ մտավ մի տասներեք տարեկան աղջիկ, կարճ կիսեյի շրջագգեստով ինչ-որ բան ծածկելով, ու կանգ առավ սենյակի մեջտեղը: Նկատելի էր, որ նա ուժեղ վազքից պատահաբար հասել էր այսքան հեռու: Նույն վայրկյանին դուռն մեջ երևացին մոտագույն օձիքով մի ուսանող, գվարդիական մի սպա, մի տասնուհինգ տարեկան աղջիկ և հաստիկ կարմրաթուշ մի տղա՝ մանկական բաճկոնակով:

¹ Կորեեր:

¹ Խոսքը մեր մեջ:

Կոմսը վեր թռավ և, օրորվելով, ձեռները լայն տարածեց վազող ազգկա շուրջը:

— Ահա և ինքը, — ծիծաղելով ասավ նա: — Անվանակոչյալը: Ma chère անվանակոչյալս:

— Ma chère, il y a un temps pour tout¹, — ասավ կոմսուհին խիստ ձևանալով: — Դու շարունակ երես ես տալիս դրան, Elie, — ավելացրեց նա մարդուն դառնալով:

— Bonjour, ma chère, je vous félicite², — ասավ հյուրը: — Quelle délicieuse enfant!³ — ավելացրեց նա, մորը դիմելով:

Սկաչյա, մեծ բերանով, տգեղ, բայց աշխույժ աղջիկը՝ իր մանկական բաց ուսերով, որոնք արագ վազքից շարժվում էին իրենց սեղմող կոքսածի մեջ, իր ետև ընկած սև խոպուպներով, բարակ մերկ ձեռներով և ժանեկավոր վարտիքի ու բաց կոշիկների մեջ եղած փոքրիկ ոտներով այն հաճելի հասակումն էր, երբ աղջիկն արդեն երեխա չի, իսկ երեխան դեռ աղջիկ չի: Հոր ձեռներից դուրս պրծնելով՝ նա վազեց դեպի մայրը և, ոչ մի ուշադրություն չդարձնելով նրա խիստ նկատողության, իր կասկարմիր դեմքը թաքցրեց մոր ժանեկավոր կրկնոցի մեջ ու ծիծաղեց: Նա ծիծաղում էր ինչ-որ բանի վրա, կցկտուր խոսում տիկնիկի մասին, որ հանել էր շրջազգեստի տակից:

— Տեսնո՞ւմ եք... Տիկնիկ... Միմի... Տեսնո՞ւմ եք:

Նվ Նատաշան այլևս չկարողացավ խոսել (նրան ամեն բան թվում էր ծիծաղելի): Նա ընկավ մոր վրա ու քրքջաց այնպես բարձր ու հնչուն ձայնով, որ բոլորը, անգամ փքված հյուրը, ծիծաղեցին ակամա:

— Դե գնա՛, գնա՛՝ այդ այլանդակ տիկնիկիդ հետ, — ասավ մայրը կեղծ բարկության մեջ աղջկանը հրելով: — Սա կրտսեր աղջիկս է, — դարձավ նա հյուրին:

Նատաշան մի վայրկյան դեմքը պոկեց մոր ժանեկավոր զգեստից, ներքևից ծիծաղի արցունքների միջից նայեց նրան ու նորից դեմքը թաքցրեց:

Հյուրը, հարկադրված լինելով հրճվելու ընտանեկան այս

տեսարանով, կարևոր համարեց որևէ կերպ մասնակցել:

— Ասացե՛ք, սիրելիս, — ասավ նա, դիմելով Նատաշային, — այդ Միմին քո ի՞նչն է: Աղջի՞կը, երեխ:

Նատաշային դուր չեկավ մանկական ձևով խոսելու այդ եղանակը, որով հյուրը դիմեց իրեն: Ոչինչ չպատասխանեց և լրջորեն հյուրին նայեց:

Մինչդեռ ամբողջ այդ երիտասարդ սերունդը՝ սպա Բորիսը — իշխանուհի Աննա Միխայլովնայի որդին, և ասանող Նիկոլայը — կոմսի ավագ որդին, Սոնյան — կոմսի տասնուհինգամյա ազգականուհին և կոմսի կրտսեր որդի Պետրուշան, — բոլորը տեղավորվեցին հյուրասրահում և, ըստ երևույթի նախատում էին վայելչության սահմաններում պահել իրենց աշխույժն ու ուրախությունը, որ արտահայտում էր տակավին նրանց յուրաքանչյուր դիմագիծը: Նկատելի էր, որ այնտեղ, հետին սենյակներում, որտեղից եկան նրանք այդպիսի թափով, ավելի ուրախ խոսակցություն էին ունեցել, քան այստեղի խոսակցությունը՝ քաղաքի բամբասանքների, եղանակի ու comtesse Apraksine-ի մասին: Երբեմն-երբեմն իրար էին նայում և ծիծաղները հազիվ զսպում:

Երկու երիտասարդները՝ ուսանողն ու սպան, մանկության ընկերներ էին, հասակակից և երկուսն էլ գեղեցիկ, բայց նրման չէին իրար: Բորիսը բարձրահասակ խարտյաշ պատանի էր՝ հանգիստ ու գեղեցիկ դեմքի նուրբ, ուղիղ գծերով. Նիկոլայը միջահասակ զանգրահեր երիտասարդ էր՝ դեմքի պայծառ արտահայտությամբ: Նրա վերին շուրթի վրա արդեն սև մազեր էին բուսել, և ամբողջ դեմքն արտահայտում էր ուժ և խանդավառություն: Նիկոլայը հյուրասրահ մտնելուն պես կարմրեց: Նկատելի էր, որ ասելու բան էր փնտրում, բայց չէր գտնում. Բորիսն, ընդհակառակը, անմիջապես գտավ և սկսեց հանգիստ, հանաքով պատմել, թե ինչպես այդ Միմի-տիկնիկին ձանաչում է դեռ ջահել աղջիկ եղած ժամանակ, երբ քիթը դեռ չէր փշացել, թե ինչպես հինգ տարվա մեջ տիկնիկը պառավել է և գանգը ճեղքվել է ամբողջապես: Այս ասելով՝ Նատաշային նայեց: Նատաշան երեսը շրջեց, նայեց կրտսեր եղբորը, որ աչքերը կուշ ածած՝ ցնցվում էր անձայն ծիծաղից, ու այլևս անկարող լինելով իրեն զսպել, ծուլ եղավ

¹ Միրելիս, ամեն բանի ժամանակը կա:

² Բարե, սիրելիս, շնորհավորում եմ ձեզ:

³ Ի՞նչ հիանալի երեխա է:

ու փախավ սենյակից այնպիսի արագութեամբ, որքան կարող էին ներել իր արագավազ ոտները: Բորիսը չժիծաղեց:

— Դուք, կարծեմ, նույնպես ուզում էիք մեկնել maman? Կառեթը պե՞տք է, — ասավ նա ժպտերես, մորը դիմելով:

— Այո, գնա, կարգադրիր պատրաստեն, — ասավ մայրը ժպտալով:

Բորիսը դուրս եկավ կամաց ու գնաց Նատաշայի ետեկից. հաստիկ տղան բարկացած վազեց նրա ետեկից, կարծես զայրանալով իր զբաղումների մեջ տեղի ունեցած անկարգութեան վրա:

IX

Նրիտասարգներից, չհաշվելով կոմսուհու մեծ աղջկան (որը շորս տարով մեծ էր քրոջից և իրեն պահում էր արդեն որպես մեծ) և հյուր-օրիորդին, — հյուրասրահում մնացին Նիկոլայն ու ազգականուհին — Սոնյան: Սոնյան բարալիկ, նուրբ, թխահեր աղջիկ էր՝ երկար թարթիչներով ստվերավորված քնքուշ հայացքով, գլխի շուրջը երկու անգամ պատուված հաստ սև հյուսով, և երեսի, մանավանդ մերկ նիհար, բայց հրապուրիչ մկանուտ թևերի ու պարանոցի դեղնավուն մորթով: Շարժումների նազելիութեամբ, մանր անդամների նրբութեամբ ու ճկունութեամբ և փոքր-ինչ խորամանկ ու զուսպ ձևերով նա հիշեցնում էր գեղեցիկ, բայց տակավին չկազմակերպված կատվիկ, որ հիանալի կատու դառնալու ապագա է խոստանում: Նա ըստ երևույթին պատշաճավոր էր համարում ժպտով մասնակցել ընդհանուր զրույցին, բայց՝ հակառակ կամքի, նրա աչքերը երկար, խիտ թարթիչների տակից բանակ մեկնող cousin¹-ին նայում էին կուսական այնպիսի բուռն հափշտակութեամբ, որ նրա ժպտը վայրկյան անգամ շեր կարող խաբել ոչ ոքի, և երևում էր, որ կատվիկը նստել է միայն նրա համար, որպեսզի էլ ավելի եռանդով ցատկի ու խաղա իր cousin-ի հետ, հենց որ իրենք էլ, Բորիսի ու Նատաշայի նման, դուրս կգան հյուրասրահից:

¹ Բուզեն:

— Այո, ma chère — ասավ ծեր կոմսը՝ դառնալով հյուրին, իր Նիկոլային ցույց տալով: — Նրա բարեկամ Բորիսն ահա սպա է դարձել, և Նիկոլայն իբրև ընկեր չի ուզում ետ մնալ նրանից. թողնում է թե՛ համալսարանը, թե՛ ինձ՝ ծերունուս. գնում է զինվորական ծառայության, ma chère: Իսկ նրա համար արխիվում արդեն պաշտոնը պատրաստ էր, և այլն: Ահա ինչ բան է բարեկամությունը, — ասավ կոմսը հարցականորեն:

— Բայց չէ որ պատերազմն, ասում են, հայտարարված է, — ասավ հյուրը:

— Վաղուց են ասում, — ասավ կոմսը: — Դարձյալ կասեն, կասեն ու այդպես էլ կթողնեն: Ma chère, այ բարեկամությունը, — կրկնեց նա: — Նա մտնում է հուսարական գունդը: Հյուրը շիմանալով ինչ ասել, գլուխն օրորեց:

— Բոլորովին էլ բարեկամության համար չէ, — պատասխանեց Նիկոլայը կարմրելով և կարծես ամոթալի մի ամբաստանությունից պաշտպանվելով: — Բոլորովին էլ բարեկամություն չի, այլ պարզապես զինվորական ծառայության նկոչում եմ զգում:

Նա նայեց քուզենին և հյուր-օրիորդին. երկուսն էլ նրան էին նայում հավանության ժպտով:

— Այսօր մեզ մոտ ճաշելու է Շուբերտը, Պավլոգրադսն և հուսարական գնդի գնդապետը: Նա արձակուրդով եկել է Սոսկվա և Նիկոլային տանում է հետը: Ի՞նչ արած, — ասավ կոմսը, ուսերը թոթվելով և կատակի տալով մի բան, որը, ըստ երևույթին, նրան շատ վիշտ էր պատճառել:

— Ես արդեն ձեզ ասել եմ, հայրիկ, — ասավ Նիկոլայը, — որ եթե չեք ուզում ինձ թողնել, կմնամ: Բայց գիտեմ, որ ոչ մի բանի պիտանի չեմ, բացի զինվորական ծառայությունից. և ես ոչ դիվանագետ եմ, ոչ էլ շինովնիկ. զգացածս չեմ կարող թաքցնել, — ասում էր նա ու շարունակ ջահել մարդու կուսությունում նայում Սոնյային ու հյուր-օրիորդին:

Կատվիկը աչքերը նրան սևեռած, թվում էր ամեն վայրկյան պատրաստ է խաղալ և ցույց տալ իր կատվային ամբողջ բնավորությունը:

— Դե՛, դե՛, լավ, — ասավ ծերունի կոմսը, — միշտ տաքանում է: Բոլորին Բոնապարտն է խենթացրել. բոլորը մը-

տածում են, թե այդ ինչպես նա տեղակալութունից (պորու-
շիկ) կայսր դարձավ: էհ, աստված տա, — ավելացրեց նա, շը-
նկատելով հյուրի հեղնական ժպիտը: Մեծերը խոսեցին Բոնա-
պարտի մասին: Ժյուլին՝ Կարագինայի դուստրը, դարձավ
երիտասարդ Թոստովին:

— Ահսոս, որ հինգշաբթի օրը չէիք եկել Արխարովների
մոտ: Առանց ձեզ ձանձրանում էի, — ասավ նա քնքշորեն ժպ-
տալով:

Շոյված երիտասարդը՝ շահելության կոկետ ժպիտով ավելի
մոտ նստեց նրան և առանձին գրույց սկսեց ժպտերես ժյուլիի
հետ, շնկատելով քնավ, որ իր ակամա ժպիտը խանդի դանա-
կով կտրում էր կարմրատակած և առերես ժպտացող Սոնյայի
սիրտը: — Խոսակցության կեսին Նիկոլայը նրան նայեց: Սոն-
յան բուռն զայրույթով մի հայացք գցեց նրա վրա և արցունքն
աչքերում և շինծու ժպիտը շուրթերին հազիվ պահելով, վեր
կացավ ու գուրս ելավ սենյակից: Նիկոլայի ամբողջ աշխույժը
կորավ: Նա սպասեց խոսակցության առաջին ընդմիջումին և
հուզված դեմքով գուրս եկավ սենյակից՝ Սոնյային փնտրելու:

— Ինչպես բոլոր այս երիտասարդների գաղտնիքները
սպիտակ թելերով են կարված, — ասավ Աննա Միխայլովնան,
ցույց տալով գուրս ելնող Նիկոլային: — Cousinage dange-
reux voisinage¹, — ավելացրեց նա:

— Այո, — ասավ կոմսուհին նրանից հետո, երբ արևի
ճառագայթը, որ երիտասարդ սերնդի հետ միաժամանակ
հյուրասրահ էր մտել, շքացավ, և կարծես պատասխանելով
մի հարցի, որ ոչ ոք իրեն չէր տվել, բայց որը սակայն միշտ
զբաղեցնում էր իրեն: — Որքան տանջանք, որքան անհան-
գըստություն ենք կրել, որպեսզի այժմ ուրախանանք դրանցով:
Իսկ հիմա էլ, ճիշտն ասած, ավելի երկյուղ ենք զգում, քան
ուրախություն: Մի՞շտ վախենում ես, շարունակ վախենում
ես: Հենց այն տարիքումն են, երբ վտանգներն այնքան շատ
են թե՛ աղջիկների և թե՛ տղաների համար:

— Ամեն ինչ դաստիարակութունից է կախված, — ասավ
հյուրը:

— Այո, դուք իրավացի եք, — շարունակեց կոմսուհին: —
Ես մինչև այժմ, փառք ասածո, եղել եմ զավակներիս բարե-
կամը և վայելում եմ նրանց լիակատար վստահությունը, —
ասավ կոմսուհին, կրկնելով շատ ծնողների այն մոլորությու-
նը, որ կարծում են, թե զավակները զաղտնիք չունեն իրեն-
ցից: — Գիտեմ, որ ես միշտ աղջիկներիս առաջին confidente¹
կլինեմ, և որ Նիկոլենկան, իր կրակոտ բնավորությամբ, եթե
շարություններ էլ անի (տղան առանց դրան չի լինի), այնպես
չի անի, ինչպես Պետերբուրգի այդ պարոնները:

— Այո, հիանալի, հիանալի երեխաներ են, — հաստատեց
կոմսը, իրեն համար խճճված հարցերը միշտ լուծելով նրանով,
որ ամեն ինչ գտնում էր հիանալի: — Ահավասիկ, ուզեց հուսար
դառնալ: էլ ինչ եք ուզում, ma chère!

— Ի՞նչ սքանչելի էակ է ձեր կրտսեր աղջիկը, — ասավ
հյուրը: — Կրակի կտոր է:

— Այո կրակի կտոր, — ասավ կոմսը: — Ինձ է քաշել: Եվ
ի՞նչ ձայն ունի. թեև աղջիկս է, բայց ճիշտը կասեմ, երգչուհի է
դառնալու: Մի նոր Սալոմոնի: Իտալացի վարձեցիներ, որ
սովորեցնի:

— Արդյոք շո՞ւտ չի: Ասում են՝ այդ հասակում սովորելը
ձայնի համար վտանգավոր է:

— Օ՛, ոչ, ինչու է շուտ, — ասավ կոմսը: — Հապա ինչ-
պե՞ս էին մեր մայրերը տասերկու-տասերեք տարեկան հա-
սակում ամուսնանում:

— Նա հենց հիմա էլ սիրահարված է Բորիսի վրա: Ինչպե՞ս
եք հավանում, — ասավ կոմսուհին, հանդարտ ժպտալով, Բո-
րիսի մորը նայելով և, ըստ երևույթին, իրեն շարունակ զբա-
ղեցնող մտքին պատասխանելով, ավելացրեց: — Այ, տես-
նում եք, եթե ես նատաշային խիստ պահեի, արգելեի... աստ-
ված գիտի, ի՞նչեր կարող էին անել նրանք ծածուկ (կոմսու-
հին մտածում էր, որ նրանք կհամբուրվեին), բայց հիմա ես
գիտեմ նատաշայի յուրաքանչյուր խոսքը: Նա ինքը երկկոյան
կվադրի և ամեն ինչ կպատմի ինձ: Ես, գուցե, երես եմ տալիս
նրան. բայց, ճիշտն ասած, դա, կարծես, ավելի լավ է: Մեծի՞ն
ես խիստ եմ պահել:

¹ Բուզիկութուն — վտանգավոր հարեանություն:

¹ Խորհրդակցից-մտերիմը:

— Այո, ինձ բոլորովին այլ կերպ են դաստիարակել, — ասավ մեծը, գեղեցիկ կոմսուհի Վերան, ժպտալով:

Բայց ժպտը չգեղեցկարցրեց Վերայի դեմքը, ինչպես այդ սովորաբար լինում է. ընդհակառակը, նրա դեմքը անբնական տեսք ընդունեց և դրանից տահաճ դարձավ: Մեծը՝ Վերան՝ լավն էր, խելացի, սքանչելի սովորում էր, լավ դաստիարակված էր, ձայնը դուրեկան էր. այն, ինչ ասավ, ճիշտ էր և տեղին. բայց, տարօրինակ բան, բոլորը՝ թե՛ հյուրը, թե՛ կոմսուհին, նրան նայեցին ու կարծես զարմացան, թե ինչու ասավ նա այդ խոսքերը, ու անհարմարութուն զգացին:

— Անդրանիկ երեխաներին կրթելիս միշտ խելքներին զոռ են տալիս, ուզում են նրանց ինչ-որ անսովոր բան դարձնել, — ասավ հյուրը:

— Մեղքս ի՞նչ թաքցնեմ, ma chère. Կոմսուհին այդպես է եղել Վերայի հետ, — ասավ կոմսուհի: — Եվ ի՞նչ. այնուամենայնիվ հիանալի աղջիկ դարձավ, — ավելացրեց նա, խրախուսանքով աչքով անելով Վերային:

Հյուրերը վեր կացան ու մեկնեցին, խոստանալով ճաշին գալ:

— Սա ի՞նչ բան է: Նստեցի՞ն ու նստեցի՞ն, — ասավ կոմսուհին՝ հյուրերին ճանապարհելուց հետո:

X

Երբ Նատաշան դուրս եկավ հյուրասրահից, նա վազեց մինչև ծաղկասենյակը միայն: Այդ սենյակում նա կանգ առավ, ականջ դնելով հյուրասրահի զրույցին և սպասելով Բորիսի դուրս գալուն: Անհամբերութուն էր զգում արդեն ու, ոտով հատակը դոփելով, քիչ էր մնում արտասվեր, որ նա անմիջապես շնտևեց իրեն, երբ լավեց երիտասարդի ոչ հանդարտ, ոչ էլ արագ, բայց վայելուչ քայլերի ձայնը: Նատաշան իսկույն նետվեց ծաղկի թաղարների արանքն ու թաքնվեց:

Բորիսը կանգնեց սենյակի մեջտեղը, շուրջը նայեց, թափ տվեց մունդիրի վրա եղած փոշին և, հայելուն մոտենալով, դիտեց իր սիրուն դեմքը: Նատաշան, շունչը պահած, նայում էր իր թաքստոցից, սպասելով, թե Բորիսն ի՞նչ է անելու: Նա մի առ ժամանակ կանգնեց հայելու առաջ, ժպտաց ու զը-

նաց դեպի ելքի դուռը: Նատաշան ուզեց ձայն տալ, բայց փոշմանեց. «Թող փնտրի», ասավ ինքն իրեն: Հենց որ Բորիսը դուրս եկավ, մյուս դռնից ներս մտավ կաս-կարմիր կտրած Սոնյան՝ արտասվելով ու զայրացած ինչ-որ բան շշնջաց: Նատաշան քիչ մնաց վազի նրա մոտ, բայց զսպեց իրեն, ու մնաց իր թաքստոցում, ինչպես հեքիաթի աներոււթացնող զխարկի տակ, դիտելով, թե ինչ է կատարվում շուրջը: Նա մի նոր, առանձին հաճույք էր զգում: Սոնյան շշնջում էր ինչ-որ ու նայում դեպի հյուրասրահի դուռը: Դուռը բացվեց և ներս մտավ Նիկոլայը:

— Սո՛նյա: Ի՞նչ է պատահել քեզ: Այդպես կանե՞ն, — ասավ Նիկոլայը, նրա մոտ վազելով:

— Ոչինչ, ոչինչ, թողե՛ք ինձ: — Սոնյան հեկեկաց:

— Ոչ, ես գիտեմ պատճառը:

— Եթե գիտեք՝ ավելի լավ. գնացեք նրա մոտ:

— Սո՛նյա: Մի խոսք միայն: Ինչո՞ւ ես տանջում ինձ ու քեզ ինչ-որ երևակայած բանի համար, — ասավ Նիկոլայը, նրա ձեռքը բռնելով:

Սոնյան ձեռը շխից նրանից և լացը դադարեցրեց:

Նատաշան, անշարժ ու շունչը պահած, վայրուն աչքերով նայում էր իր թաքստոցից: «Հիմի ի՞նչ է լինելու», մտածում էր նա:

— Սոնյա՛: Ամբողջ աշխարհը ինձ համար ոչինչ է: Դու մեռնակ ամեն ինչ ես ինձ համար, — ասում էր Նիկոլայը: — Ես կապացուցեմ այդ:

— Չեմ սիրում, երբ այդպես ես խոսում:

— Դե՛, էլ չեմ խոսի, դե՛, ներիր, Սոնյա: — Նիկոլայը նրան քաշեց դեպի իրեն ու համբուրեց:

«Ա՛հ, ի՞նչ լավ է», մտածեց Նատաշան, և երբ Սոնյան ու Նիկոլայը դուրս եկան սենյակից, նա գնաց նրանց ետևից ու Բորիսին կանչեց իր մոտ:

— Բորիս, եկեք այստեղ, — ասավ նա խորհրդավոր, խորամանկ տեսքով: — Ես քեզ մի բան պիտի ասեմ: Այստեղ, այստեղ արի, — ասավ նա, Բորիսին տանելով ծաղկի թաղարների արանքը, ուր ինքը թաքնվել էր: Բորիսը, ժպտուն երեսին, հետևում էր նրան:

— Այդ ի՞նչ բան է, — հարցրեց նա:

Նատաշան շփոթվեց, շուրջը նայեց և, տեսնելով ծաղկա-
մանի վրա ընկած տիկնիկը, վերցրեց այն:

— Համբուրի տիկնիկին, — ասավ նա:

Բորիսն ուշադիր, սիրալիր նայեց նրա աշխուժացած դեմ-
քին ու ոչինչ չպատասխանեց:

— Ձե՞ք ուզում: Դե, եկեք այստեղ, — ասավ նա, ավելի
խորանալով ծաղիկների մեջ ու տիկնիկը նետեց: — Մո՛տ
եկեք, ավելի մոտ, — շնչաց նա, ու ձեռներով բռնեց սպայի
թևածալքը: Նատաշայի շիկնած դեմքն արտահայտում էր
հանդիսավորություն ու երկյուղ:

— Իսկ ինձ կուզե՞ք համբուրել, — շնչաց նա հազիվ լսելի
ձայնով, հոնքերի տակից նրան նայելով, ժպտալով և հուզու-
մից, արցունքները հազիվ զսպելով:

Բորիսը կարմրեց:

— Ի՞նչ ծիծաղելի եք, — ասավ նա, դեպի Նատաշան թեք-
վելով, էլ ավելի կարմրելով, բայց ոչինչ չձեռնարկելով ու
սուսանելով:

Նատաշան հանկարծ թռավ-կանգնեց փայտե ծաղկամանի
վրա, այնպես որ բարձրացավ Բորիսից, երկու ձեռով գրկեց
նրան, այնպես որ մերկ բազուկները միացան նրա սպարանոցից
վերև ու, գլխի շարժումով մազերը ետ գցելով, համբուրեց
ուզողակի նրա շուրթերը:

Նա ծաղկամանների արանքով անցավ ծաղիկների մյուս
կողմը և, գլուխն իջեցնելով, կանգ առավ:

— Նատաշա, — ասավ Բորիսը, — դուք գիտեք, որ ձեզ
սիրում եմ, բայց...

— Դուք սիրահարվա՞ծ եք ինձ վրա, — ընդհատեց Նա-
տաշան:

— Այո, սիրահարված եմ, բայց, խնդրեմ, էլ շանեք այն,
ինչ այժմ... Դեռ մի շորս տարի էլ... Այն ժամանակ ես խնդրե-
լու եմ քո ձեռը:

Նատաշան մտածեց:

— Տասներեք, տասչորս, տասնուհինգ, տասնվեց... —
ասավ նա բարակ մատների վրա հաշվելով: — Լավ: Ուրեմն
վերջացա՞ծ է:

Եվ ուրախության ու հանգստության ժպիտը լուսավորեց
նրա աշխուժացած դեմքը:

— Վերջացա՞ծ է, — ասավ Բորիսը:

— Ընդմիջո՞ւտ, — ասավ Նատաշան: — Մինչև մա՞հ:

Եվ, Բորիսին թևանցուկ անելով, երջանիկ դեմքով ու հան-
դարտ քայլերով նրա հետ միասին գնաց բազմոցարան:

XI

Կոմսուհին այնպես էր հոգնել այցելություններից, որ կար-
գադրել էր այլևս ոչ ոքի շքնդուներ, և բարապանին հրամայել
էր, որ այսուհետև բոլոր նոր եկողներին ճաշի հրավիրի: Կոմ-
սուհին ցանկանում էր մեն-մենակ խոսել իր մանկության ըն-
կերուհի՝ իշխանուհի Աննա Միխայլովնայի հետ, որովհետև
Պետերբուրգից գալուց հետո, դեռ կարգին չէր տեսնվել հետը:
Աննա Միխայլովնան, իր լացակումած ու դուրեկան դեմքով,
ավելի մոտ քաշվեց կոմսուհու բազկաթոռին:

— Քեզ հետ բոլորովին անկեղծ պիտի լինեմ, — ասավ
Աննա Միխայլովնան: — Մեր՝ հին բարեկամներիս թիվը պա-
կասել է արդեն: Դրանից է, որ այնպես գնահատում եմ քո
բարեկամությունը:

Աննա Միխայլովնան նայեց Վերային ու լռեց: Կոմսուհին
սեղմեց իր բարեկամուհու ձեռը:

— Վե՛րա, — ասավ կոմսուհին, դիմելով մեծ աղջկան,
որին, ըստ երևույթին, չէր սիրում: — Ի՞նչպես է որ դու ոչ մի
բան չես հասկանում: Մի՞թե չես զգում, որ այստեղ ավելորդ
ես: Գնա քույրերիդ մոտ, կամ...

Սիրուն Վերան արհամարհանքով ժպտաց, ըստ երևույթին
ոչ մի վիրավորանք չզգալով:

— Եթե շուտ ասեիր, մայրիկ, ես իսկույն կհեռանայի, —
ասավ նա, ու գնաց իր սենյակը:

Բայց, բազմոցարանի մոտով անցնելիս, նկատեց, որ այն-
տեղ՝ երկու պատուհանների մոտ, սիմետրիկ կերպով նստած
են երկու զուգեր: Նա կանգ առավ և արհամարհանքով ժպտաց:
Սոնյան նստել էր Նիկոլայի կողքին, որը նրա համար արտա-
դրում էր իր՝ առաջին անգամ հեղինակած ոտանավորը: Բորիսն
ու Նատաշան նստած էին մյուս լուսամուտի առաջ ու լռեցին,

երբ Վերան ներս մտաւ: Սոնյան ու Նատաշան մեղավոր ու երջանիկ դեմքերով նայեցին Վերային:

Այդ սիրահարված աղջիկներին նայելը զվարճալի ու հուզիչ էր, բայց նրանց տեսքն, ըստ երևույթին, ախորժելի ըզդացմունք չհարուցեց Վերայի սրտում:

— Քանի՜ անգամ ձեզ խնդրել եմ, — ասավ նա, — իմ իրերին ձեռք չտաք, դուք ձեր սենյակն ունեք:

Եվ նա թանաքամանն առավ Նիկոլայի ձեռից:

— Իսկույն, իսկույն, — ասավ Նիկոլայը գրիչը թաթախելով:

— Դուք ոչ մի բան իր ժամանակին չեք անում, — ասավ Վերան: — Այնպես վազելով հյուրասենյակ մտաք, որ ուրիշներն ամաչեցին ձեր փոխարեն:

Չնայելով որ, կամ հենց այն պատճառով, որ նրա նկատողութունը միանգամայն իրավացի էր, ոչ ոք նրան չպատասխանեց, և չորսը միասին իրար նայեցին: Վերան դեռ դանդաղում էր սենյակում, թանաքամանը ձեռին:

— Եվ ի՞նչ գաղտնիքներ կարող են լինել ձեր տարիքում Նատաշայի ու Բորիսի և ձեր միջև, — միայն հիմարութունն է՞ր:

— Է, քո ի՞նչ բանն է, Վերա, — կամացուկ պաշտպանողական ձայնով խոսեց Նատաշան:

Նա այսօր, ըստ երևույթին, սովորականից ավելի սիրալիր ու բարի էր դեպի ամենքը:

— Շատ մեծ հիմարութուն, — ասավ Վերան, — ամաչում եմ ձեր փոխարեն: Ի՞նչ գաղտնիքներ են դրանք...

— Ամեն մարդ իր գաղտնիքն ունի: Մենք քեզ ու Բերգին չենք դիպչում, — ասավ Նատաշան տաքանալով:

— Ես կարծում եմ՝ չեք դիպչում, — ասավ Վերան, — որովհետև վարմունքիս մեջ երբեք ոչ մի վատ բան չի կարող լինել: Այ, ես էլ, մայրիկին կասեմ, թե դու ինչպես ես վարվում Բորիսի հետ:

— Նատալիա Իլինիչնան շատ լավ է վարվում ինձ հետ, — ասավ Բորիսը: — Գանգատվելու առիթ չունեմ, — ավելացրեց նա:

— Թողեք, Բորիս, դուք այնպիսի դիվանագետն եք (դիվանագետ բառը շատ գործածական էր երեխաների մեջ այն առանձին նշանակությամբ, որ նրանք էին տալիս այդ բառին)։

նույնիսկ ձանձրալի է, — ասավ Նատաշան վիրավորված, դուզացող ձայնով: — Սա ի՞նչ է կպել ինձանից: Դու այդ երբեք չես հասկանա, — ասավ նա, Վերային դիմելով, — որովհետև դու երբեք ոչ մեկին չես սիրել: Դու սիրտ չունես, դու միայն madame de Genlis¹ ես (այս կոչումը, որ համարվում էր վիրավորական, Նիկոլայն էր տվել Վերային), և քո սրիած զվարճութունն այն է, որ ուրիշներին անախորժութուն պատճառես: Դու ինչքան ուզում ես կոկետութուն արա Բերգի հետ, — ավելացրեց նա արագ-արագ:

— Բայց և այնպես՝ ես հյուրերի առաջ չեմ վազվզի երիտասարդի ես.ևից...

— Է, ուզածդ արիր, — խոսակցութեանը միջամտեց Նիկոլայը, — անախորժութուններ ասիր բոլորին, տրամադրութունները փշաջրիր: Գնանք մանկանոց:

Ու չորսն էլ, ինչպես տեղից թոցրած թռչունների երամ, վեր կաշան ու դուրս եկան սենյակից:

— Անախորժութուններն ի՞նձ ասին, իսկ ես ոչ ոքի, — ասավ Վերան:

— Madame de Genlis! Madame de Genlis! կանչեցին ծիծաղող ձայները դռան ետևից:

Սիրուն Վերան, որ բոլորի վրա այդպես գրգռիչ, անախորժ ազդեցութուն էր անում, ժպտաց և, ըստ երևույթին, իրեն ասված խոսքերից չզգացվելով՝ մոտեցավ հայելուն և ուղղեց շարձն ու մազերը: Նայելով իր գեղեցիկ դեմքին՝ նա կարծես դարձավ ավելի սառն ու հանգիստ:

Հյուրասրահում խոսակցութունը շարունակվում էր:

— Ah! chère, — ասում էր կոմսուհին, — մեր կյանքում էլ tout n'est pas rose. Մի՞թե չեմ տեսնում, որ du train, que nous allons², մեր կարողութունը մեզ երկար չի բավականացնելու: Ու բոլորի պատճառը այդ ակումբն է և կոմսի բարեսրտութունը: Գլուղում ապրելիս էլ՝ մի՞թե հանգստանում ենք: Ներկայացումներ, որսորդութուն և, աստված գիտի, էլ ինչէ

¹ Սադամ դը-ժանլիս:

² Ամեն ինչ վարդագույն չի: — Սեր ապրելակերպով:

Իմ մասին խոտեղն էլ ավելորդ է: Է, ի՞նչպես դու այդ բոլորը գլուխ բերիր: Ես հաճախ զարմանում եմ վրադ, Annette, թե այդ ինչպես դու, քո այդ տարիքում, մեն-մենակ՝ սայլակում նստած, վազում ես մեկ Մոսկվա, մեկ Պետերբուրգ, դիմում բոլոր միևիստրներին, բոլոր մեծամեծներին. բոլորի հետ կարողանում ես վարվել, զարմանում եմ: Է, այդ ի՞նչպես հաջողվեց: Այ ես այդ բանը չեմ կարող անել:

— Ախ, հոգիս, — պատասխանեց իշխանուհի Աննա Միխայլովնան: — Աստված շանի, որ տեսնես, թե որքան դժվար է այրի մնալ՝ առանց նեցուկի ու մի որդու հետ, որին սիրում ես պաշտելու շափ: Բայց ամեն բանի ընտելանում ես, — ավելացրեց նա փոքր-ինչ հպարտութամբ: Իմ դատն ինձ սովորեցրեց: Եթե պետք եմ ունենում այդ տուգներից որևէ մեկին տեսնելու, գրում եմ. «princesse une telle՝ ցանկանում է տեսնել այս ինչին», և կառք նստած գնում եմ երկու, երեք, թեկուզ շորս անգամ, այնքան, մինչև որ ուզածս ձեռք եմ բերում: Ինձ համար միևնույն է, ինչ կուղեն թող մտածեն իմ մասին:

— Է, ինչպե՞ս արիր, ո՞ւմ խնդրեցիր Բորենկայի համար, — հարցրեց կոմսուհին, — Այ քոնն արդեն զվարդիայի սպա է, իսկ Նիկոլուշկան մնում է որպես յունկեր: Մեկը չկա, որ նրա մասին հոգա: Ի՞նչ ո՞ւմ խնդրեցիր:

— Իշխան Վասիլիին: Նա շատ սիրալիք գտնվեց: Անմիջապես ամեն բանի համաձայնեց, դիմեց թագավորին, — ասավ իշխանուհի Աննա Միխայլովնան հիացած, միանգամայն մոտանալով իր նպատակին հասնելու համար կրած բոլոր ստորացումները:

— Ի՞նչպես է, ժերացե՞լ է իշխան Վասիլին, — հարցրեց կոմսուհին, — նրան չեմ տեսել Թումայանցների տանն ունեցած մեր ներկայացումներից հետո: Եվ կարծում եմ, ինձ մոռացած կլինի, Il me faisait la cour², — հիշեց կոմսուհին ժրպատալով:

— Նույնն է, — պատասխանեց Աննա Միխայլովնան, — փրախի, պատրաստակամ: Les grandeurs ne lui ont pas

tourné la tête du tout¹. «Ցավում եմ, որ շափազանց քիչ բան կարող եմ անել ձեզ համար, սիրելի իշխանուհի, — ասում է ինձ, — հրամայեցե՛ք»: Ոչ, նա հիանալի մարդ է և հարազատ: Բայց դու, Nathalia, գիտես որքան եմ սիրում որդուս: Չգիտեմ, ինչ ասես չէի անի նրա երջանկության համար: Իսկ իմ հանգամանքներն այնքան վատ են, — շարունակեց Աննա Միխայլովնան տխրութամբ ու ձայնն իջեցնելով, — այնքան վատ են, որ հիմա ես սարսափելի դրության մեջ եմ: Իմ դժբախտ դատը աւելցածս ամբողջովին կլանում է ու առաջ չի գնում: Ես, կարո՞ղ ես երևակայել, à la lettre² տասը կոպեկ անգամ շունեմ, և չգիտեմ ինչով պիտի հագցնեմ Բորիսիս: — Նա թաղիկակալ հանեց ու լաց եղավ: — Ինձ հարկավոր է հինգ-հարյուր ռուբլի, իսկ ես միայն մի քսանուհինգ ռուբլիանոց թղթադրամ ունեմ: Այսպիսի դրության մեջ եմ... Միակ հույսս հիմա կոմս Կիրիլ Վլադիմիրովիչ Բեզուխովն է: Եթե նա շօղնի իր սանիկին, — չէ որ նա Բորիայիս կնքահայրն է, — և նրան ապրուստի որևէ գումար չնշանակի, այն ժամանակ իմ բոլոր աշխատանքը ջուրը կընկնի, էլ ինչով կարող եմ զգեստավորել նրան:

Կոմսուհին արտասովեց ու լուռ խորհում էր ինչ-որ:

— Հաճախ մտածում եմ, գուցե և մեղք եմ գործում, — ասավ իշխանուհին, — բայց հաճախ մտածում եմ, թե ահա կոմս Կիրիլ Վլադիմիրովիչ Բեզուխովն ապրում է մենակ... այդ ահագին կարողությունը... և ի՞նչու համար է ապրում Կյանքը նրա համար բեռ է, իսկ Բորիան նոր միայն սկսում է ապրել:

— Նա, հավանորեն մի որևէ բան կթողնի Բորիսին, — ասավ կոմսուհին:

— Աստված գիտի, chère amie³, Այդ հարուստներն ու մեծամեծներն այնպիսի եսապաշտ մարդիկ են: Բայց ես այնուամենայնիվ հենց հիմա Բորիսիս հետ կերթամ և ամեն բան կասեմ պարզապես: Թող իմ մասին ի՞նչ ուզում են մտածեն. ճիշտն ասած, ինձ համար միևնույն է, քանի որ որդուս բախտը

¹ Իշխանուհի այս ինչը:

² Նա գտնում էր իմ շուրջը:

¹ Բարձր դիրքը նրան չի հարբեցրել բնավ:

² Բառացի:

³ Սիրելի բարեկամուհի:

դրանից է կախված: — Իշխանուհին վեր կացավ: — Հիմա ժամը
երկուսն է, դուք ճաշում եք շորսին: Կհասնեմ:

Եվ պետերբուրգցի՝ ժամանակից օգտվել իմացող գործ-
նական տիկնոջ ձեռքով Աննա Միխայլովնան կանչել տվավ
որդուն և նրա հետ միասին դուրս եկավ նախասենյակ:

— Մնաս բարով, հոգիս, — ասավ նա կոմսուհուն, որն
ուղեկցում էր նրան մինչև դուռը, — հաջողութուն ցանկա-
ցիր ինձ, — ավելացրեց նա շշուկով, որդուց ծածուկ:

— Դուք կոմս Կիրիլ Վլադիմիրովիչի մոտ եք գնում, ma
chère, — ասավ կոմսը սեղանատնից նույնպես դուրս գալով: —
Եթե նա լավ է, Պիեռին կանչեցեք մեզ մոտ ճաշի: Չէ որ նա մեզ
մոտ եղել է, երեխաների հետ պարել: Անպայման կանչեցեք,
ma chère: է, տեսնեմք, Տարասն ինչպես աչքի կընկնի այսօր:
Ասում է՝ կոմս Օռլովի մոտ այնպիսի ճաշ չի եղել, ինչպիսին
մերն է լինելու:

XII

— Mon cher Boris¹, — ասավ իշխանուհի Աննա Միխայ-
լովնան երբ կոմսուհի Ռոստովայի կառեթը (որով գնում էին)
ծղնոտով ծածկված փողոցն անցնելով՝ մտավ կոմս Կիրիլ
Վլադիմիրովիչ Բեգուխովի ընդարձակ բակը: — Mon cher Bo-
ris, — ասավ մայրը, ձեռք հին վերարկուի տակից հանելով ու
որդու ձեռի վրա դնելով, — եղիր սիրալիր, ուշադիր: Կոմս
Կիրիլ Վլադիմիրովիչն այսուամենայնիվ կնքահայրդ է, և
նրանից է կախված ապագա բախտդ: Հիշիր այդ, mon cher,
եղիր բարեհամբույր, ինչպես դու կարողանում ես...

— Եթե իմանալի, որ դրանից մի բան կստացվի, բացի սոտ-
րացումից... — պատասխանեց որդին սառը: — Բայց ես խոս-
տացել եմ ձեզ և կանեմ այդ ձե՛զ համար:

Չնայած շքամուտքի մոտ կանգնած էր ո՛ւմ-որ կառքը,
բարևպանը, նայելով մորն ու որդուն (որոնք, իրենց մասին
հայտնել չկարգադրելով, ուղղակի, նիշերում դրված երկշարք
արձանների արանքով, մտան ապակեշեն նախասենյակը) և
նշանակալից դիտելով տիկնոջ հին վերարկուն, հարցրեց, թե

ո՛ւմ են ուզում տեսնել — իշխանադուստրեն՝ րին թե կոմսին, —
և իմանալով որ կոմսին, ասավ, որ նորին պայծառափայլու-
թյունը այսօր ավելի վատ է և ոչ ոքի չի ընդունում:

— Մենք կարող ենք վերադառնալ, — ասավ որդին Ֆրան-
սերեն:

— Mon ami¹, — ասավ մայրը աղերսաձայն, կրկին ձեռք
որդու ձեռին դիպցնելով, կարծես այդ շփումը կարող էր հան-
գրստացնել նրան կամ հուզել:

Բորիսը լռեց և, առանց վերարկուն հանելու, հարցականո-
րեն մորը նայեց:

— Աղավնյակս, — մեղմ ձայնով ասավ Աննա Միխայլով-
նան, դիմելով բարապանին, — գիտեմ, որ կոմս Կիրիլ Վլա-
դիմիրովիչը լուրջ հիվանդ է... դրա համար էլ եկել եմ...
ես ազգականն եմ... Ես նրան չեմ անհանգստացնի, աղավ-
նյակս... Ես ուզում եմ տեսնել միայն իշխան Վասիլի Սերգեևի-
չին. չէ՞ որ նա այստեղ է իջևանել: Հայտնիր, խնդրեմ:

Բարապանը քաշեց վերևի զանգակի թելը և շուտ եկավ:

— Իշխանուհի Դրուբեցկայան ուզում է տեսնել իշխան
Վասիլի Սերգեևիչին, — ձայն տվեց նա վերևից վազող և աս-
տիճաններից նայող երկարաճիտ գուլպաներ, կոշիկներ և
ֆռակ հագած սպասավորին:

Իշխանուհին հարդարեց իր գունամուր մետաքսյա զգեստի
ծալքերը, նայեց պատի մեջ դրված վենետիկյան մեծ հայելուն
և իր մաշված կոշիկներով առույգորեն, աստիճանի գորգի վը-
րայով, գնաց վեր:

— Mon cher, vous m'avez promis², — կրկին դարձավ
նա որդուն, ձեռի հպումով զգաստացնելով նրան:

Որդին, աչքերը խոնարհելով, հանգիստ հետևեց մորը:

Նրանք մտան դահլիճը, որի դռներից մեկը տանում էր իշ-
խան Վասիլիին հատկացված սենյակը:

Այն ժամանակ, երբ մայր ու որդի դահլիճի մեջտեղը հա-
սան և ուզեցին իրենց մտնելուն պես տեղից վեր թռչող սպա-
սավորից իմանալ ճանապարհը, դռներից մեկի բրոնզյա բռու-
նակը սլաղովեց, և իշխան Վասիլին՝ թավշյա կիսամուշ-

¹ Իմ թանկագին Բորիս:

¹ Բարեկամս:

² Սիրելիս, դուք ինձ խոստացել եք:

տակով, կրծքին մի աստղաշքանշան, տնավարի, դուրս եկավ, մի գեղեցիկ սևահեր սղամարդու ուղեկցելով: Այդ մարդը Պետերբուրգի նշանավոր բժիշկ Lorrain-ն էր:

— C'est donc positif? — հարցրեց իշխանը:

— Mon prince, «errare humanum est», mais², — պատասխանեց բժիշկը, լատիներեն խոսքերը ֆրանսերեն շեշտով արտասանելով:

— C'est bien, c'est bien...³

Նկատելով Աննա Միխայլովնային իր որդու հետ, իշխան Վասիլին գլխի խոնարհումով ճանապարհ դրավ բժիշկին և անխոս, բայց հարցական տեսքով, մոտեցավ նրանց: Բորիսը նկատեց, թե ինչպես հանկարծ խորին վիշտ արտահայտվեց մոր աչքերում, և թեթևակի ժպտաց:

— Այո, ի՞նչ տխուր հանգամանքներում ենք հանդիպում, իշխան... է, ի՞նչպես է մեր թանկագին հիվանդը, — ասավ նա, կարծես շեղանքով իր վրա սևեռած սառը, վիրավորական հայացքը:

Իշխան Վասիլին հարցական, անզամ տարակուսանքով, նայեց նրան, ապա Բորիսին: Բորիսը գլուխը խոնարհեց հարգալիր: Իշխան Վասիլին նրա բարեկին շատասխանելով, դարձավ Աննա Միխայլովնային և նրա հարցումին պատասխանեց գլխի ու շրթների շարժումով, որ նշանակում էր, թե հիվանդի դրությունը ծանր է:

— Մի՞թե, — բացականչեց Աննա Միխայլովնան: — Ա՛հ, այդ սարսափելի է: Մտածելն անզամ սարսափելի է... Սա որդիս է, — ավելացրեց, նա, Բորիսին ցույց տալով: — Ինքն անձամբ ուզեց շնորհակալություն հայտնել ձեզ:

Բորիսը նորից հարգալիր գլուխ տվեց:

— Հավատացե՛ք, իշխան, որ մայրական սիրտը հրեք չի մոռանա այն, ինչ դուք արիք մեզ համար:

— Ուրախ եմ, որ կարողացա հաճելի բան անել ձեզ համար, սիրելի Աննա Միխայլովնա, — ասավ իշխան Վասիլին, ուղղելով ժարոն և ձայնի ու շարժումների մեջ, այստեղ

Մոսկվայում, իր հովանավորյալ Աննա Միխայլովնայի առջև, արտահայտելով ավելի մեծ վեհություն, քան Պետերբուրգում՝ Annette Շերերի երեկույթին:

— Աշխատեցե՛ք լավ ծառայել և արժանավոր լինել, — ավելացրեց նա, խստությամբ դիմելով Բորիսին: — Ուրախ եմ... դուք այստեղ արձակուրդի մե՞ջ եք, — ասավ նա անտարբեր:

— Հրամանի եմ սպասում, ձերդ պայծառափայլություն, որ մեկնեմ նոր նշանակված տեղս, — պատասխանեց Բորիսը, շարտահայտելով ոչ դժգոհություն իշխանի խիստ վերաբերմունքի առթիվ, ոչ էլ ցանկություն նրա հետ վրեցեցում, բայց այնպես հանգիստ ու հարգալիր, որ իշխանը սևեռուն նրան նայեց:

— Դուք ձեր մայրիկի հե՞տ եք ապրում:

— Ես ապրում եմ կոմսուհի Ռոստովայի մոտ, — ասավ Բորիսը, կրկին ավելացնելով. — ձերդ պայծառափայլություն:

— Դա այն իլյա Ռոստովն է, որ ամուսնացավ Nathalia Շինշինայի հետ, — ասավ Աննա Միխայլովնան:

— Ծանաչում եմ, ճանաչում եմ, — ասավ իշխան Վասիլին իր մոնոտոն ձայնով: — Je n'ai jamais pu concevoir, comment Nathalie s'est décidée à épouser cet ours mal-léché! Un personnage complètement stupide et ridicule. Et joueur à ce qu'on dit!

— Mais très brave homme, mon prince², — նկատեց Աննա Միխայլովնան, մորմոքուն ժպիտով, կարծես նա էլ գիտեր՝ որ կոմս Ռոստովը արժանի էր այդ գնահատականին, բայց խընդրում էր խղճալ թշվառ ծերունուն: — Բժիշկներն ի՞նչ են ասում, — հարցրեց իշխանուհին, փոքր-ինչ լուրջ հետևելու լացակումած դեմքի վրա նորից մեծ վիշտ արտահայտելով:

— Քիչ հույս կա, — ասավ իշխանը:

— Իսկ ես այնպես կուզեի մի անզամ ես շնորհակալություն հայտնել Բեռուն ինձ և Բորիսին արած բարությունների հա-

¹ Երբեք չեմ կարողացել հասկանալ, թե ինչպես Նատալիան որոշեց ամուսնանալ այդ կեղտոտ արջի հետ: Շատ հիմար և ծիծաղելի անձնավորություն է: Բացի դրանից, ասում են, խաղամուլ է:

² Բայց բարի մարդ է, իշխան:

¹ Ուրեմն այդ ճի՞շտ է:

² Իշխան, համարձը սխալական է:

³ Լավ, լավ:

մար: C'est son filleuil¹, — ավելացրեց իշխանուհին այնպիսի եղանակով, կարծես այդ տեղեկութիւնը շափազանց պետք է ուրախացնէր իշխան Վասիլիին:

Իշխան Վասիլին մտածմունքի մեջ ընկավ և դեմքը կնճռեց: Աննա Միխայլովնան հասկացավ, որ նա վախենում է հանձին իրեն ախոյան շահել կոմս Բեզուխովի կտակի նկատմամբ, ուստի շտապեց իշխանին հանգստացնել:

— Եթե շիինը իմ անկեղծ սերն ու անձնվիրութիւնը դեպի Բեռիս, — ասավ նա, — առանձին վստահութեամբ ու անփութ արտասանելով այդ խոսքերը. — ես գիտեմ նրա ազնիւ, շիտակ բնավորութիւնը, բայց չէ՞ որ մոտը միայն իշխանադուստրներն են... Նրանք դեռ ջահել են... — նա զբաղւելով թեքեց և շշուկով ավելացրեց, — Կատարե՞ց արդո՞ք իր վերջին պարտքը, իշխան: Որքա՞ն թանկագին են այդ վերջին բոպենները: Չէ որ ավելի վատ դրութիւն չի կարող լինել. անհրաժեշտ է նախապատրաստել, եթե դրութիւնն այդքան վատ է: Մենք՝ կանայքս, իշխան, — նա ժպտաց մեղմորեն, — լավ գիտեք, թե այդ բաներն ինչպես պիտի ասվեն: Անհրաժեշտ է իրեն տեսնել: Որքան էլ դա ծանր լինի ինձ համար, բայց ես արդեն սովորել եմ տանջվել:

Իշխանն, ըստ երևույթին, հասկացավ նրան, հասկացավ նույնպես և այն, որ Աննա Միխայլովնայից դժվար է ազատվել, ինչպես եղավ Annette Շերերի երեկույթին:

— Կարող է պատահել այդ տեսակցութիւնը ծանր լինի նրա համար, chère Աննա Միխայլովնա, — ասավ նա: — Սպասե՛ք մինչև երեկո. բժիշկները ճշմարտամ են սպասում:

— Բայց այնպիսի բոպեններին սպասել չի կարելի, իշխան: Pensez, il y va du salut de son âme... Ah! c'est terrible, les devoirs d'un chrétien...²

Ներսի սենյակներից մեկի դուռը բացվեց և ներս մտավ կոմսի ազգական-իշխանադուստրներից մեկը, մոռյլ, սառը դեմքով և ոտներին անհամապատասխան երկար իրանով:

Իշխան Վասիլին շրջվեց դեպի նա:

— Հը, ի՞նչպես է:

— Դարձյալ նույնն է: Եվ ինչպես եք ուզում, որ այս աղմուկը... — ասավ իշխանադուստրը, նայելով Աննա Միխայլովնային, որպես անծանոթի:

— Ah, chère, je ne vous reconnaissais pas¹, — երջանիկ ժպիտով ասավ Աննա Միխայլովնան, թեթև արագութեամբ կոմսի ազգականուհուն մոտենալով: — Je viens d'arriver et je suis à vous pour vous aider à soigner mon oncle. J' imagine, combien vous avez souffert², — ավելացրեց նա աչքերը կարեկցաբար փակելով:

Իշխանադուստրը ոչինչ չպատասխանեց, անգամ չժպտաց, ու անմիջապես դուրս ելավ: Աննա Միխայլովնան ձեռնոցները հանեց և հաղթականորեն բազկաթոռ նստեց, հրավիրելով իշխան Վասիլիին նստել իր կողքին:

— Բորիս, — ասավ նա որդուն և ժպտաց, — ես կանցնեմ կոմսի, քեռուս մոտ, իսկ դու առայժմ գնա Պիեռի մոտ mon ami, և շմոռանաս հայտնել նրան Ռոստովների հրավերը: Նրանք Պիեռին ճաշի են կանչում: Կարծում եմ՝ չի գնա, — դարձավ նա իշխանին:

— Ընդհակառակը, — ասավ իշխանը, ըստ երևույթին, տըրամարդութիւնը վատացած: — Je serais très content si vous me débarrassez de ce jeune homme...³ Նստել է այստեղ: Կոմսը ոչ մի անգամ չհարցրեց նրա մասին:

Նա ուսերը թոթվեց: Սպասավորը Բորիսին տարավ ցած, ապա մյուս սանդուղով վեր՝ Պիեռի՝ Պյոտր Կիրիլովիչի սենյակը:

XIII

Պիեռն այնպես էլ չկարողացավ Պետերբուրգում իր համար ասուլարեզ ընտրել և, իրոք, իր անկարգութեան համար արտոբվել էր Մոսկվա: Այն, ինչ պատմում էին Ռոստովների տանը՝

¹ Ահ, սիրելիս, չճանաչեցի ձեզ:

² Հենց նոր եկա ձեզ օգնելու՝ քեռուն խնամելու: Երեկայում եմ, որքան եք տանջվել:

³ Շատ ուրախ կլինեի, եթե ինչ ազատեիք այդ երիտասարդից:

¹ Սա նրա սանիկն է:

² Մտածե՛ք, խոսքը նրա հոգու փրկութեան մասին է: Ահ, սարսափելի է այդ, քրիստոնէյի պարտականութիւնը...

ճիշտ էր: Պիեռը մասնակցել էր թաղապետին արջի մեջքին կապելու գործին: Նա եկել էր մի քանի օր առաջ և իջևանել, ինչպես միշտ, հոր տանը: Թեպետ ենթադրում էր, որ իր պատմությունն արդեն հայտնի կլինի Մոսկվայում, և որ, հորը շրջապատող կանայք, միշտ անբարյացակամ դեպի իրեն, կօգտվեն այդ դեպքից, որպեսզի կոմսին դրդեն իր դեմ, նա այնուամենայնիվ դալու օրն իսկ գնաց հոր հարկաբաժինը: Մտնելով հյուրասրահը, ուր սովորաբար լինում էին իշխանադուստրները, նա բարեկեց ձեռագործով ու ընթերցանությամբ զբաղված կանանց: Նրանք երեք հոգի էին: Մեծը՝ մաքրասեր, երկար իրանով, խստադեմ աղջիկ էր, նա՛, որ դուրս եկավ Աննա Միխայլովնայի առաջ. դա կարդում էր. փոքրերը, երկուսն էլ կարմրադեմ ու սիրուն, միմյանցից տարբերվում էին միայն նրանով, որ մեկի շրթան վրա խալ կար՝ որ շատ գեղեցկացնում էր նրան. երկուսն էլ աշխատում էին քարգահի վրա: Պիեռին ընդունեցին այնպես, ասես մեռել կամ ժանտախտավոր լինեիր: Մեծ իշխանադուստրն ընթերցումն ընդհատեց և անխոս նրան նայեց՝ վախեցած աչքերով. մյուսը, խալ շունեցողը, նույնպիսի արտահայտութուն ավեց դեմքին. կրասերը՝ խալ ունեցողը, որ ուրախ-խնդուն բնավորության տեր էր, կուցացավ քարգահի վրա, որպեսզի ժպիտը թաքցնի, այդ ժպիտն առաջանում էր, հավանորեն, տեղի ունենալիք տեսարանից, որի զվարճալիութունը նախատեսում էր: Նա թելը քաշեց ցած ու կուցացավ, կարծես նախշերը շոկելու, բայց ծիծաղը հագիւլ՝ զսպելով:

— Boniour, ma cousine, — ասավ Պիեռը: — Vous ne me reconnaissez pas?¹

— Շա ձեզ շատ լավ եմ ճանաչում, շատ լավ:

— Ի՞նչպես է կոմսի առողջութունը: Կարո՞ղ եմ իրեն տեսնել, — հարցրեց Պիեռը, ինչպես միշտ, անհամարձակ, բայց առանց շփոթվելու:

— Կոմսը տառապում է թե՛ ֆիզիկապես, թե՛ բարոյապես, և դուք, կարծեմ, առանձնապես հոգ եք տարել, որպեսզի նրան որքան կարելի է, ավելի շատ բարոյական տանջանք պատճառեք:

— Կարո՞ղ եմ կոմսին տեսնել, — կրկնեց Պիեռը:

— Հը՛մ... Եթե ուզում եք սպանել նրան, բոլորովին բնական է, կարո՞ղ եք տեսնել: Օլգա, գնա մի տես քեռու բուլլանը պատրաստ է, շուտով ժամանակն է, — ասավ նա, դրանով ցույց տալով Պիեռին, որ իրենք զբաղված են և զբաղված են նրա հորը հանգստացնելու գործով, այն ժամանակ, երբ ինքն ակնհայտորեն, զբաղված է միայն նրան հուզելով:

Օլգան դուրս գնաց: Պիեռը կանգնեց, նայեց քույրերին և, գլուխը խոնարհելով, ասավ.

— Ուրեմն կերթամ սենյակս: Երբ կարելի լինի՝ ինձ կասեք:

Պիեռը դուրս եկավ, և նրա ետևից լավեց խալավոր քիչ հնչուն, բայց ոչ բարձր ծիծաղը:

Մյուս օրը եկավ իշխան Վասիլին և տեղավորվեց կոմսի տանը: Նա Պիեռին կանչեց մոտն ու ասավ.

— Mon cher, si vous conduisez ici comme, Pétersbourg, vous finirez très mal; c'est tout ce que je vous dis¹. Կոմսը շատ ծանր հիվանդ է. կարիք չկա որ իրեն տեսնես:

Այդ օրվանից Պիեռին չէին անհանգստացնում, և նա ամբողջ օրն անց էր կացնում մենակ՝ վերևում՝ իր սենյակում:

Այն ժամանակ, երբ Բորիսը մտավ նրա սենյակը, Պիեռը գնում-գալիս էր, երբեմն անկյուններում կանգ առնելով, ձեռի սպառնալից շարժումներ ուղղելով պատին, կարծես խոցում էր անտես թշնամուն, և, խստությամբ ակնոցներ վերևից նայելով, նորից սկսում էր երթևեկը, անորոշ խոսքեր ասելով, ուսերը թոթվելով ու ձեռները տարածելով:

— L'Angleterre a vécu², — խոսեց նա, հոնքերը կիտելով և ինչ-որ մեկին մատնացույց անելով: — M. Pitt comme traître à la nation et au droit des gens est condamné à...³ — Նա չկարողացավ վերջացնել Պիթի դատավճիռը, այդ բուպեին ինքն իրեն նապոլեոն երևակայելով և իր հերոսի հետ

¹ Սիրելիս, եթե դուք այստեղ ձեզ պիտի պահեք, ինչպես Պետերբուրգում, ձեր բանը շատ վատ կլինի, էլ ուրիշ ասելիք չունեմ:

² Անգլիայի բանը վերջացած է:

³ Պիտսը, որպես ազգի և ժողովրդի իրավունքի դավաճան, դատապարտված է...

¹ Բարե, բուզին, ինձ չե՞ք ճանաչում:

միասին արդեն Պաղե-Կալեյի դժվար անցը կատարած ու խոնդոնը գրաված, — երբ տեսավ իր սենյակը մտնող ջահել, բարեկազմ գեղեցիկ սպային: Նա կանգ առավ: Պիեռը Բորիսին թողել էր սասն շորս տարեկան հասակում և բոլորովին չէր հիշում նրան. բայց շնայած դրան, իրեն հատուկ արագ ու սրտաբաց ձևով բռնեց երիտասարդի ձեռն ու ժպտաց բարեկամաբար:

— Դուք հիշո՞ւմ եք ինձ, — հանգիստ, հաճելի ժպիտով ասավ Բորիսը: — Մայրիկիս հետ եկել եմ կոմսի մոտ, բայց նա, կարծեմ այնքան էլ առողջ չի:

— Այո, կարծյոք, հիվանդ է: Նրան շարունակ անհանգրստացնում են, — պատասխանեց Պիեռը, աշխատելով հիշել, թե ո՞վ է այս երիտասարդը:

Բորիսն զգում էր, որ Պիեռն իրեն չի ճանաչում, բայց հարկ չհամարեց իր անունը տալ և ամենափոքր շփոթութուն իսկ չզգալով, ուղիղ նայում էր նրա աչքերին:

— Կոմս Ռոստովը խնդրել է այսօր գալ իր մոտ ճաշի, — ասավ նա Պիեռի համար բավական երկար ու անհարմար լրատությունից հետո:

— Ա՛հ: Կոմս Ռոստովը՞, — ուրախ բացականչեց Պիեռը: — Դուք ուրեմն նրա որդի՞ն եք, Բլյա՞ն: Ես, կարո՞ղ եք երևակայել, առաջին րոպեին չճանաչեցի ձեզ: Հիշո՞ւմ եք, ինչպես Վորոբեևի գորի գնացինք m-me Jacquot¹-ի հետ... վաղուց է:

— Դուք սխալվում եք, — անշտապ, բայց համարձակ ու փոքր-ինչ հեզնական ժպիտով ասավ Բորիսը: — Ես Բորիսն եմ, իշխանուհի Աննա Միխայլովնա Գրուբեցկայայի որդին: Ռոստովի հոր անունը Բլյա է, որդունը՝ Նիկոլայ: Եվ ես ոչ մի m-me Jacquot չեմ ճանաչել:

Պիեռը ձեռներն ու գլուխը թափահարեց, կարծես մոծակներ ու մեղունեք էին թափվել վրան:

— Ա՛հ, այս ինչ բան էր, ամեն ինչ խառնեցի: Մոսկվայում այնքա՞ն ազգականներ ունեմ որ: Դուք Բորիսն եք... այո: Ա՛յ մենք իրար հասկացանք: է, դուք ի՞նչ կարծիք ունեք Բուլոնյան արշավանքի մասին: Անգլիացիների բանը վատ կլինի, չէ՞, եթե Նապոլեոնն անցնի չրանցքը: Ես կարծում եմ, որ

այդ արշավանքը շատ հնարավոր է: Միայն թե Վիլնյովն անհոգ չգտնվի:

Բորիսը Բուլոնյան արշավանքի մասին ոչինչ չգիտեր, նա լրագրիները չէր կարդում և Վիլնյովի մասին առաջին անգամն էր լսում:

— Մենք այստեղ Մոսկվայում զբաղված ենք ավելի ճաշկերույթներով ու բամբասանքներով, քան քաղաքականությամբ, — ասավ նա իր հանգիստ, հեզնական տոնով: — Ես այդ մասին ոչինչ չգիտեմ և չեմ մտածում: Մոսկվան ամեն բանից ավելի զբաղված է բամբասանքներով, — շարունակեց նա: — Այժմ էլ խոսում են ձեր և կոմսի մասին:

Պիեռը ժպտաց իր բարի ժպիտով, վախենալով, կարծես, խոսակցի համար, շլինի թե հանկարծ այնպիսի բան ասի, որ հետո ստիպված լինի զղջալ: Սակայն Բորիսը խոսում էր պարզ, որոշակի և շոր, նայելով ուղիղ Պիեռի աչքերին:

— Մոսկվան էլ անելիք չունի, բացի բամբասանքը, — շարունակեց նա: — Բոլորն զբաղված են նրանով, թե կոմսն ո՞ւմ է թողնելու իր կարողությունը, թե կարող է պատահել, որ նա մեզնից շատ ապրի, ինչ-որ ցանկանում եմ ի սրտե...

— Այո, այդ բոլորը շատ ծանր է, — հարեց Պիեռը, — շատ ծանր է: — Պիեռը շարունակ վախենում էր, թե շլինի հանկարծ այդ սպան ինքն իր համար անհարմար մի զրույց սկսի:

— Իսկ ձեզ պիտի թվա, — ասավ Բորիսը, թեթևակի կարմրելով, բայց ձայնն ու դիրքը չփոխելով, — ձեզ պիտի թվա, թե բոլորն զբաղված են միայն նրանով, որ կոմսից որևէ բան ստանան:

«Այդպես էլ է», մտածեց Պիեռը:

— Իսկ ես հենց այդ եմ ուզում ասել ձեզ, թուրիմացությունից խուսափելու համար, որ դուք շատ կսխալվեք, եթե ինձ և մորս համարեք այդ մարդկանցից: Մենք շատ աղքատ ենք, բայց ես, գեթ ինձ համար կարող եմ ասել. հենց այն պատճառով, որ ձեր հայրը հարուստ է, ես ինձ չեմ համարում նրա ազգականը. ու թե՛ ես, թե՛ մայրս երբեք ոչինչ չենք խնդրի և ոչինչ չենք ընդունի նրանից:

Պիեռը երկար ժամանակ չէր կարողանում հասկանալ, բայց երբ հասկացավ, բազմոցից վեր թռավ, Բորիսի թևը բռնեց իրեն հատուկ արագությամբ և, Բորիսից ավելի կարմը

¹ Տե՛ս նաև ժակ-իս:

քելով, փկսեց խոսել ամոթի և դժկամութեան խառն զգացումով:

— Այ քեզ տարօրինակ բան: Միթե ես... և ով կարող է մտածել... ես լավ գիտեմ...

Բայց Բորիսը կրկին ընդհատեց նրան:

— Ուրախ եմ, որ ամեն ինչ ասի: Գուցե, ձեզ հաճելի չէ, ներքեք ինձ, — ասավ նա, հանգստացնելով Պիեռին, փոխանակ որ նա իրեն հանգստացնի, — բայց կարծում եմ, որ ձեզ չվիրավորեցի: Իմ սկզբունքն է՝ ամեն ինչ ասել շիտակ... Հիմա ի՞նչ պատասխան տանեմ: Կգա՞ք Ռոստովների մոտ ճաշելու:

Եվ Բորիսը, ըստ երևույթին, ծանր պարտականութունից ազատվելով, ինքն անհարմար դրութիւնից դուրս գալով և ուրիշին նրա մեջ դնելով, նորից դարձավ հաճելի:

— Ոչ, լսեցեք, — ասավ Պիեռը հանգստանալով: — Գուրբ զարմանալի մարդ եք: Այն, ինչ հիմա ասացիք, շատ լավ է, շատ լավ: Իհարկե, դուք ինձ չեք ճանաչում: Մենք վաղուց իրար չենք տեսել... դեռ երեխա ժամանակից... Գուրբ իմ մասին կարող եք կարծել... Ես ձեզ հասկանում եմ, շատ լավ եմ հասկանում: Ես այդ բանը չէի անի, քաջութիւն չէի ունենա, բայց այդ սքանչելի է: Շատ ուրախ եմ ձեզ ծանոթանալու համար: Տարօրինակ է, — ավելացրեց նա, լռելով ու ժպտալով, — թե ինչ մարդու տեղ եք դրել ինձ: — Նա ծիծաղեց: — Է, ինչ արած: Ավելի լավ ծանոթանանք իրար: Խնդրեմ: — Նա սեղմեց Բորիսի ձեռը: — Գիտեք, ես դեռ ոչ մի անգամ չեմ եղել կոմսի մոտ: Ինձ չի կանչել... Խղճում եմ նրան, իբրև մարդու... Բայց ի՞նչ կարելի է անել:

— Եվ դուք կարծում եք, թե Նապոլեոնը կարո՞ղ է նեղուզն անցնել, — հարցրեց Բորիսը ժպտալով:

Պիեռը հասկացավ, որ Բորիսն ուզում է խոսակցութիւնը փոխել, և, նրա հետ համաձայնելով, սկսեց թվել Բուլոնյան արշավանքի օգուտներն ու վնասները:

Լաքեյն եկավ Բորիսին կանչելու մոր մոտ: Իշխանուհին մեկնում էր: Պիեռը խոստացավ գնալ ճաշի, որպեսզի ավելի մտերմանա Բորիսի հետ, ամուր սեղմեց նրա ձեռը, ակնոցների միջով սիրալիր նշան նայելով... Նրա գնալուց հետո՝ Պիեռը դեռ երկար շրջում էր սենյակում, այլևս աներևույթ

թշնամուն շխոցելով, այլ ժպտում էր, հիշելով այդ համակրելի խելացի ու հաստատակամ երիտասարդին:

Ինչպես այդ պատահում է երիտասարդ հասակում և մանավանդ միևնույն վիճակում գտնվողներին, Պիեռն անբացատրելի խանդաղատանք զգաց դեպի այդ երիտասարդը և որշեց անպայման մտերմանալ նրան:

Իշխան Վասիլին ճանապարհ էր դնում իշխանուհուն: Իշխանուհին, թաշկինակն աչքերին, լալիս էր:

— Սարսափելի՛ է, սարսափելի՛, — ասում էր նա, — բայց ինչ էլ լինի, ես իմ պարտքը կկատարեմ: Կգամ այստեղ գիշերելու: Նրան այդպես չի կարելի թողնել: Ամեն վայրկյանը թանկ է: Չեմ հասկանում, թե ինչո՞ւ իշխանագուստները դանդաղում են: Գուցե, աստված օգնի ինձ նրան նախապատրաստելու միջոց գտնել... Adieu, mon prince, que le bon Dieu vous soutienne...¹

— Adieu, ma bonne², — պատասխանեց իշխան Վասիլին, արագ շրջվելով:

— Ախ, նա սարսափելի դրութեան մեջ է, — ասավ մայրը որդուն, երբ նրանք նորից կառեթ էին նստում: — Նա համարյա ոչ ոքի չի ճանաչում:

— Ես չեմ հասկանում, մայրիկ, թե ի՞նչ վերաբերմունք ունի դեպի Պիեռը, — հարցրեց Բորիսը:

— Ամեն ինչ կպարզի կտակը, բարեկամս. դրանից է կախված և մեր բախտը...

— Բայց ինչո՞ւ եք կարծում, թե մի բան կթողնի մեզ:

— Ա՛հ, սիրելիս: Նա այնքա՞ն հարուստ է, իսկ մենք այնքա՞ն աղքատ:

— Է, դա դեռ բավարար պատճառ չի, մայրիկ...

— Ա՛հ, աստված իմ, աստված իմ: Որքան ծանր է դրութիւնը, — բարականչեց մայրը:

XIV

Երբ Աննա Միխայլովնան որդու հետ գնաց կոմս Կիրիլ Վլադիմիրովիչ Բեզուխովի մոտ, կոմսուհի Ռոստովյան երկար

¹ Մնաց բառով: Իշխան, աստված օգնական:

² Գնաց բարով, սիրելիս:

նստած էր մենակ, թաշկինակն աչքերին դրած: Վերջապես, զանգը տվեց:

— Սա ի՞նչ բան է, սիրելիս, — ասավ նա բարկացած ըսպասավոր աղջկան, որ ստիպել էր մի քանի ըոպե սպասել իրեն: — Չե՞ք ուզում ծառայել, ինչ է: Այդ դեպքում ես ձեզ համար տեղ կգտնեմ:

Կոմսուհին հուզված էր իր մանկութան ընկերուհու վըշտից ու ստորացուցիչ աղքատությունից և այդ պատճառով վատ տրամադրության մեջ էր, որն արտահայտում էր նա միշտ սպասուհուն «սիրելիս» և «դուք» կոչելով:

— Ներողություն, — ասավ սպասուհին:

— Կոմսին կանչեցեք գա ինձ մոտ:

Կոմսը, երերալով և, ինչպես միշտ, փոքր-ինչ մեղավոր դեմքով կնոջը մոտեցավ:

— է, կոմսուհիս: Աքարներից ի՞նչ sauté au madère¹ է լինելու, ma chère! Համը տեսա: Իզուր էլ չէր որ Տարասին հազար ուրբի տվի: Արժի՛:

Նա նստեց կնոջ մոտ, ձեռներն ուրախ-ուրախ ծնկներին հենելով և ճերմակ մազերը խառնելով:

— Ի՞նչ կհրամայեք, կոմսուհիս:

— Ահա՛ թե ինչ, բարեկամս. այս ի՞նչ է թափվել, — ասավ նա ամուսնու ժխտը ցույց տալով: — Երևի, սոտե է, — ավելացրեց կոմսուհին ժպտալով: — Այ ինչ, կոմս. ինձ փող է հարկավոր:

Նվ տխրությունը պատեց նրա դեմքը:

— Ա՛խ, կոմսուհիս...

Նվ կոմսն իրար անցավ, դրամապանակը հանելով:

— Ինձ շատ է հարկավոր, կոմս, ինձ հարկավոր է հինգ հարյուր ուրբի:

Նվ նա բատիստե թաշկինակը հանելով, սրբեց ամուսնու ժխտը:

— Իսկո՛ւյն, իսկո՛ւյն: էյ, ո՞վ կա այդտեղ, — կանչեց կոմսը այնպիսի ձայնով, որով կանչում են այն մարդիկ միայն, որոնք վստահ են, թե նա, որին կանչում են, գլխապատառ ներս է վազելու: — Կանչեցեք Միտենկային:

Միտենկան, այն ազնվական տղան, որ կրթվել էր կոմսի տանը և այժմ վարում էր նրա տնտեսությունը, ներս մտավ հուշիկ քայլերով:

— Ահա ինչ, սիրելիս, — ասավ կոմսը ներս մտնող հարգալիք երիտասարդին: — Բեր ինձ... — նա մտածեց: — Այո, 700 ուրբի, այո: Բայց տես անցյալ անգամվա պես պատոված ու կեղտոտ չլինեն. լավերը բեր, կոմսուհու համար են:

— Այո, Միտենկա, խնդրեմ մաքուր լինեն, — ասավ կոմսուհին ծանր հառաչելով:

— Ձերդ պայծառափայլություն, ե՞րբ կհրամայեք բերեմ, — ասավ Միտենկան: — Բարեհաճեցեք իմանալ, որ... ասենք, բարեհաճեցեք շանհանգստանալ, — ավելացրեց նա, նկատելով, որ կոմսն սկսում է ծանր ու արագ շնչել, ինչ որ նշան էր բռնկվող զայրույթի: — Մոռացել էի... Այս ըոպեի՞ս կհրամայեք բերեմ:

— Այո, այո, բեր և կոմսուհուն տուր:

— Ոսկի տղա է այդ Միտենկան, — ավելացրեց կոմսը ժպտալով, երբ երիտասարդը դուրս գնաց: — Նրա համար անկարելի բան չկա: Ես որ այդ տանել չեմ կարող: Ամեն բան կարելի է:

— Ախ, փողը, կոմս, փողը. որքա՛ն վիշտ կա աշխարհի երեսին այդ փողի երեսից, — ասավ կոմսուհին: — Իսկ այդ փողն ինձ շատ հարկավոր է:

— Գուք, կոմսուհիս, հայտնի շոպյուղ եք, — ասավ կոմսը և, կնոջ ձեռը համբուրելով, նորից գնաց իր առանձնասենյակը:

Երբ Աննա Միխայլովնան վերադարձավ Բեզուխովի մոտից, կոմսուհու մոտ, սեղանի վրա դրված էին արդեն թղթադրամները՝ բոլորն էլ նոր՝ ու թաշկինակով ծածկված, և Աննա Միխայլովնան նկատեց, որ կոմսուհին հուզված է:

— Հը, ի՞նչ կա, սիրելիս, — հարցրեց կոմսուհին:

— Ա՛խ, ինչ սարսափելի դրություն մեջ է: Նրան ճանաչել չի կարելի, այնքա՛ն, այնքա՛ն վատ է. երկու ըոպե մնացի, ևրկու խոսք էլ չկարողացա ասել...

— Annette, ի սեր աստժո, շմերժես, — ասավ հանկարծ կոմսուհին, կարմրելով, որ այնքան օտարոտի էր նրա ոչ ջահել,

¹ Կերակուրի տեսակ:

եիհար ու լուրջ դեմքի համար, և թաշկինակի տակից թղթա-
դրամները վերցնելով:

Աննա Միխայլովնան անմիջապես հասկացավ ինչ կա, և
կռացավ, որ հարկավոր վայրկյանին ճարպկորեն գրկի կոմսու-
հուն:

— Ահա իմ կողմից Բորիսին՝ համազգեստներ կարելու
համար...

Աննա Միխայլովնան արդեն գրկել էր նրան ու լալիս էր:
Կոմսուհին նույնպես լալիս էր: Լաց էին լինում նրա համար,
որ համերաշխ են. և նրա համար, որ բարի են. և նրա՝ համար,
որ իրենք, մանկության ընկերներն զբաղված են այսպիսի
ստոր բանով — փողով. լաց էին լինում և՛ նրա համար, որ
իրենց ջահելությունն անցել է... Եվ երկուսի արցունքներն էլ
հաճելի էին իրենց...

XV

Կոմսուհի Ռոստովան իր աղջիկների ու արդեն մեծ թվով
հյուրերի հետ նստած էր հյուրասրահում: Կոմսը տղամարդ
հյուրերին առաջնորդեց իր առանձնասենյակը, առաջարկե-
լով իր տաճկական ծխամորճների կոլեկցիան: Նա երբեմն
դուրս էր գալիս ու հարցնում՝ դեռ չի՞ եկել: Սպասում էին
Մարյա Դմիտրիևնա Ախրոսիմովային, որը հասարակու-
թյան մեջ հայտնի էր՝ le terrible dragon¹ կոչումով, նշանա-
վոր ոչ իր հարստությանը, ոչ հրավերքներով, այլ ուղղամտու-
թյամբ և պարզ վարվեցողությամբ: Մարյա Դմիտրիևնային
ճանաչում էր թագավորական գերդաստանը, ճանաչում էր
աճող Մոսկվան և ամբողջ Պետերբուրգը, և երկու քաղաքն էլ,
զարմանալով նրա վրա, թաքուն ծիծաղում էին նրա կոպտու-
թյան վրա, անեկզոտներ էին պատմում նրա մասին. բայց
և այնպես բոլորն էլ, առանց բացառության, հարգում էին
նրան և վախենում էին նրանից:

Միով լցված առանձնասենյակում խոսում էին պատե-
րազմի մասին, որ հայտարարված էր հրովարտակով, և՛ զո-
րահավաքի մասին: Հրովարտակը դեռ ոչ ոք չէր կարդացել:

բայց բոլորն էլ գիտեին նրա հայտարարվելու մասին: Կոմսը
նստել էր տաճկական թախտի վրա, երկու ծխող ուխտակցող
հարևանների մեջտեղը: Նա ինքը ոչ ծխում էր և ոչ խոսում,
բայց գլուխը մերթ այս, մերթ այն կողմը թեքելով, ականք
բավականություններ նայում էր ծխողներին և լսում իր երկու
հարևանի զրույցը, որոնց ինքն էր հրահրել իրարու դեմ:

Խոսողներից մեկը քաղաքից էր՝ կնճոռոտ, մաղձոտ և ածի-
լած նիհար դեմքով, մեկը. որ արդեն հասակն առած էր, թևե
հագնված, ինչպես ամենապճնասեր երիտասարդը. նա ծա-
լապատիկ նստել էր թախտի վրա՝ տանու մարդու պես և,
սաթե ծխամորճը խոր դրած բերանի մի կողմը՝ ագահություն
ներս էր քաշում ծուխը և աչքերը կկոցում: Դա տարիքն ան-
ցած ամուրի Շինչինն էր, կոմսուհու հորեղբոր որդին, մի շար
կծու լեզու, ինչպես ասում էին Մոսկվայի հավաքույթներում:
Թվում էր նա առանձին զիջողություն է անում, որ բարեհա-
ճում է իջնել մինչև խոսակցի աստիճանը և խոսել նրա հետ:
Մյուսը թարմ, կարմրադեմ, գվարդիական սպա էր՝ շատ մա-
քուր, լավ կոճկված ու սանրված, ծխամորճը պահել էր բերանի
մեջտեղը, և վարդագույն շրթերով թեթևակի ներս էր քաշում
ծուխն ու օղակ-օղակ դուրս թողնում գեղեցիկ բերնից: Դա այն
տեղակալ Բերգն էր, Սեմյոնովյան գնդի սպան, որի հետ Բո-
րիսը մեկնելու էր գունդ, և որով նատաշան ծաղրեց Վերային,
Բերգին անվանելով նրա փեսացու: Կոմսը նստել էր նրանց
մեջտեղն ու լսում էր ուշադիր: Կոմսի ամենահաճելի զբաղ-
մունքը, բոստոն խաղից հետո, որ նա շատ էր սիրում, զրույց
լսելն էր, մանավանդ եթե հաջողվում էր նրան հրահրել շա-
տախոս խոսակիցներին:

— Է, այդ ինչպես կլինի, ախպեր ջան, mon très honorable¹
Ալ՝ֆոնս Կառլիշ, — ասում էր Շինչինը ծիծաղելով և միաց-
նելով (զրա մեջ էր նրա խոսելու առանձնահատկությունը)
ոռու ժողովրդական արտահայտությունները Ֆրանսական ըն-
տիր Ֆրազների հետ: — Vous comptez vous faire des rentes
sur l' état², և վաշտից էլ ուզո՞ւմ եք օժանդակ եկամուտ ըս-
տանալ:

¹ Սարսափելի դրագոն:

¹ Ամենահարգելի:

² Դուք դանձարանից եկամուտ ստանալու ակնկալություն ունեք:

— Ոչ, Պյոտր Նիկոլայիչ, ես ուզում եմ ցույց տալ միայն, որ հեծելագործի մեջ օգուտը շատ ավելի քիչ է, քան հետևա- կում: Այ հիմա պատկերացրեք, իմ գրուեթյունը, Պյոտր Նիկո- ւայիչ:...

Բերզը խոսում էր միշտ որոշ, հանգիստ ու քաղաքավարի: Նրա խոսակցութիւնը միշտ վերաբերում էր միայն իրեն. նա միշտ հանգստորեն լուում էր, երբ խոսում էին ուրիշ որևէ, ուղ- դակի իրեն չվերաբերող բաների մասին: Եվ այդպէս կարող էր լռել մի քանի ժամ, անհարմարութիւն չզգալով և ուրիշների վրա անհարմար տպավորութիւն չթողնելով: Բայց հենց որ խոսակցութիւնը վերաբերում էր իրեն անձամբ՝ նա խոսում էր հանգամանորեն ու ակնհայտ բավականութեամբ:

— Պատկերացրեք իմ գրութիւնը, Պյոտր Նիկոլայիչ. եթե հեծելագործի մեջ լինեի, չորս ամիսը երկու հարյուրից ավելի չէի ստանալու, նույնիսկ տեղակալի աստիճանով. իսկ հիմա ես ստանում եմ երկու հարյուր երեսուն, — ասում էր նա ուրախ հաճելի ժպիտով, նայելով Շինշինին ու կոմսին, կարծես նրա համար պարզ էր, որ իր հաջողութիւնը միշտ էլ կազ- մելու է մնացած բոլոր մարդկանց ցանկութիւնների գլխավոր նպատակը:

— Բացի դրանից, Պյոտր Նիկոլայիչ, փոխադրվելով գը- վարդիա, ես աչքի կընկնեմ, — շարունակեց Բերզը, — գվար- դիայի հետևակում արծակուրդներն էլ շատ են: Հետո, ինք- ներդ դատեցեք, ինչպէս կարող եմ հարյուր երեսուն ուրբով ապրել: Իսկ ես մի մասը ետ եմ գցում և մի բան էլ հորս եմ ուղարկում, — շարունակեց նա ծխի մի օղակ արծակելով:

— La balance y est...¹ գերմանացին նեղն ա ընկել, comme dit le proverbe², — ծխամորճը բերանի մյուս կողմը դնելով՝ ասավ Շինշինն ու աչքով արավ կոմսին:

Կոմսը ծիծաղեց բարձր: Մյուս հյուրերը, աեսնելով Շին- շինը խոսակցութիւն է սկսել, մտեցան լսելու: Բերզը, չնկա- տելով շրջապատողների ոչ հեզնանքը, ոչ անտարբերութիւ- նը, շարունակում էր պատմել, թե ինչպէս գվարդիա փոխա- դրվելով, ինքն արդեն մի աստիճան է շահել զորաբանակի իր

ընկերների հանդեպ, ինչպէս պատերազմի ժամանակ վաշտա- պետին կարող են սպանել, և ինքը, վաշտի մեջ ամենաազգը մնալով, կարող է հեշտութեամբ վաշտապետ դառնալ, թե ինչ- պես գնդում բոլորը սիրում են իրեն, և թե ինչպէս հայրը գոհ է իրենից: Բերզն, այս բոլորը պատմելով, հրճվում էր ակներև, և, կարծես մոռանում, որ մյուսներն էլ կարող են ունենալ իրենց շահերն ու ձգտումները: Բայց այն ամենը, ինչ պատմում էր այնքան վայելուչ-չափավոր էր և ջահել եսամոլութեան պար- զամտութիւնն այնքան ակներև, որ նա գինաթափ էր անում իր ունկնդիրներին:

— Է, ախպեր ջան, դուք և՛ հետևակում, և՛ հեծելագործում, ամեն տեղ էլ առաջ կերթաք. այդ ես գուշակում եմ ձեզ համար, — ասավ Շինշինը, Բերզի ուսին խփելով ու ոտները թախտից իջեցնելով:

Բերզն ուրախ ժպտաց: Կոմսը և նրա հետևից հյուրերը մտան հյուրասրահ:

Ճաշին նախորդող այն ժամն էր, երբ հավաքված հյուրերը երկար խոսակցութիւն չեն սկսում, սպասելով թե հիմա կը- կանչեն ուտելու, և միաժամանակ անհրաժեշտ են համարում շարժվել ու շլոնել, որպեսզի ցույց տան, թե այնքան էլ անհամ- բեր չեն սպասում ճաշին: Տանտերերը նայում են դեպի դուռը և երբեմն հայացքներ փոխանակում իրար հետ: Հյուրերն այդ հայացքներից աշխատում են գուշակել՝ ո՛ւմ կամ ինչի՞ են սպասում. մի կարևոր, ուշացած ազգականի՞, թե՞ մի ուտե- լիքի, որ դեռ պատրաստ չի:

Պիեռն եկավ հենց ճաշից առաջ և անճարակ նստեց հյուրա- սրահի մեջտեղը, առաջին իսկ պատահած բազկաթոռին, կրտ- րելով բոլորի ճանապարհը: Կոմսուհին ուզեց ստիպել նը- րան, որ խոսի, բայց նա ակնոցների միջից միամիտ շուրջն էր նայում, կարծես ինչ-որ մեկին որոնելով, և կոմսուհու հարցե- րին պատասխանում էր կարճ խոսքերով: Նա ճնշված էր և միայն ինքը չէր նկատում այդ: Հյուրերի մեծ մասը, որ գիտեր արջի պատմութիւնը, հետաքրքիր նայում էին այդ մարմնեղ, հաստ ու հանդարտ մարդուն, զարմանալով, թե այդ դանդաղ- կոտ ու հեզաբարո մարդն ինչպէս կարող էր այդպիսի խաղ խաղալ թաղապետի գլխին:

¹ Բալանսը պարզ է:

² Ինչպէս առածն է ասում:

— Դուք վերջերս եք եկե՞լ, — հարցրեց կոմսուհին նրան:
— Oui, madame¹, — պատասխանեց Պիեռը, շուրջը նա-

լվում:

— Դուք ամուսնուս չեք տեսե՞լ:

— Non, madame², — եվ Պիեռը ժպտաց՝ բոլորովին ան-

տեղի:

— Դուք, կարծեմ, վերջերս եղե՞լ եք Փարիզում: Կարծում եմ՝ շատ հետաքրքրական է:

— Շատ հետաքրքրական է:

Կոմսուհին մի հայացք փոխանակեց Աննա Միխայլովնայի հետ: Աննա Միխայլովնան հասկացավ, որ իրեն խնդրում են երիտասարդին զբաղեցնել և նա, Պիեռի մոտ նստելով, սկսեց խոսել հոր մասին: Ինչպես կոմսուհուն, դրան էլ Պիեռը պատասխանում էր կարճ նախադասութուններով: Բոլոր հյուրերն էլ զբաղված էին իրարով. «Les Razoumovsky... Ça a été charmant... Vous êtes bien bonne... la comtesse Apraksine...³, լսվում էր ամեն կողմից: Կոմսուհին վեր կացավ և գնաց դահլիճ:

— Մարիա Դմիտրիևնա՞, — լսվեց նրա ձայնը դահլիճից:

— Նա ինքն է, — լսվեց ի պատասխան մի կոպիտ կանացի ձայն, որից հետո սենյակ մտավ Մարիա Դմիտրիևնան:

Բոլոր օրիորդները և անգամ կանայք, բացառութամբ ամենապառավների, ոտքի ելան: Մարի Դմիտրիևնան կանգ առավ շեմքին և, իր գերուկ մարմնի բարձունքից, վեր բռնելով իր ճերմակ խոպոպներով զարդարված հիսնամյա գլուխը, նայեց հյուրերին և, կարծես թեքրը քշտելով, առանց շտապելու, ուղղեց զգեստի լայն թևքերը: Մարիա Դմիտրիևնան խոսում էր միշտ ուռեերեն:

— Թանկագին անվանակոչյալներս՝ շնորհավորում եմ, — ասավ նա բարձր, բամբ ձայնով, որ խլացնում էր բոլոր մյուս ձայները: — Դու ինչ ես անում ծեր սատանա, — ասավ նա ձեռք համբուրող կոմսին, — երևի ձանձրանո՞ւմ ես Մոսկվայում:

¹ Այո, տիկին:

² Ոչ, տիկին:

³ Բազումովակիները... Դա հիասքանչ բան էր... Դուք շատ բարի եք... կոմսուհի Ապրաքսինան...

Շուն խաղացնելու տեղ չկա՞: Ինչ արած, սիրելիս. այ, երբ այս թռչնակները մեծանան... — Նա ցույց տվեց աղջիկներին: — Ուզես-չուզես՝ փեսացուներ պիտի փնտրես:

— Է, ի՞նչպես ես կազակս (Մարիա Դմիտրիևնան կազակ անվանում էր Նատաշային), — ասավ նա, ձեռով Նատաշային փաղաքշելով, որ անվախ ու ուրախ մոտեցավ նրան: — Գիտեմ, որ շար աղջիկ ես, բայց սիրում եմ:

Նա ահագին ուղեկցուլից հանեց հակինթյա տանձաձև գինդեր և, տալով դրանք տոնական ժպտով փայլող, շիկնած Նատաշային, անմիջապես շուռ եկավ նրանից ու դարձավ Պիեռին:

— Է, է՞, սիրելիս. արի մի այստեղ, — ասավ նա շինծու հանդարտ ու բարակ ձայնով: — Արի, սիրելիս, արի՛:

Եվ նա սպառնալից թևքերը վեր քշտեց:

Պիեռը մոտեցավ, ակնոցների միջից միամտորեն նրան նայելով:

— Մոտեցիր, մոտեցիր, սիրելիս: Ես քո հորն էլ ճշմարտութուն չեմ խնայել, երբ նա արքունիքից անգամ սիրված էր, իսկ քեզ ևս առավել:

Նա լռեց: Լուռ էին և բոլորը, սպասելով, թե ի՞նչ է լինելու. զգում էին, որ դա նախաբան է միայն:

— Լավն ես, խոսք չունեմ: Լավ տղա ես... Հայրը մահամերձ պառկած, ինքը զվարճանում է, թաղապետին նստեցնում է արջի մեջքին: Ամո՞թ է, սիրելիս, ամո՞թ: Ավելի լավ կանեիր պատերազմ գնալիս:

Նա շրջվեց ու ձեռք տվեց կոմսին, որ ծիծաղը հագիվ էր զսպում:

— Հը՛, սեղան նստելու ժամանակն է, — ասավ Մարիա Դմիտրիևնան:

Առջևից գնաց կոմսը՝ Մարիա Դմիտրիևնայի հետ. հետո կոմսուհին, որին թեկնացուկ էր արել հուսարական գնդապետը, հարկավոր մի մարդ, որի հետ Նիկոլայը պիտի գնար-հասներ իր գնդին: Աննա Միխայլովնան՝ Շինշինի հետ: Բերզը թևը տվեց Վերային: Ժպտերես ժյուլի Կարագինան սեղանատուն մտավ Նիկոլայի հետ: Նրանց հետևեցին ուրիշ զույգեր էլ, դահլիճի երկարութամբ շար ընկած, իսկ բոլորի ետևից մեկ-մեկ գնացին երեսաները, դաստիարակներն ու դաստիարակ-

շուհիները: Սպասավորներն իրար անցան, աթոռները գոռացին, վերնատանը նվազեց երաժշտախումբը, և հյուրերը տեղավորվեցին: Կոմսի տնային երաժշտութեան հնչյուններին փոխարինեցին դանակների ու պատառաքաղների ձայները, հյուրերի խոսոցը, սպասավորների հուշիկ քայլվածքը: Սեղանի գլխին նստել էր կոմսուհին, աջ կողմը Մարիա Գմիտրիևնան, ձախ կողմը՝ Աննա Միխայլովնան և մյուս հյուրերը: Սեղանի մյուս ծայրին նստել էր կոմսը, նրանից ձախ՝ հուսար գնդապետը, աջ՝ Շինշինը և մյուս տղամարդ հյուրերը: Երկար սեղանի մի կողմը բռնել էին հասակավոր երիտասարդները, Վերան Բերգի կողքին, Պիեռը՝ Բորիսի. մյուս կողմը — երեխաները, դաստիարակներն ու դաստիարակչուհիները: Կոմսը բյուրեղյա շշերի և մրգերով լի վազերի հոտից նայում էր կրնոջն ու նրա կապույտ ժապավեններով զարդարված շամշիկին և եռանդով գինի լցնում հարևանների համար, շմոռանալով և իրեն: Կոմսուհին նույնպես, տանտիկնոջ պարտականութունները շմոռանալով, անանասների հոտից նշանակալից ակնարկներ էր նետում մարդուն, որի ճաղատն ու դեմքը՝ իրենց կարմրութեամբ, որոշակի աչքի էին ընկնում ճերմակ մազերի մեջ: Կանանց մասում տեղի էր ունենում միօրինակ փսփոսոց, իսկ տղամարդկանց մասում ձայները, քանի գնում, բարձրանում էին, մանավանդ հուսար գնդապետինը, որն ավելի ու ավելի կարմրելով, այնքան կերավ, խմեց, որ կոմսը նրան օրինակ էր բերում՝ մյուս հյուրերի համար: Բերգը քաղցրը ժպիտով խոսում էր Վերայի հետ այն մասին, թե սերը ոչ թե երկրային զգացմունք է, այլ երկնային: Բորիսը իր նոր բարեկամ Պիեռին հայտնում էր սեղանակից հյուրերի անունները և հայացքներ փոխանակում իր դեմը նստած Նատաշայի հետ: Պիեռը քիչ էր խոսում, նայում էր նոր դեմքերին ու շատ ուտում: Սկսած երկու արգանակից, որոնցից ընտրեց à la tortue¹, ձկնից պատրաստած կարկանդակից մինչև քաբրները, նա չհրաժարվեց կերակուրների ոչ մի տեսակից և ոչ մի գինուց, որ գլխավոր սպասավորը անձեռոցի մեջ փաթաթած շիշը խորհրդավորութեամբ հարևանի ուսի հոտից տալիս էր նրան, ասելով կա'մ «դրեյմադերա», կա'մ «հունգարական»:

¹ Կրիայի արգանակ:

կա'մ «տեյնվեյն»: Պիեռը կոմսի մենագիրը կրող շորս բյուրեղյա բաժակներից մեկն ու մեկը դեմ էր անում գլխավոր սպասավորի պարզած շշին ու խմում հաճույքով, ավելի ու ավելի դուրեկան արտահայտութեամբ նայելով հյուրերին: Նրա դեմը նստած Նատաշան նայում էր Բորիսին, ինչպես տասներեք տարեկան աղջիկները կնայեն մի տղայի, որի հետ հենց նոր միայն համբուրվել են և որի վրա սիրահարված են: Նատաշան այդ նույն հայացքով երբեմն նայում էր Պիեռին և Պիեռն այդ զվարճալի ու աշխույժ աղջկա հայացքի ազդեցութեան տակ ուզում էր ինքն էլ ծիծաղել, շիմանալով ինչու:

Նիկոլայը նստած էր Սոնյայից հեռու, ժյուլի Կարագինայի կողքին, և դարձյալ նույն ակամա ժպիտով ինչ-որ բան էր ասում նրան: Սոնյան ժպտում էր տոնական ժպիտով, բայց, ըստ երևույթին, տանջվում էր խանդից. մերթ գունատվում էր, մերթ կարմրում և ամեն կերպ աշխատում էր լսել, թե ինչ են խոսում Նիկոլայն ու ժյուլին: Դաստիարակչուհին անհանգիստ շուրջն էր նայում, կարծես պատրաստվում էր դիմադրել, եթե որևէ մեկը փորձեր հանկարծ երեխաներին վիրավորել: Գերմանացի դաստիարակը աշխատում էր շմոռանալ կերակուրների, անուշեղենների և գինիների բոլոր տեսակները, որ մանրամասն նկարագրի Գերմանիա՝ տնեցիներին ուղարկելիք նամակի մեջ, և շատ վիրավորվում էր, որ գլխավոր սպասավորը անձեռոցի մեջ փաթաթած շիշը իրեն չէր մոտեցնում: Գերմանացին հոնքերը կիտում էր, աշխատում էր այնպիսի տեսք ընդունել, թե ինքը չի էլ ցանկանում այդ գինուց բաժին ստանալ, բայց վիրավորվում է նրա համար, որ ոչ ոք չի ուզում հասկանալ, թե գինին իրեն հարկավոր է ո՛չ թե ծարավը հագեցնելու, ո՛չ թե ազահուսթեամբ խմելու, այլ լոկ հետաքրքրականութեան համար:

XVI

Սեղանի շուրջը՝ տղամարդկանց բաժնում խոսակցութունը գնալով աշխուժանում էր: Գնդապետը պատմեց, թե պատերազմի հայտարարութեան հրովարտակն արդեն դուրս է եկել Պետերբուրգում և թե այն օրինակը, որ ինքը տեսել է, սուրհանդակի միջոցով բերված է գլխավոր հրամանատարին:

— Եվ ինչո՞ւ համար, որ սատանան է դրդում մեզ, կովել Թոնապարտի դեմ, — ասավ Շինշինը: — Il a delà rabattu le caquet à l'Autriche. Je crains que cette fois ce ne soit notre tour¹.

Գնդապետը մարմնեղ, բարձրահասակ և տաքարյուն մարդ էր, ըստ երևույթին, լավ ծառայող ու հայրենասեր: Շինշինի խոսքերից վիրավորվեց:

— Նա համառ, բառեկամս, — ասավ նա «ր»-ի փոխարեն «ո» արտասանելով: — Նա համառ, ոռովհետև կայսուն այդ գիտի: Նա մանիֆեստում ասել է, թե չի կառող սառնասիրտ գիտել Ռուսաստանին սպառնացող վտանգը, և թե կայսրու-թյան անվտանգությունը, նա առժանապատվությունը և դաշ-նադուրությունների ստրուկությունը, — ասավ նա, չգիտես ինչու, շեշտելով առանձնապես «դաշնադրություն» բառը, կարծես դրա մեջ էր բանի ողջ էությունը:

Եվ իրեն հատուկ անսխալ, պաշտոնական հիշողությամբ կրկնեց հրովարտակի առաջին խոսքերը. «և կայսեր ցանկու-թյունը, միակ և անփոփոխ նպատակը — Եվրոպայում հաս-տատուն հիմքերի վրա խաղաղություն վերահաստատել — հար-կագրեցին նրան այժմ գործերի մի մասը շարժել դեպի արտա-սահման՝ սույն մեր մտադրությունը իրականացնելու համար»:

— Ահա ինչո՞ւ համառ, ողորմած պառոն, — եզրակաց-րեց նա, խրատական շարժումով մի բաժակ գինի խմելով և խրախուսանքի ակնկալությամբ կոմսին նայելով:

— Connaissez vous le proverbe². Երեմ, Երեմ, լավ կա-նեիր Թանդ նստեիր՝ իլիկ պտտեիր», — ասավ Շինշինը, գեմ-քը կնճռոտելով ու ժպտալով: — Cela nous convient à mer-veille³. Մի Սուվորով ունեինք՝ նրան էլ շարդեցին, a plate couture, իսկ հիմա որտեղ Սուվորովներ գտնե՞նք: Le vous demande un peu⁴, — անդադար ուսերենից ֆրանսերենի անցնելով՝ կրկնում էր նա:

¹ Նա արդեն կոտրեց Ավստրիայի գոտղությունը: Վախենում եմ, որ հիմա հերթը մերը լինի:

² Ծանոթ է ձեզ այս առածը:

³ Դա սազում է մեզ հրաշալի կերպով:

⁴ Հարցնում եմ ձեզ:

— Մենք պետք է կուլենք մինչև վեռչին կաթիլ առույն, — ասավ գնդապետը, սեղանին խփելով, — և մեռ-ո-ւնենք մեռ կայսեր համառ, և այն ժամանակ ամեն բան լավ կլինի: Եվ ինչքան ձկառ-ուելի է (նա առանձնապես երկարեց «կարելի է» բառը), ինչքան կառուելի է քիչ դատողութուններ անենք. — վերջացրեց նա, կրկին կոմսին դիմելով: — Այսպես եք կառ-ծում մենք՝ հին հուսառներս, ահա բուրբ: Իսկ դուք ի՞նչ եք կառծում, եռիտասառդ հուսառ, — ավելացրեց նա, դիմելով նիկոլային, որը, լսելով խոսքը պատերազմի մասին է, խո-սակցուհուն թողած, մեծ ուշադրությամբ ականջ էր դնում գնդապետին:

— Միանգամայն համաձայն եմ ձեզ, — պատասխանեց նի-կոլայը, ամբողջովին բռնկվելով, ափսեան պտտելով ու բաժակ-ները տեղափոխելով մի այնպիսի վճռական տեսքով, կարծես հենց այդ ըրակին իսկ ենթարկվում էր մեծ վտանգի, — ես համոզված եմ, որ ուսները պետք է մեռնեն կամ հաղթեն, — ասավ նա, ուրիշների պես ինքն էլ զգալով, որ իր խոսքերը, ներկա առիթի համար, չափազանց խանդավառ ու փքուն էին, ուստի և անհարմար:

— C' est bien beau ce que vous venez de dire¹, — ասավ նրա մոտ նստած Ժյուլին, հառաչելով: Սոնյան դողաց ամբողջ մարմնով և կարմրեց մինչև ականջները, ականջների ետևը, մինչև պարանոցն ու ուսերը այն ժամանակ, երբ նիկոլայը խոսում էր: Պիեռը լսում էր գնդապետի խոսքերը, և գլխով հավանություն տվավ:

— Ա՛յդ հիանալի է, — ասավ նա:

— Իսկական հուսառ ես, եռիտասառդ, — բացականչեց գնդապետը, նորից սեղանին խփելով:

— Ի՞նչ եք աղմկում այդտեղ, — լսվեց հանկարծ Մարիա Դմիտրիևնայի բամբ ձայնը: — Ի՞նչ ես ձեռք սեղանին խը-փում, — դարձավ նա հուսար գնդապետին, — ո՞ւմ վրա ես տաքացել. ո՞վ գիտի, կարծում ես դիմացդ ֆրանսացիներ են:

— Ես ճշմարտություն եմ ասում, — ասավ հուսարը ժրպ-տալով:

¹ Սքանչելի է, սքանչելի է, ինչ որ տուցիր:

— Պատերազմի մասին է,— գոռաց կոմսը սեղանի մի ծայրից մյուսը:— Զէ՞ որ որդիս գնում է, Մարիա Դմիտրիենա-
աւրդիս գնում է:

— Իսկ իմ շորս որդին էլ բանակումն են, բայց ես չեմ
տալսրում: Ամեն բան աստժու կամքից է կախված. տանդ պառ-
կած էլ կմեռնես, կովի մեջ էլ աստված կողորմա, — առանց
օրնէ շանքի սեղանի մյուս ծայրից հնչեց Մարիա Դմիտրիենա-
ւի թավ ձայնը:

— Այդ այդպես է:

Եվ խոսակցութիւնը կրկին կետրոնացավ — կանանցն
իրենց մասում, տղամարդկանցն՝ իրենց:

— Ա՛յ, շես կարող հարցնել, — ասում էր փոքր եղբայրը
Նատաշային, — շես կարող հարցնել:

— Կհարցնեմ, — պատասխանեց Նատաշան:

Նրա դեմքը հանկարծ բռնկվեց, արտահայտելով մի խիզախ
ու զվարթ վճռականութիւն: Նա վեր կացավ, դեմը նստած
Պիեռին հայացքով հրավիրելով լսել իրեն, և դիմեց մորը:

— Մայրի՛կ, — հնչեց սեղանովը մեկ նրա մանկական-
կրծքային ձայնը:

— Ի՞նչ ես ուզում, — հարցրեց կոմսուհին վախեցած, բայց
աղջկա դեմքից նկատելով, որ այդ շարաճճիութիւն է, ձեռք
խօտութեամբ թափ տվեց նրա վրա, գլխով սպառնական ու
բացասական շարժում անելով:

Խոսակցութիւնը լռեց:

— Մայրի՛կ, ի՞նչ կարկանդակ են մատուցելու, — հնչեց
Նատաշայի ձայնը ավելի վճռական:

Կոմսուհին ուզեց դեմքը խոժոռել, բայց չկարողացավ:
Մարիա Դմիտրիենան հաստ մատովն սպառնաց:

— Կազա՛կ, — ասավ նա սպառնալով:

Հյուրերի մեծամասնութիւնը նայում էր մեծերին, շիմա-
նալով ինչպես վերաբերվել Նատաշայի այդ շարաճճիութեանը:

— Ա՛յ, ցույց կտամ քեզ, — ասավ կոմսուհին:

— Մայրի՛կ, կարկանդակ են բերելու, — հարցրեց Նա-
տաշան բարձրաձայն. արդեն համարձակ և քմահաճորեն
ուրախ, նախապես վստահ, որ իր վարմունքը լավ ընդունե-
լութիւն կգտնի:

Սոնյան ու հաստիկ Պետյան թարնվում էին, որ իրենց
ծիծաղը շտանեն:

— Այ, տեսար, հարցրի, — շնչաց Նատաշան փոքր եղ-
բորն ու Պիեռին, որին նայեց դարձյալ:

— Պաղպաղակ, բայց քեզ չեն տա, — ասավ Մարիա Դմիտ-
րիենան:

Նատաշան տեսավ, որ վախենալու բան չկա, ուստի շվա-
խեցավ և Մարիա Դմիտրիենայից:

— Մարիա Դմիտրիենա, ի՞նչ տեսակ պաղպաղակ: Սերով
պատրաստածը չեմ սիրում:

— Գազարի:

— Զէ, ասեք, ի՞նչ տեսակ: Մարիա Դմիտրիենա, ի՞նչ
տեսակ, — գրեթե գոռաց նա: — Ուզո՞ւմ եմ իմանալ:

Մարիա Դմիտրիենան ու կոմսուհին ծիծաղեցին, նրանց
հետ և բոլոր հյուրերը: Բոլորը ծիծաղում էին ոչ թե Մարիա
Դմիտրիենայի պատասխանի վրա, այլ այդ փոքրիկ աղջկա
աներևակայելի համարձակութեան ու ճարպկութեան վրա, որ
հանդգնեց այդպես վերաբերվել Մարիա Դմիտրիենային:

Նատաշան հանգստացավ այն ժամանակ միայն, երբ
հայտնեցին, թե պաղպաղակն անանասից է: Պաղպաղակից
առաջ շամպայն տվին: Նորից երաժշտախումբը նվագեց,
կոմսը համբուրվեց կոմսուհու հետ, հյուրերը ոտքի կանգնե-
լով, շնորհավորեցին կոմսուհուն, սեղանի վրայով բաժակներ
շրխկացրին կոմսի, երեխաների և միմյանց հետ: Նորից ըս-
պասավորներն իրար անցան, աթոռները գոռացին, և նույն
կարգով, բայց ավելի կարմրած դեմքերով, հյուրերը վերա-
դարձան հյուրասարահն ու կոմսի առանձնասենյակը:

XVII

Բոստոնի սեղանները բաց արին, խմբեր կազմեցին, և
կոմսի հյուրերը տեղավորվեցին երկու հյուրասարահնում, բազ-
մոցարանում ու գրադարանում:

Կոմսը, խաղաթղթերը հովհարածն փռելով, հագիվ էր
զսպում սովորական ետճաշա քունը և ծիծաղում էր ամեն
բանի վրա: Երիտասարդութիւնը, կոմսուհու զրդումով, հա-
վաքվեց դաշնամուրի և տավիդի շուրջը: Առաջինը ժյուլէն,

բուրի խնդրանքով, տավիղի վրա մի եղանակ նվագեց իր վարիանտներով և մյուս աղջիկների հետ միասին սկսեց խընդ-րել նատաշային ու Նիկոլային, որոնք հայտնի էին իրենց երաժշտական ընդունակութամբ, որևէ բան երգելի: Նատաշան, որին դիմեցին իբրև մեծի, ըստ երևույթին շատ գոհ էր այդ բանից, բայց միաժամանակ և քաշվում էր:

— Ի՞նչ պիտի երգենք, — հարցրեց նա:

— «Աղբյուրը», — պատասխանեց Նիկոլայը:

— Դե, շուտ արեք: Բորիս, եկեք այստեղ, — ասավ նատաշան, — իսկ Սոնյան ո՞ւր է:

Նա շորս կողմը նայեց և, տեսնելով ընկերուհին սենյակում չի, վազեց նրան գտնելու:

Վազելով Սոնյայի սենյակը և, նրան այնտեղ չգտնելով, նատաշան վազեց մանկանոց — Սոնյան այդտեղ էլ չէր: Նատաշան հասկացավ, որ Սոնյան միջանցքի սնդուկի վրա կլինի: Միջանցքում դրված սնդուկը Ռոստոլնիցի տան իգական մատաղ սերնդի տիրութայն վայրն էր: Իսկապես, Սոնյան իր եթերային, վարդագույն զգեստով երեսնիվայր պառկել էր դայակի կեղտոտ շերտավոր ներքնակին՝ սնդուկի վրա և, մատներով երեսը ծածկած, հեկեկում էր, մերկ ուսերը ցնցելով: Նատաշայի դեմքը, որ ամբողջ օրն աշխույժ ու տոնական էր, հանկարծ փոխվեց. աչքերը սառեցին, ապա դողաց նրա լայն պարանոցը և բերանի անկյուններն իջան:

— Սոնյա՛, Ի՞նչ է... Ի՞նչ, Ի՞նչ է պատահել քեզ: Ը՞ր՞ը՞...

Եվ նատաշան, մեծ բերանը լայն բանալով ու բուրբուլիս տգեղանալով, սկսեց երեխայի պես բարձրաձայն լաց լինել, չիմանալով պատճառը և միայն նրա համար, որովհետև Սոնյան լաց էր լինում: Սոնյան ուզեց դուրսը բարձրացնել, ուզեց պատասխանել, բայց չկարողացավ և երեսն ավելի թաքցրեց: Նատաշան լաց լինելով նստեց կապույտ ներքնակի վրա ու ընկերուհուն գրկեց: Ինքն իրեն հավաքելով՝ Սոնյան բարձրացավ, արցունքները սրբեց ու սկսեց պատմել.

— Նիկոլենկան մի շաբթից հետո գնում է, նրա... թուղթը... դուրս է եկել... ինքն ինձ ասավ... Բայց ես լաց չէի լինի... (նա ցույց տվեց ձեռին բռնած մի թուղթ — Նիկոլայի գրած ոտանավորները) ես էլի լաց չէի լինի, բայց դու շես կարող... Ոչ ոք չի կարող հասկանալ... Թե նա ինչ սիրտ ունի:

Եվ նա նորից սկսեց լաց լինել, որ Նիկոլայի սիրտը շատ բարի է:

— Քո բանը լավ է... քեզ չեն նախանձում... ես քեզ սիրում եմ, նույնպես և Բորիսին, — ասում էր Սոնյան, փոքրինչ իրեն հավաքելով, — նա համակրելի է... ձեզ համար արգելքներ չկան: Իսկ Նիկոլայն իմ cousin-ն է... պետք է որ... միտքդ պոչիտն ինքը... այդ էլ չի կարելի: Եվ հետո, եթե մայրիկը... (Սոնյան կոմսուհուն թե՛ մայրիկ էր համարում և թե՛ մայրիկ էր ասում), նա կասի, որ ես Նիկոլայի ապագան փչացնում եմ, որ ես անսիրտ եմ, ապերախտ, բայց ճիշտը... աստված վկա (նա խաչակնքեց), ես այնպես եմ սիրում մայրիկին, և ձեզ բուրբուլ, միայն Վերան է մեծնակ... Ինչո՞ւ համար: Ես նրան ի՞նչ եմ արել: Ես այնքան երախտապարտ եմ ձեզ, որ ուրախությամբ ամեն ինչ կզոհեմ, բայց բան չունեմ...

Սոնյան այլևս չկարողացավ խոսել և գլուխը նորից թաքցրեց ձեռների ու ներքնակի մեջ: Նատաշան սկսեց հանգստացնել, բայց դեմքից երևում էր, որ զգում-հասկանում է ընկերուհու վշտի ամբողջ լրջությունը:

— Սոնյա՛, — ասաց նա հանկարծ, կարծես գուշակելով ընկերուհու վշտի իսկապես պատճառը: — Վերան, Վերան խոսել է ճաշից հետո: Այո՞:

— Այո, այս ոտանավորն ինքը Նիկոլայն է գրել, իսկ ես արտագրել եմ ուրիշներն էլ. Վերան դրանք տեսավ սեղանիս վրա և ասավ, որ ցույց է տալու մայրիկին, ու ավելացրեց, թե ես ապերախտ եմ, թե մայրիկը երբեք թույլ չի տա, որ Նիկոլայն ամուսնանա ինձ հետ, թե Նիկոլայն ամուսնանալու է ժյուլիի հետ: Տեսնում ես՝ նա ամբողջ օրը ժյուլիի հետ էր... Նատաշա՛: Ինչո՞ւ համար...

Եվ նորից լաց եղավ առաջվանից ավելի դառնագին: Նատաշան պառկած տեղից բարձրացրեց նրան, գրկեց և, արցունքների միջից ժպտալով, սկսեց հանգստացնել նրան:

— Սոնյա, դու նրան մի հավատա, մի հավատա: Հիշո՞ւմ ես, ինչպես երեքով բազմոցաբանում խոսում էինք Նիկոլենկայի հետ. հիշո՞ւմ ես, ընթրիքից հետո: Մենք ամեն բան վճռեցինք, թե ինչպես պիտի լինի: Չեմ մտաբերում ինչպես, բայց հիշո՞ւմ ես, ինչպես ամեն բան լավ էր և հնարավոր: Ա՛յ մորեղբայր Երևիների եղբայր՝ ամուսնացել է մորաբուռ աղջկա

հետ, իսկ մենք չէ՞ որ երրորդ աստիճանի ազգականներ ենք: Եվ Բորիսն ասում էր, որ դա հնարավոր է: Գիտես, ես ամեն բան պատմեցի: Իսկ նա այնքան խելացի, այնքան լավն է, — ասավ նատաշան: — Սոնյա, լաց մի լինի, սիրելիս, հոգիս, Սոնյա: — Եվ նա համբուրեց նրան, ծիծաղելով: — Վերան շա՛ր է, աստված նրա հետ: Ամեն բան լավ կլինի, նա մայրիկին չի ասի: Նիկոլենկան ինքը քեզ կասի, որ ինքը ժյուլիի մասին չի էլ մտածել:

Եվ նա համբուրեց Սոնյայի գլուխը: Սոնյան վեր կացավ, և կատվիկը նորից կենդանացավ, աչքերը պսպղացին, և նա, թվում էր, պատրաստ է պոչը շարժել, ցատկել փափուկ թաթերի վրա ու նորից խաղալ կծիկի հետ, ինչ որ սազում էր իրեն:

— Կարծո՞ւմ ես: Իսկապե՞ս: Աստված վկա՞, — ասավ նա, արագ-արագ զգեստներն ուղղելով:

— Իսկապե՞ս, աստված վկա՞, — պատասխանեց նատաշան, ուղղելով ընկերուհու հյուսքի տակից դուրս ընկած մազերի փունջը:

Եվ նրանք երկուսն էլ ծիծաղեցին:

— Դե, գնանք «Աղբուրը» երգենք:

— Գնանք:

— Գիտես, այդ հաստ Պիեռը, որ իմ դեմն էր նստած, այնքա՛ն ծիծաղելի է, — ասավ հանկարծ նատաշան, կանգ առնելով: — Ես շա՛տ ուրախ եմ:

Եվ նատաշան վազեց միջանցքով:

Սոնյան, զգեստին կպած փետուրները թափ տալով և ոտանավորը ծոցը դնելով, թեթև, ուրախ քայլերով, շիկնած դեմքով՝ նատաշայի ետևից միջանցքով վազեց բազմոցարան: Հյուրերի խնդրանքով երիտասարդները երգեցին «Աղբուրը» կվարտետը, որը բոլորին շատ դուր եկավ. հետո Նիկոլայը երգեց նոր սովորած երգը:

Լուսնյակ գիշերին, սիրուն գիշերին.
Երջանկութուն է երգել մենակ,
Թե աշխարհիս վրա մի ուրիշ կա,
Ու մտածում է և քո վրա.
Եվ որ նա սիրուն մատներով
Ոսկե տավիղի թելերի վրա

Իր անուշ ու կրթոտ նվագով
Կանչում է իր մոտ, կանչում է քեզ:
Մի երկու օր էլ, ու դրախտը կրացվի...
Բայց ա՛խ, սիրեցյալդ այդ չի տեսնի:

Վերջին խոսքերը դեռ չէր երգել-վերջացրել, երբ դահլիճում երիտասարդությունը պատրաստվեց պարի և երաժիշտներն սկսեցին ոտքերով աղմկել ու հազալ:

Պիեռը նստել էր հյուրասրահում, ուր Շինշինը նրա, իրրկ արտասահմանից նոր եկածի հետ սկսեց, Պիեռի համար տաղտկալի, քաղաքական մի զրույց, որին շուտով միացան և ուրիշները: Երբ նվազը հնչեց, նատաշան եկավ հյուրասրահ և, ուղիղ Պիեռին մոտենալով, ծիծաղելով ու շիկնելով, ասավ.

— Մամաս պատվիրեց ձեզ պարի հրավիրել:

— Վախենում եմ ֆիզուրները շփոթեմ, — ասավ Պիեռը, — բայց եթե ուզում եք իմ ուսուցիչը լինել...

Եվ նա իր հաստ ձեռն իջեցնելով՝ մեկնեց փոքրիկ բարակիկ աղջկան:

Մինչ զույգեր էին կազմվում և երաժշտախումբը պատրաստութուն էր տեսնում, Պիեռն իր փոքրիկ դամայի հետ նստեց. նատաշան կատարելապես երջանիկ էր. նա պիտի պարեր արտասահմանից եկած հասակավոր մարդու հետ: Նստել էր բոլորի աչքի առաջ ու մեծի պես զրուցում էր Պիեռի հետ: Ձեռին հովհար ունեյր, որ մի օրիորդ տվել էր նրան պահելու: Եվ, աշխարհիկ դիրք ընդունելով (աստված գիտի, թե երբ և որտեղ էր սովորել այդ) նա հովհարելով ու ժպտալով, խոսում էր իր կավալերի հետ:

— Սրան տեսեք, մի սրան նայեցեք, — ասավ կոմսուհին դահլիճից անցնելով ու նատաշային ցույց տալով:

Նատաշան կարմրեց ու ծիծաղեց:

— է, ի՞նչ կա որ, մամա. ի՞նչ կա ծաղրելու, ի՞նչ կա այստեղ զարմանալի:

սրբորդ չճառե զի կհարն աթոռներն աղմուկով շարժվեցին հյուրասրահում, ուր թուղթ էին խաղում կոմսն ու Մարիա Դմիտրիևնան, և պատվավոր հյուրերի մեծ մասն ու ծերունիները, երկար նստելուց հետո ձգվելով և թղթապանակներն ու քսակները գրպանները դնելով՝ դահլիճի դռնից մտան ներս: Առջևից գալիս էր Մարիա Դմիտրիևնան՝ կոմսի հետ — երկուսն էլ ուրախ դեմքով: Կոմսը սիրակատակ քաղաքավարութեամբ, մի տեսակ պարահանդիսային ձևով, թեք տվեց Մարիա Դմիտրիևնային: Կոմսն ուղղվեց և նրա դեմքը լուսավորվեց ջահլուծթյան-խորամանկ ժպիտով, և հենց որ պարեցին էֆոսեզի վերջին Ֆիգուրը՝ նա ծափահարեց երաժիշտներին և ձայն տրվեց առաջին ջութակին,

— Սիմոն: Դանիլո Կուպորը գիտե՞ս:

Դա կոմսի սիրած պարն էր, որ պարել էր դեռ ջահել ժամանակը (Դանիլո Կուպորն իսկապես անգլիեզի մի Ֆիգուրն էր):

— Հայրիկին նայեցեք, — գոչեց նստաշան դահլիճովը մեկ (բոլորովին մոռանալով, որ ինքը պարում է մեծի հետ), գանգրահեր գլուխը մինչև ծնկներն իջեցնելով ու իր հնչուն ծիծաղով դահլիճը լցնելով:

Իսկապես, բոլորը, ովքեր կային դահլիճում, հրճվանքով նայում էին ուրախ ծերուկին, որն իր մեծավայելուց դամայի՝ իրենից բարձրահասակ Մարիա Դմիտրիևնայի հետ, թևերը շարժում էր տակտով, ուսերը կոտրտում, ոտները խաղացնում, թեթևակի հատակին խփելով, և կլոր դեմքին հետզհետե ավելի ու ավելի աճող ժպիտով հյուրերին նախապատրաստում էր այն բանին, ինչ տեղի էր ունենալու: Հենց որ Դանիլո Կուպորի ուրախ ու գրգռիչ հնչյունները լսվեցին, դահլիճի բոլոր դռների մեջ երևացին՝ մի կողմից տղամարդ, մյուս կողմից կին սպասավորների ժպտուն դեմքերը, որ եկել էին զվարճացող աղային տեսնելու:

— Մեր աղան՝ արծի՛վ է, արծի՛վ, — ասավ դայակը բարձրաձայն, դուռն միջից:

Կոմսը լավ պարում էր և ինքը գիտեր այդ, բայց նրա դաման բոլորովին չէր կարողանում ու չէր ցանկանում լավ պարել: Նրա վիթխարի մարմինը մնացել էր ուղիղ՝ կախ ընկած ահագին թևերով (նա ուղիկյուր տվել էր կոմսուհուն). պարում էր միայն նրա խիստ, բայց զեղեցիկ դեմքը: Այն, ինչ արտա-

հայտում էր կոմսի հաստ ու կլոր մարմինը, նույնն արտահայտում էր Մարիա Դմիտրիևնայի հետզհետե ժպտուն դարձող դեմքը և վեր ցցվող քիթը: Սակայն, եթե կոմսը ավելի ու ավելի ոգևորվելով՝ հանդիսականներին հիացնում էր ճարպիկ ոլորուն շարժումների անսպասելիությամբ և իր փափուկ ոտների թեթև ուսույուններով, Մարիա Դմիտրիևնան՝ ուսերի շարժման և բազուկները ոլորելու ամենափոքրիկ ճիգովն իսկ, հիբավի, թողնում էր ոչ պակաս տալավորություն, ինչ որ գնահատում էր ամեն ոք, նկատի առնելով նրա մարմնի գիրությունը և մշտական խիստ լրջությունը: Պարը գնալով ավելի ու ավելի աշխուժանում էր: Մյուսները մի վայրկյան իսկ ուշադրություն չէին գրավում և նույնիսկ չէին էլ հոգում այդ մասին: Բոլորն էլ զբաղված էին կոմսով ու Մարիա Դմիտրիևնայով: Նստաշան, բոլոր ներկա եղողների թևքն ու փեշերը քաշելով, պահանջում էր, որ հորը նայեն, որոնք առանց այդ էլ աչք չէին հեռացնում այդ պարողներից: Կոմսը պարի ընդմիջումներին ծանր շնչում էր, ձեռները թափահարում ու ձայն տալիս երաժիշտներին, որ նվագն արագացնեն: Ու արագ, արագորեն ու արագորեն դառնում էր կոմսը, մերթ ոտքի ծայրերի, մերթ կրունկների վրա պտտվելով Մարիա Դմիտրիևնայի շուրջը և, վերջապես, դամային տանելով դեպի իր տեղը, արավ վերջին պան, ետևից վեր բարձրացնելով իր փափուկ ոտքը, ժպտուն դեմքով խոնարհելով քրտնած գլուխը և աչ ձեռը. թափահարեց շրջանաձև՝ ծափահարություն ու ծիծաղի որոտի մեջ. ծիծաղում էր մանավանդ նստաշան: Երկու պարողներն էլ կանգ առան, ծանր շնչելով ու բատիստե թաշկինակով երեսները սրբելով:

— Ահա ինչպես էին պարում մի ժամանակ, ma chère, — ասավ կոմսը:

— Այ գիտի Դանիլո Կուպոր, — ծանր, երկար շունչ առնելով և թևքերը վեր քաշելով, ասավ Մարիա Դմիտրիևնան:

XVIII

Այն ժամանակ, երբ Ռոստովների դահլիճում հոգնածությունից սխալ նվազող երաժիշտների նվագի տակ պարում էին վեցերորդ անգլիզը, և հոսիած սպասավորներն ու խոհա-

րարն ընթրիք էին պատրաստում, կոմս Բեզուխովն ստացավ կաթվածի վեցերորդ հարվածը: Բժիշկները հայտարարեցին, որ առողջանալու հույս չկա այլևս: Հիվանդին լուռ խոստովանեցրին ու հաղորդեցին. պատրաստութուն էին տեսնում վերջին օժման համար, և տան մեջ, որ սովորական է այդպիսի բուպեններին, իրարանցում ու սպասումի տազնապ էր տիրում: Գուրսը, տան դարպասների մոտ, եկող կառքերից թաքնվելով, խմբվել էին դազադագործները, սպասելով հարուստ պատվերի՝ կոմսի թաղման համար: Մոսկվայի գլխավոր հրամանատարը, որ անդադար համհարզներ էր ուղարկում կոմսի վիճակն իմանալու, այս երեկո ինքն եկավ անձամբ վերջին հրաժեշտը տալու անվանի եկատերինյան ավազանի կոմս Բեզուխովին:

Փառահեղ ընդունարանը լիքն էր: Բոլորը հարգանքով ոտի կանգնեցին, երբ գլխավոր հրամանատարը, մոտ կես ժամ հիվանդի մոտ մնալուց հետո, դուրս եկավ այնտեղից, թեթևակի պատասխանելով գլխով արված բարեններին և աշխատելով որքան կարելի է շուտ անցնել հայացքներն իր վրա սևեռած բժիշկների, հոգևորականների ու ազգականների մոտով: Իշխան Վասիլին, որ նիհարել ու գունատվել էր այս քանի օրը՝ ճանապարհ էր դնում գլխավոր հրամանատարին և ցած ձայնով ինչ-որ կրկնեց նրան մի քանի անգամ:

Գլխավոր հրամանատարին ճանապարհ դնելով՝ իշխան Վասիլին դահլիճի մեջ մեկուսի նստեց մի աթոռի, ոտը ոտի վրա գցելով, արմունկը հենեց ծնկանն ու աչքերը ծածկեց ձեռով: Մի առ ժամանակ այդպես նստելով՝ վեր կացավ ու անսովոր-արագ քայլերով, վախեցած աչքերով շուրջը նայելով, երկար միջանցքով գնաց տան ետին հարկաբաժինը՝ ավագ իշխանագետեր մոտ:

Թույլ լուսավորված ընդունարանում գտնվողներն անհավասար շշուկով խոսում էին միմյանց հետ ու լուռ մտնեց անգամ և հարցական ու սպասողական հայացքներով նայում մահամերձի սենյակը տանող դռան, որ թույլ ճռինչ էր արձակում, երբ մեկը ներս էր մտնում կամ դուրս էր գալիս այնտեղից:

— Մարդկային վախճանը, — ասավ ծերուկ հոգևորականը

մոտը նստող և իրեն միամտորեն ունկնդրող կնոջը, — վախճանը սահմանված է, և այն անցնել չի կարելի:

— Արդյոք ուշ չէ՞ վերջին օժման համար, — հոգևոր կոչումն ավելացնելով՝ հարցրեց կինը, կարծես այդ մասին իր սեփական կարծիքը չունենալով:

— Խորհուրդը, քույրիկ, մեծ է, — պատասխանեց հոգևորականը, ձեռքը քսելով ճաղատին, որի վրա պառկած էին մի քանի փունջ սանրած ալեխառն մազեր:

— Դա ո՞վ էր, ինքը գլխավոր հրամանատարը, — հարցրին սենյակի մյուս ծայրում: — Ի՞նչ առույգ է երևում...

— Բայց յոթանասունի մեջ է: Ի՞նչ, ասում են, որ կոմսն էլ մարդ չի ճանաչում: Ուզում էին օծել:

— Մեկին ճանաչում էի՝ յոթն անգամ օծվեց:

Երկրորդ իշխանագուստը դուրս եկավ հիվանդի սենյակից արցունքոտ աչքերով և նստեց բժիկ Լոռենի մոտ, որը վայելուչ դիրքով, նստել էր Եկատերինյայի պատկերի ներքո, սեղանին կրթնած:

— Très beau, — ասավ բժիշկը, պատասխանելով եղանակի մասին արած հարցումին, — très beau, princesse, et puis, à Moscou on se croit à la campagne¹.

— N'est-ce-pas?², — ասավ իշխանագուստը հառաչելով: — Ուրեմն նա կարո՞ղ է խմել:

Լոռենը մտածեց մի փոքր:

— Դեղն ընդունե՞ց:

— Այո:

Բժիշկը նայեց ժամացույցին:

— Վերցրեք մի բաժակ եռացրած ջուր և դրեք une pincée (նա իր բարակ մատներով ցույց տվեց թե ինչ է նշանակում une pincée) de cremortartari³...

— Դեռ չի պատասխած, — ասում էր գերմանացի բժիշկը մի աղյուտանտի, — ու կաթսվածի երեռոգ խառվածից հետո մառդ կենդանի մնա:

¹ Հիանալի եղանակ է, իշխանուհի, և հետո Մոսկվան այնպես նման է գյուղի:

² Այնպես չէ՞:

³ Մի պողունց կրեմորտարտարի:

— Բայց ի՞նչ թարմ մարդ էր, — ասավ աղյուստանուրը: — Եվ ո՛ւմ է մնալու այս հարստութիւնը, — ավելացրեց նա շշուկով:

— Յանկացող կգտնվի, — ժպտալով պատասխանեց գերմանացին:

Բոլորը նորից դուանը նայեցին, որը ճոնչաց, և երկրորդ իշխանադուստրը, Լոռենի ցուլց տված ըմպելիքը պատրաստած, տարավ հիվանդին: Գերմանացի բժիշկը մոտեցավ Լոռենին:

— Կարո՞ղ է մինչև վաղը առավոտ ապրել, — հարցրեց գերմանացին վատ ֆրանսերենով:

Լոռենը շրթները սեղմելով, խստութեամբ ու բացասաբար մատը շարժեց իր քթի առաջ:

— Այս գիշեր, ոչ ուշ, — ասավ նա կամաց, ինքնագոհ ժպտով, որ ցուլց էր տալիս, թե միայն ինքն է հասկանում հիվանդի վիճակն, ու գնաց:

Մինչ այդ իշխան Վասիլին բաց արավ իշխանադուստր սենյակի դուռը:

Սենյակում կիսախավար էր տիրում. միայն երկու կանթեղ էր վառվում սրբապատկերների առաջ. օդը լցված էր խնկի ու ծաղիկների դուրեկան հոտով: Ամբողջ սենյակը սարքավորված էր մանր կահերով — փոքրիկ պահարաններով ու սեղաններով: Պարտակի ետևից երևում էին փետրյա բարձր աճկողներու ճերմակ ծածկոցները: Շնիկը հաշեց:

— Ախ, այդ դո՞ւք եք, mon cousin.

Իշխանադուստրը վեր կացավ և շտկեց մագերթը, որոնք միշտ, ինչպես և այժմ, անսովոր կոկ էին՝ այնպես, կարծես գլխի հետ մի կտորից էին շինված ու լաքով պատված:

— Ի՛նչ է. բան պատահե՞ց, — հարցրեց նա: — Ես այնպես վախեցա:

— Ոչինչ, նույնն է. ես եկա քեզ հետ, Կատիշ, գործի մասին խոսելու, — ասավ իշխանը, հոգնած նստելով հենց այն բազկաթոռին, որից վեր կացավ իշխանադուստրը: Ինչքան

տաքացրել ես, — ասավ նա, — դե, նստիր այստեղ, causons¹.

— Կարծեցի բան է պատահել, — ասավ իշխանադուստրը և իր դեմքի անփոփոխ քարե-խիստ արտահայտութեամբ նստեց իշխանի դիմաց, պատրաստվելով նրան լսելու:

— Ուզեցի քեզ, mon cousin, բայց շեմ կարողանում:

— Հը, ի՛նչ կա, սիրելիս, — ասավ իշխան Վասիլին, բռնելով իշխանադուստրի ձեռքն ու, ըստ սովորութեան, ցած թեքելով:

Նրևում էր, որ այդ «հը, ինչ կա»-ն վերաբերվում էր շատ բաների, որ առանց անունը տալու, երկուսն էլ հասկանում էին արդեն:

Ոտների համեմատ անհամաչափ-երկար, չոր և ուղիղ իրանով իշխանադուստրը անտարբեր և ուղիղ նայում էր իշխանին իր դուրս ընկած գորշ աչքերով: Նա գլուխն օրորեց և, հառաչելով, նայեց սրբապատկերներին: Նրա այդ շարժումը կարելի էր բացատրել, թե՛ որպես վշտի ու անձնվիրութեան արտահայտություն և թե՛ որպես հոգնածութեան և շուտով հանգստանալու բաղձանք: Իշխան Վասիլին այդ շարժումը բացատրեց որպես հոգնածութեան արտահայտություն:

— Իսկ ինձ համար, — ասավ նա, — կարծում ես հե՞շտ է: Je suis éreinté, comme un cheval de poste². Այնուամենայնիվ հետո պիտի խոսեմ, Կատիշ, և շատ լուրջ:

Իշխան Վասիլին լռեց, և նրա այտերն սկսեցին նյարդայնորեն ձգվել մերթ այս, մերթ այն կողմի վրա, դեմքին տալով անհաճո արտահայտություն, ինչ որ չէր երևում նրա դեմքին, երբ նա հյուրասրահներում էր լինում: Աչքերն էլ այնպես շէին, ինչպես միշտ. մերթ նայում էին լպիրշ-հանաքով, մերթ երկյուղով դիտում շուրջը:

Իշխանադուստրը իր չոր, նիհար ձեռներով շնիկը ծնկներին պահած, ուշադիր նայում էր իշխան Վասիլիի աչքերի մեջ. բայց երևում էր, որ նա որևէ հարցով լուռությունը չի խզելու, թեև ուզում ստիպված լինի լռել մինչև առավոտ:

— Ա՛յ տհա՛նում եք, սիրելի իշխանադուստր և քուզինս, Կատերինա Սիմյոնովնա, — շարունակեց իշխան Վասիլին,

¹ Զրուցենք:

² Ես ուժնապառ եմ եղել փոստի ձեռն նման:

ըստ երևույթին, ներքին պայքարով շարունակելով իր խոսքը, — այսպիսի ընդհանրություն ամեն ինչի մասին պիտի մտածել: Պետք է մտածել ապագայի մասին, ձեր մասին... Ես ձեզ բոլորիդ զավակներին պես սիրում եմ, ինչպես գիտես:

Իշխանազուտորը շարունակում էր անփայլ աչքերով ու անշարժ նայել նրան:

— Վերջապես, պետք է մտածել և ընտանիքի մասին, — բարկացած հրելով առջևի փոքրիկ սեղանը և, առանց խոսակցին նայելու, շարունակեց իշխան Վասիլին, — դու գիտես, Կատիշ, որ դուք՝ Մամոնտով երեք քույրերդ և մեկ էլ կինս, միայն մենք ենք կոմսի անմիջական ժառանգները: Գիտեմ, գիտեմ, որքան ծանր է քեզ համար խոսել ու մտածել այսպիսի բաների մասին: Ինձ համար էլ հեշտ չի. բայց, սիրելիս, ես վաթսուներեք եմ, պետք է ամեն բանի պատրաստ լինել: Դու գիտե՞ս, որ ես մարդ ուղարկեցի Պիեռի ետևից, որովհետև կոմսը, նրա պատկերը ցույց տալով, պահանջեց կանչել նրան իր մոտ:

Իշխան Վասիլին հարցական նայեց իշխանազուտոր, բայց չկարողացավ հասկանալ, թե նա ըմբռնեց արդյոք իր ասածները, թե միայն նայում էր իրեն...

— Ես շարունակ միայն մի բան եմ խնդրում աստծուց, mon cousin, — պատասխանեց իշխանազուտորը, — որ նա զբաղվի նրան, որ նրա բարի հոգին խաղաղությամբ թողնի այս...

— Այո, այդ այդպես է, — անհամբերությամբ շարունակեց իշխան Վասիլին, ճաղատք շփելով, և նորից բարկությամբ դեպի իրեն քաշեց մի կողմ հրած փոքրիկ սեղանը, — բայց, վերջապես... վերջապես, բանն այն է, դու ինքդ գիտես, որ անցյալ ձմեռ կոմսը կտակ է գրել, որով իր ամբողջ կարողությունը թողնում է Պիեռին, անտեսելով անմիջական ժառանգներին ու մեզ:

— Ի՞նչ անենք գրել է, — հանգստությամբ ասավ իշխանազուտորը: — Բայց Պիեռին կտակել չէր կարող: Պիեռը ապօրինի զավակ է:

— Ma chère, — ասավ հանկարծ իշխան Վասիլին, սեղանը կրծքին սեղմելով, աշխուժով ու արագ-արագ, — բայց ի՞նչ կասես, որ թագավորին նամակ է գրված, և կոմսը խնդրում է

որդեղրել Պիեռին: Հասկանում ես, նկատի ունենալով կոմսի ծառայությունները, նրա խնդիրքը կհարգվի...

Իշխանազուտորը ժպտաց, ինչպես ժպտում են այն մարդիկ, որոնք կարծում են, թե խոսակցից ավելի շատ բան գիտեն գործի մասին:

— Ես քեզ ավելին կասեմ, — շարունակեց իշխան Վասիլին, խոսակցի ձեռք բռնելով, — նամակը գրվել է, բայց չի ուղարկվել, և թագավորն իմացել է այդ մասին: Այժմ խնդիրն այն է, թե արդյոք ոչնչացված է այդ նամակը, թե ոչ: Եթե ոչ, այն ժամանակ, երբ ամեն ինչ վերջանա, — իշխան Վասիլին հառաչեց, ուզելով հասկացնել՝ թե ինչ է ուզում ասել ամեն ինչ վերջանա բառերով, — կոմսի թղթերը կբանան, կտակը նամակի հետ կհանձնեն կայսեր, և նրա խնդիրը, հավանորեն, կհարգվի: Պիեռը իբրև օրինական զավակ, կստանա ամբողջ ժառանգությունը:

— Հապա մեր բաժի՞նը, — հարցրեց իշխանազուտորը մի այնպիսի հեզնական ժպիտով, թե ամեն ինչ կարող է պատահել, բայց այդ երբեք:

— Mais, ma pauvre Catiche, c'est clair, comme le jour¹. Այն ժամանակ միայն Պիեռը կլինի օրինական ժառանգը, իսկ դուք ա՛յ այս էլ չեք ստանա: Դու պետք է իմանաս, սիրելիս, գրվե՞լ են արդյոք կտակն ու նամակը և ոչնչացվե՞լ են արդյոք: Եվ եթե ինչ-ինչ պատճառներով մոռացվել են, դու պետք է իմանաս՝ որտեղ են դրանք, և գտնես, որովհետև...

— Ա՛յդ էր պակաս, — ընդհատեց նրան իշխանազուտորը, հեզնորեն ժպտալով ու աչքերի արտահայտությունը շփոխելով: — Ես կին եմ. ձեր կարծիքով մենք բոլորս հիմար ենք. բայց ես այսքանը միայն գիտեմ, որ ապօրինի զավակը չի կարող ժառանգել... Un bâtard², — ավելացրեց նա, կարծելով այդ թարգմանությամբ վերջնականապես ապացուցել իշխանին, թե որքան անհիմն են նրա ասածները:

— Ի՞նչպես դու չես հասկանում, վերջապես, Կատիշ՝ Դու այնքան խելացի ես. ի՞նչպես չես հասկանում, որ եթե կոմսը թագավորին նամակ է գրել, որով խնդրում է Պիեռին

¹ Բայց, թանկագին Կատիշ, դա լույսի պես պարզ է:

² Ապօրինի:

ճանաչել օրինավոր զավակ, նշանակում է, Պիեռն այլևս Պիեռ չէ, այլ կոմս Բեզուխով, այն ժամանակ նա, կտակի համաձայն, կստանա բոլորը: Եվ եթե կտակը նամակի հետ միասին ոչընչացված չեն, այն ժամանակ քեզ կմնա միայն մխիթարվել, որ դու եղել ես առաքինի et tout, ce qui s'en suit¹. Այս ճիշտ է:

— Ես գիտեմ, որ կտակը դրված է. բայց գիտեմ նույնպես, որ այն իսկականի արժեք չունի, և դուք ինձ, կարծեմ, բողոքողին հիմարի տեղ եք դնում, mon cousin, — ասավ իշխանազուստը այնպիսի արտահայտությամբ, որով խոսում են կանայք, կարծելով, թե իրենց ասածը սրամիտ ու վիրավորական մի բան է:

— Սիրելիդ իմ, իշխանազուստը կատերինա Սեմյոնովնա, — անհամբերությամբ խոսեց իշխան Վասիլին: — Ես քեզ մոտ եկել եմ ոչ թե նրա համար, որպեսզի իրար վիրավորենք, այլ նրա համար, որպեսզի իբրև հարազատի, լավ, բարի, իսկական հարազատի հետ խոսենք հենց թո շահերի մասին: Ես քեզ տասերորդ անգամն է ասում եմ, որ եթե թագավորի անուկնով նամակ և Պիեռի օգտին կտակ կա կոմսի թղթերի մեջ, այդ գեպքում, դու աղավնջակա, և քույրերդ — ժառանգ չեք: Եթե ինձ չես հավատում, հավատա գիտցող մարդկանց. ես քիչ առաջ խոսեցի Դմիտրի Օնուֆրիչի հետ (դա տան փաստաբանն էր), նա էլ նույնն ասավ:

Ըստ երևույթին, իշխանազուստը մտքերի մեջ հանկարծ ինչ-որ փոփոխություն տեղի ունեցավ. նուրբ շրթները դունատվեցին (աչքերը մնացին նույնը) և ձայնը, երբ սկսեց խոսել, բեկբեկվում էր այնպիսի ելևէջներով, որ նա ինքն էլ, երևի, չէր սպասում:

— Այդ լավ կլիներ, — ասավ նա: — Ես ոչ մի բանի վրա չեմ չեմ ունեցել և չունեմ:

Նա շանը ցած գցեց ծնկներից և զգեստի ծալքերն ուղղեց:

— Ահա քեզ շնորհակալություն, ահա քեզ երախտագիտություն այն մարդկանց հանդեպ, որոնք ամեն տեսակ զոհողություն են արել նրա համար, — ասավ նա: — Սքանչելի է: Հիանալի: Ինձ ոչ մի բան էլ հարկավոր չի, իշխան:

— Այո, բայց դու մենակ չես, քույրեր ունես, — պատասխանեց իշխան Վասիլին:

Բայց իշխանազուստը նրան չէր լսում:

— Այո, ես այդ վաղուց գիտեի, բայց մոռացել էի, որ բացի ստորությունից, խաբուսթյունից, նախանձից, բանասարկությունից, բացի ապերախտությունից, ամենասև ապերախտությունից բացի, ես ուրիշ ոչինչ չէի կարող սպասել այս տան մեջ...

— Բայց արդյոք կտակի տեղը գիտե՞ս թե ոչ, — հարցրեց իշխան Վասիլին, և նրա այտերն ավելի ցնցվեցին, քան առաջ:

— Այո, ես հիմար էի, ես դեռ հավատում էի մարդկանց և սիրում էի նրանց ու զոհաբերում ինձ: Բայց հաջողություն ունեն միայն նրանք, ովքեր ստոր են ու գարշելի: Գիտեմ ո՛ւմ դավերն են դրանք:

Իշխանազուստը ուղեց վեր կենալ տեղից, բայց իշխանը բռնեց ձեռը: Իշխանազուստը այնպիսի տեսք ունեցավ, որ կարծես միանգամից հիասթափվել էր մարդկային ողջ ցեղից. նա զայրույթով նայում էր խոսակցին:

— Դեռ ժամանակ կա, բարեկամս: Հիշիր, կատիշ, որ բողոքն արվել է պատահաբար, ցասման մեջ, հիվանդության ընթացքին, ու ապա մոռացվել: Մեր պարտականությունն է, սիրելիս, ուղղել այդ սխալը, թեթևացնել նրա վերջին բույաները նրանով, որ թույլ շտանք նրան այդ անարդարությունն անելու, շթողնենք, որ նա մեռնի այն գիտակցությամբ, թե ինքը դժբախտացրել է այն մարդկանց...

— Այն մարդկանց, որոնք ամեն ինչ զոհաբերել են նրա համար, — վրա բերավ իշխանազուստը, ջանալով նորից ոտքի ելնել, բայց իշխանը շթողեց, — ինչ որ նա երբեք չի կարողացել զնահատել: Ոչ, mon cousin, — ավելացրեց նա հառաչելով, — պիտի հիշեմ, որ աշխարհում վարձատրություն չի կարելի սպասել, որ այս աշխարհում չկա ո՛չ ազնվություն, ո՛չ արդարություն: Այս աշխարհում պետք է լինել խորամանկ ու շար:

— է, voyons¹, հանգստացիր, ես գիտեմ թո բարի սիրտը:

— Ոչ, ես շար սիրտ ունեմ:

¹ Եվ բոլորը, ինչ բխում է այստեղից:

¹ Տեսնենք:

— Ես գիտեմ քո սիրտը, — կրկնեց իշխանը, — գնահատում եմ քո բարեկամութիւնը և կցանկանայի, որ դու նույն կարծիքն ունենաս իմ մասին: Հանգստացիր և parlons raison¹, քանի դեռ ժամանակ կա — գուցե մի ամբողջ օր, գուցե՝ մի ժամ: Պատմիր բոլորը, ինչ գիտես կտակի մասին, և, որ զխաչորն է, ասա՝ որտե՞ղ է պահւած. դու պետք է որ իմանաս: Մենք հենց հիմա կվերցնենք այն ու ցույց կտանք կոմսին: Նա, հաւանորեն, մոռացել է արգեն այդ կտակը և կուզեր ոչնչացնել այն: Դու հասկանում ես, որ իմ միակ ցանկութիւնն է — սրբութեամբ կատարել նրա կամքը. ես միայն դրա համար եմ եկել այստեղ: Ես այստեղ եմ միայն նրա համար, որ օգնեմ ձեզ և նրան:

— Հիմա ես ամեն ինչ հասկացա: Գիտեմ ո՛ւմ դավերն են դրանք: Գիտեմ, — ասավ իշխանազուտորը:

— Կարևորն այդ չէ, հոգիս:

— Դա ձեր protégée-ն² է, ձեր սիրելի իշխանուհի Տրուբեցկայան, Աննա Միխայլովնան, որին իբրև սպասուհի չէի պահի, այդ զգվելի, գարշելի կնոջը:

— Ne perdons point de temps³.

— Ա՛հ, մի՛ ասեք: Անցյալ ձմեռ եկավ ու մեր մասին, մանավանդ Sophie-ի մասին, այնպիսի զգվելի, գարշելի բաներ պատմեց կոմսին, — կրկնել չեմ կարող, — որ կոմսը՝ ի վանդացավ և երկու շաբաթ չէր ուզում մեզ տեսնել: Գիտեմ, որ այդ ժամանակ է նա գրել այդ գարշելի, զգվելի թուղթը. բայց կարծում էի, թե այդ թուղթը ոչ մի արժեք չունի:

— Nous y voilà⁴, բայց ինչո՞ւ առաջուց ոչինչ չասիք թե՛:

— Նկարագարդ պորտֆելի մեջն է, որ միշտ բարձի տակ է պահում: Այժմ ես գիտեմ, — ասավ իշխանազուտորը, շաատախանելով: — Այո, եթե ես ունեմ որևէ մեղք, մի մեծ մեղք, գա՛ այդ գարշելի կնոջ նկատմամբ ունեցածս ատելութիւնն է, — գրեթե գոռաց իշխանազուտորը, բոլորովին կերպարա-

նափոխվելով: — Եվ ինչու համար է նա խցկվում այս տունը? Բայց այս բոլորը ես նրա երեսույր կտամ: Կգա դրա ժամանակըն էլ:

XIX

Մինչ այսպիսի խոսակցութիւններ էին տեղի ունենում ընդունարանում ու իշխանազատեր սենյակում, Պիեռն (որի ետեից մարդ էր ուղարկված) ու Աննա Միխայլովնան (որը կարևոր համարեց զալ նրա հետ) կառքով մտան կոմս Բեզուխովի բակը: Երբ կառեթի անիվները մեղմագին շրշյունով անցան լուսամուտների առջև սփռած ծղնոտի վրայով, Աննա Միխայլովնան, մխիթարական խոսքերով իր ուղեկցին դառնալով, նկատեց, որ Պիեռը քնել է կառեթի անիւնում, ու զարթեցրեց: Արթնանալով՝ Պիեռը, Աննա Միխայլովնայի ետեից, դուրս եկավ կառեթից և այդ բոպեին միայն հիշեց իրեն սպասող մահամերձ հոր հետ ունենալիք տեսակցութիւնը: Նա նկատեց, որ կառքը կանգնեց ոչ թե շքամուտքի առաջ, այլ ետին մուտքի առաջ: Այն ժամանակ, երբ Պիեռն իջնում էր կառքից՝ քաղքենու հագուստով երկու մարդ շտապ-շտապ մուտքի առջևից վազեցին-անցան պատի ստվերը: Կանգ առնելով՝ Պիեռը տան ստվերում նշմարեց ևս մի քանի այդպիսի մարդ: Բայց ո՛չ Աննա Միխայլովնան, ո՛չ լաքեյր, ո՛չ կառապանը, որոնք չէին կարող նկատած չլինել այդ մարդկանց, ուշադրութիւն չդարձրին նրանց վրա: Երևի, այդպես էլ պետք է, վճռեց Պիեռն ինքն իրեն ու հետեից Աննա Միխայլովնային: Աննա Միխայլովնան արագ-արագ բարձրանում էր թույլ լուսավորված նեղ քարե սանդուղով, կանչելով ետ մընացող Պիեռին, որը թեև չէր էլ հասկանում, թե առհասարակ ինքն ինչու համար պետք է գնար կոմսի մոտ, և մանավանդ, թե ինչո՞ւ պետք է բարձրանար հետին սանդուղով, բայց նայելով Աննա Միխայլովնայի ինքնավստահ ու շտապ քայլերին, ինքն իր մեջ վճռեց, թե դա անհրաժեշտորեն պետք է: Սանդուղի կիսին քիչ մնաց նրանց գլուխին դուլլերը ձեռներին բռնած ինչ-որ մարդիկ, որ հաստ կոշիկների ազմուկով եկան նրանց դեմ: Այդ մարդիկ սեղմվեցին պատին՝ Պիեռին ու Աննա

¹ Լուրջ խոսակցութիւն:

² Հովանավորուհի:

³ Ժամանակ չկորցնենք:

⁴ Բանն էլ հենց այդ է:

Միխայլովնային ճանապարհ տալու, և ամենևին չզարմացան նրանց տեսնելով:

— Իշխանազուտորների հարկաբաժինն այստե՞ղ է, հարցրեց Աննա Միխայլովնան նրանցից մեկին:

— Այստեղ է, — պատասխանեց լաքեյը համարձակ, բարձր ձայնով, կարծես հիմա արդեն ամեն բան կարելի էր, — դու:ը ձախ կողմն է, տիրուհի:

— Գուցե, կոման ինձ չի կանչել, — ասավ Պիեռը, երբ հասավ տանգուզի հարթակը, — ես կգնայի սենյակս:

Աննա Միխայլովնան կանգ առավ, որ Պիեռին հավասարվի: — Ah, mon ami, — ասավ նա, ձեռը նույն շարժումով (ինչպես առավոտը որդուն) Պիեռի ձեռին դիպցնելով. — croyez, que je souffre, autant que vous, mais soyez homme¹.

— Իսկպես, գնա՛մ, — հարցրեց Պիեռը, ակնոցների միջից քաղցրությամբ նայելով Աննա Միխայլովնային:

— Ah, mon ami, oubliez les torts qu'on a pu avoir envers vous, pensez que c'est votre père... peut-être à l'agonie. — Իշխանուհին հառաչեց: — Je vous ai tout de suite aimé comme mon fils. Fiez vous à moi, Pierre. Je n'oublierai pas vos intérêts².

Պիեռը բան չէր հասկանում. նորից նրան էլ ավելի թվաց, թե այդ բոլորն այդպես էլ պիտի լինի, և նա հնազանդորեն հետևեց Աննա Միխայլովնային, որ դուռը բացել էր արգեն:

Դուռը տանում էր փտին մուտքի միջանցքը: Անկյունում նստած էր իշխանազուտորների ծեր սպասավորը և գուլպա էր գործում: Պիեռը երբեք չէր եղած այդ հարկաբաժնում, գրա գոյության մասին նույնիսկ գաղափար չուներ: Աննա Միխայլովնան իրենց հեռանից վազող՝ մատուցարանով շրաման տանող աղջկան (նրան պիտի թու աղավնյակ անվանելով) հարցրեց իշխանազուտորների ասողութունը, և քարե միջանցքով Պիեռին տարավ առաջ: Միջանցքի ձախակողմի առաջին դուռը,

տանում էր իշխանազուտորների բնակելի սենյակը: Զրաման տանող սպասուհին շտապելուց (ինչպես ամեն բան այդ բնակին այդ տան մեջ արվում էր շտապ) դուռը չձածկեց ետևից, և Պիեռն ու Աննա Միխայլովնան, անցնելիս, ակամա ներս նայեցին այն սենյակը, ուր խոսակցում էին մեծ իշխանազուտորը և իշխան Վասիլին իրար մոտ նստած: Անցնողներին տեսնելով՝ իշխան Վասիլին անհամբեր շարժում արավ և ետ քաշվեց, իշխանազուտորը թռավ տեղից և կատաղի շարժումով, ամբողջ ուժով շրխկացրեց դուռն ու փակեց:

Այդ շարժումն այնքան անսովոր էր մշտապես հանգիստ իշխանազուտոր համար և իշխան Վասիլիի դեմքին արտահայտված վախն այնքան անհամապատասխան նրա վեհությանը, որ Պիեռը, կանգ առնելով, ակնոցների միջից հարցական նայեց իր առաջնորդուհուն: Աննա Միխայլովնան զարմանք շարտահայտեց, նա թեթևակի ժպտաց միայն ու հառաչեց, ասելով կարծես, թե այդ բոլորը նա սպասում էր:

— Soyez homme, mon ami, c'est moi qui veillerai à vos intérêts¹, — ասավ նա ի պատասխան Պիեռի հայացքին և ավելի արագ-արագ քայլեց միջանցքով:

Պիեռը չէր հասկանում, թե ինչ կա, և մտնավանդ, թե՛ «veiller à vos intérêts»², բայց հասկանում էր, որ այդ բոլորն այդպես էլ պիտի լինի: Միջանցքով դուրս եկան կիսով չափ լուսավորված մի դահլիճ, որը կից էր կոմսի ընդունարանին: Դա արդեն սառը և շքեղ կահավորված սենյակներից մեկն էր՝ որ Պիեռին ծանոթ էր շքամուտքի դռնից: Բայց այդ սենյակի մեջտեղը դրված էր մի դատարկ լուպրան (վաննա) և գորգի վրա էլ չուր էր թափած: Ոտնածայրերի վրա քայլելով նրանց դեմն ելան, առանց նրանց վրա ուշադրություն գալ՝ ձենելու, մի սպասավոր ու մի դպիր՝ բուրվառը ձեռին: Նրանք մտան Պիեռին ծանոթ ընդունարանը, որի խոսակցան երկու լուսամուտը նայում էին ձմեռային պարտեզին, և որի մեջ էր նկատելի նայի խոշոր կիսանդրին ու հասակովը մեկ նկարված պատկերը: Նույն մարդիկ, գրեթե նույն դիրքով նստած՝ շշուկով խոսում էին ընդունարանում: Բոլորը միանգամից լռեցին

¹ Հավատացեք, ես ձեզից պակաս չեմ տանջվում. բայց տղամարդ կացեք:

² Մոռացեք, բարեկամս, եթե անիրավացի են երբևէ դեպի ձեզ: Զիջեցեք որ նա ձեր հայրն է... Գուցե հոգեվարքի մեջ է: Ես ձեզ որդու պես փրկեցի: Վտասահեցեք ինձ, Պիեռ: Ես ձեր շահերը չեմ մտախնայ:

¹ Տղամարդ եղեք, բարեկամս. իսկ ես կհոգամ ձեր շահերի մասին:

² Կհոգամ ձեր շահերի մասին:

ու նայեցին ներս մտնող լացակումած, գունատ դեմքով Աննա Միխայլովնային և գեր, մեծամարմին Պիեռին, որ գլուխը կախ, հնազանդորեն հետևում էր նրան:

Աննա Միխայլովնայի դեմքին արտահայտվեց վճռական թուպեն հասնելու գիտակցությունը. շթողնելով Պիեռին հեռանա իրենից՝ նա պետերբուրգցի գործնական կնոջ ձևերով ներս մտավ, ավելի համարձակ, քան առավույան: Ձգում էր, որ իր ընդունելությունն ապահովված է, որովհետև իր հետ տանում է այն մարդուն, որին հիվանդը տեսնել է ուզում: Արագ մի հայացք գցելով սենյակում գտնվողների վրա և տեսնելով կոմսի խոստովանահորը, նա, ոչ թե կուսակալով, այլ հանկարծ հասակով փոքրանալով, մանրիկ ու արագ քայլով մոտեցավ խոստովանահորը և խոնարհությամբ ընդունեց նախ մեկի, ապա մյուս հոգևոր անձի օրհնությունը:

— Փառք աստծո, որ հասաք, — ասավ նա հոգևորականին, — մենք՝ բոլոր հարազատներս, այնպե՛ս վախենում էինք: Այս երիտասարդն ահա՛ — կոմսի որդին է, — ավելացրեց նա ցած ձայնով: — Սարսափելի վայրկյան է:

Այս ասելով՝ նա մոտեցավ բժշկին:

— Cher docteur, — ասավ նա, — ce jeune homme est le fils du comte... y a-t-il de l'espoir? ¹

Բժիշկն անխոս, արագ շարժումով աչքերն ու ուսերը բարձրացրեց վեր: Աննա Միխայլովնան ճիշտ նույն շարժումով վեր բարձրացրեց ուսերը և աչքերը փակեց, ապա, հառաչելով, մոտեցավ Պիեռին և առանձին մի հարգանքով ու մեղմ տխրությամբ ասավ նրան:

— Ayez confiance en se miséricorde², — ասավ նա, ցույց տալով բազմոցը, որպեսզի Պիեռը նստի՝ իրեն սպասի, իսկ ինքը անձայն քայլերով գնաց դեպի այն դուռը, որի վրա էին ուղղված բոլորի հայացքները, ու հազիվ լսելի ձայնով դուռը բանալով՝ անհետացավ նրա ետև:

Պիեռը, որոշած լինելով ամեն բանում հնազանդել իր առաջնորդուն, գնաց-նստելու նրա ցույց տված բազմոցի վրա: Հենց որ Աննա Միխայլովնան անհետացավ՝ Պիեռը նը-

կատեց, որ սենյակում գտնվողների հայացքները ավելի քան հետաքրքրությամբ ու կարեկցությամբ ուղղվեցին իր վրա: Նա նկատեց նույնպես, որ աչքով իրեն ցույց տալով՝ բոլորը փափացրին, կարծես երկյուղով և անդամ ստորաքարշուկությամբ. նրան հարգանք էին ցույց տալիս, ինչ որ առաջ երբեք չէին անում. նրան անծանոթ մի կին, որ խոսում էր հոգևորականների հետ. վեր կացավ տեղից և առաջարկեց այն Պիեռին. աղյուտանտը վերցրեց Պիեռի ձեռից ընկած ձեռնոցն ու իրեն տվավ, բժիշկները հարգալիք լսեցին, երբ Պիեռն անցնում էր իրենց մոտով, և մի կողմ քաշվեցին, որ տեղ տան նրան: Պիեռն սկզբում ուզեց մի ուրիշ տեղ նստել, որ տիկնոջն անհանգիստ չանի, ուզեց ինքը վերցնել ձեռնոցը և անցնել բժիշկների կողքից, որ բնավ էլ ճանապարհի վրա չէին կանգնած. բայց հանկարծ զգաց, որ դա անվայել բան կլիներ, զգաց, որ ինքն այս գիշեր այն անձնավորությունն է, որ պարտավոր է ինչ-որ սարսափելի և բոլորի կողմից սպասվող մի ծես կատարել, ուստի և պետք է ընդունի բոլորի մատուցած ծառայությունները: Նա անխոս ընդունեց ձեռնոցը աղյուտանտից, նստեց տիկնոջ տեղը, խոշոր ձեռները դնելով հավասար պահած ծնկների վրա՝ եզրիտական արձանի միամիտ դիրքով, ու ինքն իր մեջ վճռեց, թե այդ բոլորը հենց այդպես էլ պետք է լինի, և որ այս երեկո՝ իրեն չկորցնելու և հիմարություններ չանելու համար, կարիք չկա իր ուզածի պես վարվել, այլ ամբողջովին պիտի հանձնվի իրեն ղեկավարողների կամքին:

Չանցավ երկու թուպե, իշխան Վասիլին կաֆտանով, երեք աստղ կրծքին, գլուխը բարձր պահած, վեհորեն մտավ ներս: Նա առավոտվանից ավելի նիհարած էր երևում. աչքերը սովորականից ավելի խոշորացել էին, երբ նստողներին դիտելով՝ նկատեց Պիեռին. մոտենալով՝ ձեռը բռնեց (ինչ որ երբեք չէր անում առաջ) ու ցած քաշեց, կարծես ուզում էր փորձել, թե ամուր է արդյոք:

— Courage, courage, mon ami. Il a demandé à vous voir. — G' est bien¹, — և ուզեց հեռանալ:

Բայց Պիեռը հարկ համարեց հարցնել.

¹ Այս երիտասարդը — կոմսի որդին է... Հույս կա՞ արդյոք:

² Վստահեցե՞ք նրա ողորմածությունը:

¹ Մի վհատիր, մի վհատիր, բարեկամս: Նա փափագում է քեզ տեսնե՞ք Այդ լավ է:

— Ի՞նչպես է առողջութիւնը...

Նա շփոթվեց, շիմանալով՝ հարմար է արդո՞ր մեռնողին կոմս անվանել, իսկ հայր անվանել ամաչում էր:

— Il a eu encore un coup, il y a une demi-heure. Մի հարված էլ եղավ: Courage, mon ami!¹...

Պիեռը մտքերի մի այնպիսի անորոշ վիճակի մեջ էր, որ «հարված» բառը լսելով, նրան որևէ առարկայի հարված պատկերացավ: Ու տարակուսած նայեց իշխան Վասիլիին և հետո արդեն գլխի ընկավ, որ հարված կոչվում է հիվանդութիւնը: Իշխան Վասիլին անցնելիս մի երկու խոսք ասավ կոռնին և ոտի ծայրերի վրա գնաց դեպի դուռը: Նա ոտի ծայրերի վրա չէր կարողանում քայլել և թոշկոտում էր ամբողջ մարմնով: Նրա ետևից գնաց մեծ իշխանագուստը, հետո անցան հոգևորականներն ու դպիրները, սպասավորները նույնպես մտան ներս: Այդ դռան ետևից լսվեց շարժում, և վերջապես, նույն գունատ, բայց իր պարտականութիւնը կատարելու հաստատակամութեամբ, ներս վազեց Աննա Միխայլովնան և, ձեռը Պիեռի ձեռին դիպցնելով, ասավ:

— La bonté divine est inépuisable. C'est la cérémonie de l'extrême onction, qui va commencer. Venez².

Պիեռը փափուկ գորգի վրայով գնաց-մտավ ներս և նկատեց, որ աղյուտանտը, անծանոթ կինը և սպասավորներից մեկը — բոլորը հետևեցին իրեն, կարծես այժմ այլևս կարիք չկար թույլտվութիւն խնդրել այդ սենյակը մտնելու:

XX

Պիեռին լավ ծանոթ էր այս մեծ, սյունաշարքով երկուսթ բաժանված կամարակապ սենյակը՝ ամբողջովին պարսկական գորգերով պատած: Սյուների ետևի մասը, — որի մի կողմը դրված էր բարձր կարմիր փայտյա մահճակալը՝ մետաքսյա վարագույրներով շրջափակված, իսկ մյուս կողմը՝ սրբապատկերների պահարանը, — լուսավորված էր կարմիր ու պայծառ

¹ Կես ժամ առաջ մի հարված էլ ստացավ: Մի վնասոր, բարեկամ:

² Աստուծո ռդրմութիւնն անասման է: Վերջին օտումը հիմա կսկսվի Եկեք:

լույսով, ինչպես լուսավորված են լինում եկեղեցիները երեկոյան ժամերգութեան պահին: Սրբապատկերների պահարանի լուսավորված զարդերի ներքո դրված էր երկար ուղտերյան մի բազմոց, ու բազմոցի վրա, գլխակողմը ձուռնափայլ-ճերմակ, դեռ շտրորված, ըստ երևույթին, նոր միայն փոխած բարձրով շրջապատված, մինչև գոտկատեղը վառ-կանաչ վերմակով ծածկված՝ պատկած էր Պիեռին լավ ծանոթ՝ իր հոր վեհաշուք կերպարանքը — կոմս Բեգուլսովը՝ առյուծ հիշեցնող նույն ճերմակ մազերի բաշը լայն ճակատի վրա՝ և գեղեցիկ կարմրադեղին դեմքի բնորոշ-ազնիվ խոշոր կնճիռներով: Նա պատկած էր ուղիղ սրբապատկերների ներքո. երկու հաստ խոշոր ձեռները դուրս էին հանված վերմակի տակից ու դրված էին նրա վրա: Ափը դեպի ցած դարձրած աջ ձեռի բթամատի ու ցուցամատի արանքում դրված էր մի մեղրամոմ, որը բռնել էր բազմոցի մյուս կողմից թեքված ծերունի սպասավորը: Բազմոցի գլխակողմը շարվել էին հոգևորականները՝ իրենց փառահեղ, շողշողուն զգեստներով, որոնց վրա փոված էին նրանց երկար մազերը, ու վառ մոմերը ձեռներին՝ հանդարտ-հանդիսավոր կարգ էին կատարում: Նրանցից մի քիչ հետ կանգնած էին կրտսեր իշխանագուստները՝ թաշկինակները ձեռներին ու աչքերին, իսկ նրանց առջև մեծը, Կատիշը՝ զայրացկոտ ու վճռական տեսքով: Նա անթարթ աչքերով նայում էր սրբապատկերներին, և կարծես ասում բոլորին, թե ինքը պատասխանատու չի իր համար, եթե ետ նայի: Աննա Միխայլովնան՝ հեզ վշտի և թողութեան դրոշմը դեմքին, և անծանոթ տիկինը կանգնել էին դռան մոտ: Իշխան Վասիլին կանգնել էր դռան մյուս կողմը, բազմոցին մոտիկ, թավշյա աթոռի ետևը, որի թիկունքն արել էր իր կողմն ու մոմ բռնած ձախ ձեռը դրել վրան, իսկ աջով խաշակնքում էր երեսը, ամեն անգամ աչքերը վեր բարձրացնելով, երբ մատները դնում էր ճակատին: Նրա դեմքն արտահայտում էր խաղաղ բարեպաշտութիւն և հնազանդութիւն աստուծու կամքին ու կարծես ասում էր. «Եթե դուք այս զգացմունքները չեք հասկանում, ավելի վատ ձե՛զ համար»:

Նրա ետև կանգնել էին աղյուտանտը, բժիշկները և տղամարդ սպասավորները. տղամարդիկ և կանայք կանգնել էին ատանձին, ինչպես եկեղեցում: Բոլորն էլ լուռ խաշակնքում

էին երեսները. լսվում էին միայն աղոթքների ընթերցումը, գուսպ թավ ձայներով հնչող երգեցողութիւնը և, լուսթյան վայրկյաններին, ոտերի տեղափոխում ու հառաչանքներ: Ան-ն ս Միխայլովնան՝ հոգածու դեմքով, որ ցույց էր տալիս, թե ինքը գիտի ի՛նչ է անում, անցավ սենյակի ամբողջ երկարու-թյամբ և, Պիեռին մոտենալով, մոմը տվավ նրան: Պիեռը վա-ռեց այն, և շրջապատողներին դիտելով զբաղված, սկսեց մոմ բռնած ձեռով խաչակնքել երեսը:

Կարմրադեմ ու խնդուն կրտսեր իշխանազուստը Սոֆին, խալավորը, նայում էր Պիեռին. հանկարծ ժպտաց, դեմքը ծածկեց թաշկինակով ու երկար չբացեց. բայց, նորից Պիեռին նայելով, կրկին ծիծաղեց: Նա, ըստ երևութիւն, զգում էր, որ անկարող է առանց ծիծաղի նայել նրան, բայց չէր էլ կարողա-նում իրեն զսպել, որ չնայի, ուստի գայթակղութիւնից խու-սափելու համար անցավ սյունի ետևը: Արարողութիւն կիսին հոգևորականների ձայնը կտրվեց հանկարծ և նրանք ինչ-որ փսփոսացին իրար, կոմսի ձեռը բռնող ծեր սպասավորը վեր կացավ ու դիմեց կանանց: Աննա Միխայլովնան առաջ եկավ և, հիվանդի վրա կոանալով, նրա ետևից, մատի շարժումով իր մոտ կանչեց Լոռենին: Ֆրանսացի-բժիշկը, — որ առանց մոմի, հենվել էր սյունին՝ օտարերկրացու մի այնպիսի հարգալիբ դիրքով, որ ցույց է տալիս, թե չնայած դավանութիւն տարբե-րութիւն, ինքը հասկանում է կատարվող ծեսի ամբողջ կարե-վորութիւնը և նույնիսկ հավանութիւն է տալիս դրան, — անձայն քայլերով մոտեցավ հիվանդին, իր նուրբ սպիտակ մատներով վերցրեց նրա ձեռը կանաչ վերմակի վրայից և, շուտ տալով, զարկերակը բռնեց ու սկսեց մտածել: Հիվանդին ինչ-որ բան տվին խմելու, շարժվեցին, իրար անցան նրա շուր-ջը, ապա նորից բոլորը գնացին իրենց տեղերը, և արարողու-թիւնը վերսկսվեց: Այս ընդմիջումի ժամանակ Պիեռը նկատեց, որ իշխան Վասիլին դուրս եկավ իր թիկնաթոռի ետևից և նույն տեսքով, որ ցույց էր տալիս թե ինքը գիտի ի՛նչ է անում, և թե ավելի վատ ուրիշների համար, որ այդ չեն հասկանում, շմտեցավ հիվանդին, այլ նրա կողքից անցնելով, գնաց-միա-ցավ մեծ իշխանադատեր ու նրա հետ միասին անցան ննջարա-նի խորքը, դեպի թավշյա վարագույրներով պատած մահճակա-լը: Ապա մահճակալի մոտից երկուսն էլ՝ թե իշխանը, թե իշ-

խանազուստը աներևութացան հետին դռնով, բայց արարո-ղութիւն վերջում մեկը մյուսի ետևից վերադարձան իրենց տեղերը: Պիեռն այդ հանգամանքի վրա մյուս բաներից ավելի ուշադրութիւն չդարձրեց, մի անգամ ընդմիջտ որոշած լինելով մտքում, թե բոլորը, ինչ կատարվում է այս երեկո, այդպես էլ անհրաժեշտորեն հարկավոր է: Երգեցողութիւնը դադարեց և լավեց խոստովանահոր ձայնը, որ հարգանքով շնորհավորում էր հիվանդին՝ հաղորդութիւն ընդունելու առթիվ: Հիվանդը պակած էր առաջվա պես անկենդան ու անշարժ: Նրա շուրջն էլի իրար անցան, լավեցին քայլեր ու փսփոսոցներ, որոնցից առանձնապես ջոկվում էր Աննա Միխայլովնայի ձայնը:

Պիեռը լսեց, թե ինչպես նա ասավ.

— Պետք է հիվանդին անպատճառ փոխադրել մահճակալ, այստեղ ոչ մի կերպ չի լինի:

Բժիշկները, իշխանազուստներն ու սպասավորներն այն-պես էին շրջապատել հիվանդին, որ Պիեռն այլևս չէր տեսնում այն սպիտակ բաշով կարմրա-դեղին գլուխը, որը, չնայած որ Պիեռը տեսնում էր ուրիշ դեմքեր էլ, չէր հեռանում նրա ալ-քից արարողութիւն ամբողջ ընթացքում: Բազմոցը շրջապա-տող մարդկանց զգույշ շարժումներից Պիեռը գլխի ընկավ, որ մահամերձին վերցնում-տեղափոխում են:

— Ձեռս բռնիր, այդպես կգցես, — լավեց սպասավորնե-րից մեկի երկյուղալի շշուկը, — ներքեից... մեկն էլ, — ասում էին ձայները և մարդկանց ծանր շնչառութիւններն ու ոտնա-փոխումները արագացան, կարծես ծանրութիւնը, որ տանում էին, իրենց ուժից վեր էր:

Հիվանդին տեղափոխողները, որոնց թվումն էր և Աննա Մի-խայլովնան, հավասարվեցին Պիեռին, և Պիեռը անցողակի նրանց մեջքերի ու ծոծրակների ետևից տեսավ հիվանդի բաց, բարձր, ճարպակալած կուրծքը, հաստ ուսերը, որ մարդիկ, թևատակե-րից բռնելով, բարձրացրել էին վեր, և ճերմակ գանգրահեր առյուծի գլուխը: Այդ գլուխը՝ իր անսովոր լայն ճակատով ու այտոսկրներով, գեղեցիկ զգայական բերանով և սառը, վսեմ հայացքով, այլանդակված չէր մահվան մերձավորութիւնից: Նույնն էր, ինչ որ երեք ամիս առաջ տեսել էր Պիեռը, երբ կոմ-սը իրեն՝ Պիեռին ճանապարհ էր դնում Պետերբուրգ: Բայց

այդ գլուխն անգոր կերպով օրսովում էր փոխադրողները անհավասար քայլերից, ու սառն, անտարբեր հայացքը չգիտեր ինչի վրա կանգ առնի:

Մի քանի ընթացիկ վերջացավ մահճակալի շուրջը տեղի ունեցող իրարանցումը. հիվանդին տեղափոխողները ցրվեցին: Աննա Միխայլովնան ձեռք դիպցրեց Պիեռի ձեռքին և ասավ. «Venez!»: Պիեռը նրա հետ միասին մոտեցավ մահճակալին, որի վրա, հանդիսավոր դիրքով, որ երևի, կապ ուներ հենց նոր կատարված խորհուրդի հետ, պառկած էր հիվանդը՝ գլուխը վեր, բարձրին դրած: Նրա ձեռքերը՝ ամբողջ դեպի ցած՝ դրված էին վերմակի վրա: Երբ Պիեռը մոտեցավ՝ կոմսն ուղիղ նրան նայեց, բայց նայեց մի հայացքով, որի իմաստն ու նըշանակությունը մարդ չի հասկանում: Այդ հայացքը կա՛մ բացարձակապես ոչինչ չէր ասում, բացի միայն այն, թե քանի որ աչքեր կան, պետք է նայել որևէ բանի, կա՛մ շատ բան էր ասում: Պիեռը, չիմանալով ինչ անել, կանգ առավ ու հարցական նայեց իր առաջնորդուն: Աննա Միխայլովնան աչքերով ցույց տվեց հիվանդի ձեռքը և շուրթերով օգային համբույր ուղարկեց այդ ձեռքին: Պիեռը, վերմակին չդիպչելու համար, մեծ ձեռքով երկարեց վիզը, կատարեց Աննա Միխայլովնայի պատվերը — համբուրեց հոր լայնոսկր ու մսոտ ձեռքը: Կոմսի ոչ ձեռք ցնցվեց, ոչ էլ դեմքի մկաններից մեկը: Պիեռը կռկռեց հարցական նայեց Աննա Միխայլովնային, հարցնելով, թե հիմա ի՛նչ անի: Աննա Միխայլովնան աչքերով ցույց տրվեց մահճակալի մոտ դրված բազկաթոռը: Պիեռը հնազանդորեն նստեց բազկաթոռին, շարունակելով աչքերով հարցնել, թե ա՛յն արավ, ինչ պետք է: Աննա Միխայլովնան գլխով հավանություն տվեց: Պիեռը դարձյալ եզրիտական արձանի համաշափ-միամիտ դիրքն ընդունեց, ցավելով, ըստ երևույթին, որ իր անճոռնի հաստ մարմինն այդքան մեծ տարածություն է բռնում, մեծ ուժ գործադրելով՝ որքան կարելի է փոքր երկվալ: Պիեռը նայում էր կոմսին: Կոմսը նայում էր այն կետին, ուր քիչ առաջ գտնվում էր Պիեռի դեմքը, երբ նա կանգնած էր: Աննա Միխայլովնայի դեմքին երևում էր հոր և որդու տեսակցություն այդ վերջին վայրկյանի սրտաշարժ վեհությունների

¹ Եկեք:

տակցությունը: Այս բոլորը տեղի մի երկու ընթացի, բայց Պիեռին թվաց մի ամբողջ ժամ: Հանկարծ կոմսի երեսի խոշոր մկանների ու կնձիռների մեջ ցնցում նկատվեց: Ցնցումը սաստկացավ, գեղեցիկ բերանը ծովեց (Պիեռն այժմ միայն հասկացավ, թե որքան հոր մահը մոտ է), և ծոմոված բերանից լավեց մի անորոշ, խռպոտ հնչյուն: Աննա Միխայլովնան ուշադիր մի անորոշ, խռպոտ հնչյուն, և աշխատելով գուշակել, թե ինչ է ուզում նա, ցույց էր տալիս մերթ Պիեռին, մերթ խմիչքը, մերթ շուշուկով տալիս էր իշխան Վասիլի անունը, մերթ մատնացույց անում վերմակը: Հիվանդի դեմքն ու աչքերն արտահայտում էին անհամբերություն: Նա ջանք գործ դրեց նայելու իր սպասավորին, որ առանց հեռանալու կանգնած էր անկողնի գլխակողմը:

— Ուզում են շրջվել մյուս կողքի վրա, — շնչաց սպասավորը և ոտի կանգնեց, որպեսզի կոմսի երեսը շրջի դեպի պատը:

Պիեռը վեր կացավ՝ սպասավորին օգնելու:

Այն ժամանակ, երբ կոմսին շրջում էին, նրա մի ձեռք անգոր կերպով հետ ընկավ, և նա իզուր ջանք գործ դրեց այն քաշելու: Նկատե՛ց արդյոք կոմսը սարսափի այն արտահայտությունը, որով Պիեռը նայեց այդ անկենդան ձեռքին, թե՛ այդ ընթացին մի ուրիշ միտք ցույց մեռնող գլխում, այնուամենայնիվ նայեց իրեն չնեթարկվող ձեռքին, Պիեռի սարսափահար դեմքին, դարձյալ ձեռքին, ու նրա երեսին երևաց՝ իր դիմագծերին շազոզ՝ մի թույլ, տանջալի ժպիտ, որը կարծես հեղում էր իր սեփական անզորությունը: Այդ ժպիտը տեսնելով՝ Պիեռն անսպասելի մի ցնցում զգաց կրճոքում. քիթը խուռուռ եկավ և արցունքները մթագնեցին աչքերը: Հիվանդի երեսը դարձրին դեպի պատը: Նա հռոշեց:

— Il est assoupi¹, — ասավ Աննա Միխայլովնան, նկատելով փոխարինելու եկող իշխանադուստրը: — Allons²:

Պիեռը դուրս եկավ:

¹ Նիրհաց:

² Գնանք:

Հնդուհարանում այլևս ոչ ոք չկար, բացի իշխան Վասիլիից ու մեծ իշխանադատրից, որոնք, Եկատերինայի պատկերի ներքո նստած, տաք-տաք խոսում էին ինչ-որ բանի վրա: Հենց որ Պիեռին ու նրա առաջնորդուհուն տեսան՝ լռեցին: Պիեռին թվաց, որ իշխանադուստրը մի բան պահեց ու շնչաց:

— Այդ կնոջը տեսնե՛լ չեմ կարողանում:

— Catiche a fait donner du thé dans le petit salon, — ասավ իշխան Վասիլին Աննա Միխայլովնային: — Allez, ma pauvre Աննա Միխայլովնա, prenez quelque chose, autrement vous ne suffirez pas¹.

Պիեռին ոչինչ չասավ, միայն կարեկցությամբ սեղմեց նրա թևը: Պիեռն ու Աննա Միխայլովնան անցան petit salon².

— Il n'y a rien qui restaure comme une tasse de cet excellent thé russe après une nuit blanche³, — ասում էր Լոռենը զսպված աշխույժի արտահայտությամբ, շինական նուրբ գավաթից թեյ խմելով, կանգնած փոքրիկ բոլորակ հյուրասենյակի սեղանի առջև, որի վրա դրված էին թեյի պարագաներ և սառն ընթրիք: Այդ գիշեր կոմս Բեզուխովի տանն եղած մարդիկ հավաքվել էին սեղանի շուրջը՝ իրենց ամրապնդելու: — Պիեռը շատ լավ էր հիշում այդ փոքրիկ բոլորակ հյուրասրահը՝ իր հայելիներով ու սեղաններով: Կոմսի սարքած պարահանդեսների ժամանակ՝ Պիեռը, պարել չիմանալով, սիրում էր նստել այս հայելազարդ հյուրասրահում ու գիտել, թե ինչպես կանայք՝ շքեղորեն զուգված, մերկ թևերն ու կուրծքը գոհարներով ու մարգարիտներով զարդարած, այս սենյակից անցնելով, դիտում էին իրենց պայծառորեն լուսավորված հայելիների մեջ, որոնք մի քանի անգամ անդրադարձնում էին նրանց պատկերը: Իսկ հիմա այդ սենյակը հազիվ լուսավորված էր երկու մոմով, և կես գիշերին մի փոքրիկ սեղանի

վրա անկարգ դրված էին թեյի պարագաներ և ափսեներով ուտելիք, և տարբեր մարդիկ, բոլորովին պարզ, ոչ տոնական հագուստներով նստած, խոսակցում էին շշուկով, յուրաքանչյուր շարժումով ու յուրաքանչյուր խոսքով զգացնել տալով, թե ոչ ոք չի մոռանում այն, ինչ արվում է այժմ և ինչ դեռ պիտի կատարվի ննջարանում: Պիեռը ընթրեց, թեև շատ ցանկանում էր: Նա հարցական նայեց իր առաջնորդուհուն և տեսավ, որ նա, ոտների ծայրերի վրա դուրս եկավ կրկին ընդունարան, ուր մնացել էին իշխան Վասիլին ու մեծ իշխանադուստրը: Պիեռը ենթադրեց, որ այդ էլ այդպես պետք է լինի և, փոքր-ինչ սպասելով, ինքն էլ գնաց նրա ետևից: Աննա Միխայլովնան կանգնել էր իշխանադուստր կողքին, ու երկուսն էլ միաժամանակ խոսում էին հուզված շշուկով:

— Թույլ տվեք, իշխանուհի, ես գիտեմ ի՛նչ է հարկավոր և ի՛նչ չի հարկավոր, — ասում էր իշխանադուստրը, ըստ երեկվորին, նույն հուզված վիճակում, որի մեջ գտնվում էր սենյակի դուռը շրխկացնելու ժամանակ:

— Բայց, սիրելի իշխանադուստրս, — մեղմ ու համոզիչ ասավ Աննա Միխայլովնան, կտրելով ննջարանի ճանապարհն ու շթոգնիկով իշխանադուստր առաջ գնալու, — արդյո՞ք շափազանց ծանր չի լինի խեղճ մորեղբորս համար մի այսպիսի ընդունում, երբ նա հանգստի կարիք ունի: Խոսե՛լ աշխարհային բաների մասին ա՛յն ժամանակ, երբ նրա հոգին պատրաստված է արգեն...

Իշխան Վասիլին, ոտը ոտին գցած, արձակ-համարձակ նստել էր բազկաթոռի մեջ: Նրա այտերը սաստիկ ցնցվում էին և, կախ ընկնելով, նրանց ներքին մասն ավելի հաստ էր թրվում. բայց այնպիսի տեսք ուներ, թե քիչ է հետաքրքրվում կանանց զրույցով:

— Voyons, ma bonne Աննա Միխայլովնա, laissez faire Catiche¹. Գիտեք, թե կոմսը որքան է սիրում իշխանադուստր:

— Ես չգիտեմ էլ թե ի՛նչ է գրված այս թղթում, — ասավ իշխանադուստրը, դառնալով իշխան Վասիլիին ու ցույց տալով իր ձեռին բռնած նկարազարդ պորտֆելը: — Գիտեմ միայն,

¹ Կատիլը կարգադրեց՝ թեյը մատուցել փոքրիկ հյուրասրահում: Դուք, իմ խեղճ Աննա Միխայլովնա, լավ կանեիք կազդուրեիք ձեզ, թե չէ չեք դժմանա:

² Փոքրիկ հյուրասրահ:

³ Անքուն գիշերից հետո ոչինչ այնպես չի կազդուրում, ինչպես ուտուկան հիանալի թեյի մի բաժակը:

որ իսկական կտակը նրա բոլորոյի մեջ է, իսկ սա մոռացված թուղթ է...

Նա ուզեց անցնել Աննա Միխայլովնայի կողքով, բայց Աննա Միխայլովնան, տեղից ծուլ լինելով, նորից կարեց նրա ճանապարհը:

— Գիտեմ, սիրելի, բարի իշխանադուստրս, — ասավ Աննա Միխայլովնան պորտֆելը բռնելով և այնպես ամուր, որ երևում է թե շուտ չի բաց թողնելու: — Սիրելի իշխանադուստրս ես ձեզ խնդրում, ազաչում եմ՝ խնայեցեք նրան: Je vous en conjure...¹

Իշխանադուստրը լռեց. լսվում էր միայն պորտֆելի շուրջը տեղի ունեցող պայքարի ձայնը: Երևում էր, որ եթե իշխանադուստրը խոսեր, հաճելի բաներ չէր ասելու Աննա Միխայլովնային: Աննա Միխայլովնան պինդ բռնել էր պորտֆելը, բայց, չնայած դրան, նրա ձայնը պահել էր իր անուշ առած-գականութունն ու մեղմութունը:

— Պիեռ, այստեղ արի, բարեկամս: Կարծում եմ նրա ներկայութունն ընտանեկան խորհրդի մեջ ավելորդ չի, այնպե՛ս չի, իշխան:

— Ինչո՞ւ եք լռում, mon cousin, — հանկարծ կանչեց իշխանադուստրն այնպես բարձր, որ հյուրասրահում լսեցին ու վախեցան նրա ձայնից: — Ինչո՞ւ եք լռում, երբ այստեղ աստված գիտի թե ո՞վ թույլ է տալիս իրեն մեջ ընկնել ու տեսարաններ սարքել մեռնողի սենյակի շեմքին: Ինտրիզան... — շնչաց նա կատաղությամբ ու պորտֆելը ձիգ տվեց ամբողջ ուժով:

Բայց Աննա Միխայլովնան մի քանի քայլ արավ, պորտֆելից ետ շմեալու համար, ու բռնեց նրա ձեռք:

— Oh! — ասավ իշխան Վասիլին հանդիմանանքով ու զարմացած: Նա ոտքի կանգնեց: — C'est ridicule. Voyons², թողեք, ասում եմ ձեզ:

Իշխանադուստրը թողեց:

— Դուք էլ:

Աննա Միխայլովնան շլսեց նրան:

— Թողեք, ասում եմ: Նա ամեն պատասխանալուց վերջնում եմ ինձ վրա: Ես կերթամ և նրան կհարցնեմ: Ե՛ս... այսքանը բավական է ձեզ:

— Mais, mon prince¹, — ասավ Աննա Միխայլովնան, — այսպիսի մի մեծ ծիսակատարութունից հետո թողեք մի րոպե հանգստանա: Այ, Պիեռ, կարծիքդ ասա՛, — դարձավ նա երիտասարդին, որ բոլորովին մոտեցել էր նրանց ու զարմացած նայում էր իշխանադուստր կատաղած ու ամեն վայելչութուն կորցրած դեմքին և իշխան Վասիլի ցնցվող այտերին:

— Հիշեցեք, որ պատասխանատու եք հետևանքի համար, — խստությամբ ասավ իշխանը, — չեք հասկանում, թե ինչ եք անում:

— Չգրիչի՞ կին, — պոռաց իշխանադուստրը. անսպասելիորեն հարձակվելով Աննա Միխայլովնայի վրա, ու պորտֆելը խլեց:

Իշխան Վասիլին գլուխը կախեց ու ձեռները տարածեց:

Այդ րոպեին դուռը, այն սարսափելի դուռը, որին ուղղված էին Պիեռի աչքերը և որը բացվում էր այնպես կամացով, հանկարծ բացվեց աղմուկով, դիպավ պատին, և միջնեկ իշխանադուստրը դուրս վազեց ու ձեռները զարկեց իրար:

— Ի՞նչ եք անում, — ասավ նա հուսահատորեն: — Il s'en va et vous me laissez seule².

Պորտֆելն ընկավ մեծ իշխանադուստրի ձեռքից: Աննա Միխայլովնան արագորեն կոացավ և, վիճելի առարկան վերցնելով, վազեց ննջարան: Մեծ իշխանադուստրը և իշխան Վասիլին, թթափվելով, գնացին նրա ետևից: Մի քանի րոպե հետո ամենից առաջ այնտեղից գուրս եկավ մեծ իշխանադուստրը՝ գունատ, սառը դեմքով ու ներքին շուրթն ատամի տակ դրած: Պիեռին տեսնելով՝ նրա դեմքի վրա անզուսպ շարութուն երևաց:

— Այո, ուրախացեք հիմա, — ասավ նա, — գրան էլ ըստպատում էիք:

Եվ, հեկեկալով, երեսը ծածկեց թաշկինակով ու սենյակից վազեց դուրս:

¹ Ազաչում եմ ձեզ:

² Դա ծիծաղելի է: Գե՛:

¹ Բայց, իշխան:

² Նա մեռնում է, իսկ դուք ինձ մեռնակ եք թողնում:

Նրա ետևից դուրս եկավ իշխան Վասիլին: Նա, օրորվելով, հասավ Պիեռի նստած բազմոցին ու ընկավ այդ բազմոցի վրա, ձեռներով աչքերը ծածկելով: Պիեռը նկատեց, որ նա սփրթնած էր և վարի ծնոտը ծուլ-ծուլ էր լինում ու դողում տենդային դողով:

— Ա՛խ, բարեկամս, — ասավ նա, Պիեռի արմուկը բռնելով, և նրա ձայնի մեջ անկեղծութուն կար ու վհատութուն, որ Պիեռն առաջներում երբեք չէր նկատել: — Որքա՛ն ենք մեղանշում, որքան ենք խաբոււմ, և այդ բոլորն ինչի՞ համար: Վաթսուկի մեջ եմ, բարեկամս... Զէ՞ որ ինձ... Ամեն բանի վերջը մա՛հ է: Մահը սարսափելի է: — Նա լաց եղավ:

Բոլորից հետո դուրս եկավ Աննա Միխայլովնան: Նա մեղմ, դանդաղ քայլերով մոտեցավ Պիեռին:

— Պիե՛ն... — ասավ նա:

Պիեռը հարցականորեն նայեց նրան: Աննա Միխայլովնան, համբուրեց երիտասարդի ճակատը, արցունքներով թրջելով այն, ու լուց:

— Il n'est plus...¹.

Պիեռն ակնոցի միջից նայեց նրան:

— Allons, je vous reconduirai. Tâchez de pleurer. Rien ne soulage, comme les larmes².

Աննա Միխայլովնան Պիեռին տարավ մութ հյուրասրահը, և Պիեռն ուրախ էր, որ ոչ ոք այդտեղ իր երեսը չի տեսնում: Աննա Միխայլովնան հեռացավ-զնաց, և երբ վերադարձավ, Պիեռը, ձեռները գլխատակին դրած, պինդ քնել էր:

Հետևյալ առավոտ Աննա Միխայլովնան ասում էր Պիեռին.

— Oui, mon cher, c'est une grande perte pour nous tous. Je ne parle pas de vous. Mais Dieu vous soutiendra, vous êtes jeune et vous voilà à la tête d'une immense fortune, je l'espère. Le testament n'a pas été encore ouvert. Je vous connais assez pour savoir que cela ne vous tour-

nera pas la tête, mais cela vous impose des devoirs, et il faut être homme¹.

Պիեռը լուռ էր:

— Peut-être plus tard je vous dirai, mon cher, que si je n'avais pas été là, dieu sait ce qui serait arrivé. Vous savez mon oncle avant-hier encore me promettait de ne pas oublier Boris. Mais il n'a pas eu le temps. J'espère, mon cher ami, que vous remplirez le désir de votre père².

Պիեռը, բան չհասկանալով և լուռ, ամոթխածաբար կարճըրելով, նայում էր իշխանուհի Աննա Միխայլովնային: Պիեռի հետ խոսելուց հետո՝ Աննա Միխայլովնան գնաց Թոստովների մոտ ու պակեց քնելու: Առավոտը զարթնելով՝ Թոստովներին և բոլոր ծանոթներին պատմեց կոմս Բեզուխովի մահվան մանրամասնութունները: Ասավ, որ կոմսը մեռավ այնպես, ինչպես ինքը Աննա Միխայլովնան կցանկանար մեռնել, որ նրա վերջին վայրկյանը ոչ միայն հուզիչ էր, այլ և խրատական. իսկ հոր և որդու վերջին տեսակցութունն այնքան սրտառու էր, որ նա չկարողացավ հիշել առանց արցունքների և որ ինքը չի իմանում, թե այդ սարսափելի թոպեին ո՞վ ավելի լավ պահեց իրեն. հա՞յրը, որ վերջին թոպեներին հիշեց ամեն ինչ ու ամենքին և այնպե՛ս սրտառու խոսքեր ասավ որդուն, թե՞ Պիեռը, որին մարդ խղճահարվում էր նայել, — այնպես ընկրճված էր և այնպես, չնայած դրան, աշխատում էր թաքցնել իր վիշտը՝ մահամերձ հորը չվշտացնելու համար: «C'est pé-nible, mais cela fait du bien; ça élève l'âme de voir des

¹ Այո, սիրելիս, այս մեզ համար մեծ կորուստ է, էլ չեմ խոսում ձեր մասին: Բայց աստված կօգնի ձեզ, դուք երիտասարդ եք, և հիմա հույս ունեմ, մեծ հարստության տեր եք: Կտակը դեռ չի բացված: Ես բավական ճանաչում եմ ձեզ և վստահ եմ, որ դա ձեզ չի շքմեցնի: Բայց դա ձեր վրա պարտականութուններ է դնում, և դուք պետք է տվածարդ լինեք:

² Հետո, գուցե, պատմեմ ձեզ, որ եթե ես այնտեղ չլինեի, աստված գիտի ի՞նչ կարդ էր պատահել: Դուք գիտեք, որ մորեղբայրս երբ օր առաջ ինձ խոստացավ՝ Թորիսին շնորհակալ, բայց էլ չկարողացավ խոստումը կատարել: Հույս ունեմ, բարեկամս, դուք կկատարեք ձեր հոր ցանկությունը:

¹ Նա այլևս չկա...

² Գնանք, ես կուզեցեմ ձեզ: Աշխատեցեք արտասվել. ոչ մի բան այնպես չի թեթևացնում, ինչպես արցունքը:

hommes, comme le vieux comte et son digne fils¹. ասում էր Աննա Միխայլովնան: Իշխանադստեր և իշխան Վասիլիի արարքների մասին նույնպես պատմեց, առանց հավանութուն տալու, բայց մեծ գաղտնապահությամբ ու շշուկով:

XXII

Լիսյի Գորի-ում՝ իշխան Նիկոլայ Անդրեևիչ Բալկոնսկու կալվածում օրըստօրի սպասում էին երիտասարդ իշխան Անդրեյին և իշխանուհուն. բայց այդ սպասումը չէր խանգարում այն կարգ ու կանոնը, որով ընթանում էր կյանքը ծեր իշխանի տան մեջ: Գեներալ-անշեֆ իշխան Նիկոլայ Անդրեևիչը, որ հասարակության մեջ հայտնի էր le roi de Prusse² մականունով, այն օրից, երբ Պավել կոյսեր օրով աքսորվել էր գյուղ, ապրում էր Լիսյի Գորի կալվածում իր աղջկա՝ Իշխանադուստր Մարիայի, և նրա ընկերակից՝ m-lle Bourie - ne-ի³ հետ: Նոր կայսեր օրով, թեև նրան թուլյատրվեց մայրաքաղաք գալ, բայց նա շարունակում էր ապրել իր գյուղում, ասելով, որ եթե մեկն իր կարիքն զգա, նա Մոսկվայից 150 վերստ կկտրի-կգա Լիսյի Գորի, և որ իրեն ոչ ոք և ոչինչ հարկավոր չի: Նա ասում էր, թե մարդկային արատները երկու աղբյուր ունեն միայն — պարսպութուն և սնահավատութուն, և թե կա երկու առաքինութուն միայն — գործունեութուն և խելք: Նա անձամբ ինքն էր զբաղվում իր աղջկա դաստիարակությամբ, և որպեսզի նրա մեջ զարգացնի այդ երկու գըլխավոր առաքինութունները, մինչև քսան տարեկան հասակը նրան տալիս էր հանրահաշվի և երկրաչափության դասեր և նրա կյանքը դասավորել էր այնպես, որ անընդհատ զբաղումների մեջ անցնի: Նա ինքը շարունակ զբաղված էր. մերթ իր հիշատակարանն էր գրում, մերթ բարձր մաթեմատիկական խնդիրներ էր լուծում, մերթ դազգահի վրա քթախոտի կամ ծխախոտի տուփեր էր շինում-հղկում, մերթ աշխատում էր պարտեզում և հսկում կառուցումների վրա, որ նրա կալվա-

ծում չէին վերջանում: Ուրովհետև գործունեության պիտակոր պայմանը կարգ ու կանոնն է, ուստի և նրա կենցաղի մեջ կարգ ու կանոնը հասել էր իր ամենաբարձր աստիճանին: Նրա սեղան նստելը կատարվում էր միևնույն անփոփոխ պայմաններում, և ոչ միևնույն ժամին, այլև միևնույն բոլորին: Իրեն շրջապատող մարդկանց հետ, սկսած աղջկանից մինչև սպասավորները, իշխանը խիստ էր և պահանջկոտ, և դրա համար, խստասիրտ չլինելով հանդերձ, երկյուղ և հարգանք էր ներշնչում, ինչ որ հեշտությամբ չի հաջողվում ամենադաժան մարդուն անգամ: Չնայած որ պաշտոնաթող էր և այժմ պետական գործերի մեջ ոչ մի ազդեցութուն չունեիր, բայց և այնպես յուրաքանչյուր նահանգապետ (այն նահանգի, որի մեջ մտնում էին իր կալվածները) իր պարտքն էր համարում ներկայանալ նրան և նույնպես, ինչպես: Ճարտարապետը, պարտիզպանը կամ իշխանադուստր Մարիան, սպասել սպասավորների սըրահում՝ մինչև իշխանի ընդունելության ժամը հասնելու: Եվ այդ սրահում ամեն ոք ունենում էր հարգանքի և անգամ երկյուղի նույն զգացումը, երբ բացվում էր նրա առանձնասենյակի բարձր ու խոշոր դուռը և ներս էր մտնում փոշի ցանած կեղծամով միջահասակ ծերունի իշխանը՝ մանրիկ ոսկրոտ ձի: Ներով և կախված գորշ հոնքերով, որոնք երբեմն, երբ նա հոնքերը կիտում էր, ծածկում էին նրա խելացի և կարծես չահել պսպղուն աչքերի փայլը:

Երիտասարդ ամուսինների գալու օրը, առավոտյան իշխանադուստր Մարիան, սովորության համաձայն, առավոտվա տեսակցության համար, որոշյալ ժամին մտավ սպասավորների սրահը, երկյուղածությամբ խաչակնքեց երեսը և ներքուստ աղոթեց: Ամեն օր նա գալիս էր տեսակցության և ամեն օր աղոթում, որ տեսակցութունը բարեհաջող անցնի:

Սրահում նստած շպարված ծերունի-սպասավորը հանդարտ շարժումներով ոտքի ելավ և ցած ձայնով ասավ. «Համեցեք»:

Դրան ետևից լսվում էր դազգահի համաշափ ձայնը: Իշխանադուստրը վախվախելով քաշեց հեշտ ու անաղմուկ բացվող դուռը և կանգ առավ շեմքում: Իշխանն աշխատում էր դազգահի վրա. նայեց ու շարունակեց գործը:

Ահագին առանձնասենյակը լիքն էր, ըստ երևույթին, միշտ գործածելի իրերով: Խոշոր սեղանը, որի վրա դրված էին զբը-

¹ Դա ծանր է, բայց փրկարար. հոգիդ բարձրանում է, երբ ծեր կոմսի և իր արժանավոր զավակի նման մարդիկ ես տեսնում:

² Գրուսիայի թագավոր:

³ Մագմսուզեի Բուրիեն:

քեր ու հատակագծեր, բարձր, սուպակայ դռներով գրասպասարանները՝ բանալիները վրան, կանգնած դիրքով գրելու հարմարեցրած սեղանը, որի վրա դրված էր մի բաց տետր. խառատի դազգահը՝ իր գործիքներով ու շուրջը թափված տաշեղներով, — այս բոլորը ցույց էին տալիս մշտական բազմազան ու կանոնավոր գործունեություն: Թաթարական արծաթակար մուճակ հագած փոքրիկ ոտի շարժումից, ոսկրոտ, շլուտ ձեռի ամուր սեղմումից երևում էր իշխանի առույգ ծերունի ճամառ ու դիմացկուն ուժը: Մի քանի շրջան անելով՝ նա ոտը վերցրեց դազգահի ոտկալից, դուրը սրբեց-զցեց դազգահից կախված կաշվե տոպրակը և, սեղանին մոտենալով, աղջկան կանչեց: Նա երբեք իր գալակներին չէր օրհնում, և միայն, դեմ անելով նրան իր մազոտ, դեռևս չսափրած երեսը, խստություն մեծ և միաժամանակ ուշադիր-քնքշություն նրան նայելով՝ ասավ.

— Առողջ ես... դե, ուրեմն նստի՛ր:

Նա վերցրեց իր ձեռով գրած երկրաչափության տետրակը և ոտով բազկաթոռը սեղանին մոտեցրեց:

— Վաղվա համար, — ասավ նա, արագ թերթելով ու մի հատվածից մինչև մյուսը կոշտ եղունգով նշան արավ:

Իշխանադուստրը կոացավ տետրակի վրա:

— Սպասիր, նամակ ունես, — հանկարծ ասավ ծերունին ու սեղանի վրա հարմարեցրած պայուսակից հանեց կանացի ձեռքով գրած մի նամակ ու նետեց սեղանի վրա:

Նամակը տեսնելով՝ իշխանադուստր Մարիայի դեմքի վրա կարմիր բծեր երևացին: Նա շտապով վերցրեց այն ու կարդաց:

— Էլ տիզի՞ց է, — հարցրեց իշխանը, սառը ժպտով ցույց տալով իր տակավին ամրապինդ ու դեղին ատամները:

— Այո, ժյուլիից է, — ասավ իշխանադուստրը ամաչկոտ նայելով և ամաչկոտ ժպտալով:

— Երկու նամակ էլ թույլ կտամ, իսկ երրորդն արդեն կըկարդամ, — խստություն մեծ ասավ իշխանը, — վախենում եմ որ շատ հիմար բաներ եք գրում: Երրորդը կկարդամ:

— Կարդացե՛ք թեկուզ այս, mon père¹ — պատասխանեց իշխանադուստրն էլ ավելի կարմրելով ու նամակը նրան մեկնելով:

— Երրորդը, ես ասի երրորդը, — կտրուկ գոռաց իշխանը,

¹ Հայր իմ:

նամակը հրելով և, սեղանին կոթնելով, մոտ քաշեց երկրաչափության տետրակը:

— Դեհ, օրիորդ, — սկսեց ծերունին, ավելի մոտենալով աղջկան ու տետրակի վրա կոանալով. նա ձեռը դրեց աղջկա նստած բազկաթոռի թիկունքին, այնպես որ իշխանադուստրն ամեն կողմից իրեն շրջապատված զգաց հոր քթախոտի և ծերունական-վանող հոտով, որ վաղուց ծանոթ էր իրեն: — Դեհ, օրիորդ, այս եռանկյունիները նման են. տեսում ես, a b c անկյունը...

Իշխանադուստրը վախեցած նայում էր իրենից շատ մոտ փայլող հոր աչքերին. կարմիր բծերը ողողեցին նրա դեմքը. երևում էր, որ նա ոչինչ չի հասկանում և այնպես է վախենում, որ երկյուղը խանգարելու է նրան՝ հասկանալ հոր հետագա բացատրությունները, որքան էլ նրանք պարզ լինեն: Մեղավորը ուսուցի՞չն էր թե աշակերտուհին, հայտնի չէ, բայց միևնույն բանը կրկնվում էր ամեն օր. իշխանադուստր աչքերը մթազնում էին, ոչինչ չէր տեսնում, չէր լսում, միայն զգում էր շոր դեմքով խիստ հոր ներկայությունը, զգում էր նրա շունչառությունն ու հոտը և մտածում միայն թե ինչպես անի, որ շուտով հեռանա հոր առանձնասենյակից և իր սենյակի ազատության մեջ ըմբռնի խնդիրը: Ծերունու համբերությունը հատնում էր. նա գոռոցով մոտեցնում-հեռացնում էր բազկաթոռը, որի վրա նստած էր ինքը և, ճիգ էր գործադրում, որ չբարկանա, բայց ամեն անգամ գրեթե տաքանում էր, հայհոյում, երբեմն էլ տետրակը նետում:

Իշխանադուստրը սխալ պատասխան տվեց:

— Է, ի՞նչ հիմարն ես, — պատասխանեց իշխանը, հրելով տետրակը և արագ ետ դառնալով, բայց իսկույն էլ վեր կացավ, մի երկու քայլ արավ, ձեռը դեպքից իշխանադուստր մաղերին ու կրկին նստեց:

Նա մոտեցավ ու շարունակեց բացատրությունը:

— Ձի կարելի, իշխանադուստր, չի կարելի, — ասավ նա, երբ իշխանադուստրը տրված դասերի տետրակը վերցնելով՝ պատրաստվում էր արդեն դուրս գնալ, — մաթեմատիկան բարդ բան է, օրիորդ: Իսկ ես չեմ ուզում, որ դու մեր հիմար օրիորդների նման լինես: Համբերի՛ր — կսիրես: — Նա ձեռով շոյեց աղջկա այտը: — Կսովորես-կխելոքանաս:

Իշխանադուստրն ուզում էր դուրս գալ, բայց հայրը ձեռի շարժումով կանգնեցրեց նրան և բարձր սեղանից հանեց մի նոր շկտրտած գիրք:

— Ահա էլի ինչ-որ խոհուսդների բանալի է ուղարկել քեզ քո էլտիզան: Կրոնական է: Իսկ ես ոչ ոքի դավանութիւն, հավատի մեջ չեմ խառնվում... Ինքս նայել եմ: Վերցրու: Դե, գնա, գնա:

Չոր մեղմորեն դիպցրեց ալջկա ուսին և դուռը փակեց նրա ետևից:

Իշխանադուստր Մարիան իր սենյակը վերագարծած սր-խուր, վախի արտահայտութեամբ, որ հաճախ էր ունենում և նրա տգեղ, հիվանդոտ դեմքն ավելի էր տգեղանում. նստեց իր գրասեղանի մոտ, որի վրա դրված էին մանրիկ պորտրե-ներ, թափված էին տետրակներ ու գրքեր: Իշխանադուստրը նույնքան թափթփված էր, որքան հայրը կարգապահ: Նա ձեռի տետրակը մի կողմ դրեց և անհամբեր բաց արավ նամակը: Նամակը գրել էր իր մանկութեան ամենամոտիկ ընկերուհին. այն ժյուլի Կարագինան, որ ներկա էր Ռոստովների անվանա-կոչութեանը:

Ժյուլին գրում էր.

«Chère et excellente amie, quelle chose terrible et ef-
frayante que l'absence! J'ai beau me dire que la moitié
de mon existence et de mon bonheur est en vous, que malgré
la distance qui nous sépare, nos coeurs sont unis par des
liens indissolubles; le mien se révolte contre la destinée,
et je ne puis, malgré les, plaisirs et les distractions qui
m'entourent, vaincre une certaine tristesse cachée que je
ressens au fond du coeur depuis notre séparation. Pourquoi
ne sommes-nous pas réunies, comme cet été dans votre
grand cabinet sur le canapé bleu, la canapé à confidences?
Pourquoi ne puis-je, comme il y a trois mois, puiser de
nouvelles forces morales dans votre regard si doux, si
calme et si pénétrant, regard que j'aimais tant et que je
crois voir devant moi, quand je vous écris»¹.

¹ «Միրելի և թանկագին բարեկամս, ինչ սոսկալի ու սարսափելի բան է անջատումը: Որքան էլ ինքս ինձ ասում եմ, թե իմ գոյութեան ու երջանկու-

Մինչև այստեղ կարգալով՝ իշխանադուստրը հառաչեց ու նայեց աչ կողմը դրված մեծ հայելուն, որն անդրադարձրեց նրա թույլ մարմինն ու նիհար դեմքը: Աչքերը, որ միշտ թախ-ծոտ էին, ալժամ առանձին հուսահատութեամբ հայելու միջից նայում էին իրեն: «Նա ինձ շողոքորթում է», մտածեց իշխա-նադուստրը, շուտ եկավ և շարունակեց կարդալ: Ժյուլին, սա-կայն, ընկերուհուն չէր շողոքորթում. իսկապես, իշխանա-դուստր խոշոր, խոր ու ճառագայթող աչքերը (երբեմն նրանցից կարծես տաք լույսի ճառագայթներ էին ցայտում խուրձե-րով) այնքան սիրուն էին, որ հաճախ, չնայած ամբողջ դեմքի ընդհանուր տգեղութեանը, այդ աչքերը դառնում էին գեղեց-կությունից ավելի հրապուրիչ: Բայց իշխանադուստրը երբեք չէր տեսնում իր աչքերի լավ արտահայտութեանը, այն ար-տահայտութեանը, որ ունենում էր այն վայրկյաններին, երբ ինքն իր մասին չէր մտածում: Ինչպես բոլոր մարդկանց, այն-պես էլ նրա դեմքը՝ շինծու-անբնական, վատ արտահայտու-թյուն էր ընդունում, երբ նա հայելուն էր նայում: Նա շարուն-ակեց կարդալ¹.

Քյան կեսը գուցե եք, որ չնայած մեզ բաժանող տարածութեանը, մեր սր-տերը միացած են անբախտի կապերով, սիրտս ըմբոստանում է ճակատագրի դեմ և, չնայած ինձ շրջապատող զվարճություններին, չեմ կարողանում խեղ-դել թաքուն վիշտս, որ զգում եմ սրտիս խորքում մեր անջատումից ի վեր: Ինչո՞ւ ամառվա պես միասին չենք, ձեր մեծ առանձնասենյակում, երկնազույն բազմոցի վրա, «մտերմական» բազմոցի վրա: Ինչո՞ւ, ինչպես երեք ամիս առաջ, չեմ կարողանում նոր բարոյական ուժեր ստանալ ձեր հեղ, անդորր ու թավսե-ցող հայացքից, որ այնպես սիրում էի և որը այս վայրկյանիս, այս տողերը գրելիս, տեսնում եմ իմ առջև:

¹ Ամբողջ Մոսկվան միայն պատերազմի մասին է խոսում: Երկու եղ-բայրենիցս մեկն արդեն արտասահման է, մյուսը գվարդիայում, որը շու-տով շարժվելու է դեպի սահմանազուխը: Մեր սիրելի թագավորը թողնում է Պետերբուրգը և, ինչպես ենթադրում են, մտադիր է իր թանկագին կյանքը ենթարկել պատերազմի վտանգներին: Աստված տա, որ այդ կորսիկացի հրե-շը՝ Եվրոպայի խաղաղությունը վրդովողը, տապալվի այն հրեշտակի ձեռով, որ Ամենակարողը իր ողորմածութեամբ վեհապետ է կարգել մեզ վրա: Չի-սելով եղբայրներիս մասին, այս պատերազմը զրկեց ինձ սրտիս ամենամո-բարեկամից: Ես խոսում եմ երիտասարդ Նիկոլայ Ռոստովի մասին, որը, իր խանդավառ բնավորութեան շնորհիվ, չկարողացավ տանել անգործութեանը և համալսարանը թողնելով՝ մտավ բանակ: Խոստովանում եմ ձեզ, սիրելի Մարի, որ, չնայած նրա շփագանջ երիտասարդ հասակին, նրա բանակ մը-

«Tout Moscou ne parle que guerre. L'un de mes deux frères est déjà à l'étranger, l'autre est avec la garde, qui se met en marche vers la frontière. Notre cher empereur a quitté Pétersbourg et, à ce qu'on prétend, compte lui-même exposer sa précieuse existence aux chances de la guerre. Dieu veuille que le monstre corsicain, qui détruit le repos de l'Europe, soit terrassé par l'ange que le tout-puissant, dans sa miséricorde, nous a donnée pour souverain. Sans parler de mes frères, cette guerre m'a privée d'une relation des plus chères à mon cœur. Je parle du jeune Nicolas Rostoff, qui avec son enthousiasme n'a pu supporter l'inaction et a quitté l'université pour aller s'enrôler dans l'armée. Eh bien, chère Marie, je vous avouerai, que, malgré son extrême jeunesse, son départ pour l'armée a été, un grand chagrin pour moi. Le jeune homme, dont je vous parlais cet été, a tant de noblesse, de véritable jeunesse qu'on rencontre si rarement dans le siècle ou nous vivons parmi nos vieillards de vingt ans. Il a surtout tant de franchise et de cœur. Il est tellement pur et poétique, que mes relation avec lui, quelque passagères qu'elles

fussent, ont été l'une des plus douces jouissances de mon pauvre cœur, qui a déjà tant souffert. Je vous raconterai un jour nos adieux et tout ce qui s'est dit en partant. Lout cela est encore trop frais. Ah! chère amie, vous êtes heureuse de ne pas connaître ces jouissances et ces peines si poignantes. Vous êtes heureuse, puisque les dernières-sont ordinairement les plus fortes! Je sais fort bien, que le comte Nicolas est trop jeune pour pouvoir jamais devenir pour moi quelque chose de plus qu'un ami, mais cette douce amitié, ces relations si poétiques et si pures ont été un besoin pour mon cœur. Mais n'en parlons plus. La grande nouvelle du jour qui occupe tout Moscou est la mort du vieux comte *Բեզուխով* et son héritage. Figurez-vous que les trois princesses n'ont reçu que très peu de chose, le prince Basile rien, es que c'est M. Pierre qui a tout hérité, et qui par-dessus le marché a été reconnu pour fils légitime, par conséquent comte *Բեզուխով* et possesseur de la plus belle fortune de la Russie. On prétend que le prince Basile a joué un très vilain rôle dans toute cette histoire et qu'il est reparti tout penaud pour Pétersbourg.

նելը մեծ վիշտ է ինձ համար: Այդ երիտասարդի մեջ, որի մասին անցյալ ամառ խոսեցի ձեզ հետ, այնքան ազնվություն կա, այնքան աշխուժություն, որ հազվագյուտ է մեր դարի քսան տարեկան ժերոնիկների մեջ: Առանձնապես շատ անկեղծ է և սրտագին: Նա այնքան մաքուր է և պոեզիայով լի, որ մեր հարաբերությունները, շնայած շատ կարճատև լինելուն, իմ տխուր սրտի ամենաթաղցր ուրախություններից մեկն է եղել: Իմ սրտի, որ այնքան արդեն տանջվել է: Ես մի օր կպատմեմ մեր հրաժեշտը և այն բոլորը, ինչ խոսեցինք այդ ժամին: Այդ ամենը դեռ շատ թարմ է... Ա՛խ, սիրելի բարեկամս, երջանիկ եք, որ դուք ծանոթ չեք այս այրող վայելքներին, այս տոչորող վշտերին: Երջանիկ եք, որովհետև վերջինները սովորաբար շատ ավելի զորավոր են առաջիններից: Ես շատ լավ գիտեմ, որ կոմս Նիկոլայը դեռ շատ երիտասարդ է, և ինձ համար բարեկամից բացի ուրիշ բան չի կարող լինել: Բայց այդ թաղցր բարեկամությունը, այդ այնքան բանաստեղծական ու այնքան մաքուր հարաբերությունները սրտիս պահանջն էին: Բայց բավական է այդ մասին:

մեծ կարողություն տերը: Ասում են, թե իշխան Վասիլին շատ ստոր դեր է խաղացել այս ամբողջ գործի մեջ, և թե Պետերբուրգ է մեկնել շատ շփոթված, խոստովանում եմ, ես այս ժառանգություններից և կտակներից շատ քիչ բան գիտեմ: Գիտեմ միայն այս, որ այն օրից, երբ այդ երիտասարդը, որին մենք բոլորս ճանաչում էինք սոսկ Պիեռ անունով, դարձել է կոմս Բեզուխով և Ռուսաստանի մեծագույն կարողություններից մեկի տերը,— զավեշտական է տեսնել հարսնացու աղջիկ ունեցող մայրերի և հենց իրենց աղջիկների փոխված վերաբերմունքը դեպի այդ պարոնը, որը (փակագծի մեջ ասեմ) միշտ ոչնչություն է թվացել ինձ: Որովհետև երկու տարի է արդեն բոլորը զվարճանում են՝ ինձ համար, ինձ անծանոթ փեսացուներ գտնելով, հիմա Մոսկովայի ամուսնական քրոնիկան ինձ դարձնում է կոմսուհի Բեզուխովա: Բայց դուք գիտեք, որ ես այդ բնավ չեմ ցանկանում: Ի դեպ՝ ամուսնությունների մասին: Գիտե՞ք, որ մոտ օրիցս ընդհանուր մորախույր Աննա Միխայլովնան հայտնեց ինձ, իբրև խորին գաղտնիք, ձեզ ամուսնացնելու մտադրությունը: Դա ոչ այլ ոք է, եթե ոչ իշխան Վասիլիի որդի Անատոլը, որին կարգի բերելու համար ուզում են ամուսնացնել մի հարուստ, բարձրատոհմ աղջկա հետ, և ծնողների ընտրությունը կանգ է առել ձեզ վրա: Զգուհեմ, ինչպես եք նայում այս խնդրին, բայց ես պարտքս եմ համարում նախապես հայտնել ձեզ: Նա, ասում

«Գլխավոր նորությունը, որ զբաղեցնում է ամբողջ Մոսկովան,— ժերոնիկ կոմս Բեզուխովի մահն է և նրա թողած ժառանգությունը: Երևակայեցեք, երեք իշխանադուստրները ստացել են ինչ-որ շնչին բան, իշխան Վասիլին ոչինչ, իսկ Պիեռը՝ ամբողջ հարստության ժառանգ է, բացի դրանից, ճանաչված է օրինական որդի, ուրիմն և կոմս Բեզուխով և Ռուսաստանում եղած ամենա-

Je vous avoue, que je comprends très peu toutes ces affaires de legs et de testament; ce que je sais, c'est que depuis que le jeune homme que nous connaissions tous sous le nom de M. Pierre tout court est devenu comte *Рб-գուխով* et possesseur de l'une des plus grandes fortunes de la Russie, je m'amuse fort à observer les changements de ton et des manières des mamans accablées de filles à marier et des demoiselles elles-mêmes à l'égard de cet individu, qui par parenthèse, m'a paru toujours être un pauvre sire. Comme on s'amuse depuis deux ans à me donner des promesses que je ne connais pas le plus souvent, la chronique matrimoniale de Moscou me fait comtesse *Рбզուխովա*. Mais vous sentez bien que je ne me soucie nullement de le devenir. A propos de mariage, savez-vous que tout dernièrement la tante en général *Աննա Միխայլովնա*, m'a confié sous le sceau du plus grand secret un projet de mariage pour vous. Ce n'est ni plus, ni moins, que le fils du prince Basile, Anatole, gu'on voudrait ranger en le mariant à une personne riche et distinguée, et c'est sur vous qu'est tombé le choix des parents. Je ne sais comment vous envisagerez la chose, mais j'ai cru de mon devoir de vous en avertir. On le dit très beau et très mauvais sujet; c'est tout ce que j'ai pu savoir sur son compte.

Mais assez de bavardage comme cela. Je finis mon second feuillet, et maman me fait chercher pour aller dîner chez les Apraksines. Lisez le livre mystique que je vous

envoie et qui fait fureur chez nous. Quoiqu'il y ait des choses dans ce livre difficiles à atteindre avec la faible conception humaine, c'est un livre admirable dont la lecture calme et élève l'âme. Adieu. Mes respects à monsieur votre père et mes compliments à m-elle Bourienne. Je vous embrasse comme je vous aime. Julie».

«P. S. Donnez-moi des nouvelles de votre frère et de sa charmante petite femme».

Իշխանադուստրը մտածեց, ժպտաց (որից՝ նրա ճառագայթող աչքերով լուսավորված դեմքը բոլորովին կերպարանափոխվեց), և հանկարծ վեր կենալով՝ ծանրաբայլ մոտեցավ սեղանին: Վերցրեց մի թուղթ, և նրա ձեռն սկսեց սահել այդ թղթի վրայով: Գրեց այս պատասխանը¹.

«Chère et excellente amie. Votre lettre du 13 m'a causé une grande joie. Vous m'aimez donc toujours, ma poétique Julie. L'absence, dont vous dites tant de mal, n'a donc

¹ «Միրելի և անզին բարեկամս: Ձեր 13-ի թվակիր նամակը ինձ մեծ ուրախութիւն պատճառեց: Դուք դեռ սիրում եք ինձ, իմ բանաստեղծական ժյուլիա: Անշատու՛մը, որի մասին այնքան վատ բաներ եք ասում, երևում է, իր սովորական ազդեցութիւնը չի ունեցել ձեր վրա: Դուք գանգատվում եք անշատու՛մից, հապա ի՞նչ պիտի ասեմ ես, եթե կարողանայի,— ե՛ս, որ զրկված եմ բոլոր նրանցից, ովքեր թանկ են ինձ: Ա՛խ, եթե մեզ միխթարող կրօնն էլ չլիներ, կյանքը շատ տխուր կլիներ: Ինչո՞ւ համար եք ինձ խիստ հայացքներ վերագրում, երբ խոսում եք ձեր զեպի երիտասարդն ունեցած լավ վերաբերմունքի մասին: Այդ կողմից ես խիստ եմ միայն իմ նկատմամբ: Ուրիշներին այդպիսի զգացումները հասկանալի են ինձ համար, և եթե չեմ կարողանում հավանութիւն տալ դրանց, ապրած չլինելով այդ զգացումները, ապա չեմ էլ դատապարտում: Ինձ թվում է միայն, որ քրիստոնեական սերը, սերը զեպի մեծավորը, սերը զեպի թշնամին՝ շատ ավելի արժանավոր, քաղցր ու լավ է, քան այն զգացումները, որոնք երիտասարդի գեղեցիկ աչքերը կարող են ներշնչել մի երիտասարդ, բանաստեղծական ու սիրող ազնւոյ, ինչպիսին դուք եք:

Կո՛մս Բեզուխովի մահվան լուրը մեզ հասավ ձեր նամակից առաջ, և հարս շատ հուզվեց դրանից: Նա ասում է, որ նա մեծ դարի նախավերջին ներկայացուցիչն է, և որ հերթը հիմա իրենն է, բայց ձեռքից եկածը պիտի անի, որ այդ հերթը որքան կարելի է ուշ հասնի: Աստված ազատի մեզ այդ ահո՛ւսի դժբախտութիւնից:

Իս չեմ կարող համաձայնել Պիեռի մասին հայտնած ձեր կարծիքներին, Պիեռի, որին ճանաչում եմ շեռ մտնութիւնից: Ինձ միշտ թվացել է, որ նա

են, շատ գեղեցիկն է, բայց ստահակի մեկը: Ահա բոլորը, ինչ կարողացա իմանալ նրա մասին:

Բայց բավական է շաղկարտեմ: Վերջացնում եմ երկրորդ թերթը, իսկ մայրիկը մարդ է ուղարկել, որ Ապրաքսինների մոտ ճաշի գնանք: Կարդացե՛ք ուղարկածս միտսիքական գիրքը. դա մեզ մոտ մեծ հաջողութիւն ունի: Թեև այնտեղ կան բաներ, որ մարդկային տկար միտքը գժվար կհասկանա, սակայն սքանչելի գիրք է. նրա ընթերցումը հանգստացնում-բարձրացնում է մարդոս հոգին: Մնաք բարով: Հարգանքներս ձեր հորը և բարեկեցիկ Մ-իլե Բուլգինին: Սրտագին գրկում եմ ձեզ:

Ժյուլիա:

«Հ. Գ. Գրեց ձեր եղբոր և նրա հմայիչ կնոջ մասին»:

pas eu son influence habituelle sur vous. Vous vous plaignez de l'absence — que devrai-je dire moi, si j'osais me plaindre, privée de tous ceux qui me sont chers? Ah! si nous n'avions pas la religion pour nous consoler, la vie serait bien triste. Pourquoi me supposez-vous un regard sévère, quand vous me parlez de votre affection pour le jeune homme? Sous ce rapport je ne suis rigide que pour moi. Je comprends ces sentiments chez les autres et si je ne puis approuver ne les ayant jamais ressentis, je ne les condamne pas. Il me paraît seulement que l'amour chrétien, l'amour du prochain, l'amour pour ses ennemis est plus méritoire, plus doux et plus beau, que ne le sont les sentiments que peuvent inspirer les beaux yeux d'un jeune homme à une jeune fille poétique et aimante comme vous.

La nouvelle de la mort du comte *Քեզուխով* nous est parvenue avant votre lettre, et mon père en a été très affecté. Il dit que c'était l'avant-dernier représentant du grand siècle, et qu'à présent c'est son tour; mais qu'il

fera son possible pour que son tour vienne le plus tard possible. Que Dieu nous garde de ce terrible malheur!

Je ne puis partager votre opinion sur Pierre que j'ai connu enfant. Il me paraissait toujours avoir un cœur excellent, et c'est la qualité que j'estime le plus dans les gens. Quant à son héritage et au rôle qu'y a joué le prince Basile, c'est bien triste pour tous les deux. Ah, chère amie, la parole de notre divin Sauveur qu'il est plus aisé à un chameau de passer par le trou d'une aiguille, qu'il ne l'est à un riche d'entrer dans le royaume de Dieu, cette parole est terriblement vraie; je plains le prince Basile et je regrette encore davantage Pierre. Si jeune et accablé de cette richesse, que de tentations n'aura-t-il pas à subir! Si on me demandait ce que je désirerais le plus au monde, ce serait d'être plus pauvre que le plus pauvre des mendiants. Mille grâces, chère amie, pour l'ouvrage que vous m'envoyez, et qui fait si grande fureur chez vous. Cependant, puisque vous me dites qu'au milieu de plusieurs bonnes

սքանչելի սիրտ ունի, իսկ դա այն հատկութիւնն է, որը ես ամենից ավելի եմ գնահատում մարդկանց մեջ: Ինչ վերաբերում է նրա ստացած ժառանգութեանն է, իշխան Վասիլիի կատարած դերին, դա շատ վատ է երկուսի համար էլ: Ախ, սիրելի բարեկամս, մեր աստվածային փրկչի խոսքերը, թե ուղտն ավելի հեշտ կանցնի ասեղի ծակով, քան հարուստն արքայութիւն,— անշափ ճրջմարիտ խոսքեր են: Եղճում եմ իշխան Վասիլիին, մանավանդ Պիեռին: Այդպիսի մի երիտասարդ՝ մի այդպիսի ահագին կարողութեամբ ծանրաբեռնված,— քանի՞-քանի գայթակղութիւնների միջից պիտի անցնի: Եթե ինձ հարցնեին թե աշխարհիս վրա ի՞նչ եմ ցանկանում ամեն բանից ավելի,— ցանկանում եմ լինել ազգատներից ամենաաղքատը: Հազար շնորհակալութիւն, սիրելիս, այն գրքի համար, որ ուղարկել ես ինձ և որն այնքան աղմուկ է հանել այդտեղ: Բայց որովհետև ասում եք, թե շատ լավ բաների թվում կան և այնպիսիները, որոնք անմատչելի են մարդկային տկար մտքին, ուստի, ինձ թվում է, «վեւրդ է զբաղվել անհասկանալի գրքի ընթերցանութեամբ, որը այդ իսկ պատճառով ոչ մի օգուտ չի կարող բերել: Երբք չեմ կարողացել հասկանալ որոշ մարդկանց սերը դեպի միստիքական գրքերը, որոնք կասկածներ են միայն հարգանքով նրանց մտքերում, զրգոււմ են նրանց երկակայութիւնը և շափազանցութեան բնույթ տալիս նրանց՝ միանգամայն հակառակ քրիստոնեական պարզութեան: Ավելի լավ է կարդանք Գործք առաքելոցն ու ավետարանն: Զփորձենք թափանցել այդ գրքերում եղած խորհրդավորութիւնների մեջ, քանի որ մենք՝ նվաստ մեղավորներս...» Կ'ըլպես կարող ենք ըմբռնել նախա-

խնամութեան ահալոր ու սրբազան գաղտնիքները մինչ այն, քանի կրում ենք մեզ վրա այն մարմնական կեղևը, որը մեր ու հավիտենութեան միջև մի անթափանցելի վարագույր է քաշում: Ավելի լավ է սահմանափակվենք այն մեծ պատվիրանների ուսումնասիրութեամբ, որ մեր աստվածային փրկիչը թողել է մեզ՝ այստեղ, երկրի վրա՝ ղեկավարվելու համար: Աշխատենք համակերպել ու հետևել դրանց և աշխատենք համոզվել, թե որքան քիչ սանձարձակութիւն տանք մեր մտքին, այնքան ավելի հաճելի կլինենք աստծուն, որը մեր ժողով է իրենից չբխող ամեն մի գիտութիւն, և որքան քիչ խորասուզվենք այն բաների մեջ, որ աստծուն հաճելի է եղել թաքցնել մեզանից, նա այդ ավելի շուտ կպարզի մեզ իր աստվածային բանականութեամբ:

Հայրս ինձ ոչինչ չի ասել փեսացուի մասին, բայց հայտնեց միայն, որ նամակ է ստացել և սպասում է իշխան Վասիլիի այցելութեան. ինչ վերաբերվում է իմ ամուսնութեան ծրարքին, կասեմ ձեզ, սիրելի և անգին բարեկամս, որ ամուսնութիւնը, ըստ իս, աստվածային կարգ է, որին պիտի հնազանդել: Որքան էլ ծանր լինի ինձ համար, բայց եթե Ամենակարողին հաճելի լինի վրաս դնել ամուսնու և մոր պարտականութիւններ, ես պիտի աշխատեմ կատարել դրանք, որքան կարող եմ, հավատարմութեամբ, հոգ շտանելով ուսումնասիրելու իմ զգացումները դեպի այն անձը, որին նա կործանացնի ինձ: Եղբորիցս նամակ ստացա՝ հայտնում է, թե կնոջ հետ գալու է Լիսիե Գորի: Այս ուրախութիւնը երկար չի շարունակվելու, որովհետև նա մեզ թողնելու է, որպեսզի մասնակցի այդ դժբախտ պատերազմին, որի մեջ նն քաշել

choses il y en a d'autres que la faible conception humaine ne peut atteindre, il me paraît assez inutile de s'occuper d'une lecture inintelligible, qui par là même ne pourrait être d'aucun fruit. Je n'ai jamais pu comprendre la passion qu'ont certaines personnes de s'embrouiller l'entendement, en s'attachant, à des livres mystiques, qui n'élèvent que des doutes dans leurs esprits, exaltent leur imagination et leur donnent un caractère d'exagération tout-à-fait contraire à la simplicité chrétienne. Lisons les Apôtres et l'Évangile. Ne cherchons pas à pénétrer ce que ceux-là renferment de mystérieux, car, comment oserions-nous, misérables pécheurs que nous sommes, prétendre à nous initier dans les secrets terribles et sacrés de la Providence, tant que nous portons cette dépouille charnelle, qui élève entre nous et l'Éternel un voile impénétrable? Bornons-nous donc à étudier les principes sublime que notre divin Sauveur nous a laissé pour notre conduite ici-bas; cherchons à nous y conformer et à les suivre, persuadons-nous que moins nous donnons d'essor à notre faible esprit humain et plus il est agréable à Dieu. Qui rejette toute science ne venant pas de Lui; que moins nous cherchons à approfondir ce qu'il Lui a plu de dérober à notre connaissance, et plutôt Il nous en accordera la découverte par Son divin esprit.

«Mon père ne m'a pas parlé du prétendant, mais il m'a dit seulement qu'il a reçu une lettre et attendait une visite du prince Basile. Pour ce qui est du projet de mariage qui

մեզ, աստված գիտի թե ինչպես և ինչու համար: Ոչ միայն ձեզ մոտ բարձր կյանքի ու գործերի կենտրոնում, այլև այստեղ, գաշտային աշխատանքների և այս անդորրութեան մեջ, ինչպես քաղաքները սովորաբար պատկերացնում են գյուղը, լսել են պատերազմի արձագանքները և զգալի է նրանց ծանրութունը: Հայրս մի գլուխ խոսում է արշավանքների մասին, որից ես ոչինչ չեմ հասկանում, և երկու օր առաջ, գյուղի փողոցով իմ սովորական զրոսանքը կատարելիս՝ ներկա եղա մի սրտանմխիկ տեսարանի: Կյուղում հավաքած նորակոչիկների խումբն ուղարկվում էր բանակ: Պետք էր տեսնել, թե ինչ վիճակի մեջ էին գնացողների մայրերը, կանայք, երեխաները, և լսել գնացողների ու մնացողների լսոցն ու հեկեկանքը: Ստածում եմ, որ մարդկութիւնը մուսացել է իր աստվածային փրկչի սիրո և ներողամտութեան պատվերները, և իր գլխավոր արժանիքը տեսնում է միմյանց սպանելու արվեստի մեջ:

me regarde, je vous dirai, chère et excellente amie, que le mariage, selon moi, est une institution divine à laquelle il faut se conformer. Quelque pénible que cela soit pour moi, si le Tout-Puissant m'impose jamais les devoirs d'épouse et de mère, je tâcherai de les remplir aussi fidèlement que je le pourrai, sans m'inquiéter de l'examen de mes sentiments à l'égard de celui qu'il me donnera pour époux.

J'ai reçu une lettre de mon frère, qui m'annonce son arrivée à *Լիսյի Գորի* avec sa femme. Ce sera une joie de courte durée, puisqu'il nous quitte pour prendre part à cette malheureuse guerre, à laquelle nous sommes entraînés Dieu sait comment et pourquoi. Non seulement chez vous au centre des affaires et du monde on me parle que de guerre, mais ici au milieu de ces travaux champêtres et de ce calme de la nature, que les citadins se représentent ordinairement à la campagne, les bruits de la guerre se font entendre et sentir péniblement. Mon père ne parle que marche et contre-marche, choses auxquelles je ne comprends rien; et avant-hier en faisant ma promenade habituelle dans la rue du village, je fus témoin d'une scène déchirante... C'était un convoi des recrues enrôlés chez nous et expédiés pour l'armée... Il fallait voir l'état dans lequel se trouvaient les mères, les femmes, les enfants des hommes qui partaient et entendre les sanglots des uns et des autres! On dirait que l'humanité a oublié les lois de son divin Sauveur. Qui prêchait l'amour et le pardon des offenses, et qu'elle fait consister son plus-grand mérite dans l'art de s'entre-tuer.

«Adieu, chère et bonne amie, que notre divin Sauveur et Sa très Sainte Mère vous aient en Leur sainte et puissante garde.

Marie».

Մնացեք բարով, բարի և սիրելի բարեկամս: Թող մեր աստվածային փրկիչը և նրա ամենասուրբ մայրը պահեն ձեզ իրենց սուրբ և հզոր հովանու ներքո:

Մ ա Ր Ի Յ

— Ah, vous expédiez le courrier, princesse, moi j'ai déjà expédié le mien. J'ai écrit à ma pauvre mère¹, — *ասով հաճելի, հյուսիսի ձայնով ժպտուն m-lle Bourienne-ը, ներս գալով և իր հետ իշխանադուստր Մարիայի կենտրոնացած, թախծոտ ու մոռյլ մթնոլորտը մտցնելով բոլորովին այլ, թեթևամիտ ու զվարթ և ինքնագոհ մի շունչ:*

— Princesse, il faut que je vous prévienne, — *ավելացրեց նա, ձայնը ցածրադյնելով, — le prince a eu une altercation, — «altercation», — ասով նա, բավականութամբ ինքն իրեն լսելով, — une altercation avec Michel Ivanoff. Il est de très mauvaise humeur, très morose. Soyez prévenue, vous savez².*

— Ah! chère amie, — *պատասխանեց իշխանադուստր Մարիան, — je vous ai priée de ne jamais me prévenir de l'humeur dans laquelle se trouve mon père. Je ne me permets pas de le juger, et je ne voudrais pas que les autres le fassent³.*

Իշխանադուստրը ժամացույցին նայեց, և տեսնելով, որ արդեն հինգ րոպե է անցել երգեհոն նվագելու համար սահմանված ժամանակից, վախեցած դեմքով բազմոցարան գնաց: Տանը տիրող կարգ ու կանոնի համաձայն՝ իշխանը հանգստանում էր 12-ից մինչև 2-ը, իսկ իշխանադուստրը երգեհոն էր նվագում:

XXIII

Ալեհեր սենեկապահը նստած ննջում էր ու ականջ դնում իշխանի խոսքերին, որ լսվում էր նրա առանձնասենյակից: Իսկ տան հեռավոր մի կողմից, փակ դռների ետևից, լսվում էր

¹ Ա, դուք նամակ եք գրել, ես իմն արդեն ուղարկեցի: Խեղճ մայրիկիս եմ գրել:

² Պետք է նախազգուշացնեմ ձեզ, իշխանադուստր, որ իշխանը կովեց Միխայիլ Իվանիչի հետ: Տրամադրությունը շատ վատ է, այնպես մոռյլ է: Նախազգուշացնում եմ, իմացեք...

³ Ա՛հ, սիրելի բարեկամս: Ծա ձեզ խնդրել եմ՝ երբեք չասել ինձ, թե ինչ տրամադրության մեջ է հայրս: Ծա ինձ թույլ չեմ տա դատել նրան և չէի ցանկանա, որ ուրիշներն էլ դատեն:

քսաներորդ անգամը կրկնվող Դյուսսեկովյան սոնատի դժվարին պասսաժները:

Այդ ժամանակ տան մուտքին մոտեցան մի կառեթ և մի թեթև կառք: Կառեթից դուրս եկավ իշխան Անդրեյը, իջեցրեց իր փոքրիկ կնոջը և առաջ գցեց նրան: Մերունի Տիխոնը, պարիկով գլուխը դուրս հանեց սրահից և շշուկով հայտնեց, թե իշխանը քնած է, ու արագ ծածկեց դուռը: Տիխոնը գիտեր, որ ո՛չ որդու գալուստը, ոչ էլ որևէ անսովոր դեպք՝ չպետք է խանդարեն օրվա կարգը: Իշխան Անդրեյը, ըստ երևույթին, շատ լավ գիտեր այդ բանը. նայեց ժամացույցին, կարծես նրա համար, որ ստուգի, թե հոր սովորույթները չեն փոխվել արդյոք իր բացակայության միջոցին, և, համոզվելով, որ չեն փոխվել, դարձավ կնոջը:

— *Քսան րուպեից հետո կզարթնի: Գնանք Մարիայի մոտ, — ասով նա:*

Փոքրիկ իշխանուհին այդ ժամանակամիջոցում հաստացել էր, բայց աչքերը և բեղիկներով կարճ շուրթը խոսելու ժամանակ բարձրանում ու ժպտում էր առաջվա պես զվարթ ու դուրեկան:

— Mais c'est un palais, — *ասով նա ամուսնուն, նայելով շուրջը մի արտահայտութամբ, որով գտվում են պարահանդեսի տիրոջը: — Allons, vite, vite!..¹ — նա, շորս կողմը նայելով, ժպտում էր և՛ Տիխոնին, և՛ ամուսնուն, և՛ իրենց ուղեկցող սպասավորին:*

— C'est Marie qui s'exerce? Allons doucement, il faut la surprendre².

Իշխան Անդրեյը մի տխուր արտահայտութամբ հետևում էր կնոջը:

— *Մերացել ես, Տիխոն, — ասով նա ձեռը համբուրող ծերունուն:*

Սենյակի (որտեղից երգեհոնի ձայներ էին գալիս) կողքի դռնից դուրս նետվեց սիրուն շիկահեր ֆրանսուհին: — M-lle Bourienne-ը ուրախությունից կարծես խենթացել էր:

¹ Սա կարգին պալատ է: Գնանք շուտ, շուտ:

² Մարիան է վարժություններ անում: Կամաց, հանկարծակի բերենք:

— Ah! quel bonheur pour la princesse, — ասավ նա: —
Enfin! Il faut que je la prévienne!¹

— Non, non, de grâce... Vous êtes m-lle Bourienne, je vous connais déjà par l'amitié que vous ma belle-soeur, — ասավ իշխանուհին, համբուրվելով ֆրանսուհու հետ: — Elle ne nous attend pas?²

Նրանք մտնեցան բազմոցարանի դռանը, որի ետեքց լըսվում էր նորից ու նորից կրկնվող սոնատի պասսաժը: Իշխան Անդրեյը կանգ առավ ու դեմքը խոժոռեց, կարծես ինչ-որ անախորժ բանի սպասելով:

Իշխանուհին ներս մտավ. պասսաժը կիսին ընդհատվեց՝ էսկից մի ճիշ, իշխանազուստր Մարիայի ծանր քայլվածքը և համբուրյի ձայնը: Երբ իշխան Անդրեյը ներս մտավ, իշխանազուստրն ու իշխանուհին, որ միայն մի անգամ՝ կարճ ժամանակով՝ տեսել էին իրար իշխան Անդրեյի հարսանիքի օրը, միմյանց գրկած՝ շրթունքներով պինդ հպվել էին իրար՝ առաջին վայրկյանային պատահած տեղերը: M-lle Bourienne-ը նրանց մոտ կանգնած՝ ձեռք սրտին դրած՝ ժպտում էր ջերմեռանդ. պատրաստ որքան լալու, նույնքան և ծիծաղելու: Իշխան Անդրեյն ուսերը թոթվեց ու դեմքը խոժոռեց, ինչպես խոժոռում է երաժշտություն սիրողը սխալ նոտա լսելիս: Կանայք թողին իրար. հետո նորից բռնեցին իրարու ձեռք, նորից սկսեցին համբուրվել. թողին իրար ձեռք ու նորից համբուրեցին միմյանց երես և, իշխան Անդրեյի համար բոլորովին անսպասելի, երկուսն էլ լաց եղան և կրկին սկսեցին համբուրվել: M-lle Bourienne-ը նույնպես լաց եղավ: Իշխան Անդրեյն, ըստ երևույթին, իրեն անհարմար դրություն մեջ էր զգում, բայց երկու կանանց շատ բնական էր թվում իրենց լացը. նրանք կարծես չէին էլ ենթադրում, թե իրեց տեսակցությունը կարող է այլ կերպ կատարվել:

¹ Օ՛հ, ինչ ուրախություն իշխանազուստր համար: Վերջապես՝ Պետք է նախապես իմաց տալ նրան:

² Ոչ, ոչ, խնդրեմ... Դուք մամուլի Բուրիենն ևք. ես արդեն ծանոթ եմ ձեզ այն բարեկամական հարաբերությունից, որ գոյություն ունի ձեր և իմ տալիս միջև նա մեզ լի՞ սպասում:

— Ah! chère!.. ah! Marie!.. — հանկարծ ասին երկուսը միասին ու ծիծաղեցին: — J'ai rêvé cette nuit... — Vous ne nous attendiez donc pas... Ah! Marie, vous avez maigri... Et vous avez repris...¹

— J'ai tout de suite reconnu madame la princesse², — միջամտեց m-lle Բուրիենը:

— Et moi qui ne me doutais pas!.. — բացականչեց իշխանազուստր Մարիան: — Ah! André, je ne vous voyais pas³.

Իշխան Անդրեյը ձեռ-ձեռի տված համբուրվեց քրոջ հետ և ասավ, որ նա նույնպիսի pleurnicheuse⁴ է, ինչպես միշտ: Իշխանազուստր Մարիան դարձավ եղբորը և, արցունքի միջից, նրա խոշոր ճառագայթող աչքերի սիրազեղ, ջերմ ու հեզ հայացքը կանգ առավ եղբոր դեմքին:

Իշխանուհին անզաղար խոսում էր: Վերին բեղիկներով կարճ շուրթը մի ակնթարթ արագություն մը իջնում էր ցած, դիպչում ուր պետք է՝ ներքին կարմիր շուրթին, և նորից բացվում էր ատամներով ու աչքերով շողուն ժպիտը: Իշխանուհին պատմում էր Սպասկայա սարի վրա իրեն պատահած դեպքը, որն իր վիճակի մեջ գտնվող կնոջ համար եղել է շատ վտանգավոր, և դրանից անմիջապես հետո հայտնեց, թե իր բոլոր զգեստները թողել է Պետերբուրգում և այստեղ, աստված գիտի, ինչ է հագնելու, և թե Անդրեյը բոլորովին փոխվել է, և թե Կիտտի Օդինցովան ամուսնացել է մի ծերունու հետ, և թե հարմար փեսացու կա նաև իշխանազուստր Մարիայի համար, բայց այդ մասին կխոսենք հետո: Իշխանազուստր Մարիան շարունակում էր անխոս նայել եղբորը, և նրա գեղեցիկ աչքերի մեջ կար թե՛ սեր, թե՛ վիշտ: Երևում էր, որ նա զբաղված է իր սեփական մտքերով, հարսի խոսքերից անկախ: Իշխանազուստրը հարսի, Պետերբուրգի վերջին տոնին վերաբերող պատմության կիսին դարձավ եղբորը:

¹ Ա՛խ, սիրելիս... Ա՛խ, Մարիա: — Իսկ ես գիշերը երազիս տեսա: — Ուրեմն դուք մեզ չէի՞ք սպասում... Օ՛հ, Մարի, այնքան նիհարել եք: — Իսկ դուք այնպես լցվել եք...

² Ես անմիջապես ճանաչեցի իշխանուհուն:

³ Մտքովս էլ չէր անցնում, թե... Ա՛խ, Անդրեյ, ես քեզ շտեմա էլ:

⁴ Հացկան:

— Եվ դու վերջնականապես որոշե՞լ ես գնալ պատերազմ,
André, — ասավ հոգոց քաշելով:

Lise-ն նույնպես ցնցվեց:

— Վաղն իսկ, — պատասխանեց եղբայրը:

— Il m'abandonne ici, et Dieu sait pourquoi, quand il
aurait pu avoir de l'avancement...¹:

Իշխանադուստր Մարիան մինչև վերջը չլսեց և, շարունակելով իր մտքերի թելը, հարսին դարձավ, սիրալիր աչքերով նրա փորը ցույց տալով:

— Ճի՞շտ է, — հարցրեց նա:

Իշխանուհու դեմքը փոխվեց, և նա հոգոց քաշեց:

— Այո, ճիշտ է, — ասավ նա: — Օհ, սարսափելի բան է...

Լիզայի վերին շուրթն իջավ: Նա երեսը մոտեցրեց տալոջ դեմքին և կրկին անսպասելի լաց եղավ:

— Նա հանգստանալու կարիք ունի, — ասավ իշխան Անդրեյը խոժոռվելով: — Այնպես չէ՞, Լիզա: Տար Լիզային սենյակդ, իսկ ես գնամ հայրիկի մոտ: Ինչպե՞ս է, դարձյալ նո՞ւյնն է:

— Նույնն է, նույնը. չգիտեմ քո աչքին ինչպես կերևա, — պատասխանեց իշխանադուստրն ուրախ-ուրախ:

— Նույն ժամե՞րը, նո՞ւյն պտույտները ծառուղիների մեջ, դադգահ՞ճը, — հարցրեց Անդրեյը հազիվ նկատելի ժպտով, որը ցույց էր տալիս, թե շնայած դեպի հայրն ունեցած սիրուն ու հարգանքին, հասկանում էր և նրա թույլ կողմերը:

— Նույն ժամերն ու դադգահճը, նաև մաթեմատիկան և իմ երկրաչափության դասերը, — պատասխանեց իշխանադուստրը ուրախ-ուրախ, կարծես երկրաչափության դասերը նրա կյանքի հաճելի ժամերը լինեին:

Երբ ծեր իշխանի հանգստյան ժամանակամիջոցը լրացնող քսան ընթացքն անցան, Տիխոնը եկավ՝ երիտասարդ իշխանին հոր մոտ հրավիրելու: Ծերունին իր ապրելակերպի մեջ մի բացառություն թույլ տվեց՝ ի պատիվ որդու վալըստյան. պատվիրեց ներս թողնել նրան ճաշից առաջ հագնվելիս: Իշխանը հին սովորույթի համաձայն կաֆտան էր կրում և շպարվում էր: Եվ այն ժամանակ, երբ իշխան Անդրեյը (ոչ թե

հյուրասրահներում ունեցած մոսյլ արտահայտությունը, այլ այն աշխույժ դեմքով, երբ խոսում էր Պիեռի հետ) ներս մտավ, ծերունին հարդարանքի սենյակում լայն, կաշեպատ բազմոցին նստած՝ գլուխը հանձնել էր Տիխոնի ձեռներին:

— Ա՛: Ինչպե՞հ. Բոնապարտին հաղթե՞լ ես ուզում, — ասավ ծերունին և թափահարեց կեղծամով-շպարած գլուխը, որքան թույլ էին տալիս այդ Տիխոնի ձեռներով հյուսվող մագերեսները: — Գոնե դո՛ւ մի լավ բռնիր նրա օձիքը, թե չէ նա մեզ էլ ջուտով իր հպատակը կդարձնի: — Բարև, — Ու այսը դեմ արավ որդուն:

Ծերունին լավ տրամադրություն մեջ էր նախաճաշյան քրեկից հետո: (Նա ասում էր, թե հետճաշյա քունը — արծաթ է, մինչճաշյանը — ոսկի): Կախ ընկած թավ հոնքերի տակից ուրախ-ուրախ նայեց որդուն: Իշխան Անդրեյը մոտեցավ և համբուրեց հոր ցույց տված տեղը: Նա շպատասխանեց հոր սիրած խոսակցության նյութին, — ա՛յն, որ նա ծաղրում էր այժմյան զինվորականներին, մանավանդ Բոնապարտին:

— Այո, եկա ձեզ մոտ, հայր, և այն էլ հղի կնոջս հետ, — ասավ իշխան Անդրեյը, եռանդուն ու հարգալիր աչքերով հետևելով հոր դեմքի յուրաքանչյուր մկանի շարժմանը: — Ի՞նչպես է ձեր առողջությունը:

— Վատառողջ լինում եմ, սիրելիս, միայն հիմարներն ու անառակները, իսկ դու ինձ ճանաչում ես. առավտոից երեկո զբաղված եմ, ժուժկալ եմ, հետևաբար և առողջ:

— Փառք աստծո, — ասավ որդին ժպտալով:

— Աստված այստեղ գործ չունի: Դե՛, պատմիր, — շարունակեց ծերունին, դառնալով իր սիրած նյութին, — թե ինչպես գերմանացիք սովորեցրին ձեզ Բոնապարտի հետ կովելու նոր գիտությունը, ստրատեգիա կոչեցյալը:

Իշխան Անդրեյը ժպտաց:

— Թողեք մի քիչ հանգստանամ, հայրիկ, — ասավ նա մի ժպտով, որը ցույց էր տալիս, թե հոր թերությունները երբեք չեն խանգարում, որ ինքը հարգի և սիրի նրան: — Չէ որ ես դեռ չեմ տեղավորվել:

— Ստո՛ւմ ես, ստո՛ւմ ես, — գոչեց ծերունին, կեղծամը թափահարելով՝ նրա հյուսվածքի ամրությունը փորձելու համար ու բռնեց որդու ձեռը: — Կնոջդ բնակարանը պատրաստ

¹ Նա լքում է ինձ, և, աստված գիտի, թե ինչու. մինչդեռ կարող էր բարձր պաշտոններ ստանալ:

է: Մարիան կասաջնորդի նրան, ցույց կտա և սրտի ուղածի շափ կշատախոսի: Դա կնկա գործ է: Ուրախ եմ, որ նա եկել է: Նատիր՝ պատմիր: Միխելսոնի բանակը հասկանում եմ, Տոլստոյինը՝ նույնպէս... միաժամանակ հարձակում... Հարավային բանակն ի՞նչ է անելու: Պրուսիան, չեղոքութիւն... այդ գիտեմ: Ավստրիան ի՞նչ է, — ասավ նա, բաղկաթոռից վեր կենալով ու սենյակում քայլելով, մինչ այդ Տիխոնը վազում էր նրա ետևից ու զգեստներ մատուցում: — Շվեցիան ի՞նչ է անում: Ի՞նչպէս են Պոմերանիան անցնելու:

Իշխան Անդրեյը, տեսնելով հոր համառ պահանջը, սկզբում ակամա, բայց հետո հետզհետե աշխուժանալով, ու ըստ սովորութեան, ուսերենից ֆրանսերենի անցնելով՝ սկսեց բացատրել առաջիկա պատերազմի գործողութեան ծրագիրը: Պատմեց, թե ինչպէս իննսուն հազարանոց բանակը պիտի սպառնա Պրուսիային, որպէսզի հանեն նրան չեղոքութիւնից և պատերազմի մեջ քաշեն, թե ինչպէս այդ զորքերի մի մասը պետք է Շտրալզոնդում միանա շվեդական զորքին, թե ինչպէս երկու հարյուր քսան հազար ավստրիացի, միանալով հարյուր հազար ռուսների հետ, պետք է գործեն Իտալիայում ու Հոննոսի ափերին, և թե ինչպէս հիսուն հազար ռուս և հիսուն հազար անգլիացի ափ են իջնելու Նեապոլում, և ինչպէս ի վերջո հինգ հարյուր հազարանոց բանակը պետք է ամեն կողմից հարձակում գործի ֆրանսացիների վրա: Մեր իշխանը ցույց չտվեց ամենափոքր հետաքրքրութիւն անգամ, ասես չէր լսում, և շարունակելով քայլել ու հագնվել, երեք անգամ անսպասելի ընդհատեց նրան: Մի անգամ կանգնեցրեց ու գոչեց.

— Սպիտակը՝ սպիտակը՝:

Դա նշանակում էր, որ Տիխոնը չի տվել նրան ուզած ժխետք: Մյուս անգամ նա կանգնեցրեց որդուն ու հարցրեց.

— Իսկ նա շուտով կծնի, — և գլուխը հանդիմանանքով շարժելով՝ ասավ. — Լավ չի՛: Շարունակիր, շարունակիր:

Երրորդ անգամ, երբ իշխան Անդրեյը վերջացնում էր նկարագրութիւնը, ծերունին երգեց կեղծ, պառավական ձայնով. *Malbroug s'en va-t-en guerre. Dieu sait quand reviendra*¹.

Որդին միայն ժպտաց:

— Չեմ ասում, թե այս ծրագիրը ես հավանում եմ, — ասավ որդին, — պատմեցի միայն, ինչ որ կա: Նապոլեոնն արդեն կազմել է իր ծրագիրը՝ սրանից ոչ պակաս:

— է, նոր ոչինչ չասիր: — Եվ ծերունին մտածկոտ շարունակեց երգը. — *Dieu sait quand reviendra*: — Գնա սեղանատուն:

XXIV

Որոշյալ ժամին ծեր իշխանը՝ շպարված ու ածիված՝ մըտով սեղանատուն, ուր նրան սպասում էին հարսը, իշխանազուտոր Մարիան, m-lle Բուրիենը և իրենց ճարտարապետը, որին իշխանի տարօրինակ քմահաճույքով թույլատրված էր սեղանին մասնակցել, թեև իր դիրքով աննշան այդ մարդը երբեք չէր կարող ակնկալել մի այդպիսի պատիվ: Իշխանը, որ կյանքում խստորեն պահպանում էր դիրքերի տարբերութիւնը և հազվադեպ էր թույլ տալիս իր սեղանին մասնակցել անգամ նահանգական բարձր պաշտոնյաների, հանկարծ ճարտարապետ Միխայլա Իվանովիչին, որ քիթը սրբում էր անկյունում, գծավոր թաշկինակով, ապացուցում էր, թե բոլոր մարդիկ հավասար են, և շատ անգամ ասում էր աղջկան, թե Միխայլա Իվանովիչը ոչ մի բանով պակաս չի մեզնից: Ու սեղանի վրա իշխանն ամենից ավելի խոսակցում էր լուսկյաց Միխայլա Իվանովիչի հետ:

Սեղանատանը (որ ահագին ու բարձր մի սենյակ էր, ինչպէս և տան բոլոր սենյակները) իշխանի գալուն սպասում էին տնեցիներն ու սպասավորները՝ յուրաքանչյուր աթոռի ետև կանգնած, սպասավորների գլխավորը՝ անձեռոցիկը բռնած՝ նայում էր սեղանի սարքին, աչքով էր անում լաքեյներին ու անհանգիստ նայվածքը շարունակ պատի ժամացույցից դարձնում էր դեպի դուռը, որտեղից ներս էր մտնելու իշխանը: Իշխան Անդրեյը նայում էր մեծ, իր համար նոր, ոսկե շրջանակի մեջ դրված իշխան Բալկոնսկիների տոհմաբանական ծառը ներկայացնող սլատկերը, որի դիմաց կախված էր նույնպիսի մեծ շրջանակով, վատ նկարված (հավանորեն տանու նկարչի ձեռքով) մի թագակիր տիրակալ իշխան, որը պետք

¹ Մալբրուգը կոփվ գնաց: Աստված գիտի, երբ կվերադառնա:

է սերած լիներ Րյուրիկից և Բալկոնսկիների տոհմի նահապետը պետք է եղած լիներ: Իշխան Անդրեյը նայում էր այդ տոհմաբանական ծառին, գլուխն օրորելով ու մի քմծաղողով, որով նայում են ծիծաղելիութան շափ նման պատկերի:

— Իր ամբողջ էութեամբ այս պատկերի մեջ է, — ասավ նա իրեն մոտեցող իշխանադուստր Մարիային:

Իշխանադուստրը զարմանքով եղբորը նայեց: Չէր հասկանում ինչի՛ վրա է եղբայրը ժպտում: Հոր բոլոր արածներին ինքը վերաբերվում էր խորին ակնածանքով և քննադատությունից վեր էր համարում:

— Յուրաքանչյուր մարդ ունի իր Աքիլեսյան գարշապարը, — շարունակեց իշխանը: — Իր ահագին խելքով հանդերձ donner dans ce ridicule!¹

Իշխանադուստր Մարիան շկարողացավ ըմբռնել եղբոր դատողության համարձակությունը և պատրաստվում էր առարկել նրան, երբ առանձնասենյակից լսվեց սպասվող քայլերի ձայնը. իշխանը ներս մտավ իր մշտական, սովորական արագ, զվարթ շարժ ու ձևերով, որոնք դիտմամբ հակադրում էր կարծես տանը տիրող խիստ կարգ ու կանոնին: Նույն վայրկյանին մեծ ժամացույցը խփեց ժամը երկուսը և բարակ ձայնով նրան արձագանք տվին մյուս ժամացույցները հյուրասրահից: Իշխանը կանգ առավ. կախված թավ հոնքերի տակից եռանդուն, փայլատակող խիստ աչքերը նայեցին բոլորին ու կանգ առան ջահել իշխանուհու վրա: Ջահել իշխանուհին այդ միջոցին ըզգաց այն, ինչ թագավորի ներս մտնելու ժամանակ զգում են պալատականները, — երկյուղի և հարզանքի մի զգացում, որ հարուցանում էր այդ ծերունին իրեն շրջապատողների սրտում: Նա շոյեց իշխանուհու գլուխը և անհարմար շարժումով զարկեց ծոծրակին:

— Ուրախ եմ, ուրախ, — ասավ նա, և մի անգամ ևս ուշադիր նայեց հարսի աչքերին, արագութեամբ հեռացավ ու նրստեց իր տեղը: — Նստեցե՛ք, նստե՛ցեք: Միխայիլ Իվանովիչ, նստեցեք:

Ու հարսին հրավիրեց իր կողքին նստելու: Սպասավորն աթոռ մատուցեց իշխանուհուն:

— Հո՛, հո՛, — ասավ ծերունին, նայելով հարսի կորուցած իրանին: — Շտապել ես, այդ լավ չի:

Ու ծիծաղեց շոր, սառը, տհաճ, ինչպես ծիծաղում էր միշտ միայն բերանով, և ոչ աչքերով:

— Պետք է ման գալ, ման գալ՝ որքան կարելի է շատ, որքան կարելի է շատ, — ասավ նա:

Փոքրիկ իշխանուհին շսեց կամ շուգեց լսել այդ խոսքերը և տեսնել էր և թվում էր շփոթված: Իշխանը հարցուփորձեց նրան հոր մասին, և իշխանուհին պատասխանեց ու ժպտաց: Իշխանը հարցրեց ընդհանուր ծանոթների մասին. իշխանուհին ավելի աշխուժացավ ու սկսեց պատմել, հայտնելով իշխանին բերած բարևները և քաղաքի բամբասանքները:

— La comtesse Apraksine, la pauvre, a perdu son mari, et elle a pleuré les larmes de ses yeux¹, — ասում էր նա ավելի ու ավելի աշխուժանալով:

Քանի նա աշխուժանում էր, իշխանն այնքան ավելի խըստութեամբ էր նայում նրան, և հանկարծ, կարծես բավականաչափ ուսումնասիրելով հարսին և պարզ գաղափար կազմելով նրա մասին, երեսը շրջեց նրանից ու դարձավ Միխայիլ Իվանովիչին:

— Հը, Միխայիլ Իվանովիչ, մեր Բոնապարտի բանը բուրդ է: Ինչպես իշխան Անդրեյը (նա միշտ այդպես երբորդ դեմքով էր կոչում որդուն) պատմեց ինձ՝ մե՛ծ ուժեր են հավաքվում նրա դեմ: Իսկ մենք՝ ես և դուք նրան ոչինչ մարդ էինք համարում:

Միխայիլ Իվանովիչը, բացարձակապես շիմանալով թե՛ երբ ենք մե՛նք՝ ես և դուք այդպիսի խոսքեր ասել Բոնապարտի մասին, բայց հասկանալով, որ դա անհրաժեշտ է իշխանին՝ իր սիրած նյութին անցնելու, զարմացած նայեց երիտասարդ իշխանին, ինքն էլ շիմանալով, թե ինչ կստացվի դրանից:

— Սա մեծ տակտիկ է, — ասավ իշխանը որդուն, ճարտարապետին մատնացույց անելով:

Ու խոսք բացվեց նորից պատերազմի, Բոնապարտի ու այժմյան գեներալների ու պետական մարդկանց մասին: Մեր

¹ Կոմսուհի Ապրաքսինայի ամուսինը մեռավ. աչքերը կուրացել են, արնքան է լաց եղել:

¹ Ընկել է ծիծաղելի դրութեան մեջ:

իշխանը, թվում էր, համոզված է ոչ միայն այն բանում, որ այժմյան բոլոր գործիչները ուղղակիան ու պետական գործի այբուբենը չհասկացող տղաներ են և որ Բոնապարտը չնչին մի ֆրանսացի է, հաջողութուն է ունեցել միայն այն պատճառով, որ այլևս չկան Պոտյոմկիններ ու Սուվորովներ՝ հակադրելու նրան, այլև համոզված էր, որ քաղաքական ոչ մի քարոզություն չկա նվրոպայում, չկա և պատերազմ, այլ կա մի ինչ-որ տիկնիկային կատակերգություն, որի մեջ դեր են կատարում այժմյան մարդիկ, ձևացնելով, թե գործ են անում: Իշխան Անդրեյն ուրախությամբ տանում էր հոր՝ նոր մարդկանց հասցեին ուղղած ծաղրը, ու նկատելի հրճվանքով խոսեցնում էր հորը և ունկնդրում նրան:

— Անցածը միշտ լավ է թվում, — ասավ նա, — բայց մի՞թե նույն Սուվորովը չէր, որ ընկավ Մորոյի լարած թակարդն ու էլ չկարողացավ դուրս գալ:

— Այդ ո՞վ ասավ քեզ: Ո՞վ ասավ... — գոչեց իշխանը: — Սուվորովը՝ — եվ նա շարտեց պիսեն, որը ճարպկորեն բռնեց Տիխոնը: — Սուվորովը... Մտածեցե՛ք, իշխան Անդրեյ: Երկուսը՝ Ֆրիդրիխն ու Սուվորովը... Մորո՛: Մորոն գերի կընկներ, եթե Սուվորովի ձեռներն ազատ լինեին. բայց նրա ձեռների վրա նստած էին հոֆու-կրիգս-վոլբաստ-շնապս-ուստը: Անախորժ մի բան: Ա՛յ կերթաք, և կճանաչե՛ք այդ հոֆու-կրիգս-վոլբաստ-շնապս-ուստները: Սուվորովը չկարողացավ լեզու գրտնել նրա հետ, Միխայլա Կուտուզովը պիտի գտնի՞: Չէ, բարեկամս, — շարունակեց նա, — դուք ձեր գեներալներով նապոլեոնի դեմ չեք կարող բան անել. պետք է ֆրանսացիներ վարձել, որ յուրայինները ջարդեն իրար: Գերմանացի՞ Պալենին ուղարկել են Նյու-Յորք, Ամերիկա, ֆրանսացի Մորոյին կանչելու, — ասավ նա, ակնարկելով այն հրավերը, որ արված էր այս տարի Մորոյին՝ ուսական ծառայության մեջ մտնելու: — Հրաշալի՞ է... Ինչ է, Պոտյոմկինները, Սուվորովները, Օռլովները մի՞թե գերմանացիներ էին: Ոչ, սիրելիս, կամ դուք եք այնտեղ խենթացել, կամ ես եմ խելքս թոցրել: Աստված ձեզ հաջողություն տա, իսկ մենք կտեսնենք: Բոնապարտը նրանց աչքում մե՛ծ զորավար է դարձել: Հը՛մ...

— Ես չեմ ասում, թե բոլոր կարգադրությունները լավ են եղել, — ասավ իշխան Անդրեյը, — միայն չեմ կարողանում

հասկանալ, թե ինչու այդպիսի կարծիք ունեք Բոնապարտի մասին: Միծաղեցեք, ինչքան կուզեք, բայց և այնպես Բոնապարտը մե՛ծ զորավար է:

— Միխայլա Իվանովիչ, — գոչեց ծեր իշխանը ճարտարապետին, որը տապալկածով զբաղված, կարծում էր թե իրեն մոռացել են: — Ես ձեզ ասե՛լ եմ, որ Բոնապարտը մեծ տակտիկ է: Ահա սա էլ նույնն է ասում:

— Ինչպես չէ, ձերդ պայծառափայլություն, — պատասխանեց ճարտարապետը:

Մեր իշխանը նորից ծիծաղեց իր սատը ծիծաղով:

— Բոնապարտը բախտավոր աստղի տակ է ծնվել: Նրա գինվորները հիանալի են: Առաջին անգամ գերմանացիներին վրա հարձակվեց: Իսկ գերմանացիներին ով ասես, որ չի խրփել: Աշխարհի հենց սկզբից գերմանացիներին խփել են շարունակ: Իսկ նրանք՝ ոչ ոքի. միայն միմյանց: Նապոլեոնն իր փառքը նրանց խփելով վաստակեց:

Եվ իշխանը սկսեց թվել այն բոլոր սխալները, որոնք, նրա կարծիքով, արել էր Բոնապարտը իր բոլոր պատերազմների և անգամ պետական գործերի մեջ: Որդին շէր առարկում, բայց երևում էր, որ ինչ պատճառաբանություններ էլ բերեին նրան, հոր նման տրամադիր չէ իր կարծիքները փոխելու: Իշխան Անդրեյը լսում էր, զսպելով ընդդիմախոսելու ցանկությունը և ակամա զարմանում, թե ինչպես կարող է այս ծեր մարդը, այսքան տարի գյուղում նստած, այսքան մանրամասն ու նրբությամբ իմանալ ու քննադատել նվրոպայի վերջին տարիների ուղղակիան ու քաղաքական հանգամանքները:

— Կարծում ես՝ ծեր եմ, իրերի իսկական դրուժությունը չե՛մ հասկանում, — եզրակացրեց նա: — Ես գիշերները չեմ քնում. խորհում եմ, մտածում: Բայց ո՞ւր է քո այդ մեծ զորավարը, որտեղ է ցույց տվել իր շնորհքը:

— Դա երկար պատմելու բան է, — պատասխանեց որդին:

— Ինչ ուրեմն գնա՛ քո Բոնապարտի մոտ: Mlle Bourienne, voilà encore un admirateur de votre goujat d'emper eur! — գոչեց նա հիանալի ֆրանսերենով:

1 Ահա ձեր ստրկահոգի կայսեր մի երկրպագու էլ:

— Vous savez, que je ne suis pas bonapartiste, mon prince¹.

— «Dieu sait quand reviendra»...² — երգեց ծեր իշխանը կեղծ տոնով, ծիծաղեց ավելի կեղծ ձևով ու դուրս եկավ սեղանատնից:

Փոքրիկ իշխանուհին թե՛ վեճի ժամանակ, թե՛ հետո լուռ ու երկյուղով համակված նայում էր մերթ իշխանագուստը Մարիային, մերթ կեսրայրին: Երբ ճաշը վերջացավ՝ նա թևանցուկ արավ տալոջը և տարավ մյուս սենյակը:

— Comme c'est un homme d'esprit votre père, — ասավ նա: — C'est à cause de cela peut-être qu'il me fait peur³.

— Օ՛, նա այնքան բարի է, — ասավ իշխանագուստը:

XXV

Իշխան Անդրեյը մեկնելու էր մյուս օրը երեկոյան: Ծեր իշխանը, ըստ իր սովորության, ճաշից հետո զնաց իր առանձնասենյակը: Փոքրիկ իշխանուհին տալոջ մոտ էր: Իշխան Անդրեյը, ճանապարհորդական, առանց ուսադիրների բաճկոնը հագած, իր սենեկապահի հետ կապկպում էր իրերը իրեն հատկացված հարկաբաժնում: Անձամբ քննելով կառքը և հետևելով ճամպորկների տեղավորմանը, հրամայեց լծել: Սենյակում մնացել էին այն իրերը միայն, որ իշխան Անդրեյը միշտ տանում էր հետը, — մի արկղիկ, արծաթյա պահարան՝ ամանեղեն դնելու համար, տաճկական երկու ատրճանակ և հոր նվիրած սուրը, որ բերված էր Օչակովից: Ճամփորդական այս իրերը իշխան Անդրեյը պահում էր խնամքով. բոլորը նոր էին, մաքուր, մահուղե պատյանների մեջ և խնամքով կապված էին բարակ թելերով:

Մեկնումի և կյանքի փոփոխության վայրկյաններին՝ իրենց քայլերը կշռադատելու ընդունակություն ունեցող մարդիկ սովորաբար անձնատուր են լինում լուրջ մտախոհություն-

ների: Այդ վայրկյաններին սովորաբար ստուգում են անդյալը և ապագայի ծրագիր կազմում: Իշխան Անդրեյի դեմքը խոհուն ու մեղմ արտահայտություն ուներ: Նա, ձեռները ետևը դրած, արագ գնում-գալիս էր սենյակի մի անկյունից մյուսը, միշտ առջևը նայելով ու գլուխը մտածկոտ շարժելով: Սարսափո՞ւմ էր արդյոք պատերազմ գնալուց, թե՞ տխուր էր կնոջը թողնելու համար, — գուցե և՛ մեկը, և՛ մյուսը, միայն, ըստ երևույթին, չցանկանալով, որ իրեն այդ դրուձյան մեջ տեսնեն, նախասենյակից քայլերի ձայն լսելով, շտապով թողեց ձեռները, կանգնեց սեղանի առաջ, իբր թե կապում է արկղիկի պատյանը, և ընդունեց իր մշտական, հանգիստ ու անթափանցելի տեսքը: Եկողը իշխանագուստը Մարիան էր:

— Ինձ ասին, որ հրամայել ես կառքը լծեն, — ասավ նա հեղուկ (նա ըստ երևույթին, վազել էր), — իսկ ես այնպես ուզում էի դեռ խոսել քեզ հետ առանձին: Աստված գիտի, թե նորից որքան ժամանակով ենք բաժանվում: Չե՞ս բարկանում, որ եկա: Դու շատ փոխվել ես, Անդրյուշա, — ավելացրեց նա կարծես իր այդ հարցին բացատրություն տալու համար:

«Անդրյուշա» բառն արտասանելով՝ նա ժպտաց: Երևի իրեն էլ տարօրինակ թվաց, որ այդ խստադեմ, գեղեցիկ տղամարդը նույն Անդրյուշան է, նիհար, շարձձի տղան, իր մանկության ընկերը:

— Իսկ ուր է Lise? — հարցրեց իշխան Անդրեյը, ժպիտով միայն պատասխանելով քրոջ հարցին:

— Նա այնպես հոգնած էր, որ իմ սենյակում բազմոցի վրա քնեց: Օ՛հ, André! Quel trésor de femme vous avez¹, — ասավ իշխանագուստը ու նստեց եղբոր դեմ ու դեմ՝ բազմոցի վրա: — Նա կատարյալ երեխա է, այնքան սիրելի, զվարթ: Այնպես սիրեցի նրան:

Իշխան Անդրեյը լուռ էր, բայց իշխանագուստը նրա դեմքի վրա նկատեց հեգնական ու արհամարհական արտահայտություն:

— Բայց պետք է ներողամիտ լինել փոքրիկ թերությունների նկատմամբ. ո՛վ այդպիսի թերություններ չունի, André. Մի մոռանա, որ նա մեծացել ու դաստիարակվել է աշխարհիկ

¹ Օ՛հ, Անդրե, ի՞նչ գանձ է կինդ քեզ համար:

¹ Դուք լավ գիտեք, իշխան, որ ես բռնապարտյան չեմ:

² Աստված գիտի, թե երբ կվերադառնա:

³ Ինչ խելացի մարդ է ձեր հայրը: Գուցե հենց այդ պատճառով եմ վախենում նրանից:

ագով և հետո նրա վիճական այժմ վարդապետն չէ: Պետք է յուրաքանչյուրի դրութեան մեջ մտնել: Tout comprendre, c'est tout pardonner¹. Մտածիր թե որքան դժվար է խելճի համար, ամուսնական կյանքին ընտելանալուց հետո, բաժանվել ամուսնուց ու մենակ ապրել գյուղում, այն էլ այդ դրութեան մեջ: Դա շատ դժվար բան է:

Իշխան Անդրեյը, քրոջը նայելով, ժպտաց այնպես, ինչպես ժպտում ենք մենք լսելով այն մարդկանց, որոնց ներքին էությունը պարզ տեսնում ենք:

— Դու էլ գյուղում ես ապրում, բայց այդ կյանքը սարսափելի չես համարում, — ասավ նա:

— Ես՝ ուրիշ: Իմ մասին ավելորդ է խոսել: Ես ուրիշ կյանք չեմ ցանկանում, և ցանկանալ էլ չեմ կարող, որովհետև ուրիշ մի այլ կյանք չեմ ճանաչում, բայց մտածիր, André, թե որքան ծանր է ջահել, աշխարհիկ կնոջ համար իր կյանքի լավագույն տարիներում փակվել գյուղում, մենակ. որովհետև հայրիկը զբաղված է միշտ, իսկ ես... դու ինձ ճանաչում ես... թե որքան ես զուրկ եմ լավագույն հասարակությանն ընտելացած կնոջն զբաղեցնելու շնորհքից, հնարավորությունից: Mille fois բուրիենը միայն...

— Այդ ձեր բուրիենն ինձ բոլորովին դուր չի գալիս, — ասավ իշխան Անդրեյը:

— Օ՛, ոչ: Նա շատ սիրելի և բարի է, և որ գլխավորն է, խելճ աղջիկ է: Ոչ ոք չունի, ոչ ոք: Ճիշտն ասած՝ նա ինձ ոչ միայն պետք չի, այլև ծանրություն է: Ես, ինչպես գիտես, միշտ եղել եմ վայրենի, իսկ հիմա ավելի եմ: Սիրում եմ մենակություն... Mon père-ն² նրան շատ է սիրում: Նա ու Միխայիլ Իվանովիչը — այն անձնավորություններն են, որոնց հետ նա միշտ սիրալիր ու բարի է, որովհետև երկուսն էլ իր կողմից բարեբարված են. ինչպես Ստեփանը ասում է. «Մենք այնքան չենք սիրում մեզ բարիք անողներին, որքան սիրում ենք մեզնից բարիք ստացողներին»: Mon père-ն նրան վերցրել է իբրև որբի, և mille fois բուրիենը շատ բարի է: Եվ mon père-ն սիրում է

նրա կարգալու եղանակը: Նա երեկոները կարդում է հայրիկի համար: Կարդում է հիանալի:

— Է, ճիշտն ասա, Marie, կարծում եմ, երբեմն շատ ծանր պիտի լինի քեզ համար հայրիկի բնավորությունը, — հանկարծ հարցրեց իշխան Անդրեյը:

Իշխանադուստր Մարիան նախ զարմացավ, հետո վախեցավ այդ հարցից:

— Ի՞նչ... Ի՞նչ համար... ծա՞նր, — ասավ նա:

— Նա միշտ էլ խիստ է եղել, իսկ հիմա, կարծում եմ ավելի ծանր պիտի լինի, — ասավ իշխան Անդրեյը, ըստ երևույթին, դիտմամբ, որպեսզի քրոջը փորձի:

— Դու ամեն բանով լավ ես, André, բայց մտքի մի տեսակ հպարտություն ունես, — ասավ իշխանադուստրը, ավելի հետևելով իր մտքերի, քան թե խոսակցության ընթացքին, — և դա մեծ մեղք է: Մի՞թե կարելի է հայրիկին քննադատել, և եթե կարելի է լիներ, խորին հարգանքից բացի՝ ուրիշ ինչ զգացում կարող է հարուցանել մի այնպիսի մարդ, ինչպիսին mon père-ն է: Եվ ես այնպե՛ս գոհ ու երջանիկ եմ նրա հետ ապրելով: Կցանկանայի միայն, որ դուք բոլորդ էլ ինձ նման երջանիկ լինեք:

Նղբայրը գլուխն օրորեց կասկածամտությամբ:

— Մի բան, որ ծանր է ինձ համար, — ես քեզ ճիշտը կասեմ, André, — դա նրա մտածելակերպն է կրոնի նկատմամբ: Չեմ հասկանում, թե ինչպե՛ս այդքան մեծ խելքի տեր մի մարդ, չի կարողանում տեսնել այն, ինչ ցերեկվա պես պարզ է, ու կարող է մոլորվել այդպես: Այս է ահա իմ միակ դժբախտությունը: Բայց վերջերս բարեխաղածան նշաններ եմ տեսնում: Նրա ծաղրն այնպես թունավոր չի հիմա. մի վանական կա, որին նա ընդունեց ու երկար խոսեց հետը:

— Է, բարեկամս, վախենում եմ, որ իդուր եռանդ եք սպառում այդ վանականի հետ, — հեզնանքով, բայց սիրալիր ասավ իշխան Անդրեյը:

— Ah! mon ami¹. Ես միայն աղոթում եմ աստծուն և հույս ունեմ, որ նա կլսի ինձ: André, — ասավ նա քաշվելով, վայրկյանական լռությունից հետո, — մի մեծ խնդիր ունեմ:

¹ Ով ամեն ինչ հասկանում է, նա ամեն ինչ ներում է:

² Հայրս:

— Ի՞նչ է, սիրելիս:

— Ոչ, նախ խոստացիր, որ չես մերժի: Քեզ համար դրժվար բան չի, ոչ էլ արժանապատվութեանդ դիպչող: Ինձ կմխիթարես միայն: Խոստացիր, Անդրյուշա, — ասավ նա, ձեռք տիրակալու ձեռք կոխելով, մի բան բռնեց, բայց դեռ ցույց չըտվեց, կարծես այն, ինչ բռնել էր իր խնդրի առարկան էր և, կարծես, նախքան խնդիրը կատարելու խոստումն առնելը, չէր կարող հանել այդ բանը:

Նա ամաչկոտ, աղերսող հայացքով նայում էր եղբորը:

— Եթե նույնիսկ այդ ծանր լիներ ինձ համար... — կարծես գուշակելով բանի էությունը՝ պատասխանեց իշխան Անդրեյը:

— Դու ինչ ուզում ես կարծիր: Գիտեմ, դու էլ mon père-ի պես ես: Ինչ ուզում ես կարծիր, մտածիր, բայց այս բանն արա ինձ համար: Կատարիր, խնդրում եմ: Այս բանը մեր հայրիկի հայրը, մեր պապը կրել է բոլոր պատերազմներում... — Նա դեռ տիրակալու չէր հանում այն, ինչ բռնել էր: — Ուրեմն խոստանո՞ւմ ես:

— Իհարկե: Բայց ի՞նչ կա:

— André, ես քեզ օրհնում եմ այս սրբապատկերով. խոստացիր, որ երբեք վզիցդ չես հանի: Խոստանո՞ւմ ես:

— Եթե երկու փթանոց չի և վիզս չի ծռի... Քեզ բավականություն պատճառելու համար... — ասավ իշխան Անդրեյը, բայց նույն վայրկյանին նկատելով, որ քրոջ դեմքը, իր կատակից, վիրավորված արտահայտություն ստացավ, զղջաց: — Շատ ուրախ եմ, իսկապես, շատ ուրախ եմ, սիրելիս, — ավելացրեց նա:

— Հակառակ քո կամքի նա կփրկի, կողորմա ու դարձի կբերի քեզ, որովհետև միայն նրա մեջ է ճշմարտությունն ու անդորրությունը, — ասավ իշխանազուտորը հուզումից դողացող ձայնով, երկու ձեռքի հանդիսավոր շարժումով եղբոր առջև բռնելով փրկիչ ձվածկ սրբապատկերը, որ արծաթե շերջանակ ուներ և արծաթե նուրբ շղթա:

Նա խաչակնքեց երեսը, սրբապատկերը համբուրեց ու տվեց եղբորը:

— Խնդրեմ, André, ինձ համար...

Նրա խոշոր աչքերը ճառագայթում էին բարութեան ու հեղուկության լույսով: Այդ աչքերը լուսավորում էին նրա հիվանդոտ ու տգեղ դեմքը և գեղեցկացնում նրան: Եղբայրն ուղեց վերցնել սրբապատկերը, բայց քույրը կանգնեցրեց նրան: Անդրեյը հասկացավ, խաչակնքեց երեսն ու համբուրեց պատկերը: Նրա դեմքը միաժամանակ թե՛ գորովալի, (զգացված էր) և թե՛ հեգնական արտահայտություն ուներ:

— Merci, mon ami¹.

Իշխանազուտորը համբուրեց եղբոր ճակատն ու կրկին նստեց բազմոցին: Երկուսն էլ լուռ էին:

— Ինչպես ասի, André, մեծահոգի եղիր ու բարի, ինչպես եղել ես միշտ: Lise-ի նկատմամբ խիստ մի լինի, — ասավ: — Նա այնքան սիրելի, այնքան բարի է. իսկ նրա վիճակը հիմա շատ ծանր է:

— Կարծեմ, ես քեզ ոչինչ չասի, Մաշա, թե որևէ բանի համար հանդիմանում եմ կնոջս կամ դժգոհ եմ նրանից: Այդ բոլորն ինչի՞ համար ես ասում:

Իշխանազուտոր Մարիայի դեմքը ծածկվեց կարմիր բծերով և նա լռեց, կարծես ինքն իրեն մեղավոր համարելով:

— Ես քեզ ոչինչ չեմ ասել, բայց արդեն ասող եղել է: Եվ դա վշտացնում է ինձ:

Իշխանազուտոր Մարիայի ճակատին, պարանոցին ու այտերին երևացին ավելի մեծ քանակությամբ կարմիր բծեր: Նա ինչ-որ բան ուղեց ասել, բայց չկարողացավ: Եղբայրը գուշակեց. փոքրիկ իշխանուհին ճաշից հետո, արտասովելով, ասել էր, թե նախազգում է դժբախտ ծննդաբերություն, վախենում է. գանգատվել էր իր բախտից, սկեսրայրից ու ամուսնուց: Արտասովելուց հետո՝ քնել էր: Իշխան Անդրեյը խղճաց քրոջը:

— Մի բան իմացիր, Մաշա, ես ոչ մի բանի համար չեմ կարող հանդիմանել, չեմ հանդիմանել և երբեք չեմ հանդիմանելու կնոջս, և ինքս էլ չեմ կարող որևէ բանում հանդիմանել ինձ՝ դեպի նա ունեցածս վերաբերմունքի համար. և այսպես կլինի միշտ, ինչ հանգամանքներում էլ լինեմ: Բայց եթե ուզում ես իմանալ ճշմարտությունը... ուզում ես իմանալ

¹ Ծնորհակալ եմ, բարեկամս:

արդյո՞ք երջանիկ եմ ես: Ոչ: Նա երբանի՞կ է: Ոչ: Ինչո՞ւ է այդպես: Զգիտեմ...

Այս ասելով, վեր կացավ, մոտեցավ քրոջը և, կռանալով, համբուրեց նրա ճակատը: Նրա գեղեցիկ աչքերը փայլում էին խելացի ու բարի, անսովոր փայլով, բայց նա քրոջը չէր նայում, այլ, նրա գլխի վրայով, նայում էր բաց դռան մթուձյան մեջ:

— Գնանք նրա մոտ, պետք է հրաժեշտ տալ: Կամ ինքդ գնա, զարթեցրու, իսկույն կգամ: Պետրուշկա՛, — կանչեց նա սենեկապահին, — արի այստեղ, հավաքիր: Սա դիր կառքի նստարանի տակ, սա՛ աչ կողմը:

Իշխանադուստր Մարիան ելավ ու գնաց դեպի դուռը, բայց կես ճամփին կանգ առավ:

— André, si vous avez la foi, vous vous seriez adressé à Dieu, pour qu'il vous donne l'amour, que vous ne sentez pas, et votre prière aurait été exaucée!...

— Այո, միթե այդպես, — ասավ իշխան Անդրեյը: — Գնա, Մաշա, ես անմիջապես կգամ:

Քրոջ սենյակը գնալիս, միջանցքում, որը միացնում էր մի տունը մյուսին, իշխան Անդրեյը հանդիպեց սիրալիր ժրպտացող m-lle Բուրիենին, որ այսօր երրորդ անգամն էր պատահում նրան առանձնացած անկյուններում՝ հիացազին ու միամիտ ժպտը դեմքին:

— Ah! je vous croyais chez vous², — ասավ նա, չգիտես ինչու կարմրելով ու աչքերը խոնարհելով:

Իշխան Անդրեյը խստությամբ նայեց նրան. նրա դեմքին կատաղություն երևաց: Նա ոչինչ չասավ օրիորդին, այլ, առանց նրա աչքերին նայելու, դիտեց ճակատն ու մազերը մի այնպիսի արհամարհանքով, որ ֆրանսուհին կարմրեց ու հեռացավ, առանց մի խոսք ասելու: Երբ իշխանը մոտեցավ քրոջ սենյակին՝ իշխանուհին արդեն զարթնել էր և նրա զվարթ, արագխոս ձայնը լսվում էր բաց դռնից: Նա խոսում էր այնպես,

կարծես երկար ժամանակ չէր խոսել, և ուզում էր շահել նաև կորցրած ժամանակը:

— Non, mais figurez-vous, la vieille comtesse Zouboff avec de fausses boucles et la bouche pleine de fausses dents, comme si elle voulait défier les années!... Հա՛-հա՛-հա՛, Marie.

Նույն այդ խոսքերը կոմսուհի Զուբովայի մասին, նույն ծիծաղով իշխան Անդրեյը արդեն հինգ անգամ լսել էր կնոջից՝ կողմնակի մարդկանց պատմելիս: Նա հանդարտ ներս մտավ: Իշխանուհին՝ հաստիկ, կարմրած, ձեռագործը ձեռին նստել էր բազկաթոռում ու խոսում էր անդադար, պատմելով Պետերբուրգի հիշողություններից, մինչև իսկ հիշելով ֆրագներ: Իշխան Անդրեյը մոտեցավ, շոյեց նրա գլուխն ու հարցրեց, թե հանգստացե՞լ է արդյոք ճանապարհի հողնությունից: Իշխանուհին պատասխանեց ու շարունակեց նույն զրույցը:

Կառքը, երեք զույգ ձի լծած, սպասում էր մուտքի առաջ: Դուրսը աշնանային մուժ գիշեր էր: Կառապանը կառքի լրծափայտն անգամ չէր տեսնում: Մուտքի դռան առաջ խմբված էին լապտերներով մարդիկ: Ահազին տան լուսամուտները լուսավորված էին առատորեն: Նախասենյակում խմբվել էին տան ծառաները՝ երիտասարդ իշխանին հրաժեշտ տալու. դահլիճում հավաքվել էին տնեցիները՝ Միխայիլ Իվանովիչը, m-lle Bourienne, իշխանադուստր Մարիան և իշխանուհին: Իշխան Անդրեյը կանչվել էր հոր մոտ, որ ուզում էր որդուն հրաժեշտ տալ առանձին: Բոլորն սպասում էին նրանց դուրս գալուն:

Երբ իշխան Անդրեյը հոր առանձնասենյակը մտավ, ծեր իշխանը՝ ակնոցը քթին, սպիտակ խալաթով (որով ոչ ոքի չէր ընդունում, բացի որդուց) սեղանի առաջ նստած՝ գրում էր: Նա ետ նայեց:

— Գնո՞ւմ ես: — Եվ նորից շարունակեց գրել:

— Եկա հրաժեշտ տալու:

— Համբուրիր այստեղ, — ցույց տվավ նա այտը, — ընդորհակալ եմ, շնորհակալ եմ:

¹ Եթե հավատ ունենայիր, կողոթեիր աստծուն, որ նա քեզ սեր շնորհի, որ չունես, և ազոթքդ ընդունելի կլիներ:

² Ահ, կարծում էի դուք ձեր սենյակումն եք:

¹ Ոչ, երևակայեցեք, պատավ կոմսուհի Զուբովան, կեղծ խոսքաներով, կեղծ ատամներով, կարծես իր տառիները հեղեղում...

— Ինչո՞ւ համար եք շնորհակալություն հայտնում:

— Նրա համար, որ ժամանակին ես մեկնում, կնոջդ փեշերից շեւ բռնում: Մտաշուքյունը՝ ամենից առաջ: Շնորհակալ եմ, շնորհակալ եմ: — Եվ նա շարունակեց գրել այնպիսի թափով, որ ճռճոցող գրչից կաթիլներ էին ցայտում այս ու այն կողմ: — Եթե բան ունես ասելու՝ ասա՛... Այդ երկու գործը կարող եմ միասին անել, — ավելացրեց նա:

— Կնոջս մասին... Առանց այն էլ ամաշում եմ, որ նրան թողնում եմ ձեր խնամքին...

— Ինչե՞ր ես խոսում: Ասա՛ ինչ պետք է:

— Երբ կնոջս ծննդաբերության ժամանակը գա Մոսկվայից մանկաբարձ կանչեցեք... անպատճառ:

Մեր իշխանը գրելը թողեց և, կարծես որդու ասածը չբնականալով, խստահայաց աչքերը սևեռեց նրա վրա:

— Գիտեմ, որ ոչ ոք օգնել չի կարող, եթե իր կազմվածքը չօգնի, — ասավ իշխան Անդրեյը նկատելի շփոթված: — Գիտեմ, որ միլիոնավոր դեպքերից մեկն է դժբախտ լինում, բայց այդ նրա և իմ երևակայությունն է: Նրան շատ բաներ են ասել, երազ է տեսել, և վախենում է:

— Հը՛մ... հը՛մ... — քրթմնջաց ինքն իրեն ծեր իշխանը, շարունակելով գրածը վերջացնել: — Կանեմ:

Ստորագրեց, հանկարծ շուտ եկավ դեպի որդին ու ծիծաղեց:

— Բանդ վա՛տ է, հա:

— Ի՞նչ բան, հայրիկ:

— Կինդ, — կարճ ու նշանակալից ասավ ծեր իշխանը:

— Չեմ հասկանում, — ասավ իշխան Անդրեյը:

— Է, ինչ արած, սիրելիս. — ասավ իշխանը, — կանայք բոլորն այդպես են, թողնել շեւ կարող: Մի վախենա, մարդու բան չեմ ասի. իսկ դու ինքդ արդեն գիտես:

Եվ իր փոքրիկ ոսկրոտ ձեռքով բռնեց որդու աչք, թափ տվեց, ուղիղ որդու երեսին հառեց իր արագաշարժ աչքերը, որոնք, կարծես, թափանցում էին մարդու ներսը, ու նորից ծիծաղեց իր սառը ծիծաղով:

Որդին հոքոց քաշեց, ի նշան խոստովանության, թե հայրը հասկացավ իր միտքը: Մերունին, շարունակելով ծալել ու կնքել նամակները, իրեն հատուկ արագությամբ վերցնում ու մի կողմ էր նետում զմուռը, կնիքն ու թուղթը:

— Ի՞նչ պիտի անել: Գեղեցիկ է: Ես ամեն ինչ կանեմ: Հանգիստ կաց, — ասում էր հատ-ընդհատ, նամակները կընքելով:

Անդրեյը լուռ էր. նա և՛ ուրախ էր և՛ տխուր, որ հայրը հասկացավ իր միտքը: Մերունին վեր կացավ ու նամակը տըվեց որդուն:

— Լսի՛ր, — ասավ նա, — կնոջդ մասին մի մտածիր. ինչ հնարավոր է՝ կարվի: Հիմա լսիր. նամակը տուր Միխայիլ Իլարիոնովիչին: Գրում եմ, որ քեզ լավ տեղեր ուղարկի և երկար համհարզ չպահի. զգվելի պաշտոն է: Ասա նրան, որ իրեն հիշում եմ և սիրում: Հետո գրիր, թե քեզ ինչպես կընդունի: Եթե լավ կլինի՝ ծառայի Նիկոլայ Անդրեյիչ Բալկոնսկու որդին ոչ ոքի մոտ չի կարող ծառայել ողորմածությամբ: Դե, հիմա արի այստեղ:

Նա խոսում էր այնպես արագ, որ բառերի կեսը չէր վերջացնում, բայց որդին սովորել էր հասկանալ նրան: Նա որդուն տարավ դեպի բյուրոն, կափարիչը ետ գցեց, քաշեց արկղը և այնտեղից հանեց իր խոշոր, երկար ու սեղմ ձեռագրովը զըրած մի տետրակ:

— Երևի, ես քեզնից առաջ կմեռնեմ: Իմացիր, սա իմ հիշատակարանն է. մահիցս հետո կհանձնեք թագավորին: Հիմա այստեղ — սա լոմբարդի տոմս է և նամակ. սա իբրև պարզև կտրվի, նրան՝ ով կգրի Սուվորովի պատերազմների պատմությունը: Կուղարկեք ակադեմիա: Այստեղ գրված են իմ դիտողությունները, ինձնից հետո կարդա, կօգտվես:

Անդրեյը հորը շասավ, թե նա, հավանորեն, դեռ երկար կապրի: Հասկացավ, որ այդ ավելորդ է.

— Բոլորը կկատարեմ, հայրիկ, — ասավ նա:

— Դե, այժմ գնաս բարով: — Նա ձեռք տվեց որդուն համբուրելու և ինքը գրկեց նրան: — Մի բան հիշիր, իշխան Անդրեյ, եթե քեզ սպանեն, ինձ՝ ծերուկիս համար այդ մեծ ցավ կլինի... — Նա անսպասելի լռեց ու հանկարծ շարունակեց ճշուն ձայնով. — Իսկ եթե իմանամ, որ քեզ Նիկոլայ Բալկոնսկու որդու նման շեւ պահել, ինձ մեծ ամոթանք կպատճառես... — ծղրտաց նա:

— Այդ բանը կարող էիր ինձ շասել, հայրիկ, — ժպտալով ասավ որդին:

Մերունին լռեց:

— Ուզում եմ ձեզ խնդրել նաև, — շարունակեց իշխան Անդրեյը, — որ եթե ինձ սպանեն և եթե ես որդի ունենում, պահեցեք ձեզ մոտ, ինչպես երեկ ասի, որպեսզի ձեզ մոտ մեծանա... խնդրում եմ:

— Կնոջդ չհանձնե՞մ, — ասավ ժերունին ու ծիծաղեց:

Նրանք լուռ կանգնեցին իրար դեմ: Մերունու արագաշարժ աչքերը սևեղված էին որդու աչքերին, նրա դեմքի ներքին մասը թեթև դողաց:

— Հրաժեշտ տվինք... գնա՛, — հանկարծ ասավ նա: — Գնա՛, — գոչեց նա բարկացած ու բարձր ձայնով, առանձնասենյակի դուռը բանալով:

— Ի՞նչ պատահեց, ի՞նչ, — հարցրին իշխանուհին ու իշխանադուստրը, տեսնելով Անդրեյին և վայրկյանաշափ գրլուխը դռնից հանած ու բարկացած ձայնով խոսող հոր կերպարանքը՝ ճերմակ խալաթի մեջ, առանց պարիկի և ակնոցով: Իշխան Անդրեյը հոգոց քաշեց և ոչինչ չպատասխանեց:

— Դե՛հ, — ասավ նա, դիմելով կնոջը:

Եվ այդ «դեհ»-ը հնչեց սառը ծաղրով, կարծես ասում էր. «այժմ կարող եք ձեր խաղերը խաղալ»:

— André, déjà! — ասավ փոքրիկ իշխանուհին, գունատվելով և երկյուղով ամուսնուն նայելով:

Իշխանը գրկեց նրան: Իշխանուհին ճշաց և ուշաթափ ընկավ նրա ուսին:

Իշխանն զգուշությամբ մի կողմ տարավ ուսը, նայեց կրնոջ դեմքին և խնամքով նստեցրեց նրան բազկաթոռին:

— Adieu, Marie², — ասավ կամացուկ քրոջը, համբուրվեց նրա հետ՝ ձեռք բռնած, և արագ քայլերով դուրս եկավ սենյակից:

Իշխանուհին պառկել էր բազկաթոռի մեջ և m-lle Բուրիենը շփում էր նրա քնեքակները: Իշխանադուստր Մարիան, հարսին բռնած, արտասովաթոր գեղեցիկ աչքերով դեռ նայում էր դեպի այն դուռը, որտեղից դուրս գնաց իշխան Անդրեյը,

¹ Անդրեյ, արգեն:

² Մնաս բարով, Մարի:

ու խաչակնքում էր նրան: Առանձնասենյակից, կրակոցների պես, լավում էին ծերունու հաճախ կրկնվող բարկացած խրնչոցները: Իշխան Անդրեյը նոր միայն դուրս էր եկել, երբ առանձնասենյակի դուռը բացվեց արագ ու երևաց ճերմակ խալաթով ժերունու խիստ կերպարանքը:

— Մեկնե՞ց: Դե, լավ, — ասավ նա, բարկացած նայելով ուշագնաց ընկած փոքրիկ իշխանուհուն, գլուխն օրորեց կըշտամբանքով և դուռը վրա բերեց շրխկոցով:

ԵՐԿՐՈՐԳ ՄԱՍ

I

1805 թվի հոկտեմբերին ուսական զորքերը բռնել էին Ավստրիական էրցհերցոգության գյուղերն ու քաղաքները, և դեռ նոր գնդեր էին գալիս Ռուսաստանից ու, բնակիչներին նեղութուն պատճառելով, տեղավորվում Բրաունաու բերդաքաղաքի մոտ: Բրաունաուի մեջ էր գտնվում գլխավոր հրամանատար Կուտուզովի գլխավոր կայանը:

1805 թվի հոկտեմբերի 11-ին հենց նոր Բրաունաու եկած հետևակ գնդերից մեկը, գլխավոր հրամանատարի զորատեսին սպասելով, բանակել էր քաղաքից կես մղոն հեռու: Չնայած որ տեղը և շրջապատը ուսական չէր (պտղատու այգիներ, քարե ցանկապատեր, կղմինդրե տանիքներ, հեռվում երևացող սարեր), ուս չէր նաև զինվորներին հետաքրքրությամբ դիտող ժողովուրդը. բայց և այնպես գունդն ուներ ճիշտ այնպիսի տեսք, ինչպես ներքին Ռուսաստանի որևէ վայրում զորատեսի սպասող ամեն մի ուսական գունդ:

Իրիկվանից, վերջին անցումին, հրաման ստացվեց, թե գլխավոր հրամանատարը գունդը դիտելու է երթի ժամանակ: Թեև հրամանի խոսքերը որոշ շեղանքներով հրամանատարին ու հարց ծագեց, թե ինչպես պիտի հասկանալ հրամանի խոսքերը, — երթի զգեստով, թե ոչ, — այնուամենայնիվ գումարտակապետների խորհրդում որոշվեց գունդը զորատեսի հանել տոնական զգեստով. այն հիմունքով, թե միշտ լավ է պատվել շափից ավելի, քան թերի: Եվ զինվորները, երեսուն վերստ ճանապարհ կտրելուց հետո, առանց աչք փակելու, ամբողջ գիշեր կարգի էին բերում իրենց, մաքրվում, աղյու-

տանտներն ու վաշտապետները հաշվում, դասավորում էին և առավոտյան՝ գունդը, առաջին իրիկվա անկարգ, ցրվ ամբոխի փոխարեն ներկայացնում էր երկու հազար մարդու մի կանոնավոր զանգված, որոնցից յուրաքանչյուրը գիտեր իր տեղը, իր գործը և յուրաքանչյուրի ամեն մի կոճակն ու ամենափոքրիկ փոկը իրենց տեղն էին ու աչքի էին ընկնում մաքրությամբ: Ոչ միայն նրանց արտաքինն էր կարգին, այլև, եթե գլխավոր հրամանատարը հաճեր նայել մունդիրների տակը, նա յուրաքանչյուրի հագին կտեսներ միատեսակ մաքուր շապիկ և պայուսակներում որոշված թվով իրեր՝ «ասեղմասեղ», ինչպես զինվորներն են ասում: Մի հանգամանք կար միայն, որ բոլորին անհանգստացնում էր: Դա ոտնամանն էր: Զինվորների կես մասի կոշիկները մաշված-քրքրված էին: Այդ պակասութունը գնդի հրամանատարի մեղքից չէր, որովհետև չնայած նրա բազմիցս արած դիմումներին՝ ավստրիական վարչութունը բաց չէր թողել, իսկ գունդը հազար վերստ ճանապարհ էր կտրել:

Գնդի հրամանատարը տարիքավոր, սանզվինիկ, ճերմակող բեղերով ու այտամորուսներով գեներալ էր, կրծքից մինչև թիկունքը ավելի լայն ու լեցուն, քան մեկ ուսից մյուսը: Հագել էր բոլորովին նոր, բայց երկար պահելուց ծալքերը փշացած մունդիր՝ թանձր ոսկեգօծ ուսադիրներով, որոնք ոչ թե ներքև, այլ վեր էին քաշում նրա հաստ ուսերը: Հրամանատարը՝ կյանքի ամենափառավոր գործերից մեկը հաջողությամբ կատարողի տեսք ուներ: Նա անց ու դարձ էր անում զորաշարքի առջև և ամեն մի քայլափոխին ցնցվում, մեջքը թեթևակի ծռելով: Երևում էր, որ գնդի հրամանատարը հրեզվում է իր գնդով, երջանիկ է նրանով, հոգու ամբողջ կարողությամբ նվիրված է նրան. բայց, չնայած դրան, նրա նյարդային քայլվածքը կարծես վկայում էր, որ զինվորական շահերից բացի, նրա հոգու մեջ քիչ տեղ չեն բռնում հասարակական կենցաղը և կանացի սեռը:

— Է, սիրելի Միխայլո Միտրիչ, — դիմեց նա գումարտակի հրամանատարներից մեկին (հրամանատարը ժպտալով առաջ եկավ. նկատելի էր, որ նրանք երջանիկ են), — գիշերը լավ հանգստացաք: Սակայն, կարծես, ոչինչ, գունդը վատ չի... Այնպես չի՞:

Գումարտակի հրամանատարը հասկացավ ուրախ հեզնանքը և ծիծաղեց:

— «Յարիցին Լուգ» հրապարակում էլ կընդունենին:

— Ի՞նչ, — հարցրեց հրամանատարը:

Այդ միջոցին քաղաքի ճանապարհի վրա, ուր կարգված էին նշանատու զինվորներ, երևացին երկու ձիավոր: Իրանցից մեկը աղյուտանտ էր, մյուսը նրան հետևող մի կազակ:

Աղյուտանտը ուղարկված էր գլխավոր շտաբից՝ գնդի հրամանատարին հայտնելու այն, ինչ անտրոշ ասված էր երեկոս հրամանում, այն է՝ թե գլխավոր հրամանատարը ցանկանում է գունդը տեսնել ճիշտ այն վիճակում, ինչ վիճակի մոջ ճամփա է անցել՝ շինելներով, հրացանների պատյաններով և առանց որևէ պատրաստության:

Երեկ երեկո Վեննայից Կուտուզովի մոտ էր եկել հոֆհրիտ-առասի անգամը՝ առաջարկելու և պահանջելու՝ որքան կարելի է շուտ գնալ միանալ էրցհերցոգ Ֆերդինանդի և Մալի բանակին, բայց Կուտուզովը, այդ միացումը ձեռնառու չհամարելով, մտադիր էր, իր կարծիքը հաստատող մյուս ապացույցների հետ միասին, ցույց տալ ավստրիական զենքային Ռուսաստանից եկող զորքերի անմխիթար վիճակը: Այդ նպատակով էլ ցանկանում էր դիմավորել գնդին, այնպես որ որքան վատ լինեի գնդի դրուժյունը, այնքան այդ հաճելի պիտի լինեի գլխավոր հրամանատարին: Թեև աղյուտանտը չգիտեր այս մանրամասնությունները, սակայն նա գնդի հրամանատարին հայտնեց գլխավոր հրամանատարի անխախտ պահանջը, որպեսզի զինվորները լինեն շինելներով. հակառակ դեպքում գլխավոր հրամանատարը դժգոհ կմնա: Այս խոսքերը լսելով՝ գնդի հրամանատարը ուսերը բարձրացրեց անխոս և ձեռները տարածեց շղայնորեն:

— Բա՛ն արիք, — ասավ նա: — Ես ձեզ ասում էի չէ, Միխայլո Միտրիչ, երթի զգեստով՝ նշանակում է շինելներով, — հանդիմանություն դարձավ նա գումարտակի հրամանատարին: — Օ՛հ, աստված իմ, — ավելացրեց նա և վճռականորեն առաջ անցավ: — Պարոնայք վաշտապետներ, — գուշեց նա հրամանի սովոր ձայնով, — կանչեցեք վերականերին (Ֆելդֆելերներին)... Շուտով են գալու, — դարձավ նա աղյուտան-

տին մի հարգալիք քաղաքավարութամբ, որն ըստ երևույթին վերաբերում էր այն անձնավորության, որի մասին խոսում էր:

— Կարծում եմ, մի ժամից:

— Կարո՞ղ ենք մինչև գալը հազուադեպը փոխել տալ:

— Զգիտեմ, գեներալ...

Գնդի հրամանատարը, ինքն անձամբ շարքերին մոտենալով, կարգադրեց նորից շինելներ հագնել: Վաշտապետները վազեցին դեպի իրենց վաշտերը, վերականերն իրար անցան (շինելները բոլորովին կարգին չէին) և նույն վայրկյանին նախկին կանոնավոր ու անխոս քառակուսի շարքերը խառնվեցին ու աղմկեցին: Զինվորներն սկսեցին վազել այս ու այն կողմից, ուսերն անցրած պարկերը հանեցին գլուխներից և, շինելները վերցնելով, ձեռները վեր բարձրացրած, հագան:

Կես ժամ հետո ամեն ինչ նախկին դրուժյան մեջ էր. միայն սևին տվող քառակուսի շարքերը գորշացան: Գնդի հրամանատարը նորից, իր նյարդային քայվածքով, առաջ անցավ և հեռվից դիտեց գունդը:

— Սա ի՞նչ բան է: Սա ի՞նչ բան է, — գուշեց նա կանգ առնելով: — Կանչեցե՛ք 3-րդ վաշտի հրամանատարին այստեղ...

— 3-րդ վաշտի հրամանատար՝ գեներալի մոտ. հրամանատարին՝ գեներալի մոտ, 3-րդ վաշտի հրամանատարին... — լսվեցին ձայներ շարքերից, և աղյուտանտը վազեց ուշացող սպային փնտրելու:

Երբ ետանդոտ ձայները՝ ազավազելով այդ խոսքերը և վերածելով այն «գեներալը 3-րդ վաշտը» գարձվածքին, հասան բառ պատկանելույն, պահանջված սպան երևաց վաշտի ետվից և, չնայած տարիքոտ մարդ լինելուն ու վազելու անսովոր, ոտների ծայրերը պատահած բաներին գիպցնելով, սրբունթաց վազեց գեներալի մոտ: Կապիտանի դեմքն արտահայտում էր դպրոցականի անհանգստություն, որից պահանջում են ասել շտաբում գասը: Կարմիր քթի վրա (հավանորեն անժուժկալուծյունից) բծեր կային, իսկ բեքանը չէր կարողանում գտնել իր բնական դիրքը: Գնդի հրամանատարը ոտից գրչուխ նայեց կապիտանին, այն ժամանակ, երբ նա հեկհե մոտենում էր, և մոտենալով օպյերը գանգաղեցնում:

— Գուք շուտով ձեր գինվորներին սարաֆաններ կհագցրին՝ ք: Սա ի՞նչ բան է, — գոչեց գնդի հրամանատարը՝ ներքին ծնոտն առաջ գցելով և ցույց տալով Յ-րդ վաշտի շարքերում կանգնած մի գինվորի, որ ուրիշներից տարբերվում էր իր գործարանային մահուդի գուլնի շինելով: — Գուք ո՞ւր էիք: Մենք սպասում ենք գլխավոր հրամանատարին, իսկ դուք թողնում-հեռանում եք ձեր տեղից: Հը՞... Ես ձեզ կսովորեցնեմ, թե ի՞նչ է նշանակում գորատեսի ժամանակ գինվորներին կազակին հագցնել... հը՞...

Վաշտի հրամանատարը, աչքը պետից շհեռացնելով, երկու մատը ավելի ու ավելի սեղմում էր գլխարկի պահպանակին (կազիրոկ), կարծես այդ սեղմումի մեջ էր տեսնում իր փրկությունը:

— Հը, ի՞նչ եք լուում: Ո՞վ է այդ հունգարացու նման հագնվողը, — խստուկամբ կատակեց գնդի հրամանատարը:

— Ձերդ գերազանցություն... —

— Հը, ի՞նչ է «ձերդ գերազանցություն»: Ձերդ գերազանցություն, ձերդ գերազանցություն: Իսկ թե ի՞նչ ձերդ գերազանցություն — հայտնի չէ:

— Ձերդ գերազանցություն, դա Դոլոխովն է, աստիճանագուրդ արված... — կամացուկ ասավ կապիտանը:

— Ի՞նչ, նա աստիճանագուրդ արվելով, ֆելդմարշալի աստիճան է ստացել, թե գինվորի: Իսկ գինվորը պետք է հագնվի գինվորի նման:

— Ձերդ գերազանցություն, դուք ինքներդ թուլյատրեցիք:

— Թուլյատրեցի՞: Թուլյատրեցի՞: Ա՛յ, դուք միշտ այդպես եք, երիտասարդներդ, — ասավ գնդի հրամանատարը փոքր-ինչ մեղմանալով: — Թուլյատրեցի՞: Ձեզ մի բան ասեն թե չէ, դուք արդեն... Ի՞նչ, — ասավ նա, նորից բորբոքվելով: — Հաճեցեք գինվորներին կարգին հագցնել...

Եվ գնդի հրամանատարը, նայելով ադյուտանտին, իր նյարդային քայլվածքով գնաց դեպի գունդը: Երևում էր, որ իր բարկությունն իրեն իսկ դուր է եկել, և որ նա, գնդի առջևից անցնելով նոր առիթ էր փնտրում բարկությունը թափելու: Մի սպայի հանդիմանեց շմաքած նշանի համար, մյուսին՝ շարքի անկանոնության, ու մոտեցավ Յ-րդ վաշտին:

— Ի՞նչպես ես կանգնել: Ո՞ւր է ոտդ: Ոտդ ո՞ւր է, — պոռաց հրամանատարը տանջալից ձայնով, դեռ հինգ մարդ հեռու գտնվելով կապտագույն շինել հագած Դոլոխովին:

Դոլոխովը դանդաղորեն ուղղեց ծռած ոտը և իր պայծառ ու հանդուգն աչքերը հառեց գնեհալի դեմքին:

— Ինչո՞ւ ես կապույտ շինել հագել: Հանի՛ր... Վերակա՛: Փոխեցեք այս... ան... — Նա չկարողացավ խոսքը վերջացնել:

— Գնեհալ, ես պարտավոր եմ կատարել հրամանները, բայց պարտավոր չեմ տանել... — ասավ Դոլոխովն արագարագ:

— Շարքի մեջ շխոսե՛լ... շխոսե՛լ, շխոսե՛լ...

— Պարտավոր չեմ վիրավորանքներ տանել, — ասավ Դոլոխովը բարձր, հնչել ձայնով:

Գնեհալի և գինվորի աչքերը հանդիպեցին իրար: Գնեհալը լռեց, բարկացած ներքև քաշելով պինդ կապած շարֆը:

— Բարեհաճեցեք, խնդրում եմ, ձեր շինելը փոխել, — ասավ նա հեռանալով:

II

— Գալի՛ս է, — ձայն տվեց այդ միջոցին նշանատու պահակը:

Գնդի հրամանատարը, կարմրելով, ձիու մոտ վազեց, դողդոջ ձեռներով ասպանդակը բռնեց, մարմինը գցեց ձիու վրա, ուղղվեց, սուրը մերկացրեց և երջանիկ, վճռական դեմքով, բերանը մի կողմի վրա ծռած, պատրաստվեց պոռալ: Գունդը թափ տվեց իրեն՝ թափահարող թուշուհի նման, և սառեց տեղում:

— Զգա՛ստ, — գոռաց հրամանատարը հոգեցունց ձայնով, որն իր համար պարունակում էր հրճվանք, զորքի համար խստություն, մոտեցող պետի համար սիրալիր ողջույն:

Լայն, ծառագարդ, մեծ անխիճ ճանապարհով, զսպանակներով թեթևակի աղմկելով սրընթաց գալիս էր վեննական մի կապույտ կառք, որին լծված էին երկու զույգ ձի: Կառքի ետևից գալիս էր շքախումբը և կրոատներին կազմված ուղեկցորդը (կոնվոյ): Կուտուզովի կողքին նստել էր ավստրիացի գնեհալը:

որն իր տարօրինակ ճեքմակ մունդիրով ղոկու՛մ էր սե հաղած ուռաներից: Գնդին հասնելուն պես կառքը կանգ առավ: Կուտուզովն ու ավատրիացի գեներալը հանգարտ խոսում էին ինչ-որ բանի վրա, և Կուտուզովը ժպտաց այն ժամանակ, երբ ոտը կառքից դնում էր գետին, կարծես գոյություն չունեին այդ 2 000 զինվորը, որոնք, շունչները պահած, նայում էին նրան ու գնդի հրամանատարին:

Լավեց հրամանի ձայնը, գունդը զրնգոցով ցնցվեց նորից և պատվի առավ: Մեռելային լուսթյան մեջ լավեց գլխավոր հրամանատարի թույլ ձայնը: Գունդը մեկեն գոռաց. (Ասողջություն ենք ցանկանում, ձերդ ու-ո՛ւ-ո՛ւ-թյան): Եվ նորից ամեն ինչ անշնչացավ: Սկզբում, քանի գունդը շարժվում էր, Կուտուզովը կանգնել էր մի տեղում, հետո ավտորիական գեներալի հետ միասին, ոտքով, շքախմբի ուղեկցությամբ, գնաց շարքերը դիտելու:

Այն բանից, թե ինչպես գնդի հրամանատարը ողջունեց գլխավոր հրամանատարին, աչքերը նրան հառած, ձգվելով ու իրեն հավաքելով, ինչպես առաջ թեքված, նյարդային շարժումները հազիվ զսպելով, հետևում էր շարքերը դիտող գեներալներին, ինչպես վեր էր թռչում գլխավոր հրամանատարի յուրաքանչյուր խոսքից ու շարժումից, — երևում էր, որ նա իր ստորադրյալի պարտավորությունները կատարում էր ավելի մեծ հաճույքով, քան պետի պարտականությունը: Գունդը, իր հրամանատարի խստություն ու ջանասիրության շնորհիվ, լավ վիճակի մեջ էր, համեմատած նույն ժամանակի Բրաունտոս էկած մյուս գնդերի հետ: Հետ մնացողների և հիվանդների թիվը միայն 217 էր: Եվ, բացի կոշիկներից, ամեն ինչ կարգին էր:

Կուտուզովը, շարքերի առջևից անցնելիս, երբեմն կանգ էր առնում ու մի քանի փաղաքշական խոսք ասում սպաներին, որոնց ճանաչում էր տաճկական պատերազմից, երբեմն նաև զինվորներին: Նայելով զինվորների կոշիկներին՝ նա մի քանի անգամ գլուխն օրորեց տխրությանը և ավատրիական գեներալի ուշադրությունը հրավիրեց դրանց վրա մի այնպիսի արտահայտությամբ, թե որքան էլ դրա համար չի կարող կըշտամբել ոչ ոքի, բայց չի էլ կարող շտեմնել, թե ինչ թշվառ դրություն է: Գնդի հրամանատարը նրա յուրաքանչյուր շարժումից նետվում էր առաջ, վախենալով չլինի թե չլի գլխա-

վոր հրամանատարի խոսքերը ղնդի վերաբերյալ: Կուտուզովի հտեկից, այնպիսի մի հեռավորությունամբ, որ ամեն մի մեղմ արտասանված խոսք կարող էր լսվել, գնում էր 20 հոգիանոց շքախումբը: Շքախմբի անդամները խոսում էին իրար հետ և երբեմն ծիծաղում: Անմիջապես գլխավոր հրամանատարի հտեկից գնում էր մի գեղեցկադեմ աղյուտանտ: Դա իշխան Բալկոնսկին էր: Նրա կողքից գնում էր նրա ընկեր Նեսվիցկին՝ բարձրահասակ, չափազանց գեր սպան՝ բարի, ժպտուն, գեղեցիկ դեմքով ու տամուկ աչքերով: Նեսվիցկին հազիվ էր զսպում ծիծաղը, որ հարուցանում էր կողքից քայլող թխադեմ հուսար սպան: Հուսար սպան, առանց ժպտալու և անշարժ աչքերի արտահայտությունը շփոխելով, լուրջ դեմքով նայում էր գնդի հրամանատարի թիկունքին և ծաղրում նրա յուրաքանչյուր շարժումը: Ամեն անգամ, երբ գնդի հրամանատարը ցնցվում ու թեքվում էր առաջ, ճիշտ այնպես էլ, նույն-նությամբ, ցնցվում ու առաջ էր թեքվում հուսար սպան: Նեսվիցկին ծիծաղում էր և հրում ուրիշներին, որ նրանք էլ նայեն տնազ անող սպային:

Կուտուզովը դանդաղ ու ծուլորեն անցնում էր հազարավոր աչքերի առջևից, որոնք իրենց կոպիտներից դուրս ընկած, հետևում էին պետին: Հասնելով 3-րդ վաշտին՝ նա հանկարծ կանգ առավ: Շքախումբը, այդ բանը շնախատեսելով, ակամա առաջ գնաց և ավելի մոտեցավ նրան:

— Ա՛, Տիմոխին, — ասավ գլխավոր հրամանատարը, ճանաչելով կարմիր քթով կապիտանին, որ նկատողություն էր ստացել կապույտ շինելի համար:

Թվում էր անկարելի էր ավելի ձգվել, քան Տիմոխինն էր ձգվել գնդի հրամանատարի նկատողության ժամանակ: Բայց հիմա, երբ գլխավոր հրամանատարը դարձավ նրան, կապիտանն այնպես ձգվեց, որ, թվում էր, եթե Կուտուզովը մի քանի րոպե էլ նայի, կապիտանն այլևս չի դիմանա. ուստի և Կուտուզովն, ըստ երևույթին, նրա վիճակը հասկանալով և նրա բարիքը ցանկանալով, շտապ շրջվեց: Կուտուզովի ուռուցիկ, վերքից այլանդակված դեմքի վրայով հազիվ նկատելի մի ժպիտ անցավ:

— Իզմայիլյան կովի ընկերներից է, — ասավ նա: — Քա՛ղ

սպա է: Գո՞հ ես նրանից, — հարցրեց Կուտուզովը գնդի հրամանատարին:

Սվ գնդի հրամանատարը, ինչպես հայելում անդրադառնալով իրեն ընդօրինակող հուսար սպայի շարժումների մեջ, ցնցվեց, առաջ անցավ ու պատասխանեց.

— Շա՛տ գո՞հ եմ, ձերդ բարձր գերազանցություն:

— Մենք բոլորս էլ զերծ չենք թերությունից, — ասավ Կուտուզովը, ժպտալով ու նրանից հեռանալով: — Բաքոսի երկրպագու էր:

Գնդի հրամանատարը վախեցավ, թե արդյոք ինքը մեղավոր չի այդ բանում, և ոչինչ չասավ: Այդ վայրկյանին հուսար սպան նշմարեց կարմրաքիթ ու ձգված փորով կապիտանի դեմքն ու այնպես նման ընդօրինակեց նրա դեմքն ու դիրքը, որ նեավիցիկին շկարողացավ ծիծաղը զսպել: Կուտուզովը ետ նայեց: Նրևում էր, որ սպան կարողանում էր ուզածի պես փոխել դեմքը. այն վայրկյանին, երբ Կուտուզովը ետ նայեց՝ սպան արդեն իր ծամածոթությունն արել էր և ամենալուրջ, հարգալիիր ու անմեղ արտահայտությունն էր ընդունել:

Երրորդ վաշտը վերջինն էր: Սվ Կուտուզովն, ըստ երևույթի, ինչ-որ բան հիշելով, մտածմունքի մեջ ընկավ: Իշխան Անդրեյը առաջ եկավ շքախմբից և կամաց ասավ Ֆրանսերեն.

— Կարգադրեցեք հիշեցնել աստիճանագուրդի արված Դոլոխովի մասին, որ այս գնդի մեջ է գտնվում:

— Ո՛ւր է այստեղ Դոլոխովը, — հարցրեց Կուտուզովը:

Դոլոխովը, արդեն զինվորի գորշ շինել հագած, էլ շսպասեց, որ իրեն կանչեն: Շիկահեր, պայծառ կապույտ աչքերով զինվորի բարեկազմ կերպարանքը դուրս եկավ շարքի միջից: Նա մոտեցավ գլխավոր հրամանատարին ու պատվի առավ:

— Գանգա՛տ, — հոնքերը կիտելով՝ հարցրեց Կուտուզովը:

— Սա Դոլոխովն է, — ասավ իշխան Անդրեյը:

— Ա՛, — ասավ Կուտուզովը: — Հույս ունե՞մ այս դասը քեզ խելքի կբերի. լավ ծառայիր: Թագավորը ողորմած է: Սա էլ չեմ մոռանա քեզ, եթե արժանի լինես:

Դոլոխովի կապույտ պայծառ աչքերը գլխավոր հրամանատարին նայում էին նույնպիսի հանդգնություններ, ինչպես գնդի հրամանատարին, ու իրենց արտահայտություններ կարծես

պատուում էին պայմանականության այն վարագույրը, որ այնպես խորապես բաժանում է գլխավոր հրամանատարին զինվորից:

— Միայն մի բան եմ խնդրում՝ ձերդ բարձր գերազանցություն, — ասավ Դոլոխովն իր հնչեղ, հաստատուն ու անշտապ ձայնով: — Խնդրում եմ առիթ տաք ինձ մեղքս քավելու և դեպի կայսրն ու Ռուսաստանն ունեցած անձնվիրությունս ապացուցելու:

Կուտուզովը երեսը շրջեց: Նրա դեմքին երևաց աչքերի նույն ժպիտը, ինչ երևաց կապիտան Տիմոխինից դառնալիս: Նա դարձավ ու դեմքը կնճռեց, կարծես դրանով ուզում էր ասել, թե այն բոլորը, ինչ ասավ Դոլոխովը, և այն բոլորը, ինչ դեռ կարող էր ասել, ինքը վաղուց արդեն գիտի, և այդ բոլորն արդեն ձանձրացրել է իրեն ու այդ ամենը այն չէ բնավ, ինչ պետք է: Նա դարձավ ու գնաց դեպի կառքը:

Գունդը վաշտերի բաժանվեց և ճանապարհ ընկավ Բրաունուկից ոչ հեռու նշանակված բնակատեղին, ուր հույս ունեին հագնվել և հանգստանալ երկար, դժվարին ճամփա կտրելուց հետո:

— Դուք ինձնից գանգատվոր չե՞ք, Պրոխոր Իգնատիչ, — ասավ գնդի հրամանատարը, հասնելով բնակատեղը զնացող 3-րդ վաշտին և նրա առջևից զնացող կապիտան Տիմոխինին: Գնդի հրամանատարի դեմքը, հաջող անցած զորատեսից հետո, անզուսպ ուրախություն էր արտահայտում: — Թագավորական ծառայությունն է... չի լինի... մեկ էլ տեսար հայհոյեցիր... Առաջինն ինքս ներողություն կխնդրեմ, ինձ ճանաչում եք... Շատ շնորհակալ էր: — Սվ նա ձեռը մեկնեց վաշտապետին:

— Խնդրեմ, գեներալ, մի՞թե կհամարձակվեմ, — պատասխանեց կապիտանը. նրա քիթը կարմրեց. ինքը ժպտաց և ժպիտով երևան հանեց առաջին երկու ընկած ատամը, որ հրացանի կոթով շարդել էին Իգմայիլի բերդի մոտ:

— Սվ պարոն Դոլոխովին հայտնեցեք, որ ես իրեն չեմ մոռանա, թող հանգիստ լինի: Ասացեք, խնդրեմ, ես միշտ մոռանում եմ հարցնել, թե ի՞նչպես է նա իրեն պահում: Սվ...

— Մառայություն մեջ շատ կարգին է, ձերդ գերազանցություն...՝ բայց բնավորությունը... — ասավ Տիմոխինը:

— Ի՞նչ, բնավորութիւնն ինչպե՞ս է, — հարցրեց գնդի հրամանատարը:

— Երբեմն, ձերգ գերազանցութիւն, իրեն կորցնում է, — ասով կապիտանը, — թե՛ խելօք է, թե՛ կրթված, թե՛ բարի: Բայց մեկ էլ տեսար գազան կտրեց: Լեհաստանում քիչ մնաց մի հրեա սպաներ...

— Այո, այո, — ասով գնդի հրամանատարը, — պետք է խղճալ երիտասարդին դժբախտութիւն մեզ: Չէ որ մեծ կապեր ունի... Ուրեմն դուք այնպես...

— Լսում եմ, ձերգ գերազանցութիւն, — ասով Տիմոխի-նը, ժպիտով զգացնել տալով, թե պետի ցանկութիւնը հասկանում է:

— Այո, այո:

Գնդի հրամանատարը շարքերում գտավ Դուլխովին և ձին պահեց:

— Մինչև առաջին կոխվը, — ուսադիրներ, — ասով նրան: Դուլխովը նայեց, ոչինչ չասավ և ոչ էլ հեգնորեն ժպտացող դեմքի արտահայտութիւնը փոխեց:

— Է, լավ է, լավ, — շարունակեց գնդի հրամանատարը: — Զինվորներին մի-մի բաժակ օդի իմ կողմից, — ավելացրեց նա, որպեսզի զինվորները լսեն այդ: — Շնորհակալութիւն բոլորից: Փա՛ռք աստծո:

Նվ նա ձին քշեց, մտեցավ մյուս վաշտին:

— Ծիշտն ասած՝ լավ մարդ է, նրա հետ կարելի է ծառայել, — ասավ Տիմոխինը կողքից քայլող ստորազրյալ մի սպայի:

— Մի խոսքով «փոսիկի» թագավոր է (գնդի հրամանատարի տնունը դրել էին «փոսիկի» թագավոր), — ծիծաղելով ասավ ստորազրյալ սպան:

Զորատեսից հետո՝ մեծավորների ուրախ տրամազրու-թիւնը վարակեց զինվորներին էլ: Վաշտերը գնում էին ուրախ-ուրախ: Ամեն կողմից լավում էին զինվորների խոսակցութեան ձայներ:

— Բա ասում էին թե կուտուզովի մի աչքը շիլ ա:

— Մթամ բոլորովին կուշր ա:

— Չէ, ախպեր ջան, քեզանից լավ է տեսնում: Գոչիկներ, փաթաթաններ, ամեն բան լավ նայեց...

— Հենց որ, ախպեր ջան, ոտներին մտիկ արավ. է՛հ, մտածեցի...

— Իսկ մյուսը՝ ավատրիացին, որ նրա հետ էր, կարծես կավիճով սպիտակացրել էին: Ալրի պես սպիտակ էր:

— Հը՛, Տեղյուշա, դու մոտիկ էիր. ասա՛վ՝ թե կտիվք երբ պիտի սկսվի: Բոլորն ասում էին, թե Բոնապարտը Բրու-նովումն է:

— Բոնապարտը՛: Դու էլ բա՛ն ափր: Զիմացածդ մի խոսի: Հիմա պրուսացիք են աստամբել: Ավատրիացիք նրանց, ուրեմն, խաղաղեցնում են: Հենց որ դրանք խաղաղեն, էն ժամանակ կոխվ կսկսի Բոնապարտի հետ: Թե չէ, ասում ա, Բոնապարտը Բրունովն ա: Երևում ա շաշի մեկն ես: Դու ավելի լավ ա ուրիշներին ահանջ դնես:

— Օ՛, գրողի տարած կվարտիրյերներ (բնակարանորդ-ներ): Հինգերորդ վաշտը, տե՛ս, արդեն դեպի գեղը ծովեց-նրանք կաշա կեփեն, իսկ մենք դեռ տեղ չենք հասնի:

— Մի կտոր պաքսիմաթ տուր, տեսնեմ:

— Իսկ դու երեկ թուլթուն տվի՞ր: Հը՛: Դե առ, աստված քեզ հետ:

— Գոնե հանգստանայինք, թե չէ դեռ հինգ վերստ պետք է քաղցած, ծարավ ճամփա կտրենք:

— Լավ կլիներ՝ չէ մի գերմանացիք մեզ կառքեր տային: Նստեինք ու ուռած-փքված գնայինք:

— Իսկ էստեղ բոլորովին ուրիշ ժողովուրդ է: Էնտեղ կարծես թե լեհացիք էին, էլի ոռու արյուն կար մեջները. հիմա մի գլուխ գերմանացիք են:

— Երգիչները՝ առա՛ջ, — լսվեց կապիտանի ձայնը:

Նվ տարբեր շարքերից վազելով՝ վաշտի առջև հավաքվեց քսան մարդ: Երգ սկսող թմբկահարը երգիչներին դարձավ և, ձեռը թափ տալով, սկսեց զինվորական ծորուն մի երգ, որն սկսվում էր. «Արշալույսը բացվել, արևն է փայլում» և վերջա-նում էր հետևյալ խոսքերով. «Օ՛, ինչ փառք կվաստակենք Կամենսկի հայրիկի հետ...»: Այս երգը հորինված էր Տաճկաս-տանում և այժմ երգում էր Ավատրիայում այն փոփոխութեամբ միայն, որ «Կամենսկի հայրիկի» տեղ դրել էին «Կուտուզով հայրիկ» խոսքերը:

Վերջին խոսքերը գինվորաբար կտրելով՝ թմբկահարը՝ մի շորշորուկ ու գեղեցիկ քառասուն տարեկան գինվոր, ձեռները թափ տվեց, կարծես մի բան գցեց գետին. ու խստուժյամբ երգիչ գինվորներին նայելով՝ աչքերը կուշ ածավ: Ապա, համոզվելով, որ բոլոր աչքերն ուղղված են իր վրա, նա երկու ձեռով զգուշությամբ, կարծես ինչ-որ անտեսանելի ու թանկագին մի բան բարձրացրեց գլխից վեր, պահեց այդպես մի քանի վայրկյան ու հանկարծ կատաղորեն նետեց.

Ах, вы, сени мои, сени!

«Сени новые мои...», ձայնակցեցին 20 հոգի միասին, և գողալվորը շնայած իր ծանր հանդերձանքին, կայտառ նետվեց առաջ, երեսը շրջելով դեպի վաշտը, գնաց նրա առջևից, ուսերն օրորելով և գդալներով ուժ-որ սպառնալով: Զինվորները, երգի տակտով ձեռները թափահարելով՝ ազատ քայլերով գնում էին առաջ: Վաշտի ետևից լսվում էր անիվների գլորոց, զսպանակների ճոխնչ և ձիերի դոփյուն: Կուսուղովն իր շքախմբով վերադառնում էր քաղաք: Գլխավոր հրամանատարը նշան արավ, որ գինվորները շարունակեն ազատ քայլել, և թե՛ նրա, թե՛ շքախմբի բոլոր մարդկանց դեմքին բավականութուն նկատվեց, երբ լսեցին երգի հնչյունները և երբ տեսան պարող գինվորին և ուրախ-զվարթ քայլող վաշտի գինվորներին: Վաշտի երկրորդ շարքի մեջ ակամա աչքի ընկավ կապտաշյա գինվոր Դոլոխովը, որն առանձնապես, երգի տակտով քայլում էր կայտառ, վայելուչ և նայում կառքով անցնողներին մի այնպիսի արտահայտությամբ, կարծես խղճում էր բոլոր նրանց, ովքեր այդ բոլորին վաշտի հետ չեն քայլում: Կուսուղովի շքախմբի հուսարական կոռնետը, գնդի հրամանատարին տնազողը, ետ նայեց կառքից և մոտեցավ Դոլոխովին:

Հուսարական կոռնետ ժերկովը մի ժամանակ Պետերբուրգում պատկանում էր այն սանձարձակ խմբին, որի ղեկավարը Դոլոխովն էր: Արտասահմանում ժերկովը Դոլոխովին հանդիպեց գինվոր դարձած, բայց շուգեց ճանաչել: Հիմա, այն բանից հետո, երբ Կուսուղովը խոսեց աստիճանազուրկ Դոլոխովի հետ, նա հին բարեկամի սիրալիրությամբ մոտեցավ նրան:

— Սիրելի բարեկամս, ինչպե՞ս ես, — ասավ նա երգի հնչյունների տակ, ձիու քայլը հավասարեցնելով վաշտի քայլին:

— Ինչպե՞ս եմ, — սառը պատասխանեց Դոլոխովը, — ինչպես տեսնում ես:

Աշխույժ երգը առանձին նշանակութուն էր տալիս ժերկովի արձակ-համարձակ տոնին և Դոլոխովի դիտավորյալ սառը պատասխաններին:

— է, ինչպե՞ս ես իշխանավորներիդ հետ, — հարցրեց ժերկովը:

— Ոչինչ, լավ մարդիկ են իշխանավորներս: Դու ինչպե՞ս ես շտաբը խցկվել:

— Գործուղեցին, հերթապահութուն եմ անում:

Լռեցին:

«Բազեն թողեց աչ ձեռից», ասում էր երգը, հարուցանելով մարդու մեջ կայտառ և ուրախ զգացումներ: Նրանց խոսակցութունը, հավանորեն, ուրիշ կլինեք, եթե երգի հնչյունների տակ չխոսեին:

— Հը, ճի՞շտ է, որ ավստրիացիներին ջարդել են, — հարցրեց Դոլոխովը:

— Սատանան գիտի, ասում են:

— Ուրախ եմ, — պատասխանեց Դոլոխովը կարճ ու կրտրուկ, ինչպես այդ պահանջում էր երգը:

— Իրիկունն արի մեզ մոտ թուղթ խաղանք, — ասավ ժերկովը:

— Երևի փող շա՞տ ունեք:

— Դու արի:

— Չեմ կարող: Երգվել եմ: Չեմ խմելու և չեմ խաղալու, մինչև աստիճանս չբարձրացնեն:

— Երկար չի տևի, երևի մինչև առաջին կոխվը...

— Այն ժամանակ կտեսնենք:

Կրկին լռեցին:

— Դու արի, եթե մի բան հարկավոր լինի, բոլորն շտաբում կօգնեն... — ասավ ժերկովը:

Դոլոխովը քմծիծաղ տվեց:

— Ավելի լավ կլինի՝ շանհանգստանաս: Ինձ հարկավորը չեմ խնդրելու, ինքս ձեռք կբերեմ:

- է, չէ, ես այնպես...
- է, ես էլ այնպես:
- Մնաս բարով:
- Գնաս բարով...

... Եվ բարձր, և հեռու
Գեպի հայրենի երկիրը...

Ժերկույր խթանեց ձիուն, որը երկու-երեք անգամ, տաքացած, փոխեց ոտները, շիմանալով ո՛րն առաջ գցել, հետո իրեն հավաքեց և, նույնպես երգի տակտով արշավեց ու հասավ Կուտուզովի կառքին....

III

Ձորատեօից վերադառնալով՝ Կուտուզովը, ավստրիական գեներալի ուղեկցութեամբ, անցավ իր առանձնասենյակը և, աղյուտանտին կանչելով, հրամայեց բերել իրեն՝ եկող զորքերին վերաբերող որոշ թղթեր և առաջապահ բանակի պետ էրցհերցոգ Ֆերդինանդից ստացված նամակները: Իշխան Անդրեյ Բալկոնսկին պահանջված թղթերը ձեռին մտավ գլխավոր հրամանատարի առանձնասենյակը: Սեղանին փռած պլանի շուրջը նստել էին Կուտուզովն ու հոֆկրիգստատի ավստրիացի անդամը:

— Ա... — ասավ Կուտուզովը Բալկոնսկուն նայելով, կարծես այդ բացականչությամբ աղյուտանտին հրավիրեց սպասել, և շարունակեց ֆրանսերեն սկսած խոսակցությունը:

— Ես միայն մի բան եմ ասում, գեներալ, — ասում էր Կուտուզովը հաճելի արտահայտություններով ու առոգանություններով, հարկադրելով լսել իր յուրաքանչյուր անշտապ ասված խոսքը: Երևում էր, որ Կուտուզովն ինքն իսկ բավականությամբ է լսում իրեն: — Ես միայն մի բան եմ ասում, գեներալ, եթե բանը կախված լիներ իմ անձնական ցանկություններից, այդ դեպքում նորին մեծություն Ֆրանց կայսեր կամբը վաղուց կատարված կլիներ: Ես վաղուց արդեն միացած կլինեի էրցհերցոգին: Եվ հավատացե՛ք ինձ, որ ես շատ ուրախ կլինեի, որ բանակի բարձր հրամանատարությունը անձամբ հանձնեի ավելի տեղյակ ու հմուտ մի գեներալի, որոնցով

այնքան հարուստ է Ավստրիան, և կարողանայի հրաժարվել այս ծանր պարտականությունից: Բայց հանգամանիները մեզնից ավելի զորավոր են լինում, գեներալ:

Եվ Կուտուզովը ժպտաց այնպիսի արտահայտությամբ, կարծես ասում էր. «Դուք լիակատար իրավունք ունեք ինձ չհավատալու, և նույնիսկ ինձ համար միևնույն է՝ հավատում եք ինձ թե չեք հավատում, բայց առիթ չունեք այդ բանն ինձ ասելու, և բանն էլ հենց այդ է»:

Ավստրիացի գեներալը դժգոհ տեսք ուներ, բայց չէր կարող նույն տոնով չպատասխանել Կուտուզովին:

— Ընդհակառակը, — ասավ նա քրթմնշող ու բարկացած տոնով, որ այնպես հակասում էր նրա արտասանած խոսքերի թծնական նշանակության, — ընդհակառակը, ձերդ գերազանցություն մանսակցությունը այս ընդհանուր գործի մեջ՝ նորին մեծությունը շատ բարձր է գնահատում. բայց մենք կարծում ենք, որ ներկա դանդաղումը ուսական փառապանծ զորքերին և նրանց գլխավոր հրամանատարին զրկում է այն դասիններից, որ սովոր են քաղել նրանք կռիվների մեջ, — ավարտեց նա հավանորեն նախապատրաստած ֆրազը:

Կուտուզովը գլուխ տվեց, առանց ժպիտը փոխելու:

— Իսկ ես այնպես եմ համոզված և, հիմնվելով նորին բարձրության էրցհերցոգ Ֆերդինանդի վերջին նամակի վրա (որն ուղարկելու պատիվն է արել ինձ), եթադրում եմ, որ ավստրիական զորքերը, Մակի պես հմուտ գեներալի ղեկավարությամբ, այժմ արդեն այնպիսի վճռական հաղթանակ են տարել, որ այլևս կարիք չունեն մեր օգնության, — ասավ Կուտուզովը:

Գեներալը հոնքերը կիտեց: Թե հաստատ տեղեկություններ չկային ավստրիացիների պարտության մասին, բայց այդ ընդհանուրի համար անշահավետ լուրերը հաստատող շատ հանգամանքներ կային. ուստի և Կուտուզովի ենթադրությունը՝ ավստրիացիների հաղթության մասին՝ շատ նման էր ծաղրի: Բայց Կուտուզովը ժպտաց հեզաբար, դարձյալ նույն արտահայտությամբ, որ կարծես ասում էր, թե ինքն այդպես ենթադրելու իրավունք ունի: Իրոք, Մակի բանակից ստացած վերջին նամակը հայտնում էր հաղթության և բանակի ամենահաջող ստրատեգիական դիրքի մասին:

— Տվեք այդ նամակը, — ասավ Կուտուզովը, դառնալով իշխան Անդրեյին: — Ահա հաճեցեք լսել: — Եվ Կուտուզովը հեզնական ժպիտը՝ շրթունքների ծայրին, ավստրիացի գեներալին գերմաներեն կարգաց էրցհերցոգ Ֆերդինանդի նամակի հետևյալ կտորը. «Wir haben vollkommen zusammengehaltene Kräfte, nahe an 70 000 Mann, um den Feind, wenn er den Lech passierte, angreifen und schlagen zu können. Wir können, da wir Meister von Ulm sind, den Vortheil, auch von beiden Ufern der Donau Meister zu bleiben nicht verlieren; mithin auch jeden Augenblick, wenn der Feind den Lech nicht passierte, die Donau übersetzen, uns auf seine Kommunikations-Linie werfen, die Donau unterhalb repassieren und dem Feinde, wenn er sich gegen unsere treue Allirte mit ganzer Macht wenden wollte, seine Absicht alsbald vereiteln. Wir werden auf solche Weise den Zeitpunkt, wo die Kaiserlich-Russische Armée ausgerüstet sein wird, mutig entgegenharren, und sodann leicht gemeinschaftlich die Möglichkeit finden, dem Feinde das Schicksal zuzubereiten, so er verdient»¹.

Նամակի այս պարբերությունը վերջացնելով՝ Կուտուզովը ծանր հոգոց արձակեց և ուշադիր ու սիրալիր նայեց հոֆկիրպ-սուտի անդամին:

— Բայց դուք գիտեք, ձեր գերազանցություն, այն իմաստուն սկզբունքը, որ հրահանգում է ենթադրել վատթարը, — ասավ ավստրիացի գեներալը, հավանորեն կատակներին վերջ տալու և գործի անցնելու ցանկությամբ:

¹ Սենք ունենք մոտ 70 000 կենտրոնացած զորք, այնպես որ, կեսը անցնելու դեպքում, կարող ենք հարձակվել և շարդել թշնամուն: Որովհետև արդեն մեր ձեռին է գտնվում Ուլմը՝ մենք կարող ենք մեր ձեռին պահել Դանուբի երկու ափերը, հետևաբար, ամեն վայրկյան, եթե թշնամին չանցնի Լեխը, մենք կարող ենք անցնել Դանուբը, հարձակվել թշնամու կոմունիկացիոն գծի վրա, ներքևից նորից անցնել Դանուբը և թշնամուն, եթե նա մեր հավատարիմ գաղնակիցների վրա գնալ ուզենա, թույլ չտալ իր մտադրությունը ի կատար ածել: Այսպիսով մենք արիություն կսպասենք մինչև որ ռուսական կայսերական բանակը բոլորովին կազմ ու պատրաստ լինի, և այնուհետև միացյալ ուժերով դյուրություն կգտնենք թշնամուն արժանի պատիժը տալու հնարը: (գերմ.):

Ու ալամա նայեց աղյուտանտին:

— Ներեցեք, դեներալ, — ընդհատեց նրան Կուտուզովը և նույնպես դարձավ դեպի իշխան Անդրեյը: — Ահա ինչ, սիրելիս, Կազլովսկուց վերցրու մեր լրտեսների բոլոր զեկուցումները: Ահա քեզ կոմս Նոստիցի երկու նամակը, նորին բարձրություն էրցհերցոգ Ֆերդինանդի նամակը և այս, — ասավ, իշխանին մի բանի թղթեր տալով: — Այս բոլորից Ֆրանսերեն լեզվով մաքուր memorandum, տեղեկագիր կազմիր, որ հայտնի լինի, թե մենք ինչ տեղեկություններ ունենք ավստրիական բանակի գործողությունների մասին: Այդպես, և ներկայացրու նորին գերազանցությունը:

Իշխան Անդրեյը գլուխը խոնարհեց ի նշան այն բանի, թե առաջին իսկ խոսքից հասկացավ ոչ միայն այն, ինչ ասվեց, այլ և այն, ինչ ցանկանում էր ասել իրեն Կուտուզովը: Նա թղթերը հավաքեց և, գլուխ տալով, գորգի վրա հուշիկ քայլելով, դուրս եկավ ընդունարանը:

Թեև շատ ժամանակ չէր անցել, ինչ իշխան Անդրեյը մեկնել էր Ռուսաստանից, բայց շատ էր փոխվել այդ ժամանակի ընթացքում: Նրա դեմքի արտահայտություն, շարժումների և քայլվածքի մեջ գրեթե նկատելի չէր նախկին հոգնած ու ծուլ ձևանալու հակումը: Նա ուներ այնպիսի մարդու տեսք, որ կարծես ժամանակ չունի մտածելու, թե ինչ տպավորություն է թողնում ուրիշների վրա և զբաղված է հաճելի ու հետաքրքրական մի գործով: Դեմքից երևում էր, որ գոհ է իրենից ու շրջապատողներից: Ժպիտն ու նայվածքը առաջվանից ավելի ուրախ ու գրավիչ էին:

Կուտուզովը, որին նա հասավ-միացավ կեհաստանում, նրան ընդունեց շատ սիրալիր, խոստացավ շնորհալ նրան, գերադասում էր մյուս աղյուտանտներից, իրեն հետ Վեննա տարավ և ավելի լուրջ հանձնարարություններ էր տալիս: Վեննայից Կուտուզովը իր հին ընկերոջը՝ Անդրեյ իշխանի հորը գրեց.

«Ձեր որդին, — գրում էր նա, — սպա լինելու հույսեր է տալիս իր արտակարգ եռանդուն պարապմունքներով, հաստատակամություններով և հանձնարարությունների կատարումով: Ես ինձ երջանիկ եմ համարում այսպիսի ստորագրյալ ունենալուս համար»:

Կուտուզովի շտաբում, պաշտոնակից-ընկերների շրջանում և ընդհանրապես բանակում իշխան Անդրեյը, ճիշտ այնպես, ինչպես Պետերբուրգի հասարակութան մեջ, երկու, բոլորովին իրար հակասող համբավ ունեւր։ Ումանք՝ փոքրամասնությունը, իշխան Անդրեյին համարում էին իրենցից և ուրիշներից մի տեսակ առանձին բարձր մարդ, նրանից ակնկալում էին մեծ հաջողութուններ, լսում էին նրան, հիանում էին ներանով և աշխատում էին նրան նմանվել. և այդ մարդկանց հետ իշխան Անդրեյը պարզ էր ու հաճելի։ Մյուսները՝ մեծամասնությունը, իշխան Անդրեյին չէին սիրում. նրան համարում էին գոռոզ, սառը և տհաճ մարդ։ Բայց այդ մարդկանց մոտ իշխան Անդրեյն իրեն պահում էր այնպես, որ նրան հարգում էին և մինչև իսկ վախենում։

Կուտուզովի առանձնասենյակից ընդունարան մտնելով՝ իշխան Անդրեյը թղթերը ձեռին մոտեցնելով ընկերոջը՝ հերթապահ աղյուսանտ Կոզլովսկուն, որ պատուհանի առաջնստած գիրք էր կարդում։

— Հը, ի՞նչ կա, իշխան, — հարցրեց Կոզլովսկին։

— Հրամայված է տեղեկագիր կազմել, թե ինչու առաջ չենք գնում։

— Ինչո՞ւ համար։

Իշխան Անդրեյը ուսերը թոթվեց։

— Մակից լուր չկա՞, — հարցրեց Կոզլովսկին։

— Ոչ։

— Եթե նրա ջարդվելը ճիշտ լիներ՝ մի լուր կստացվեր։

— Հավանորեն, — ասավ իշխան Անդրեյը և գնաց դեպի դուռը. բայց նույն րոպեին դուռն արագությամբ բանալով՝ նրա դեմն ելավ և արագ-արագ ընդունարան մտավ մի բարձրահասակ, հավանորեն նորեկ, սյուրթուկ հագած ավստրիացի գեներալ՝ գլուխը սև թաշկինակով կապած և Մարիա-Թերեզայի շքանշանը վզին։ Իշխան Անդրեյը կանգ առավ։

— Գեներալ-անշեֆ Կուտուզով, — արագ-արագ ասավ նորեկ գեներալը՝ գերմանական կտրուկ առոգանությամբ, շորս կողմը նայելով և առանց կանգ առնելու առանձնասենյակին մոտենալով։

— Գեներալ-անշեֆը զբաղված է, — ասավ Կոզլովսկին,

հապճեպ անծանոթ գեներալին մոտենալով և ճամփան կտրելով։ — Ի՞նչպես կհրամայեք զեկուցել։

Անծանոթ գեներալը արհամարհանքով վերից վար նայեց միջահասակ Կոզլովսկուն, զարմանալով կարծես, որ իրեն չեն ճանաչում։

— Գեներալ-անշեֆը զբաղված է, — հանդարտ կրկնեց Կոզլովսկին։

Գեներալի դեմքը մթազնեց, շրթունքները քաշվեցին ու գողացին։ Մոցատետրը հանեց, արագորեն մի բան գրեց մատիտով, թուղթը պոկեց տվեց աղյուսանտին, փութկոտ քայլերով մոտեցավ լուսամուտին, նետեց իր մարմինն աթոռին ու նայեց սենյակում գտնվող նրին, կարծես հարցնելով. ինչո՞ւ են իրեն նայում։ Հետո գեներալը գլուխը բարձրացրեց, վիզը ձգեց, կամենալով կարծես մի բան ասել, բայց իսկույն էլ, կարծես ցանկանալով անփութորեն երգել ինքն իրեն, մի տարօրինակ ձայն հանեց, որը սակայն անմիջապես կտրվեց։ Առանձնասենյակի դուռը բացվեց, և շեմքին երևաց Կուտուզովը։ Գլուխը կապած գեներալը, վտանգից փախչողի պես, կռացած, իր նիհար ոտքերի խոշոր ու արագ քայլերով մոտեցավ Կուտուզովին։

— Vous voyez le malheureux Mack,¹ — ասավ նա բեկված ձայնով։

Առանձնասենյակի շեմքին կանգնած Կուտուզովի դեմքը մի քանի ակնթարթ բոլորովին անշարժ մնաց։ Հետո, արիթի պես, մի կնճիռ անցավ նրա դեմքի վրայով և ճակատը հարթվեց. նա գլուխը խոնարհեց հարգալիր, աչքերը փակեց, անխոթ թույլ տվեց Մակին կողքից անցնելու և հետո ինքը դուռը ծածկեց իր ետևից։

Առաջուց արդեն տարածված այն լուրը, թե ավստրիացիք պարտվել են և ամբողջ բանակն անձնատուր է եղել Ուլմի մոտ, — ճշտվեց։ Կես ժամ հետո արդեն տարբեր ուղղությամբ աղյուսանտներ ուղարկվեցին՝ հատուկ հրամաններով, որ նշան էր, թե շուտով ոռոսական զորքերը ևս, որ մինչև հիմա անգործ էին, հանդիպելու են թշնամուն։

¹ Ձեր առչև է դժբախտ Մակը։

Իշխան Անդրեյը շտաբի այն հազվագյուտ սպաներից մեկն էր, որ մեծապես հետաքրքրվում էր պատերազմի ընդհանուր ընթացքով: Տեսնելով Մակին և լսելով նրա պարտութային մանրամասնությունները, նա հասկացավ, որ գործի կեսը տանուլ է տրված, ըմբռնեց ուսական գործերի կացութային ամբողջ դժվարությունը և կենդանի պատկերացրեց ա՛յն, ինչ սպասում է բանակին, և այն դերը, ինչ ինքը պետք է խաղա բանակի մեջ: Նա ակամա ուրախութային զգացում ունեցավ, մտածելով, որ ինքնահավան Ավստրիան խայտառակվել է, և որ, մի շաբաթ հետո, գուցե, ինքն ականատես ու մասնակից լինի ուսաների ու ֆրանսացիների ընդհարումին, մի ընդհարում, որը, Վուլորովից հետո, առաջին անգամն է լինում: Բայց նա վախենում էր Բոնապարտի հանճարից, որ կարող էր ավելի զորավոր լինել, քան ուսական գործերի բովանդակ քաջությունը, և դրա հետ միասին մտքովն անգամ չէր ուզում անցնել, թե ուսական բանակը կարող է խայտառակվել:

Այս մտքից հուզված, գրգռված՝ իշխան Անդրեյը գնաց իր սենյակը՝ հորը նամակ գրելու: (Նա հորը նամակ գրում էր ամեն օր): Միջանցքում հանդիպեց իր սենյակի ընկեր Նեսվիցկուն, և կատակաբան ժերկովին: Նրանք, ինչպես միշտ, ժիծաղում էին ինչ-որ բանի վրա:

— Ինչո՞ւ այդպես մռայլ ես, — հարցրեց Նեսվիցկին, նըկատելով իշխան Անդրեյի գունատ դեմքը, որի վրա աչքերը փայլում էին:

— Ուրախանալու բան չկա, — պատասխանեց Բալկոնսկին:

Այն միջոցին, երբ իշխան Անդրեյը հանդիպեց Նեսվիցկուն և ժերկովին, միջանցքի մյուս կողմից դեպի նրանց եկան ավստրիացի զեներալ Շտրաուսը, որը Կուտուզովի շտաբում հսկում էր ուս զորքի պարենավորմանը, և երեկ երեկո եկած հոֆկիրիզուտի անդամը: Միջանցքն այնքան լայն էր, որ զեներալներն ազատ կարող էին անցնել երեք սպայի կողքով. բայց ժերկովը, Նեսվիցկուն ձեռով հրելով, հեռացան սասց:

— Գալի՞ս են... գալի՞ս են... մի կողմ քաշվիր, ճամփա՞, ճամփա տուր, խնդրեմ:

Գեներալներն անցան մի այնպիսի տեսքով, որ ցույց էր տալիս նրանց այդ ավելորդ հարգանքից ազատվելու ցանկությունը: Կատակաբան ժերկովի դեմքին հանկարծ ուրախության մի հիմար ժպիտ երևաց, որ իբր թե չէր կարողանում զսպել:

— Ձերդ գերազանցություն, — ասավ նա գերմաներեն, մի փոքր առաջ գնալով և ավստրիական զեներալին դիմելով: — Պատիվ ունեմ շնորհավորելու:

Նա խոնարհեց գլուխը և անհամարձակ կերպով, ինչպես պարել սովորող երեխա, սկսեց շարժել նախ մեկ, ապա մյուս ոտը:

Հոֆկիրիզուտի անդամ զեներալը խստութայամբ նայեց նրան, բայց, նշմարելով նրա հիմար ժպիտի լրջությունը, չըկարողացավ վայրկենական ուշադրություն չդարձնել նրա վրա: Նա աչքերը կկոցեց, ցույց տալով, թե լսում է:

— Պատիվ ունեմ շնորհավորելու, զեներալ Մակը եկել է, բոլորովին առողջ, միայն այստեղը մի քիչ քերծվել է, — ավելացրեց նա զվարթ ժպիտով և գլուխը ցույց տալով:

Գեներալը դեմքը խոժոռեց, շրջվեց ու առաջ անցավ:

— Gott, wie naiv! — ասավ նա բարկացած, մի քանի քայլ հեռանալով:

Նեսվիցկին քրքիջով գրկեց իշխան Անդրեյին, բայց Բալկոնսկին ավելի ևս գունատվեց և, կատաղութային արտահայտությունը դեմքին, հրեց նրան ու դարձավ ժերկովին: Այն նյարդային հուզումը, որ պատճառել էր նրան Մակի տեսքը, նրա պարտության լուրը և ուսական բանակին սպասող վրտանգը, — ելք գտավ ժերկովի անտեղի կատակից առաջացած զայրույթի մեջ:

— Եթե դուք, սիրելի պարոն, — ասավ նա սուր ձայնով՝ ներքին շուրթը թեթևակի դողացնելով, — կամենում եք ծաղրածու լինել, ես այդ բանում ձեզ չեմ կարող արգելք լինել. բայց հայտարարում եմ ձեզ, որ եթե դուք մյուս անգամ համարձակվե՞ք իմ ներկայութայամբ խեղկատակություններ անել, ես ձեզ կսովորեցնեմ, թե ինչպես պիտի ձեզ պահեք:

1 Աստված իմ, որքան պարզամիտ է:

Նեսվիցկին ու ժերկովն այնպես զարմացան իշխանի այդ վարմունքի վրա, որ անխոս, աչքերնին շոած, Բալկոնսկուն նայեցին:

— Ինչ կա որ, ես շնորհավորեցի միայն, — ասավ ժերկովը:

— Սա կատակ չեմ անում, բարեհաճեցեք լսե՛լ, — պոռաց Բալկոնսկին և, Նեսվիցկու թեք բռնելով, հեռացավ ժերկովից, որը չէր իմանում ինչ պատասխանի:

— Հը ի՞նչ եղավ, եղբայր, — հանգստացնելով ասավ Նեսվիցկին:

— Ի՞նչպես թե ինչ, — ասավ իշխան Անդրեյը. հուզումից կանգ առնելով: — Դու մի հասկացիր, որ մենք կա՛մ ըսպաներ ենք, որ ծառայում ենք մեր թագավորին ու հայրենիքին և ուրախանում ենք ընդհանուր հաջողութեամբ ու տրամաւ ընդհանուր անհաջողութեանից, կա՛մ լաքեյներ ենք, որոնք չեն հետաքրքրվում իրենց տիրոջ գործերով. Quarante milles hommes massacrés et l'armée de nos de nos alliés détruite, et vous trouvez là le mot pour rire, — ասավ նա, ֆրանսերեն այդ ֆրազով կարծես իր կարծիքն ամրապնդելով: — C'est bien pour un garçon de rien, comme cet individu, dont vous avez fait un ami, mais pas pour vous, pas pour vous! Միայն տղաները կարող են այդպես զվարճանալ, — ասավ իշխան Անդրեյը ուստերեն, արտասանելով այդ խոսքը ֆրանսերեն առողանութեամբ, նկատելով, որ ժերկովը դեռ կարող է իրեն լսել:

Սա սպասեց, տեսնելու, թե կոռնետը որևէ պատասխան չի տա արդյոք: Բայց կոռնետը շրջվեց ու միջանցքից դուրս եկավ:

IV

Բրաունաուից երկու մղոն հեռու բանակել էր հուսարական Պավլոգրադյան զունդը: Հեծվաշտը, որի մեջ ծառայում էր Նիկոլայ Ռոստովն իբրև յունկեր, տեղավորված էր գերմա-

¹ Քառասուն հազար մարդ է զոհվել, մեր դաշնակից բանակը ոչնչացել է, իսկ դուք հնարավոր եք համարում կատակներ անել: Դա ներելի է մի ընչին տղայի, ինչպիսին այդ պարոնն է, որին դուք բարեկամ եք դարձրել, բայց ոչ թե ձեզ, ո՛չ թե ձեզ:

նական Զայցենեկ գյուղում: Հեծվաշտի հրամանատար՝ ուսմիստր Գենիսովին՝ որ ամբողջ հեծյալ գիվիզիայում հայտնի էր վասկա Գենիսով անունով, հատկացված էր գյուղի ամենալավ բնակարանը: Յուսկեր Ռոստովը, ևհաստանում բանակին միանալուց ի վեր, ապրում էր հեծվաշտի հրամանատարի հետ միասին:

Հոկտեմբերի 11-ին, հենց այն օրը, երբ Մակի պարտութեան լուրը գլխավոր շտաբում բոլորին ոտքի հանեց, հեծվաշտի շտաբում ազգամական կյանքն ընթանում էր սովորականի պես: Փենիսովը, ամբողջ գիշեր թղթախաղում տանուլ տալուց հետո, դեռ տուն չէր եկել, երբ Ռոստովը, վաղ առավոտյան, ձիով վերադարձավ խարավորումից (ֆուրաժիրովկա): Ռոստովը՝ յունկերական համազգեստը հագին՝ մոտեցավ տան դռանը, հրեց ձիուն, ճկուն շարժումով մի ոտը հանեց ասպանզակից, մի ակնթարթ մնաց այգպես, կարծես չկամենալով ձիուց բաժանվել, վերջապես, թռավ ցած ու ձայն տվեց բանրերին:

— Ա՛, Բոնգարենկո, սիրելի բարեկամ, — ասավ նա իր ձիու մոտ վազող հուսարին: — Սանձն ու թամբը հանի, սիրելիս, — ասավ նա եղբայրական, ուրախ մտերմութեամբ, ինչպես երիտասարդները դիմում են բոլորին, երբ երջանիկ են:

— Լսում եմ, ձերդ պայծառափայլություն, — պատասխանեց խախտը, գլուխն ուրախ թափահարելով:

— Տես, լավ հոգ տար:

Մի ուրիշ հուսար նույնպես վազեց ձիու մոտ, բայց Բոնգարենկոն արդեն հանել էր լկամի սանձը: Երևում էր, որ յունկերը լավ վարձատրում էր, ուստի և նրան ծառայելը շահավետ էր: Ռոստովը շուրջ ձիու վիզը, հետո գավակը ու կանգնեց տան դռան առաջ:

«Հիանալի՛ է: Ա՛յ, ձին այսպես կլինի», ասավ նա ինքն իրեն և, ժպտալով ու թուրը բռնած, բարձրացավ պատշգամբ՝ խրթանները շրխկացնելով: Գերմանացի-տանտերը, որը ֆուֆայկայով ու թասակով՝ եղանք ձեռին մաքրում էր գոմի աղբը, դուրս նայեց: Ռոստովին տեսնելուն պես՝ գերմանացու գեմքը պայծառացավ հանկարծ: Ուրախ ժպտաց ու աչքով արավ.

«Schön, gut Morgen! Schön, gut Morgen!»¹, կրկնեց նա, հավանորեն, երիտասարդին ողջունելուց բավականութունը գգալով:

— Schön fleissig!² — ասավ Ռոստովը նույն ուրախ, եղբայրական ժպիտով, որ չէր հեռանում նրա գվարթ դեմքից: — Hoch Oestreicher! Hoch Russen! kaiser Alexander hoch!³ — դարձավ նա գերմանացուն, կրկնելով տանտիրոջ հաճախ գործածած բառերը:

Գերմանացին ծիծաղեց, գոմից դուրս եկավ բուրբուկին, թասակը վերցրեց ու, գլխից վեր թափ տալով, բացականչեց.

— Und die ganze Welt hoch!⁴

Ռոստովն ինքն էլ, գերմանացու նման, գլխարկը թափահարեց գլխից վեր ու, ծիծաղելով, բացականչեց:

«— Und Vivat die ganze Welt!»⁴. Թեև ուրախութեան առանձին մի պատճառ չկար ոչ իր գոմը մաքրող գերմանացու համար, ոչ էլ դասակի հետ խոտի գնացած Ռոստովի համար, բայց նրանք երկուսն էլ երջանիկ հրճվանքով ու եղբայրական սիրով նայեցին միմյանց, գլուխները թափ տվին ի նշան փոխադարձ սիրո և ժպտալով բաժանվեցին՝ գերմանացին մըտավ գոմը, Ռոստովը խրճիթը, որն զբաղեցնում էր Գենիսովի հետ միասին:

— Աղան ո՞ւր է, — հարցրեց նա Գենիսովի լաքեյ կալվորուկայից, որ ամբողջ գնդին հայտնի էր որպես խորամանկի մեկը:

— Իրիկվանից տուն չի եկել: Ով գիտի տանու է տվել, — պատասխանեց կալվորուկան: — Ես գիտեմ արդեն. երբ տարած է լինում՝ շուտ գալիս է պարծենալու, իսկ եթե մինչև առավոտ չի գալիս, նշանակում է՝ տանու է տվել, ու տուն է գալու բարկացած: Սուրճ կհրամայե՞ք:

— Բե՛ր, բե՛ր:

Տասը բոպեից հետո կալվորուկան բերեց սուրճը:

¹ Լավ է, բարի լույս, լավ է, բարի լույս:

² Արդեն աշխատանքի վրա եք:

³ Ավստրիացիք—կեցցե՛: Ռուսները—կեցցե՛, Կայսր Ալեքսանդրը—կեցցե՛:

⁴ Եվ ամբողջ աշխարհը—կեցցե՛:

— Գալիս է, — ասավ նա, — վա՛յ մեզ:

Ռոստովը լուսամուտից նայեց և տեսավ տուն վերադարձող Գենիսովին: Գենիսովը փոքրիկ կարմրադեմ մարդ էր՝ սև փայլուն աչքերով, սև խոիվ բեղերով ու մազերով: Հագինը վերից վար կոճակները բաց մենտիկ էր և ծալքավոր լայն շալվար, իսկ ծոծրակին դրել էր հուսարական ճմրթած գլխարկը: Գլուխը կախ, մռայլ մոտեցավ պատշգամբին:

— Կալը՞ ուշկա, — ձայն տվեց նա բարձր ու բարկացած: — Գե՛, հանիր, տխմար:

— Արդեն հանում եմ, — պատասխանեց կալվորուկայի ձայնը:

— Ա՛, աղ՛դեն վեղ՛ ես կացել, — ասավ Գենիսովը սենյակ մտնելով:

— Վաղուց, — ասավ Ռոստովը, — խոտի գնացի արդեն և ֆրեյլեն Մատիլդային էլ տեսա:

— Այ թե ի՞նչ, իսկ ես տաղ՛վեցի, ախպեղ՛ ջան, եղ՛եկոյան, շանվող՛դու պես տաղ՛վեցի, — գոչեց Գենիսովը Ե-երը և Ա-երը ղ արտասանելով: — Այսպես դժբախտութե՞ն: Այսպես դժբախտութե՞ն: Քու գնալուց հետո տաղ՛վեցի: էյ, թեյ տուր:

Գենիսովը դեմքը կնճոցեց, կարծես ժպտում էր, ու կարճ պինդ ատամները բանալով, սկսեց երկու ձեռի կարճիկ մատներով խճճել անտառի պես ցցված սև, խիտ մազերը:

— Սատանան դղ՛դեց ինձ գնալ այդ աղնետի մոտ (սպայի մականուն), — երկու ձեռով ճակատն ու երեսը շփելով՝ շարունակեց նա: — Կաղ՛ող ես եղ՛ևակայել ո՛չ մի թուղթ, ոչ մի թուղթ չեկավ:

Գենիսովը վերցրեց իրեն մատուցված ծխամորճը, սեղմեց բուռնցքի մեջ և, կրակը թափելով, զարկեց հատակին, շարունակելով:

— Սեմպելը տալիս է, պաղ՛ուր՛ խփում. սեմպելը տալիս է, պաղ՛ուր՛ խփում:

Նա կրակը շաղ տվեց, ծխամորճը կոտրեց ու նետեց: Մի բոպե լեց, ապա հանկարծ իր սև փայլուն աչքերով Ռոստովին նայեց:

— Գոնե կանայք լինեին: Թե չէ՛ այստեղ, խմելուց բացի, ուղ՛իչ բան չկա անելու: է՛յ, ո՞վ կա այդտեղ, — դարձավ դե-

պի դուռը, լսելով խթանավոր հաստ կոշիկների դրմփոց և հարդաչիր հազի ձայն:

— Վերական է (վախճախոր), — ասավ Հավրուշկան:
Գենիսովը դեմքն ազնի խոժոռեց:

— Զզվելի է, — ասավ նա մի քանի ոսկի պարունակող քսակը շարտելով: — Ղ'ոստով, համդ'ի, սիդ'ելիս, ինչքան է մնացել, ու դիդ' բադ' ձիս տակ, — ասավ նա ու դուրս եկավ:

Ռոստովը փողը վերցրեց և, մեքենայորեն հին ու նոր սուկիները դասավորելով, սկսեց հաշվել:

— Ա: Տեյանին: Բադ' և: Եղ'ել ինձ մի լավ կեղ'ցրին, — լավեց Գենիսովի ձայնը մյուս սենյակից:

— Ո՞ւմ մոտ: Բիկովի, առնետի մոտ... Ես գիտեի, — ասավ մի ուրիշ բարակ ձայն, ապա սենյակ մտավ տեղակալ (պորուշիկ) Տեյանինը, նույն հեծվաշտի սպան:

Ռոստովը քսակը բարձի տակ կոխեց ու սեղմեց դեպի իրեն պարզված փոքրիկ ու տամուկ ձեռք: Տեյանինը արշավանքից առաջ ինչ-որ բանի պատճառով գվարդիայից փոխադրվել էր հուսարական գունդը: Նա իրեն շատ լավ էր պահում գնդում. բայց նրան չէին սիրում, և մանավանդ Ռոստովը չէր կարողանում ոչ հաղթահարել, ոչ էլ թաքցնել իր անառիթ զզվանքը դեպի այդ սպան:

— Հը', երիտասարդ հեծելակ, Գրաչիկս ի՞նչպես է ծառայում ձեզ, — հարցրեց նա: (Գրաչիկը այն ձին էր, որ Տեյանինը ծախել էր Ռոստովին):

Տեյանինը երեք խոսակիցների աչքերին չէր նայում. նրա նայվածքը շարունակ հաժում էր մի առարկայից մյուսը:

— Տեսա քիչ առաջ ձեռք անցաք...

— Ոչինչ՝ լավ ձի է, — պատասխանեց Ռոստովը, չնայած այդ ձին, որ գնված էր 700 ուրլով, դրա կեսն էլ շարժեր: — Սկսել է առաջի ձախ ոտից կազալ... — ազնվացրեց նա:

— Սմբակը ճաքե՛լ է: Այդ ոչինչ: Կսովորեցնեմ, ցույց կտամ թե՛ ինչպես պիտի մեխել:

— Ցույց տվեք, խնդրեմ, — ասավ Ռոստովը:

— Ցույց կտամ, դա գաղտնիք չէ: Բայց ձիու համար շնորհակալ պիտի լինեք:

— Ուրեմն կարգադրեմ ձին բերեն, — ասավ Ռոստովը,

ցանկանալով ազատվել Տեյանինից, ու դուրս եկավ, որ ձին բերել տա:

Հաշտում Գենիսովը, ծխամորճն ատամների արանքին, կուշ եկած նստել էր շեմքին, վերակայի առաջ, որը ինչ-որ բան էր զեկուցում: Ռոստովին տեսնելով՝ Գենիսովը հոնքերը կլիտեց և, ուսի վրայից մատով ցույց տվեց սենյակը, ուր նրստած էր Տեյանինը, դեմքը խոժոռեց ու գլուխը շարժեց զրզվանքով:

— Օ՞, տանել չեմ կարող այդ տղային, — ասավ նա, չըբաշվելով վերակայի ներկայութունից:

Ռոստովն ուսերը թոթվեց, կարծես ուզում էր ասել՝ «Ես էլ բայց ինչ կարող եմ անել», և, կարգադրութուն անելով, վերադարձավ Տեյանինի մոտ:

Տեյանինը նստած էր նույն ծուլը դիրքով, ինչպես Ռոստովը թողել էր նրան, ու շփում էր փոքրիկ ճերմակ ձեռները: «Այ, թե հակակրելի մարդիկ կան», մտածեց Ռոստովը, սենյակ մտնելով:

— Հը, կարգադրեցի՞ք ձին բերեն, — ասավ Տեյանինը, տեղից ելնելով ու անփուլթ շուրջը նայելով:

— Կարգադրեցի:

— Գե մենք էլ գնանք: Ես եկա միայն Գենիսովին երեկվա հրամանի մասին հարցնելու: Ստացա՞ք, Գենիսով:

— Գե ոչ: Իսկ դուք ո՞ւր եք գնում:

— Ուզում եմ երիտասարդին սովորեցնել, թե ինչես պետք է ձին պայտել, — ասավ Տեյանինը:

Նրանք դուրս եկան պատշգամբը և այնտեղից գնացին գոմբ: Տեղակալը ցույց տվեց պայտելու ձևն ու գնաց իր բնակարանը:

Երբ Ռոստովը վերադարձավ, սեղանի վրա դրված էր օղու մի շիշ ու երշիկ: Գենիսովը սեղանի առջև նստած՝ գրիչը ճրճապանում էր թղթի վրա: Մուսայրեն նայեց Ռոստովի դեմքին ու ասավ.

— Նրա՛ն եմ գրում:

Նա, գրիչը ձեռին, արմուշկով հենվեց սեղանին և, ըստ երեքուկի, ուրախանալով գրելիքը բերանացի ասելու առիթից, նամակի բովանդակութունը պատմեց Ռոստովին:

— Գիտես, բաղ՝ եկամս, — ասավ նա: — Մինք քնում ենք, հանգիստ ենք, քանի դեռ չենք սիրում: Մենք հողեղեն աղ՞աղ՝ ածներ ենք... բայց սիրեցիր թե չէ — աստված ես, մաքուր ես, ծնված առաջին օրվա պես... Այդ ո՞վ է: Քշի՛, գնա՛: Ժամանակ չկա, — ձայն տվեց նա Լավրուշկային, որ առանց քաշվելու մոտեցավ նրան:

— Ո՞վ պիտի լինի: Դուք եք կարգադրել: Վերական փողի է եկել:

Դենիսովը դեմքը խոժոռեց, ուզեց ինչ-որ բան ասել, բայց լռեց:

— Բանը վատ է, — ասավ նա ինքն իրեն: — Ի՞նչքան փող է մնացել քսակում, — հարցրեց Ռոստովից:

— Յոթը նոր և երեք հատ հին:

— Է, վա՛տ է: Ի՛նչ, ինչ ես կանգնել, հիմաղ, վեղակային ճամփու դիր գնա, — բղավեց նա Լավրուշկայի վրա:

— Խնդրեմ, Դենիսով, ես կարող եմ տալ, ունեմ, — ասավ Ռոստովը կարմրելով:

— Չեմ սիրում իմ ընկերներից փոխ աղնել, չեմ սիրում, — փնթփնթաց Դենիսովը:

— Եթե ընկերաբար ինձնից փող չվերցնես, ինձ կվիրաժուրես: Ծիշտ եմ ասում, ունեմ, — կրկնեց Ռոստովը:

— Է, չէ:

Եվ Դենիսովը մահճակալին մոտեցավ, որ քսակը վերցնի բարձի տակից:

— Որտե՞ղ ես դրել, Ղոստով:

— Տակի բարձի տակը:

— Ո՞ւղ է, չկա:

Դենիսովը երկու բարձն էլ գցեց հատակին: Քսակը չկար:

— Ա՛յ քեզ հղա՞ք:

— Կա՛ց, հո ցած չգցեցիր, — ասավ Ռոստովը, բարձերը մեկ-մեկ բարձրացնելով ու թափ տալով:

Վերմակը նույնպես վերցրեց ու թափ տվեց: Քսակը չկար:

— Մոռացած չլինե՞մ: Չէ, մտածեցի էլ, որ գանձի պես գլխիդ տակն ես դնում, — ասավ Ռոստովը: — Ես քսակն այդտեղ դրի: Բայց ո՞ւր կորավ, — դիմեց նա Լավրուշկային:

— Ես ներս չեմ մտել: Որտեղ դրել եք, այնտեղ էլ կլինի՞՞

— Չկա՛...

— Դուք միշտ այդպես եք. գցում եք մի տեղ ու մոռանում: Գրպաննիդ նայեցեք:

— Չէ, եթե գանձի մասին մտածած չլինեի, — ասավ Ռոստովը, — բայց լավ եմ հիշում, որ այդտեղ դրի:

Լավրուշկան ամբողջ անկողինը խառնեց, նայեց մահճակալի տակը, սեղանի տակը, ամբողջ սենյակը տակն ու վրա արավ և սենյակի մեջտեղը կանգնեց: Դենիսովն անխոս հետևում էր Լավրուշկայի շարժումներին, և երբ նա զարմացած տարածեց ձեռները, ասելով, թե ոչ մի տեղ չկա, Դենիսովը նայեց Ռոստովին:

— Ղ՛ոստով, երեխայուժյուն մի անի...

Ռոստովն զգաց Դենիսովի իր վրա սևեռած հայացքը, աչքերը բարձրացրեց և իսկույն էլ խոնարհեց ցած: Ամբողջ արյունը երեսը տվեց: Էլ չկարողացավ շունչ քաշել:

— Սենյակում էլ բացի տեղակալից ու ձեզանից մարդ չի եղել: Էստեղ մի տեղ պետք ա ըլնի, — ասավ Լավրուշկան:

— Դե, դու էլ, սատանի ծնունդ, շուղ՝ արի, տնտղի, — գոռաց հանկարծ Դենիսովը, կաս-կարմիր կտրելով և սպառնալից շարժումով լաքեյի վրա հարձակվելով: — Քսակը պիտի գտնեք, թե չէ կչաղ՞դեմ: Բուող՞իդ կչաղ՞դեմ:

Ռոստովն, առանց Դենիսովին նայելու, բաճկոնը կոճկեց թուրը պնդացրեց ու գլխարկը դրեց:

— Ես քեզ ասում եմ քսակը պիտի գտնվի, — գոռաց Դենիսովը, սպասյակի (դենշիկ) ուսերը ցնցելով և նրան դեպի պատը հրելով:

— Դենիսով, դրան թող. ես գիտեմ ո՞վ է վերցրել, — ասավ Ռոստովը, աչքերն առանց բարձրացնելու, դռանը մոտենալով:

Դենիսովը կանգ առավ, մտածեց և, հավանորեն Ռոստովի ակնարկը հասկանալով, նրա ձեռը բռնեց:

— Հիմաղ՞ ուժյուն է, — բացականչեց նա այնպես, որ վզի ու ճակատի երակները պարանի պես հաստացան: — Ես քեզ ասում եմ՝ խելքդ թղ՞ցղ՞ել ես. ես այդ թույլ չեմ տա: Քսակն այստեղ է. այս սղ՞իկայի կաշին կքեղ՞թեմ, և կգտնվի:

— Ես գիտեմ ո՞վ է վերցրել, — կրկնեց Ռոստովը դողացող ձայնով ու գնաց դեպի դուռը:

— Իսկ ես քեզ առում եմ՝ չհամադ՝ ձակվես այդ բանն անել, — պոռաց Դենիսովն ու նետվեց դեպի յունկերը, որ չըթողնի նրան գուրս գնալու:

Բայց Ռոստովը թեև ազատեց նրա ձեռքից՝ այնպիսի շարունակամբ, կարծես Դենիսովը նրա մեծագույն թշնամին լիներ, և աչքերը վճռականորեն հառեց նրա երեսին:

— Հասկանո՞ւմ ես ինչ ես ասում, — ասավ նա դողացող ձայնով, — սենյակում ինձնից բացի մարդ չի եղել: Նշանակում է՝ եթե նա չի, ուրեմն...

Նա չկարողացավ խոսքը վերջացնել ու սենյակից դուրս վազեց:

— էհ, սատանան տանի քեզ էլ, բոլոր՝ իդ էլ, — Ռոստովի ականջին հասավ Դենիսովի վերջին խոսքերը:

Ռոստովը գնաց Տելյանինի բնակարանը:

— Աղան տանը չի, շտաբ գնաց, — ասավ նրան Տելյանինի սպասուհին: — Ի՞նչ է պատահել որ, — ավելացրեց նա, գարմանալով յունկերի այլալված դեմքի վրա:

— Ոչինչ:

— Մի փոքր ուշացել եք, — ասավ սպասուհին:

Շտաբը գտնվում էր Զայցենեկ գյուղից երեք վերստ հեռու: Ռոստովը, առանց տուն մտնելու, ձին հեծավ ու շտաբ գրեց: Գյուղը, ուր գտնվում էր շտաբը, մի ճաշարան կար, որ հաճախում էին սպաները: Ռոստովն ուղիղ գնաց ճաշարան դուռն մոտ նկատեց Տելյանինի ձին:

Ճաշարանի երկրորդ սենյակում նստած էր Տելյանինը, առջև՝ սեղանի վրա մի աման սոսիկի ու մի շիշ գինի:

— Ա՛, գու՞ք էլ եկաք, պատանյակ, — ասավ նա ժպտալով ու հոնքերը վեր բարձրացնելով:

— Այո, — ասավ Ռոստովը, կարծես այդ խոսքն արտասանելը մեծ ջանք էր պահանջում իրենից, ու նստեց հարևան սեղանի մոտ:

Երկուսն էլ լուռ էին. սենյակում նստած էին երկու գերմանացի և մի ռուս սպա: Բոլորը լուռ էին, լսվում էին միայն դանակների՝ ափսեներին դեպի լուռ ձայնը և Տելյանինի ծամելու շփշփոցը: Երբ Տելյանինը նախաճաշն ավարտեց, գրպանից հանեց կրկնակ քսակը, սպիտակ մատներով օղակը քաշեց, մի օսկի հանեց ու, հոնքերը վեր քաշելով, տվեց սպասավորին:

— Խնդրեմ, շուտ արեք, — ասավ նա: Ոսկեդրամը նոր էր: Ռոստովը վեր կացավ ու մոտեցավ Տելյանինին:

— Թույլ տվեք ինձ քսակին նայելու, — ասավ նա կամաց, հագիվ լսելի ձայնով:

Թափառուն նայվածքով, բայց շարունակ վեր քաշած հոնքերով Տելյանինը քսակը տվեց Ռոստովին:

— Այո, լավ քսակ է... Այո... այո... — ասավ նա և հանկարծ գունատվեց: — Նայեցեք, պատանյակ, — ավելացրեց նա:

Ռոստովը քսակը ձեռն առավ ու նայեց թե՛ քսակին, թե՛ նրա մեջ եղած փողին և թե՛ Տելյանինին: Տեղակալն, քստ սովորության, շուրս կողմը նայեց և հանկարծ, թվաց թե շատ ուրախացավ:

— Եթե վեննա գնանք, բոլորն այնտեղ ծախսելու եմ, իսկ այստեղ, այս ողորմելի քաղաքներում ծախսելու տեղ չկա, — ասավ նա: — Դե, տվեք, պատանյակ, ես գնամ:

Ռոստովը լուռ էր:

— Իսկ դուք ինչո՞ւ եկաք. նույնպե՞ս նախաճաշելու: Լավ կերակրում են, — շարունակեց Տելյանինը: — Դե, տվեք:

Նա ձեռք մեկնեց ու քսակը բռնեց: Ռոստովը թողեց: Տելյանինը քսակը վերցրեց ու գրպանը դրեց, և նրա հոնքերը նորից անփութորեն վեր քաշվեցին, իսկ բերանը ծովեց թեթեվակի, որ կարծես ասելիս լիներ. «այո, այո, գրպանս եմ գնում իմ քսակը, և դա շատ պարզ բան է, և ոչ ոք իրավունք չունի այդ բանին խառնվելու»:

— Հը, ի՞նչ կա, պատանյակ, — ասավ նա, հոգոց քաշելով և վեր քաշած հոնքերի տակից նայեց Ռոստովի աչքերին: Աչքերի մի ինչ-որ լույս՝ էլեկտրական կայծի արագությամբ՝ ս՛լսեց վազել Տելյանինի աչքերից դեպի Ռոստովի աչքերը և ընդհակառակը, դարձյալ ու նորից, և այս բոլորը մի ակընթարթում:

— Եկեք այստեղ, — ասավ Ռոստովը, Տելյանինի ձեռք բռնելով: Ու դեթեք քարշ տվեց նրան դեպի լուսամուտը: — Այս փողերը Դենիսովինն են, դուք վերցրել եք... — շշնջաց նրա ականջին:

— Ի՞նչ... Ի՞նչ... Ի՞նչպես եք համարձակվում: Ի՞նչ... — ասավ Տելյանինը:

Սակայն այդ խոսքերը հնչեցին աղաչական, հուսահատական ձիշով և ներողութիւն հայցող եղանակով: Հենց որ Ռոստովն այդ ձայնը լսեց, կասկածի քարն ընկավ նրա հոգու վրայից: Ուրախութիւն զգաց, և նուէն վայրկյանին էլ խղճած իր առջևը կանգնած թշուա մարդուն. բայց սկսած գործը պետք է հասցնէր իր վախճանին:

— Այստեղ մարդիկ, ո՛վ գիտի, ինչ կարող են մտածել, — փնթփնթաց Տելյանինը գլխարկը վերցնելով և դեպի դատարկ սենյակը գնալով, — պետք է բացատրվի...

— Ես այդ գիտեմ, և կապացուցեմ, — ասավ Ռոստովը:

— Ես...

Տելյանինի վախեցած, գունատված դեմքն սկսեց դողալ իր բոլոր մկաններով. հայացքը շարունակում էր թափառել, բայց միշտ ցածերում, ու չէր բարձրանում նայում Ռոստովի դեմքին. և հանկարծ հեծկտանք լսվեց:

— Կո՛մս... երիտասարդ եմ, ինձ մի կործանեք... ահա այդ դժբախտ փողերը, վերցրեք... — Նա փողերը նետեց սեղանի վրա: — Ես ծեր հայր ունեմ, մա՛յր...

Ռոստովը փողը վերցրեց և, առանց Տելյանինին նայելու, առանց մի խոսք ասելու, դուրս եկավ սենյակից: Բայց դռան մոտ կանգնեց ու ետ դարձավ:

— Աստված իմ, — ասավ նա արտասվալի աչքերով, — ի՞նչպես ձեզ այդպիսի բան թույլ տվիք:

— Կոմս, — ասավ Տելյանինը, յունկերին մոտենալով:

— Ինձ ձեռ մի տաք, — ասավ նա մի կողմ քաշվելով: — Եթե կարիքի մեջ եք, առեք այս փողը: — Նա քսակը նետեց նրան ու արագ դուրս եկավ ճաշարանից:

V

Նուէն օրը երեկոյան Դենիսովի բնակարանում հեծվաշտի սպաները տաք-տաք խոսում էին:

— Իսկ ես ձեզ ասում եմ, Ռոստով, դուք պետք է ներողութիւն խնդրեք գնդի հրամանատարից, — կաս-կարմիր կտրած, հուզված Ռոստովին դիմելով՝ ասում էր ալեխառն մազերով, ահագին բեղերով և կնճոռոտ դեմքի խոշոր գծերով փոխ-կապիտանը:

Փոխ-կապիտան Կիրստենը պատվի խնդիրներով երկու անգամ աստիճանագուրկ էր արվել մինչև հասարակ զինվորութիւն և երկու անգամ էլ ձեռք էր բերել իր նախկին աստիճանի:

— Ես ոչ ոքի թույլ չեմ տա ինձ ասելու, թե ես ստում եմ, — բացականչեց Ռոստովը: — Նա ինձ ասավ, թե ես ստում եմ, իսկ ես պատասխանեցի, որ ինքն է ստում: Այդպես էլ կը վերջանա: Ինձ հերթապահութեան կարող է նշանակել թեկուզ ամեն օր, կարող է և կալանքի տակ առնել, բայց ոչ ոք չի կարող ինձ հարկադրել ներողութիւն խնդրելու, որովհետեւ եթե նա, որպես գնդի հրամանատար, իրեն արժան չի համարում ինձ բավարարութիւն տալ, ուրեմն...

— Բայց սպասեք, սիրելիս. լսեցեք ինձ, — ընդհատեց փոխ-կապիտանն իր թավ ձայնով, երկար բեղերը հարթելով: — Դուք ուրիշ սպաների ներկայութեամբ գնդի հրամանատարին ասում եք, թե սպան գողացավ...

— Ես մեղավոր չեմ, որ խոսակցութիւն բացվեց ուրիշ սպաների ներկայութեամբ: Թերևս նրանց ներկայութեամբ չպետք է խոսեի, բայց ես դիվանագետ չեմ: Ես դրա համար էլ հուսարական գունդը մտա, մտածելով, որ այստեղ նրբութիւններ պետք չեն. իսկ նա ինձ ասում է, թե ես ստում եմ... Թող ուրեմն ինձ բավարարութիւն տա...

— Այդ բոլորը լավ, ոչ ոք չի կարծում, թե դուք վախկոտ եք, բայց բանն այդ չի: Հարցրեք Դենիսովին. տեսնված բա՛ն է, որ յունկերը բավարարութիւն պահանջի գնդի հրամանատարից:

Դենիսովը, բեղը կոծելով, մոռալ տեսքով ալանջ էր դնում խոսակցութեան, ըստ երևույթին շցանկանալով մասնակցել: Փոխկապիտանի հարցին ի պատասխան, նա գլուխը շարժեց բացասաբար:

— Սպաների ներկայութեամբ գնդի հրամանատարին ասում եք այդ զազրելի բանը, — շարունակեց փոխ-կապիտանը: — Բողոքանիշը (Բողոքանիշ կոչում էին գնդի հրամանատարին) ձեզ լուեցրեց:

— Չլուեցրեց, այլ ասավ, թե ես սուտ եմ խոսում:

— Այո, և դուք ամեն տեսակ հիմարութիւններ ասիք նրան, պետք է ուրեմն ներողութիւն խնդրել:

— Ոչ մի դեպքում, — գոչեց Ռոստովը:

— Ես այդ ձեզնից չէի սպասում, — լրջորեն ու խստությամբ ասավ փոխ-կապիտանը: — Դուք չեք ուզում նրանից ներողություն խնդրել, բայց սիրելիս, դուք ոչ միայն նրա, այլ ամբողջ գնդի, մեր բոլորի առաջ մեղավոր եք ոտից գլուխ: Ահա թե ինչու. մի մտածեք կամ խորհրդակցեք՝ ինչպես վարվել այդ գործում, թե չե ուղղակի, այն էլ սպաների ներկայությամբ, ա՛ն հա քեզ — ամեն ինչ ասիք: Հիմի ի՞նչ պիտի անի գնդի հրամանատարը: Սպային դատի հանձնի և ամբողջ գունդը արատավորի՞: Մի սրիկայի պատճառով ամբողջ գունդը խայտառակի՞: Ա՛յդ է ձեր ուզածը: Մենք այդպես չենք մտածում: Եվ Բոգդանիչը՝ կեցցե՛. նա ասավ, որ դուք սուտ եք խոսում: Անախորժ բան է, բայց ինչ արած, սիրելիս. ինքնեղ առիթ սվիք: Իսկ հիմա, երբ ուզում են խնդիրը փակել, դուք ինչ-որ հպարտության պատճառով չեք ուզում ներողություն խնդրել, այլ ուզում եք բոլորը պատմել: Ձեզ համար վիրավորակա՛ն եք համարում հերթապահության կանգնելը: Վիրավորակա՛ն եք համարում ներողություն խնդրել մի հին ազնիվ սպայից: Ինչ էլ լինի Բոգդանիչը, այնուամենայնիվ ազնիվ և հին քաջ գնդապետ է. դուք ներողություն խնդրելը վիրավորական եք համարում, իսկ գունդն արատավորելը ձեզ համար ոչի՛նչ — Փոխ-կապիտանի ձայնը սկսեց դուշալ: — Դուք, սիրելիս, գնդի մեջ նորելուկ եք. այսօր այստեղ եք, վաղը կերթաք մի տեղ աղյուտանտ կղանաք. ու ձեզ համար թքած, թե կասեն. «պավլոգրադյան սպաների մեջ գողեր կան»: Իսկ մեզ համար այդպես չի: Այնպես չի՞, Դենիսով:

Դենիսովը շարունակում էր լռել ու չէր շարժվում, երբեմն միայն սև փայլուն աչքերով նայում էր Ռոստովին:

— Ձեր ինքնասիրությունը թանկ է ձեզ համար, ներողություն խնդրել չեք ուզում, — շարունակեց փոխ-կապիտանը, — իսկ մենք, ծերունիներս, որ մեծացել և, աստված տա, մեռնելու ենք գնդի մեջ, մեր գնդի պատիվը թանկ է մեզ համար, և Բոգդանիչն այդ գիտի: Օ՛, որքան թանկ է, սիրելիս: Իսկ քո արածը՝ լավ բան չի՛, լավ բան չի՛: Կուզեք վիրավորվեք, կուզեք ոչ, ես ճշմարտությունը կասեմ: Լավ չի՛:

Եվ փոխ-կապիտանը վեր կացավ ու երեսը շրջեց Ռոստովից:

— Ծիշտ է, գո՛ուրը տանի, — բացականչեց Դենիսովը տեղից վեր թռչելով: — Դե՛, Ղ՛ոստով: Դե՛:

Ռոստովը, կարմրելով ու գունատվելով, նայում էր մերթ այս, մերթ մյուս սպային:

— Ոչ, պարոնայք, ոչ... դուք մի կարծեք... ես շատ լավ եմ հասկանում, իդուր եք իմ մասին այդպես կարծում... ես... ինձ համար... ես գնդի պատվի պաշտպանն եմ... և այդ գործով կապացուցեմ, և դրոշակի պատիվն ինձ համար... է, միևնույն է, ճիշտ է, ես մեղավոր եմ... — նրա աչքերը լցվեցին արցունքով: — Մեղավոր եմ, ոտից-գլուխ մեղավոր եմ... Հը, էլ ի՞նչ եք ուզում...

— Այ այդպես, կոմս, — երեսը շրջելով՝ գոչեց փոխ-կապիտանը, խոշոր ձեռով նրա ուսին խփելով:

— Ես քեզ ասում եմ որ, — գոչեց Դենիսովը, — սա լավ տղա է:

— Այդպես շատ լավ է, կոմս, — կրկնեց փոխ-կապիտանն ու կարծես նրա խոստովանության համար սկսեց տիտղոսներով մեծարել նրան: — Գնացեք և ներողություն խնդրեցեք, ձեր պաթառափայլություն, այո-ս:

— Ամեն ինչ կանեմ, պարոններ, ոչ ոք ինձնից մի խոտք չի լսի, — աղաչական ձայնով ասավ Ռոստովը, — բայց ներողություն խնդրել չեմ կարող, աստված վկա, չեմ կարող, ինչպես կուզեք: Ի՞նչպես պետք է ներողություն խնդրեմ. երկխայի նման թողություն հայցեմ:

Դենիսովը ծիծաղեց:

— Ձեզ համար վատ կլինի: Բոգդանիչը հիշաշար մարդ է, կտուժեք ձեր համառության համար, — ասավ Կիրստենը:

— Աստված վկա, համառություն չի: Ձեմ կարող նկարագրել, թե ինչ զգացում է, չեմ կարող...

— է, կամքը ձերն է, — ասավ փոխ-կապիտանը: — Իսկ այդ սրիկան ո՛ւր է կորել, — հարցրեց նա Դենիսովից:

— Հիվանդ է ձեացել, կաղ՝ գաղղ՝ված է վաղը հղ՛ամանով հեղ՛ացնել, — ասավ Դենիսովը:

— Դա հիվանդություն է, այլ կերպ չի կարելի բացատրել, — ասավ փոխ-կապիտանը:

— Հիվանդություն է թե հիվանդություն չի, աչքիս չերևա, կսպանեմ, — գոռաց Դենիսովը արյունարբու ձայնով:

Ներս մտավ ժերկովը:

— Դու որտեղի՞ց հայտնվեցիր, — դիմեցին սպաները նրան:

— Կոիվ ենք գնում, պարոններ: Մական իր ամբողջ բանակով գերի է ընկել:

— Խարո՞ւմ ես:

— Ինքս եմ տեսել:

— Ինչպե՞ս: Մական ո՞ղջ տեսար: Ձեռներո՞վ, ոտներո՞վ:

— Արշավա՞նք: Արշավա՞նք: Մի շիշ օղի տվեք այդ նորության համար: Իսկ դու ինչպե՞ս ընկար այստեղ:

— Նորից գունդն ուղարկեցին այդ սատանայի՝ Մակի պատճառով: Ավստրիացի գեներալը գանգատվել է վրաս: Ես նրան շնորհավորեցի Մակի գալստյան առթիվ... Այդ ի՞նչ է պատահել, Ռոստով, կարծես բաղնիսից նոր ես դուրս եկել:

— Այստեղ, եղբայր, երկու օր է մեծ անհամություն կա: Ներս մտավ գնդի աղյուտանտը և հաստատեց ժերկովի բերած լուրը: Հրամայված էր վաղը կովի դուրս գալ:

— Պատերա՞զմ, պարոններ:

— Է, փառք աստծո, այստեղ երկար մնացինք:

VI

Կուտուզովը նահանջեց դեպի Վեննա, իր ետևից ոչնչացնելով Իննա (Բրաունաուրի մեջ) և Տրաունա (Լինցի մեջ) գետերի կամուրջները: Հոկտեմբերի 23-ին ուսական զորքերն անցնում էին էնս գետը: Ռուսական գումակը, հրետանին և զորասյունները կեսօրին անցնում էին էնս քաղաքի միջով, կամուրջի այս ու այն կողմը ձիգ-շարքեր կազմած:

Աշխանային տաք անձրևոտ օր էր: Ընդարձակ հեռապատկերը, որ բացվում էր այն բարձունքից, ուր կանգած էր կամուրջը պաշտպանող ուսական մարտկոցը, մերթ հանկարծ ծածկվում էր թեք իջնող անձրևի վարագույրով, մերթ բացվում հանկարծ, և արևի լույսի տակ հեռվում պարզ երևում էին պայծառացած առարկաները, կարծես լաքով պատած: Ներքևը երևում էր փոքրիկ քաղաքը՝ իր սպիտակ տներով ու կարմիր տանիքներով, եկեղեցիով ու կամուրջով, որի երկու կողմը խմբված՝ հոսում էր ուսական զորքերի պանզավածը: Դանուբի

ուրրանի վրա երևում էին նավեր, և կղզի, և պարտեզով մի դղյակ, որ շրջապատված էր էնսի՝ Դանուբը թափվող ջրերով. երևում էր Դանուբի ձախ ժայռոտ և շամի անտառով ծածկված ափը՝ կանաչ գագաթների խորհրդավոր հեռվով ու կապույտին տվող կիրճերով: Երևում էին վանքի աշտարակներ, որ բարձրանում էին շամի, կարծես կուսական ու վայրի անտառի ետևից: Հեռվում, լեռան վրա, էնսի մյուս կողմը երևում էին թըլ-նա՛մու հեծելադետները:

Թնդանոթների արանքում, բարձրության վրա կանգնած էր վերջապահ զորամասի հրամանատար գեներալը՝ շքախմբին պատկանող մի սպայի հետ ու հեռագրիտակով նայում-ուսում-նասիրում էր շրջական: Նրանից մի քիչ ետ՝ թնդանոթի փողին նստել էր Նեսվիցկին, որ գլխավոր հրամանատարի կողմից ուղարկված էր վերջապահ զորամասը: Նեսվիցկուն ուղեկցող կազակը՝ պարկն ու ջրամանը տվավ նրան, և Նեսվիցկին սպաներին հյուրասիրեց խմորեղենով ու իսկական դոպպելկյումբելով: Սպաներն ուրախ-զվարթ շրջապատել էին նրան՝ ոմանք շոքած, ոմանք տաճկական ձևով թաց կանաչի վրա ծալապատիկ նստած:

— Այո, այդ ավստրիացի իշխանը հիմար չի եղել, որ այստեղ դղյակ է շինել: Փառավոր տեղ է: Ինչո՞ւ չեք ուտում, պարոններ, — ասավ Նեսվիցկին:

— Խորապես շնորհակալ եմ, իշխան, — պատասխանեց սպաներից մեկը, հաճությամբ զրուցելով շտաբի այդպիսի բարձրաստիճան մի պաշտոնյայի հետ: — Հիանալի տեղ է: Մենք հենց պարտեզի կողքով անցանք, երկու եղջերու տեսանք, իսկ տունը որքա՛ն հրաշալի է:

— Նայեցեք, իշխան, — ասավ մի ուրիշը, որը շատ էր ցանկանում դարձյալ խմորեղեն վերցնել, բայց քաշվում էր, և որ այդ պատճառով ձևացնում էր, թե դիտում է շրջակայքը, — մի նայեցեք, մեր հետևակներն արդեն հասան այնտեղ: Ա՛յ այնտեղ փոքրիկ մարգագետնի վրա՝ ծառերի ետև, երեք հոգի ինչ-որ բան են քաշ տալիս: Նրանք այդ պալատը կբանդեն:

— Այո, այո, — ասավ Նեսվիցկին: — Բայց, գիտե՞ք, ես ինչ կցանկանայի, — ավելացրեց նա խմորեղենը իր գեղեցիկ բերանով ծամելով, — ա՛յ այնտեղ գնալ:

Նա ցուլց տվեց սարի վրա երևացող աշտարակավոր վանքն ու ժպտաց. նրա աչքերը կուշ եկան ու փայլեցին:

— Լավ բան կլինե՞ր, չէ՞, պարոններ:

Սպաները ծիծաղեցին:

— Գոնե մի քիչ վախեցնե՞ինք այդ կույսերին: Ասում են՝ իտալուհիներ են. մեջները կան շահելներ էլ: Իսկապես, կյանքիցս հինգ տարի կտա՞յի:

— Չէ որ նրանք էլ տխրում են,— ծիծաղելով ասավ մի սպա, որ ավելի համարձակն էր երևում:

Մինչ այդ շքախմբի սպան, որ կանգնած էր գեներալի մոտ, ինչ-որ բան ցուլց տվեց նրան. գեներալը նայում էր հեռադիտակով:

— Այո, այդպես էլ կա, այդպես էլ կա,— բարկացած ասավ գեներալը, հեռադիտակն աչքերից հեռացնելով և ուսերը թոթվելով,— այդպես էլ կա, խփելու են կամուրջին՝ անցնելու ժամանակ: Բայց մերոնք ինչո՞ւ են դանդաղում:

Այն կողմը պարզ աչքով երևում էր թշնամին ու իր մարտկոցը, որից հանկարծ կաթնագուլն մի ծուխ երևաց: Մխից հետո լավեց մի հեռավոր կրակոց, և երևաց թե ինչպես մեր զորքերն շտապեցին անցնել կամուրջը:

Նեավիցկին, փքվելով, վեր կացավ և, ժպտալով, գեներալին մոտեցավ:

— Չէի՞ք բարեհաճի մի քիչ ճաշակել, ձերդ գերազանցություն,— ասավ նա:

— Բանը վատ է,— ասավ գեներալը, չպատասխանելով նրան,— մերոնք դանդաղում են:

— Չմեկնե՞մ արդյոք, ձերդ գերազանցություն,— ասավ Նեավիցկին:

— Այո, գնացե՛ք, խնդրեմ,— ասավ գեներալը, կրկնելով այն, ինչ մի անգամ արդեն մանրամասնորեն հրամայված էր,— և հուսարներին ասե՛ք, որ ամենից վերջը անցնեն ու կամուրջը վառեն, ինչպես հրամայել եմ, և թող կամուրջի վրա եղած վառվող նյութերը մե՛կ էլ ստուգեն:

— Շատ լավ, պատասխանեց Նեավիցկին:

Նա ձայն տվեց ձին պահող կազակին, հրամայեց վերցնել պարկն ու ջրամանը և իր ծանր մարմինը թեթևորեն գցեց թամբի վրա:

— Իսկապես, գնալու եմ կույսերի մոտ,— ասավ նա սպաներին, որ ժպտերես նայում էին իրեն, ու ձին քշեց սարն ի վար ձգվող արահետով:

— Է, կապիտան, նշան բռնեցե՛ք,— ասավ գեներալը, դիմելով թնդանոթածիզ սպային:— Փարատեցե՛ք ձեր ձանձրույթը:

— Թնդանոթածիզնե՛ր՝ թնդանոթների մոտ,— հրամայեց սպան:

Եվ մի րոպեի մեջ թնդանոթածիզները խարույկների մոտից ուրախ-ուրախ վազեցին և սկսեցին թնդանոթները լցնել:

— Առաջի՛նը,— լավեց հրամանը:

Առաջին համարը ժրությամբ ետ ցատկեց: Թնդանոթք որոտաց մետաղի խլացուցիչ ձայնով, և ուռմբը, շաշելով, թռավ սարի ստորոտում գտնվող մեր զինվորների գլխի վրայից ու, թշնամուն չհասած, իր անկման տեղը ծխով հայտնի դարձնելով, պայթեց:

Ձինվորների և սպաների դեմքերը զվարթացան այդ ձայնից. բոլորը վեր կացան և սկսեցին դիտել ներքևում, ինչպես ձեռի ափում, պարզ երևացող մեր զորքերի շարժումը ցածում և, մոտեցող թշնամու շարժումը առջևում: Այդ նույն վայրկյանին արևը բոլորովին դուրս եկավ ամպերի տակից, և այդ միայնակ կրակոցի գեղեցիկ ձայնն ու պայծառ արևի փայլը իրար ձուլվելով՝ ստեղծեցին մի առույզ ու զվարթ տրամադրություն:

VII

Կամուրջի վրայից թռան-անցան թշնամու երկու ուռմբը, և կամուրջի վրա այժմ հրհրոց էր: Կամուրջի մեջտեղը, ձիուց իջած, կանգնել էր իշխան Նեավիցկին՝ իր հաստ մարմնով ճաղերին սեղմված: Նա ծիծաղադեմ ետ նայեց իր կազակին, որը, երկու ձիու սանձերը բռնած, կանգնել էր նրանից մի քանի քայլ հեռու: Հենց որ իշխան Նեավիցկին ուզեց առաջ շարժվել, զինվորներն ու սայլերը նորից ճաղերին սեղմեցին նրան, ու նրան էլ ոչինչ չէր մնում անել, եթե ոչ ժպտալ:

— Ի՞նչ ես անում, ախպեր ջան,— ասավ կազակը պաշարակիր սայլը վարող զինվորին, որ քշում էր անիվների և ձիերի ջուրջը խմբված հետևակների վրա,— ի՞նչ ես անում: Չե՞ս

կարող մի քիչ համբերել. տեսնում ես՝ գեներալն ուզում է անցնել:

Բայց սայլը վարող զինվորն ուշադրութուն չդարձրեց գեներալի անվանն ու ձայն տվեց ճանապարհը կտրող զինվորներին:

— Է՛յ, հայրենակիցներ, ձախ քաշվեցե՛ք, ճամփա տվե՛ք: Բայց հայրենակիցներն իրար սեղմված, սվինները միմյանց դիպրեցնելով. անընդհատ, մի ընդհանուր զանգված կազմած շարժվում էին կամրջով: Ճաղերից ցած նայելով՝ իշխան Նեպիցկին տեսավ էնսի սրընթաց, շառաշուն, մանրիկ ալիքներ, որոնք կամուրջի ոտների մոտ իրար գալուց և ուռչելով, հալածում էին մեկը մյուսին: Կամուրջին նայելով՝ նա տեսավ զինվորների նույնքան միօրինակ կենդանի ալիքները, քուժասներ, պայուսակներ, սվիններ, երկար հրացաններ, բարձրագիր գլխարկների տակից նայող լայն այտուկներով, փոս ընկած այտերով դեմքեր, որոնց վրա կար անհոգության մի արտահայտություն և կամուրջի տախտակների վրա տրորված լայրծուն ցեխի միջից շարժվող ոտքեր: Երբեմն զինվորների միօրինակ ալիքների միջով, ինչպես էնսի ալիքների մեջ ընկած մի ճերմակ փրփուր, անցնում էր մի սպա՝ իր թիկնոցով և զինվորներից տարբերվող կերպարանքով. երբեմն, ինչպես գետի հոսանքով տարվող մի տաշեղ, հետևակ զինվորների ալիքներով տարվում էր մի հետիոտն հուսար, սպասյակ կամ սոսկ բնակիչ, երբեմն՝ գետի երեսին լողացող գերանի պես, ամեն կողմից շրջապատված՝ կամուրջով անցնում էր մի վաշտային կամ սպայական սայլ՝ լիքը բարձած ու կաշիներով ծածկած:

— Տե՛ս, ամբարտակի պես քանդեց անցավ, — հուսահատորեն կանգ առնելով՝ ասավ կազակը: — Ձերոնցից դեռ շատ կա՞ն:

— Մի միլիոնից մի հատ պակաս, — աչքով արավ մոտիկից անցնող պատուված շինելով մի ուրախ զինվոր ու անհետացավ. նրա ետևից անցավ մի ուրիշ ծեր զինվոր:

— Երբ ես (եա — թշնամին) հիմի կամուրջի վրա կրակ թափի, — մոայլ ձայնով ասավ ծեր զինվորը իր ընկերոջը, — հանաքդ կմոռանաս:

եվ զինվորը անցավ: Նրա ետևից գնում էր սայլի վրա նըստած մի զինվոր:

— Տո, գրողի տարած, ոտիս փաթաթաններն ո՞ւր ես դրել, — ասում էր սպասյակը, սայլի ետևից վազելով ու նրա ետևի մասը խառնելով:

Դա էլ անցավ իր սայլով: Նրա ետևից եկան ուրախ, ըստ երևույթին, խմած զինվորներ:

— Որ, ախպեր ջան, հրացանի կոթով ատամներին շուրվե՛ց... — ուրախ-ուրախ ասում էր շինելի փեշերը վեր բաշած մի զինվոր, ձեռները լայն շարժելով:

— Ա՛ն քեզ քաղցր ապուխտ, — պատասխանեց մի ուրիշը ծիծաղելով:

Դրանք էլ անցան, այնպես որ Նեպիցկին շիմացավ, թե ո՞ւմ ատամներին են խփել և ապուխտը ի՛նչին էր վերաբերում:

— Նրա սառը զենքը տեսան՝ ո՞նց են վուզում. կարծես բոլորին պըտի կոտորի, — ասավ մի ենթասպա բարկացած, կշտամբանքով:

— Կողքիցս որ անցավ, քեռի ջան, էդ ոտմբը, — ասում էր ծիծաղը հազիվ գսպելով մի մեծաբերան զինվոր. — տեղն ու տեղը լեզուս կապ ընկավ: Աստված վկա, էնպե՛ս վախեցա, լեզիս ջուր դառավ, — ասում էր այդ զինվորը, կարծես պարծենալով, որ ինքը վախեցել է:

Դա էլ անցավ: Նրան հետևեց մի սայլ, որ նման չէր մինչ այդ անցածներին: Դա գերմանական ֆորշպան էր (սայլ) մի գույզ ձիով, որին, թվում էր, մի ամբողջ տուն են բարձել. ֆորշպանի ետևից կապված-գնում էր սիրուն, խայտախար, մեծակուրծ մի կով: Վերմակների վրա նստել էր ծծկիրը գրկած մի կին, մի պառավ և կաս-կարմիր դեմքով, առողջ գերմանացի աղջիկ: Երևում էր տեղահանվող բնակիչներ էին և կամուրջից անցնում էին հատուկ թույլտվությամբ: Բոլոր զինվորները նայեցին կանանց և, մինչ սայլն անցնում էր՝ քայլ առ քայլ շարժվելով, զինվորների ամբողջ խոսակցութունը դառնում էր այդ երկու կնոջ շուրջը միայն: Բոլոր դեմքերի վրա գրեթե կար այդ կանանց նկատմամբ եղած անպարկեշտ մտքերի միևնույն ժպիտը:

— Տե՛ս, երշիկներն էլ են փախչում:

— Քրոցդ ծախի, — ասավ մի ուրիշ զինվոր, դիմելով գերմանացուն, որ աչքերը գետնին, բարկացած ու վախեցած մեծ-մեծ քայլերով գնում էր սայլի հետ:

— Տե՛ս ո՞նց է զուգվել: Ո՛ւ, գրողի տարածներ:

— Նրա կողքին ըլնեիր, Ֆյոդոտով:

— Տե՛սել եմ, ախպեր ջան:

— Ո՛ւր եք գնում, — հարցրեց մի հետևակ սպա, որ խնձոր ուտելով և նույնպես ժպտալով՝ նայում էր սիրուն աղջկան և Քերմանացին աչքերը փակեց, ցույց տալով, թե չի հասկանում:

— Եթե ուզում ես՝ ա՛ռ, — ասավ սպան, խնձորը աղջկանը մեկնելով:

Աղջիկը ժպտաց և խնձորը վերցրեց: Նեավիցլիին, ինչպես և կամրջի վրա գտնվող բոլոր մարդիկ, աչքը չհեռացրեց կանանցից, մինչև որ նրանք շանցան: Երբ նրանք գնացին, նորից եկան-անցան նույնպիսի զինվորներ՝ նույն խոսակցություններով և, վերջապես, բոլորը կանգ առան: Ինչպես այդ հաճախ է պատահում՝ կամուրջի ծայրին վաշտային սայլի ձիերը կանգնեցին մնացին, և բոլորն ստիպված էին սպասել:

— Ինչո՞ւ են կանգնել: Կարգ-կանոն չկա՞, — ասում էին զինվորները: — Ո՛ւր ես քշում: Սատանի ծնունդ: Չեն ուզում սպասել: Ավելի վատ կլինի, եթե նա կամուրջը վառի: Տես, օֆիցերին էլ սեղմեցին, — խոսում էին ամեն կողմից կանգ առնող բազմությունները, իրար նայելով, ու հրում-սեղմում էին միմյանց՝ կամուրջից անցնելու:

Նայելով կամրջի տակի ջրերին՝ Նեավիցլիին հանկարծ իր համար բոլորովին նոր ձայն լսեց, որ արագորեն մոտենում էր... մի ինչ-որ խոշոր բան, որ հանկարծ ջուրն ընկավ:

— Տե՛ս ո՞ւր են խփում, — խստությամբ ասավ մոտիկ կանգնած մի զինվոր, ձայնի կողմը նայելով:

— Սիրտ է տալի, որ շուտ անցնենք, — ասավ մի ուրիշն անհանգիստ:

Ամբոխը նորից շարժվեց: Նեավիցլիին հասկացավ, որ դա ումբ էր:

— էյ, կազակ, ձին մոտեցրու, — ասավ նա: — է՛յ, դուք, մի կողմ քաշվե՛ք, ճամփա՛ տվեք:

Նա մեծ դժվարությամբ մոտեցավ ձիուն, և անզազար գո-

ռալով՝ առաջ անցավ: Զինվորները սեղմվում էին՝ նրան ճանապարհ տալու, բայց նորից նրան այնպես սեղմեցին, որ ոտը տրորեցին. բայց մոտ գտնվողները մեղավոր չէին, որովհետև նրանց ավելի շատ էին սեղմում:

— Նեավիցլիի՛, Նեավիցլիի՛, է՛յ, սեխ, — ձայն տվեց մեկն այդ միջոցին նրա ետևից:

Նեավիցլիին ետ նայեց և տառնուհինգ քայլի վրա՝ շարժվող հետևակի զանգվածի մեջ՝ տեսավ կարմրադեմ, սևաչյա, մաղմազոտ, գլխարկը ծոծրակին թեքած և մենտիկը ուսին պցած վասկա Դենիսովին:

— Հղ՛ամայի այդ սասանանեղ՛ին ճամփա տան, — գոչեց Դենիսովը, ըստ երևույթին շատ բարկացած. նրա ածուխի պես սև աչքերը փայլում էին բորբոքված սպիտակուցների մեջ. օդի մեջ շարժում էր պառլանից հանած թուրը, որ բռնել էր երեսի պես կարմրած փոքրիկ ձեռով:

— է՞, վասյա՞, — ուրախ պատասխանեց Նեավիցլիին: — Դու ի՞նչ գործ ունես այստեղ:

— Հեծվաշտը չի կաղ՛ողանում անցնել, — գոչեց վասկա Դենիսովը, կատաղությամբ ճերմակ ատամները բանալով և իր սիրուն, սև ազնվացեղ Բնգուլինին խթանելով, որը հանդիպող սվիններից ականջները թարթելով, փնչացնում էր՝ շորս կողմը փրփուր շաղ տալով. սմբակները շրխկոցով խփում էր կամրջի տախտակներին և, թվում էր, պատրաստ է ցատկել կամուրջի ճաղերից, եթե միայն հեծվորը թույլ տա: — Սա ի՞նչ բան է. ոչխաղ՛նեղ՛ի պես խաղ՛նվել են. ճիշտ և ճիշտ՝ ոչխաղ՛նեղ՛ի: Հեղ՛ո՛ւ... ճամփա՛... է՛յ, սայլդ կանգնացղ՛ու, սատանի ծրնո՛ւնդ: Թղ՛ովս կտող՛-կտող կանեմ, — գոռաց նա, և իսկապես թուրը մերկացնելով՝ սկսեց շարժել:

Զինվորները վախեցած դեմքերով իրար կպան և Դենիսովը մոտեցավ Նեավիցլուն:

— Ի՞նչ է, հարբած չե՞ս, — ասավ Նեավիցլիին Դենիսովին:

— Խմելու ժամանակ էլ չեն տալիս, — պատասխանեց Դենիսովը: — Ամբողջ օրը գունդը դես ու դեն են քաշ տալիս: Եթե կովելու ենք — կովենք: Թե չէ, սատանան գիտի, սա ի՞նչ բան է:

— Ի՛նչպես էլ պճնվել ես, — ասավ Նեավիցլիին, նայելով նրա նոր մենտիկին ու ձիու տապալակին:

Դենիսովը ժպտաց, զինվորական մախաղից թաշկինակը հանելով (որն անուշ բուրմունք տարածեց շուրջը), մոտեցրեց Նեսվիցկու քթին:

— Ո՞նց կլինի, կոխ՞վ եմ գնում. սափրվեցի, ատամներս մաքրեցի և վրաս անուշահոտութիւն ցանցի:

Նեսվիցկու պարթև կերպարանքը՝ իրեն ուղեկցող կազակով, և Դենիսովի վճռականութիւնը, որ թուրը շարժում էր ու գոռում՝ կատաղի, — այնպիսի ազդեցութիւն արին, որ նրանք կամուրջի այն կողմն անցան և հետևակ զորքը կանգնեցրին: Նեսվիցկին կամուրջի ծայրին գտավ այն գնդապետին, որին հայտնելու էր բերած հրամանը և, հանձնարարութիւնը կատարելով, ետ դարձավ:

Ճանապարհը մաքրելով՝ Դենիսովը կանգնեց կամուրջի բերանին: Անփութորեն զսպելով յուրայինների մոտ ձգտող և ոտները գետնին զարկող նժույգին՝ նա նայում էր դեպ իրեն եկող հեծելազորին: Կամուրջի տախտակների վրա հնչեցին սրմբակների պարզ ձայները, կարծես արշավում էին մի քանի ձիեր, և հեծելազորը, սպաներն առջևից, շորսական հոգուց շարքեր կազմած ձգվեցին-անցան կամուրջի այն կողմը:

Կանգնեցված հետևակ զինվորները կամուրջի մոտ տրորված ցիխի վրա հավաքված՝ խորթութիւն անբարյացակամ զգացումով ու ծաղրանքով (ինչպես սովորաբար հանդիպում են զորքի տարբեր տեսակները) նայում էին մաքուր, պճնված հուսարների, որ կանոնավոր շարքեր կազմած անցնում էին իրենց մոտով:

— Զուգված տղերք են: Մնում է, որ զբոսանքի գնան:

— Դրանցից ի՞նչ օգուտ: Յուլյց տալու համար են մանածում, — ասավ մի ուրիշը:

— Հետևակ, փոշի մի բարձրացնի, — կատակեց մի հուսար, որի տակ ձին խաղա լինելով՝ ցեխի ցալքուններ նետեց մի հետևակ զինվորի վրա:

— Ես քեզ մի առաջ դնեի ու քշեի՞, որ հոգիդ բերնովդ դուրս գար, — ասավ հետևակը, դեմքի ցեխը թևքով սրբելով, — ձի նստողը հո մարդ չի, թոշուն է:

— Այ լավ կլինեի, Զիկին, քեզ մի ձի նստացնեին, ո՞նց կքշեիր, — ծաղրեց թելանին (եֆրեյտորը)՝ պայուսակի ծանրութիւն տակ կքած նիհար զինվորին:

— Մահակը կոխի ոտներիդ արանքը, ահա քեզ ձի, — վրաբերեց մի հուսար:

VIII

Մնացյալ հետևակը հապճեպ անցավ կամուրջով, ձագարած և կուտակվելով ելքի մոտ: Վերջապես սայլերը բոլորն անցան, ճնշումն ու հրհրոցը սակասեց և վերջին գումարտակը ոտք դրեց կամուրջի վրա: Միայն Դենիսովի հեծվաշտի հուսարներն էին մնացել կամուրջի այն կողմը՝ թշնամու դիմաց: Հակառակորդը, որ երևում էր հեռվում, դիմացի սարի վրա, ներքևից, կամուրջից դեռ չէր տեսնվում, որովհետև այն ձորակից, որով հոսում էր գետը, հորիզոնը վերջանում էր հանդիպակաց բարձրունքներով՝ հազիվ կես վերստ հեռավորութեամբ: Առջևը ամայի տարածութիւն էր, ուր տեղ-տեղ շարժվում էին կազակ հեծելադետների խմբեր: Հանկարծ ճանապարհի դիմացի բարձրութեան վրա երևացին կապտազգեստ զորքեր և հրետանի: Ֆրանսացիներն էին: Կազակ-հեծելազնդերը ձիերը քշեցին դեպի սարի ստորոտը: Բոլոր սպաները և Դենիսովի հեծվաշտի զինվորները, թեև աշխատում էին խոսել կողմնակի նյութերի վրա ու նայել այս ու այն կողմ, բայց շարունակ մտածում էին միայն այն մասին, թե սարի վրայինք ի՞նչ է արդյոք, ու անդադար նայում էին հորիզոնի վրա երևացող բժերին, որոնց ընդունում էին հակառակորդի զորքերի տեղ: Կեսօրից հետո եղանակը նորից պարզվեց: Պայծառ արևը խոնարհվեց դեպի Դանուբը և նրան շրջապատող մթին լեռները: Խաղաղ էր, երբեմն միայն դիմացի սարից լսվում էին թշնամու կանչերը և փողերի ձայնը: Հեծվաշտի ու հակառակորդի միջև այլևս մարդ չկար, բացի հեծելադետների փոքրիկ խմբերից: Նրանց իրարից բաժանողը երեք հարյուր սաժենաչափ մի դատարկ տարածութիւն էր: Թշնամին դադարեցրեց կրակը, որից հետո ավելի պարզ ըզգացվեց այն դաժան, ահարկու, անմատչելի ու անշոշափելի գիծը, որ երկու հակառակորդ բանակները բաժանում էր իրարից:

«Բավական է մի քայլ անես այդ գծի այն կողմը, որը հիշեցնում է կենդանի մարդկանց մեռելներից բաժանող գիծը, — և այնտեղ դու կգտնես անհայտ տանջանք ու մահ: Եվ ի՞նչ կա

այնտեղ, ո՞վ կա, այնտեղ՝ արևի ճառագայթներով լուսավորված դաշտի, ծառերի ու տանիքների այն կողմը: Ոչ ոք չգիտի, բայց ուզում ես իմանալ. և սարսափելի է այդ գիծն անցնելը, և միաժամանակ ուզում ես անցնել այն. և գիտես, որ վաղ թե ուշ ստիպված ես լինելու անցնել ու իմանալ ի՞նչ կա այնտեղ, այդ գծի այն կողմը, ինչպես և անհրաժեշտ է իմանալ, թե ինչ կա այնտեղ, մահից անդին: Բայց ինքդ ուժեղ ես, առողջ, զվարթ ու գրգռված և շրջապատված ես նույնպիսի առողջ ու գրգռված-աշխույժ մարդկանցով: Եթե այսպես չի էլ մտածում, գոնե այսպես է զգում թշնամու դեմ գտնվող յուրաքանչյուր մարդ, և այդ զգացումը առանձին մի փայլ ու խորություն է տալիս այդ վայրկյանին նրա շուրջը կատարվող յուրաքանչյուր անցուզարձի սպավորութուններին:

Թշնամու դիրքի վրա կրակոցի ծուխ երևաց, և ուժերը, շաշելով, եկավ-անցավ հուսարական հեծվաշտի գլխի վրայից: Իրար մոտ խմբված սպաները՝ շտապեցին իրենց տեղերը: Հուսարներն սկսեցին շարքերը հավասարեցնել: Հեծվաշտում ամեն ինչ լռեց: Բոլորը նայում էին առաջ՝ թշնամուն և վաշտի հրամանատարին, սպասելով նրա հրամանին: Եկան-անցան երկրորդ, երրորդ ուժերը: Երևում էր՝ կրակում են հուսարների վրա, բայց ուժերը համաչափ ուրախ շաշուենով թռչում էին հուսարների գլխի վրայից և գնում դիպչում նրանց ետևում ինչ-որ մի տեղ: Հուսարները ետ չէին նայում, բայց թռչող ուժերի յուրաքանչյուր ձայնից, կարծես հատուկ հրամանով, ամբողջ հեծվաշտը՝ իր միատեսակ-բազմատեսակ դեմքերով, շունչը պահած, քանի դեռ թռչում էր ուժերը, բարձրանում էր ասպանդակների վրա և նորից իջնում: Զինվորները, առանց գլուխները ծռելու, կողքանց նայում էին իրար, միմյանց դեմքի արտահայտությունը տեսնելու: Դենիսովից սկսած մինչև փողահարը՝ յուրաքանչյուր դեմքի վրա՝ շուրթերի և կզակի շուրջը երևում էր ներքին պայթարի, լարվածութան և հուզմունքի ընդհանուր գիծ: Վերական (վախմիտորը), զինվորներից նայելով, հոնքերը կիտում էր, կարծես սպառնում էր պատժել: Յունկեր Միրոնովը յուրաքանչյուր ուժերի թուխքից կոանում էր: Ռոստովն իր Գրաչիկը հեծած կանգնած էր ձախ թևում, և մեծ հասարակություն առաջ քննություն տալու կանչված երջանիկ աշակերտի տեսք ուներ, աշակերտ,

որը համոզված է, թե գերազանց է հանդիսանալու նա պարզ, պայծառ հայացքով նայում էր բոլորին, կարծես խնդրելով, որ ուշադրություն դարձնեն, թե ինչպես է ինքը հանգիստ կանգնել ուժերի տակ: Բայց նրա դեմքին էլ, հակառակ իր կամքի, բերանի շուրջը երևում էր նույն նոր ու խիստ գիծը:

— Ո՞վ է այնտեղ գլուխ խոնաղ՝ հում: Յունկեղ՝ Միդ՝ ո՞նով: Լավ չէ՞, նայեցե՞ք ինձ, — գոչեց Դենիսովը, որ մի տեղ կանգնել չէր կարողանում և ձիու վրա գնում-գալիս էր հեծվաշտի առաջ:

Վասկա Դենիսովի վեր ցցված բթով սևամաղ դեմքը և նրա ամբողջ փոքր կերպարանքը՝ իր ջղուտ (կարճ մազմազոտ մատներով) ձեռով, որով բռնել էր մերկացրած թուրը, նույնն էր, ինչպես միշտ, մանավանդ երեկոյան դեմ երկու շիշ կոնծելուց հետո. միայն սովորականից ավելի կարմրած էր. նա ջուր խմող թռչունի պես՝ մազառատ գլուխը վեր տնկած, փոքրիկ ոտների խթանները անխնա սեղմում էր իր ազնիվ Բեդուինի կողերին ու կարծես ետևի վրա ընկնելով, քշեց-գնաց վաշտի մյուս թևը և խոպոտ ձայնով պոռաց, որ ատրճանակներն ստուգեն: Ապա մոտեցավ Կիրստենին: Փոխ-կապիտանը՝ իր հաստիկ մադյանին նստած՝ հանդարտաքայլ եկավ դեպի Դենիսովը: Փոխ-կապիտանը, իր երկար բեղերով, ինչպես միշտ, լուրջ էր. միայն աչքերն էին փայլում սովորականից ավելի:

— Հ՞ը, — ասավ նա Դենիսովին, — բանը կովի չի հասնելու: Կտեսնես, ետ ենք գնալու:

— Սաստանան գիտի, ի՞նչ են անում, — փնթփնթաց Դենիսովը: — Ա՛, Ղ՛ոստով, — ձայն տվեց նա յունկերին, նկատելով նրա զվարթ դեմքը: — Հը, վեղ՛ջապես սկսվեց:

Եվ նա ժպտաց խրախուսական ժպտով, ըստ երևույթին ուրախանալով յունկերի վրա: Ռոստովն իրեն բոլորովին երջանիկ զգաց: Այդ միջոցին կամուրջի վրա երևաց հրամանատարը: Դենիսովը ձիւն քշեց դեպի նա:

— Ձեղ՛դ գեղ՛ազանցություն, թույլ տվեք հաղ՛ձակվել. ես նղ՛անց կըշմ:

— Ի՞նչ հարձակում, — ասավ հրամանատարը տաղտուկ ձայնով ու դեմքը խոժոռելով, կարծես աներես ճանճերից: —

Ինչո՞ւ եք այստեղ կանգնել: Տեսնում եք՝ ձիավոր կողմնա-
խուլզնները նահանջում են: Վաշտը ե՛տ տարեք:

Հեծվաշտը կամուրջն անցավ և դուրս եկավ կրակի տակից,
չկորցնելով և ոչ մի մարդ: Նրա ետևից անցավ և երկրորդ հեծ-
վաշտը, որ գտնվում էր շղթայի մեջ, և ապավերջին կաղակ-
ները:

Պավլոգրադցիների երկու հեծվաշտը, կամուրջն անցնելով,
մեկը մյուսի ետևից սարը բարձրացան: Գնդի հրամանատար
Կարլ Բոգդանովիչ Շուբերտը մոտեցավ Գենիսովի վաշտին: և
այժմ հանդարտ գնում էր Ռոստովի կողքից, բայց ոչ մի ուշա-
դրություն չդարձնելով նրա վրա, չնայած, որ Տելյանինի պատ-
ճառով տեղի սենեցած ընդհարումից հետո, նրանք այժմ առա-
ջին անդամն էին տեսնվում: Ռոստովը (այստեղ՝ ճակատում
իրեն զգալով այդ մարդու իշխանության ներքո, մի մաշդ, որի
առջև իրեն այժմ մեղավոր էր համարում) աչքը չէր հեռացնում
գնդի հրամանատարի ըմբիշային թիկունքից, խարտյաշ ծոծ-
րակից և կարմիր վզից: Ռոստովին մերթ թվում էր, թե Բոգ-
դանիչն անուշադիր է ձեռնում միայն, և թե նրա ամբողջ
նպատակն այն է այժմ, որպեսզի փորձի յունկերի քաջություն-
ընդ, ուստի և շտկվում էր ու նայում զվարթորեն. մերթ թվում
էր թե Բոգդանիչը, դիտմամբ է իր կողքից քայլում, որպեսզի
ի՛ր քաջությունը ցույց տա իրեն՝ Ռոստովին: Երբեմն էլ մըտ-
քովն անցնում էր, թե իր թշնամին դիտմամբ վաշտը կուղարկի
կատաղի հարձակման, որպեսզի պատժի իրեն՝ Ռոստովին:
Կամ երևակայում էր, թե կովից հետո նա կմոտենա իրեն՝
վիրավորվածին և մեծահոգաբար հաշտության ձեռք կմեկնի:

Պավլոգրադցիներին ծանոթ վեր բարձրացրած ուսերով
ժերկովը (նա նորերս էր դուրս եկել նրանց գնդից) մոտեցավ
գնդի հրամանատարին: Ժերկովը, շտաբից բշվելուց հետո,
գնդում չմնաց, ասելով թե՛ հիմար չի, որ ճակատում նեղու-
թյուններ քաշի, երբ շտաբում, ոչինչ չանելով, ավելի պար-
զ ենեք կատանա. և կարողացել էր արդեն պատվիրակի (օր-
դինարեց) պատշոն ստանալ իշխան Բագրատիոնի մոտ: Այժմ
վերջապահ գնդի հրամանատարից հրաման էր բերել իր նախ-
կին պետին:

— Գնդապետ, — ասավ նա մոռյլ լրջությամբ, դիմելով

Ռոստովի՝ թշնամուն ու նայելով ընկերներին, — հրամայված
է կանգ առնել և կամուրջն այրել:

— Ո՞վ է հրամայել, — հարցրեց գնդապետը խոժոռ:

— Ես էլ չգիտեմ, գնդապետ, ով է հրամայել, — պատաս-
խանեց ժերկովը լրջությամբ, — միայն իշխանն ինձ կարգա-
դրեց. «Գնա և գնդապետին ասա, որ հուսարները շուտ վերա-
դառնան և կամուրջն այրեն»:

Ժերկովի ետևից նույն հրամանով հուսարական գնդապետի
մոտ եկավ շքախմբի սպաներից մեկը: Շքախմբի սպայից
հետո՝ կազակի ձի հեծած, որը հագիվ էր տանում նրան, եկավ
գիրուկ Նեսվիցկին:

— Չէ որ, գնդապետ, — գոչեց նա դեռ հեռվից, — ես ձեզ
ասի, որ կամուրջն այրեք. մեկը երևի ձեզ սխալանքի մեջ է
գցել. այնտեղ մարդիկ խենթանում են, ոչինչ չի կարելի չո-
կել:

Գնդապետը առանց շտապելու կանգնեցրեց գունդը և
դարձավ Նեսվիցկուն:

— Դուք ինձ վառվող նյութերի մասին ասիք, — ասավ նա, —
իսկ կամուրջն այրելու մասին ոչինչ չասիք:

— Ինչպես չէ՛. եղբայր, — ասավ Նեսվիցկին կանգ առնե-
լով և, գլխարկը վերցնելով, փափրիկ մատներով սղալեց բրո-
տինքից թացացած մազերը, — ինչպես չեմ ասել, թե կամուր-
ջը պիտի այրել, երբ դուրսավառ նյութեր են դրված:

— Ես ձեզ համար «եղբայր» չեմ, պարոն բարձրակա
սպա (շտաբ-օֆիցեր), իսկ դուք ինձ չեք ասել, որ կամուրջն
այրեմ: Ես ծառայությունս գիտեմ և սովորություն ունեմ
հրամանը ճշտությամբ կատարել: Դուք ասիք՝ կամուրջը
կայրեն. իսկ թե ով կայրի, ես սուրբ հոգով չեմ կարող իմանալ...

— է, միշտ այդպես եք, — ձեռք թափ տալով՝ ասավ Նես-
վիցկին, — Դու ի՞նչ գործ ունես այստեղ, — դարձավ նա
ժերկովին:

— Նույն գործով: Բայց դու քրտնել ես, թող սրբեմ:

— Դուք, պարոն բարձրակա սպա, ասիք որ, — շարուն-
ակեց գնդապետը նեղացած...
— Գնդապետ, — ընդհատեց շքախմբի սպան, — պետք է
շտապել, թե չէ թշնամին թնդանոթները կմոտեցնի՝ կարտեչ
կթափի:

Գնդապետը անխոս նայեց շքախմբի սպային, հաստիկ նեակիցկուն, Ժերկովին ու մոռյվեց:

— Ես կամուրջը կայրեմ, — ասավ նա հանդիսավոր եղանակով, որ կարծես ուզում էր ասել, թե չնայած իրեն պատճառած բոլոր անախորժություններին, ինքն այնուամենայնիվ կանի այն, ինչ պարտավոր է:

Իր երկար մկանուտ ոտները խփելով ձիուն, կարծես ամեն բանում նա էր մեղավոր, գնդապետն առաջ անցավ և շորգ հեծվաշտին (հենց այն վաշտին, ուր ծառայում էր Ռոստովը՝ Դենիսովի հրամանատարութան տակ) հրամայեց վերադառնալ ետ՝ դեպի կամուրջը:

«է, այդպես էլ կա, չէի սխալվում, — մտածեց Ռոստովը, — նա ուզում է ինձ փորձել: — Նրա սիրտը կծկվեց և արյունը խփեց երեսը: — Թող փորձի, տեսնենք վախկոտ եմ», — մտածեց նա:

Նորից վաշտի զինվորների ուրախ-զվարթ դեմքերին երեկվաց այն լուրջ արտահայտութունը, որ նկատվում էր այն ժամանակ, երբ նրանք կանգնել էին ուղմբի տակ: Ռոստովն աչքը չէր հեռացնում իր թշնամուց՝ գնդի հրամանատարից, ցանկանալով իր ենթադրությունը հաստատող մի նշան տեսնել նրա դեմքին. բայց գնդապետը ոչ մի անգամ չնայեց Ռոստովին. նա իր առջևն էր նայում՝ խիստ ու հանդիսավոր: Հրամանը լսվեց:

— Շո՛ւն: Շո՛ւտ, — կրկնեցին մի քանի ձայներ:

Սրերը ձիերի սանձերին դիպցնելով, խթաններով աղմուկելով՝ հուսարներն իջան ձիերից՝ իրենք էլ շիմանալով, թե ինչ պիտի անեն: Նրանք խաշակնքեցին երեսները: Ռոստովն էլ գնդի հրամանատարին չնայեց, — ժամանակ չկար: Նա վախենում էր, սաստիկ վախենում էր, թե հանկարծ հուսարներից ետ շմնա: Նրա ձեռք դողաց, երբ ձին հանձնեց ձիապահին, և զգաց, որ արյունն արագորեն հոսեց դեպի սիրտը: Դենիսովը՝ ետ թեքված մի ինչ-որ բան գոռալով՝ անցավ նրա կողքով: Ռոստովն, իր շորջը վազող հուսարներից բացի էլ բան չէր տեսնում:

— Պատգարա՛կ, — կանչեց մի ձայն ետևից:

Ռոստովը շտապեց, թե ինչ է նշանակում պատգարակ պահանջելը. նա վազում էր, աշխատելով բոլորից առաջ անցնել:

բայց հենց կամրջի մոտ, ոտի տակ չնայելով, սայթաքեց լուրջորժուն ցեխի վրա ու երեսն ի վայր ընկավ գետին: Մյուսները նրանից առաջ անցան:

— Երկու կողմի վրա էլ, ոտամիստը, — լսվեց գնդի հրամանատարի ձայնը, որ առաջ անցնելով՝ հանդիսավոր և ուրախ դեմքով ձիով կանգնել էր կամրջի մոտ:

Ռոստովը, ցեխոտած ձեռները վարտիքին քսելով, նայեց իր թշնամուն և ուզեց առաջ վազել, կարծելով թե որքան առաջ անցնի, այնքան լավ կլինի: Բայց Բոգդանիչը, թեև չնայեց ու չճանաչեց Ռոստովին, պոռաց նրա վրա.

— Այդ ո՞վ է կամրջի մեջտեղով վազում: Դեպի ա՛ջ: Յունկեր, ե՛տ դարձիր, — բարկացած բղավեց նա և դարձավ Դենիսովին, որ իր քաշությունը ցույց տալու համար, ձին քշեց կամուրջի տախտակների վրա:

— Ռիսկելու տեղը չէ, ոտամիստը: Լավ կանեք իջնեք, — ասավ գնդապետը:

— է, գնդակը մեղավորին կգտնի, — պատասխանեց Վասկա Դենիսովը, թամբի վրա շուտ գալով:

Մինչդեռ նեակիցկին, Ժերկովը և շքախմբի սպան, կրակոցների շրջանից դուրս, միասին կանգնած՝ նայում էին մերթ հուսարների այդ փոքր խմբին. որ իրենց դեղին բարձրադիր գլխարկներով, մութ-կանաչ բաճկոններով և կապույտ վարտիքներով խոնվել էին կամուրջի մոտ, մերթ նայում էին այն կողմը՝ հեռվից մոտեցող կապույտ կապոտներին և ձիավորների խմբերին, որոնց հեշտությամբ կարելի էր ընդունել թընդանոթների տեղ:

«Կամուրջը կարո՞ղ են վառել թե ոչ: Ո՞վ կարող է կանխել: Մերոնք կարո՞ղ են հասնել ու կամուրջը վառել, թե՞ ֆրանսացիք առաջ կգան ու կարտեղով կկոտորեն մերոնց»: Ակամա, սրտողով այս հարցերն էին տալիս իրենց կամուրջից վեր գտնվող բազմաթիվ զինվորներից յուրաքանչյուրն ու երեկոյի պայծառ լույսով նայում էին կամուրջին, հուսարներին և այն կողմը՝ սվիններով ու թնդանոթներով առաջացող կապույտ կապոտներ հագած թշնամուն:

— Վա՛յ: Հուսարների բանը վա՛տ է լինելու, — ասավ

Նեսվիցկին, — հիմա արդեն հրանոթի կկապեն՝ կարտե, կրթափեն:

— Նա իզուր այդքան շատ մարդ տարավ, — ասավ շքախմբի սպան:

— Իսկապես, — ասավ Նեսվիցկին: — Երկու քաջ տղա ուղարկեք, միևնույն է, գործը գլուխ կբերեին:

— Օհ, ձերդ պայծառափայլութուն, — միջամտեց ժերկովը, աչքը չհեռացնելով հուսարներից, բայց դարձյալ իրեն հատուկ միամիտ ձևով, որից դժվար էր հասկանալ լո՞ւրջ է ասում թե հանաք է անում: — Օհ, ձերդ պայծառափայլութուն, ի՞նչ եք ասում. եթե երկու հոգի ուղարկեք, հապա մեզ ո՞վ Վլադիմիրի շքանշան կտար: Իսկ այսպես, թեև կթակեն, բայց կարելի է մի վաշտ ներկայացնել և ժապավենն ստանալ: Մեր Բոգդանիչը կարգն իմանում է:

— Էհե՛, — ասավ շքախմբի սպան, — սա արդեն կարտե է: Նա ցույց տվեց ֆրանսական հրանոթները, որոնք քարշակները թողելով՝ հեռացան:

Ֆրանսական դիրքերում, այնտեղ, ուր հրանոթներն էին, գրեթե միաժամանակ, երեք ծուխ երևաց, և այն բոպեին, երբ լավեց առաջին կրակոցի ձայնը, երևաց շորորդ ծուխը: Երկու կրակոց իրար ետևից, ապա երրորդը:

— Օօ՛ֆ, — տեսքաց Նեսվիցկին, կարծես այրող մի ցավից, բռնելով շքախմբի սպայի ձեռքը: — Նայեցեք, մեկն ընկավ, ընկավ, ընկավ:

— Երկու՛ւր, կարծես:

— Եթե թագավոր լինեի, երբեք չէի պատերազմի, — ասավ Նեսվիցկին՝ երեսը շուտ տալով:

Ֆրանսացիք հապճեպ հրանոթները լցրին նորից: Կապտազգեստ հետևակները վազելով շարժվեցին դեպի կամուրջը: Նորից իրարից տարբեր ժամանակ, ծխեր երևացին, և կարտեը տրաք-տրաքեց ու շեպեց կամուրջին: Բայց այս անգամ Նեսվիցկին չկարողացավ տեսնել, թե ինչ է կատարվում կամուրջի վրա: Կամուրջից թանձր ծուխ բարձրացավ: Հուսարները հաջողել էին կամուրջը վառել, և ֆրանսական մարտկոցները նրանց վրա կրակում էին արդեն ոչ թե նրա համար, որ խանգարեն, այլ նրա համար, որ հրանոթները արդեն ուղղված էին թշնամու վրա և կարելի էր կրակել:

Ֆրանսացիք կարողացան երեք անգամ կարտեչ արձակել, նախքան հուսարները վերադարձան ձիապանների մոտ: Երկու համազարկը վրիպեցին, և կարտեչն անցավ-գնաց, բայց վերջին զարկը դիպավ հուսարների խմբի մեջտեղը և երեքին գետին տապալեց:

Ռոստովը, մտահոգված իր ու Բոգդանիչի փոխհարաբերությամբ, կանգնել էր կամուրջի վրա՝ շիմանալով ինչ անել: Մարդ չկար, որ կոտորի (ինչպես նա էր պատկերացնում կրոփը). կամուրջն այրողներին օգնել նույնպես չէր կարող, որովհետև, մյուս զինվորների նման, հետը ոլորած ծղնոտ չէր վերցրել: Նա կանգնել-նայում էր, երբ հանկարծ, թափվող ընկյուղների նման, տրաք-տրաքոց լավեց կամուրջի վրա, և հուսարներից մեկը, որ ավելի մոտ էր կանգնած նրան, հառաչանքով բնկավ կամուրջի ճաղի վրա: Ռոստովը՝ ուրիշների հետ միասին, նրա մոտ վազեց: Նորից մեկը ձայն տվեց. «Պատգարա՛կ»: Չորս հոգի բռնեցին ընկած հուսարին և սկսեցին բարձրացնել:

— Օօ՛օ, թողեք, ի սեր Քրիստոսի, — պոռաց վիրավորը. բայց և այնպես նրան բարձրացրին ու պատգարակի վրա դրին:

Նիկոլա, Ռոստովը երեսը շրջեց ու, կարծես ինչ-որ բան որոնելով, սկսեց նայել դեպի հեռուն, Դանուբի ջրերին, երկընթին ու արևին: Ի՞նչպես գեղեցիկ էր թվում երկինքը, որքա՛ն կապույտ, անդորր ու խորունկ: Որքա՛ն պայծառ ու վեհ էր մայր մտնող արևը: Ի՞նչ դուրեկան փայլով էին շողշողում հեռու Դանուբի ջրերը: Էլ ավելի լավ ու գրավիչ էին հեռավոր, Դանուբի այն կողմը կապույտին տվող լեռները, վանքը, խորհրդավոր կիրճերը, մինչև կատարները մշուշով լցված շամի անտառները... այնտեղ խաղաղ է ու երջանիկ... Ձիչինչ, ոչինչ չէի ցանկանա, ոչինչ չէի ուզի, միայն թե այնտեղ լինեի, — մտածում էր Ռոստովը: — Մենակ իմ և այս արևի մեջ այնքա՛ն երջանկություն կա, իսկ այստեղ... հառաչանք, տանջանք ու սարսափ, և այս անորոշությունը, այս շտապողապանությունը... Ահա նորից գոռում են ինչ-որ և բոլորը կրկին ետ են վազում, ու ես նրանց հետ. ահա և նա, ահա և նա — մահը, սավառնում է իմ գլխի վերև ու իմ շուրջը: Մի ականթարթ — և ես այլևս երբեք չեմ տեսնի այս արևը, այս ջրերը, այս կիրճը»:

Այդ րոպեին արևը ծածկվեց ամպերով: Ռոստովի առջև երևացին ուրիշ պատգարակներ: Եվ մահվան ու պատգարակների երկյուղը և թե արևի ու կյանքի սերը՝ բոլորը ձուլվեցին մի հիվանդագին-տագնապալի տպավորության մեջ:

«Տե՛ր աստված: Նա, ով այս երկնքումն է, փրկիր, ներիր և պաշտպանիր ինձ», շնչաց Ռոստովն ինքն իրեն:

Հուսարները հասան ձիապաններին, ձայները հնչեցին ավելի բարձր ու հանգիստ, պատգարակներն աներևույթացան:

— Հը, ախպեղ՛ս, վաղ՛ոդի հոտն աղ՛ար, — հնչեց նրա ականջին վասկա Դենիսովի ձայնը:

«Ամեն ինչ վերջացավ. բայց ես վախկոտ եմ, այո, վախկոտ եմ», մտածեց Ռոստովը և, մի ծանր հոգոց քաշելով, ձիապահի ձեռքից առավ իր Գրաչիկի սանձն ու սկսեց հեծնել:

— Ի՛նչ էր այդ, կարտե՛չ, — հարցրեց նա Դենիսովին:

— Այո, այն էլ ինչպիսի՛, — բացականչեց Դենիսովը: — Քաջի պես գործ տեսաք: Բայց զզվելի գողծ է: Հաղ՛ձակումը — հիանալի բան է, կոտող՛իբ աչ ու ձախ, իսկ այստեղ, զղ՛ողը տանի, այնպես են խփում կարծես նշան են առնում:

Եվ Դենիսովը գնաց-միացավ Ռոստովից քիչ հեռու կանգնած գնդի հրամանատարին, նստվիցկուն, ժերկովին և շքամբի սպային:

«Բայց, կարծեմ, ոչ ոք չնկատեց», մտածեց Ռոստովն ինքն իրեն: Եվ իրոք, ոչ ոք ոչինչ չէր նկատել, որովհետև յուրաքանչյուրին ծանոթ էր այն, ինչ առաջին անգամ զգաց վառողի հոտ շառած յունկերը:

— Այ հիմա որ կզեկուցվի, — ասավ ժերկովը, — հանկարծ տեսար ինձ էլ փոխ-տեղակալի աստիճան տվին:

— Հայտնեցեք իշխանին, որ ես կամուրջը վառեցի, — ասավ գնդապետը հանդիսավոր ու զվարթ:

— Իսկ եթե հարցնի ի՛նչ կորուստ եք ունեցել:

— Աննշա՛ն բան, — պատասխանեց գնդապետը բամբ ձայնով, — վիրավորված են երկու հուսար, և մեկը սպանված է տեղն ու տեղը, — ասավ նա նկատելի ուրախությամբ, չկարողանալով զսպել իր երջանիկ ժպիտը, շեշտելով առանձնապես «տեղն ու տեղը» բառը:

Բոնապարտի հրամանատարության տակ գտնվող Ֆրանսական հարյուր հազարանոց բանակից հետապնդվելով, թըշնամարար տրամադրված բնակիչների վերաբերմունքին հանդիպելով, չվստահելով այլևս իր դաշնակիցներին, պարենի պակասության զգալով և հարկադրված լինելով կովել պատերազմական շնախատեսված պայմաններում, — ուսական երեսունհինգ հազարանոց բանակը՝ Կուտուզովի առաջնորդությամբ, հապճեպ նահանջում էր Դանուբն ի վար, կանգ առնելով այն տեղերում, ուր թշնամին հասնում էր ետևից, և վերջապահ մասերի կովով պաշտպանվում էր այնքան, որքան դա հարկավոր էր՝ նահանջել — առանց զենք ու մթերք կորցնելու: Հնդհարումներ եղան կամբախի, Ամշտետենի և Մելկի մոտ. բայց շնայած ուսանների քաջության ու անվեհերության, մի բան, որ թշնամին անգամ խոստովանում էր, այնուամենայնիվ այդ ընդհարումների հետևանքը լինում էր ուսանների ավելի ևս արագ նահանջը: Ավստրիական զորքերը, որ Ուլմի մոտ հազիվ ազատվել էին գերի ընկնելուց և Բրաունաուի մոտ միացել էին Կուտուզովին, այժմ բաժանվեցին նրանից, և Կուտուզովին մնաց միայն իր թույլ, հյուծված զորքը: Այլևս վեննան պաշտպանելու մասին մտածելն իսկ ավելորդ էր: Ռազմագիտական օրենքների համաձայն խորապես մտածված հարձակողական պատերազմի փոխարեն (որի ծրագիրը ավստրիական հոֆկրիգստառը հանձնել էր Կուտուզովին՝ վեննայում եղած ժամանակ), այժմ Կուտուզովի միակ, գրեթե անհասանելի նպատակն այն էր, որ առանց բանակը կորցնելու (ինչպես Մակն արավ Ուլմի մոտ), միանա Ռուսաստանից եկող զորքերին:

Հոկտեմբերի 28-ին Կուտուզովը բանակի հետ միասին անցավ Դանուբի ձախ ափը, և առաջին անգամ կանգ առավ, Դանուբը դարձնելով անջրպետ իր և Ֆրանսական զխավոր ուժերի միջև: 30-ին նա հարձակվեց ձախ ափին գտնվող Մորտյեի դիվիզիայի վրա ու ջարդեց: Այդ կովում ուսաններն առաջին անգամ վերցրին հաղթանիշներ (տրոֆեյ) — դրոշակներ, թընդանոթներ ու գերի առան նաև երկու զենքեր: Երկու շաբաթ տևող նահանջից հետո ուսաններն առաջին անգամ կանգ առան և

կովից հետո պատերազմի դաշտը ոչ միայն իրենց ձեռքում պահեցին. այլև ֆրանսացիներին քշեցին: Չնայած զորքը մերկ էր, հյուժված, չնայած մի երրորդ մասը սպանվել, վիրավորվել ու հիվանդացել էր. չնայած Դանուբի մյուս ափին մնացել էին հիվանդներ ու վիրավորներ, որոնց Կուտուզովն իր նամակով հանձնել էր թշնամու մարդասիրության. չնայած Կրեմսի հիվանդանոցներն ու տները լիքն էին և բոլոր հիվանդներին ու վիրավորներին տեղ չկար, — չնայած այս բոլորին, Կրեմսի մոտ կանգ առնելը և Մորտյեի վրա տարած հաղթանակը զգալի շափով բարձրացրին զորքի ոգին: Ամբողջ բանակում և գլխավոր շտաբում ուրախ, թեև ոչ ճիշտ, լուրեր էին շրջում, իբր թե Ռուսաստանից զորքեր են գալիս, իբր թե ավստրիացիք հաղթանակ են տարել և Բոնապարտը վախեցած նահանջում է:

Իշխան Անդրեյը ճակատամարտի ժամանակ գտնվում էր այդ կովում սպանված ավստրիացի զեներալ Շմիտի մոտ: Նրա տակի ձին վիրավորվել էր, իսկ ձեռը թեթև քերծվել էր գնդակից: Ի նշան գլխավոր հրամանատարի առանձին ուղորմածության՝ նա այս հաղթանակի տեղեկագրով ուղարկվեց ավստրիական արքունիքը, որ այժմ գտնվում էր ոչ թե Վիեննայում, որին սպանում էին ֆրանսական զորքերը, այլ Բրյուննում: Ծակատամարտի գիշերը նա հուզված, բայց ոչ հոգնած (չընայած իր տկար կազմվածքին՝ իշխան Անդրեյը ամենաուժեղ մարդուց ավելի լավ դիմացավ ֆիզիկական հոգնածության) ձիով եկավ Կրեմս՝ Կուտուզովի մոտ՝ Դոխտուրովի զեկուցագիրը նրան հանձնելու և նույն գիշերն իսկ իշխան Անդրեյը, իբրև սուրհանդակ, ուղարկվեց Բրյունն: Սուրհանդակ ուղարկվելը, պարզատրությունից բացի, նշանակում էր մի կարևոր քայլ պաշտոնի բարձրացման ուղղությամբ:

Մուլթ, աստղալից գիշեր էր. ճանապարհը սևին էր տալիս ճերմակ ձյունների միջև, որ տեղացել էր կովի երկկոյան: Մերթ անցած ճակատամարտի տպավորությունները վերհիշելով, մերթ ուրախորեն պատկերացնելով այն տպավորությունը, որ նա թողնելու է հաղթանակի լուրը հաղորդելով, և՛ հիշելով թե ինչպես ճանապարհ դրին իրեն գլխավոր հրամանատարն ու ընկերները, — իշխան Անդրեյը արշավում էր պոստային սայլակ նստած. նա երկար ժամանակ երջանկության

սպասող և, վերցապես, ալդ ցանկալի երջանկության դուրը հասած մարդու զգացումն ուներ: Աչքերը փակում էր թե չէ՝ ականջներում հնչում էր հրացանների ու հրանոթների որոտը, որ խառնվում էր անիվների ձայնին ու հաղթանակի տպավորության: Մերթ նրան սպակերանում էր, թե ուսները փախչում են, թե ինքն սպանված է. բայց սթափվում էր իսկույն՝ երջանիկ զգացումով, կարծես նոր էր միայն իմանում, որ այդպիսի բան չկա, որ, ընդհակառակը, փախչողը ֆրանսացիք էին: Նորից հիշում էր հաղթության մանրամասնությունները, իր սառնասիրտ արիությունը ճակատամարտի ժամանակ և, հանգստանալով, ննջում... Մուլթ աստղալից գիշերից հետո՝ բացվեց մի պայծառ, ուրախ առավոտ: Ձյունը հալվում էր արևի տակ, ձիերը սլանում էին արագ, և աչից ու ձախից իրար հաջորդում էին նորանոր բազմատեսակ անտառներ, դաշտեր ու գյուղեր:

Մի կայարանում նա հանդիպեց ուս վիրավորներ տանող սայլերի: Տրանսպորտի ղեկավար ուս սպան, առաջին սայլին փոված-նստած՝ թղավում էր ինչ-որ ու կոպիտ խոսքերով հայհոյում մի զինվորի: Գերմանական յուրաքանչյուր երկարուկ ֆորշպանի (սայլ) վրա, քարքարոտ ճանապարհին, ծուլ-ծուլ էին լինում վեց կամ ավելի գունատ, վիրակապված ու կեղտոտ հիվանդներ: Նրանցից ոմանք խոսում էին (իշխան Անդրեյը լսեց ուսերեն խոսակցություն), մյուսները հաց էին ուտում, իսկ ամենածանր վիրավորներն անխոս, հեզ ու հիվանդափին մանկական հետաքրքրությամբ, նայում էին իրենց մոտով սլացող սուրհանդակին:

Իշխան Անդրեյը հրամայեց կանգնել ու մի զինվորի հարցրեց, թե ո՞ր կովում են վիրավորվել: Շերեկ չէ, առաջի օրը՝ Դանուբի ափին», պատասխանեց զինվորը: Իշխան Անդրեյը քսակը հանեց և երեք ոսկի տվավ զինվորին:

— Բոլորի համար, — ավելացրեց նա, դառնալով իրեն մոտեցող սպային: — Առողջացեք, տղերք, — դարձավ նա զինվորին, — դեռ շատ կոխներ ունենք:

— Ի՞նչ նորություններ կան, պարոն աղյուտանտ, — հարցրեց սպան, ըստ երևույթին խոսակցություն սկսելու ցանկությունով:

— Լա՛վ նորութիւններ: Քշի՛ր, — ձայն տվեց նա կառապանին և սլացավ առաջ:

Յոլորովին մուծն էր արդեն, երբ իշխան Անդրեյը Բրյունն մտավ և իրեն շրջապատված տեսավ բարձր տներով, խանութներով, լուսամտաների ու լապտերների առատ լույսով, սալահատակը աղմկող շքեղ կառքերով, մի խոսքով՝ մեծ եռուն քաղաքի այն մթնոլորտով, որը միշտ այնպես գրավիչ է լինում զինվորականի համար՝ բանակային կյանքից հետո: Իշխան Անդրեյը, շնայած հապճեպ արշավին և անքուն անցրած գիշերին, պալատին մոտենալով, իրեն ավելի աշխույժ էր զգում, քան նախընթաց օրը: Միայն աչքերն էին պսպղում տենչային փայլով, և մտքերը հաջորդում էին զարմանալի աշագուծյամբ ու պայծառությամբ: Նորից կենդանի պատկերացան նրան ճակատամարտի մանրամասնութիւնները, արդեն ոչ թե աղոտ կերպով, այլ որոշակի, հակիրճ ձևով, որը նա երևակայությամբ հայտնում էր Ֆրանց կայսեր: Կենդանի պատկերացում էր այն անակնկալ հարցումները, որ կարող էին անել իրեն, և այն պատասխանները, որ ինքը տալու էր նրանց: Ենթադրում էր, թե իրեն անմիջապէս կներկայացնեն կայսեր: Բայց պալատի մեծ շքամուտքի առաջ նրան մոտեցավ մի պաշտոնյա և, իմանալով նրա սուրհանդակ լինելը, առաջնորդեց նրան դեպի մյուս շքամուտքը:

— Միջանցքից դեպի աջ. այնտեղ, Euer Hochgeboren¹, կպատահեք հերթապահ Ֆլիզել-ադյուտանտին, — ասավ պաշտոնյան, — նա ձեզ կտանի ռազմական մինիստրի մոտ:

Հերթապահ Ֆլիզել-ադյուտանտը, իշխան Անդրեյին դիմավորելով, խնդրեց մի փոքր սպասել և ինքը գնաց ռազմական մինիստրի մոտ: Հինգ ռուպից հետո Ֆլիզել-ադյուտանտը վերադարձավ և, առանձին քաղաքավարությամբ խոնարհվելով, իշխան Անդրեյին ճանապարհ տվեց առաջ անցնելու, և ինքը ետևից՝ միջանցքով տարավ նրան այն առանձնասենյակը, ուր պարապում էր ռազմական մինիստրը: Ֆլիզել-ադյուտանտը իր կիրթ քաղաքավարությամբ, թվում էր, աշխատում է խուսափել ոռու ադյուտանտի մտերմական վերաբերմունքից: Իշխան Անդրեյի զվարթ տրամադրութիւնը

զգալի շափով թուլացավ, երբ մոտեցավ ռազմական մինիստրի առանձնասենյակի դռանը: Նա իրեն վիրավորված զգաց, և վիրավորանքի այդ զգացումը վայրկենապէս, իր համար էլ աննկատելի, փոխվեց արհամարհանքի, որը սակայն ոչ մի հիմք չունեի: Բայց նրա ճկուն միտքը թելադրեց նրան այն տեսակետը, որով նա իրավունք ուներ արհամարհելու թե՛ ադյուտանտին՝ թե՛ ռազմական մինիստրին: «Նրանց, երեի, շատ հեշտ է թվում հաղթանակ տանելը, առանց վառողի հոտն առնելու», — մտածեց նա. նրա աչքերը արհամարհանքով կրկնցվեցին. ու մի առանձին դանդաղությամբ նա մտավ մինիստրի առանձնասենյակը: Այդ զգացումը նրա մեջ ավելի ուժեղացավ, երբ տեսավ իրեն՝ ռազմական մինիստրին, որ նստել էր մեծ սեղանի առաջ և առաջին երկու ռուպիին ուշադրութիւն չզարձրեց նրա վրա: Ռազմական մինիստրը իր ճաղատ, քունքերը ճերմակ մազերով ծածկված գլուխը երկու մոմի արանքում կուցրած կարողում էր և մատիտով թղթի վրա նշաններ անում: Նա, առանց գլուխը բարձրացնելու, շարունակեց կարդալ նաև այն ժամանակ, երբ դուռը բացվեց և քայլերի ձայն լսեց:

— Առեք այս և հանձնեցեք, — ասավ ռազմական մինիստրը, իր ադյուտանտին տալով թղթերը և դեռ ուշադրութիւն չզարձնելով սուրհանդակի վրա:

Իշխան Անդրեյն զգաց, որ կա՛մ ռազմական մինիստրին զբաղեցնող բոլոր գործերից ամենաքիչ հետաքրքրականը կուտուզովի բանակի գործողութիւններն են, կա՛մ թե ուզում է այդ զգացնել տալ իրեն՝ ոռու սուրհանդակին: «Բայց ինձ համար դա բոլորովին միևնույն է», մտածեց նա: Ռազմական մինիստրը մնացյալ թղթերը հավասարեցրեց իրար և գլուխը բարձրացրեց: Նա խելացի և յուրահատուկ արտահայտութիւն ուներ: Բայց այն վայրկյանին, երբ դիմեց իշխան Անդրեյին, նրա դեմքի այդ խելացի հաստատակամ արտահայտութիւնը, հավանորեն, ըստ սովորության և գիտակցաբար փոխվեց. ու երեսին մնաց՝ մի հիմար, շինծու, և այդ շինծուութիւնը շքողարկող ժպիտ, որ հատուկ է իրար ետևից խնդարկունքը և զնդանող մարդկանց:

— Գնե՛նրաւ-Ֆելդմարշալ կուտուզովի կողմի՛ց եք ուղարկված, — հարցրեց նա: — Հույս ունեմ, լավ լուրե՛ր եք բերել:

¹ Ձերդ գերազնվութիւն:

Մորտյեի հետ ընդհարում ունեցա՞ք: Հաղթութիւն: Ժամանակն է:

Նա վերցրեց իր հասցեին ուղղած գրութիւնը և մի տխուր արտահայտութեամբ սկսեց կարդալ:

— Այս, աստված իմ, աստված իմ: Շմիտ, — ասավ նա գերմաներէն: — Ի՞նչ դժբախտութիւն, ի՞նչ դժբախտութիւն: Գրութիւնը կարդալով՝ դրեց այն սեղանի վրա ու նայեց իշխան Անդրեյին, հավանորեն, ինչ-որ բանի վրա մտածելով:

— Օ՛հ, ինչ դժբախտութիւն: Հաղթանակը վճռակա՞ն է, ասում եք: Սակայն, Մորտյեն գերի չի ընկել: (Նա մտածեց): Շատ ուրախ եմ, որ լավ լուրեր բերիք, թեև Շմիտի մահը մի թանկագին կորուստ է այդ հաղթանակի դիմաց: Նորին մեծութիւնը, հավանորեն, կցանկանա ձեզ տեսնել, բայց ոչ հիմա: Շնորհակալ եմ, գնացեք հանդատեցեք: Վաղը, զորահանդեսից հետո, եկեք ընդունելութեան: Ասենք, ես ձեզ իմաց կտամ: Խոսակցութեան ընթացքում աներևութացած հիմար ժրպիտը նորից երևաց ուղղակի մինիստրի դեմքին:

— Յոստութիւն, շատ շնորհակալ եմ ձեզնից: Թագավոր կայսրը հավանորեն կցանկանա ձեզ տեսնել, — կրկնեց նա և գլուխը խոնարհեց:

Երբ իշխան Անդրեյը պալատից դուրս եկավ, զգաց, որ հաղթութեան պատճառով հետաքրքրութիւնն ու երջանկութիւնը իրեն թողին ու անցան ուղղակի մինիստրի և նրա չաղաքավարի աղյուտանտի անտարբեր ձեռքը: Նրա մտքերը վայրկենապես փոխվեցին. ճակատամարտը նրան պատկերացւո՞ւ վաղուց անցած-գնացած, հեռավոր մի հիշողութիւն:

X

Իշխան Անդրեյը Բրյուննում իջանեց իր ծանոթ, ոռու դիվանագետ Բիլիբինի տանը:

— Ա՛, սիրելի իշխան, ավելի հաճելի հյուր չէի կարող սպասել, — ասավ Բիլիբինը, իշխան Անդրեյին դիմավորելով: — Ֆրանց, իշխանի իրերը տար իմ ննջարանը, — դարձավ նա Բակոնսկուն ուղեկցող սպասավորին: — Հը, հաղթութեան համբավաբե՞ր: Հիանալի է: Իսկ ես, ինչպես տեսնում ես, հիվանդ նստած եմ տանը:

Իշխան Անդրեյը, լվացվելով ու շորերը փոխելով, մտավ դիվանագետի շքեղ առանձնասենյակը և ճաշի նստեց: Բիլիբինը հանդարտ նստեց բուխարու մոտ:

Իշխան Անդրեյը ոչ միայն իր ճանապարհորդութիւնից, այլև ամբողջ արշավանքից հետո, որի ընթացքում զրկված էր կյանքի բոլոր հարմարութիւններից ու վայելքներից, հանգրտի հաճույք էր զգում այդ փարթամութեան մեջ, որին սովոր էր մանկութիւնից: Բացի գրանից, նրա համար հաճելի էր, ավստրիացիների ընդունելութիւնից հետո, խոսել թեև ոչ ոռուներին (նրանք խոսում էին ֆրանսերէն), գոնե ոռու մարդու հետ, որը, իր ենթադրութեամբ, նույնպիսի զգովանք էր զգում դեպի ավստրիացիները, ինչպես և բոլոր ոռուները:

Բիլիբինը երեսունհինգ տարեկան ամուրի էր և իշխան Անդրեյի դասին պատկանող մարդ: Նրանք դեռ Պետերբուրգից ծանոթ էին, բայց ավելի մտերմացան, երբ իշխան Անդրեյը կուտուղովի հետ եկավ Վեննա: Ինչպես որ իշխան Անդրեյը զինվորական ասպարեզում հեռուն գնալու հույսեր տվող երիտասարդ էր, այնպես էլ, և դեռ ավելին, խոստանում էր Բիլիբինը դիվանագիտական ասպարեզում: Նա դեռ երիտասարդ էր, բայց արդեն երկար տարիների դիվանագետ, որովհետև ծառայել սկսել էր տասնվեց տարեկան հասակից, եղել էր Փարիզում, կոպենհագենում և այժմ Վեննայում գրավում էր բավականին աչքի ընկնող դիրք: Թե կանցլերը (ավստրիական վարչապետը), թե Վեննայի մեր դեսպանը գիտեին և գնահատում էին նրան: Նա ա՛յն բազմաթիւ դիվանագետներից չէր, որոնք պարտավոր են ունենալ միայն բացասական արժանիքներ, պարտավոր են անել որոշ բաներ և ֆրանսերէն խոսել նրա համար, որպեսզի շատ լավ դիվանագետ համարվեն. նա այն դիվանագետներից մեկն էր, որոնք սիրում են և կարողանում են աշխատել, ու, շնայած իր ծուլութեան, նա երբեմն գիշերներ էր լուսացնում գրասեղանի առաջ: Ինչ աշխատանք էլ լիներ՝ կատարում էր միատեսակ լավ: Նրան հետաքրքրում էր ոչ թե «ինչո՞ւ» հարցը, այլ «ինչպե՞ս»: Ինչ էլ լիներ դիվանագիտական գործի էութիւնը, նրա համար միևնույն էր. հմտութեամբ, նրբութեամբ ու գեղեցկորեն կազմում էր շքուղարկականներ, մեծորանդամներ կամ գեղուցագրեր, — և այդ գործի մեջ զգում էր մեծ բավականութիւն: Բիլիբինին, գրա-

կան աշխատանքներից բացի, գնահատում էին նաև բարձր շրջաններում լավ վարվելու և խոսելու ճարտարության համար:

Բիլիբինը աշխատանքի պես սիրում էր զրույցը, միայն թե այդ զրույցը լիներ նուրբ, սրամիտ: Հասարակության մեջ միշտ առիթի էր սպասում, որ մի սրամիտ կամ նշանակալից բան ասի, և միայն այդ դեպքում էր խառնվում զրույցին: Նրա զրույցը միշտ համեմվում էր օրիգինալ-սրամիտ, ամբողջական և ընդհանուր շահեկանություն ունեցող դարձվածներով: Այդ դարձվածները Բիլիբինն իր ներքին լաբորատորիայում պատրաստում էր կարծես դիտմամբ, նրա համար, որպեսզի չնչին աշխարհիկ մարդիկ դյուրությամբ հիշեին և հյուրասրահից հյուրասրահ տանեին: Եվ իրոք, les mots de Bilibine se colportaient dans les salons de Vienne¹ և հաճախ ազդեցություն էին ունենում, այսպես անվանված, կարևոր խնդիրների վրա:

Նրա նիհար, հյուծված դնդնավուն դեմքը ամբողջապես ծածկված էր խոշոր կնճիռներով, որոնք թվում էին այնպես մաքուր ու խնամքով լվացված, ինչպես մատների ծայրերը բաղնիսից հետո: Այդ կնճիռների շարժումներն էին կազմում նրա դեմքի արտահայտությունն ու խաղը: Մերթ ձակատն էր կնճռոտում լայն ծալքերով ու հոնքերը բարձրանում էին վեր, մերթ հոնքերն իջնում էին ցած, և այտերի շուրջը գոյանում էին խոշոր կնճիռներ: Խոր ընկած փոքր աչքերը նայում էին միշտ ուրախ ու զվարթ:

— Է, այժմ պատմեցեք ձեր հերոսությունները, — ասավ նա:

Բալկոնսկին ամենահամեստ ձևով և ոչ մի անգամ իրեն չհիշելով՝ պատմեց ամբողջ ճակատամարտը և ուղղակի մինիստրի ցույց տված ընդունելությունը:

— Ils m'ont reçu avec ma nouvelle, comme un chien dans un jeu de quilles². — եզրակացրեց նա:

Բիլիբինը քմծիծաղ տվեց:

¹ Բիլիբինի կարծիքները տարածվում էին Վիեննայի հյուրասրահներում:

² Նրանք ինձ այդ տեղեկությունը ընդունեցին այնպես, ինչպես կեզլի խաղը խանգարող շանն են ընդունում:

— Cependant, mon cher, — ասավ նա, հեռվից իր եղունգին նայելով և դեմքի մաշկը ձախ աչքի վերը հավաքելով, — malgré la haute estime que je professe pour le ուղղափառ ուսական զորքը, j'avoue que votre victoire n'est pas des plus victorieuses¹.

Նա այդպես ֆրանսերեն շարունակեց, ուսերեն արտասանելով միայն այն բառերը, որոնք ուզում էր ընդգծել արհամարհանքով:

— Այդ ինչպե՞ս: Դուք ձեր ամբողջ ուժով հարձակվե՞լ եք միայն մի դիվիզիա ունեցող թշվառ Մորույցի վրա, և այդ Մորույցին փախու՛ւտ է տվել ձեր ձեռից: Սա՞ է ձեր հաղթությունը:

— Սակայն, լրոջորեն ասած, — պատասխանեց իշխան Անդրեյը, — այնուամենայնիվ առանց պարծենալու կարող եմք ասել, որ սա Ուլմից մի քիչ լավ է...

— Ինչո՞ւ գերի չվերցրիք մի, գեթ մի մարշալ:

— Ուրովհետև ամեն ինչ շի կատարվում այնպես, ինչպես ենթադրվում է, և ոչ էլ այնպես կանոնավոր ձևով, ինչպես գորահանդեսի ժամանակ: Մենք կարծում էինք, ինչպես ասի, առավոտվա ժամը յոթի մոտ անցնել թշնամու թիկունքը, բայց երկույան ժամը հինգին էլ չհասանք:

— Իսկ ինչո՞ւ առավոտյան ժամը յոթին չհասաք: Դուք պետք է առավոտյան ժամը յոթին այնտեղ լինեիք, — ժպտալով ասավ Բիլիբինը, — պետք է առավոտյան ժամը յոթին այնտեղ լինեիք:

— Ինչո՞ւ դուք դիվանագիտական ճանապարհով չներշնչեցիք Բոնապարտին, թե իր համար ավելի լավ է թողնի Ջենովան, — նույն տոնով ասավ իշխան Անդրեյը:

— Գիտեմ, — ընդհատեց Բիլիբինը, — դուք մտածում եք հիմա, թե մարշալ գերի վերցնելը՝ շատ հեշտ է բուխարու առաջ՝ բազմոցի վրա նստած: Իս միշտ է, բայց և այնպես, ինչո՞ւ մեկին գերի չվերցրիք: Եվ չգարմանաք, ո՛չ միայն ուղղակի մինիստրը, այլև օգոստափառ կայսրը և Ֆրանց թագավորը իրենց շատ էլ երջանիկ շեն զգա ձեր հաղթությունը:

¹ Սակայն, սիրելիս, իմ դեպի ուղղափառ ուսական զորքն ունեցած հարգանքովս հանգիստ, կարծում եմ, որ ձեր հաղթանակը փայլուններից չէ:

նույնիսկ ես, ուսական դեսպանութեան դժբախտ քարտուղարս, ոչ մի պահանջ չեմ զգում ի նշան ուրախութեան իմ Ֆրանցին մի տալեր տալ և բաց թողնել նրան՝ իր սիրունու հետ Պրատեր գնալու... ճիշտ է, այստեղ Պրատեր չկա:

Նա նայեց ուղիղ իշխան Անդրեյին և նրա ճակատի կնճիռները բացվեցին հանկարծ:

— Հիմա հերթն իմն է ձեզ հարցնելու «ինչու համար», սիրելիս, — ասավ Բալկոնսկին, — խոստովանում եմ, որ չեմ հասկանում, թերևս այստեղ դիվանագիտական նրբութուններ կան իմ թույլ ուղեղին անմատչելի. բայց չեմ հասկանում, թե այդ ինչպես Մակը կորցնում է իր ամբողջ բանակը, էրցհերցոգ Ֆերդինանդը և էրցհերցոգ Կարլը կենդանութեան ոչ մի նշան չեն ցույց տալիս և սխալներ են անում սխալների ետևից, վերջապես, Կուտուզովը մեծակ իսկական հաղթութուն է տանում, ոչնչացնում է ֆրանսացիների հմայքը, և ռազմական միջնորդը մինչև իսկ չի հետաքրքրվում մանրամասնութուններն իմանալու:

— Այդ իսկ պատճառով, սիրելիս: Voyez-vous, mon cher¹ ուուա՜ ցարի համար, Ռուսաստանի համար, հավատի համար. tout ça est bel et bon², բայց մեզ համար, ասում են, այսինքն ավստրիական արքունիքի համար՝ ի՞նչ նշանակութուն ունեն ձեր հաղթութունները: Բերեք մեզ լավ տեղեկութուններ էրցհերցոգ Կարլի կամ Ֆերդինանդի՝ (մեկը մյուսին արժի) Բոնապարտի՝ թեկուզ հրշեջ խմբի վրա տարած հաղթութեան մասին, այդ ուրիշ բան է, մենք թնդանոթներ կարձակենք: Թե չէ այդ՝ մեզ ծաղրել կարող է միայն: էրցհերցոգ Կարլը ոչինչ չի անում, էրցհերցոգ Ֆերդինանդը խայտառակվում է: Վեննան թողնում եք իր բախտին ու այլևս չեք պատշպանում, comme si vous nous disiez³. — աստված մեզ օգնական, և աստված ձեզ ու ձեր մայրաքաղաքի հետ: Մի գնեհրալ, որին բոլորս սիրում էինք, Շմիտն էր. դուք նրան տարաք գնդակների տարափի տակ սպանել տվիք և շնորհավորում եք մեզ հաղթությամբ: Համաձայնեցեք, որ ձեր բերած տեղեկութուններից ավելի ծաղրական բան չի կարող լինել: C'est

¹ Գիտեք, սիրելիս:

² Այդ բոլոր գեղեցիկ է և լավ է:

³ Ինչպես, եթե մեզ ասեիք

comme un fait exprès, comme un fait exprès¹. Բացի դրանից, ասե՛ք թե դուք իսկապես փայլուն հաղթութուն տարած լինեք, մինչև իսկ այդ հաղթութունը տարած լինեք էրցհերցոգ Կարլը, ի՞նչ փոփոխութուն պիտի առաջացնեք իրերի ընդհանուր ընթացքի մեջ: Հիմա արդեն ուշ է, երբ Վեննան ֆրանսացիք գրավել են:

— Ի՞նչպես թե գրավել են: Վեննան գրավե՞լ են:

— Ոչ միայն գրավված է, այլև Բոնապարտը Շենբրունումն է, իսկ մեր սիրելի կոմս Վրբան գնում է նրա մոտ հրամաններ ստանալու:

Բալկոնսկին հոգնածութունից, ճանապարհորդության և ընդունելության տապալորութունից և մանավանդ ճաշից հետո զգում էր, որ իր լսած խոսքերի բովանդակ նշանակութունը չի հասկանում:

— Այս առավոտ այստեղ էր կոմս Լիխտենֆելսը, — շարունակեց Բիլիբինը, — և ինձ ցույց տվեց մի նամակ, որի մեջ մանրամասն նկարագրված է ֆրանսացիների զորահանդեսը Վեննայում: Le prince Murat et tout le tremblement²... Տեսնո՞ւմ եք, որ ձեր հաղթութունը մեծ ուրախութուն չէր կարող պատճառել, և դուք չեք կարող ընդունվել որպես փրկիչ...

— Իսկապես, ինձ համար միևնույն է, բոլորովին միևնույն է, — ասավ իշխան Անդրեյը, կամաց-կամաց հասկանալով, որ Կրեմսի ճակատամարտի լուրն իրոք մեծ կարևորութուն չէր ներկայացնում այնպիսի դեպքերի հանդեպ, ինչպիսին Ավստրիայի մայրաքաղաքի գրավումն էր: — Ինչպե՞ս թե Վեննան գրավել են: Հապա կամո՞ւրջը և նշանավոր têtê de ponte-ը³ և իշխան Աուերսպե՞րգը: Մենք լսեցինք, որ իշխան Աուերսպերգը Վեննան պաշտպանում է, — ասավ նա:

— Իշխան Աուերսպերգը մեր կողմից է մեզ պաշտպանում. և կարծում եմ՝ շատ վատ է պաշտպանում, բայց և այնպես պաշտպանում է: Իսկ Վեննան այն կողմն է: Ոչ, կամուրջը

¹ Դա՛ կարծես դիտամբ, կարծես դիտամբ:

² Իշխան Մյուրատը և այդ աղմուկը:

³ Ամրութունը:

դեռ չի գրավւած և, հույս ունեմ, չի գրավվի, որովհետև ական-
ված է, և հրամայված է օղը հանել: Հակառակ դեպքում մենք
վաղուց Բոհեմիայի սարերում կլինեինք, և դուք ձեր բանակի
հետ միասին վատ ըոպեններ պիտի անցնեիք երկու կրակի
արանքում:

— Բայց և այնպես դա չի նշանակում, թե պատերազմը
վերջացած է, — ասավ իշխան Անդրեյը:

— Ես կարծում եմ՝ վերջացած է: Այդ կարծիքի է և այս-
տեղի բարձրագույն իշխանութիւնը, բայց ոչ ոք չի համար-
ձակվում այդ ասելու: Կլինի այն, ինչ ասել եմ ես պատերազմի
սկզբից, որ ձեր Ղյուրենշտեյնի ընդհարումը չի, առհասարակ
վառողը չի վճռելու խնդիրը, այլ այն հնարողները, — ասավ
Բիլիբինը, կրկնելով իր սիրած mots¹-ից մեկը, բանալով ճա-
կատի կնճիտները և կանգ առնելով: — Ամբողջ խնդիրն այն է,
թե ինչ հետևանք կունենա Ալեքսանդր կայսեր և պրուսական
թագավորի տեսակցութիւնը Բեռլինում: Եթե Պրուսիան մշտ-
նի դաշնակցութեան մեջ, on forcera la main à l'Autriche², և
պատերազմը կշարունակվի: Եթե ոչ, այն ժամանակ մեզ
կմնա միայն պայմանավորվել, թե որտեղ պիտի կազմել նոր
Campo Formio³-ի նախնական հոգիվածները:

— Բայց ի՞նչ շտեմնված հանճար է, — հանկարծ բացա-
կանչեց իշխան Անդրեյը, փոքրիկ ձեռք սեղմելով ու սեղանին
խփելով: — Ի՞նչ բախտ ունի այդ մարդը:

— Buonaparte? — հարցրեց Բիլիբինը, ճակատը կնճոե-
լով, ու դրանով զգացնել տալով, թե շուտով ասելու է իր
mots-ից մեկը: — Buonaparte? — ասավ նա, շեշտելով առանձ-
նապես ու-ն: — Ես կարծում եմ, սակայն, որ այժմ, երբ նա
Շենբրուննից օրենքներ է թելադրում Ավստրիային, il faut
lui faire grâce de l'u⁴. Ես մի նորամուծութիւն եմ կատարում,
և նրան անվանում են Bonaparte tout court⁵.

— Ոչ, առանց կատակի, — ասավ իշխան Անդրեյը, — մի՞թե
կարծում եք, թե պատերազմը վերջացավ:

¹ Բառերից:

² Այդ դեպքում կհարկադրեն Ավստրիային:

³ Կամպո Ֆորմիո:

⁴ Նրան պետք է ազատել ու-ից:

⁵ Բոլորովին կարճ — Բոնապարտ:

— Ա՛յ, ես ինչ եմ կարծում: Ավստրիան հիմար չբոլթան
մեջ ընձամբ, իսկ նա այդ բանին աւելոր չէ: Եվ նա պիտի տու էի:
Իսկ նա հիմար գրութեան մեջ ընկալ, որովհետև՝ նախ գավառ-
ները քայքայված են, բանակը ջարդված է, մայրաքաղաքը
գրավված, և այդ բոլորը նորին Մարդինայան մեծութեան գե-
ղեցիկ աշքերի համար: Եվ այդ պատճառով — entre nous,
mon cher¹, — հոտառութեամբ զգում եմ, որ մեզ խաբում են,
զգում եմ, որ Ֆրանսիայի հետ բանակցութիւններ են տարվում
և հաշտութեան ծրագիրներ կան, գաղտնի, առանձին կնքված:

— Այդ անկարելի է, — ասավ իշխան Անդրեյը, — դա շա-
փազանց զարշելի բան կլիներ:

— Qui vivra verra², — ասավ Բիլիբինը, կնճիտները նո-
րից բանալով, որ նշանակում էր թե խոսակցութիւնը վեր-
ջացած է:

Երբ իշխան Անդրեյը գնաց-մտավ իր համար պատշաստ-
ված սենյակը և մաքուր ճերմակեղենով պառկեց փետրյա ան-
կողնու՝ և զլուխը դրեց անուշահոտութեամբ օծված բարձերի
վրա, — զգաց, որ ճակատամարտը, որի լուրը բերեց, իրենից
հեռու, շատ հեռու էր: Նրան զբաղեցնում էին Պրուսիայի
դաշնակցութիւնը, Ավստրիայի գավաճանութիւնը, Բոնա-
պարտի նոր հաղթանակը, վաղվա զորահանդեսը և Ֆրանսիայի
կայսեր ընդունելութիւնը:

Նա աշքերը փակեց, բայց նույն վայրկյանին նրա ականջ-
ներում հնչեցին թնդանոթածղութիւն, համազարկեր, կառ-
քերի անիվների շրդղուն, և նորից ահա սարից իշնում են
հրացանակիրները իրար ետևից շար ընկած, ու ֆրանսացիք
կրակում են. և նա զգում է, թե ինչպես է բարախում սիրտը,
նա ձի նստած գնում է առջևից, Շմիտի հետ միասին, և գնդակ-
ներն ուրախ-զվարթ թաշում-սուլում են նրա շուրջը, և կյանքը
տասնապատիկ անգամ հաճելի է թվում նրան, մի բան, որ նա
չի զգացել մանկութիւնից ի վեր:

Նա արթնացավ...

«Այո, այս բոլորը եղա՞ն...», ասավ նա ինքն իրեն, մանկա-
կան-երջանիկ ժպիտով, ու քնեց մի խորունկ քնով:

¹ Մեր մեջ, սիրելիս:

² Կապուկեք — կտեսնենք:

Հետևյալ օրն ուշ զարթնեց: Նորոգելով երեկվա տպավորութիւնները՝ նա ամենից առաջ հիշեց, որ այսօր պետք է ներկայանալ Ֆրանց կայսեր. հիշեց ռազմական մինիստրին, քաղաքավարի ավստրիական ֆլիզել-ադյուտանտին, Բիլիբինին և իրիկվա զրույցը: Պալատ գնալու համար հազավ իր տոնական համազգեստը, որ վաղուց չէր հագել, և թարմացած, աշխույժ ու գեղեցիկ տեսքով, ձեռի վերքը կապած, մտավ Բիլիբինի առանձնասենյակը, ուր գտնվում էին դիվանագիտական կորպուսի շորս անդամները: Իշխան Իպպոլիտ Կուրագինը, որ դեսպանութան քարտուղարն էր, Բալկոնսկուն ծանոթ էր. մյուսներին ծանոթացրեց Բիլիբինը:

Բիլիբինի մոտ եղած բարձր շրջանին պատկանող ջահել, հարուստ և կենսուրախ մարդիկ թե՛ վեննայում, թե՛ այստեղ կազմում էին առանձին խումբ, որին Բիլիբինը, այդ խմբի պարագլուխը լինելով, անվանում էր մերոնֆ, les nôtres. Այդ խմբում, որը բաղկացած էր գրեթե բացառապես դիվանագետներից, ըստ երևույթին, ունեին իրենց, պատերազմի և քաղաքականութան հետ ընդհանուր ոչինչ շունեցող բարձր աշխարհիկ շահերը, և կապ՝ մի քանի կանանց հետ ու՝ պաշտոնավարութան դիվանական հանգամանքներ: Այս պարոնները, ըստ երևույթին, սիրով, ինչպես յուրայինի (մի պատիվ, որին շատ քչերին էին արժանացնում) իրենց խումբն ընդունեցին իշխան Անդրեյին: Քաղաքավարութան համար, և որպես խոսակցութան նախաբան, մի քանի հարցեր տվին նրան բանակի ու ճակատամարտի մասին, ու զրույցը նորից դարձավ անհետևողական, անցավ կատակների և սրա-նրա վարքը քննադատելուն:

— Բայց մանավանդ զվարճալին, — ասում էր մեկը, պատմելով դիվանագետ-ընկերոջ անհաջողութիւնը, — զվարճալին այն է մանավանդ, որ կանցլերն ուղղակի ասել է նրան, թե կոնդոն նշանակվելը պաշտոնի բարձրացում է, և թե այդպես էլ պիտի ընդունի այդ կարգադրութիւնը: Պատկերացնո՞ւմ եք նրա կերպարանքը այդ ըրպիսին...

Բայց ամենից վատթարն այն է, պարոնայք, որ ես ձեռ

ձեռն եմ մատնում Կուրագինին. մարդը դժբախտութեան մեջ է, և դրանից օգտվում է այս Դոն-ժուանը, այս սոսկալի մարդը: Իշխան Իպպոլիտը պառկած էր վոլտերյան բազկաթոռում, ոտները բազկատեղից դուրս պարզած: Նա ծիծաղեց:

— Parlez-moi de ça¹, — ասավ նա:

— Օ՛, Դոն-ժուան: Օ՛, օձ, — լսվեցին այս ու այն կողմից:

— Դուք չեք իմանում, Բալկոնսկի, — դարձավ Բիլիբինին իշխան Անդրեյին, — որ Ֆրանսական բանակի (քիչ մնաց ասեի — ռուսական բանակի) բոլոր արհավիրքները ոչինչ են համեմատած այն բոլորի հետ, ինչ արել է այս մարդը կանանց շրջանում:

— La femme est la compagne de l'homme², — արտասանեց իշխան Իպպոլիտը և լոռնետով նայեց իր պարզած ոտներին:

Բիլիբինն ու մերոնֆ քրքջացին, նայելով Իպպոլիտի աչքերին: Իշխան Անդրեյը տեսավ, որ այդ Իպպոլիտը, որին ինքը (պետք է խոստովանած) գրեթե խանդում էր դեպի իր կինը, ծաղրածու էր այս հասարակութան մեջ:

— Ոչ, ես ձեզ պետք է հյուրասիրեմ Կուրագինով, — կամացուկ ասավ Բիլիբինը Բալկոնսկուն: — Հիանալի՛ է, երբ դատողութիւններ է տալիս քաղաքականութան մասին, պետք է տեսնել այդ լրջութիւնը:

Նա նստեց Իպպոլիտի կողքին և, կնճիռները ճակատին հավաքելով, խոսակցութիւն սկսեց նրա հետ՝ քաղաքականութան մասին: Իշխան Անդրեյն ու մյուսները շրջապատեցին նրանց:

— Le cabinet de Berlin ne peut pas exprimer un sentiment d'alliance, — սկսեց Իպպոլիտը, նշանակալից նայելով բոլորին, — sans exprimer... comme dans sa dernière note... vous comprenez... vous comprenez... et puis si sa Majesté l'Empereur ne déroge pas au principe de notre alliance³...

¹ Ասեք ինձ այդ մասին:

² Կինը մարդու ընկերուհին է:

³ Բերլինի կաբինետը չի կարող արտահայտել իր կարծիքը դաշնակցության մասին, չարտահայտելով... ինչպես իր վերջին հուշագրում... հասկացե՛ք:

— Attendez, ja n'al pas fini... — ասամ նա իշխան Անդրե-
յին. նրա ձեռքը բռնելով: — Je suppose que l'intervention
sera plus forte que la non-intervention. Et... — նա լռեց: —
On ne pourra pas imputer à la fin de non-recevoir notre
dépêche du 28 novembre. Voilà comment tout cela finira¹.

Եվ նա թողեց Բալկոնսկու ձեռքը, դրանով ցույց տալով, թե
ինքն այժմ բոլորովին վերջացրեց:

— Demosthenes, je te reconnais au caillou que tu as
caché dans ta buche d'or!² — ասավ Բիլիբիենը, որի մազերը
բավականությունից շարժվեցին գլխին:

Բոլորը ծիծաղեցին: Իպպոլիտը քրքշայ քրլորից բարձր:
նա, ըստ երևույթին, տանջվում, շնչարգել էր լինում, բայց
չէր կարողանում քրքիչը զսպել, որը ձգում երկարացնում էր
նրա մշտապես անշարժ դեմքը:

— Ահա թե ինչ, պարոններ, — ասավ Բիլիբիենը, — Բալ-
կոնսկին այստեղ՝ Բրյուննում իմ հյուրն է և ես ուզում եմ,
որքան կարող եմ, հյուրասիրել նրան այստեղի կյանքի բոլոր
հաճույքներով: Եթե վեննայում լինեինք, հեշտ կլինեիր. բայց
այստեղ, dans ce vilain trou morave³, — ավելի դժվար է, և
ես բոլորիդ օգնությունն եմ խնդրում: Il faut lui faire les
honneurs de Brünn⁴. Դուք հանձն առեք հոգալ թատրոնի
մասին, ես — հասարակության, Իպպոլիտը, պարզ է, — կա-
նանց:

— Պետք է նրան ծանոթացնել Ամելիի հետ, — ասավ
մերօնցից մեկը, մատնների ծայրերը համբուրելով:

— Առհասարակ այս արյունարբու գինվորին, — ասավ
Բիլիբիենը, — պետք է ավելի մարդասիրական հայացքներ ներ-
շնչել:

նում եք... հասկանում եք... Բայց եթե նորին մեծություն կայսրը չփոխի մեր
գաղնակցության էությունը...

¹ Սպասեցեք, ես չեմ վերջացրել: Ես կարծում եմ, որ միջամտությունը
կլինի ավելի հաստատուն... քան չմիջամտելը: Եվ... մեր նոյեմբերի 28-ի հե-
ռագրի մեթոմով չի կարելի ամեն բան վերջացած համարել: Այս բոլորը
պետք է մի բանով վերջանա:

² Դեմոսթենես, ես քեզ ճանաչում եմ սակ բերանումը թաքցրած քարով:

³ Մորավական այս կեղտոտ փոստում:

⁴ Պետք է նրան հյուրասիրել Բրյուննով:

— Հազիվ թե ձեր հյուրասիրությունից կարողանամ օր-
տրվել, պարոններ, իսկ այժմ իմ գնալու ժամանակն է, — ժա-
մացույցին նայելով՝ ասավ Բալկոնսկին:

— Ո՛ւր:

— Կայսեր ներկայանալու:

— Օ՛, օ՛, օ՛:

— Է, ցտեսություն, Բալկոնսկի: — Յտեսություն, իշխան
Ճաշին շուտ եկեք, — ասին մի քանի ձայներ: — Մենք հանձն
ենք առնում հոգալ ձեր մասին:

— Երբ կայսեր հետ խոսեք, աշխատեցեք գովել պարենի
մատակարարման և մարշրուտների կանոնավորությունը, —
ասավ Բիլիբիենը, ուղեկցելով Բալկոնսկուն մինչև նախասեն-
յակը:

— Կուզեի գովել, բայց չեմ կարող, որքան գիտեմ, — ժրպ-
տալով պատասխանեց Բալկոնսկին:

— Դե, ընդհանրապես որքան կարելի է շատ խոսեք: Նա
ամեն բանից ավելի սիրում է — ունկնդրություններ. իսկ
ինքը խոսել չի սիրում և չի կարողանում, ինչպես ինքներդ էլ
կտեսներ:

XII

Հանդիսավոր ընդունելության ժամանակ Ֆրանց կայսրը
ուշադիր նայեց միայն իշխան Անդրեյի դեմքին, որ ավստրիա-
կան սպաների միջև կանգնած էր իրեն հատկացված տե՛ր,
ու բարեկեց նրան իր երկար գլխով: Բայց ընդունելությունից
հետո երեկվա Ֆիլգել-ադյուտանտը քաղաքավարությամբ
հայտնեց Բալկոնսկուն կայսեր ցանկությունը՝ նրան ունկն-
դրություն շնորհելու: Ֆրանց կայսրն ընդունեց նրան սենյակի
մեջտեղը կանգնած: Նախքան խոսակցությունն սկսելը՝ իշ-
խան Անդրեյին զարմացրեց այն, որ կայսրը կարծես շփոթվեց,
չիմանալով ինչ ասել, ու կարմրեց:

— Ասեք, ճակատամարտը ե՞րբ սկսվեց, — հարցրեց նա
հապճեպ:

Իշխան Անդրեյը պատասխանեց: Այդ հարցումին հաջորդե-
ցին ուրիշ նույնքան պարզ, հասարակ հարցումներ. առող՞ջը
է արդյոք Կուտուզովը. վաղո՞ւց է նա դուրս եկել Կրեմալցե՞

և այլն: Կայսրը խոսում էր այնպիսի արտահայտութեամբ, կարծես նրա ամբողջ նպատակն այն էր միայն, որ որոշ քանակ լեթամբ Ֆարցեր տա: Իսկ այդ հարցերի պատասխանը, ակնհարհ էր, որ նրան չէին կարող հետաքրքրել:

— Ժամը քանիսի՞ն սկսվեց ճակատամարտը, — հարցրեց կայսրը:

— Չեմ կարող ասել, ձերդ մեծութուն, թե որ ժամին սկսվեց գլխավոր ճակատի կռիվը, բայց Դյուրենշտեյնում, ուր գտնվում էի ես, զորքը հարձակում սկսեց երեկոյան ժամը վեցին, — ասավ Բալկոնսկին, ոգևորվելով և դրանից ենթադրելով, թե իրեն կհաջողվի իր տեսածի ու գիտցածի ճիշտ նըկարագրութունը ներկայացնել, ինչ որ գլխումը պատրաստ էր արդեն:

Բայց կայսրը ժպտաց և ընդհատեց նրան:

— Քանի մղո՞ն է:

— Որտեղի՞ց որտեղ, ձերդ մեծութուն:

— Դյուրենշտեյնից մինչև Կրեմս:

— Երեք ու կես մղոն, ձերդ մեծութուն:

— Տրանսացիք հեռացա՞ն ձախ փոխ:

— Լրտեսների տեղեկության համաձայն՝ գիշերը անցել

են լաստերով:

— Բավականաչափ կեր կա՞ արդյոք Կրեմսում:

— Կերն այն քանակով չէր բերվել, որ...

Կայսրն ընդհատեց նրան.

— Ժամը քանիսի՞ն սպանվեց գեներալ Շմիտը...

— Կարծեմ ժամը յոթին:

— Ժամը յոթին: Շա՞տ ցավալի է: Շա՞տ ցավալի է:

Կայսրն ասավ, թե ինքը շնորհակալ է, ու գլխով արավ: Իշխան Անդրեյը դուրս եկավ և անմիջապես շրջապատվեց պալատականներով: Ամեն կողմից նայում էին նրան սիրալիր աչքեր և լավում էին սիրալիր խոսքեր: Երեկվա Ֆլիգել-ադյուտանտը հանդիմանեց նրան, թե ինչու չէր իջևանել պալատում, ու առաջարկեց նրան իր տունը: Մոտեցավ ռազմական մինիստրը և շնորհավորեց կայսեր կողմից նրան շնորհված Մարիա-Թերեզայի Յ-րդ աստիճանի շքանշանը: Կայսրուհու սենեկապահը հրավրեց նրան նորին մեծութուն կայսրուհու մոտ: Էրցհերցոգուհին նույնպես փափագ էր հայտնում նրան տեսնելու:

Նա չգիտեր որին պատասխանի, ու մի քանի վայրկյան իր մտքերի ետևից էր ընկած: Ռուսական դեսպանը՝ նրա ուսից բռնելով, տարավ նրան դեպի լուսամուտը և սկսեց հետը խոսակցել:

Բիլիբինի ասածների հակառակ՝ նրա բերած լուրն ընդունվեց ուրախութեամբ: Կատարվեց գոհաբանական մաղթանք: Կուտուզովը պարգևատրվեց Մարիա-Թերեզայի մեծ խաչով, և ամբողջ բանակը նվեր ստացավ: Բալկոնսկին ամեն կողմից հրավերներ ստացավ և ամբողջ առավոտն ստիպված էր այցելութուններ տալ Ավստրիայի մեծամեծներին: Այցելութունները վերջացնելով երեկոյան ժամը հինգին և մտքում շարադրելով հորը գրելիք նամակը՝ ճակատամարտի և իր Բրյունն գալու մասին, — իշխան Անդրեյը վերադարձավ Բիլիբինի տունը: Բիլիբինի տան առաջ, կիսով չափ իրերով բռնավորված, կանգնած էր մի կառք, և Բիլիբինի ծառա Տրանցը, մի ծանր ճամպրուկ ձեռին, դուրս եկավ դռնից:

Նախքան Բիլիբինի մոտ գալը՝ իշխան Անդրեյը գնացել էր գրախանութ՝ հետը տանելու համար գրքեր գնելու, և այնտեղ մնացել էր երկար:

— Ի՞նչ կա, — հարցրեց Բալկոնսկին:

— Ach, Erlaucht! — ասավ Տրանցը, դժվարութեամբ ճամպրուկը կառքի վրա դնելով: — Wir ziehen noch weiter. Der Bösewicht ist schon wieder hinter uns her¹.

— Ի՞նչ ասիր: Ի՞նչ, — հարցրեց իշխան Անդրեյը:

Բիլիբինը դուրս եկավ Բալկոնսկուն դիմավորելու: Նրա ծշտապես հանգիստ դեմքն այլայլված էր:

— Non, non, avouez que c'est charmant, — ասավ նա, — cette histoie du pont de Thabor (կամուրջ Վեննայում). Ils l'ont passé sans coup férir².

Իշխան Անդրեյը ոչինչ չէր հասկանում:

— Բայց որտեղի՞ց եք գալիս, որ տեղեկութուն չունեք այնպիսի բաներից, ինչ քաղաքի բոլոր կառապանները գիտեն արդեն:

¹ Ա՛հ, ձերդ պայծառափայլութուն: Մենք գնում ենք ավելի հեռու: Չարագործն էլի հետևում է մեզ:

² Ոչ, ոչ, ընդունեցեք, որ սա հրաշալի է, այս Տարբոյան կամուրջի պատմությունը: Նրանք անցել են առանց դիմադրության:

— Ես էրցհերցոգուհու մոտից եմ դալիս: Ես այնտեղ ոչինչ չլսեցի:

— Եվ շտեսա՞ք, որ ամեն տեղ մեկնելու պատրաստութիւն են տեսնում:

— Չտեսա... Բայց ի՞նչ կա, — անհամբեր հարցեց իշխան Անդրեյը:

— Ի՞նչ կա: Այն կա, որ Ֆրանսացիներն անցել են Աուերսպերգի պաշտպանած կամուրջը, և պաշտպանողները կամուրջը օղը շին հանել, այնպես որ Մյուրատն այժմ ուղիղ ճանապարհով սրարշավ գալիս է Բոլուննի վրա, և այսօր չէ վաղը այստեղ կլինեն:

— Ի՞նչպես թե այստեղ կլինեն: Եվ ինչպես թե կամուրջն օղը շին հանել, երբ նա ականված էր արդեն:

— Այդ նույնը ես ձեզ եմ հարցնում: Այդ ոչ ոք և ինքը Բոնապարտն էլ չգիտի:

Բալկոնսկին ուսերը թոթվեց:

— Եթե կամուրջն անցել են, նշանակում է բանակը ևս կորած է. նրան գերի կվերցնեն, — ասավ նա:

— Բանն էլ հենց այդ է, — պատասխանեց Բիլիբինը: — Լսեցեք: Ինչպես ասի՝ Ֆրանսացիք մտնում են Վեննա: Շատ լավ: Մյուս օրը, այսինքն երեկ, պարոնայք մարշալներ՝ Մյուրատը, Լաննը և Բելլարը ձի են նստում ու գնում դեպի կամուրջը: (Նկատեցեք՝ երեքն էլ գասկոն): Պարոններ, — ասում է մեկը, — գիտեք որ Տաբորի կամուրջը ականված է և հակաականված, ու մեր առջևն է ահարկու tête de pont-ը և տասնուհինգ հազարանոց մի բանակ, որին կարգադրված է կամուրջն օղը հանել և մեզ առաջ չթողնել: Սակայն մեր թագավոր կայսր Նապոլեոնին հաճելի կլիներ, եթե մենք գրավենք այս կամուրջը: Երեքով գնանք և այս կամուրջը գրավենք: Գնանք, ասում են մյուսները. ու գնում են և կամուրջը գրավում, անցնում և հիմա ամբողջ բանակով Դանուբի այս ափից գալիս են մեզ վրա, ձեզ վրա և ձեր հաղորդած տեղեկութիւնների վրա:

— Կատակները թողեք, — տխրութիւնով ու լրջորեն ասավ իշխան Անդրեյը:

Այդ լուրն իշխան Անդրեյի համար թե՛ դառն էր, թե՛ հաճելի:

Հենց որ իմացավ, թե ուս բանակը գտնվում է մի այդպիսի անհուսալի դրութիւն մեջ, նա մտածեց, որ հենց իրեն է վիճակված փրկել ուս բանակը այդ դրութիւնից, որ ահա դա է այն Տուլոնը, որ առաջ կքաշի իրեն անհայտ սպաների շարքից և փառքի ճանապարհ կբանա իր համար: Ականջ դնելով Բիլիբինին, նա երևակայում էր արդեն, թե ինչպես ինքը, բանակ գալով, զինվորական խորհրդում կհայտնի իր կարծիքը, որը միայն կարող է փրկել բանակը, և ինչպես միայն իրեն կհանձնարարվի այդ ծրագրի իրագործումը:

— Թողեք կատակները, — ասավ նա:

— Կատակ չեմ անում, — շարունակեց Բիլիբինը, — ասածներիցս ավելի ճիշտ և տխուր բան չկա: Այդ պարոնները՝ երեքով գալիս են կամուրջի ծայրը և սպիտակ թաշկինակներ պարզում. հավատաշու՞նում են, թե զինադադար է, և որ իրենք, մարշալները՝ գնում են իշխան Աուերսպերգի հետ բանակցելու: Հերթապահ սպան թողնում է նրանց tête de pont-ը: Եվ նրանք այդ սպային պատմում են հազար ու մի գասկոնական, հիմարութիւններ, թե՛ պատերազմը վերջացած է, թե Ֆրանց կայսրը տեսակցութիւն է նշանակել Բոնապարտին, թե իրենք ցանկանում են տեսնել իշխան Աուերսպերգին, և այսպես շատ հիմար բաներ: Սպան մարդ է ուղարկում Աուերսպերգի ետևից. այդ պարոնները գրկվում են սպաների հետ, հանաքներ են անում, նստում են թնդանոթների վրա, մինչ այդ Ֆրանսական գումարտակն աննկատ մոտենում է կամուրջին, դյուրավառ նյութերը և ականները թափում է ջուրը և մոտենում tête de pont-ին: Վերջապես, գալիս է ինքը գեներալ-լեյտենանտը, մեր սիրելի իշխան Աուերսպերգ ֆոն-Մաուտերնը: «Միրելի հակառակորդ. ավստրիական զօրականութիւն ծաղիկ, տաճկական պատերազմների հերոս: Թշնամութիւնը վերջացած է: Մենք կարող ենք հաշտութիւն ձեռք մեկնել իրար... Նապոլեոն կայսրը ջերմապես փափագում է ճանաչել իշխան Աուերսպերգին»: Մի խոսքով, այդ պարոնները, իզուր չէ որ գասկոնացի են, այնքան շոյիչ խոսքեր են ասում Աուերսպերգին, և նա այնպես է հրապուրվում Ֆրանսական մարշալների այդ մտերմութիւնից, այնպես է շլանում Մյուրատի պատմուճանից և ջալլամի փեղուլորներից, qu'il n'y

volt que du feu, et oublie celui qu'il devait faire, faire sur l'ennemi! (Չնայած իր արագախոսութեան, Բիլիբինը չմոռացաւ կանգ առնել իր այդ mot-ից հետո, որպէսդ՝ բամանակ սա ալն գնահատելու): Ֆրանսական գումարտակը վազե-վազ մտնու՞ է tête de pont-ը, փակում են թնդանոթների բերանը, և ահա կամուրջը գոավված է: Բայց ամենից զավեշտականը, — շարունակեց Բիլիբինը, մեղմելով իր հուշումը սեփական պատմութեան գրավչութեամբ, — դա այն է, որ թնդանոթի վրա հսկող սերժանտը, որի սողանչանով ակտնները պիտի վառեին և կամուրջն օդը հանեին, այդ սերժանտը, տեսնելով որ ֆրանսական զորքերը վազում են դեպի կուճուղջը, ուզում է կրակել արդեն, բայց կաննը բռնում է նրա ձեռը: Անբժանտը, որն ըստ երևույթին, ավելի խելացի է լինում իր դեներալից, մոտենում է Աուերսպերգին և ասում. «Իշխան, ձեզ խտրում են, ահա՛ ֆրանսացիք»: Մյուրատը յետևում է, որ բանը տանու է տված, եթե սերժանտը խոսի: Նա կեղծ դարմանքով (խակական գասկոնացի) դառնում է Աուերսպերգին. «Ես չեմ տեսնում աշխարհում գոլված ավստրիական կարգապահութունը, — ասում է նա, — և դուք թո՛ւյլ եք տալիս, որ մի հասարակ սպա այդպե՛ս խոսի ձեզ հետ»: C'est génial. Le prince d'Auersperg se pique d'honneur et fait mettre le sergent aux arrêts. Non, mais avouez que c'est charmant toute cette histoire du pont de Thabor. Ce n'est ni bêtise, ni lâcheté...²

— C'est trahison peut-être³, — ասավ իշխան Անդրեյը, վառ պատկերացնելով շինելներ, վիրավորներ, վառողի ծուխ, որոտի ձայներ և իրեն սպասող փառքը:

— Non plus. Cela met la cour dans de trop mauvais draps, — շարունակեց Բիլիբինը: — Ce n'est ni trahison, ni lâcheté, ni bêtise: c'est comme à Ulm... — Նա կարծես մտածեց համապատասխան արտահայտություններ գրտ-

¹ որ նա տեսնում է միայն նրանց կրակը և մոռանում է իրենը, այն, որը պարտավոր է բանալ հակառակորդի դեմ:

² Հանճարեղ բան է: Իշխան Աուերսպերգը վիրավորվում է և հրամայում է սերժանտին ձերբակալել: Ոչ, ընդունեցեք որ այս կամուրջի պատմությունը հիանալի բան է. չես կարող ասել հիմարություն է, թե ստորություն:

³ Գուցե դավաճանություն:

նելու. — c'est c'est... du Mack. Nous sommes mackés¹, — եզրափակեց նա, զգալով, որ ասավ un mot, և մի թարմ mot, մի այնպիսի mot, որը կարող է բերնե-բերան անցնել:

Մինչ այդ ճակատին հավաքված կնճիռները ետ գնացին ի նշան ուրախութեան, և նա, թեթևակի ժպտալով, սկսեց եղունգները դիտել:

— Ո՛ւր, — ասավ նա հանկարծ, դիմելով իշխան Անդրեյին, որ վեր կացավ ու գնաց դեպի իր սենյակը:

— Ես մեկնում եմ:

— Ո՛ւր:

— Բանակ:

— Սակայն ուզո՞ւմ էիք երկու օր ևս մնալ:

— Բայց հիմա մեկնում եմ այս րոպեին:

Եվ իշխան Անդրեյը, մեկնելու համար կարգադրություններ անելով, գնաց իր սենյակը:

— Գիտեք ինչ, սիրելիս, — ասավ Բիլիբինը, մտնելով նրա սենյակը: — Ես մտածեցի ձեր մասին և ուզում եմ հարցնել՝ ինչո՞ւ եք գնում:

Եվ իբրև անհերքելի ապացույց այդ պատճառաբանության՝ կնճիռները չբացան նրա դեմքից:

Իշխան Անդրեյը հարցականորեն նայեց իր խոսակցին և պատասխանեց:

— Ինչո՞ւ եք գնում: Գիտեմ, մատծում եք, թե ձեր պարտքն է այժմ իսկ սլանալ բանակ, երբ բանակը վտանգի մեջ է: Ես այդ հասկանում եմ, mon cher, c'est de l'chéroisme².

— Բնավ, — ասավ իշխան Անդրեյը:

— Բայց դուք un philosophe³ եք, եղբք ուրեմն կատարյալ փիլիսոփա, իրերին նայեցեք այլ կողմից, և կտեսնեք, որ ձեր պարտքն է, ընդհակառակը, խնայել ձեր կյանքը: Թողեք դա ուրիշներին, որոնք ոչ մի բանի պիտանի չեն... Ձեզ հրամայված է՝ ետ դառնալ, և այստեղից էլ չեն արձակել գնալու. նշանա-

¹ Նույնպես ոչ: Այս բանը արքունիքը գնում է անհեթեթ դրություն մեջ. սա ոչ դավաճանություն է, ոչ ստորություն, ոչ հիմարություն. սա Ուլմի մոտ եղածի պես բան է... սա մակակաճություն է: Մե՛ն՛ մակակցել եմ:

² Թանկագին, դա հերոսություն է:

³ Փիլիսոփա:

կում է՝ կարող եք մնալ և մեզ հետ գալ, ուր որ մեր դժբախտ ճակատագիրը կառաջնորդի մեզ: Ասում են՝ գնալու ենք Օլմ-
յուց, իսկ Օլմյուցը շատ դուրեկան քաղաք է: Եվ մենք միասին
յմ կառքով կնրթանք հանգիստ:

— Թողեք կատակները, Բիլիբին, — ասավ Բալկոնսկին:

— Ասում եմ անկեղծորեն և բարեկամաբար: Ինքներդ
դատեցիք: Ո՛ւր և ինչի՞ համար եք գնում հիմա, երբ կարող եք
մնալ այստեղ: Ձեզ սպասում է երկու բան (նա մաշկը հավա-
քեց ձախ քունքի վրա). կա՛մ բանակ շհասած հաշտություն
կկնքվի, կամ պարտություն կլինի և Կոտուզովի ամբողջ
բանակը կխայտառակվի:

Եվ Բիլիբինը կծկած մաշկը բաց արավ, զգալով, որ իր
առաջադրած երկընտրանքը անհերքելի է:

— Ես այդ չեմ կարող ասել, — սառնությամբ ասավ իշ-
խան Անդրեյը, բայց մտածեց. «գնում եմ, որպեսզի բանակը
փրկեմ».

— Mon cher, vous êtes un héros¹, — ասավ Բիլիբինը:

XIII

Նույն գիշերը, ռազմական մինիստրին հրաժեշտ տալով,
Բալկոնսկին մեկնեց բանակ, ինքն էլ չիմանալով, թե ուր
կգտնի նրան, և երկյուղ կրելով, թե Կրեմս գնալիս հանկարծ
չընկնի Ֆրանսացիների ձեռք:

Բրյունի բոլոր պալատական պաշտոնեությունը հավաք-
վում, հեռանալու պատրաստություն էր տեսնում, և արդեն
բռններ էին ուղարկում Օլմյուց: Էցելսդորֆի մոտ իշխան Անդ-
րեյը հանդիպեց ռուսական բանակին, որը ծայրահեղ շտապո-
ղականությամբ և մեծագույն անկարգությամբ շարժվում էր
առաջ: Ճանապարհն այնպես էր խճողված սայլերով, որ կառ-
քով անկարելի էր առաջ գնալ: Կազակների հրամանատարից
վերցնելով մի ձի և մի կազակ՝ իշխան Անդրեյը, քաղցած ու
հոգնած, գումակի առաջն անցնելով, գնաց գլխավոր հրամա-
նատարին և իր սայլակը փնտրելու: Ճանապարհին նա արդեն
շատ շարագուշակ լուրեր էր լսել բանակի դրության մասին, և

այժմ անկարգ փախչող բանակի տեսքը հաստատում էր այդ
լուրերը:

— Cette armée russe que l'or de l'Angleterre a trans-
portée, des extrémités de l'univers, nous allons lui faire
éprouver le même sort (le sort de l'armée d'Ulm)¹, — հիշեց
նա պատերազմի սկզբին Բոնապարտի հրամանի խոսքերը՝
ուղղված իր բանակին, և այդ խոսքերը նրա մեջ միատեսակ
կերպով հարուցանում էին հիացում՝ հանճարեղ հերոսի նը-
կատմամբ, վիրավորված հպարտության զգացում և փառքի
հույսեր: Իսկ եթե մեռնելուց բացի ուրիշ ոչինչ չմնա՞, մտածեց
նա: Ինչ կա որ, եթե հարկավոր է: Ես այդ բանում ուրիշներից
ետ չեմ մնա:

Իշխան Անդրեյն արհամարհանքով նայեց այդ անվերջ,
լիրար խառնված վաշտերին, սայլերին, հրետանուն ու դարձ-
յալ սայլերին, սայլերին, այդ բազմատեսակ սայլերին, որոնք
աշխատում էին առաջել միմյանց, և երեք, չորս շարքով բռ-
նել էին ճանապարհը: Ամեն կողմից, ետևից ու առջևից, որքան
կարող էր ձայն հասնել, լսվում էին կառքերի ու հրետասայ-
լերի անիվների զորդոց, ձիերի դոփյուն, մտրակների հարված,
քշելու ճիշեր, զինվորների, սպասյակների ու սպաների հայ-
հոյանքներ: Ճանապարհի երկու կողմը շարունակ պատահում
էին մերթ սատկած՝ մաշկած և ոչ մաշկած ձիեր, մերթ կոտ-
րած սայլեր, որոնց մոտ, ինչ-որ բանի սպասելով նստած
էին մենակ զինվորներ, մերթ իրենց գնդերից բաժանված զին-
վորներ, որոնք խմբերով գնում էին դեպի հարևան գյուղերը
կամ գյուղերից բերում էին հավեր, ոչխարներ, խոտ կամ ինչ-
որ բանով լցրած պարկեր: Վայրէջքներում ու վերելքներում
բազմությունները խառնում էին, ու տիրում էր գոռում-գո-
չյունների մի անլուելի ղովոց: Զինվորները, ծնկահար ցելի
մեջ, ձեռներով քաշում էին հրանոթներն ու ռազմասայլերը.
մտրակներ. հարվածում էին, սմբակները սահում-սայթաքում,
ձգափողերը կտրվում և մարդկանց կոկորդը պատում էր ճիշ-
րից ու կանչերից: Շարժումը ղեկավարող սպաները շարունակ
ետ ու առաջ էին գնում սայլերի արանքով: Նրանց ձայնը հա-

¹ Այդ ռուսական բանակը, որին անգլիական ոսկին աշխարհի մի ծայրից
այստեղ է բերել, նույն բախտին կարժանանա (Ուլմի բանակի բախտին):

զիվ էր լսվում ընդհանուր ժխտրի մեջ, և նրանց դեմքից երևում էր, որ այս անկարգութեան առաջն առնելը համարում էին անհուսալի, անհնարին մի բան:

«Voilà le cher! ուղղափառ Վորականությունը», մտածեց Բալկոնսկին, հիշելով Բիլիբինի խոսքերը:

Յանկանալով որևէ մեկից իմանալ գլխավոր հրամանատարի տեղը, իշխան Անդրեյը մոտեցավ գումակին: Նրա առջևից գնում էր մի տարօրինակ միաձի կառք, ըստ երևույթին, տընավարի զինվորների ձեռով սարքած մի բան, որը ոչ սայլ էր, ոչ կաբրիոլետ, ոչ էլ զսպանակներով կառք, այլ դրանց խառնուրդը: Այդ կառքը վարում էր մի զինվոր, իսկ կաշիով պատած վերնածածկի տակ նստած էր մի կին՝ ամբողջովին շալերով փաթաթված: Իշխան Անդրեյը մոտեցավ և հազիվ զինվորին հարցում արավ, երբ նրա ուշադրությունը գրավեցին ծածկի տակ նստած կնոջ հուսահատ ձիշերը: Գումակի ղեկավար սպան խըփում էր այդ կառքը վարող զինվորին, թե ինչու է նա ուզում մյուսներից առաջ անցնել, և մտրակի ծայրը դիպչում էր կառքի ծածկին: Կինը սարսափելի ծղրտում էր: Իշխան Անդրեյին տեսնելով՝ նա գլուխը հանեց այդ քողի տակից և, նիհար ձեռները թափահարելով, ճչաց.

— Աղյուտանտ: Պարոն աղյուտանտ. ի սեր աստժո... պաշտպանեցեք... Սա ի՞նչ բան է... Ես 7-րդ եզերական գնդի բժշկի կինն եմ... չեն թողնում առաջ անցնելու. մենք ետ ենք մնացել. մերոնց կորցրել ենք...

— Գլուխդ կշարդեմ, ետ դարձիր, — գոռում էր կատաղած սպան զինվորի վրա, — ետ դարձիր քո անատակի հետ:

— Պարոն աղյուտանտ, պաշտպանեցեք: Սա ի՞նչ բան է, — ճչում էր բժշկի կինը:

— Թույլ տվեք այս սայլակն անցնի: Չե՞ք տեսնում միթե, որ կին է, — ասավ իշխան Անդրեյը, ձին քշելով դեպի սպան:

Սպան նայեց նրան և, առան պատասխանելու, կրկին դարձավ զինվորին:

— Ես քեզ ցույց կտամ... Ե՛տ...

— Թողեք անցնի, ասում եմ, — կրկնեց իշխան Անդրեյը, շուրթերը սեղմելով:

— Իսկ դու ո՞վ ես որ, — հանկարծ հարբածի մոլեգնու-թյամբ դարձավ սպան նրան: — Դու ո՞վ ես որ: Դու (նա առանձնապես շեշտում էր դու-ն) պե՛տ ես, ի՞նչ ես: Այստեղ պետք ե՛ս եմ և ոչ թե դո՛ւ: էյ, ե՛տ դարձիր, — կրկնեց նա, — գլուխդ կշարդեմ:

Այս արտահայտութունն, ըստ երևույթին, դուր էր եկել սպային:

— Լավ շշարեց աղյուտանտին, — լսվեց մի ձայն ետևից:

Իշխան Անդրեյը տեսավ, որ սպան գտնվում է մի այնպիսի անատիթ մոլեգնության մեջ, երբ մարդ չի իմանում ի՛նչ է ասում: Նա նկատեց, որ իր միջամտությունը՝ հոգուտ բժշկի բովանդակում է այն՝ ինչ ամեն բանից ավելի վախեցնում էր նրան, ա՛յն, ինչ կոչվում է ridicule¹. Բայց բնագոյն ուրիշ բան էր ասում: Սպան վերջին բառերը դեռ չէր վերջացրել, երբ իշխան Անդրեյը, կատաղությունից այլափոխված դեմքով, մոտեցավ նրան ու մտրակը բարձրացրեց:

— Բա-րե-հաճե-ցեք թող-նե՛լ:

Սպան ձեռը թափ տվեց և հապճեպ հեռացավ:

— Ամբողջ անկարգությունը սրանց, այս շտաբական-ների երեսից է, — փնթփնթաց նա: — Արեք ձեռ ուզածի պես:

Իշխան Անդրեյը, առանց նայվածքը բարձրացնելու, շտապ հեռացավ իրեն փրկիչ անվանող բժշկի կնոջ մոտից, զզվանքով հիշելով այս ստորացուցիչ տեսարանի մանրամասնությունները, ու ձին քշեց դեպի այն գյուղը, ուր, ինչպես ասել էին, գտնվում էր գլխավոր հրամանատարը:

Գյուղ մտնելով՝ ձիուց իջավ և գնաց առաջին պատահած տունը՝ գեթ մի րոպե հանգստանալու, որևէ բան ուտելու և այդ վիրավորիչ, տանջող մտքերը պարզելու մտադրությամբ: «Սա սրիկաների ամբոխ է, և ոչ թե գորք», մտածեց նա, մոտե-նալով առաջին պատահած տան լուսամուտին, երբ մի ծանոթ ձայն կանչեց նրան:

Նայեց և տեսավ, որ մի փոքրիկ լուսամուտից դուրս էր նայում Նեսվիցկու գեղեցիկ գլուխը: Նեսվիցկին, իր հյուսիս բերնով մի բան ծամելով ու ձեռները թափահարելով՝ կանչում էր նրան իր մոտ:

¹ Ահավասիկ թանկագին:

— Բալկոնսկի՛, Բալկոնսկի՛: Չե՞ս լսում, ինչ է: Շո՛ւտ արի,— գոռում էր նա:

Ներս մտնելով՝ իշխան Անդրեյը տեսավ Նեսվիցկուն և ուրիշ մի աղյուտանտի. նրանք ինչ-որ բան էին ուտում: Ան-միջապես դարձան Բալկոնսկուն, թե «նոր բան չգիտի՞ արդյոք»: Ի խան Անդրեյը նրանց ծանոթ դեմքերին կարդաց տագնապի և անհանգստութեան արտահայտություն: Այդ արտահայտու-թյունն ավելի նկատելի էր Նեսվիցկու մշտածիժաղ դեմքին:

— Որտե՞ղ է գլխավոր հրամանատարը,— հարցրեց Բալ-կոնսկին:

— Այստեղ, ա՛յն տանը,— պատասխանեց աղյուտանտը:

— Հը, ճի՞շտ է հաշտութեան և անձնատուր լինելու լու-րը,— հարցրեց Նեսվիցկին:

— Ես ձեզ պիտի հարցնեմ: Ոչինչ չգիտեմ, բացի այն, որ մեծ դժվարութեամբ հասա ձեզ:

— Իսկ մեզ մոտ ինչ կա որ: Սարսափելի է մեր դրությու-նը: Մակի վրա ծիծաղում էինք, իսկ մենք ավելի վատ դրու-թյան մեջ ենք ընկել,— ասավ Նեսվիցկին:— Դե, նստիր, մի բան կեր:

— Հիմա, իշխան, էլ ոչ սայլ, ոչինչ չեք գտնի, իսկ ձեր Պյոտրն աստված գիտի ո՛ւր է,— ասավ մյուս աղյուտանտը:

— Գլխավոր կայանը որտե՞ղ է:

— Գիշերելու ենք Յնայմում:

— Իսկ ես իմ իրերն այնպես կապեցի, որ երկու ձիու բեռ եղավ,— ասավ Նեսվիցկին,— և լավ հակեր շինեցին: Գոնե Բոհեմիայի լեռներով կարողանանք փախչել: Բաններս վատ է: Հը, ի՞նչ է պատահել, երևի հիվանդ ես, որ այդպես դողում ես,— հարցրեց Նեսվիցկին, նկատելով որ իշխան Անդրեյը սառսոաց:

— Ոչինչ,— պատասխանեց իշխան Անդրեյը:

Այդ ըոպեին հիշեց քիչ առաջ բժշկի կնոջ և գումակի դեկա-վար սպայի միջև եղած ընդհարումը:

— Ի՞նչ է անում գլխավոր հրամանատարն այստեղ,— հարցրեց նա:

— Բան չեմ հասկանում,— ասավ Նեսվիցկին:

— Ես միայն մի բան եմ հասկանում, որ այս բոլորը զըզ-

վելի է, զզվելի, զզվելի. — ասով իշխան Անդրեյը և գնաց արն տունը, ուր իջևանել էր գլխավոր հրամանատարը:

Կուտուզովի կառքի, շքախմբի անդամների հոգնած ձիերի և իրար հետ բարձրաձայն խոսող կազակների մոտից անցնելով՝ իշխան Անդրեյը հաշտը մտավ: Ինքը Կուտուզովը, ինչպես հայտնեցին իշխան Անդրեյին, գտնվում էր այս խրճիթում՝ իշխան Բագրատիոնի և Վեյրոտների հետ: Վեյրոտերը սպան-ված Շմիտին փոխարինող ավատրիացի գեներալն էր: Հաշտում վտիտ Կոզլովսկին պպզել էր գրագրի առաջ: Գրագիրը շուտ սոված փոքրիկ տակառի վրա շտապ բան էր գրում՝ թևքերը ետ ծալած: Կոզլովսկու դեմքը տանջված էր երևում. հալանո-րեն, նա նույնպես գիշերը չէր քնել: Նայեց իշխան Անդրեյին և գլխով անդամ շարկեց:

— Երկրորդ գիծը... Գրեցի՞ր,— շարունակեց նա, գրա-գրին թելադրելով:— Կիևի գրենադեռյան, Պոդոլսկի...

— Շտապում եք, ձերդ բարձր ազնվություն, չեմ հասցը-նում,— պատասխանեց գրագիրը, առանց պատշաճ հարգան-քի ու բարկացած նայելով Կոզլովսկուն:

Այդ միջոցին դռան ետևից լսվում էր Կուտուզովի հուզված-դժգոհ ձայնը, որին ընդհատում էր մի ուրիշ, անծանոթ ձայն: Այդ ձայների շեշտերից, Կոզլովսկու անուշադիր նայվածքից, տանջված գրագրի անհարգալիք վերաբերմունքից և այն հան-գամանքից, որ գրագիրն ու Կոզլովսկին գլխավոր հրամանա-տարին այդքան մոտ նստել էին տակառի կողքին, և այն հան-գամանքից, որ ձիերի սանձը բռնած կազակները բարձրաձայն գամանքից, որ ձիերի սանձը բռնած կազակները բարձրաձայն ծիծաղում էին տան լուսամուտի առաջ,— այս բոլորից իշ-խան Անդրեյն զգում էր, որ մի կարևոր ու դժբախտ բան է պատահելու:

Իշխան Անդրեյը պահանջկոտ տոնով Կոզլովսկուն դիմեց մի քանի հարցերով:

— Իսկույն, իշխան,— ասավ Կոզլովսկին:— Կարգագիրը Բագրատիոնն է լինելու:

— Իսկ անձնատուր լինելու խնդի՞րը:

— Այդպիսի բան չկա. կովելու կարգադրություններ են արված:

Իշխան Անդրեյը գնաց դեպի այն դուռը, որի ետևից ձայ-ներ էին լսվում: Բայց այն ըոպեին, երբ նա ուզում էր դուռը

բանալ, սենյակում ձայները լռեցին, դուռն ինքն իրեն բացվեց
և Կուտուզովն իր լեցուն դեմքի արծվային քթով երևաց շեմ-
քին: Իշխան Անդրեյը կանգնել էր ուղիղ Կուտուզովի դիմաց.
բայց գլխավոր հրամանատարի տեսնող միակ աչքի արտա-
հայտութունից նկատելի էր, որ մտքերն ու հոգսերն այնպես
են պաշարել նրան, որ կարծես սքողել էին նրա տեսողութուն-
նր: Նա ուղիղ իր ազդուտանտի դեմքին նայեց և նրան չճանա-
չեց:

— Հը, վերջացրի՞ր, — դիմեց նա Կոզլովսկուն:

— Այս վայրկյանիս, ձերդ բարձր գերազանցութուն:

Բազրատիոնը, որ միջահասակ, արևելյան տիպի պինդ
ու անշարժ դեմքով, շորշորուկ, տարիքոտ մարդ էր, դուրս
եկավ գլխավոր հրամանատարի ետևից:

— Պատիվ ունեմ ներկայանալու, — կրկնեց բավական բար-
ձրը իշխան Անդրեյը, նամակը հանձնելով:

— Ա՛, Վեննայի՞ց: Լավ: Հետո՛, հետո՛:

Կուտուզովը Բազրատիոնի հետ միասին դուրս եկավ դուռը:

— Է, իշխան, գնաք բարև, — ասավ նա Բազրատիոնին: —

Քրիստոսը քեզ հետ: Օրհնում եմ քեզ այդ մեծ գործի համար:

Կուտուզովի դեմքն անսպասելի մեղմացավ, և նրա աչ-
քերում արցունք երևաց: Նա ձախ ձեռով գրկեց, դեպի իրեն
բաշեց Բազրատիոնին, իսկ աջով, որի վրա մատանի կար,
խաշակնքեց նրան ու փափրիկ այտը դեմ արավ, որի փոխարեն
Բազրատիոնը համբուրեց նրա վիզը:

— Քրիստոսը քեզ հետ, — կրկնեց Կուտուզովն ու մոտեցավ
կառքին: — Նստիր մոտս, — ասավ նա Բալկոնսկուն:

— Ձերդ բարձր գերազանցութուն, կուզեի այստեղ օգ-
տակար լինել: Թույլ տվեք իշխան Բազրատիոնի ջոկատում
մնալ:

— Նստիր, — ասավ Կուտուզովը, և, նկատելով, որ Բալ-
կոնսկին դանդաղում է, — լավ սպաներ ինձ էլ հարկավոր են,
ինձ էլ:

Նրանք կառք նստեցին և մի քանի ընդհանուր անխոս:

— Առաջներին դեռ շատ բան կա, դեռ շատ բան է լինելու, —
ասավ նա ծերունու խորաթափանց հայացքով, կարծես հաս-
կանալով այն բոլորը, ինչ կատարվում է Բալկոնսկու սրտում: —
Եթե վաղը նրա զորաբաժնի գեթ մի տասերորդ մասը վերա-

դառնա, ես շնորհակալ կլինեմ աստծուց, — ավելացրեց Կու-
տուզովը, կարծես ինքն իր հետ խոսելով:

Իշխան Անդրեյը նայեց Կուտուզովին, և ակամա նրա աչ-
քովն ընկավ Կուտուզովի, իրենից՝ (Անդրեյից) կես արշին
հեռու գտնվող քունքի մաքուր լվացված սպին (որտեղից իզ-
մայիլյան գնդակը ծակել էր նրա գլուխը), և թափված աչքը:
«Այո, սա իրավունք ունի մարդկանց մահվան մասին այսպես
հանգիստ խոսելու», մտածեց Բալկոնսկին:

— Այդ իսկ պատճառով խնդրում եմ ինձ այդ զորաբաժնին
ուղարկել, — ասավ նա:

Կուտուզովը շպատասխանեց: Նա կարծես մոռացել էր
ասածը, և նստել էր մտքերի մեջ խորասուզված: Հինգ ընդհան-
րաց, կառքի փափուկ զսպանակների վրա մեղմ օրորվելով,
Կուտուզովը դարձավ իշխան Անդրեյին: Նրա դեմքին այլևս
հուզումի հետք չկար: Նուրբ հեղինակով հարցուփորձ արավ
իշխան Անդրեյին՝ կայսեր հետ ունեցած տեսակցության մա-
սին, նաև թե ինչ կարծիքներ է լսել արքունիքում Կրեմսի կովի
մասին. ու վերջում հետաքրքրվեց մի քանի ընդհանուր ծանոթ
կանանցով:

XIV

Կուտուզովն իր լ տեսի միջոցով նույնմբերի 1-ին մի այն-
պիսի լուր առավ, որն իր հրամանատարութւյան տակ գտնվող
բանակը դնում էր գրեթե անել կացութւյան մեջ: Լրտեսը հայտ-
նում էր, թե Ֆրանսացիք ահագին զորքով, Վեննայի կամուրջն
անցնելով, գնացին դեպի Կուտուզովի և Ռուսաստանից եկող
զորքերի հաղորդակցութւյան ճամփան բռնելու: Եթե Կուտու-
զովը որոշեր մնալ Կրեմսում, այդ դեպքում նապոլեոնի հար-
յուր հիսուն հազարանոց բանակը կկտրեր նրան ամեն տեսակի
հաղորդակցութւյունից, կըրջապատեր նրա քառասուն հազա-
րանոց հյուծված բանակը և նա կընկներ այն դրութւյան մեջ, ինչ
դրութւյան մեջ ընկավ Մակը՝ Ուլմի մոտ: Եթե Կուտուզովը
որոշեր թողնել Ռուսաստանից եկող զորքերի հետ կապվելու ճամ-
փան, այդ դեպքում ստիպված պիտի լիներ քաշվել կանոնավոր
ճանապարհներից զուրկ Բոհեմյան լեռների անծանոթ աշխար-
հը, պաշտպանվելով գերազանց ուժեր ունեցող թշնամուց, ու

պետք է թողնել Բուկազեղենի հետ կապվելու ամեն մի հույս: Եթե Կուտուզովը որոշեր նահանջել Կրեմսից Օլժուց տանող ճանապարհով՝ Ռուսաստանից եկող զորքերի հետ միանալու, այդ դեպքում նա պիտի հանդիպեր Վեննայի կամուրջն անցած ֆրանսական զորքին և այսպիսով ստիպված պիտի լիներ կռվել երթի ժամանակ, բոլոր տեսակ ժանրություններն ու լուժակը հետը, գործ ունենալով երեք անգամ իրեն գերազանցող և երկու կողմից իրեն շրջապատող հակառակորդի հետ:

Կուտուզովն ընտրեց այս վերջին ելքը:

Ֆրանսացիք, ինչպես լրտեսն էր հայտնում, Վեննայի կամուրջն անցնելով, ամենայն արագութեամբ գնում էին դեպի Յնայմ, որն ընկած էր Կուտուզովի նահանջի ճանապարհին, նրանից ավելի քան հարյուր վերստ առաջ: Եթե ֆրանսացիներից շուտ Յնայմ հասներ — նշանակում է կարող էր լիահույս լինել, որ բանակը կիրկվի, իսկ եթե ֆրանսացիք կանխին իրեն, նրանք շուտ հասնեին Յնայմ — նշանակում է բանակը ենթարկել խայտառակության կամ ընդհանուր կորստի: Բայց չէր կարող ամբողջ բանակով ֆրանսացիներից շուտ տեղ հասնել: Անհնարին էր: Ֆրանսացիների ճամփան Վեննայից մինչև Յնայմ ավելի կարճ էր ու լավ, քան ռուսների ճամփան — Կրեմսից Յնայմ:

Լուրն ստանալու գիշերը Կուտուզովը՝ Բագրատիոնի շորս հազարանոց առաջապահ զորքը լեռների վրայով, Կրեմս-Յնայմի ճամփից, ուղարկեց դեպի Վեննա-Յնայմ ճանապարհը: Բագրատիոնն առանց հանդիստ առնելու՝ պիտի անցներ այդ ճամփան ու կանգ առներ երեսը դեպի Վեննա, թիկունքը դեպի Յնայմ, և եթե հաջողեր կանխել ֆրանսացիներին, նա պետք է զբաղեցներ, կտրեր նրանց ճամփան, որքան կարող էր: Իսկ ինքը Կուտուզովը՝ ամբողջ բանակով, հրետանիով ու գումակով շարժվեց դեպի Յնայմ:

Քաղցած ու բոբիկ զինվորներով, առանց ճանապարհի, լեռների վրայով, փոթորկալի գիշերվա մեջ քառասունհինգ վերստ կտրելով, զորաբաժնի մի երրորդը ուժասպառ՝ ճամփին թողնելով, Բագրատիոնը ղուրս եկավ Հոլլաբրուն՝ Վեննա-Յնայմի ճանապարհը՝ ֆրանսացիներից մի քանի ժամ առաջ, որոնք Հոլլաբրունին մոտենում էին Վեննայի կողմից: Կուտուզովը դեռ մի ամբողջ օր ու գիշեր պիտի գնար, որ Յնայմ հաս-

ներ, ուստի և, բանակը փրկելու համար, Բագրատիոնը շորս հազար քաղցած, ուժասպառ զինվորներով պետք է պահեր, դիմագրավեր ֆրանսական բանակը, ինչ որ անհնարին բան էր: Բայց տարօրինակ ճակատագիրը անհնարինը դարձրեց հնարավոր: Այն խաբուսթյան հաջողութունը, որով ֆրանսացիք ձեռք գցեցին Վեննայի կամուրջը, դրդեց Մյուրատին փորձել՝ խաբելու նույնպես և Կուտուզովին: Մյուրատը Յնայմի ճանապարհին հանդիպելով Բագրատիոնի թույլ զորաբաժնին, կարծեց թե՛ դա Կուտուզովի ամբողջ բանակն է: Որպեսզի բուրդով չարդի այդ բանակը, սպասեց Վեննայի ճանապարհին ետ մնացած զորքի գալուճ և այդ նպատակով երեք օրվա զինադադար առաջարկեց, պայմանով, որ երկու կողմի զորքերը չփոխեն իրենց դիրքերը և շարժվեն իրենց տեղերից: Մյուրատը հավատացնում էր, թե արդեն հաշտության բանակցութուններ են տեղի ունենում և այդ իսկ պատճառով, անօգուտ արյուներ նահելութունից խուսափելու համար, զինադադար է առաջարկում: Ավստրիական գեներալ կոմս Նոստիցը, որ բռնել էր առաջապոստերը, հավատաց Մյուրատի բանակցողի խոսքերին և ետ քաշվեց, բանալով Բագրատիոնի զորաբաժնի ճակատը: Մի ուրիշ բանակցող գնաց ռուսական զորաշղթան՝ նույնը հայտնելու և երեք օրվա զինադադար առաջարկելու: Բագրատիոնը պատասխանեց, որ ինքը չի կարող ընդունել կամ չընդունել զինադարարը, և իր ադյուտանտին ուղարկեց Կուտուզովի մոտ՝ այդ առաջարկի մասին հայտնելու:

Զինադադարը Կուտուզովի համար միակ միջոցն էր ժամանակ շահելու, Բագրատիոնի ուժասպառ զորաբաժնին հանգիստ տալու, զուժակն ու հրետանին (որոնց շարժումը ֆրանսացիները չէին կարող տեսնել) մի օր ևս դեպի Յնայմ տանելու: Զինադադարի առաջարկը բանակը փրկելու միակ և անսպասելի հնարավորութունն էր: Այս լուրն առնելով՝ Կուտուզովն անմիջապես իր մոտ գտնվող գեներալ-ադյուտանտ Վինցենհերդին թշնամու բանակն ուղարկեց: Վինցենհերդեն ոչ միայն զինադադարը պիտի ընդուներ, այլև անձնատուր լինելու պայմաններ պիտի առաջարկեր, իսկ մինչ այդ Կուտուզովն իր ադյուտանտներին ետ ուղարկեց՝ շտապեցնել, որքան հնարավոր է, ամբողջ բանակի և գումակի շարժումը Կրեմս-Յնայմի ճանապարհով: Բագրատիոնի ուժասպառ, քաղ-

ցած զորաբաժինը մենակ պետք է քողարկեր ամբողջ գումակի ու բանակի շարժումը և անշարժ կենար ութ անգամ ավելի ուժեղ հակառակորդի դիմաց:

Կուտուզովի սպասելիքներն իրականացան, ինչպես անձնատուր լինելու առաջարկի նկատմամբ, որ ոչնչի չէր պարտավորեցնում, բայց ժամանակ էր տալիս գումակի որոշ մասին անցնելու նույնպես և այն բանի նկատմամբ, որ Մյուրատի սխալը շատ շուտով պիտի պարզվի: Հենց որ Բոնապարտը (որ գտնվում էր Շենբրունում, Հոլլաբրունից 25 վերստ հեռու) ստացավ Մյուրատի տեղեկագիրը և զինադադարի ու անձնատրուժյան նախագիծը, նա հասկացավ խաբեությունը և հետևյալ նամակը գրեց Մյուրատին:

«Au prince Murat. Schoenbrunn, 25 brumaire
en 1805 à huit heures de matin.

Il m'est impossible de trouver des termes pour vous exprimer mon mécontentement. Vous ne commandez que mon avant-garde et vous n'avez pas le droit de faire d'armistice sans mon ordre. Vous me faites perdre le fruit d'une campagne. Rompez l'armistice sur le champ et marchez à l'ennemi. Vous lui ferez déclarer, que le général qui a signé cette capitulation, n'avait pas le droit de le faire, qu'il n'y a que l'Empereur de Russie qui ait ce droit.

Toutes les fois cependant que l'Empereur de Russie ratifierait la dite convention, je la ratifierai; mais ce n'est qu'une ruse. Marchez, détruisez l'armée russe... vous êtes en position de prendre son bagage et son artillerie.

«L'aide de camp de L'Empereur de Russie est un... Les officiers ne sont rien quand ils n'ont pas de pouvoirs; celui-ci n'en avait point... Les Autrichiens se sont laissé jouer le passage du pont de Vienne, vous laissez jouer par un aide de camp de L'Empereur.

Napoléon»¹.

¹ Իշխան Մյուրատին. Շենբրուն, 25 Բրյումերի 1805 թվի.

առավոտյան ժամը 8-ին.

«Խոսք չեմ գտնում դժգոհությունս ձեզ հայտնելու: Զեր հրամանատարության ներքո է գտնվում միայն իմ առաջապահը և իրավունք չունեք,

Նապոլեոնի աղյուտանտը, ձին սրարշավ քշելով, այս ահարկու նամակը տարավ Մյուրատին: Ինքը Բոնապարտը, իր գեներալներին շվտահեղով, ամբողջ գվարդիան շարժեց դեպի կովի դաշտը, վախենալով ձեռից թողնել պատրաստի գոհը, իսկ Բագրատիոնի 4000-ոց զորաբաժինը, ուրախ-գվարթ խարույկներ վառած, չորացնում էին իրենց հագուստները, տաքանում էին, երեք օրից հետո առաջին անգամ քաշովի էին եփում, և զորաբաժնի զինվորներից ոչ ոք չգիտեր և չէր մտածում, թե ինչ է սպասում իրեն:

XV

Իշխան Անդրեյը պնդելով իր խնդրի վրա և Կուտուզովից թույլտվություն ստանալով՝ երեկոյան ժամը չորսին եկավ Գրունտ և ներկայացավ Բագրատիոնին: Բոնապարտի աղյուտանտը տակավին չէր հասել Մյուրատի զորաբաժինը, ու կոփվր դեռ չէր սկսվել: Բագրատիոնի զորաբաժնում գործերի ընդհանուր ընթացքի մասին ոչինչ չգիտեին, խոսում էին հաշտության մասին, բայց չէին հավատում դրա կարելիության: Խոսում էին կովի մասին և նույնպես չէին հավատում, թե շուտով կա էին կովի մասին և նույնպես չէին հավատում, թե շուտով կա բող է կոփվ լինել: Բագրատիոնը, Բալկոնսկուն ճանաչելով որպես սիրված ու վստահելի աղյուտանտի, ընդունեց նրան առանձին պատվով, բացատրեց, որ այսօր կամ վաղը կսկսվի կոփվը, և լիակատար ազատություն տվեց նրան՝ կովի ժամանակ իր մոտ

առանց իմ հրամանի, զինադադար կնքել: Գուք ստիպում եք ինձ պատերազմի արդյունքը կորցնել: Անմիդպես խախտեցեք զինադադարը և հարձակվեցեք թշնամու վրա: Հայտնեցեք նրան, թե անձնատրուժյունը ստորագրող գեներալը այդ իրավունքը չունի, և ոչ ոք չունի, բացի ուսական կայսրից:

Սակայն, եթե Թուսաստանի կայսրը համաձայնի հիշյալ պայմաններին, ես նույնպես կհամաձայնեմ բայց դա ոչ այլ ինչ է, եթե ոչ խորամանկութուն: Գնացեք, ոչնչացրեք ուսական բանակը... Գուք ի վիճակի եք վերցնել նրա գումակը և հրետանին:

Թուսական կայսրի գեներալ-աղյուտանտը— մեկն է... Սպաները արժեք չունեն, երբ իշխանութուն չունեն նա նույնպես իշխանութուն չունի... Ավստրիացիք խաբվեցին վեննայի կամուրջը տվին, հիմա ձեզ խաբում է նապոլեոն»

լինել կամ վերջապահ մասերում հսկել նահանջի կանոնավորութունը. «որը, նույնպես շատ կարևոր է»:

— Բայց այսօր, հավանորեն, ընդհարում չի լինի, — ասավ Բագրատիսներ, կարծես իշխան Անդրեյին հանգստացնելով:

«Եթե սա շտաբի սովորական Ֆրանսերից մեկն է, որ ուղարկվել է խաչ ստանալու, այդ դեպքում նա վերջապահում էլ պարզի կստանա, իսկ եթե ուզում է ինձ մոտ լինել, թող մնա... կհարկավորվի, եթե բաջ սպա է», մտածեց Բագրատիսներ: Իշխան Անդրեյը, ոչինչ չպատասխանելով, թույլտվութուն խնդրեց՝ գնալ դիրքերը և ծանոթանալ զորքերի դասավորութանը, որպեսզի, հանձնարարութան դեպքում, իմանա ո՛ւր է դնում: Չորաբաժնի հերթապահ սպան, որ լավ հագնված, տղամարդ էր և ցուցամատին աղամանդյա մատանի ուներ, որ ֆրանսերեն խոսում էր վատ, բայց մեծ սիրով ցանկութուն հայտնեց առաջնորդել իշխան Անդրեյին:

Ամեն կողմ երևում էին թրջված, տխուր դեմքով սպաներ, որ ինչ-որ մի բան էին որոնում կարծես, և զինվորներ, որ գյուղերից բաշ տալով բերում էին դոններ, նստարաններ և ցանկապատ՝ մասեր:

— Ահա, իշխան, շենք կարողանում ազատվել այս ժողովրդից, — ասավ բարձրակա սպան, զինվորներին ցույց տալով: — Հրամանատարներն են թույլատրում: Իսկ այստեղ ահա՛, — մատնացույց արավ նպարավաճառի վրանը, — հավաքվել, նստել են: Այս առավոտ բոլորին քշեցի. բայց, տեսեք, դարձյալ լիքն է: Պետք է մոտենալ, իշխան, և վախեցնել դրանց: Այս րոպեիս:

— Գնա՛ք միասին, ես էլ պանիր ու հաց կվերցնեմ, — ասավ իշխան Անդրեյը, որ դեռ չէր կարողացել մի բան ուտել:

— Հապա ինչո՞ւ չէիք ասում, իշխան: Ես իմ աղուհացը կառաջարկեի ձեզ:

Նրանք ձիերից իջան ու մտան նպարավաճառի վրանը: Կարմրած ու հոգնած դեմքերով մի քանի սպաներ՝ սեղանների շուրջը նստած, ուտում-խմում էին:

— Հը, սա ի՛նչ բան է, պարոններ, — ասավ բարձրակա սպան հանդիմանանքի տոնով, որպես մի մարդ, որ միևնույն բանն ասել է մի քանի անգամ: — Չէ՞ որ այսբան բացակայել չի կարելի: Իշխանը հրամայեց, որ ոչ ոք չմնա այստեղ: Այ

դուք, օրինակ, պ. փոխ-կապիտան, — դարձավ նա փոքրամարմին, կեղտոտ, նիհար թնդանոթածիզ սպային, որն առանց կոշիկների (դրանք շորացնելու համար տվել էր նպարավաճառին), գուլպաներով կանգնեց ներս մանողների առջև, փոքրինչ անբնական ժպտալով:

— Է, ինչպես դուք, կապիտան Տուշին, շե՞ք ամաչում, — շարունակեց բարձրակա սպան, — դուք, որպես թնդանոթածիզ, պետք է որ օրինակ ցույց տայիք, բայց ինքներդ առանց կոշիկի եք: Հանկարծ տագնապի փող հնչեցնեն, և դուք առանց կոշիկի հիանալի կլինեք: (Բարձրակա սպան ժպտաց): Բարեհաճեցեք ձեր տեղերը գնալ, պարոններ, բոլո՛րդ, բոլո՛րդ, — ավելացրեց նա իշխանավորի շեշտով:

Իշխան Անդրեյը, կապիտան Տուշինին նայելով, ակամա ժպտաց: Տուշինն, անխոս, ժպտալով, բորիկ ոտքը ոտի վրա դնելով, իր խոշոր, խելացի ու բարի աչքերով հարցական նայում էր մերթ իշխան Անդրեյին, մերթ բարձրակա սպային:

— Զինվորներն ասում են՝ բորիկ մարդն ավելի ճարպիկ է լինում, — ասավ կապիտան Տուշինը, ժպտալով ու ամաչելով, կամենալով, ըստ երևույթին, իր անհարմար դրուժյունից դուրս գալ կատակով:

Բայց խոսքը դեռ վերջացրած՝ զգաց, որ իր կատակը շենքունվեց, ուստի շփոթվեց:

— Բարեհաճեցեք գնալ, — ասավ բարձրակա սպան, աշխատելով լրջութունը պահել:

Իշխան Անդրեյը մի անգամ ևս նայեց թնդանոթածիզ սպայի կերպարանքին: Նա մի առանձնահատուկ, ոչ բոլորովին զինվորական, փոքր-ինչ կոմիկական, բայց անշափ գրավիչ տեսք ուներ:

Բարձրակա սպան ու իշխան Անդրեյը ձիերը հեծան ու գնացին առաջ:

Գյուղից դուրս գալով, անդադար հանգիստելով գնացող եկող՝ տարբեր վաշտերի զինվորների ու սպաների, նրանք ձախ կողմի վրա տեսան նոր փորված ու նոր շինվող կարմրին տվող ամրութուններ: Մի քանի գումարտակ զինվորներ, շնայած սառը քամուն, շապկանց, սպիտակ մրջյունների նման, շարժվում էին այդ ամրութունների վրա. հողաթմբի այն կողմից աներևույթ մեկը անդադար կարմիր կավ էր դուրս ածում:

Նրանք մոտեցան այդ ամրություններից մեկին, նայեցին ու շարունակեցին իրենց ճամփան: Հենց ամրության ետևը հանդիպեցին մի քանի տասնյակ զինվորների, որոնք անդադար փոխվում, դուրս էին վազում ամրությունից: Նրանք ստիպված էին քիթները բռնել և ձիերը քշել արագ, որպեսզի շուտ հեռանան այդ թունավորված մթնոլորտից:

— Voila l'agrément des camps, monsieur le prince¹, — ասավ հերթապահ բարձրակա սպան:

Նրանք դիմացի սարը բարձրացան: Այդ սարից արդեն Ֆրանսացիք երևում էին: Իշխան Անդրեյը կանգ առավ ու սկսեց դիտել:

— Այնտեղ ահա մեր մարտկոցն է, — ասավ բարձրակա սպան, ցույց տալով սարի ամենաբարձր կետը, — հենց այն տարօրինակ սպայի մարտկոցը, որ առանց կոշիկ նստել էր այնտեղից ամեն բան երևում է. գնանք, իշխան:

— Խորապես շնորհակալ եմ, հիմա մենակ կերթամ, — ասավ իշխան Անդրեյը, ցանկանալով ազատվել բարձրակա սպայից, — մի անհանգստանաք, խնդրեմ:

Սպան կանգ առավ, և իշխան Անդրեյը մենակ շարունակեց ճամփան:

Որքան առաջ էր գնում դեպի թշնամին, այնքան ավելի կանոնավոր և զվարթ էին երևում զինվորները: Կատարյալ անկարգություն և վհատություն էր տիրում այն գումակի մեջ, որ առավոտյան հանդիպեց իշխան Անդրեյը Յնայմի մոտ և որը տասը վերստ հեռու էր գտնվում Ֆրանսացիներից: Գրունտում նույնպես ինչ-որ տագնապ ու երկյուղ էր զգացվում: Բայց որքան ավելի էր մոտենում իշխան Անդրեյը Ֆրանսական զորաշղթային, այնքան ավելի ինքնավստահ էր երևում մեր զորքը: Շարք կազմած կանգնել էին զինվորները շինելներով, և վերական ու վաշտապետը համրում էին նրանց, մատը դեմ անելով ջոկի ծայրին կանգնած զինվորների կրծքին, հրամայելով, որ նա ձեռք բարձրացնի. փոված ամբողջ տարածության վրա՝ զինվորները փայտ ու խոփվ էին կրում և հուլիկներ շինում, ուրախ-զվարթ ծիծաղելով ու խոսելով. խարուկյների շուրջը նստած էին հաղնված ու մերկ զինվորներ, որոնք շորացնում

էին իրենց շապիկները, ոտի փաթաթանները կամ կարկատում էին կոշիկներն ու շինելները. ոմանք էլ խմբվել էին կերակրի կաթսաների ու խոհարարների շուրջը: Մի վաշտում ճաշն արդեն պատրաստ էր, և զինվորներն ազատ դեմքերով նայում էին գոլորշի արձակող կաթսաներին ու սպասում փորձնական բաժնին, որ մթերապահը փայտե ամանով տարավ-տվեց իր հուլիկի առջև գերանին նստած սպային:

Մի ուրիշ, ավելի երջանիկ վաշտում (որովհետև բոլորը օդի շունեին) զինվորները խմբված կանգնել էին ծաղկատար դեմքով լայնաթիկունք վերակայի շուրջը, որը, տակառիկը ծռելով, հերթով օդի էր լցնում տակառի տակ գրվող ջրամանների խուփերի մեջ: Զինվորները բարեպաշտ դեմքերով օդին տանում էին դեպի շուրթերը, ամանը դատարկում և, բերանները ողողելով ու շինելի թևքերով սրբվելով, զվարթացած դեմքերով հեռանում վերակայից: Բոլոր դեմքերն այնքան հանգիստ էին, կարծես այդ բոլորը կատարվում էր ոչ թե թշնամու դիմաց, կովից առաջ (ուր զորաբաժնի կեսը պիտի մնար անշունչ փրված), այլ հայրենիքում հանգիստ կայանի սպասելիս: Անցնելով եգեթյան գունդը, իշխան Անդրեյը Կիևի գրենադերյան զորքի մեջ մտավ, ուր զինվորները նույն խաղաղ գործերով էին զբաղված. գնդի հրամանատարի բարձր, մյուսներից տարբերվող հուլիկից քիչ հեռու, նա մոտեցավ գրենադերների մի դասակի, որոնց առջև պառկած էր մի մերկացրած մարդ: Երկու զինվոր բռնել էին նրան, իսկ ուրիշ երկուսը դալար ճիպոտներով խփում էին նրա բաց մեջքին. պատժվողը ճշում էր անբնական ձայնով: Գեր մայրըրը գնում-գալիս էր Ֆրոնտի առջև ու, ճիշերին ուշադրություն չդարձնելով, ասում էր միալար:

— Զինվորի համար խայտառակություն է գողությունն անելը. զինվորը ազնիվ, վեհանձն ու քաջ պիտի լինի. իսկ եղբորից գողություն անողը անազնիվ է. սրիկա է: Դարձյա՛լ, էլի՛:

Եվ լսվում էին ճկուն հարվածներ ու հուսահատ, բայց կեղծ ճիշեր:

— էլի՛, էլի՛, — ասում էր մայրըրը:

Մի երիտասարդ սպա, տարակուսանքի ու տանջանքի ար-

¹ Ահավասիկ բանակային կյանքի բավականությունը, իշխան:

տա՛ն յտու՞թյու՛ր դեմքին, հեռացավ պատժվողից, հարցա-
կան նայելով մոտից անցնող աղյուտանտին:

Իշխան Անդրեյը, առաջավոր գիծը դուրս գալով, գնաց
Փրոնտով: Մեր և թշնամու զորաշղթաները թե աչ, թե ձախ
թևերի վրա գտնվում էին իրարից հեռու, խսկ մեջտեղը, այն-
տեղ, ուր առավտոր բանագնացներ եկան, զորաշղթաներն
այնքան էին մոտեցել իրար: որ կարող էին միմյանց երես
տեսնել ու խոսակցել: Այդտեղ, զինվորներից բացի, թե այս,
թե այն կողմը, հավաքվել էին շատ հետաքրքիրներ, որոնք,
ծիծաղելով նայում էին տարօրինակ ու իրենց համար օտարոտի
հակառակորդներին:

Վաղ առավոտից, շնայած զորաշղթային մոտենալու ար-
գելքին, վաշտապետները չկարողացան հետաքրքիրներից
ազատվել: Զինվորներն այլևս Փրանսացիներին չէին նայում,
այլ դիտում էին այդ այցելուներին և, ձանձրոլթով սպասում
հերթափոխության: Իշխան Անդրեյը կանգ առավ Փրանսացի-
ներին նայելու:

— Տես, տես, — ասում էր մի զինվոր իր ընկերոջը, ցույց
տալով մի հրացանակիր ոռու զինվորի, որ սպայի հետ մոտեցավ
զորաշղթային և սկսեց արագ ու տաք-տաք խոսել Փրանսա-
ցի գրենադերի հետ: — Տեսնում ես ոնց ա վրա տալի: Ֆրան-
ցուզը ետևից չի կարում հասնի: Դե, դու էլ խոսի, Սիդորով:

— Կաց, լսի: Ի՞նչ լավ ա խոսում, — ասավ Սիդորովը,
որ Փրանսերեն լավ խոսող էր համարվում:

Զինվորը, որին մատնացույց էին անում ծիծաղելով, Դո-
լոխովն էր: Իշխան Անդրեյը ճանաչեց նրան ու ականջ դրեց
նրա խոսակցության: Դոլոխովն իր վաշտապետի հետ զորա-
շղթան էր եկել ձախ թևից, ուր գտնվում էր նրանց գունդը:

— Հը, շարունակի, շարունակի, — խրախուսում էր վաշ-
տի հրամանատարը՝ առաջ թեքվելով և ջանալով բաց չթողնել
իրեն անհասկանալի և ոչ մի բառ: — Խնդրեմ, շուտ-շուտ:
Ի՞նչ է ասում:

Դոլոխովը չէր պատասխանում վաշտի հրամանատարին.
նա ամբողջովին տարված էր տաք վիճաբանությամբ: Նրանք
խոսում էին, ինչպես և պետք է լիներ, կովի մասին: Ֆրանսացի
գրենադերն ապացուցում էր, ավատիացիներին ոռուների
հետ շփոթելով, թե ոռուներն անձնատուր են եղել և փախել

հենց Ուլմի մոտից: Դոլոխովն ապացուցում էր, թե ոռուներն
անձնատուր չեն եղել, այլ շարդել են Փրանսացիներին:

— Այստեղ էլ հրամայեն՝ քշել ձեզ, կքշենք, — ասում էր
Դոլոխովը:

— Աշխատեցեք միայն, որ ձեզ բոլորիդ պերի չվերցնենք
ձեր բոլոր կազակների հետ միասին, — ասում էր Փրանսացի-
գրենադերը:

Ունկնդրող Փրանսացիները ծիծաղեցին:

— Ձեզ կստիպենք պարել, ինչպես Սուվորովի ժամանակ
պարեցիք, — ասավ Դոլոխովը:

— Qu'est-ce qu'il chante!¹ — ասավ մի Փրանսացի:

— De l'histoire ancienne², — ասավ մի ուրիշը, գլխի՝
ընկնելով, որ խոսքը վերաբերում է նախկին պատերազմ-
ներին: — L'Empereur va lui faire voir à votre Souvara,
comme aux autres...³

— Բռնապարտը... — սկսեց Դոլոխովը, բայց Փրանսացին
ընդհատեց նրան:

— Բռնապարտ չկա, այլ կա կայսր! Sacré nom!⁴... բղա-
վեց Փրանսացին բարկացած:

— Գրողը տանի ձեր կայսեր, — և Դոլոխովն ոռուներեն,
կոպիտ, զինվորավարի հայհոյելով, հրացանն ուսը գցելով՝
հեռացավ:

— Գնանք, Իվան Լուկիչ, — ասավ նա վաշտի հրամանա-
տարին:

— Այ էդպնե կխոսեն Փրանցուզերեն, — ասին զինվոր-
ները: — Դե, դու էլ, Սիդորով, սկսի:

Սիդորովն աչքով արավ և, Փրանսացիներին դատնալով,
սկսեց շուտ-շուտ իրար ետևից անհասկանալի բառեր ասել:

— Կարի, մալա, տաֆա, սաֆի, մուտեր, կասկա, — բըլ-
բըլացնում էր նա, աշխատելով արտահայտիչ շեշտեր տալ
ձայնին:

— Հո, հո, հո՛, հա, հա՛... Ու՛ճ ու ո՛ւ... — հնչեց առողջ և

¹ Դա ի՞նչ է երգում:

² Հնադարյան պատմություն:

³ Կայսրը ձեր Սուվորին էլ ցույց կտա, ինչպես և մյուսներին:

⁴ Գրողը տանի:

ուրախ քրքիչի մի այնպիսի որոտ, որն ակամա վարակեց և ֆրանսացիներին, որից հետո պետք էր, թվում է, հրացանները դատարկեին, լիցքերը պայթեցնեին ու բոլորը ցրվեին իրենց տները:

Բայց հրացանները լցված մնացին, հրակնատները տներում ու ամրութուններում առաջվա պես սպառնալից նայում էին իրար և առաջվա պես իրար դեմ էին ուղղված թնդանոթները:

XVI

Զորքերի բռնած ամբողջ գիծը՝ աչ թևից ձախն անցնելով իշխան Անդրեյը բարձրացավ այն մարտկոցը, որտեղից, բարձրակա սպայի ասելով, երևում էր ամբողջ դաշտը: Այստեղ նա ձիուց իջավ ու կանգ առավ քարշակներից վերցրած շորս թնդանոթներից վերջինի մոտ: Թնդանոթների առջև գնում-պալիս էր հերթապահ թնդանոթաձիգը, որ ուզեց ձգվել -պատիվ տալ սպային, բայց վերջինի նշանի վրա՝ վերսկսեց իր համաչափ, տաղտկալի երթևեկությունը: Հրանոթների ետև ընկած էին քարշակները, իսկ դրանց ետևը, ավելի հեռու գտնվում էին ձիակապարանը և թնդանոթաձիգների խարույկները: Ձախ կողմը, ծայրի թնդանոթից ոչ հեռու գտնվում էր դալար ճյուղերից հյուսած հուլիկ, որտեղից սպանների աշխույժ ձայներ էին լսվում:

Արդարև, մարտկոցից երևում էր ռուսական գրեթե ամբողջ զորքը և հակառակորդի զորքի մեծ մասը: Մարտկոցի ճիշտ դեմը, դիմացի բլրի հորիզոնի վրա նշմարվում էր Շենդրաբեն գյուղը: Ավելի ձախ և ավելի աչ, երեք տեղ, խարույկների ծխի մեջ կարելի էր նկատել ֆրանսական զորքի բազմությունը, որի մեծ մասը, հավանորեն, գտնվում էր գյուղում և սարի ետևը: Գյուղից դեպի ձախ, ծխի մեջ, մարտկոցի նման մի բան էր երևում, բայց հասարակ աչքով դժվար էր չոկել: Մեր ձախ թևը տեղավորված էր մի բավական զառիվեր բարձրության վրա, որ իշխում էր ֆրանսական դիրքերին: Այդտեղ էր մեր հետևակը, իսկ ծայրին երևում էին դրագոնները: Կենտրոնում, ուր գտնվում էր Տուշինի մարտկոցը և որտեղից իշխան Անդրեյը դիտում էր դիրքերը, ամենաթեք զառիվայրն էր և ուղիղ վայրէջք դեպի գետակը. որը մեզ բաժանում էր Շեն-

գրաբենից: Դեպի ձախ մեր զորքերը հասնում-միանում էին անտառին, ուր ծխում էին մեր, փայտ կտրող հետևակի խարույկները: Ֆրանսական գիծը մերից ավելի ընդարձակ էր, և պարզ երկվում էր, որ ֆրանսացիք հեշտությամբ կարող էին երկու կողմից մեր թիկունքն անցնել: Մեր դիրքերի ետևը գտնվում էր մի զառիվայր ու խոր ձոր, որով հրետանու և հեծելազորի համար շատ դժվար կլինեիր նահանջել: Իշխան Անդրեյը թնդանոթին կրթնելով և ծոցատետրը հանելով, սկսեց գծել իր համար զորքերի դասավորումը: Երկու տեղ մատիտով նշան արավ, մտադրվելով դրանց մասին հայտնել Բագրատիոնին: Ենթադրում էր՝ նախ, ամբողջ հրետանին կենտրոնացնել մեջտեղը և, երկրորդ, հեծելազորը տանել ետ, ձորի այն կողմը: Իշխան Անդրեյը միշտ գլխավոր հրամանատարի մոտ գտնվելով, զորքի շարժումներին և ընդհանուր կարգադրություններին հետևելով և շարունակ պատերազմների պատմական նկարագրություններ կարդալով, այս առաջիկա ճակատամարտի ապագա ընթացքը նույնպես՝ ակամա պատկերացնում էր ընդհանուր գծերով: Նա պատկերացնում էր լոկ հետևյալ խոշոր պատահականությունները. «Եթե թշնամին հարձակում գործի աչ թևի վրա, — ասում էք նա ինքն իրեն, — Կիևյան գրենագրերյան և Պոդոլյան եզերյան զորամասերն ստիպված պիտի լինեն իրենց դիրքերը պահել այնքան, մինչև որ կենտրոնի օժանդակ մասերն օգնության հասնեն: Այդ դեպքում դրագոնները կարող են հարձակվել թևի վրա և ետ մղել նրանց: Իսկ կենտրոնի վրա հարձակվելու դեպքում՝ մենք այս բարձրության վրա կղենք կենտրոնական մարտկոցը և նրա պաշտպանության տակ՝ ձախ թևը ետ կքաշենք ու շարաններով (էշելոն) կնահանջենք դեպի ձորը», մտածում էր նա ինքն իրեն:

Մարտկոցում, թնդանոթի մոտ գտնված ժամանակամիջոցում նա շարունակ լսում էր հուլիկում զրուցող սպաների ձայնը, բայց նրանց ասածների ոչ մի բառը չէր հասկանում: Հանկարծ խոսողների ձայնի սրտագին տոնը զարմացրեց նրան և նա ակամա ականջ դրեց:

— Զէ, սիրելիս — ասում էր մի դուրեկան և իշխան Անդրեյին կարծես ծանոթ մի ձայն, — ես ասում եմ՝ եթե հնարավոր լինեիր իմանալ, թե ի՞նչ է լինելու մահից հետո, այն ժամանակ ոչ ոք մեզինից մահից չէր վախենա: Այդպես, սիրելիս:

Ուրիշ, ավելի շահել մի ձայն ընդհատեց նրան.

— Վախենաս թե չվախենաս, միևնույն է, մահից չես կարող խուսափել:

— Բայց մարդ շարունակ վախենում է: Ե, դուք, գիտուններ, — ասավ մի երրորդ առնական ձայն, երկուսին էլ ընդհատելով: — Գուք, թնդանոթաձիգներդ, նրանից եք այդքան գիտուն, որ ամեն ինչ կարողանում եք ձեզ հետ վերցնել՝ թե՛ օդի, թե՛ ակոստ:

Եվ այդ առնական ձայնի տերը, որ հավանորեն հետևակ սպա էր, ծիծաղեց:

— Բայց շարունակ վախենում ես, — շարունակեց առաջին ծանոթ ձայնը: — Վախենում ես անհայտից, ա՛յ թե ինչ: Որքան ասա թե՛ հոգին երկինք է գնում... բայց գիտեք որ երկինք չկա, այլ կա միայն մթնոլորտ:

Առնական ձայնը նորից ընդմիջեց:

— Հապա, Տուշին, հյուրասիրիր ծխախոտովդ, — ասաց նա:

«Հա՛, սա այն կապիտանն է, որ առանց կոշիկների կանգնած էր նպարավաճառի վրանում», մտածեց իշխան Անդրեյը, գոհությամբ ճանաչելով դուրեկան ու փիլիսոփայող ձայնը:

— Կարելի է, — ասավ Տուշինը, — բայց և այնպես հանդերձալ կյանքն իմանալ...

Նա չկարողացավ խոսքը վերջացնել: Այդ միջոցին օդի մեջ սուլոց լսվեց, որը գնալով ավելի ու ավելի մոտեցավ, ավելի լսելի դարձավ, և ուժեղ, կարծես ամեն ինչ շասելով, ինչ հարկավոր էր, գերմարդկային ուժով, կտորտանքներ շաղ տալով, գետնովը դիպավ, հուլիկից ոչ հեռու: Գետինը կարծես հատաչեց այդ ահավոր հարվածից:

Նույն վայրկյանին հուլիկից դուրս թռավ ամենից առաջ փոքրամարմին Տուշինը՝ ծխամորճը բերանի անկյունում. նրա բարի, խելացի դեմքը փոքր-ինչ գունատ էր: Նրա ետևից դուրս եկավ առնական ձայնի տեր, կտրիճի տեսքով հետևակ սպան ու կոճկվելով վազեց դեպի իր վաշտը:

Իշխան Անդրեյը ձին նստած մնաց մարտկոցի վրա, նայելով ուժեղ արձակող հրանոթի ծխին: Նրա հայացքը թափառում էր ընդարձակ տարածության վրա: Նա տեսավ միայն, որ Ֆրսե սացիների առաջվա անշարժ բազմությունները շարժվում են, և ձախ կողմն իրոք մարտկոց կար, որի ծուխը դեռ չէր ցրվել: Ֆրանսացի երկու ձիավոր, հավանորեն, այդուտանտներ սրարշավ գնացին սարով: Սարի տակ, հավանորեն, գորաշղթան ուժեղ սցցնելու համար, շարժվում էր թշնամու մի սակավաթիվ զորասյուն: Առաջին կրակոցի ծուխը դեռ չէր ցրվել, երբ երևաց մի նոր ծուխ ու լավեց մի նոր կրակոց: Ծակատամարտն սկսվեց: Իշխան Անդրեյը ձիու գլուխը թեքեց ու արշավեց ետ դեպի Գրունտ՝ իշխան Բագրատիոնին փնտրելու: Լսում էր, թե ինչպես ետևում թնդանոթները որոտում էին ավելի հաճախ և ուժգին: Երևի, մերոնք սկսեցին պատասխանել: Ներքևում, այնտեղ, որտեղից անցան բանազնացները, հրացանի կրակոցներ լսվեցին:

Կեմառուան (Lemarrois) Բոնապարտի սպառնալից նամակը հենց նոր էր հանձնել Մյուրատին, և ամոթահար Մյուրատը կամենալով իր սխալն ուղղել, անմիջապես զորքերը շարժեց դեպի կենտրոնը և ուսական երկու թևի թիկունքը՝ հույս ունենալով մինչև երեկո և մինչև կայսեր ժամանումը՝ ոչնչացնել իր առջև կանգնած չնչին զորաբաժինը:

«Ակսվե՛ց: Ահա ճակատամարտը», մտածում էր իշխան Անդրեյը, զգալով, թե ինչպես է բարախում սիրտը: «Բայց ո՛ւր է: Ինչպես է արտահայտվելու իմ Տուշինը», մտածում էր նա:

Անցնելով նույն վաշտերի միջով, որ քառորդ ժամ առաջ քաշովի էին ուտում և օդի խմում, նա ամեն տեղ տեսավ կարգի մեջ մտնող և զենքեր վերցնող զինվորների միևնույն արագ շարժումները, ու բոլոր դեմքերին կարգաց աշխուժության այն զգացումը, ինչ կար իր սրտում: «Ակսվե՛ց, Ահա՛՝ ճակատամարտը: Սարսափելի՛ է, և հետաքրքիր»՝ կարելի էր կարգալյուրաբանչուր զինվորի ու սպայի դեմքին:

Շինվող ամրություններին չհասած, նա աշնանային ամպի մած օրվա իրիկնային լույսով նշմարեց դեպի իրեն եկող ձիա-

վորներ: Առջից եկողը, որ յափնջով էր և գառան մորթուց կարծ կարտուզով, ճերմակ ձի էր նստած: Դա իշխան Բագրատիոնն էր: Իշխան Անդրեյը կանգ առավ, սպասելով որ նա մոտենա: Իշխան Բագրատիոնը ձին կանգնեցրեց և, իշխան Անդրեյին ճանաչելով, գլխով բարևեց: Եվ մինչ իշխան Անդրեյը խոսում էր իր տեսածների մասին՝ նա շարունակ առջևն էր նայում:

«Ակավե՛ց, ահա՛ ճակատամարտը» արտահայտությունը երկվում էր մինչև իսկ իշխան Բագրատիոնի պինդ ու թուխ դեմքին. նրա պղտոր աչքերը կիսախուփ էին, կարծես քնատ լիներ: Իշխան Անդրեյն անհամբեր հետաքրքրությամբ նայում էր այդ անշարժ դեմքին, և ուզում էր իմանալ, թե նա մտածում ու զգում է արդյոք, և թե ի՛նչ է մտածում ու զգում այդ մարդն այդ վայրկյանին: «Կա՞ առհասարակ մի որևէ բան այդ անշարժ դեմքի ետևը», հարց էր տալիս իշխան Անդրեյն իրեն, նրան նայելով: Իշխան Բագրատիոնը գլխով հավանություն նշան արավ իշխան Անդրեյի խոսքերին, և ասավ «լավ», մի այնպիսի արտահայտությամբ, որ կարծես բոլորը, ինչ կատարվում էր և ինչ հաղորդում էին իրեն, հենց այն էր, ինչինքը նախատեսել էր արդեն: Իշխան Անդրեյը, արագ վազքից հեռավ, խոսում էր շտապ-շտապ: Իշխան Բագրատիոնը խոսքերն արտասանում էր արևելյան առողանությամբ, դանդաղ, կարծես կամենալով ներշնչել, թե շտապելու կարիք չկա: Սակայն ձին արագորեն քշեց Տուշինի մարակոցի կողմը: Իշխան Անդրեյը հետևեց նրան՝ զորախմբի հետ միասին: Իշխան Բագրատիոնի ետևից գնում էին՝ շքախմբի սպան, իշխանի անձնական աղյուտանտը, ժերկովը, հանձնակատարը (օրդինարեց), հերթապահ բարձրակա սպան՝ իր գեղեցիկ ձիու վրա նստած և մի դատական աստիճանավոր, որ հետաքրքրությունից խնդրել էր իրեն ևս տանել ճակատամարտը տեսնելու: Աստիճանավորը, որ լեցուն մարդ էր լիքը դեմքով, ուրախության միամիտ ժպիտով շուրջն էր նայում ձիու վրա ծուլուծուլ լինելով. նա իր կամլոտե շինելով տարօրինակ տպավորություն էր թողնում հուսարների, կազակների և աղյուտանտների շրջանում:

— Սա ուզում է ճակատամարտ տեսնել, — ասավ ժերկովը

Բալկոնսկուն, աստիճանավորին ցույց տալով, — բայց սիրտն արդեն դող է ընկել:

— Կավ, հերիք է, — ասավ աստիճանավորը փայլուն, միամիտ և միաժամանակ խորամանկ ժպիտով, կարծես իրեն շոյված էր զգում, որ ժերկովը հանաքներ է անում իր հետ, ու կարծես դիտմամբ աշխատում էր ավելի հիմար երևալ, քան էր իսկապես:

— Très drôle, mon monsieur prince¹, — ասավ հերթապահ բարձրակա սպան: (Նա հիշում էր, որ Փրանսերեն մի ուրիշ տեսակ է ասվում իշխան տիտղոսը, ու ոչ մի կերպ չէր կարողանում ասել):

Այդ ժամանակ նրանք մոտենում էին արդեն Տուշինի մարտկոցին, երբ մի ռումբ եկավ-ընկավ նրանց առաջ:

— Այդ ի՛նչ ընկավ, — հարցրեց աստիճանավորը պարզամտորեն:

— Ֆրանսական բոքոններ են, — ասավ ժերկովը:

— Ուրեմն դրանո՞վ են խփում, — հարցրեց աստիճանավորը: — Ի՛նչ երկյուղալի է:

Եվ նա, թվաց թե, զոհունակությունից անշափ ուրախացավ: Նա խոսքը հազիվ էր վերջացրել, երբ կրկին անսպասելի ահավոր մի շաշյուն լսվեց, որն ընդհատվեց հանկարծ ինչ որ հեղուկ բանի դիպած հարվածից, — շըը-լը՛փ, — աստիճանավորի ետևից եկող կազակն իր ձիու հետ տապալվեց գետին: Ժերկովն ու հերթապահ սպան կոացան թամբերի վրա ու, ձիերի գլուխը շուտ տալով, քշեցին: Աստիճանավորը կանգ առավ կազակի առաջ, ուշադիր հետաքրքրությամբ նրան նայելով: Կազակը մեռած էր, ձին դեռ կենդանի էր:

Իշխան Բագրատիոնը, աչքերը կկոցելով, ետ նայեց և, իրարանցման պատճառը տեսնելով, երեսը շրջեց անտարբեր, կարծես ուզում էր ասել, թե արժի՞ արդյոք հիմարություններով զբաղվել: Նա ձին կանգնեցրեց հմուտ հեծվորի ձևերով, մի փոքր կուացավ և ուղղեց յափնջու փնջովն ընկած թուրը: Դա շատ հին թուր էր, որի նմանը ոչ ոք չէր կրում հիմա: Իշխան Անդրեյը հիշեց այն պատմությունը, թե ինչպես Սուլդորովն Իտալիայում իր թուրը նվիրել է Բագրատիոնին, և առանձին

¹ Շատ զավեշտական է, իմ պարոն իշխան:

մի հաճույք զգաց այդ հիշողութիւնից: Նրանք մոտեցան հենց այն մարտկոցին, որի մոտ Բալիտնսկին կանգնած-դիտում էր կովի դաշտը:

— Ո՞վ է այս վաշտի հրամանատարը, — հարցրեց Բագրատիոնը ֆէյերվերկերին¹, որը կանգնած էր ռազմամթերքների սնդուկների մոտ:

Նա հարցրեց՝ ո՞վ է հրամանատարը, բայց էպպես հարցնում էր, թե չե՞ք վախենում արդյոք: Եվ ֆէյերվերկերը հասկացավ այդ:

— Կապիտան Տուշինը, ձերդ գերագանցութիւն, — ձրգվելով, ուրախ ձայնով բացականչեց կարմրաշեկ, պեպկենտ դեմքով ֆէյերվերկերը:

— Լավ, լավ, — ասավ Բագրատիոնը, ինչ-որ մտմտալով, և քարշակների մոտով ձին քշեց դեպի ամենավերջին հրանոթը:

Այն վայրկյանին, երբ նա մոտենում էր՝ նրան և շքախմբին խլացնող մի կրակոց լավեց այդ թնդանոթից, և հրանոթը հանկարծակի շրջապատող ծխի մեջ երևացին թնդանոթածիգներ, որ թնդանոթը բռնած՝ աշխատում էին իր նախկին տեղը դնել: № 1-ին լայնաթիկունք, վիթխարի զինվորը փարտիշը ձնսին, ոտները լայն դնելով, ոստնեց դեպի անիվը, № 2-րդ զինվորը դողացող ձեռով լցնում էր թնդանոթը: Մի փոքրամարմին մարդ՝ կապիտան Տուշինը, սայթաքելով, առաջ վազեց, գննարալին շտանելով և փոքրիկ ձեռը ձակատին դրած՝ սկսեց նայել:

— Ավելացրու երկու գիծ էլ. այդպես, եղավ, — գռչեց նա իր բարակ ձայնով, որին աշխատում էր տալ կտրիճի շեշտ, ինչ որ չէր սազում նրա փոքրիկ մարմնին: — Երկորդը՝, — ծվծվաց նա: — Խորտակիր դրանց, Մեդվեդկ:

Բագրատիոնը կանչեց սպային, և Տուշինը, ամաչկոտ ու խեղճ շարժումներով բարևեց գննարալին ոչ թե այնպես, ինչպես զինվորականներն են բարևում, այլ այնպես, ինչպես քահանաներն են օրհնում, երեք մատը քունքին դրած մոտեցավ գննարալին: Թեպետ Տուշինի թնդանոթները նրա համար էին, որ կրակի տակ առնի ձորը, քայց նա հրկիզագնդերն ար-

ձակում էր հեռվում երևացող Շենգրաբեն գյուղի վրա, որտեղից առաջանում էր ֆրանսացիների հոծ բազմութիւն:

Ոչ ոք Տուշինին չէր հրամայել, թե ո՛ւր և ի՛նչի վրա պիտի կրակի, և նա, խորհրդակցելով իր վերակա Ջախարչենկոյի հետ, որին հարգում էր մեծապես, որոշել էր, որ լավ կլինի, եթե գյուղը հրգեհի: «Լա՛վ», ասավ Բագրատիոնը սպայի զեկուցումը լսելով և սկսեց իր առջև երևացող կովի դաշտը դիտել, կարծես ինչ-որ մտմտալով: Աջ կողմից ֆրանսացիք շատ առաջ էին եկել: Այն բարձունքի ներքև, ուր գտնվում էր Կիւյան գունգը, գետի հեղեղատում սարսափելի հրացանածոթիւն էր լավում, իսկ ավելի աջ կողմը, դրագոնների ետևը, շքախմբի սպան Բագրատիոնին ցույց տվեց մեր թեկի ետևն անցնող ֆրանսական զորասյունը: Ջախ կողմը հորիզոնը փակվում էր մոտակա պնտառով: Իշխան Բագրատիոնը կենտրոնի երկու գումարտակի հրամայեց՝ օգնութիւն հասնել աջ թեկին: Շքախմբի սպան սիրտ արավ դիտել տալ իշխանին. թե այդ գունդարտակների հեռանալով հրանոթները կմնան անպաշտպան: Իշխան Բագրատիոնը երեսը շրջեց դեպի շքախմբի սպան ու անփայլ աչքերով նրան նայեց անխոս: Իշխան Անդրեյին թրվաց, թե սպայի դիտողութիւնն իրավացի էր և թե իրոք որ ասելու բան չկար: Բայց այդ ժամանակ սրարշավ մի ադուտանտ եկավ ձորակում գտնվող գնդի հրամանատարի կողմից, թե ներքևով ֆրանսական ահագին զորք է գալիս, թե գունդը քայքայված է և նահանջում է դեպի Կիւյան գրենագերները: Իշխան Բագրատիոնը գլուխը խոնարհեց ի նշան համաձայնութիւն ու հավանութիւն: Ձին մանրաքայլ քշեց դեպի աջ և ադուտանտին ուղարկեց դրագոնների մոտ՝ ֆրանսացիների վրա հարձակվելու հրամանով: Բայց կես ժամ հետո այդ ադուտանտը վերադարձավ՝ լուր բերելով, թե դրագոնների գնդի հրամանատարը նահանջել է արդեն ձորի այն կողմը, որովհետև սաստիկ կրակ է եղել ուղղված իր դեմ, և նա իզուր տեղ գոհեր է տվել, ուստի և զորքն շտապով տանում է դեպի անտառ:

— Լա՛վ, — ասավ Բագրատիոնը:

Այն միջոցին, երբ նա հեռանում էր մարտկոցից, ձախ կողմից նույնպես կրակոցներ լավեցին անտառում, և որովհետև ձախ թեղ բավական հեռու էր, և ինքը չէր կարող ժամա-

¹ Թնդանոթի պատրույգ վառող զինվոր:

նակին հասնել, Բագրատիոնն այնտեղ ուղարկեց Ժերկովին՝ ալագ գեներալին հայտնելու (հենց այն գեներալին, որը Քրաունառում գունդը ներկայացրեց Կուտուզովին), որպեսզի նա որքան կարելի է շուտ նահանջի ձորի ետևը, որովհետև աչ թևը, երկի ուժ չի ունենա երկար դիմադրել թշնամուն: Իսկ Տուշինն ու նրան պաշտպանող գումարտակը մոռացվեցին: Իշխան Անդրեյն ուղադրութեամբ հետևում էր Բագրատիոնի՝ զորավարների հետ ունեցած խոսակցություններին ու նրա տված հրամաններին և զարմանքով նկատում էր, որ ոչ մի հրաման էլ չէր տրվում, այլ որ միայն իշխան Բագրատիոնն աշխատում էր ցուլց տալ, թե ի՞նչ արվում է անհրաժեշտաբար, պատահաբար և մասնավոր, զորավարների կամքով, — այդ բոլորն արվում է թեև ոչ իր հրամանով, բայց իր մտադրությունների համաձայն: Իշխան Բագրատիոնի ցուլց տված տակտի շնորհիվ, իշխան Անդրեյը նկատում էր, որ (չնայած դեպքերի պատահականության ու զորապետների կամքից անկախ լինելուն) նրա ներկայութունը անչափ օգտակար է: Այն զորավարները, որ այլալվամ էին, զինվորներն ու սպաները ուրախութեամբ ողջունում էին նրան, աշխուժանում էին նրա ներկայութեամբ և, հայտնապես, ուզում էին իրենց քաջությունը ցուլց տալ նրան:

XVIII

Իշխան Բագրատիոնը հասնելով մեր աչ թևի ամենաբարձր կետին՝ սկսեց իջնել ցած, որտեղից որտազին հրաձգություն էր լսվում և որտեղ ոչինչ չէր երևում վառողի ծխի պատճառով: Սրբան մոտենում էին ձորակին, այնքան քիչ էին բան տեսնում, բայց այնքան ավելի էր զգացվում իսկական ճակատամարտի դաշտի մոտիկութունը: Հանդիպեցին վիրավորները՝ Անպլխարկ, արյունոտված գլխով մեկին՝ թևատակերից բռնած քաշ էին տալիս երկու զինվոր: Նա խոխոացնում էր ու թքոտում: Գնդակը, հավանորեն, մտել էր բերանը, կամ կոկորդը: Մյուսը, որ հանդիպեց, առույգ քայլում էր մենակ, առանց հրացանի, բարձրաձայն տնքալով և թարմ ցավից ձեռք թափահարելով, որից արյունը, ինչպես շշից, թափվում էր շինելի վրա: Նրա գեմքի վրա ավելի վախ կար, քան թե ցավ: Նա վիրավորվել էր

մի ըոպե առաջ: Ծանապարհն անցնելով՝ նրանք սկսեցին զառիվայրով իջնել և վայրէջքին տեսան մի քանի մարդ, որ պառկած էին. հանդիպեցին զինվորների մի մեծ խմբի, որոնց մեջ կային և ոչ վիրավորներ: Զինվորները, հեալով, սարն էին բարձրանում և, չնայած գեներալին տեսան, այնուամենայնիվ շարունակեցին խոսել բարձրաձայն ու ձեռների շարժումներով: Առջևում, ծխի մեջ երևում էին գորշագգեստ զինվորների շարքերը, և սպան, Բագրատիոնին տեսնելով, պոռալով վազեց խմբով հեռացող զինվորների ետևից, պահանջելով, որ ետ դառնան: Բագրատիոնը մոտեցավ շարքերին, ուր մերթ այստեղ, մերթ այնտեղ հրացաններ էին տրաքտրաքում, խլացնելով խոսակցությունն ու հրամանների ձայնը: Օդն ամբողջ հագեցած էր վառողի ծխով: Զինվորների դեմքն ամբողջովին սևացած էր վառողից ու կենդանացած: Ոմանք հրացանները լցնում էին շամփուրներով, մյուսները խանձոցների մեջ վառող էին ածում, գնդակներ էին հանում պարկերից, ուրիշները կրակում էին: Բայց թե ո՞ւմ վրա էին կրակում, այդ չէր երևում վառողի անշարժ ծխի պատճառով: Բավական հաճախ լսվում էին բզզոցի և շվշվոցի հաճելի ձայներ: Վա ի՞նչ բան է, — մտածեց իշխան Անդրեյը, մոտենալով զինվորների այդ խմբին: — Սա չի կարող հարձակում լինել, որովհետև նրանք չեն շարժվում. չի էլ կարող կառն լինել. նրանք այնպես շեն կանգնած»:

Գնդի հրամանատարը՝ նիհար, տեսքով թուլակազմ ու հաճելի ժպիտով մի ծերուկ, որի թերթերունքները կիսով չափ ծածկում էին նրա զառամյալ աչքերը, տալով նրան հեղ կերպարանք, մոտեցավ իշխան Բագրատիոնին և ընդունեց նրան. ինչպես տանտերը մի թանկագին հյուրի: Նա զեկուցեց իշխան Բագրատիոնին, թե Ֆրանսական հեծելազորը հարձակում գործեց իր գնդի վրա, և թեև ալզ հարձակումը ետ մղվեց, բայց գունդը կորցրեց իր կիսից ավելին: Գնդապետն ասում էր՝ հարձակումը ետ է մղված, բայց իսկապես ինքն էլ չէր իմանում. թե այս կես ժամվա մեջ ինչ է անցնում-դառնում իր զորքերի մեջ, ու հաստատապես չէր կարող ասել՝ հարձակումն է ետ մղված, թե իր գունդն է ջարդված հարձակումից: Կովի սկզբում նա գիտեր միայն, որ ուսմբեր ու նոնակներ սկսեցին տեղալ իր գնդի վրա ու մարդիկ սպանել, որ հետո մեկը ձայն

տվեց՝ «հեծելագործ», ու մերոնք սկսեցին կրակել: Եվ մինչև այժմ կրակում էին ոչ թե հեծելագործ վրա, որ անհետացել էր արդեն, այլ հետևակ ֆրանսացիների, որ երևացել էին ձորում ու կրակում էին մերոնց վրա: Իշխան Բագրատիոնը գլուխն իջեցրեց ի նշան այն բանի, թե այդ բոլորը կատարվել է այնպես, ինչպես ինքն է ցանկացել ու ենթադրել: Դառնալով ազյուտանտին՝ նա հրամայեց՝ սարից, 6-րդ եգերյանից բերել երկու գումարտակ, որոնց մոտով քիչ առաջ անցան: Այդ վայրկյանին իշխան Անդրեյին զարմացրեց Բագրատիոնի դեմքով վրա կատարված փոփոխությունը: Նրա դեմքն արտահայտում էր մի կենտրոնացած ու երջանիկ վճռականություն, որ ունենում է շոգ օրը շուրը նետվելու պատրաստ մարդը: Աչքերն այլևս քնատ, անփայլ չէին, և ինքը լուներ շինծու-խորամիտ տեսք. կլոր, ուժեղ, բազեի աչքերը հիացումով ու փոքր-ինչ արհամարհանքով նայում էին առաջ, ըստ երևույթին, ոչ մի բանի վրա կանգ չառնելով, թեև նրա շարժումների մեջ մնացել էր նախկին դանդաղությունն ու շափավորությունը: Գնդի հրամանատարը Բագրատիոնին խնդրեց՝ ետ դառնալ, որովհետև այստեղ շատ վտանգավոր էր: «Ի սեր աստծո, ձեր պայծառափայլություն», ասում էր նա ու իր խոսքը հաստատելու ակնկալությամբ նայում շքախմբի սպային, որը սակայն խուսափում էր նրանից: «Այ, բարեհաճեցեք տեսնել», — ցույց էր տալիս նա գնդակները, որ շարունակ վզգում, երգում ու սուլում էին նրանց շուրջը: Նա խոսում էր խնդրանքի ու հանդիմանության այնպիսի տոնով, որով հյուան է խոսում կացինը ձեռն առած աղաչի հետ. «մեզ համար սովորական ա, բայց դուք ձեռներդ մազու կանեք»: Նա խոսում էր այնպես, կարծես այդ գնդակներն իրեն չէին կարող սպանել, ու նրա կիսախուռի աչքերը նրա խոսքերին տալիս էին ավելի համոզիչ արտահայտություն: Բարձրակա սպան միացավ գրնդի հրամանատարի հորդորներին. բայց իշխան Բագրատիոնը չպատասխանեց նրանց և հրամայեց միայն՝ կրակը դադարեցնել և դասավորվել այնպես, որ եկող երկու գումարտակների համար տեղ լինի: Այդ միջոցին, երբ նա խոսում էր, բարձրացած քամին անտես ձեռի նման, աչից դեպի ձախ տարավ ձորը ծածկող ծխի վարագույրը, և դիմացի սարը՝ վրան շարժվող ֆրանսացիներով, քաջվեց նրանց առաջ: Բոլոր հայացք-

ներն ակամա ուղղվեցին ֆրանսական այդ զորասյունին, որ սարի ծապաններով շարժվում էր դեպի մեզ: Երևում էին արդեն զինվորների բրդոտ գզակները. կարելի էր արդեն սպաներին ջոկել շարքայիններից. երևում էր, թե ինչպես է դրոշակը ֆոֆոալով, դիպչում իր կոթին:

— Լավ են գալիս, — ասավ մեկը Բագրատիոնի շքախմբում:

Զորասյունի գլուխն արդեն ձորը մտավ: Ընդհարումը պիտի տեղի ունենար վայրէջքի այս կողմը...

Կովին մասնակցող մեր գնդի մնացորդները, հապճեպ դասավորվելով, քաշվեցին դեպի աջ. նրանց ետևից, ետ մնացողներին քշելով, մոտեցան 6-րդ եգերյանի երկու գեղակազմ գումարտակները: Նրանք դեռ Բագրատիոնին չէին հասել, բայց լսվում էր արդեն նրանց ծանր ու համաչափ քայլածքը: Ձախ կողմից, Բագրատիոնին մոտիկ քայլում էր վաշտի հրամանատարը՝ կլոր դեմքով, բարեկազմ մի տղամարդ՝ տխմար ու երջանիկ արտահայտությամբ, հենց այն սպան, որ դուրս վազեց հողիկից: Նա, հավանորեն, այդ վայրկյանին ոչ մի բանի մասին չէր մտածում, բացի այն, որ կտրիճի պես անցնի իր իշխանավորների առջևից: Ռազմական ինքնաբավական տեսքով, իր ջլապինդ ոտներով քայլում էր թեթևորեն, կարծես լողում էր, առանց նվազագույն ճիգի ձգվելով և իր այդ թեթևությունով ջոկվելով իրեն հետևող զինվորների ծանր քայլածքից: Նա ոտի երկարությամբ բռնել էր մերկացրած նեղիկ թուրը և, մերթ իշխանավորներին, մերթ ետ նայելով, քայլի համաչափությունը չկորցնելով, ճկունությամբ շրջվում էր իր ամբողջ հաղթ իրանով: Թվում էր՝ իր հոգու ամբողջ կարողությունը գործադրում է, որպեսզի լավագույն ձևով անցնի իշխանավորների ետևից, և զգալով, որ այդ բանը կատարում է լավ, — երջանիկ էր: «Ձախը... ձախը... ձախը...», թվում էր ներքուստ կրկնում էր նա յուրաքանչյուր քայլն անելիս, ու ըստ այդ տակտի շարժվում էր բազմատեսակ-խիստ դեմքերով զինվորների պատը, կաշեպարկեր կապած, հրացաններն ուսերը պսած, ու կարծես այդ հարյուրակ զինվորներից յուրաքանչյուրը ամեն մի քայլից հետո կրկնում էր մտքում. «ձախը... ձախը... ձախը...»: Հաստ մայրը, փնչացնելով ու լոք-լոք անելով՝ անցավ ճամփին բուսած թուփը. ետ մը-

նացած մի գինվոր, հեռուսպառ, իր անճշտապահուցիչունից վախեցած դեմքով, սնգանգալով հասավ վաշտին, ուղմբը, օղբ ճնշելով, թուած եկավ-անցավ իշխան Բագրատիոնի և նրա շքախմբի գլխի վրայից և, «ձախը-ձախը» տակտով, գարկեց զորասյունին: «Շարքերը խտացրե՛ք», լսվեց վաշտի հրամանատարի ցուցամուղ ձայնը: Զինվորները աղեղաձև շարքով անցան այն տեղից, ուր ուղմբն ընկավ. մի ծեր ենթասպա, մի բանի վայրկյան կանգնելով սպանվածների մոտ, վազելով հասավ իր շարքին, ծուլ լինելով քայլեց ու քայլվածքը հարմարեցրեց մյուսներին և բարկացած շուրջը նայեց: «Ձախը՛... ձախը՛... ձախը՛...», թվում էր լսվում է սպառնալից լուծթյան միջից և միաժամանակ գետին զարկվող ոտների միատեսակ ձայնից:

— Կեցցե՛ք, տղերք, — ասավ իշխան Բագրատիոնը:

«Պատրաստ ենք ձե-ըը՛ թյուն...», լսվեցին շարքերից: Ձախ կողմից քայլող մի մուսյլ գինվոր, պոռալով, աչքերով նայեց Բագրատիոնին մի այնպիսի արտահայտությունով, կարծես ասում էր. «ինքներս գիտենք». մի ուրիշը, առանց նայելու և կարծես վախենալով ուրախանալ, բերանը բանալով՝ պոռաց ու անցավ:

Կարգադրվեց կանգ առնել և պայտուսակները հանել:

Բագրատիոնն անցավ շարքերի առջևից և ձիուց իջավ: Սանձը տվեց կազակին, յափնջին՝ վերցրեց և նույնպես նրան տվեց, ապա կայտուզն ուղղեց գլխին: Ֆրանսական զորասյունի գլուխը, սպաներն առջևից, երևաց սարի տակից:

«Աստված օգնակա՛ն», ասավ Բագրատիոնը պինդ, լսելի ձայնով. մի ակնթարթ նայեց ճակատ կազմած գինվորներին և, ձեռները թեթևակի գցելով, հեծվորի անհաստատ քայլերով, կարծես դժվարությամբ, առաջ գնաց անհարթ դաշտով: Իշխան Անդրեյն զգաց, որ մի անդիմադրելի ուժ իրեն առաջ է մղում, ու մեծ երջանկություն էր զգում:

1 Այստեղ տեղի ունեցավ այն հարձակումը, որի մասին Տիերը գրում է. «les russes se conduisirent vaillamment, et chose rare à la guerre, on vit deux masses d'infanterie marcher résolument l'une contre l'autre sans qu'aucune des deux ceda avant d'être aboer de'ee. իսկ նապոլեոնը ս. Չեղինի կղզում ասել է. «Quelques bataillons russes motrerent de l'intre'pidite'». Այսինքն՝ «Ռուսները կովեցին քաշարար, և մի բան, որ հազվադեպ է պատերազմում, երկու հետևակ զուեղ վճռապես գնացին իրօք»:

Ֆրանսացիք արդեն բավական մոտեցել էին. իշխան Անդրեյը, որ քայլում էր Բագրատիոնի կողքից, պարզ չոկում էր նրանց լանջակապերը. կարմիր ուսադիրները, անգամ դեմքերը: (Սա պարզ տեսավ մի ծեր ֆրանսացի սպայի, որ դուրս ընկած ոտներով դժվարությամբ քայլում էր սարն ի վեր): Իշխան Բագրատիոնը նոր հրաման չտվեց և շարունակեց անխոս անցնել շարքերի առջևից: Հանկարծ ֆրանսացիների շարքերից մի կրակոց լսվեց, ապա երկրորդը, երրորդը... և թշնամու ցրիվ շարքերում ծուխ բարձրացավ և հրացանները ճարձատեցին: Մի քանի մարդ ընկան մերոնցից, դրանց թվում և կլոր դեմքով սպան, որ քայլում էր այնպես ուրախ ու շանասիրությամբ: Բայց այն վայրկյանին, երբ առաջին կրակոցը հնչեց. Բագրատիոնը շուրջը նայեց ու գոչեց. «Ուուա՛»:

«Ուուա՛-ա-ա-ա՛» զիլ կանչերով տարածվեց մեր զորագծում և, մերոնք իշխան Բագրատիոնին ու միմյանց առաջելով, անկարգ, բայց զվարթ ու աշխույժ բազմություն վազեցին սարն ի վար՝ ցրված ֆրանսացիների ետևից:

XIX

Յ-րդ եզերյան գումարտակի հարձակումն ապահովեց այ թևի նահանջը: Կենտրոնում՝ Տուշինի մոտացություն մատնեղված մարտկոցի գործողությունը, որ արդեն հաջողել էր վառել Շենգրաբենը, կանգնեցրել էր ֆրանսացիների առաջխաղացումը: Ֆրանսացիները հանգցնում էին քամուց տարածվող հրդեհը, և այդպիսով մերոնց ժամանակ տալիս նահանջելու: Կենտրոնի նահանջը ձորի միջով կատարվեց հապճեպ ու մեծ աղմուկով. սակայն նահանջելիս՝ զորամասերը լիստոնվեցին իրար: Բայց ձախ թևը, որ միաժամանակ ենթարկվեց կանխի դեկավարության տակ գտնվող ֆրանսական գերազանց ուժերի՝ հարձակմանն ու թիկնանց շարժումին և որը կազմված էր Ազովյան ու Պոդոլյան հետևակ և Պավլոգրադյան հուսարական զնդերից, — քայքայվեց: Բագրատիոնը ժերկովին ուղարկեց

դեմ, և երկուսից ոչ մեկը չգիշեց, մինչև որ շարձակվեցին նրա վրա: Նապոլեոնի խոսքերը. «Մի քանի ուս գումարտակներ անվահեռություն ցույց տվին»:

ձախ թևի հրամանատար գեներալի մոտ, հրամայելով անժի-
ջապես նահանջել:

Ժերկովն առույգորեն, ձեռք բռնեցից շնոացնելով, ձին
շարժեց ու բռնեց սրարշավ: Բայց հագիվ մի փոքր հեռացավ
Բագրատիոնից — ուժերը դավաճանեցին նրան. անդիմադը-
րելի մի երկյուղ ընկավ սիրտը, — ու չկարողացավ գնալ վը-
տանգի ենթակա վայրը:

Ձախ թևի զորքերին մոտենալով՝ նա շղնաց առաջ, ուր
հրաձգություն կար, այլ գեներալին ու զորապետին փնտրեց
այնպիսի տեղեր, ուր նրանք չէին կարող լինել, ուստի և հրա-
մանը տեղ չհասցրեց:

Ձախ թևի հրամանատարությունն ըստ ավագության պատ-
կանում էր ա՛յն գնդի հրամանատարին, որ Բրաունաուփի մոտ
ներկայացավ Կուտուզովին և ուր իբրև զինվոր ծառայում էր
Գոլոխովը: Իսկ ծայրագույն ձախ թևի հրամանատար էր նը-
շանակված Պավլոգրադյան գնդի (ուր Ռոստովն էր ծառայում)
հրամանատարը, որի հետևանքով և թյուրիմացություն տեղի
ունեցավ: Երկու զորապետն էլ սաստիկ գրգռված էին իրարու
դեմ, և այն ժամանակ, երբ աչ թևում կռիվ էր գնում և Ֆրան-
սացիք արդեն սկսել էին հարձակումը, այս երկու զորապետ-
ներն զբաղված էին իրար վիրավորելու նպատակ ունեցող
բանակցություններով: Իսկ գնդերը՝ թե՛ հեծելազորը, թե՛
հետևակը պատրաստ չէին առաջիկա կռվի համար: Զինվորից
սկսած մինչև գեներալը ճակատամարտ չէին սպասում և հան-
գիստ զբաղված էին խաղաղ գործով. հեծելազորում կեր էին
տալիս ձիերին, հետևակում՝ վառելափայտ էին հավաքում:

— Քանի որ նա աստիճանով ինձնից բարձր է, — ասում
էր գերմանացի հուսարական գնդապետը, կարմրելով ու խոսքն
ուղղելով իրեն մոտեցած աղյուտանտին, — թող ինչ ուզում է
անի: Ես իմ հուսարներին չեմ կարող զոհարելու: Փողահա՛ր:
Հնչեցրու նահանջի փողը:

Բայց դրությունը դանդաղում էր տազնապալից: Թնդանոթա-
ձգությունն ու հրացանաձգությունը, ի մի ձուլված, որոտում
էին թե՛ աչից և թե՛ կենտրոնում, և Լաննի Ֆրանսական հը-
րաձիգներն անցնում էին արդեն ջրաղացի ամբարտակը և
վերադասավորվում հրացանազարկի երկու տարածություն
հետու: Հետևակի գնդապետը իր նյարդային քայլվածքով մո-

տեցավ ձիուն և, նրան հեծնելով (դարձավ ափելի ուղիղ ու
բարձր) բռնեց պավլոգրադյան գնդի հրամանատարի կողմը:
Երկու հրամանատարները հանդիպեցին իրար քաղաքավարի
բարեններով և շարությունը սրտներում թաքցրած:

— Այսուամենայնիվ, գնդապետ, — ասավ գեներալը գեր-
մանացուն, — չեմ կարող, սակայն, զորքի կեսը թողնել ան-
տառում: Ես ձեզ խնդրում եմ, ես ձեզ խնդրում եմ, — կրկնեց
նա, — դիրք գրավել և հարձակման պատրաստություն տես-
նել:

— Իսկ ես ձեզ խնդրում եմ մի խառնվեք ձեզ չվերաբերող
գործին, — պատասխանեց գնդապետը տաքացած: — Եթե դուք
հեծելակ լինեիք...

— Ես հեծելակ չեմ, գնդապետ, բայց ոուս գեներալ եմ, և
եթե այդ չգիտեք...

— Գիտեմ, ձեր գերազանցություն, — գռչեց հանկարծ գըն-
դապետը, ձին տեղից շարժելով ու կասկարմիր կտրելով: —
Համեցեք ու մի տեսեք, թե դա դիրք բռնելու տե՞ղ է: Չեմ
ուզում իմ գունդը չարդել տալ ձեր բավականության համար:

— Դուք չափն անցնում եք, գնդապետ: Ես իմ բավակա-
նության մասին չեմ մտածում և արգելում եմ այդպես խոսել:

Գեներալը, ընդունելով գնդապետի հրավերը՝ քաշու-
թյան տուրնիրի գնալու, կուրծքն ուղղելով և դեմքը խոժո-
ռելով, գնաց նրա հետ միասին դեպի զորաշղթան, կարծես
նրանց ամբողջ տարածայնությունը պետք է լուծվեր այնտեղ,
զարաշղթայում գնդակների տակ: Հասան այնտեղ, մի քանի
գնդակներ անցան նրանց գլխի վրայից, և անխուս կանգ առան:
Շղթային նայելու կարիք չկար, որովհետև նրանց առաջվա
տեղից էլ պարզ էր, որ հեծելազորը թփերի մեջ և ձորերում չէր
կարող գործել, և որ Ֆրանսացիք անցնում են ձախ թևի թի-
կունքը: Գեներալն ու գնդապետը, ինչպես կռվի պատրաստվող
երկու աքաղաղ. խստությամբ ու նշանակալից նայեցին իրար,
իզուր միմյանց դեմքի վրա վախկոտության նշաններ փնտ-
րելով: Երկուսն էլ քննություն բռնեցին: Որովհետև ասելու
բան չկար, թե՛ մեկը թե՛ մյուսը չուզեց մյուսին առիթ տալ
ասելու, թե առաջինը նա հեռացավ գնդակների տակից, և նը-
րանք երկար կմնային այդտեղ, փոխադարձաբար միմյանց
քաշությունը փորձելու, եթե այդ ժամանակ անտառում, գը-

րեթե նրանց ետև, չլսվեր հրացանների ճարճատյուն և մի խուլ աղաղակ: Ֆրանսացիք հարձակվել էին անտառում զբտնըվող փայտ բերող զինվորների վրա: Հուսարներն այլևս չէին կարող հետևակի հետ նահանջել: Նրանց նահանջի ճանապարհը կտրել էր ֆրանսական շղթան: Այժմ, որքան էլ տեղն անհարմար էր, անհրաժեշտ էր հարձակումով ճանապարհ բանալ:

Հեծվաշտը (ուր ծառայում էր Ռոստովը) հագիվ կարողացավ ձի նստել, ստիպվեց կանգնել-մնալ թշնամու դիմ-դիմաց: Նորից, ինչպես էնսի կամուրջի վրա, հեծվաշտի և թշնամու միջև ոչ ոք չկար, և նրանց միջև, նրանց բաժանելով, ընկած էր անհայտությունն ու սարսափի նույն ահավոր գիծը, որը կենդանի մարդկանց կարծես բաժանում է մեռելներից: Բոլորն էլ զգում էին այդ գիծը, և այն խնդիրը, թե կանցնեն արդյոք այդ գիծը թե ոչ ու ի՞նչպես կանցնեն, հուզում էր նրանց:

Գնդապետը մոտեցավ ճակատ կազմած հեծվաշտին, բարկացած ինչ-որ պատասխան տվեց սպանների հարցումներին և, որպես իր կարծիքի վրա պնդող մի մարդ, մի ինչ-որ հրաման տվեց: Ոչ ոք որոշ բան չասավ, բայց հեծվաշտում լուր տարածվեց հարձակում գործելու մասին: Մարտակարգի հրաման տրվեց, և պատյաններից հանվող սրերը կրճտացին: Բայց ոչ ոք չշարժվեց տակավին: Չախ թևի գործը՝ թե՛ հետևակը, թե՛ հուսարները զգում էին, թե հրամանատարությունն ինքն էլ չգիտի ինչ անի, և պետերի անվճռականությունն անցավ գործին:

«Շուտ լինեք, շուտ», մտածում էր Ռոստովը, զգալով, թե հասել է, վերջապես, հարձակման հաճույքը ճաշակելու ժամանակը, որի մասին այնքան բան էր լսել հուսար-ընկերներից:

— Աստված օգնական, տղեղ՞ք, — լսվեց Դենիսովի ձայնը, — ձիերը քշեցե՞ք: Մաղ՞չ:

Առաջին շարքի ձիերի գավակները շարժվեցին: Գրաչիկը սանձը ձիգ տվեց և ինքը շարժվեց:

Ռոստովն աչ կողմը տեսնում էր իր հուսարների շարքերը, իսկ ավելի դեմը, առջևը երևում էր մի մութ շերտ, որ չէր կարողանում շոկել, բայց համարում էր թե դա թշնամին է: Կրակոցներ էին լսվում, բայց հեռվում:

— Քայլերն աղճապացվե՞ք, — կանչեց հրամանատարը, և Ռոստովն զգաց, թե ինչպես իր Գրաչիկը շարժում արավ բանասմբակ վազելու:

Նա առաջուց գուշակում էր նրա շարժումները, և քանի գնում, իրեն ավելի ուրախ էր զգում: Առջևը նկատեց մի մեծավոր ծառ: Այդ ծառն սկզբում շատ առաջ էր, ա՛յն գծի մեջտեղը, որ այնպես սարսափելի էր թվում: Անցան ահա այդ գիծը, և ոչ միայն սարսափելի բան չկար, այլ քանի գնում՝ ուրախություն և աշխույժ էր գալիս վրան: «Ո՛հ, ինչպես պիտի թրատեմ նրանց», մտածում էր Ռոստովը, թրի երախակալը ձեռին սեղմելով:

— Ուռա-ա՛-ա՛, — որոտացին ձայները: «Դե, թող հիմա մեկն առաջս գա», մտածեց Ռոստովը, խթանելով Գրաչիկին, ու, մյուսներին առաջելով, ձիու գլուխը բաց թողեց: Թշնամին արդեն երևում էր առջևում: Հանկարծ, լայն ավելի պես մի բան մտրակեց հեծելագործին: Ռոստովը թուրը բարձրացրեց, պատրաստվելով թրատել, բայց այդ ժամանակ նրա առջևից սրարշավ գնացող զինվոր Նիկիտենկոն բաժանվեց նրանից, և Ռոստովը զգաց, ինչպես երազում, թե շարունակում է առաջ գնալ անքնական արագությունով և միաժամանակ տեղից չի շարժվում: Ետևից ծանոթ հուսար Բոնդարյուկը ձին քշեց նրա վրա ու նայեց բարկացած: Բոնդարյուկի ձին ընկավ, և նա անցավ-գնաց առաջ:

«Սա ի՞նչ բան է. ես առաջ չե՛մ գնում: — Ես ընկել եմ, ես սպանված եմ»... մի վայրկյանում հարցրեց ու պատասխանեց Ռոստովն իրեն: Նա դաշտի մեջ արդեն մենակ էր: Շարժվող ձիերի և հուսարների թիկունքների փոխարեն իր շուրջը տեսնում էր միայն անշարժ գետին ու հնձած արտեր: Տաք արյուն էր գնում իր տակից: «Չէ, ես վիրավորված եմ, իսկ ձիս սպանված»: Գրաչիկն ուզեց բարձրանալ առաջին ոտների վրա, բայց ընկավ, տակովն անելով և հեծվորի ոտը: Ձիու գլխից արյուն էր հոսում: Ձին ջանք էր թափում, բայց չէր կարողանում ոտքի կանգնել: Ռոստովն ուզեց բարձրանալ, բայց նույնպես ընկավ: Թուրն ընկել էր թամբի փոկերի մեջ: Որտեղ էին մերոնք, որտեղ էին ֆրանսացիք — չգիտեր: Շուրջը ոչ ոք չկար:

Ոտն ազատելով, նա վեր կացավ: «Ո՛ւր է, ո՞ր կողմն է այժմ այն գիծը, որ երկու բանակը խստորեն բաժանում էր իրարից», — հարցնում էր ինքն իրեն ու շէր կարողանում պատասխանել: «Արդյոք մի վատ բան չի՞ պատահել ինձ: Կին՞ում են արդյոք այսպիսի դեպքեր, և ի՞նչ պիտի անել այսպիսի պարագաներում», հարցրեց ինքն իրեն, վեր կենալով. և այդ միջոցին զգաց, որ մի ավելորդ բան է կախված իր ձախ ընդհարմացած ձեռից: Ձեռի թաթը կարծես իրենը չլիներ: Նայեց ձեռին, իզուր նրա վրա արյուն փնտրելով: «Ահա և մարդիկ, — մտածեց նա ուրախացած, տեսնելով դեպի իրեն վազող մի քանի մարդու: — Սրանք ինձ կօգնե՞ն»: Այդ մարդկանց առջևից վազում էր տարօրինակ կիվերով և կապույտ շինելով մեկը, որի թուփ արևառ դեմքի վրա երևում էր կեռ քիթը: Նորից երկու և էլի շատ մարդիկ էին վազում ետևից: Նրանցից մեկը մի բան ասավ տարօրինակ, ոչ ուսերեն լեզվով: Ետևում նույնպիսի կիվերներով նույնպիսի մարդկանց արանքում կանգնած էր մի ուսու հուսար. նրա ձեռները բռնել էին, իսկ նրա ետևը սանձից բռնել էին նրա ձի:

«Երևի, մեր հուսարը գերի է ընկել... Այո: Մի՞թե ինձ էլ են գերի վերցնելու», մտածում էր Ռոստովը, աչքերին չհավատալով: «Մի՞թե Ֆրանսացիներ են»: Նա նայում էր մոտեցող Ֆրանսացիներին, և, չնայած մի վայրկյան առաջ արշավում էր նրանց հասնելու և թրատելու, սակայն նրանց մոտիկությունն այժմ այնպես սարսափելի էր թվում նրան, որ աչքերին չէր հավատում: Ո՞վքեր են սրանք: Ինչո՞ւ են վազում: Մի՞թե դեպի ինձ են վազում: Եվ ինչո՞ւ: Սպանելու: Ի՞նձ, որին բոլորն այնպես սիրում են: Հիշեց մոր, ընտանիքի, բարեկամների սերը, և իրեն սպանելու թշնամու մտադրությունը անկարելի թվաց: «Բայց գուցե և զալիս են սպանելու»: Նա տասը վայրկյանից ավելի անշարժ կանգնեց իր տեղում, չհասկանալով իր կացությունը: Առջևից եկող կեռ քիթով Ֆրանսացին այնքան մոտեցավ, որ նրա դեմքի արտահայտությունն երևում էր արդեն: Եվ սվինը թեք բռնած, շուռք պահած դեպի իրեն վազող այդ մարդու բորբոքված երեսարքը վախեցրեց Ռոստովին: Նա ատրճանակը ձեռն առավ, և նրա վրա կրակելու փոխարեն, նետեց այն ֆրանսացու վրա և, որքան ոտներում ուժ ուներ, վազեց դեպի թիփերը: Փախչում

էր ոչ թե կասկածի ու պայքարի այն զգացումով, որով զենաց էնսի կամուրջի վրա, այլ շնորհից փախչող նապաստակի զգացումով: Նա ամբողջ էությամբ սարսափ էր զգում իր ջահել, երջանիկ կյանքի համար: Շտապ-շտապ արտերի միջնակներից ցատկելով՝ նա սլանում էր դաշտի միջով, իսկ երբեմն, երբ իր գունաթափ, բարի, ջահել դեմքը դարձնում՝ ետ էր նայում, սարսուռ էր անցնում մեջքով: «Չէ, ավելի լավ է ետ չնայեմ», մտածեց նա, բայց թիփերին մոտենալով՝ մի անգամ էլ ետ նայեց: Ֆրանսացիք ետ էին մնացել, և նույնիսկ այն թուփերին, երբ նա ետ նայեց, առջևից եկող Ֆրանսացին արդեն էլ չէր վազում, այլ քայլում էր և, երեսը շրջելով բարձրաձայն մի քան էր ասում հտեի ընկերոջը: Ռոստովը կանգ առավ: «Չէ, չէր կարող պատահել, որ սրանք ինձ սպանել ուզենային: Այդպես չի կարծես», — մտածեց նա և զգաց, որ ձախ ձեռն աթքան ծանր է, ասես երկու փթանոց կշռաքար էր կախված նրանից: Նա էլ չկարողացավ առաջ վազել: Ֆրանսացին նույնպես կանգ առաղ ու նշան բռնեց: Ռոստովն աչքերը փակեց ու կոացավ: Բզզալով երկու գնդակ եկան-անցան իր կողքով: Հավաքեց իր վերջին ուժերը, աչ ձեռով բռնեց ձախը և վազեց մինչև թիփերը: Թիփերում ուս հրաձիգներ կային:

XX

Անտառի մեջ հանկարծակիի բերված մեր հետևակ զնդերը դուրս թափվեցին անտառից, և վաշտերը, տարբեր վաշտերի խառնվելով, սկսեցին անկարգ խմբերով փախչել: Մի ահաբեկված զինվոր բացականչեց պատերազմի դաշտում սարսափելի ու անխմաստ բառը «կտրեցի՛ն», և այդ բառը երկյուղի ու ահի զգացումով համակեց բոլորին:

— Մեր թիկունքն են անցե՛լ: Կտրվա՞ծ ենք: Կորա՞նք, — գոռում էին փախչողները:

Գնդի հրամանատարը, այն վայրկյանին, երբ ետևից կրակոցներ ու ճիչեր լսեց, հասկացավ, որ իր զնդին դժբախտություն է պատահել, և այն միտքը, — թե ինքը, երկար տարիներ ծառայած և ոչ մի բանում հանցավոր չլսեղած օրինակելի սպան, կարող է հանկարծ անհողության կամ անփութության համար հանցավոր համարվել, իշխանության առաջ, — այնպես

ցնցեց նրան, որ նա անմիջապես, մոռանալով թե՛ հեծգնդթ անհնազանդ գնդապետին և թե՛ իր գեներալի աստիճանը, բայց ամենից գլխավորը — մոռանալով միանգամայն վտանգն ու ինքնապահպանման զգացումը, թամբի կեռը բռնելով ու ձին խթանելով, սրարշավ գնաց դեպի գունդը՝ կարկուտի պես թափվող գնդակների տարափի տակ, որոնք բարեբախտաբար չդիպան նրան: Նա միայն մի բան էր փափագում. հասկանալ ի՛նչ է պատահել, օգնել և ինչ գնով էլ լինի սխալն ուղղել, և թե՛ գա եղել է իր կողմից, որ ինքը չդառնա հանցավոր, ինքը՝ քսաներկու տարի ծառայած, ոչ մի նկատողություն չստացած օրինակելի սպան:

Անվնաս անցնելով Ֆրանսացիների միջով՝ նա սրարշավ հասավ անտառի ետևը տարածվող դաշտը, որով փախչում էին մերոնք ու, հրամանի ականջ չդնելով, իջնում էին սարի ստորոտը: Հասավ բարոյական կերպարանափոխության ա՛յն վայրկյանը, որով վճռվում է ճակատամարտի բախտը, — զինվորների քայքայված խմբերը կլսե՞ն արդյոք իրենց հրամանատարի ձայնը, թե՞, նրան նայելով, կշարունակեն փախչել: Չնայած գնդի հրամանատարի հուսահատ կանչին (որի ձայնն առաջ այնքան ահարկու էր զինվորի համար), չնայած գնդի հրամանատարի կատաղած, կարմրած, այլափոխված դեմքին ու թրի թափահարումին, — զինվորները շարունակեցին փախչել, խոսել, կրակել օդում և հրամաններ չլսել: Ծակատամարտի բախտը վճռող բարոյական կերպարանափոխությունը, ըստ երևույթին, լուծվեց հօգուտ վախի:

Պոռալուց և վառողի ծխից նեղվելով՝ գեներալը հազաց ու կանգ առավ հուսահատ: Ամեն ինչ կորած էր թվում, բայց այդ րոպեին մերոնց վրա հարձակվող ֆրանսացիք հանկարծ, առանց նկատելի պատճառի, դեպի ետ վազեցին, թաքնվեցին անտառի փեշերում, և անտառում երևացին սուս հրաձիգներ: Դա Տիմոխինի վաշտն էր, որ իր կարգապահությունը չխախտելով, մենակ մնացել էր անտառում և, մի փոս տեղ դիրք մրտած, հանկարծ հարձակում գործեց ֆրանսացիների վրա: Տիմոխինը ֆրանսացիների վրա հարձակվեց մի այնպիսի կատաղի գոռոցով և այնպիսի խելագար վճռականությամբ՝ միայն մի թուր ձեռին, որ ֆրանսացիք հանկարծակիի գալով, գնեքերը նետեցին ու փախան: Տիմոխինի կողքից վազող Դո-

լոխովը մոտիկից սպանեց մի ֆրանսացու և առաջինը բռնեց անձնատուր եղող սպայի օձիքը: Փախչողները ետ դարձան, զուամրտակները հավաքվեցին, և ֆրանսացիք, որ քիչ էր մնացել ձախ թևի զորքերը երկու մասի բաժանելին, մի վայրկյանում ետ մղվեցին: Պահեստի մասերը կարողացան միանալ, և փախչողները կանգ առան: Գնդի հրամանատարը՝ մայրը էկոնոմովի հետ կամուրջի մոտ կանգնած, նայում էր իր մոտով անցնող վաշտերին, երբ նրան մոտեցավ մի զինվոր և ասպանդակը բռնելով՝ գրեթե հենվեց նրան: Զինվորի հագինը գործարանային կապույտ մահուդե շինել էր. նա ոչ պայուսակ ուներ, ոչ կիվեր, գլուխը կապված էր և ուսումն անցրել էր ֆրանսական մի փամփշտապարկ, իսկ ձեռին բռնել էր սպայի թուր: Զինվորը գունաթափ էր, կապույտ աչքերն ամբարտավանորեն նայում էին գնդի հրամանատարին, իսկ բերանը ժպտում էր: Թեպետ հրամանատարն զբաղված էր մայրը էկոնոմովին հրամաններ տալով, բայց և այնպես չէր կարող ուշադրություն չդարձնել այդ զինվորի վրա:

— Զերդ գերազանցություն, ահա երկու հաղթանիշ, — ասավ Դոլոխովը ֆրանսական թուրն ու պարկը ցույց տալով: — Ես գերի վեցրի մի սպա: Ես կանգնեցրի վաշտը: — Դոլոխովը հոգնածությունից դժվարությամբ էր շնչում, ու խոսում էր ընդմիջումներով: — Ամբողջ վաշտը կարող է վկայել: Խնդրում եմ հիշեք, ձերդ գերազանցություն:

— Լավ, լավ, — ասավ գնդի հրամանատարը և դարձավ մայրը էկոնոմովին:

Բայց Դոլոխովը չհեռացավ. նա գլխի կապը բաց արավ և ցույց տվեց մազերի մեջ լերդացած արյունը:

— Սվինի վերք է, բայց ճակատից չհեռացա: Զմոռանաք, ձերդ գերազանցություն:

Տուչինի մարտկոցը մոռացվել էր, և միայն կովի վերջում իշխան Բագրատիոնը, շարունակելով ականջ դնել կենտրոնից եկող թնդանոթաձգությանը, նախ հերթապահ բարձրակասպային և ապա իշխան Անդրեյին ուղարկեց այնտեղ՝ որպեսզի մարտկոցին հրամայեն՝ նահանջել, որքան կարելի է շուտ: Տուչինի թնդանոթների մոտ եղած պաշտպանողական ջոկատը, ինչ-որ մեկի հրամանով, հեռացավ կովի կիսին. բայց

մարտկոցը շարունակեց կրակել և ֆրանսացիները այն շվեթ-
րին միայն այն պատճառով, որովհետև չէին կարող ենթադրել,
թե այդ հանդուգն հրաձգութունը չորս անպաշտպան՝ թնդա-
նոթից է։ Ընդհակառակը, մարտկոցի եռանդուն գործողու-
թյունից թշնամին ենթադրում էր, թե այստեղ, կենտրոնում
են համախմբված թշնամու գլխավոր ուժերը, և երկու անգամ
փորձեց հարձակում գործել այդ կետի վրա և երկու անգամն էլ
ետ քշվեց այդ բարձունքի վրա մենակ մնացած չորս թնդա-
նոթի կարտեշային կրակոցներից։

Շուտով, իշխան Բագրատիոնի հեռանալուց հետո, Տուշինը
կարողացավ հրդեհել Ենգրաբենը։

— Տեսա՛ր, իրար անցան, շփոթվեցին։ Տե՛ս, ծուխ,
ծուխ։ Լավ է, լավ։ Ծուխ, էլի ծուխ, — ասում էր թնդանոթա-
ձիգներից մեկը, հետզհետե աշխուժանալով։

Բոլոր թնդանոթները, առանց որևէ հրամանի, խփում էին
հրդեհի ուղղությամբ։ Կարծես իրար խրախուսելու համար,
զինվորները ամեն մի կրակոցն ուղեկցում էին բացականչու-
թյուններով։ Ձև՛վ էր։ Այ էդպես, էդպես։ Տեսա՛ր... Լա՛վ
էր։ Հրդեհը, քամու շնորհիվ, արագությամբ տարածվեց։
Գյուղի այս կողմն անցած ֆրանսական զորասյունները ետ
դարձան, բայց այդ անհաջողության համար իբրև պատիժ,
թշնամին գյուղի աջ կողմը տասը թնդանոթ դրոնց և սկսեց կը-
րակել Տուշինի մարտկոցի վրա։

Հրդեհի պատճառած ուրախության և ֆրանսացիներին
հաջողապես կրակի բռնելու բուռն ոգևորության հետևանքով
մեր թնդանոթաձիգները թշնամու այդ մարտկոցը տեսան այն
ժամանակ միայն, երբ երկու ումբ, դրա ետևից նաև շորսը
եկան խփեցին թնդանոթների մեջտեղը. ումբերից մեկը
տապալեց երկու ձի, մյուսը կտրեց արկղավարի ոտը։ Սակայն,
նրանց մի անգամ արդեն համակած աշխուժքը շթուլացավ,
այլ տրամադրությունը փոխեց միայն։ Զիբրը փոխարին-
վեցին նորերով, վիրավորին վերցրին-տարան հեռու, և չորս
թնդանոթն էլ ուղղվեցին թշնամու տասթնդանոթյա մարտ-
կոցի դեմ։ Տուշինի ընկեր սպան սպանվեց կովի հենց սկզբում,
և մի ժամվա ընթացքում քառասուն զինվորից շարքից դուրս
եկան տասյոթ հոգի, բայց թնդանոթաձիգներն առաջվա պես
զվարթ էին և եռանդուն։ Երկու անգամ նկատեցին, որ ներքե-

լում, իրենց մոտիկ, ֆրանսացիք երևացին, — ու անմիջա-
պես կարտեշահար արին նրանց։

Թույլ, անճարակ շարժումներով փոքրիկ մարդը սպա-
տիկ շարունակ պահանջում էր մի ծխամորե էլ դրա համար,
ինչպես նա էր ասում, և ծխամորճի կրակը շաղ տալով, շուտ-
շուտ առաջ էր նետվում ու, փոքրիկ ձեռը ճակատին դրած,
նայում ֆրանսացիների կողմը։

— Խորտակեք դրանց, տղերք, — ասում էր նա և ինքը
բռնում թնդանոթի անիվները և պտուտակները հանում։

Մխի մեջ, խլանալով անընդհատ կրակոցներից, որոնք
ամեն անգամ ստիպում էին նրան ցնցվել, Տուշինը առանց
ծխամորճը բերնից հանելու, մի թնդանոթից վազում էր դե-
պի մյուսը, մերթ նշան էր բռնում, մերթ գնդակներն էր համ-
րում, մերթ կարգադրում էր փոխել ու փոխարինել սպանված
ու վիրավոր ձիերը, ու երբեմն ճշում էր իր թույլ բարակ, ան-
վճռակա՛ն ձայնով։ Նրա դեմքն ավելի ու ավելի կենդանանում
էր։ Բայց երբ մարդ էին սպանում կամ վիրավորում՝ նա հոն-
քերը կիտում էր և երեսը շրջում սպանվածից, բարկացած
պտտում էր զինվորների վրա, որոնք, ինչպես միշտ, հապա-
ղում էին վիրավորին կամ սպանվածի դեպքը վերցնելու։ Զին-
վորները, մեծ մասամբ գեղեցիկ կտրիճներ (ինչպես և միշտ
լինում է մարտկոցային վաշտում, երկու զուլս բարձր էին
իրենց սպայից և կրկնակի թիկնեղ), բոլորը, ինչպես երեսա-
ները դժվարին դրություն մեջ, նայում էին իրենց հրամանա-
տարին, և նրա դեմքի արտահայտությունն անփոփոխ կերպով
անդրադառնում էր նրանց դեմքի վրա։

Այդ սարսափելի որոտի, աղմուկի, լարված ուշադրու-
թյան ու գործունեության հետևանքով՝ Տուշինը ամենա-
նվազ չափով իսկ ահի-երկյուղի տհաճ զգացում չունեի և մրտ-
քովն իսկ չէր անցնում, թե կարող է սպանվել կամ ծանր
վիրավորվել։ Ընդհակառակը, նա հետզհետե ավելի զվարթա-
նում էր։ Նրան թվում էր, թե շատ վաղուց, գուցե հենց երեկ
էր, երբ նկատեց թշնամուն ու կրակեց առաջին անգամ, և թե
այն դաշտամասը, ուր հիմա կանգնած է, վաղուց ծանոթ ու
հարազատ է իրեն։ Չնայած որ ամեն ինչ հիշում էր, ամեն
բան կշտադատում, ամեն բան անում, ինչ կարող էր անել
ամենալավ սպան նրա դրության մեջ, նա գտնվում էր մի վի-

ճակում, որ նման էր տենդագին զառանցանքի կամ հարբած մարդու վիճակի:

Իր թնդանոթների ամեն կողմից արձակող խլացուցիչ ձայնի պատճառով, թշնամու ուղմբերի շաշտունի և հարվածների տակ, տեսնելով թնդանոթների մոտ աշխատող քրտնամխած, կարմրատակած զինվորներին, տեսնելով մարդկանց ու ձիերի արյունը, տեսնելով այն կողմը թշնամու արձակած ժխերը (որոնցից հետո ամեն անգամ ուղմբ էր թռչում ու գալիս խփում գետնին, մարդկանց, թնդանոթներին կամ ձիերին), — ի տես այս բոլորի նրա գլխում ստեղծվել էր մի ֆանտաստիկ աշխարհ, որը նրա հաճույքն էր կազմում այդ ընդհանրին: Թշնամու թնդանոթները նրա երևակայության մեջ թնդանոթներ չէին, այլ ծխամորձեր, որոնցից նոսր քուլաներով ծուխ էր արձակում աներևույթ ծխողը:

— Տես, էլի փստացրեց, — շնչում էր Տուշինն ինքն իրեն, երբ սարից ծխի քուլա էր բարձրանում ու քամուց տարվում գեպի ձախ, — հիմա սպասիր խաղազնդակին:

— Ի՞նչ կհրամայեք, ձերդ ազնվութուն, — հարցրեց ֆեյերվերկերը, որ մոտ կանգնած լինելով՝ լսեց թե ինչ-որ բան է քրթմնջում նա:

— Ոչինչ, ուղմբ... — պատասխանեց նա:

«Հապա, Մատվենա», ասավ ինքն իրեն: Նրա երևակայության մեջ Մատվենան ամենածայրի, հին ձևի թնդանոթն էր: Ֆրանսացիք իրենց թնդանոթների մոտ նրան պատկերանում էին իբրև մրջյուններ: Երկրորդ թնդանոթի համար առաջին գեղեցիկ, հարբեցող զինվորը նրա աշխարհում Բեռլ էր: Տուշինն ամենից շատ նրան էր նայում և հրճվում նրա յուրաքանչյուր շարժումից: Մերթ մարող, մերթ սաստկացող հրացանաձգութունը սարի տակ՝ նրան թվում էր ինչ-որ մեկի շնչառութուն: Ու ականջ էր դնում այդ ձայների մարումին ու բռնկումին:

— Տես, էլի շունչ քաշեց, շունչ քաշեց, — ասում էր նա ինքն իրեն:

Ինքն իրեն պատկերանում էր վիթխարի հասակով, ուժեղ տղամարդ, որ երկու ձեռով ուղմբ է նետում ֆրանսացիների վրա:

— Դե, Մատվենա, սիրելիս, ամոթով չթողնես, — ասավ նա, թնդանոթից հեռանալով, երբ նրա գլխավերևը հնչեց մի օտար անձանոթ ձայն:

— Կապիտա՛ն Տուշին: Կապիտա՛ն:

Տուշինը վախեցած ետ նայեց: Դա այն բարձրակա-սպան էր, որ Գրունտից քշեց իրեն: Նա շնչասպառ ձայնով գոռում էր.

— Այդ ի՞նչ բան է. խենթացե՛լ եք: Երկու անգամ հրամայել են ձեզ նահանջել, իսկ դուք...

«է, ինչո՞ւ համար են ինձ...», մտածեց Տուշինն ինքն իրեն, երկյուղով նայելով սպային:

— Ես... ոչինչ... — ասավ նա, երկու մատը քունքին դրնելով: — Ես...

Բայց գնդապետը շասով բոլորը, ինչ ուզում էր: Մոտիկից անցնող ուղմբն ստիպեց նրան կոանալ ձիու վրա: Նա լռեց, բայց հենց որ ուզեց էլի ինչ-որ բան ասել, մի նոր ուղմբ խանգարեց կրկին: Նա ձիու գլուխը շուռ տվեց ու սրարշավ հեռացավ:

— Նահանջեցեք, բոլորդ նահանջեցեք, — ձայն տվեց նա հեռվից:

Ձինվորները ծիծաղեցին: Մի ընդհանրապես հետո աղյուտանտն եկավ նույն հրամանով:

Դա իշխան Անդրեյն էր: Ուրք դնելով Տուշինի մարտկոցի գրաված տարածութունը՝ նա տեսավ ոտը կոտրած, լծարձակ մի ձի, որ խրխնջում էր լծված ձիերի կողքին: Արյունն աղբյուրի պես գնում էր նրա ոտից: Քարշակների արանքում ընկած էին մի քանի սպանվածներ: Երբ նա մոտենում էր մարտկոցին՝ ուղմբերն իրար ետևից անցնում էին նրա գլխավերևից, և նա զգում էր թե ինչպես մի ներվային դող անցավ մեջքով: Բայց այն միտքը, թե վախենում է, նորից արիություն ներշնչեց նրան: «Ես չպետք է վախենամ», մտածեց նա և դանդաղ իջավ ձիուց՝ հենց թնդանոթների արանքում: Հրամանը հայտնեց ու մնաց: Որոշեց, որ իր ներկայությունը թնդանոթները հանել կտա դիրքից ու կտանի հետը: Եվ Տուշինի հետ, դիակների վրայից լուք տալով, ֆրանսացիների սարսափելի կրակի տակ, զբաղվեց թնդանոթների հավաքուժով:

— Քիչ առաջ մի մեծավոր եկավ ու իսկույն էլ՝ պո՛ւկ, —
ասավ Ֆեյերվերկերը իշխան Անդրեյին, — ձեզ նման չէր սկի,
ձերդ ազնվութիւն:

Իշխան Անդրեյը ոչինչ չխոսեց Տուշինի հետ: Երկուսն էլ
այնքան զբաղված էին, որ, կարծես, իրար չէին տեսնում:
Երբ շորսից անվնաս մնացած երկու թնդանոթը քարշակնե-
րին դրած՝ սկսեցին ցած իջնել, իշխան Անդրեյը մոտեցավ
Տուշինին.

— է, ցտեսութիւն, — ասավ իշխան Անդրեյը, ձեռը Տուշինին
մեկնելով:

— Յտեսութիւն, սիրելիս, — ասավ Տուշինը, — ցտեսու-
թիւն, հոգիս, գնաք բարով, — և չգիտես ինչու աչքերը լքց-
վեցին արցունքով:

XXI

Քամին դադարեց, սև ամպերը կախվեցին ցած՝ ճակա-
տամարտի դաշտի վրա, հորիզոնում ձուլվելով վառողի ծխին:
Մթնում էր, և այդ պատճառով պարզորեն երկու տեղ հրդեհի
բոցեր էին երևում: Թնդանոթաձգութիւնը թուլացավ, բայց
հրացանների ճարճատյունը ետևում և աչ կողմը հաճախանում
էր ու մոտենում: Երբ Տուշինն իր թնդանոթներով կրակի գծից
դուրս եկավ և ձորն իջավ, նրան դիմավորեց վերին հրամա-
նատարութիւնը իր աղյուտանտներով, որոնց թվումն էին
բարձրակա-սպան ու Ժերկովը, որ երկու անգամ ուղարկվել,
բայց ոչ մի անգամ Տուշինի մարտկոցը չէր հասել: Բոլորն,
իրար ընդմիջելով, հրամաններ էին տալիս և հրամաններ էին
հաղորդում, թե ո՛ւր պետք է գնալ, և ի՛նչպես, և հանդիմանու-
թիւններ ու նկատողութիւններ էին անում Տուշինին: Տուշինն
ինքը ոչ ոքի կարգադրութիւն չէր անում և անխոս (նա վա-
խենում էր խոսել, որովհետև, ինքն էլ չգիտեր ինչու, յուրա-
քանչյուր խոսքից պատրաստ էր արտասովել) գնում էր բոլորի
ետևից: Թեև կարգադրված էր վիրավորներին թողնել, բայց
նրանցից շատերը քարշ էին գալիս գործի ետևից և խնդրում
էին տեղ տալ թնդանոթների վրա: Այն քաջարի հետևակ
սպան, որ ճակատամարտից առաջ դուրս վազեց Տուշինի հո-
լիկից, գնդակը փորում, դրվեց Մատվենայի լաֆետի վրա:

Սարի տակ մի գունաթափ հուսարական յունկեր, մի ձեռով
մյուս ձեռը բռնած մոտեցավ Տուշինին և խնդրեց նստել:

— Կապիտան, ի սեր աստծո, ձեռս սալջարդ է եղել, —
ասավ նա ամաչկոտ: — Ի սեր աստծո, քայլել չեմ կարող:
Խնդրում եմ:

Երևում էր, որ այդ յունկերը շատերին էր խնդրել, բայց
ամենքից էլ մերժում էր ստացել: Նա խնդրում էր անհամար-
ձակ ու աղերսագին ձայնով:

— Հրամայեցեք նստեցնել, ի սեր աստծո:

— Նստեցրեք, նստեցրեք, — ասավ Տուշինը: — Շինելը տա-
կը դիր, քեռի, — դարձավ նա իր սիրելի զինվորին: — Իսկ վի-
րավոր սպան ո՛ւր է:

— Ցած դրինք, վախճանվեց, — պատասխանեց մեկը:

— Նստեցրեք: Նստիր, սիրելիս, նստիր: Շինելը փոփր,
Անտոնով:

Յունկերը նիկոլայ Ռոստովն էր: Նա մի ձեռով բռնել էր
մյուս ձեռը, դեմքը գունաթափ էր, ներքին ծնոտը ցնցվում էր
տենդային դողից: Նրան նստեցրին Մատվենայի վրա, հենց
այն իսկ թնդանոթի վրա, որից իջեցրել էին մեռած սպային:
Ռոստովին առաջարկված շինելի վրա արյուն կար, որից նրա
վարտիքն ու ձեռներն արյունոտվեցին:

— Հը, վիրավորված ես, սիրելիս, — ասավ Տուշինը՝ Ռոս-
տովի նստած թնդանոթին մոտենալով:

— Ոչ, սալաջարդ եմ եղել:

— Հապա վարտիքիդ արյունն ինչի՞ց է, — հարցրեց Տու-
շինը:

— էս, ձերդ ազնվութիւն, սպան է արյունոտել, — պա-
տասխանեց թնդանոթաձիգ զինվորը, շինելի թեքով արյունը
սրբելով և կարծես ներողութիւն խնդրելով, որ թնդանոթը
մաքուր չի:

Մի կերպ, հետևակի օգնութեամբ, թնդանոթները սարը
հանեցին և, Գունտերսդորֆ գյուղին հասնելով, կանգ առան:
Արդեն այնպես էր մթնել, որ տասը քայլի վրա զինվորների
համազգեստը դժվար էր ջոկել, հրացանաձգութիւնը երկու
կողմից էլ սկսեց դադարել: Բայց հանկարծ աչ կողմից՝ մոտիկ
նորից աղաղակներ ու կրակոցներ լսվեցին: Եվ կրակոցներն
արդեն փայլում էին մթնում: Դա ֆրանսացիների վերջին հար-

ձակումն էր, որին պատասխանում էին գյուղի տներում պահ-ված մեր զինվորները: Նորից բոլորը փախան գյուղից, բայց Տուշինի թնդանոթները չկարողացան շարժվել, և թնդանոթա-ծիղները, Տուշինն ու յունկերը անխոս իրար էին նայում, սպասելով, թե ի՞նչ է վիճակվելու իրենց: Հրաձգութունը երկու կողմից էլ սկսեց դադարել և կողքի փողոցից դուրս թափ-վեցին աշխուժորեն խոսող զինվորներ:

— Կենդանի՞ ես, Պետրով, — հարցրեց մեկը:

— Այ, լավ ուտեցրինք հա՛, — ասավ մյուսը: — Հիմի էլ չեն գա:

— Էնքան մուժն է, մարդ բան չի տեսնում: Ո՞նց իրար կրակեցին: Էստեղ խմելու բան չկա՞:

Ֆրանսացիք այս վերջին անգամ ևս ետ մղվեցին: Եվ նո-րից, կատարյալ խավարի մեջ, Տուշինի թնդանոթները, խո-սակցող հետևակներով շրջապատված, շարժվեց առաջ:

Մթան մեջ կարծես մի աներևույթ, մոռյլ գետ էր հոսում՝ միշտ միևնույն ուղղությամբ՝ շուկների ու խոսակցության աղմուկով և սմբակների ու անիվների ձայներով: Այս ձայների ընդհանուր ժխորի մեջ, գիշերվա խավարում ամենից ավելի պարզ լավում էին վիրավորների տնքոցն ու հեծեծանքը: Եվ նը-րանց հեծեծանքը, կարծես, լցնում էր գորքին շրջապատող այդ ամբողջ խավարը: Նրանց հեծեծանքը և այդ գիշերվա խա-վարը — միևնույն բանն էր: Որոշ ժամանակի, հետո շարժվող բազմության մեջ իրարանցում առաջացավ: Ինչ-որ մեկը ճերմակ ձիով անցավ շքախմբի հետ և, անցնելիս, ինչ-որ բան ասավ:

— Ի՞նչ ասավ: Ո՞ւր պիտի գնալ հիմա: Կա՞նգ օտնել ար-դյոք: Թե՞ շնորհակալութուն հայտնեց, — լավում էին ազահ հարցուփորձեր այս ու այն կողմից և շարժվող բազմութունն սկսեց ինքն իրեն սեղմել (երևի, առջևից գնացողները կանգ էին առել), և լուր տարածվեց, թե կարգադրված է կանգ առնել: Բոլորը կանգ առան իրենց տեղերում, հենց ճանապարհի ցեխի մեջտեղը:

Կրակներ վառեցին և խոսակցութունը վերսկսվեց: Կա-պիտան Տուշինը, վաշտին կարգադրութուններ անելով, զին-վորներից մեկին ուղարկեց յունկերի համար վիրակապու-

թյան կայան կամ բժիշկ գտնելու, և ինքը նստեց զինվորների վառած խարույկի մոտ: Ռոստովը նույնպես մի կերպ քաշ գալով մոտեցավ կրակին: Ցավից, ցրտից ու խոնավությու-նից առաջացած տենդային դողը ցնցում էր նրա ամբողջ մար-մինը: Քունը տանում էր սաստիկ, բայց ձեռի տանջալի ցա-վից չէր կարողանում քնել: Նա մերթ աչքերը փակում էր, մերթ նայում կրակին, որ նրան թվում էր վառ-կարմիր, մերթ էլ գետնին ծալապատիկ նստած փոքրամարմին Տուշինին, որի բարի ու խելացի աչքերը համակրանքով ու կարեկցու-թյամբ դառնում էին իրեն: Ռոստովը նկատում էր, որ Տու-շինն ամբողջ սրտով ցանկանում, բայց և ոչ մի բանով չէր կարողանում օգնել իրեն:

Ամեն կողմից լավում էին մոտեցող, հեռացող և նրանց շուրջը տեղավորվող հետևակների քայլերը, խոսակցությու-նը: Եվ խոսակցության, քայլերի ու ցեխի մեջ խրվող ձիերի սմբակների ձայները, և հեռվից ու մոտիկից լավող փախտերի ճարճատյունը խառնվում էին մի ընդհանուր, երերուն ժխորի մեջ:

Այժմ արդեն, առաջվա պես, խավարի մեջ աներևույթ գետը չէր հոսում, այլ փոթորկից հետո, կարծես, հանդարտում և դողում էր մի մոռյլ ծով: Ռոստովն անգիտակցաբար նայում ու ակնաչ էր դնում, թե ինչ է կատարվում իր առջևն ու իր շուրջը: Մի հետևակ զինվոր մոտեցավ խարույկին, պպզեց, ձեռները մեկնեց կրակին ու երեսը շրջեց:

— Կարելի՞ է, ձերդ ազնվութուն, — ասավ նա, հարցա-կանորեն դառնալով Տուշինին: — Վաշտս կորցրել եմ, ձերդ ազնվութուն, չգիտեմ որտեղ է:

Զինվորի հետ միասին խարույկին մոտեցավ երեսը կա-պած մի հետևակ սպա և, Տուշինին դառնալով, խնդրեց կար-գադրել, որ թնդանոթը տեղից շարժեն մի քիչ, որպեսզի սայլը անցկացնեն: Վաշտային հրամանատարի ետևից խարույկի մոտ վազեցին երկու զինվոր: Նրանք կատաղած հայհոյում ու կռվում էին, իրար ձեռից մի զույգ կոշիկ քաշեղելով:

— Ո՞նց թե՛ դու վերցրիր: Տես ճլա, սրան տես, — պոռում էր մեկը խուպուտ ձայնով:

Հետո մոտեցավ նիհար, վիզն արյունոտ փաթաթանով

կապած մի գինվոր և բարկացած ձայնով ջուր պահանջեց թըն-
դանութեանդնրից:

— Ի՞նչ ա, շան պես պիտի սատկե՞նք էստեղ, — ասավ
նա:

Տուշինը հրամայեց ջուր տալ նրան:

Ապա վազելավազ մոտեցավ մի ուրախ գինվոր և կրակ խընդ-
րեց հետևակի համար՝ խարույկ վառելու:

— Մի թեժ կրակ եմ ուզում: Ծեն մնաք, հայրենակիցներ,
շնորհակալ եմ կրակի համար, տոկոսներով կվերադարձնենք, —
ասավ նա, մթան մեջ բոցավառ խանձողն ուր-որ տանելով:

Այն գինվորի ետևից խարույկի կողքով անցան շորս գին-
վոր, շինելի մեջ ինչ-որ ծանրութիւն տանելով: Նրանցից
մեկը սայթաքեց:

— Տես, գրողի տարածները ճամփի վրա փետ են գցել, —
փնթփնթաց նա:

— Մեռավ, էլ ո՛ւր ենք տանում որ, — ասավ նրանցից
մեկը:

— է՛, ձեր էլ:

Եվ նրանք իրենց բեռի հետ շքացան խավարում:

— Հը՞, ցավո՞ւմ է, — շշուկով հարցրեց Տուշինն Ռոս-
տովին:

— Ցավում է:

— Ձերդ ազնվութիւն, գեներալը կանչում է: էստեղ
խրճիթումն է, — ասավ Փեյերովերկերը, Տուշինին մոտենա-
լով:

— Իսկույն, սիրելիս:

Տուշինը վեր կացավ և, շինելը կոճկելով ու իրեն կարգի
բերելով, հեռացավ խարույկից...

Թնդանութեանդնրի խարույկից քիչ հեռու, իր համար
պատրաստած խրճիթում, Բագրատիոնը նստած ճաշում էր
ու խոսակցում մոտը հավաքված մի քանի զորապետների
հետ: Այդտեղ էր կիսափակ աչքերով ծերուկը, որ ազահաբար
ոչխարի մի ոսկոր էր կրծում, և քսաներկու տարվա անբիծ
գեներալը՝ խմած օղուց և ճաշից կարմրատակած, և բարձ-
րակա-սպան՝ իր անվանատառերը վրան փորագրած մատա-
նիով, և Ժերկովը, որ անհանգիստ նայում էր բոբորին, և իշխան
Անդրեյը՝ շուրթերը տեղմած, տենդապին փայլող աչքերով:

Խրճիթի անկյունում դրված էր Ֆրանսացիներին անված
գրողակը. դատական աստիճանավորը պարզամիտ դեմքով
շոշափում էր գրողակի գործվածքն ու գլուխը շարժում տա-
րակուսած, թերևս այն պատճառով, որ գրողակն իրոք հետա-
քրքրում էր նրան, գուցե և այն պատճառով, որ ծանր էր քաղ-
ցած փորով նայել ճաշին, որից նրան բաժին չէր հասել: Հարե-
վան խրճիթումն էր գտնվում դրագոնների կողմից գերի
վերցված Ֆրանսացի գնդապետը: Նրա շուրջը, նրան նայելու
համար, խմբվել էին մեր սպաները: Իշխան Բագրատիոնը
շնորհակալութիւն էր հայտնում առանձին զորապետների ու
հարցուփորձում կովի մանրամասնութիւնների և կորուստ-
ների մասին: Բրաունաուտի մոտ Կուստուզովին ներկայացող
գնդի հրամանատարը զեկուցում էր իշխանին, թե հենց որ կը-
ռիվն սկսվեց, ինքը նահանջեց անտառից, հավաքեց փայտա-
հատ գինվորներին և, դրանց ետ ուղարկելով, երկու գումար-
տակով սվինամարտի գնաց ու ետ մղեց Ֆրանսացիներին:

— Հենց տեսա թե չէ, ձերդ պայծառափայլութիւն, որ
առաջին գումարտակը քայքայված է, կանգնեցի ճանապար-
հին ու մտածում եմ՝ ըստանց կթողնեմ ու անընդհատ կրակով՝
կղիմավորեմ թշնամուն»։ այդպես էլ արի:

Գնդի հրամանատարն այնպես էր փափագում այդ բանն
անել, այնպես ցավում էր, որ չէր կարողացել այդ անել, որ
նրան թվում էր, թե այդ բոլորն իրոք եղել է: Գուցե, իսկապես,
և եղե՞լ էր: Հնարավո՞ր էր միթե այս խառնաշփոթութեան մեջ
չոկել թե ինչ է եղել, ինչ չի եղել:

— Այս էլ պետք է նկատեմ, ձերդ պայծառափայլութիւն, —
շարունակեց նա, հիշելով Դոլոխովի խոսակցութիւնը Կու-
ստուզովի հետ և թե ինչպես վերջին անգամ ինքը տեսավ այդ
Դոլոխովին, — որ աստիճանազուրկ, շարքային Դոլոխովը իմ
աչքի առաջ գերի վերցրեց մի Ֆրանսացի սպա և առանձնապես
աչքի ընկավ:

— Հենց այդտեղ էլ ես, ձերդ պայծառափայլութիւն,
տեսա պավլոգրադցիների հարձակումը, — անհանգիստ շուրջը
նայելով՝ խոսակցութեանը միջամտեց Ժերկովը, որ այդ օրը
բնավ էլ հուսարներին չէր տեսել, այլ նրանց մասին լսել էր
միայն հետևակ սպայից: — Երկու կառք շարդեցին, ձերդ
պայծառափայլութիւն:

Ժերկովի խոսքերի վրա մի քանիսը ժպտացին, ինչպես միշտ նրանից կատակներ սպասելով. բայց նկատելով, որ նրա խոսքը նույնպես վերաբերում է մեր գեների և այսօրվան փառաբանության, լուրջ կերպարանք ընդունեցին, թեև շատերը հիանալի գիտեին, որ Ժերկովի ասածը անհիմն սուտ է: Իշխան Բագրատիոնը դարձավ ծերուկ-գնդապետին:

— Բոլորիցդ էլ՝ շնորհակալ եմ, պարոնայք. բոլոր զորամասերն էլ՝ հետևակը, հեծելազորը, հրետանին՝ կովել են հերոսաբար: Ինչպե՞ս է պատահել, որ կենտրոնում երկու թնդանոթ է մնացել, — աչքերով ինչ-որ մեկին որոնելով ասավ նա: (Իշխան Բագրատիոնը ձախ թևի թնդանոթների մասին չէր հարցնում. գիտեր արդեն, որ կովի հենց սկզբում դրանք բոլորը թողնվել էին): — Ես ձեզ, կարծեմ, խնդրեցի, — դարձավ նա հերթապահ բարձրակա-սպային:

— Մեկը վնասվել էր, — պատասխանեց հերթապահ բարձրակա-սպան, — մյուսը՝ չգիտեմ իսկապես. ես ինքս շարունակ այնտեղ էի և կարգադրություններ էի անում և հեռացա թե չէ... Կոիվը տաք էր, ճիշտ է, — ավելացրեց նա համեստորեն:

Մեկը հայտնեց, թե կապիտան Տուշինն այստեղ հենց գյուղի մոտ է, և թե նրա հետևից արդեն մարդ է ուղարկված:

— Հա, դուք էլ այնտեղ եղել եք, — ասավ իշխան Բագրատիոնը, դիմելով իշխան Անդրեյին:

— Բայց ինչպես է որ իրար չենք հանդիպել, — ասավ հերթապահ բարձրակա-սպան, հաճելիորեն Բալկոնսկուն ժրպտալով:

— Ես ձեզ տեսնելու բախտը չեմ ունեցել, — սառն ու կրտրուկ պատասխանեց իշխան Անդրեյը:

Բոլորը լռեցին: Ծեմքին երևաց Տուշինը, որ ամաչկոտ առաջ էր գալիս գեներալների ետևից: Ինչպես միշտ, իշխանությանը ներկայանալիս՝ նա շփոթված անցավ նեղ խրճիթում գտնվող գեներալների ետևից և, դրոշակի կոթը շտեմելով, ոտը դիպցրեց նրան ու քիչ մնաց ընկներ: Մի քանի հոգի ծիծաղեցին:

— Ի՞նչպես է եղել, որ թնդանոթները թողել եք, — հարցրեց Բագրատիոնը հոնքերը կիտելով ոչ ախքառն կապիտանի վրա, որքան ծիծաղողների, որոնց մեջ ամենից բարձր լավում էր Ժերկովի ձայնը:

Տուշինին այժմ միայն, իր ահեղ իշխանավորի առաջ, պատկերացավ իր հանցանքի ու խայտառակության բովանդակ սարսափը, որ ինքը, ողջ մնալով, երկու թնդանոթ է կորցրել: Նա այնքան հուզված էր, որ մինչև այս վայրկյանը չէր կարողացել այդ մասին մտածել: Սպաների ծիծաղն ավելի ևս շփոթեցրեց նրան: Բագրատիոնի առջև կանգնած՝ նրա ներքին ծնոտը դողում էր, և հազիվ կարողացավ ասել:

— Զգիտեմ... ձերդ պայծառափայլություն... մարդիկ չըկային, ձերդ պայծառափայլություն:

— Կարո՞ղ էիք պաշտպան զորամասից վերցնել:

Որ պաշտպան զորամաս չկար, այդ Տուշինը շասավ, թեև դա զուտ ճշմարտություն էր: Նա վախենում էր դրանով անհարմար դրության մեջ դնել մի ուրիշ զորապետի և անխոս, անշարժ աչքերով նայում էր ուղիղ Բագրատիոնի դեմքին, ինչպես նայում է շփոթվող աշակերտը քննողի աչքերին:

Լուռությամբ բավական երկար տևեց: Իշխան Բագրատիոնն, ըստ երևույթի, չցանկանալով խիստ լինել, չէր իմանում թե՞ ոչ ասի. մյուսները չէին համարձակվում միջամտել խոսակցության: Իշխան Անդրեյը հոնքերի տակից նայում էր Տուշինին, և նրա մատները շարժվում էին ջղաձգորեն:

— Ձերդ պայծառափայլություն, — խզեց իշխան Անդրեյը լուռություն իր կտրուկ ձայնով, — դուք հաճեցիք ինձ ուղարկել կապիտան Տուշինի մարտկոցը: Գնացի և տեսա զինվորների ու ձիերի երկու երրորդ մասը սպանված, երկու թնդանոթը ջարդված, և ոչ մի պաշտպան զորամաս:

Իշխան Բագրատիոնն ու Տուշինը միատեսակ սևեռուն հայացքով նայում էին այժմ զսպված ու հուզված խոսող Բալկոնսկուն:

— Եվ եթե, ձերդ պայծառափայլություն, թույլ կտաք ինձ կարծիքս հայտնելու, — շարունակեց նա, — այսօրվա հաշուդությամբ մենք պարտական ենք ավելի այդ մարտկոցի գործողության և կապիտան Տուշինի ու նրա վաշտի հերոսական դիմադրության, — ասավ իշխան Անդրեյը և, պատասխանը չսպասելով, անմիջապես վեր կացավ ու հեռացավ սեղանից:

Իշխան Բագրատիոնը նայեց Տուշինին և, ըստ երևույթի, չցանկանալով անվստահություն ցույց տալ դեպի Բալկոնսկու կտրուկ եզրակացությունը և, դրա հետ միաժամանակ

զգալով, որ անկարող է շիտիկն հավատալ նրան, գլուխն իրեց-
րեց և Տուշինին ասավ, թե կարող է գնալ: Իշխան Անդրեյը
գուրա եկավ: նրա ետևից:

— Այ, շնորհակալ եմ. փրկեցիր, սիրելիս, — ասավ Տուշինը
նրան:

Իշխան Անդրեյը նայեց Տուշինին և, բան չասելով, հեռա-
ցավ գնաց: Նա Երևան էր ու ծանր խոհերով պաշարված: Այդ
բուրդն այնքան արտառոց էին, և այնքան հեռու իր սպասա-
ծից:

«Ուրեք երեք են սրանք: Ի՞նչ գործ ունեն այստեղ: Ինչի՞ են
սպասում: Եվ ե՞րբ պիտի վերջանա այս բոլորը», մտածում էր
Ռոստովը, նայելով առջևը փոփոխվող ստվերներին: Ջեռի ցավը
բանի գնում: տանջալից էր դառնում: Քունը տանում էր սաս-
տիկ, աչքերի առաջ կարմիր շրջանակներ էին դառնում, և այդ
ձայներն ու դիմքերի տպավորությունը և մենակության զգա-
ցումը խառնվում էր Ֆիզիկական ցավի հետ: Այդ նրանք են,
այդ վիրավոր ու ոչ վիրավոր զինվորները, որ տրորում, ձգ-
ձգում-քաշում են իր ջարդված ձեռի և ուսի ջղերն ու այրում
միսը: Եվ նրանցից ազատվելու համար՝ նա աչքերը փակեց:

Նա ինքնամոտացություն մեջ ընկավ մի րոպե, և այդ կարճ
ժամանակամիջոցում երազում տեսավ բազմաթիվ բաներ. տե-
սավ մորը և նրա խոշոր սպիտակ ձեռը, տեսավ Սոնյայի նի-
հարիկ ուսերը, Նատաշայի աչքերն ու ձիծաղը, և Դենիսովիկն՝
իր ձայնով ու բեղերով, և Տելյանինին, և իր ամբողջ պատմու-
թյունը՝ Տելյանինի ու Բոգդանիչի հետ: Այդ ամբողջ պատմու-
թյունը միևնույն բանն էր, ինչ որ սուր ձայնով այս զինվորը-
թե այդ պատմութենանը և թե այս զինվորը տանջում, ճնշում
և շարունակ մի կողմ էին ձգում իր ձեռը: Նա ուզում էր ազատ-
վել դրանցից, բայց նրանք ոչ մի վայրկյան չէին թողնում իր
ուսը: Ուսը չէր ցավի, նա առողջ կլիներ, եթե դրանք չձգեին:
Բայց դրանցից ազատվել անկարելի էր:

Նա աչքերը բաց արավ ու վեր նայեց: Գիշերվա սև վարա-
զույրը կախվել էր: Երևանում խարույկի վրա: Կրակի լույսերի
մեջ թռչկոտում էին իրենց ձյունի փաթիլները: Տուշինը չը-
վերադարձավ: բռնվել շեկավ: Նա մնացել էր մենակ, միայն մի

փոքրիկ զինվոր մերկ նստել էր այժմ կրակի այն կողմն ու
տաքացնում էր իր նիհար, դեղին մարմինը:

«Ոչ մեկին էլ պետք չեմ ես, — մտածում էր Ռոստովը: —
Չկա մեկը, որ օգնի, խղճա: Բայց չէ՞ որ մի ժամանակ ես էլ
եղել եմ տան, ընտանիքի մեջ. եղել եմ ուժեղ, ուրախ-զվարթ,
սիրված»:

Նա հոգոց քաշեց ու հոգոցի հետ միասին տնքաց ակամա:
— Ո՞վ գիտի մի տեղդ ցավում ա, — հարցրեց փոքրիկ
զինվորը, շապիկը կրակի վրա թափ տալով, և, սլառասխանի
չպասելով, ավելացրեց. — էսօր բլիշ ժողովուրդ չփչացրին,
է՞հ:

Ռոստովը զինվորին չէր լսում: Նա նայում էր կրակից վեր
ձյունի թռչկոտող փաթիլներին և հիշում ուսական ձմեռը իր
տաք, լուսավոր տներով, մորթե մուշտակներով, սրբն թաց
սահնակով, առողջ մարմնով և ընտանիքի սիրով ու հոգացո-
ղությամբ: Եվ ես ինչու համար եկա այստեղ», մտածում էր
նա:

Մյուս օրը Ֆրանսացիք հարձակումը շնորոգեցին, և Բագ-
րատիոնի զորաբաժնի մնացորդը միացավ Կուտուզովի բա-
նակին:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

I

Իշխան Վասիլին իր ծրագիրները չէր կշռադատում: Ավելի ևս քիչ էր մտածում ուրիշներին վատութիւնն անել, որպէսզի ինքը շահվի: Նա պարզապէս բարձր շրջանի մարդ էր, այդ շրջանում հաջողութիւնն ունեցած և այդ հաջողութիւնից որոշ սովորութիւնն ձեռք բերած: Նայած հանգամանքներին ու հանդիպած մարդկանց՝ նա շարունակ ծրագիրներ էր կազմում ու խորհուրդներ հղում, որոնց մասին այնքան էլ լավ հաշիվ չէր տալիս իրեն, բայց որոնք սակայն կազմում էին նրա կյանքի ամբողջ հետաքրքրութիւնը: Նա մի կամ երկու այդպիսի ծրագիր չունէր, այլ տասնյակներ, որոնցից մի քանիսը նոր միայն սկսում էին պատկերանալ նրան, մյուսներն իրագործվում էին, մնացյալները ոչնչանում-չքանում էին: Պրինսակ, նա ինքն իրեն չէր ասում. «Այս մարդը հիմա դիրքի տեր է, ուժ ունի, աշխատեմ ձեռք բերել նրա վստահութիւնն ու բարեկամութիւնը և նրա միջոցով միանվագ նպաստ հաջողեցնեմ ինձ համար»: Կամ չէր ասում՝ թե «Ահա վասիլ Պիեռը հարուստ մարդ է, աշխատեմ գրավել նրան՝ որ աղջկաս հետ ամուսնանա և ինձ հարկավոր քառասուն հազարի փոխ վերցնեմ»: Բայց դիրքի տեր մարդը նրան հանդիպում էր թե չէ, նույն բոպին բնագոյր թելադրում էր նրան, թե այս մարդը կարող է օգտակար լինել, և իշխան Վասիլին մտերմանում էր նրան և առաջին իսկ հնարավորութիւնի դեպքում, առանց նախապատրաստութեան, բնազդով, շողորթում էր, մտերմանում, և ասում այն, ինչ պետք էր:

«Եվ ահա Մոսկվայում Պիեռին հանդիպելով՝ իշխան Վասիլին նրա համար հաջողեցրեց կամեր-յունկերի աստիճան, ինչ որ այն ժամանակ հավասար էր պետական խորհրդականի աստիճանի ու պնդեց-պահանջեց, որ երիտասարդն իր հետ մեկնի Պետերբուրգ և իջևանի իր տանը: Կարծես թե ցրված և դրա հետ միաժամանակ մի հաստատ վստահութեամբ, թե այդպէս էլ պիտի լինի, իշխան Վասիլին գործադրում էր բոլոր հարկավոր միջոցները, որ Պիեռին ամուսնացնի իր աղջկա հետ: Եթե իշխան Վասիլին առաջուց կշռադատեր իր ծրագրերը, նա չէր կարող իրենից բարձր և ցածր դիրք ունեցող մարդկանց հետ վարվել այդպէս բնականորեն, այդպէս պարզ և մտերմաբար: Նրան շարունակ ինչ-որ մի բան քաշում էր դեպի իրենից բարձր դիրք ունեցող ու հարուստ մարդիկ, և նա օժտված էր մի հազվագյուտ ճարտարութեամբ, որով կարողանում էր որսալ ճիշտ այն վայրկյանը, երբ պետք էր և կարելի էր օգտվել մարդկանցից:

Պիեռն, անսպասելի հարուստ մարդ և կոմս Բեզուխով դառնալով, իր առաջվա մենակ ու անհոգ կյանքից հետո, իրեն այն աստիճան շրջապատված ու զբաղված զգաց, որ միայն անկողնում էր կարողանում ինքն իր հետ լինել: Նա պետք է թղթեր ստորագրեր, ատյաններ գնար, որոնց դերի ու նշանակութեան մասին պարզ հասկացողութիւն չունէր, գլխավոր կառավարչից ինչ-որ բան պիտի հարցներ, պետք է գնար Մոսկվայի մոտի կալվածները և ընդունէր բազմաթիվ մարդկանց, որոնք առաջ չէին էլ ուզում նրա գոյութիւնն ընդունել, իսկ հիմա կվիրավորվեին ու կվշտանային, եթե ինքը շցանկանար նրանց տեսնել: Բոլոր այս բազմազան մարդիկ — ազգականներ, ծանոթներ, պաշտոնյաներ — բոլորը միատեսակ լավ, սիրալիք էին տրամադրված երիտասարդ ժառանգի վերաբերմամբ. բոլորը, հավանորեն և անկասկած, համոզված էին, որ Պիեռը բարձր արժանիքներ ունի: Եվ Պիեռը շարունակ այսպիսի խոսքեր էր լսում. «Ձեր շտեմնված բարութեամբ կամ ռուբ լավ սրտի տեր լինելով», կամ «դուք ինքներդ այնքան մաքուր եք, կոմս»... կամ «եթե նա այնքան խելացի լիներ, որքան դուք» և այլն, այնպէս որ ինքն էլ սկսեց հավատալ իր շտեմնված բարութեան ու արտակարգ խելքին. մանավանդ որ, միշտ էլ, սրտի խորքում նրան թվում էր, թե ինքն

իրոք շատ բարի է և շատ խելացի: Մինչև իսկ առաջվա շար և թշնամարար տրամադրված մարդիկ հիմա հետք մեզմ էին ու սիրալիր: Այնքան բարկացկոտ, երկարիրուն ու տիկնիկի պես հարթ մազերով մեծ իշխանադուստրը, թաղումից հետո Պիեռի սենյակն եկավ: Աչքերը ցած խոնարհած և շարունակ հուզվելով, նա ասավ, թե շատ է ցավում իրենց միջև տեղի ունեցած թլուրիմացությունների համար և այժմ իրեն իրավունք չի համարում որևէ բան խնդրելու, բացի այն, որ իրեն թուլլատրվի, այս ծանր հարվածից հետո, մի քանի շաբաթ մնալ այս տանը, որն այնքան էր սիրում նա և ուր այնքան զոհողություններ է արել: Նա չկարողացավ իրեն պահել ու այս խոսքերն արտասանելիս լաց եղավ: Զգացված, որ արձանանման իշխանադուստրը կարող է այդպես փոխվել, Պիեռը բռնեց նրա ձեռքը և ներողություն խնդրեց, ինքն էլ շիմանալով ինչու համար: Այդ օրվանից իշխանադուստրն սկսեց մի շերտավոր շարՖ գործել Պիեռի համար և միանգամայն փոխվեց նրա հանգիստ:

— Այս բանն արա նրա համար, mon cher, այնուամենայնիվ նա շատ է տանջվել հանգուցյալի ձեռքին, — ասավ իշխան Վասիլին, Պիեռին առաջարկելով մի ինչ-որ թուլթ ստորագրել հօգուտ իշխանադուստրի:

Իշխան Վասիլին վճռել էր այսուամենայնիվ այդ ոսկորը՝ երեսուն հազարի մուրհակը՝ նետել խեղճ իշխանադուստր, որ նա էլ չկարողանա խոսել, թե իշխան Վասիլին ինչ մասնակցություն ունեցավ ծաղկավոր պորտֆելի գործում: Պիեռն ստորագրեց մուրհակը, և այդ օրվանից իշխանադուստրն էլ ավելի բարի դարձավ: Փոքր քույրերը նույնպես շատ սիրալիր էին դեպի նա, մանավանդ կրտսերը, լավիկը, խալավորը, հաճախ շփոթություն էր պատճառում Պիեռին իր ժպիտներից և Պիեռին հանդիպելիս մի տեսակ էր լինում:

Պիեռին այնպես բնական էր թվում, որ բոլորը սիրում են իրեն և այնպես անբնական կթվար, եթե մեկը չսիրեր իրեն, որ էլ չէր կարող իրեն շրջապատողներին անկեղծությանը չբնավատալ: Ասեմք ժամանակ էլ շունք այդ մարդկանց անկեղծ կամ կեղծ լինելու մասին մտածելու: Նա շարունակ զբաղված էր և շարունակ իրեն զգում էր մի հեզ ու զվաթթ արբեցություններից: Նա զգում էր, որ ինքը մի կարևոր ընդհանուր շարժ-

ման կենտրոն է. զգում էր, որ իրենից շարունակ ինչ-որ բան է սպասվում. և եթե այս բանը չանի՝ շատերին կվշտացնի ու կզրկի իրենց սպասելիքից, իսկ եթե այս, այս բաներն անի, ամեն ինչ լավ կլինի, — ու անում էր այն, ինչ պահանջում էին, բայց այդ ինչ-որ լավը դեռ մնում էր հետագային:

Այս առաջին շրջանում, բոլորից ավելի, թե Պիեռի գործերին և թե իրեն Պիեռին տիրեց իշխան Վասիլին: Կոմս Բեգուլ-խովի մահից ի վեր՝ նա Պիեռին բաց չէր թողնում իր ձեռքից: Իշխան Վասիլին ուներ մի մարդու տեսք, որ թեև ծանրաբեռնված է գործերով, հոգնած է, տանջված, բայց կարեկցություն ունի ի կարող, վերջապես, բախտի ու խորամանկ խաբեբանից չի կարող, վերջապես, բախտի ու խորամանկ խաբեբանների քմահաճույթին թողնել անօգ-անպաշտպան պատանու, իր բարեկամի որդուն, après tout¹, այն էլ մի այդպիսի հսկայական կարողություն: Այն մի քանի օրը, որ կոմս Բեգուլ-խովի մահից հետո մնաց Մոսկվայում, նա Պիեռին կանչում էր իր մոտ կամ ինքն էր գնում նրա սենյակը և հրահանգներ տալիս, թե ի՞նչ պետք է անել, հոգնածություն ու վատահոլության մի այնպիսի տոնով. որ ամեն անգամ կարծես ասե՛լիս լիներ.

«Vous savez, que je suis accablé d'affaires et que ce n'est que par pure charité, que je m'occupe de vous, et puis vous savez bien que ce que je vous propose est la seule chose faisable»²

— է, բարեկամս, վաղը մեկնում ենք, վերջապես, — ասավ նա մի անգամ, աչքերը փակելով, Պիեռի արմունկը բռնելով և մի այնպիսի տոնով, կարծես այն, ինչ ասում էր, իրենց մեջ վաղուց ի վեր վճռված բան է և այլ կերպ էլ չէր կարող վճռված լինել: — Վաղը մեկնում ենք. դու նստում ես իմ կառքում: Շատ ուրախ եմ: Այստեղ բոլոր կարևոր բաները վերջացրինք: Ես վաղուց պետք է մեկնեի: Ահա կանցլերից եմ ստացել: Ես նրան խնդրել էի քեզ պաշտոն տալ, և հաճախանալիքս ես արդեն դիմանազիտական կորպուսը և ստացել ես փամեթ-յունեկերի աստիճան: Այժմ դիմանազիտության ճամփան քոց է տղերդ:

¹ Կերչ ի վերջո:

² Ի՞նչու, գործերի մեջ խրված եմ. բայց անխղճություն կլինի քեզ թողնել այդպես. պարզ է, ինչ առաջարկում եմ քեզ, դա միակ հնարավոր քանն է:

Չնայած այդ խոսքերն ասվեցին հոգնածութեան և աներկ-
բայութեան հաստատուն տոնով, Պիեռը, որ այնքան մտածել
էր իր կարիքերայի մասին, ուզեց առարկել: Բայց իշխան Վա-
սիլին նրա խոսքը կտրեց իր թափ ձայնով, որը թույլ չէր տա-
լիս իր խոսքն ընդհատելու և որը նա գործ էր ածում խոսակցին
վերջնականապես համոզելու համար:

— Mais, mon cher¹, ես այդ արել եմ ինձ համար, խիղճս
հանգստացնելու համար, և ինձ շնորհակալություն հայտնելու
հարկ չկա: Երբեք ոչ ոք չի դժգոհել, որ իրեն շատ են սիրում.
և հետո, դու ազատ ես, թեկուզ վաղը թո՛ղ հեռացիր: Բայց
դու ինքդ բոլորը Պետերբուրգում կտեսնես: Եվ վաղուց ժամա-
նակն է, որ հեռանաս այս սարսափելի հիշողութիւններին: —
Իշխան Վասիլին հոգոց քաշեց: — Այդպես, հոգիս... Իսկ իմ
սենեկապահը թող քո կտոքով գնա: Ա՛, քիչ մնաց մոռանայի, —
ավելացրեց դարձյալ իշխան Վասիլին, — գիտես, mon cher,
որ հանգուցայի հետ հաշիվներ ունեի. ուրեմն ես Ռյազանից
ստացա և մնում է ինձ մոտ. քեզ հարկավոր չի: Մենք հաշիվ
կտեսնենք:

Այն, ինչ իշխան Վասիլին անվանում էր «Ռյազանից»՝
մի քանի հազար կալվածահարկ էր, որ մնացել էր մոտը:

Պետերբուրգում էլ, ինչպես Մոսկվայում, Պիեռին շրջա-
պատեց քնքշալի, սիրագորով մարդկանց մթնոլորտը: Նա շը-
կարողացավ հրաժարվել այն պաշտոնից կամ, ավելի շուտ,
կոչումից (որովհետև նա ոչինչ չէր անում), որ հաջողեցրել էր
նրա համար իշխան Վասիլին, իսկ ծանոթութիւնները, հրա-
վերներն ու հանրային զբաղումներն այնքան շատ էին, որ
Պիեռին ավելի ևս, քան Մոսկվայում, համակել էր անորոշու-
թեան, փութկոտութեան և շարունակ մոտեցող, բայց չիրա-
կանացող ինչ-որ երջանիկ ակնկալութեան զգացումը:

Իր նախկին, ամուրի ընկերներից շատերը Պետերբուր-
գում չէին: Գվարդիան գնացել էր կոիվ, Դոլոխովն աստիճա-
նագործ էր արվել, Անատոլը բանակումն էր, գավառում,
իշխան Անդրեյը արտասահմանում, ուստի և Պիեռին չհաջող-
վեց իր սիրած ձևով գիշերներ լուսացնել, ոչ էլ մի սրտագին
զրույց ունենալ իր հարգելի ավագ բարեկամի հետ: Նրա ամ-

բողջ ժամանակն անցնում էր ճաշկերույթներում, պարահան-
դեսներում և առավելապես իշխան Վասիլի տանը — գիրուկ
իշխանուհու՝ իշխանի կնոջ, և գեղեցկուհի էլենի շրջանում:

Աննա Պավլովնա Շերերը ևս, ուրիշների նման, ցույց տվեց
Պիեռին այն փոփոխութիւնը, որ տեղի էր ունեցել հասարա-
կութեան մեջ նրա նկատմամբ:

Պիեռն առաջ, Աննա Պավլովնայի ներկայութեամբ, շարու-
նակ գգում էր, թե այն, ինչ ինքն ասում է — անքաղաքավարի
է, անտակտ, մի խոսքով այն չի, ինչ պետք է. զգում էր, որ
իր խոսքերն իրեն թվում էին խելացի, քանի դեռ պատրաս-
տում էր մտքում, բայց հիմարանում էին, հենց որ ասում էր
բարձրաձայն և որ, ընդհակառակը, Իպպոլիտի ամենաբուժ
խոսքերը դառնում էին խելացի ու դուրեկան: Իսկ այժմ, ինչ
ասում էր, բոլորը դառնում էին charmant¹: Եթե մինչև իսկ
Աննա Պավլովնան այդ չէր էլ ասում, Պիեռը նկատում էր, որ
ցանկանում է այդ ասել, և միայն իր՝ Պիեռի համեստութիւնը
հարգելով՝ զսպում է իրեն:

1805—1806 ձմռան սկիզբը Պիեռը Աննա Պավլովնայից
ստացավ սովորական վարդագույն հրավիրատուսը, որի վեր-
ջում ավելացված էր. «Vous trouverez chez moi la belle
Hélène, qu'on ne se lasse jamais de voir»².

Այս բառերը կարդալով՝ Պիեռն առաջին անգամ զգաց, որ
իր և էլենի միջև ստեղծվել է մի ինչ-որ կապ, որ ուրիշներն էլ
ընդունում են, և այդ միտքը միաժամանակ թե՛ վախեցրեց
նրան, — կարծես նրա վրա դրվում էր մի պարտավորութիւն,
որն ինքը չի կարող կատարել, — և թե՛ դուր եկավ նրան, որ-
պես զվարճալի են թաղորդութիւնը:

Աննա Պավլովնայի երկույթը նույնն էր, ինչ որ առաջի-
նը, միայն նորութիւնը, որով Աննա Պավլովնան պատվեց իր
հյուրերին, այժմ ոչ թե Մորտեմարն էր, այլ մի դիվանագետ,
որ եկել էր Բեռլինից և ամենաթարմ մանրամասնութիւններ
էր բերել Ալեքսանդր թագավորի Պոտոզամ լինելու մասին և
այն մասին, թե ինչպես երկու վեհափառ բարեկամներ երդվել
են այնտեղ անքակտելի միաբանութեամբ պաշտպանել ար-

¹ Բայց, սիրելիս:

¹ Սքանչելի:

² Ինձ մոտ է լինելու գեղեցկուհի էլենը, որին նայելուց չես կշտանա:

դար դատն ընդդեմ մարդկային ցեղի թշնամու: Աննա Պավլով-
նան Պիեռին ընդունեց մի թեթև տխրությամբ, որ վերաբերում
էր, հավանորեն, երիտասարդին հասած դժբախտության —
կոմս Բեզուխովի մահվան (բոլորը շարունակ իրենց պարտքն
էին համարում հավատացնել Պիեռին, թե նա շատ է վշտացած
հոր մահով, որին նա համարյա չէր ճանաչում), — Աննա Պավ-
լովնայի այդ տխրությունը նման էր այն տխրության, որ երևան
էր գալիս նրա դեմքին օգոստափառ կայսրուհի Մարիա Ֆեո-
դորովնայի անունը հիշատակելիս: Գրանից Պիեռն իրեն շոյ-
ված զգաց: Աննա Պավլովնան իր սովորական ճարտարու-
թյամբ խմբեր կազմեց հյուրասրահում: Առաջին մեծ խումբը,
ուր գտնվում էին իշխան Վասիլին ու գեներալները, վայելում
էր դիվանագետի ներկայությունը: Մյուս խումբը հավաքվել էր
թեյի սեղանի շուրջը: Պիեռն ուզում էր միանալ առաջին խում-
բին, բայց Աննա Պավլովնան (ուզմադաշտում գտնվող գո-
րավարի գրգռված վիճակում լինելով, երբ մարդու գլուխ հա-
զարավոր նոր փայլուն մտքեր են գալիս, որոնք հազիվ են կա-
րողանում ի կատար ածել), Պիեռին տեսնելով մատը դիպցը-
րեց նրա թևքին:

— Attendez, j'ai des vus sur vous pour ce soir¹. —
Աննա Պավլովնան նայեց էլենին ու ժպտաց: — Ma bonne
Hélène, il faut, que vous soyez charitable pour ma pauvre
tante, qui a une adoration pour vous. Allez lui tenir com-
pagnie pour 10 minutes². Բայց որպեսզի շատ չձանձրանաք,
ահա մեր սիրեցյալ կոմսը, որ չի հրաժարվի հետևել ձեզ:

Գեղեցկուհին գնաց դեպի պառավ մորաքույրը, բայց Աննա
Պավլովնան Պիեռին պահեց դարձյալ, ցույց տալով, որ իբր
թե գեռ անելու է իր վերջին անհրաժեշտ կարգադրությունը:

— Ճիշտ ասեք, հիանալի է, չէ՞, — ասավ Աննա Պավլով-
նան Պիեռին ցույց տալով նազանքներով հեռացող վեհապանծ
գեղեցկուհուն: — Et quelle tenue³. Այսքա՛ն ջահել աղջիկ և
այսպիսի՝ տակո, իրեն պահելու այսպիսի՝ շնորհք: Դա թիտում

է սրտից: Երջանիկ կլինի նա, ում էլենը կպատկանի: Ամենա-
հասարակ մարդն էլ, եթե ամուսնանա հետը, ակամա ամենա-
փայլուն դիրքը կունենա բարձր շրջանում: Այնպես չէ՞: Ըս-
ուզում էի միայն ձեր կարծիքն իմանալ, — և Աննա Պավլովնան
թողեց Պիեռին:

Պիեռն անկեղծորեն հաստատեց Աննա Պավլովնայի կար-
ծիքը՝ թե էլենն իրոք շատ լավ է պահում իրեն: Եթե Պիեռն
ինքն էլ երբեիցե մտածում էր էլենի մասին՝ մտածում էր հենց
նրա գեղեցկության մասին և այն մասին, թե ինչպես նա ար-
տասովոր ձևով՝ կարողանում է անխոս-արժանապատվությամբ
պահել իրեն հասարակության մեջ:

Մորաքույրը երիտասարդներին ընդունեց իր անկյունը,
բայց, կարծես, ցանկացավ թաքցնել իր պաշտամունքը էլենի
նկատմամբ և ավելի երկյուղ արտահայտել Աննա Պավլովնայի
հանդեպ: Նա նայում էր Աննա Պավլովնային, ու կարծես
հարցնելիս լիներ, թե ինչ անի այս երիտասարդներին: Հե-
ռոնալով Պիեռից՝ Աննա Պավլովնան նորից մատը դիպցրեց
նրա թևքին ու ասավ.

— J'espère, que vous ne direz plus qu'on s'ennuie
chez moi¹, — ու նայեց էլենին:

էլենը ժպտաց մի այնպիսի տեսքով, որն ասում էր, թե
անկարելի է համարում, որ մեկն իրեն տեսնի ու շքանշանա:
Մորաքույրը հազաց, թուրք կուլ տվեց ու ֆրանսերեն ասավ,
թե շատ ուրախ է էլենին տեսնելուն. հետո նույն ողջունով
ու զլխի նույն շալժումով դէմեց Պիեռին: Տաղտկալի ու ան-
կապ խոսակցության կիսին էլենը նայեց Պիեռին ու ժպտաց
նույն պայծառ, գեղեցիկ ժպտով, որով ժպտում էր բոլորին:
Պիեռն այնպես էր ընտելացել այդ ժպտին, դա այնքան քիչ
բան էր ասում նրան, որ ոչ մի ուշադրություն չդարձրեց:
Այդ միջոցին մորաքույրը խոսում էր Պիեռի հանգուցյալ հոր՝
կոմս Բեզուխովի ունեցած քթախոտի տուփերի կոլեկցիայի
մասին, ու ցույց տվեց իր քթախոտի տուփը: Իշխանադուստր
էլենը խնդրեց տուփը՝ տեսնելու հորաքրոջ ամուսնու պատ-
կերց, որով զարդարված էր այդ տուփը:

¹ Սպասեք, դուք այս երեկո ինձ հարկավոր եք:

² Մի րեկո իմ էլեն, դուք այսօր պետք է կարեկից լինեք դեպի իմ խեղճ
մորաքույրը, որը պաշտում է ձեզ: Մի տասը րոպեի շփ մնացեք մոտը:

³ Եվ ինչպի՞սի կեցվածք:

¹ Հույս ունեմ, որ մի ուրիշ անգամ էլ չեք ասի, թե ինձ մոտ ձանձրալի եք

— Սա, երևի Վինեսն է նկարել, — ասավ Պիեռը, տալով հայտնի մանրանկարչի անունը, ու կոպցավ դեպի սեղանը, որ տուփը վերցնի, միաժամանակ ականջ գնելով մյուս սեղանի խոսակցութեան:

Նա վեր կացավ, կամենալով մյուս կողմն անցնել, բայց մորաքույրը տուփը նրան տվեց էլենի թիկունքի վրայով: Էլենը կոպցավ մի փոքր, որ տեղ տա և, ժպտալով, ետ նայեց: Նա, ինչպես միշտ երեկույթներին, հագել էր այն ժամանակվա մոդայի համաձայն, առջևից ու ետևից բաց զգեստ: Նրա բլուստը, որ Պիեռին միշտ թվացել էր մարմարյա, այնքան մոտ էր իրեն, որ կարճատես աչքերն ակամա ջոկում էին նրա ուսերի ու պարանոցի կենդանի հրապույրը, և այնպես մոտ իր շուրթերին, որ նրանց հպիլու համար բավական էր մի փոքր կռանար: Նա զգում էր նրա մարմնի ջերմութունը, անուշահոտ լուղերի բուրմունքը և լսում կորսետի ճոճոցը, երբ էլենը շարժվում էր: Նա տեսնում էր ոչ թե նրա մարմարյա գեղեցկութունը, որ նրա զգեստի հետ մի ամբողջութուն էր կազմում, այլ տեսնում ու զգում էր նրա մարմնի ամբողջ թովչանքը, որը սքողված էր միայն հագուստով: Եվ մի անգամ տեսնելով այդ՝ նա չէր կարող տեսնել այլ կերպ, ինչպես մենք շենք կարող վերադառնալ մի անգամ արդեն բացատրված պատրանքին:

«Պուք ուրեմն մինչև այժմ չե՞ք նկատել, թե ուրբան ես չքնաղ եմ, — կարծես ասավ էլենը: — Չե՞ք նկատել, որ ես կին եմ: Ես, այո, կին եմ, որը կարող է պատկանել բոլորին, և ձեզ նույնպես», — ասում էր նրա նայվածքը: Եվ նույն վայրկյանին Պիեռն զգաց, որ էլենը ոչ միայն կարող է, այլև պետք է իր կինը լինի, և որ այդ ուրիշ կերպ էլ չի կարող լինել:

Նա այդ բանում այդ րոպեին համոզված էր այնպես, ինչպես համոզված կլիներ նրա հետ պսակվելիս: Ինչպե՞ս կլինի այդ և ե՞րբ — չգիտեր. չգիտեր նույնիսկ, արդյոք լավ կլինի այդ (նա մինչև իսկ զգում էր, թե այդ չգիտես ինչու, լավ չէ), բայց գիտեր, որ այդ բանը կլինի:

Պիեռն աչքերը խոնարհեց, կրկին բարձրացրեց և նորից ուզեց տեսնել նրան՝ որպես իրեն օտար, հեռավոր մի գեղեցկուհու, ինչպես տեսնում էր առաջ ամեն օր. բայց այլևս չէր կարող: Չէր կարող, ինչպես մարդ չի կարող, սկզբում մշուշի

մեջ նշմարվող քուլախոտը ծառ համարելով, այդ քուլախոտը տեսնելուց հետո նորից ծառ համարի: Էլենն արդեն շատ մոտ էր նրան: Նա արդեն իշխում էր Պիեռին: Եվ երկուսի միջև այլևս ոչ մի պատենջ չկար, բացի Պիեռի սեփական կամքի պատենջից:

— Bon, je vous laisse dans votre petit coin. Je vois, que vous y êtes très bien¹, — լավեց Աննա Պավլովնայի ձայնը:

Եվ Պիեռը, երկյուղով մտածելով, թե պարսավելի մի բան չի արել արդյոք, կարմրելով շուրջը նայեց: Նրան թվում էր, որ բոլորն իր պես գիտեն, թե ի՞նչ է պատահել իրեն:

Փոքր անց, երբ նա մոտեցավ առաջին մեծ խմբին, Աննա Պավլովնան ասավ նրան.

— On dit que vous embellissez votre maison de Pétersbourg².

(Դա ճիշտ էր. ճարտարապետն ասել էր, թե դա հարկավոր է, և Պիեռը, ինքն էլ շիմանալով ինչու, նորոգում էր Պետերբուրգի իր հսկայական տունը):

— C'est bien, mais ne déménagez pas de chez le prince Basile. Il est bon d'avoir un ami comme le prince, — ասավ նա ժպտալով իշխան Վասիլիին: — j'en sais quelque chose. N'est-ce pas?³. Իսկ դուք դեռ այնքա՞ն երիտասարդ եք: Պուք խորհրդատուի պետք ունեք: Չնեղանաք, որ պառավի պետ խրատում եմ ձեզ: Եթե ամուսնանալու եք՝ ուրիշ բան է: Նա լռեց, ինչպես լռում են կանայք, իրենց տարիքը հայտնելուց հետո՝ սպասելով ինչ-որ բանի: Եվ Աննա Պավլովնան մի ընդհանուր նայվածք նետեց երկուսի վրա: Պիեռն էլենին շէր նայում, էլենը՝ նրան: Բայց էլենն էլի սարսափելի մոտ էր թվում նրան: Պիեռն ինչ-որ մուտաց ու կարմրեց:

Տուն վերադառնալով՝ Պիեռն երկար չկարողացավ քնել մտածելով իրեն պատահածի մասին: Իսկ ի՞նչ էր պատահեց

¹ Լավ, ես ձեզ թողնում եմ ձեր փոքրիկ անկյունում: Տեսնում եմ՝ դուք ձեզ այդտեղ լավ եք զգում:

² Ասում են՝ Պետերբուրգի ձեր տունը գեղեցկացնում եք:

³ Այդ լավ է, բայց իշխան Վասիլի տնից մի տեղափոխվեք: Այդպիսի քարեկամ ունենալը լավ բան է: Այդ մասին արդեն որոշ բան գիտեմ: Այնպես չէ՞:

նրանք Ոչինչ: Ըմբռնում էր միայն, որ այն կիրք, որին նանա-
չում էր մանկութունից, որի մասին անտարբեր ասում էր.
«այո, գեղեցիկ է», երբ նրան ասում էին, թե էլենը գեղեցկու-
հի է, նա հասկացավ, որ այդ կիրք կարող է պատկանել իրեն:

«Բայց նա հիմար է, ես ինքս եմ ասել, որ հիմար է, — մը-
տածում էր Պիեռը: — Ինչ-որ զգվելի ու արգելող մի բան կա
այն զգացումի մեջ, որ նա հարուցեց իմ սրտում: Ինձ ասին,
որ նրա Անատոլ եղբայրը սիրահարված է եղել իր վրա, և էլենն
էլ սիրահարված է եղել եղբոր վրա, որ մի ամբողջ պատմու-
թյուն է եղել, և այդ պատճառով Անատոլին քստորել են: էլենի
եղբայրը Իպպոլիտն է... Հայրը — իշխան Վասիլին... Այդ
լավ չէ», մտածում էր նա. և այդ միևնույն ժամանակ, երբ
նա խորհրդածում էր այսպես (այդ խորհրդածութունները
դեռ չէին վերջացել), նկատեց, որ ինքը ժպտում է և գիտակ-
ցեց, որ առաջին խորհրդածութունների ետևից ելնում են նոր
խորհրդածութուններ, որ ինքը միևնույն ժամանակ մտածում
է թե էլենը ոչնչություն է և երազում է այն մասին, թե ինչպես
նա իր կիրք կղառնա, ինչպես կսիրի իրեն, թե ինչպես նա՝
էլենը կարող է բուրբուխ փոխվել, և թե ինչպես այն բուրբու-
խն մտածել ու լսել է նրա մասին, կարող է սուտ լինել: Եվ նա
կրկին տեսավ նրան ոչ թե որպես մի իշխան Վասիլիի աղջկա, այլ
տեսավ նրա ամբողջ մարմինը միայն գորշ զգեստով ծածկված:
«Բայց ինչո՞ւ առաջ այդ բանը մտքովս չէր անցնում»: Եվ նորից
գտավ, որ դա անկարելի է: Նրան թվում էր, թե այդ ամուս-
նության մեջ ինչ-որ զգվելի, հակաբնական ու անազնիվ մի
բան կա: Նա հիշեց էլենի առաջին խոսքերը, նայվածքները և
միաժամանակ իրենց միասին տեսնող մարդկանց խոսքերն ու
հայացքները: Հիշեց Աննա Պավլովնայի խոսքերն ու հայացք-
ները, երբ նա խոսք բացեց իր տան նորոգության մասին,
հիշեց իշխան Վասիլիի և մյուսների հազարավոր այգորինակ
ափնարկները, ու սարսափեց, թե արդյոք ինքն իրեն որևէ
բանով չի կաշկանդել արդեն՝ կատարելու մի այնպիսի գործ,
որը պարզապես վատ է և որն ինքը չպիտի անի: Բայց այդ
միևնույն ժամանակ, երբ նա այդպիսի որոշում ընդունեց,
հոգու խորքերից վեր բարձրացավ էլենի պատմելը՝ իր կա-
նացի բովանդակ գեղեցկությամբ:

1805 թվի նոյեմբերին իշխան Վասիլին վերաստուգության
գործերով մեկնելու էր շորս նահանգ: Նա այդ գործուղումն
իր համար զուլա էր բերել, որպեսզի միաժամանակ այցելի իր
քայքայված կավածները և, Անատոլ որդուն (նրա զնդի բա-
նակած տեղից) առնելով՝ նրա հետ միասին գնա իշխան Նի-
կոլայ Անդրեևիչ Բալիոնսկու մոտ այն նպաստակով, որ որդուն
ամուսնացնի այդ հարուստ ծերունու աղջկա հետ: Բայց մեկ-
նելուց ու այդ նոր գործերից առաջ՝ իշխան Վասիլին անհրա-
ժեշտ էր համարում նախ վերջացնել Պիեռի խնդիրը, որը,
ճիշտ է, վերջերս իր ամբողջ օրերն անցնում էր տանը, այսինքն
իշխան Վասիլիի տանը, ուր և ապրում էր, հետո էլենի ներկա-
յությամբ իրեն պահում էր ծիծաղելի, հուզված ու հիմա-
րացածի պես (ինչպես և պետք է լինի սիրահարվածը), բայց
տակավին առաջարկություն չէր արել:

«Tout ça est bel et bon, mais il faut, que ça finisse¹, —
ասավ իշխան Վասիլին ինքն իրեն մի առավոտ, տխրության
հառաչանքով, մտածելով, որ Պիեռը, այնքան բաներով իրեն
պարտական լինելով (է՛հ, Քրիստոսը նրա հետ), այս խնդրում
իրեն այնքան էլ լավ չի պահում: — Չահելություն... թեթևա-
մտություն... է՛հ, աստված իր հետ, — մտածեց իշխան Վա-
սիլին, գոհունակությամբ զգալով իր բարությունը. — mais
il faut, que ça finisse². Վաղը չէ մյուս օրը էլենի անվանա-
կոչությունն է, մի քանի մարդ կկանչեմ, և եթե Պիեռը չհաս-
կանա թե ինչ պետք է անի, այդ դեպքում արդեն ես գիտեմ,
թե ինչպես պիտի վարվել: Այո, ե՛ս — հայր եմ»:

Պիեռը Աննա Պավլովնայի երեկույթից ամիս ու կես հետո
և այդ երեկույթին հետևող անբուն, հուզումնալից գիշերից
հետո մի գիշեր, երբ նա որոշեց, թե էլենի հետ ամուսնանալը
դժբախտություն կլինի, և թե պետք է խուսափի նրանից ու
թողնի հեռանա, այնուամենայնիվ Պիեռն այդ որոշումից հետո
(որից արդեն ամիս ու կես էր անցել) դեռ չէր տեղափոխվել
իշխան Վասիլիի տնից և սարսափելով զգում էր, որ օրեցօր

¹ Այս ամենը հիանալի է, բայց պետք է վերջացնել այդ:

² Բայց պետք է վերջացնել այդ:

մարդկանց աչքում ինքն ավելի է կապվում էլենի հետ, որ էլ չի կարող մնալ նրա նկատմամբ ունեցած նախկին կարծիքին, որ չի կարող և կտրվել նրանից, որ դա սարսափելի կլինի, բայց ստիպված պիտի լինի իր բախտը կապել նրա հետ: Գուցե և նա կարողանար խույս տալ, բայց օր չէր անցնում, որ իշխան Վասիլիի տանը (ուր հյուրասիրությունները հազվադեպ էին) երեկույթ չլիներ, ուր պարտաւոր էր լինել և Պիեռը, եթե չէր ցանկանում փշացնել ընդհանուրի տրամադրությունը և շարդարացնել նրանց սպասելիքները: Իշխան Վասիլին այն հազվադեպ ընդունելիքներին, երբ տանն էր լինում, Պիեռի մտքից անցնելիս, նրա թեքը քաշում էր ցած, ցրված արտահայտությամբ՝ համբույրի համար դեմ էր անում նրան իր սափրած, կնճոտ ալտը և ասում կա՛մ «մինչև վաղը» կա՛մ «ճաշի մոտերքը, թե չէ էլ քեզ չեմ տեսնի», կա՛մ «ես քեզ համար եմ մնում» և այլն: Բայց չնայած որ իշխան Վասիլին մնում էր Պիեռի համար (ինչպես ինքն էր ասում), նա Պիեռին մի երկու խոսք չէր ասում. Պիեռն էլ չէր կարողանում շարդարացնել նրա սպասելիքները: Նա ամեն օր միևնույն բանն էր ասում իրեն. «Պետք է, վերջապես, հասկանամ էլենին և ինձ հաշիվ տամ, թե ո՞վ է նա: Արդյոք առաջ եմ սխալվել, թե՞ հիմա եմ սխալվում: Ոչ, էլենը հիմար չի. ոչ, նա սքանչիլի աղջիկ է, — ասում էր երբեմն Պիեռն ինքն իրեն: — էլենը երբեք ոչ մի բանում չի սխալվում, երբեք հիմար բան չի ասել: Նա քիչ է խոսում, բայց այն, ինչ ասում է՝ միշտ հասարակ է ու պարզ: Նա հիմար չէ: Երբեք, չի շփոթվել և չի շփոթվում: Ուրեմն նա վատ կին չէ»: Հաճախ էր պատահել, որ Պիեռը նրա հետ խոսել-խորհրդածել էր, և ամեն անգամ էլենը նրան պատասխանել էր կամ կարճ, բայց տեղին ասված դիտողությամբ, որ ցույց էր տալիս, թե այդ բանը նրան չի հետաքրքրում, կա՛մ անխոս ժպիտով ու նայվածքով, որոնք ամեն բանից ավելի, շոշափելի կերպով ցույց էին տալիս Պիեռին նրա գերազանցությունը: էլենն իրավացի էր՝ բոլոր այդ դատողություններն իր ժպիտի հետ համեմատած դատարկ բան համարելով:

էլենը Պիեռին դառնում էր միշտ զվարթ, հավատով չի, միայն նրան՝ Պիեռին վերաբերող ժպիտով, որի մեջ ինչ-որ ավելի նշանակալից մի բան կար, բան մշտապես նրա դեմքը

զարդարող սովորական ժպիտում: Պիեռը գիտեր, որ բոլորն ասում են, որպեսզի նա, վերջապես, մի խոսք ասի, անցնի հայտնի սահմանագիծը, ու նա գիտեր, որ վաղ թե ուշ անցնելու է. բայց ինչ-որ մի անհասկանալի սարսափ էր տիրում նրան հենց միայն այդ բային անելու մտքից: Ամիս ու կեսվա մեջ (որի ընթացքում իրեն ավելի ու ավելի խրված էր զգում այդ իրեն սարսափեցնող անդունդը), Պիեռը հազար անգամ ասել էր իրեն. «Սա ի՞նչ բան է: Վճռականություն՝ է պետք: Մի՞թե ես այդ վճռականությունը չունեմ»:

Նա ուզում էր վճռական լինել, բայց սարսափով զգում էր, որ այս դեպքում իրեն պակասում էր այն վճռականությունը, ինչ իսկապես զգում էր մեջը և ինչ իրոք ուներ: Պիեռը պատկանում էր այն մարդկանց թվին, որոնք ուժեղ են միայն այն ժամանակ, երբ իրենց միանգամայն մաքուր են զգում: Բայց այն օրից, երբ նրան տիրեց ցանկասիրության զգացումը (որն ապրեց Աննա Պավլովնայի երեկույթին, քթախոտի տուփը նայելիս), մեղավորության չգիտակցված զգացումը թուլացնում-կոտրում էր նրա վճռականությունը:

էլենի անվանակոչության օրը իշխան Վասիլիի տանն ընթրում էր ամենամոտ մարդկանց մի փոքր հասարակություն, կամ ինչպես իշխանուհին էր ասում, հարազատներն ու բարեկամները: Բոլոր այս հարազատներին ու բարեկամներին զգացնել էր տրված, թե այդ օրը վճռվելու էր էլենի բախտը: Հյուրերը նստած էին ընթրիքի սեղանի շուրջը: Իշխանուհի Կուրագինան, այդ գեր, երբեմնի սիրուն, ներկայանալի տեսքով կինը նստած էր տանտիրոջ տեղը: Նրա աջ ու ձախ կուրբ նստել էին պատվավոր հյուրերը — մի ծեր գեներալ, նրա կինը, Աննա Պավլովնա Շերբըր. սեղանի ծայրին նստած էին ավելի պակաս տարիքով և նվազ հարգելի հյուրերը. այդտեղ էլ նստած էին տնեցիք, Պիեռն ու էլենն իրար կողքի: Իշխան Վասիլին ընթրիքին չէր մասնակցում. նա ուրախ տրամադրությամբ պտտվում էր սեղանի շուրջը և նստում մերթ աչս, մերթ մյուս հյուրի կողքին: Ամեն մեկին մի անփույթ ու հաճելի խոսք էր ասում, բացի Պիեռից ու էլենից, որոնց ներկայությունը նա չէր նկատում կարծես: Իշխան Վասիլին կենդանացնում, աշխույժի էր բերում բոլորին: Մեղրամոմերը վառվում էին պայծառ, փայլում-շողողում էին արծաթե ու հախ-

ձուպակյա ամանները, կանանց զարդերը և ուսադիրների արծաթն առ ոսկին. սեղանի շուրջն անցնում-դառնում էին կարմիր կաֆտան հագած սպասավորները. լսվում էին դանակների, բաժակների, ափսնների ձայներ և սեղանի մի քանի մասերում կատարվող զրույցների տաք-տաք խոսուցը: Լսվում էր, թե ինչպես ծերունի կամերճերը սեղանի մի ծայրում հավատացնում էր պառավ-բարոնուհուն, թե ինքը բռտն կերպով սիրում է նրան և ինչպես է պառավը ծիծաղում. սեղանի մյուս ծայրում պատմում էին ինչ-որ Մարիա Վիկտորովնայի անհաջողության մասին: Սեղանի մեջտեղը իշխան Վասիլին էր ունկնդիրներ հավաքել իր շուրջը: Նա, հեզնական ժպիտը շուրթերին, կանանց պատմում էր պետական խորհրդի վերջին նիստի մասին, ուր Պետերբուրգի նոր գինվորական ընդհանուր նահանգապետ Սերգեյ Կուզմիչ Վյազմիտինովը կարգացել էր Ալեքսանդր Պավլովիչ Թագավորից ստացած, բանակից ուղարկված, այն ժամանակ նշանավոր հրովարտակը, որի մեջ թագավորը, Սերգեյ Կուզմիչին դիմելով, ասում էր, թե ինքը երկրի բոլոր կողմերից հայտարարութուններ է ստանում ժողովրդի անձնավիրության մասին, և թե Պետերբուրգի հայտարարութունը մասնավորապես հաճելի է իրեն, թե ինքը հպարտ է, որ այդպիսի ազգի գլուխը լինելու պատիվն ունի և կաշխատի նրան արժանի լինել: Այդ հրովարտական սկսվում էր այս խոսքերով. Սերգեյ՝ Կուզմիչ: Ամեն կողմից լուրեր են հասնում ինձ և այլն:

— Ուրեմն այդպես էլ Սերգեյ Կուզմիչից դենը չընա՞ց, — հարցրեց մի տիկին:

— Այո, այո, մազաշափ անգամ, — ծիծաղելով պատասխանեց իշխան Վասիլին: — Սերգեյ Կուզմիչ... ամեն կողմից: Ամեն կողմից՝ Սերգեյ Կուզմիչ... Խեղճ Վյազմիտինովը ոչ մի կերպ չկարողացավ առաջ գնալ: Մի քանի անգամ սկսեց նորից կարդալ նամակը, բայց հենց որ ասում էր՝ Սերգեյ... հեկեկոց... Կուզ... մի... — արցունքներ և ամեն կողմից — բարձրաձայն հեկեկանքներ, և նա էլ շարունակել չկարողացավ: Նորից թաշկինակներ, և նորից ամեն կողմից, Սերգեյ Կուզմիչ առ արցունքներ... այնպես որ խնդրեցին արդեն մի ուրիշը կարդալ:

— Կուզմիչ... ամեն կողմից... և արցունքներ... — կրկինեց մեկը ծիծաղելով:

— Չար մի լինեք, — մատով սպառնալով, սեղանի մյուս ծայրից, ասավ Աննա Պավլովնան, — c'est un si brave et excellent homme notre bon Viasmitinoff...¹

Բոլորը շատ ծիծաղեցին: Սեղանի վերին, պատվավոր մասում ամենքն էլ, թվում էր, ուրախ էին և ամենատարբեր զվարթ տրամադրութունների ազդեցության ներքո. միայն Պիեռն ու էլենն էին, որ անխոս նստել էին իրար կողքի, սեղանի գրեթե վարի ծայրում: Երկուսի դեմքին էլ փայլում էր մի զուսպ ժպիտ, որը կապ չունեի «Սերգեյ Կուզմիչի» հետ, — ամոթխածութան ժպիտ իրենց զգացումների հանդեպ: Ինչ էլ ասեին և որքան էլ ծիծաղեին ու կատակեին մյուսները, որքան էլ ախարժակով ունկնդրեին խմբին և սոտե ու պաղպաղակ ուտեին, որքան էլ խուսափեին այս զույգին նայելուց, որքան էլ անտարբեր, անուշադիր էին թվում դեպի այս զույգը, այսուամենայնիվ, չգիտես ինչու, երբեմն նրանց վրա նետվող հայացքներից զգացվում էր, որ թե՛ Սերգեյ Կուզմիչի մասին եղած անեկզուտը, թե՛ ծիծաղը, թե՛ ուտելիքները — բոլորը շինծու էին, և այդ ամբողջ հասարակության ողջ ուշադրութունն ուղղված էր միայն այդ զույգի — Պիեռի և էլենի վրա: Իշխան Վասիլին ներկայացնում էր Սերգեյ Կուզմիչի հեկեկանքը և միևնույն ժամանակ մի թեթև հայացք նետում աղջկա կողմը. ու այն ժամանակ, երբ նա ծիծաղում էր, նրա դեմքի արտահայտութունն ասում էր. «Այդպես, այդպես, ամեն ինչ լավ է գնում. հիմա ամեն ինչ կլուծվի»: Աննա Պավլովնան սպառնաց նրան notre bon Viasmitinoff-ի համար, բայց նրա աչքերում, որոնք այդ վայրկյանին անցողակի նայեցին Պիեռին, իշխան Վասիլին կարդաց ապաքա փեսայի և աղջկա երջանկության շնորհավորանքը: Պառավ իշխանուհին, տխուր հոգոցով իր հարեվանուհուն գինի առաջարկելով ու բարկացկոտ աղջկանը նայելով, այդ հոգոցով ասավ կարծես, այո, մեզ էլ ոչինչ չի մնում, եթե ոչ քաղցր գինի խմել, գիրեկիս. հիմա այս երիտասարդների այդպես արձակ-համարձակ երջանիկ լինելու ժամանակն է: «Բոլորը հիմար քան է, ինչ պատմում եմ, կարծես

¹ Դա մի այնպիսի սքանչելի մարդ է՝ մի բարի Վյազմիտինովը:

դա ինձ հետաքրքրում է, — մտածում էր դիվանագետ սիրահարների երջանիկ դեմքերին նայելով. — ա՛յ սա երջանկութուն է»:

Այդ հասարակութունն իրար կապող մանր, շնչին ու արհեստական շահերի մեջ ընկել էր գեղեցիկ ու առույզ երիտասարդ տղամարդու և կնոջ դեպի միմյանց ձգտելու պարզ, հասարակ զգացմունքը: Եվ մարդկային այդ զգացմունքը ճնշել էր ամեն ինչ ու սավառնում էր նրանց բոլոր արհեստական թոթովանքներից վեր: Կատակները զվարճալի չէին, նորութունները — անհետաքրքիր էին, կենդանութունը — ակներև շինծու: Ոչ միայն նրանք, այլև սեղանին սպասավորող լաբեյները, թվում էր, որ զգում էին նույնը և մոռանում ծառայության կարգը, նայելով գեղեցկուհի էլենի փայլուն դեմքին ու Պիեռի կարմիր, լեցուն, երջանիկ ու անհանգիստ երեսին: Թվում էր մոմերի լույսերը նույնպես կենտրոնացած էին միայն այդ երկու երջանիկ դեմքերի շուրջը:

Պիեռն զգում էր, որ ամեն ինչի կենտրոնն ինքն է, ու այդ հանգամանքը թե՛ ուրախացնում և թե՛ ճնշում էր նրան: Նա գտնվում էր ինչ-որ մի զբաղումի մեջ խորասուզված մարդու վիճակում: Ոչ մի բան պարզ չէր տեսնում, չէր հասկանում և չէր լսում: Երբեմն միայն հատուկենտ տպավորություններ և մտքեր էր ունենում:

«Ուրեմն ամեն ինչ վերջացա՛վ արդեն, — մտածում էր նա: — Եվ ինչպես եղավ այս բոլորը: Այսքա՞ն շուտ: Հիմա ես գիտեմ, սա ոչ միայն էլենի համար, ոչ միայն ինձ համար, այլև բոլորի համար սա ասխուսափելիորեն պետք է կատարվեր: Նրանք բոլորն այնպես են սպասում սրան, այնպես հավատացած են, թե դա կլինի, որ ես չեմ կարող, չեմ կարող խաբել նրանց: Բայց ինչպե՞ս է լինելու: Զգիտեմ. բայց կլիտի, անպայման կլինի», մտածում էր Պիեռը, նայելով էլենի՝ հենց իր աչքերի առաջ փայլող ուսերին:

Մեկ էլ հանկարծ ամաչում էր ինչ-որ մի բանից: Անհարմար էր զգում, որ ինքը գրավել է բոլորի ուշադրությունը, որ ինքը բախտավոր է ուրիշների աչքում, որ ինքն իր տգեղ դեմքով ինչ-որ մի Պարիս է՝ Հեղինեին տիրացած: «Բայց, երևի, այս բանը միշտ այսպես է լինում և այսպես է հարկավոր, — մըթիթարում էր նա իրեն: — Բայց ես ի՞նչ եմ արել այս բանի

համար: Սա ե՞րբ սկսվեց: Մոսկվայից մեկնեցի իշխան Վասիլին հետ միասին: Այստեղ դեռ ոչինչ չկար: Հետո ինչո՞ւ նրա տանը չիջեանեի: Հետո ես էլենի հետ թուղթ խաղացի և բարձրացրի նրա ընկած դիրիկտուլը, նրա հետ կառքով զբոսնելու գնացի: Իսկ ե՞րբ սկսվեց սա, ե՞րբ կատարվեց այս բոլորը: Եվ ահա որպես փեսացու նստած է նրա կողքին. լսում, տեսնում, զգում է նրա մերձավորությունը, նրա շնչատությունը, նրա շարժումները, նրա գեղեցկությունը: Մեկ էլ նրան թվում էր, թե այդ էլենը չէ, այլ նա ինքն է այդպես շտեմնված գեղեցիկ, և այդ է պատճառը, որ այնպես նայում են իրեն, և նա, ընդհանուր հիացումից երջանիկ, կուրծքն ուղղում է, գլուխը բարձրացնում և ուրախանում իր բախտավորության վրա: Հանկարծ մի ձայն, մեկի ծանոթ ձայնը լսեց, որ երկրորդ անգամն արդեն ինչ-որ բան է ասում իրեն: Բայց Պիեռն այնպես է զբաղված, որ չի հասկանում ի՞նչ են ասում իրեն:

— Հարցնում եմ, ե՞րբ ստացար Բալկոնսկու նամակը, — կրկնեց իշխան Վասիլին երրորդ անգամ: — Որքա՞ն ցրված ես, սիրելիս:

Իշխան Վասիլին ժպտում է, Պիեռը տեսնում է, որ բոլորը, բոլորը ժպտում են իր և էլենի վրա. «է, ինչ կա որ, եթե բոլորը գիտեք», — ասում էր Պիեռն ինքն իրեն: «է, ի՞նչ կա որ. ճիշտ է», և նա ինքն էլ ժպտում է իր հեզ, մանկական ժպտով, էլենն էլ է ժպտում:

— Բայց ե՞րբ ստացար նամակը: Օլմյուցի՞ց էր ուղարկված, — կրկնում է իշխան Վասիլին, կարծես այդ բանը պետք է նրան վեճը լուծելու համար:

«Կարելի՞ է արդյոք խոսել ու մտածել այդտեսակ դատարկ բաների մասին», մտածում է Պիեռը:

— Այո, Օլմյուցից, — պատասխանում է նա հառաչելով: Ընթրիքից հետո Պիեռն իր դամային մյուսների հետեից տարավ Տյուրասրահ: Հյուրերն սկսեցին ցրվել և ոմանք մեկ-նեցին առանց էլենին մնաս բարև ասելու: Կարծես շքանկանալով կտրել նրան իր լուրջ զբաղումից՝ ոմանք մոտենում էին մի վայրկյան և իսկույն հեռանում, չթողնելով, որ նա ուղեկցի իրենց: Դիվանագետը Տյուրասրահից գուրս եկավ տխուր լուռությամբ: Իր դիվանագիտական կարիերան ունայն բան էր թվում նրան՝ Պիեռի երջանկության հետ համեմատած: Մե-

րունի գեներալը բարկացած քրթմնջաց կնոջ վրա, երբ նա հարցրեց իր ոտի դրուժյան մասին: «է, տղեղ արարած, — մըտածեց նա: — Այ, Ելենա Վասիլենան հիսուն տարեկան էլ դառնա՝ գեղեցկուհի կմնա»,

— Կարծում եմ՝ կարող եմ ձեզ շնորհավորել, — շնջաց Աննա Պավլովնան իշխանուհուն և պինդ համբուրեց նրան: — Եթե գլխացավս շինե՞ր՝ կմնայի:

Իշխանուհին ոչինչ չպատասխանեց, նրան տանջում էր աղչկա երջանկության նկատմամբ ունեցած նախանձը:

Պիեռը հյուրերին ճամփու դնելու միջոցին երկար մնաց էլենի հետ մենակ՝ փոքրիկ հյուրասրահում նստած: Նա առաջ էլ վերջին ամիսուկնսով ընթացքում, հաճախ մնում էր էլենի հետ մենակ, բայց երբեք սիրտ մասին չէր խոսում նրա հետ: Այժմ զգում էր, որ դա անհրաժեշտ է, բայց ոչ մի կերպ չէր կարողանում այդ վճռական քայլն անել: Ամաշում էր. նրան թվում էր, որ այստեղ, էլենի կողքին ինքը գրավում է օտար մեկի տեղը: — Այս երջանկությունը քեզ համար չէ, — ասում էր նրան մի ներքին ձայն: Այս երջանկությունը նրանց համար է, ովքեր շունեն ա՛յն, ինչ որ դու ունես: Բայց պետք էր մի բան ասել, և նա ասավ: Հարցրեց էլենից, թե գո՞հ է արդյոք այսօրվա երեկույթից: էլենն իր սովորական պարզութամբ պատասխանեց, թե այս վերջին տոնախմբությունն իր համար ամենահաճելիներից մեկն էր:

Մերձավոր հարազատներից մի քանիսը դեռ մնացել էին մեծ հյուրասրահում նստած: Իշխան Վասիլին ծուլլ քայլերով մոտեցավ Պիեռին: Պիեռը վերկացավ և նկատեց, թե ուշ է արդեն: Իշխան Վասիլին խստութամբ ու հարցականորեն նրան նայեց, կարծես Պիեռի ասածն այնքան օտարտոխ բան էր, որ չէր կարելի լսել անգամ: Բայց խստության արտահայտությունն իսկույն փոխվեց, և իշխան Վասիլին Պիեռի թևքը ձգելով, նստեցրեց նրան ու սիրալիր ժպտաց:

— Հը, ի՞նչ կա, Լելյա, — դարձավ նա անմիջապես աղջկան, սովորական քնքշության այն անփուլթ տոնով, որ յուրաքանչյուր եմ ծնողները՝ երեխաներին մանկությունից գուրգուրելով, բայց իշխան Վասիլին այդ տոնը յուրացրել էր ուրիշ ծնողների ընդօրինակելով:

Եվ նա նորից Պիեռին դարձավ.

— Սերգեյ Կուզմիշ, ամեն կողմից, — ասավ նա, ժխտաբար վերին կոճակն արձակելով:

Պիեռը ժպտաց, և նրա այդ ժպտից երևաց, թե հասկանում է, որ այդ միջոցին Սերգեյ Կուզմիշի անեկղոտը չէր, որ հետաքրքրում էր իշխան Վասիլին. իշխան Վասիլին էլ հասկացավ, որ Պիեռն ըմբռնեց այդ, և հանկարծ, ինչ-որ վրա տալով, դուրս եկավ: Պիեռին թվաց, թե անգամ իշխան Վասիլին շրփոթված է: Եվ այդ խստաբարո աշխարհիկ մարդու շփոթուված տեսքը հուզեց Պիեռին. նայեց էլենին — նա էլ, կարծես, շփոթված էր, բայց նայվածքն ասում էր. «ինչ կա որ, դուք ինքներդ եք մեղավոր»:

«Պետք է անպատճառ սահմանագիծն անցնել, բայց չեմ կարող, չեմ կարող», մտածեց Պիեռը, և նորից խոսեց կողմնակի նյութերի մասին, Սերգեյ Կուզմիշի մասին, հարցնելով, թե ի՞նչ էր այդ անեկղոտի իմաստը, որովհետև ինքը չի լսել: էլենը ժպտալով պատասխանեց, թե ինքը նույնպես չգիտի: Արդ իշխան Վասիլին հյուրասրահ վերադարձավ, իշխանուհին մի տարիքոտ կնոջ հետ կամացուկ խոսում էր Պիեռի մասին:

— Իհարկե, c'est un parti très brillant, mais le bonheur, ma chère...¹

— Les mariages se font dans les cieux², — պատասխանեց տարիքոտ կինը:

Իշխան Վասիլին, իբր թե կանանց շտապելով, գնաց նստեց անկյունի բազմոցին: Աչքերը փակեց ննջողի պես: Հանկարծ գլուխը հակեց, և նա աչքերը բաց արավ:

— Aline, — ասավ նա կնոջը, — allez voir, ce qu'ils font³.

Իշխանուհին մոտեցավ դռանը, անտարբեր անցավ նրա մոտով ու մի հայացք նետեց փոքրիկ հյուրասրահի ներքը: Պիեռն ու էլենը առաջվա պես նստած զրուցում էին:

— Նույն գրությունն է, — պատասխանեց նա մարդուն:

¹ Իհարկե, շատ փայլուն զույգ է, բայց երջանկությունը, սիրելիս...

² Ամուսնությունները կատարվում են երկնքում:

³ Այնպես, զնա տես ի՞նչ են անում:

Իշխան Վասիլին հոնքերը կիտեց, բերանը ծոց մի կողմ, ալտերը ցնցվեցին անհաճո ջղաձգությամբ, և նա ինքն իրեն թափահարելով, վեր կացավ ու, գլուխը ետ գցած վճռական քայլերով, կանանց մոտով, անցավ-գնաց փոքրիկ հյուրասրահայր: Փութկոտ քայլերով մոտեցավ Պիեռին մի այնպիսի շտենսկաձ հանդիսավոր կերպարանքով, որ Պիեռը, նրան տեսնելով, վախեցած ոտի կանգնեց:

— Փա՛ռք աստծո, — ասավ նա: — Կինս բոլորը պատմեց: — Նա մի ձեռով գրկեց Պիեռին, մյուսով աղջկան: — Լելլա, սիրելի՛ս: Ես շա՛տ, շատ ուրախ եմ: — Նրա ձայնը դողաց: — Պիեռ, ես սիրում էի հորդ... էլենը քեզ համար լավ կին կլինի... Թո՛ղ աստծու օրհնությունը ձեզ վրա լինի...

Նա գրկեց աղջկան, հետո նորից Պիեռին ու համբուրեց նրան վատ հոտ արձակող բերանով: Եվ արցունքներն, իրոք թրջեցին նրա ալտերը:

— Իշխանուհի, արի ալտերդ, — ձայն տվեց նա:

Իշխանուհին ներս մտավ և նույնպես արտասվեց: Տարիքոտ կինն էլ թաշկինակը տարավ դեպի աչքերը: Պիեռին համբուրեցին, և նա ինքն էլ մի քանի անգամ համբուրեց գեղեցկուհի էլենի ձեռը: Փոքր անց նրանց նորից թողին մենակ:

«Այս բոլորն այսպես էլ պիտի լիներ և ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, — մտածում էր Պիեռը, — ուստի ավելորդ է հարցնել՝ լավ է այս թե վատ: Լավ է, որովհետև որոշ, է, և առաջվա տանջող կասկածը չկա»: Պիեռն անխոս բռնել էր հարսնացուի ձեռը և նայում էր նրա բարձրացող ու իջնող գեղեցիկ կրծքին:

— Էլեն, — ասավ բարձրաձայն ու կանգ առավ:

«Այսպիսի դեպքում մի ինչ-որ առանձին բան են ասում», մտածեց նա, բայց ոչ մի կերպ չկարողացավ հիշել, թե իսկապես ինչ են ասում այդպիսի դեպքերում: Նայեց էլենի դեմքին: Էլենը՝ շիկնած դեմքով ավելի մոտեցավ նրան:

— Ա՛հ, վերցրեք այդ... այդ... — նա ցույց տվեց ակնոցը: Պիեռն ակնոցը վերցրեց, և նրա աչքերը, ակնոցը վերցրած մարդկանց աչքերի տարօրինակ արտահայտությունից զատ, վախեցած հարցական նայվածք ունեին: Նա ուզեց կրճատանալ համբուրել էլենի ձեռը. բայց էլենը գլխի արագ ու մոլեգին շարժումով շուրթերը հպեց Պիեռի շրթունքներին:

Նրա դեմքը՝ իր փոխված ու անհաճո-ցրված արտահայտությամբ՝ զարմացրեց Պիեռին:

«Այժմ արդեն ուշ է, ամեն ինչ վերջացած է. ես էլ արդեն սիրում եմ նրան», — մտածեց Պիեռը:

— Je vous aime!¹, — ասավ նա, հիշելով, վերջապես, թե ինչ պիտի ասել այդպիսի դեպքերում. բայց այդ խոսքերը հնչեցին այնպես հասարակ, որ ինքն իրենից ամաչեց:

Ամիս ու կես հետո Պիեռը պսակվեց և, ինչպես ասում էին, իբրև գեղեցիկ կնոջ ու միլիոնների երջանիկ տեր, բնակութուն հաստատեց կոմս Բեզուլսոնների Պետերբուրգի մեծ² նոր միայն նորոգված տանը:

III

Մերունի իշխան Նիկոլայ Անդրեևիչ Բալկոնսկին 1805 թվի դեկտեմբերին՝ իշխան Վասիլիից մի նամակ ստացավ, որով նա տեղեկացնում էր, թե որդու հետ միասին գալիս է. («Ես գնում եմ վերստուգության և, իհարկե, հարյուր վերստն ինձ համար ավելորդ ճանապարհ չէ, որպեսզի այցելեմ ձեզ հարգելի բարեբարս, — գրում էր նա. — ինձ ուղեկցում է և Անատոլ որդիս, որ բան կ է գնում, և հույս ունեմ, որ թույլ կտաք իրեն անձամբ արտահայտելու այն խորին հարգանքը, որը նա, հորը հետևելով, տածում է դեպի ձեզ»):

— Ահավասիկ, Մարիային էլ մայրաքաղաքները տանելու կարիք չկա. փեսացուներն իրենք են մեզ մոտ գալիս, — անզգուշաբար ասավ փոքրիկ իշխանուհին, այդ լուրը լսելով:

Իշխան Նիկոլայ Անդրեևիչը դեմքը կնճոց և ոչինչ շասավ: Նամակն ստանալուց երկու շաբաթ հետո, մի երեկո, առաջուց եկան իշխան Վասիլիի սպասավորները, իսկ հետևյալ օրն եկան ինքն ու որդին:

Մերունի Բալկոնսկին առհասարակ բարձր կարծիք չուներ իշխան Վասիլիի նկարագրի մասին, մանավանդ վերջին ժամանակներս, երբ իշխան Վասիլին նոր թագավորներ Պավելի և Ալեքսանդրի օրոք շատ առաջ էր գնացել և բարձր աստիճանների ու պատիվների արժանացել: Իսկ այժմ, նամակի և փոք-

¹ Ես ձեզ սիրում եմ:

բիկ փշխանուհու ակնարկներէց հասկացաւ նրա գալու նպատակը, և նրա մասին ունեցած ոչ բարձր կարծիքը իշխան Նիկոլայ Անդրեկիչի սրտում փոխվեց անբարյացակամ արհամարհանքի: Նրա մասին խոսելիս՝ նա շարունակ փնջացնում էր: Իսկ իշխան Վասիլիի գալու օրն առանձնապես դժգոհ էր և վատ տրամադրութեան մեջ: Արդյոք նրանի՞ց էր վատ տրամադրութեան մեջ, որ իշխան Վասիլին գալիս էր, թե նրա գալուց առանձնապես դժգոհ էր, որովհետև տրամադրութեանը վատ էր. այսպես թե այնպես նրա տրամադրութեանը տեղը չէր, և Տիխոնը դեռ առավտոր ճարտարապետին խորհուրդ չտվեց իշխանի սենյակը մտնել՝ զեկուցում տալու:

— Լսում եք, ինչպես է քայլում, — ասավ Տիխոնը, ճարտարապետի ուշադրութեանը իշխանի քայլերի վրա հրավիրելով: — Կրունկների վրա է քայլում — ես արդեն գիտեմ, թե ինչ է նշանակում...

Սակայն, սովորականի պես, ժամը իննին իշխանը դուրս եկավ զբոսնելու՝ կզաքիսի փափախը դրած և նույն մորթեօձիքով թավշյա կիսամուշտակը հագած: Գիշերը ձյուն էր եկել: Ծանապարհը, որով իշխան Նիկոլայ Անդրեկիչը գնում էր դեպի շերմոցը, մաքրված էր. ավելի հետքերն երևում էին սրբած ձյունի վրա, և թին խրված էր փխրուն ձյունի կիտուկի մեջ, որ բռնել էր ճանապարհի երկու կողմը: Իշխանը հոնքերը կիտած ու անխոս անցավ դիտեց շերմոցներն ու նոր կառուցվող շենքերը:

— Իսկ սահնակով կարելի՞ է ճամփա գնալ, — հարցրեց նա մինչև տունն իրեն ուղեկցող պատվելի դեմքով և շարժ ու ձեւերով տանտիրոջ նմանող կառավարչին:

— Խոր ձյուն է, ձերգ պայծառափայլութուն: Ես արդեն կարգադրեցի ծառուղին մաքրեն:

Իշխանը գլուխն իջեցրեց ու մոտեցավ պատշգամբին:

«Փա՛ռք քեզ, աստված, — մտածեց կառավարիչը, — փոթորիկն անցավ»:

— Մեծ դժգոհութեամբ առաջ գնացիք, ձերգ պայծառափայլութուն, — ավելացրեց կառավարիչը: — Կեցի՞ք, ձերգ պայծառափայլութուն, որ մինիստր է գալիս ձերգ պայծառափայլութեան մոտ:

Իշխանը երեսը դարձրեց դեպի կառավարիչը և կիտած հեռքերի տակից նայեց նրան:

— Ի՞նչ, Մինիստր: Ի՞նչ մինիստր: Ո՞վ է թույլ տվել, — խոսեց նա իր ծղրտան, կոշտ ձայնով: — Ծանապարհը իշխանադատեր, իմ աղջկա համար չեք մաքրել, այլ մինիստր:՝ համար: Ես մինիստրներ չե՛մ ճանաչում:

— Ձերգ պայծառափայլութուն, ես կարծեցի...

— Դու կարծեցի՞ր, — պոռաց իշխանը, խոսքերն հետզհետե արագ ու անկապ արտասանելով: — Դու կարծեցի՞ր... Ավազակնե՛ր, սրիկանե՛ր... Ես քեզ կարծել կսովորեցնեմ, — և ձեռնափայտը բարձրացնելով՝ վրա բերեց Ալպատիչի գլխին, ու կխփեր, անշուշտ, եթե կառավարիչն ակամա խույս չտար հարվածից: — Կարծեցի՞ր... Անզգամնե՛ր, — շտապ-շտապ պոռաց նա: Բայց, չնայած որ, Ալպատիչն, ինքն իր հանգզութեանից վախեցած (որ խույս տվեց հարվածից), մոտեցավ իշխանին, ճաղատ գլուխը հնազանդորեն իջեցրեց նրա առաջ, թե պուշե այդ իսկ պատճառով՝ իշխանը, շարունակելով «անբեզգամներ» գոռալ, փայտն էլ շարժարացրեց ու իրեն զցեց ներս՝ տուն:

Ծաշից առաջ իշխանադուստրն ու m-lle Բուրիենը, իմանալով, որ իշխանի տրամադրութեանը վատ է, կանգնած ըսպատում էին նրան. m-lle Բուրիենի փայլող դեմքը կարծես ասում էր. «Ես ոչինչ չգիտեմ. նույնն եմ, ինչպես միշտ». իսկ իշխանադուստր Մարիան՝ գունատ էր, վախեցած և աչքերը ցած խոնարհած: Իշխանադուստր Մարիայի համար ամենից ծանրն այն էր, որ նա գիտեր, թե այդպիսի դեպքերում պետք է վարվել m-lle Բուրիենի պես, բայց չէր կարողանում այդ անել: Նրան թվում էր. «այնպես անեմ, որ իբր թե չեմ նկատում, կկարծի թե իրեն չեմ կարեկցում. իսկ եթե ցույց տամ, որ ինքս տխուր եմ ու վատ տրամադրութեան մեջ, նա կասի (ինչպես և մի անգամ եղավ), թե քիթս կախել եմ», և այլն:

Իշխանը նայեց աղջկա երկյուղած դեմքին ու փնջացրեց:

— Հիմա՛ր... — ասավ նա:

«Նա էլ չկա՛. երևի նրան էլ պատմել են», մտածեց փոքրիկ իշխանուհու մասին, որ սեղանատանը չէր:

— Իսկ իշխանուհին ո՞ւր է, — հարցրեց նա: — Քաքնը-վե՛լ է...

— Մի քիչ հիվանդ է, — զվարթ ժպտալով պատասխանեց m-lle Բուրիենը, — այսօր ճաշին չի գա: Եվ այդ հասկանալի է նրա դրուժյան մեջ:

— Հըմ, հըմ, — ասավ իշխանն ու սեղան նստեց:

Ափսոսն անմաքուր թվաց նրան. բիծը ցույց տվեց ու նետեց մի կողմ: Տիխոնը բռնեց ու տվեց բուֆետապահին: Փոքրիկ իշխանուհին անառողջ չէր. բայց այն աստիճան անհազձահարելի կերպով վախենում էր իշխանից, որ լսելով թե նրա տրամադրությունը վատ է, որոշեց սեղանատուն շփնալ:

— Ես երեխայի համար եմ վախենում, — ասավ նա m-lle Բուրիենին, — աստված պիտի ինչ կարող է պատահել վախից:

Ահասարակ փոքրիկ իշխանուհին Լիսիե Գորիում ապրում էր միշտ վախը սրտում ու հակակրանք էր զգում դեպի իշխանը, որն ինքը չէր գիտակցում, որովհետև վախն այնքան էր գերակալում, որ նա այդ բանը չէր կարողանում զգալ: Հակակրանքի զգացում ունեւր և իշխանը, բայց արհամարհանքը խլացնում էր այն: Փոքրիկ իշխանուհին առանձնապես համակրում էր m-lle Բուրիենին, օրերն անցնում էր նրա հետ, խնդրում էր նրան գիշերել իր սենյակում և հաճախ նրա հետ խոսում էր սկեսրայրի մասին ու քննադատում նրան:

— Il nous arrive du monde, mon prince¹, — ասավ m-lle Բուրիենը, իր վարդազույն ձեռներով ճերմակ անձեռոցիկը բանալով: — Son excellence le prince Kouraguine avec son fils, à ce que j'ai entendu dire² — հարցականորեն ասավ նա:

— Հըմ... այդ excellence-ը ընչին տղա է... ես եմ նրան կուլեգիայի մեջ ընդունել տվել, — ասավ իշխանը վիրավորված: — Իսկ որդին ինչո՞ւ համար է, հասկանալ չեմ կարողանում: Իշխանուհի կիզավետա Կառլովնան և իշխանադուստր Մարիան, գուցե, գիտեն. ես չգիտեմ ինչու համար է որդուն բերում այստեղ: Նա ինձ հարկավոր չէ: — Եվ նա նայեց կասկարմիր կտրած աղջկան: — Հիվանդ ես, ինչ է: Մինիստրի երկյուղից, ինչպես քիչ առաջ այդ հիմար Ալպատիչն ասավ:

¹ Մեզ մոտ հյուրեր են գալիս, իշխան:

² Նորին պայծառափայլություն իշխան Կուրագինը որդու հետ, որքան լսեցի:

— Ոչ, mon père.

Որքան էլ m-lle Բուրիենը խոսակցութեան անաջող նյութ ընտրեց, նա այնուամենայնիվ կանգ շատով և շարունակեց շաղակրատել ջերմոցների մասին, նոր բացվող ծաղկի գեղեցկութեան մասին, և իշխանն արգանակից հետո մեղմացավ:

Ճաշից հետո նա գնաց հարսի սենյակը: Փոքրիկ իշխանուհին պատիկ սեղանի մոտ նստած խոսում էր սպասուհի Մաշայի հետ: Սկեսրայրին տեսնելով՝ իշխանուհին զուճատվեց:

Փոքրիկ իշխանուհին շատ էր փոխվել: Նա այժմ ավելի տգեղ էր, քան գեղեցիկ: Այտերը կախ էին ընկել, շուրթը բարձրացել էր վեր, աչքերը փոս էին ընկել:

— Այո, մի տեսակ ծանրություն, — պատասխանեց նա իշխանի այն հարցին, թե ի՞նչ է զգում:

— Որևէ բան հարկավո՞ր չէ:

— Ոչ, merci, mon père¹.

— Դե, լավ, լավ:

Նա դուրս եկավ և գնաց մինչև սպասասրահը: Ալպատիչը, զլուխը կախ, կանգնած էր այդտեղ:

— Զյունը շաղ տվի՞ր ճանապարհի վրա:

— Այո, ձերդ պայծառափայլություն. ներեցեք, ի սեր աստծո, այդ եղել է հիմարություն:

Իշխանն ընդհատեց նրան ու ծիծաղեց իր անբնական ծիծաղով:

— Դե, լավ, լավ:

Նա երկարեց ձեռք, որն Ալպատիչը համբուրեց, և իշխանը մտավ իր առանձնասենյակը:

Երեկոյան եկավ իշխան Վասիլին: Ծառուղում նրան դիմավորեցին կառապաններն ու սպասավորները և նրա սայլակն ու սահնակը աղմուկով, դիտմամբ ձյուն շաղ տված ճանապարհով բերին մինչև տան թևակը:

Իշխան Վասիլիին ու Անատոլիին առանձին սենյակներ հատկացրին:

Անատոլը կամզոլը հանած և ձեռները մեջքին կանթած՝ նստել էր սեղանի առաջ, որի անկյունին և սևեռել էր իր գե-

¹ Ծնորհակալ եմ, հայրիկ:

դեցիկ խոշոր աչքերը: Նա իր ամբողջ կյանքը համարում էր մի անընդհատ զվարճություն, որ ինչ-որ մեկը, չգիտես ինչու, պարտավորվել էր սարքել նրա համար: Այդպես էր պատկերացնում էր իր այս ճամփորդությունը և այցելությունը շար ծերունուն և նրա հարուստ ու տգեղ ժառանգուհուն: Այս ամենը, նրա ենթադրությունամբ, կարող էր շատ լավ և զվարճալի ընթացք ունենալ: Եվ ինչո՞ւ չպսակվել, երբ այդ իշխանադուստրը հարուստ է: Դա բնավ չի խանգարում, մտածեց Անատոլը:

Նա ածիվեց, խնամքով ու պճնասիրությամբ օժվեց բուրավետ օժանելիքներով և իր բնածին բարեհոգի-հաղթական արտահայտությունամբ, գեղեցիկ գլուխը բարձր բռնած՝ գնաց հոր սենյակը: Իշխան Վասիլիի երկու սենեկապահը խնամքով հագցնում էին նրան. նա ինքն եռանդով շուրջն էր նայում. զվարթությունամբ դիտով արավ ներս մտնող որդուն, որ կարծես ասելիս լիներ. «Այդպե՛ս, դու ինձ այդպես էլ պետք ես»:

— Ձէ, հայրիկ, առանց կատակի, շա՛տ է տգեղ: Հը՞, — հարցրեց նա, կարծես շարունակելով մի խոսակցություն, որ ճանապարհին շատ անգամ էին ունեցել:

— Հերիք է: Հիմարություն է: Գլխավորը — աշխատիր հարգալից ու խոհեմ լինել ծեր իշխանի հետ:

— Եթե հանդիմանի՝ կթողնեմ-կերթամ, — ասավ Անատոլը: — Ես այդ ծերունիներին տանել չեմ կարող: Հը՞:

— Հիշիր, որ քո վարքից է կախված ամեն ինչ:

Այդ միջոցին աղջկանոցում ոչ միայն մինիստրի ու նրա որդու գալն էր հայտնի, այլև նրանց արտաքինն արդեն մանրամասնորեն նկարագրված էր: Իշխանադուստր Մարիան մեծակ նստել էր իր սենյակում և իզուր աշխատում էր զսպել-հաղթահարել իր ներքին հուզումը:

Ենչո՞ւ էին գրում, ինչո՞ւ Լիզան ասավ ինձ այդ մասին: Ձէ որ այդ բանը չի կարող գլուխ գալ, — ասում էր նա ինքն փրկն, հայելուն նայելով: — Էլ ինչպե՛ս գնամ հյուրասրահ: Եթե անգամ նա ինձ դուր գա, ես չեմ կարող այժմ նրա հետ անկեղծ լինել: Սակայն հոր նայվածքը հիշելով միայն սարսափ էր զգում:

Փոքրիկ իշխանուհին և m-lle Բուրիենը բոլոր հարկավոր տեղեկություններն արգեն ստացել էին սպասուհի Մաշայից,

թե որքան կարմրերես, սևահոն գեղեցիկ տղամարդ է մինիստրի որդին, թե ինչպես հայրը ոտները հագիվ էր փոխել աստիճանները բարձրանալիս, իսկ որդին, արծվի պես, երեք աստիճան միանգամից էր անցել: Այս տեղեկություններն ստանալով, փոքրիկ իշխանուհին ու m-lle Բուրիենը, դեռ միջանցքում եռանդուն խոսակցելով, մտան իշխանադուստր սենյակը:

— Ils sont arrivés, Marie¹, գիտե՞ք, — ասավ փոքրիկ իշխանուհին, փորը դժվարությամբ շարժելով և ծանրոյ են բազկաթոռ նստելով:

Նա այլևս առավոտյան հագուստով չէր. հագել էր իր ամենալավ զգեստներից մեկը. գլուխը հարդարել էր խնամքով, իսկ դիմքը փայլում էր մի առանձին կենդանությունամբ, որի տակից, սակայն, երևում էին նրա ավրված ու քարացած դիմադժերը: Այդ հագուստի մեջ, որով սովորաբար լինում էր նա Պետերբուրգի աշխարհիկ շրջաններում, ավելի ևս նկատելի էր, թե որքան շատ է տգեղացել նա: M-lle Բուրիենի վրա նույնպես երևացել էր հագուստի աննկատելի բարելավում, որը նրա սիրունիկ, թարմ դեմքին ավելի շատ հմայք էր տալիս:

— Eh bien, et vous restez comme vous êtes, chère princesse? — խոսեց նա: — On va venir annoncer, que ces messieurs sont au salon; il faudra descendre, et vous ne faites pas un petit brin de toilette!²

Փոքրիկ իշխանուհին վեր կացավ տեղից, զանգահարեց սպասուհուն և ուրախ-զվարթ սկսեց մտածել, թե ինչպես հագցնի իշխանադուստր Մարիային: Իշխանադուստր Մարիան իր սեփական արժանապատվության զգացումը վիրավորված էր համարում, որ խոստացված փեսացուի գալուստը հուզեց իրեն, և էլ ավելի վիրավորված էր նրանից, որ իր երկու ընկերուհին չէին էլ ենթադրում, թե դա այլ կերպ կարող է լինել: Ասեք նրանց, թե ամոթ է զգում իր և նրանց համար, նշանակում է մատներ իր հուզումը. բացի դրանից՝ հրաժարվել

¹ Նրանք եկան. Մարի:
² Է. իսկ դուք մնալու՞ եք ձեր հագի զգեստներով, իշխանադուստր: Հիմա կգան կհայտնեն, թե սեղանատուն են եկել: Ստիպված պիտի լինենք ցած իջնել. իսկ դուք գոնե մի քիչ զարդարվե՛ք:

առաջարկված հագուստներից՝ դա առիթ կտար երկար ու բարակ կատակների ու թախանձանքների: Նա կարմրեց, գեղեցիկ աչքերը հանգան, դեմքը ծածկվեց բծերով և նա, զոհաբերվողի այն ոչ գեղեցիկ արտահայտությամբ, որ հաճախ լինում էր նրա դեմքին, անձնատուր եղավ m-lle Բուրիենին ու կիզային: Այդ երկու կիսն էլ միանգամայն անկեղծորեն աշխատում էին գեղեցկացնել նրան: Նա այնքան տգեղ էր, որ ոչ մեկը չէր կարող մտածել հետը մրցելու մասին. ուստի նրանք միանգամայն անկեղծորեն, կանացի միամիտ ու հաստատուն համոզումով, թե հագուստը գեղեցկություն է տալիս դեմքին, սկսեցին հագցնել նրան:

— Ոչ, ma bonne amie¹, այս հագուստը լավ չէ, — ասում էր կիզան, հեռվից, կողքանց իշխանադստերը զննելով: Գու ախտեղ մուգ կարմիր զգեստ ունես, ասա՛ թող բերեն: Իսկապես: Գուցե և այսօր վճռվում է բախտդ: Սա չափազանց պայծառ է. լավ չէ. ոչ, վատն է:

Վատը ոչ թե հագուստն էր, այլ իշխանադստեր դեմքն ու կազմվածքը, բայց m-lle Բուրիենն ու փոքրիկ իշխանուհին այդ չէին զգում. նրանց շարունակ թվում էր, թե եթե վերև սանրած մազերին երկնագույն ժապավեն կապեին, և եթե կինամոնագույն հագուստի վրայից մի երկնագույն շարֆ իջեցնեին և այն, այդ դեպքում ամեն ինչ լավ կլիներ: Նրանք մոռանում էին, որ ահաբեկված դեմքն ու կազմվածքը չէր կարելի փոխել, ուստի և որքան էլ ձևափոխում էին այդ դեմքի շրջանակն ու զարդարանքը, դեմքն ինքը մնում էր ողորմելի ու տգեղ: Երկու թե երեք փոփոխությունից հետո, որին իշխանադուստրը համակերպեց հլությամբ, երբ նրա մազերը սանրեցին դեպի վեր (ինչ որ բոլորովին փոխեց ու փշացրեց նրա դեմքը), երբ նա հագավ մուգ կարմիր զգեստը՝ երկնագույն շարֆով հանդերձ, փոքրիկ իշխանուհին մի երկու անգամ պըտրտվեց նրա շուրջը, փոքրիկ ձեռով ուղղեց զգեստի ծալքը, շարֆը և, գլուխը թեքելով, դիտեց մերթ այս, մերթ մյուս կողմից:

— Ոչ, այս չի կարելի, — ասավ նա ձեռներն իրար զարկելով: — Non, Marie, décidément ça ne vous va pas. Je vous

¹ Իմ բարի բարեկամս:

aime mieux dans votre petite robe grise de tous les jours. Non, de grâce, faites cela pour moi¹. Կատյա, — ասավ նա սպասուհուն, — զնա իշխանադստեր մոխրագույն զգեստը բեր, և հիմա կտեսնեք, m-lle Բուրիեն, թե ինչպես կհարմարեցնեմ, — ասավ նա արտիստական հաճույքը նախաճաշկողի ժպիտով:

Բայց երբ Կատյան պահանջված հագուստը բերեց, իշխանադուստր Մարիան անշարժ հայելու առջև նստած, նայում էր իր դեմքին, մեկ էլ նկատեց, որ աչքերը լցվել են արցունքով, բերանը դողում է, պատրաստվելով հեկեկալ:

— Voyons, chère princesse, — ասավ m-lle Բուրիենը, — encore un petit effort².

Փոքրիկ իշխանուհին, շրջազգեստն սպասուհու ձեռից առնելով, մոտեցավ Մարիային:

— Ոչ, հիմա կանենք բոլորովին պարզ կերպով, — ասավ նա:

Նրա, m-lle Բուրիենի և Կատյայի (որ ծիծաղում էր ինչ-որ բանի վրա) ձայները միախառնվեցին մի ուրախ թոթովանքի մեջ, որ նման էր թռչունների գեղզեղանքի:

— Non, laissez-moi³, — ասավ իշխանադուստրը:

Եվ նրա ձայնը հնչեց այնպես լուրջ և տառապանքի այնպիսի շեշտով, որ թռչունների գեղզեղանքն իսկույն լռեց: Նայեցին նրա արցունքով ու մտածումներով լեցուն աչքերին, որոնք աղերսանքով հռուլ էր իրենց վրա, և հասկացան, որ անօգուտ և նույնիսկ անգթություն է պնդելը:

— Au moins changez de coiffure, — ասավ փոքրիկ իշխանուհին: — Je vous disais, — հանդիմանանքով ասավ նա, m-lle Բուրիենին զառնալով: — Marie a une de ces figures, auxquelles ce genre de coiffure ne va pas du tout. Mais du tout, du tout, Changez de grâce⁴.

¹ Ոչ, Մարի, սա քեզ բոլորովին չի սազում: Ես քեզ քո ամենօրյա մոխրագույն շրջազգեստով ավելի եմ սիրում, խնդրում եմ, այդ բանն արա ինձ համար:

² Դե, սիրելի իշխանադուստր, դիմացեք մի փոքր էլ:

³ Ոչ, թողեք ինձ:

⁴ Գոնե մազերի սանրվածքը փոխեցեք. Մարիայի դեմքն այնպիսի դեմքերից է, որոնց այդ ձևի սանրվածքը չի սազում: Փոխեցեք, խնդրեմ:

— Laissez-moi, laissez-moi, tout ça m'est parfaitement égal¹, — պատասխանեց արցունքները դժվարութեամբ զսպող իշխանադուստրը:

M-lle Բուրիենը և փոքրիկ իշխանուհին ստիպված էին խոստովանել իրենք իրենց, որ իշխանադուստր Մարիան այդ կերպ ավելի տգեղ էր, քան երբևէ, բայց արդեն ուշ էր: Իշխանադուստրը նայեց նրանց՝ մտածումների ու տխրութեան մի արտահայտութեամբ, որ ծանոթ էր նրանց և վախ չէր ներշնչում իշխանադուստր Մարիայի հանդեպ: (Նա այդպիսի զգացում չէր ներշնչում և ոչ ոքի): Բայց գիտեին, որ երբ այդ արտահայտութեանը երևում է նրա դեմքին, նա դառնում է լռուակայաց և իր որոշումների մեջ անհողողող:

— Vous changerez, n'est-ce pas², — ասավ Լիզան, և երբ իշխանադուստրը չպատասխանեց, Լիզան դուրս եկավ սենյակից:

Իշխանադուստրը մնաց մենակ: Նա Լիզայի ցանկութունը չկատարեց. ոչ միայն գլխի սանրվածքը չփոխեց, այլև հայելուն չնայեց: Նա, աչքերը խոնարհելով և ձեռներն անզոր ցած կախելով, մնաց անխոս ու մտածկոտ նստած: Նրան պատկերացավ ամուսինը, մի տղամարդ, ուժեղ, գերիշխող և անբարոնեկիտրեն գրավիչ մի էակ, որը հանկարծ փոխադրում է նրան իր, միանգամայն այլ, երջանիկ աշխարհը: Ի՞նչ երեխան (այնպիսի մի երեխա, որ երեկ տեսավ ստնտուփի աղջկա գրկին) պատկերանում էր նրան իր սեփական կրծքին: Ամուսինը կանգնել ու քնքշութեամբ նայում է իրեն ու երեխային: «Բայց ոչ, դա անհնարին բան է. ես չափազանց տգեղ եմ», — մտածեց նա:

— Համեցեք թեյի: Իշխանը հիմա դուրս կգա, — ասավ սպասուհին դռան ետևից:

Իշխանադուստրն սթափվեց ու սարսափեց իր մտածումներից: Եվ նախքան ցած իջնելը, նա վեր կացավ, անցավ սրբապատկերներով զարդարված աղոթասենյակն ու, աչքերը սևեռելով կանթեղի լույսով լուսավորված փրկչի խոշոր սրբապատկերին, ձեռները ծալած մնաց մի քանի րոպե կանգնած: Տանջող մի կասկած կար նրա հոգում: Իր համար հնա-

բազմը է արդյոք սիրո խնդրում, երկրային սեր դեպի տղամարդը: Ամուսնութեան մասին մտածելով՝ իշխանադուստրը երազում էր և ընտանեկան երջանկություն և երեխաներ, բայց նրա գլխավոր, զորավոր ու թաքուն երազը՝ երկրային սերն էր: Այդ զգացմունքն այնքան ավելի էր սաստկանում, որքան ավելի էր աշխատում թաքցնել ուրիշներից և անգամ իրենից: «Աստված իմ, — ասում էր նա, — ի՞նչպես անեմ, որ սրտումս ճնշեմ այս սատանայական մտքերը: Ինչպես անեմ, որ ընդմիջտ հրաժարվեմ շար մտքերից, որպեսզի հանգիստ սրտով կատարեմ թո կամքը»: Հազիվ էր նա այդ հարցը տվել, երբ աստված արդեն պատասխանեց նրան իր սեփական սըրտում. «Ո՛չինչ մի՛ ցանկա քեզ համար. մի՛ որոնիր, մի՛ հուզվիր, մի՛ նախանձիր: Մարդկանց ապագան ու թո ճակատագիրը պետք է անհայտ մնա քեզ. բայց ապրիր այնպես, որ պատրաստ լինես ամեն ինչի: Եթե աստծուն հաճելի լինի փորձել քեզ ամուսնութեան պարտականութեանց մեջ, պատրաստ եղիր կատարելու նրա կամքը»: Այս հանգուստը: ցիչ մտքով (բայց և այնպես իր արգելված, թաքուն երկրային երազանքի իրագործման հույսով) իշխանադուստր Մարիան, հոգոց քաշելով, խաշակնքեց երեսն ու ցած իջավ, շմտածելով ոչ շրբազգեստի, ոչ մազերի սանրվածքի մասին, ոչ էլ այն մասին, թե ինչպես պիտի ներս մտնի և ինչ պիտի ասի: Այս բոլորն ինչ նշանակություն ունեն աստծու նախասահմանութեան հետ համեմատած, առանց որի կամքի մի հատիկ մաղ չի ընկնում մարդու գլխից:

IV

Երբ իշխանադուստր Մարիան ցած իջավ՝ իշխան Վասիլին ու որդին արգեն հյուրասրահում զրուցում էին փոքրիկ իշխանուհու և m-lle Բուրիենի հետ: Երբ նա իր ծանր քայլվածքով, կրունկների վրա քայլելով, ներս մտավ, տղամարդիկ և m-lle Բուրիենը վեր կացան տեղներից, իսկ փոքրիկ իշխանուհին նրան ցույց տալով՝ ասավ տղամարդկանց. Voilà Marie!¹ Իշխանադուստրը տեսավ բոլորին և տեսավ ամենայն

¹ Թողեք ինձ, միևնույն է ինձ համար:

² Դուք կփոխեք, այնպես չէ՞:

¹ Ահա Մարի:

մանրամասնությամբ: Տեսավ իշխան Վասիլիի դեմքը, որ իրեն տեսնելիս մի ակնթարթ մնաց անշարժ, ապա անմիջապես ժպտաց. և փոքրիկ իշխանուհու դեմքը, որ հետաքրքրությունը հետևում էր հյուրերին՝ Մարիայի թողած տպավորությունը նրանց դեմքին կարգալու: Իշխանազուտորը տեսավ և M-lle Բուրիենին՝ իր ժապավենով ու սիրունիկ երեսով՝ որ շտեննված եռանդուն նայվածքը սեռեց էր նրա վրա. բայց իշխանազուտորը չկարողացավ տեսնել նրան. տեսավ միայն խոշոր, պայծառ ու գեղեցիկ մի բան, որ դեպի իրեն դարձավ, երբ ինքը սենյակ մտավ: Մոտեցավ նախ իշխան Վասիլին, և իշխանազուտորը համբուրեց նրա ճաղատ գլուխը, որ իջեցրել էր իր ձեռք համբուրելու, և նրա խոսքերին պատասխանեց, թե ինքն, ընդհակառակը, նրան՝ իշխանին շատ լավ է հիշում: Հետո նրան մոտեցավ Անատոլը: Իշխանազուտորը դարձյալ շտեսավ նրան: Զգաց միայն իր ձեռն ամուր բռնող նուրբ ձեռքը, և շուրթերը հազիվ մոտեցրեց ճերմակ ճակատին, որի վերևը պոմադով օծված գեղեցիկ շեկ մազեր կային: Երբ իշխանազուտորը նրան նայեց, նրա գեղեցկությունն ապշեցրեց իրեն: Անատոլն աչ ձեռի բթամատը մունդիրի կոճակի տակը դրած, կուրծքը դուրս, իսկ մեջքը ետ գցած, մի ոտն օրորելով, գլուխը թեթևակի կախած, անխոս, զվարթ նայում էր իշխանազուտոր Մարիային, հավանորեն ամենևին նրա մասին չմտածելով: Անատոլը գրուցելու մեջ ո՛չ ննարամիտ էր, ո՛չ ճկուն, ո՛չ էլ պերճախոս, բայց դրա փոխարեն ուներ աշխարհիկ կյանքի համար մի թանկագին ընդունակություն՝ սառնասրտություն և անասան ինքնավստահություն: Կուսչին ծանոթության ժամանակ ոչ ինքնավստահ մարդը եթե լոխ և ցուլց տա, թե գիտակցում է այդ լուռության անպատշաճավորությունն ու ցանկանում է որևէ ելք գտնել, — վատ կլինի. բայց Անատոլը, ոտն օրորելով, լուռ էր և զվարթորեն դիտում իշխանազուտոր Մարիայի մազերի սանրվածքը: Երևում էր, որ նա այդպես հանգիստ կարող էր լուխ երկար ժամանակ: «Եթե մեկին անհարմար է թվում իմ լուռությունը, թող խոսի, իսկ ես չեմ ցանկանում», ասում էր կարծես նրա կերպարանքը: Բացի դրանից Անատոլն ուներ կանանց հետ վարվելու մի ձև, որն ամենից ավելի կանանց ներշնչում է հետաքրքրություն, ահ և մինչև իսկ սեր, — սեփական արժանապատվության և

գերազանցության գիտակցության ձևը: Նա իր տեսքով կարծես ասում էր նրանց. «Ճանաչում եմ ձեզ, ճանաչում եմ, էլ ինչ քաղ գալ ձեզ հետ: Դուք ուրախ կլինեիք»: Թերևս կանանց հանդիպելիս, նա այս բանը չէր մտածում (շատ հավանական է, որ — ոչ, որովհետև նա առհասարակ քիչ էր մտածում), բայց այդպիսի տեսք ուներ և այդ տեսակ մաներ: Իշխանազուտորն զգաց այդ և, կարծես ցուլց տալու համար, թե չի համարձակվում նրան զբաղեցնելու մասին մտածել, դարձավ իշխան Վասիլիին: Սկսվեց մի ընդհանուր ու կենդանի խոսակցություն՝ շնորհիվ փոքրիկ իշխանուհու ձայնի ու բեղիկներով շուրթի, որ շարունակ բարձրանում-բացում էր նրա ճերմակ ատամները: Նա իշխան Վասիլիին դիմավորեց կատակախառն ձևով, որ հաճախ գործադրում են ուրախ-շաղակրատող մարդիկ, որոնց միջև ենթադրվում են վաղուց ի վեր հաստատված մտերմական կատակներ, հաճախ ոչ բոլորին հայտնի, զվարճալի հիշողություններ, այնինչ ոչ մի այդպիսի հիշողություն չկա, ինչ որ շունեին և փոքրիկ իշխանուհին ու իշխան Վասիլին: Իշխան Վասիլին սիրով ենթարկվեց ընդունելության այդ եղանակին. փոքրիկ իշխանուհին այդ մտերմական զրույցին մասնակից դարձրեց և Անատոլին, որին գրեթե չէր ճանաչում: M-lle Բուրիենը նույնպես մասնակցեց այդ ընդհանուր զրույցին, և մինչև իսկ իշխանազուտոր Մարիան հաճույքով զգաց, որ ինքն ևս գտնվում է այդ զվարթ հիշողությունների ոլորտում:

— Այ, հիմա գոնե, մենք ձեզ լիովին կվայելենք, սիրելի իշխան, — ասում էր փոքրիկ իշխանուհին, իշխան Վասիլիին, իհարկե Ֆրանսերեն, — այստեղ Annette-ի կրեկույթները չեն, որտեղից միշտ թողնում-փախչում էիք. հիշո՞ւմ եք cette chere Annette¹.

— Բայց Annette-ի նման քաղաքականության մասին չխոսե՛ք:

— Իսկ հիշո՞ւմ եք մեր թեյի փոքրիկ սեղանը:

— Օ՛, այո:

— Իսկ դուք ինչո՞ւ երբեք Annette-ի տուն չէիք գալիս, — հարցրեց փոքրիկ իշխանուհին Անատոլին: — Բայց ես գիտեմ,

¹ Սիրելի Աննետին:

գիտեմ,— ասալ նա, աչքով անելով,— ձեր Իպպոլիտ եղբայրը պատմել է ինձ ձեր գործերի մասին: Օ՛հ,— Իշխանուհին մատը թափ տվեց նրա վրա:— Փարիզի ձեր արկածները նույնպես գիտեմ:

— Իսկ նա, Իպպոլիտը քեզ չի՞ ասել,— ասավ իշխան Վասիլին (որդուն դառնալով և իշխանուհու ձեռք բռնելով, կարծես նա ուզում էր փախչել, բայց ինքը հագիվ պահեց նրան),— չի՞ ասել, թե ինչպես ինքը՝ Իպպոլիտը հալումաշ էր լինում այս սիրունիկ իշխանուհու սիրուց և ինչպես իշխանուհին le mettait à la porte¹:

— Oh! C'est la perle des femmes, princesse!², — դարձավ նա իշխանազուստր Մարիային:

«Փարիզ» խոսքի վրա m-Ile Բուրիենը առիթը շփախցրեց նույնպես ընդհանուր զրույցին խառնվելու: Նա իրեն թույլ տվեց հարցնել, թե վաղո՞ւց է արդյոք Անատոլը հեռացել Փարիզից, և թե որքան է նրան դուր եկել այդ քաղաքը: Անատոլը մեծ սիրով պատասխանեց Ֆրանսուհուն և, ժպտերես, նրան նայելով, խոսեց հետը նրա հայրենիքի մասին: Սիրունիկ Բուրիենին տեսնելով՝ Անատոլը վճռեց, որ այստեղ էլ, գլուզում, ժամանակը ձանձրալի չի անցնի: «Այս Ֆրանսուհին լավիկն է,— մտածում էր նա, օրիորդին նայելով,— հույս ունեմ, որ իշխանազուստր Մարիան, ամուսնանալով, սրան հետը կբերի,— մտածում էր նա,— la petite est gentille»³:

Մերունի իշխանը հանդարտ հագնվում էր իր առանձնասենյակում, հոնքերը կիտելով ու անելիքը կշռադատելով: Հյուրերի գալուստը բարկացնում էր նրան: «Իմ ինչի՞ն են իշխան Վասիլին ու նրա որդին: Իշխան Վասիլին դատարկ պարծենչոտի մեկն է. որդին էլ, երևի, իր նմանը կլինի», քրթմընջում էր նա ինքն իրեն: Նրան բարկացնում էր այն, որ հյուրերի գալուստն իր սրտում զարթեցրել էր մի շուտված և շարունակ նրա առաջ ծառայող ու նրա կողմից ետ մղված մի խնդիր,— մի խնդիր, որի նկատմամբ իշխանը միշտ խաբուրում էր ինքն իրեն: Խնդիրն այն էր, թե ինքը կարո՞ղ է արդյոք

երբեկցե բաժանվել իշխանազուստր Մարիայից և հանձնել նրան ամուսնուն: Իշխանը երբեք այդ հարցն ուղղակի չէր տալիս իրեն, առաջուց իմանալով, որ կպատասխանի արդարությամբ, իսկ արդարությունը ոչ միայն կհակասեր նրա զգացմունքին,— այլև կխախտեր նրա կյանքի հիմքերը: Իշխան Նիկոլայ Անդրեևիչին կյանքը, առանց իշխանազուստր Մարիայի (չնայած որ նրան քիչ էր գնահատում), անիմաստ էր թվում: «Եվ ինչո՞ւ համար է նա ամուսնանում,— մտածում էր նա,— երևի դժբախտանալու: Ահավասիկ կիզան ամուսնացել է Անդրեյի հետ (այժմ նրանից լավ ամուսին, կարծեմ, գժվար է գտնել): Բայց մի՞թե կիզան գոհ է իր վիճակից: Եվ ո՞վ կնուգթյան կտանի նրան սիրուց: Տգեղ է, անճարակ: Կատենն միայն կապերի, հարստության համար: Բայց մի՞թե առանց ամուսնության, աղջիկ մնալով չեն ապրում: Ապրում են ավելի երջանիկ»: Այսպես էր մտածում իշխան Նիկոլայ Անդրեևիչը հագնվելով, բայց և այնպես շարունակ հետաձգվող խնդիրը շտապ լուծում էր պահանջում: Իշխան Վասիլին որդուն բերել է, հավանորեն, առաջարկ անելու մտադրությամբ և, երևի, այսօր կամ վաղն ուղղակի պատասխան կպահանջի: Կարգին անուն և դիրք ունի բարձր շրջանում: «Ինչ կա որ, ես դեմ չեմ,— ասում էր իշխանն ինքն իրեն,— բայց տեսնե՞ք տղան արժանի է Մարիային: Եվ այդ հիմա կտեսնենք»:

— Եվ այդ հիմա կտեսնենք,— ասավ բարձրաձայն:— Այդ հիմա կտեսնենք:

Եվ նա, ինչպես միշտ, առույգ քայլերով մտավ հյուրասրահ, մի արագ հայացք գցեց բոլորի վրա, նկատեց թե՛ փոքրիկ իշխանուհու փոխած շրջազգեստը, թե՛ Բուրիենի ժապավենը, թե՛ իշխանազուստր Մարիայի մազերի անճոռնի սանրվածքը, թե՛ Բուրիենի ու Անատոլի ժպիտները և թե՛ իր իշխանազուստր մենակությունն ընդհանուր խոսակցության մեջ: «Զուգվել է հիմարի՞ պես,— մտածեց նա, շարացած նայելով աղջրկան:— Զի՞ ամաչում. իսկ փեսացուն նրան բանի տեղ էլ չի դնում»:

Մտեցավ իշխան Վասիլին:

— է, բարև, բարև. ուրախ եմ տեսնելուս:

— Լավ բարև կամի համար նրուսաղեմ էլ կերթան,— խոսեց իշխան Վասիլին, ինչպես միշտ, արագ, ինքնավստահ ու

¹ դուրս արավ նրան տնից:

² Օ՛հ, սա ոսկի կին է, իշխանուհի:

³ Այս մանկիկը — շատ լավիկն է:

մտերմաբար: — Ահավասիկ երկրորդ որդիս, խնդրում եմ սիրել և հովանավորել...

Իշխան Նիկողայ Անդրեևիչը մի հայացքով գննեց Անատոլին:

— Կեցցե, շնորհքով տղա է, — ասավ նա, — դե, մոտեցիր համբուրիր, — և նա այտը դեմ արավ Անատոլին:

Անատոլը համբուրեց ծերունուն և հետաքրքրությամբ ու միանգամայն հանգիստ նայեց նրան, սպասելով, թե շուտով արդյոք կսկսի նա իր տարօրինակությունները, որոնց մասին խոսել է հայրը:

Իշխան Նիկողայ Անդրեևիչը նստեց իր սովորական տեղը՝ բազմոցի անկյունում, բազկաթոռ քաշեց իշխան Վասիլիի համար, մատնացույց արավ, որ նստի և սկսեց հարցուփորձել քաղաքական խնդիրներից ու նորություններից: Նա իշխան Վասիլիի պատմածը լսում էր կարծես ուշադրությամբ, բայց շարունակ իշխանադուստր Մարիային էր նայում:

— Ուրեմն Պոտսդամից են գրո՞ւմ, — կրկնեց նա իշխան Վասիլիի վերջին խոսքերը և հանկարծ, վեր կենալով, մոտեցավ աղջկան:

— Դու այդ հյուրերի համա՞ր ես այդպես գուզվել, հը՞, — ասավ նա: — Գեղեցի՞կ ես, շա՞տ գեղեցիկ: Դու հյուրերին ներկայանալու համար սանրվել ես նոր ձևով, ես էլ հյուրերի ներկայությամբ ասում եմ քեզ, որ այսուհետև արդուզարդդ չը՞փոխես առանց ինձ հարցնելու:

— Mon père, մեղավորը ես եմ, — կարմրելով միջամտեց փոքրիկ իշխանուհին:

— Դուք լիովին ազատ եք ձեր ուզածն անելու, — ասավ իշխան Նիկողայ Անդրեևիչը՝ հարսի առջև խոնարհվելով, — իսկ նա կարիք չունի իրեն ալլանդակելու, առանց այն էլ տըգեղ է:

Նվ նա նորից նստեց իր տեղը, այլևս ուշադրություն չըդարձնելով աղջկա վրա, որի աչքերն արցունքով լցվել էին արդեն:

— Ընդհակառակը, այս ձևի սանրվածքը շատ է սազում իշխանադստեր, ասավ իշխան Վասիլին:

— Է, սիրելիս, երիտասարդ իշխան, ի՞նչպես է նրա անու-

նը, — ասավ իշխան Նիկողայ Անդրեևիչը՝ Անատոլին դիմելով, — արի այստեղ, խոսենք, ծանոթանանք:

«Ահա թե երբ է սկսվում զվարճալին», մտածեց Անատոլը և ժպտը դեմքին նստեց ծեր իշխանի մոտ:

— Ահա թե ինչ. դուք, սիրելիս, ասում են արտասահմանումն եք կրթվել, և ոչ թե ինձ ու հորդ նման տիրացուից եք գրագիտություն սովորել: Ասացեք խնդրեմ, սիրելիս, դուք հիմա հեծյալ զվարդիայո՞ւմ եք ծառայում, — հարցրեց ծերունին, մոտիկից և ուշադիր Անատոլին նայելով:

— Ոչ, փոխադրվել եմ բանակը, — պատասխանեց Անատոլը, ծիծաղը հագիվ զսպելով:

— Հը՞. լավ եք արել. ուզում եք ուրեմն ծառայե՞լ թագավորին և հայրենիքին: Պատերազմի օրեր են. ձեզ նման կտրիճը պետք է ծառայի, պետք է ծառայի: Գործող բանակի՞ մեջ եք:

— Ոչ, իշխան: Մեր գունդը գնացել է պատերազմի դաշտը, բայց ես համարվում եմ նրա մեջ: Ո՞ր գնդի մեջ եմ համարվում, պապա, — ծիծաղելով հորը դարձավ Անատոլը:

— Հիանալի ծառայություն, հիանալի: Ո՞ր գնդի մեջ եմ համարվում: Հա-հա՞-հա՞, — քրքջաց իշխան Նիկողայ Անդրեևիչը:

Անատոլը քրքջաց ավելի բարձր:

Հանկարծ իշխան Նիկողայ Անդրեևիչը հոնքերը կիտեց:

— Դե, գնա, — ասավ նա Անատոլին:

Անատոլը ժպտը դեմքին նորից մոտեցավ կանանց:

— Դու որդիներիդ, կարծեմ, արտասահմանումն ես կըրթել, իշխան Վասիլի, Հը՞, — դարձավ ծեր իշխանն իշխան Վասիլիին:

— Արել եմ՝ ինչ կարողացել եմ. և ես ձեզ կասեմ, որ այնտեղի կրթությունը շատ ավելի լավ է մերիսից:

— Այո, հիմա ամեն բան փոխված է, ամեն ինչ նոր ձևով: Կտրիճ տղա է, կեցցե՛: Դե, գնանք սենյակս:

Նա իշխան Վասիլիի թևը բունեց ու տարավ իր առանձնասենյակը:

Իշխան Վասիլին նրա հետ մենակ մնալով՝ անմիջապես հայտնեց իր ցանկությունը:

— Ի՞նչ ես կարծում որ, — ասավ ծեր իշխանը հերսոտ, — որ ես նրան պահո՞ւմ եմ, չեմ կարող բաժանվե՞լ: — Երևակայում են, — վրա բերեց բարկացած: — Ինձ համար մեկ է, թեկուզ վա՛ղն ամուսնանա: Միայն թե ասում եմ քեզ, որ փեսայիս ուզում եմ ավելի լավ ճանաչել: Դու իմ սկզբունքը գիտես. ամեն ինչ բա՛ց-աշկարա է: Վաղը քո ներկայութեամբ կհարցնեմ. եթե իշխանադուստրը ցանկանա, թո՛ղ որդիդ ապրի մեզ մոտ: Թող ապրի՝ կոեսենեմ: — Իշխանը փնջացրեց: — Թո՛ղ ամուսնանա, ինձ համար միևնույն է, — գոչեց նա այն ծաղրտան ձայնով, որով պտուց արդուն հրաժեշտ տալիս:

— Ես ձեզ ուղղակի կասեմ, — ասավ իշխան Վասիլին խորամանկ մարդու տոնով, որը համոզվել է թե խորամանկությունն ավելորդ է թափանցամիտ խոսակցի հանդեպ: — Դուք մարդկանց ներքին էությունը շատ լավ եք տեսնում: Անատոլը հանձար չէ, բայց ազնիվ, պարկեշտ տղա է և հիանալի որդի:

— Դե, լավ, կոեսենք:

Ինչպես այդ միշտ պատահում է երկար ժամանակ առանց տղամարդկանց հասարակութեան ապրող կանանց, Անատոլի երևումով իշխան Բալկոնսկու տանն ապրող երեք կինն էլ միատեսակ զգացին, որ իրենց կյանքը մինչ այդ կյանք չի եղել: Մտածելու, զգալու, դիտելու կարողությունը իսկույն տասնապատկվեց երեքի մեջ էլ, և կարծես մինչև այժմ խավարի մեջ անցնող նրանց կյանքը հանկարծ լուսավորվեց մի նոր, նշանակալից լույսով:

Իշխանադուստրն այլևս չէր մտածում դեմքի ու սանրվածքի մասին: Նրա ամբողջ ուշադրությունը կլանել էր երկտասարդի բաց, գեղեցիկ դեմքը, երիտասարդի, որը, թերևս, իր ամուսինն էր լինելու: Անատոլը նրան թվում էր բարի, քաջ, վճռական ու արիասիրտ: Իշխանադուստրը համոզված էր այս բանում: Ապագա ընտանեկան կյանքի մասին հագուստավոր երազանքներ էին անցնում-դառնում նրա երևակայության մեջ: Նա վանում և աշխատում էր թաքցնել դրանց:

«Բայց ես չափազանց սառը չե՞մ նրա հետ, — մտածում էր իշխանադուստրը: — Աշխատեմ զսպել ինձ, որովհետև սրբտիս խորքում ինձ արդեն շատ մոտ եմ զգում նրան. բայց չե՞ որ նա չի իմանում, թե ինչ կարծիք ունեմ իր մասին և ինչն է

եմ մտածում, ու կարող է երևակայել, թե ինքն անհաճո է ինձ»:

Նվ իշխանադուստրն աշխատում ու չէր կարողանում սիրալիր լինել նոր հյուրի հետ: «La pauvre fille! Elle est diablement laide»¹, — մտածում էր Անատոլը նրա մասին:

M-lle Բուրիենը, որ նույնպես շատ հուզված էր Անատոլի գալուց, տարբեր բան էր մտածում: Իհարկե, առանց որոշ դիրքի առանց հարազատների ու բարեկամների և անգամ առանց հայրենիքի այդ սիրուն ջահել աղջիկը չէր մտածում իր կյանքը նվիրել իշխան Նիկոլայ Անդրեևիչին ծառայելու, նրա համար զրքեր կարգալու և իշխանադուստր Մարիայի բարեկամուհին լինելու: M-lle Բուրիենը վաղուց սպասում էր մի ուս իշխանի, որ մեկն կարող է գնահատել իր առավելությունը տղեղ, վատ հագնված, անճարակ ուս իշխանուհիների հանդեպ, սիրահարվել իրեն ու տանե՛լ. և այդ ուս իշխանն ահա եկել էր, վերջապես: M-lle Բուրիենը սիրում էր իր երևակայության մեջ կրկնել մի սատմություն, որ լսել էր իր մորաքրոջից և լրացրել էր ինքը: Պատմությունը վերաբերում էր մի գայթակղված աղջկա, որին հայտնվում ու հանդիմանում է խեղճ մայրը, թե ինչո՞ւ առանց պսակի անձնատուր է եղել տղամարդու: M-lle Բուրիենը հաճախ արտասվելու շափ հուզվում էր, երևակայության մեջ այդ պատմությունը նրան՝ գայթակղիչին պատմելով: Այժմ այդ Նա-ն, իսկական ուս իշխանը, եկել էր: Սա կտանի իրեն, հետո կհայտնվի ma pauvre mère², և նա կամուսնանա իր հետ: Այսպես էր պատկերանում M-lle Բուրիենին իր ապագա կյանքը՝ հենց այդ ժամանակ, երբ Անատոլի հետ խոսում էր Փարիզի մասին: Հաշիվը չէր դեկավարում M-lle Բուրիենին (նա մի վայրկյան անգամ չէր կշռադատում այն, ինչ պիտի աներ), այլ այդ բոլորը վաղուց արդեն պատրաստ էին նրա գլխում և այժմ միայն կենտրոնանում էին նորեկ Անատոլի շուրջը, որին, աշխատում էր որքան կարելի է շատ դուր գալ:

Փոքրիկ իշխանուհին, ինչպես զորագնդի պառավ ձին ժողի ձայնը լսելիս, անզիտակցաբար ու իր դրությունը մոռանա-

¹ Խեղճ աղջիկ, զարհուրելի տղեղ է:

² Իմ խեղճ մայրը:

լով, պատրաստվեց կոկետու՞թյան սովորական արշավանքի, առանց ետին մտքի կամ մրցակցութեան նպատակի, այլ միամիտ ուրախութեամբ:

Չնայած որ Անատոլը կանանց հասարակութեան մեջ իրեն սովորաբար պահում էր այնպես, թե ձանձրացել է կանանց հետապնդումից, բայց սնապարծութեամբ բավականութիւն էր զգում, տեսնելով իր ազդեցութիւնն այդ երեք կնոջ վրա: Բացի դրանից, դեպի սիրունիկ ու գրգռիչ m-lle Բուրիենն զգում էր մի զազանային կիրք, մի կիրք, որ վայրկենապես տիրում էր նրան և դրդում ամենակոպիտ ու համարձակ քայլերի:

Թեյից հետո բոլորն անցան բազմոցարան, և իշխանադուստր Մարիային խնդրեցին դաշնամուր նվագել: Անատոլը թիկն տվեց նրա առջև, m-lle Բուրիենի կողքին, և ուրախ-ծիծաղկոտ աչքերով դիտում էր իշխանադուստր Մարիային: Իշխանադուստրը տանջալից և ուրախ հուզումով զգում էր նրա՝ իր վրա սեեռած հայացքը: Միրած սոնատը նրան փոխադրում էր մի գրավիչ-բանաստեղծական աշխարհ, իսկ իր վրա հառած հայացքը՝ այդ աշխարհը դարձնում էր ավելի դյուրթիւ: Իսկ Անատոլի հայացքը, թեև հառած էր նրան, բայց նրան չէր վերաբերում, այլ m-lle Բուրիենի ոտի շարժումներին, որին այդ միջոցին, դաշնամուրի տակ, Անատոլը հալածում էր իր ոտքով: M-lle Բուրիենը նույնպես նայում էր իշխանադուստր Մարիային, և նրա գեղեցիկ աչքերում նույնպես իշխանադուստրը կարդաց երկյուղած ուրախութեան ու հույսի մի նոր արտահայտութիւն:

«Որքա՞ն սիրում է ինձ Բուրիենը, — մտածեց իշխանադուստրը: — Որքա՞ն երջանիկ եմ ես և ինչպե՞ս կարող եմ երջանիկ լինել այսպիսի բարեկամուհու և այսպիսի ամուսնու հետ: Մի՞թե ամուսին», մտածեց նա, չհամարձակվելով նայել Անատոլի դեմքին, զգալով նրա նույն սեեռուն հայացքը:

Երեկոյան, ընթրիքից հետո, երբ բաժանվում էին, Անատոլը համբուրեց իշխանադուստր Մարիայի ձեռը: Իշխանադուստրն ինքն էլ զարմացավ, թե ինչպես համարձակութիւն ունեցավ ուղիղ նայել իր կարճատես աչքերին մոտեցող գեղեցիկ դեմքին: Ապա Անատոլը համբուրեց m-lle Բուրիենի ձեռը (դա անվայել էր, բայց Անատոլն այդ արավ վստահ և

պարզ ձևով), և m-lle Բուրիենը, կասկարմիր կտրելով, վախեցած նայեց իշխանադուստր Մարիային:

«Quelle délicatesse¹, — մտածեց իշխանադուստրը: — Մի՞թե Amelie-ն (այդպես էին կոչում m-lle Բուրիենին) կարծում է, թե կարող եմ իրեն խանգարել և զննահատել իմ նկատմամբ ունեցած իր անբիծ քնքշութիւնն ու անձնվիրութիւնը»: Նա մոտեցավ m-lle Բուրիենին ու պինդ համբուրեց նրան: Անատոլը մոտեցավ փոքրիկ իշխանուհու ձեռն ևս համբուրելու:

— Non, non, non! Quand votre père m'écrira, que vous vous conduisez bien, je vous donnerai ma main à baiser. Pas avant². — Եվ, մատը բարձրացնելով ու ժպտալով, դուրս եկավ սենյակից:

V

Բոլորը ցրվեցին, և այդ գիշեր երկար ոչ ոք չէր կարողանում աչք փակել, բացի Անատոլից, որ պառկելուն պես քնեց:

«Մի՞թե դա է իմ ամուսինը, հենց այդ օտար, գեղեցիկ, բարի տղամարդը, մանավանդ բարի», մտածում էր իշխանադուստր Մարիան, և հաջ, որ գրեթե անծանոթ էր նրան, տիրեց նրա սրտին: Վախենում էր շուրջը նայել. թվում էր, թե մեկը կանգնած է պարտակի ետև, մութ անկյունում: Եվ այդ մեկը նա էր — սատանան, և նա — այդ ճերմակ ձակատով, սև հոնքերով և կարմիր շուրթերով տղամարդը:

Նա զանգահարեց սպասուհուն և խնդրեց, որ պառկի իր սենյակում:

M-lle Բուրիենն այդ երեկո երկար շրջեց ձմեռային պարտեզում, իզուր մեկին սպասելով. մերթ ժպտում էր ինչ-որ մեկին, մերթ արտասվելու շափ հուզվում էր խեղճ մոր երևակայական խոսքերից, կշտամբում էր իրեն՝ անկումի համար:

Փոքրիկ իշխանուհին քրթմնջում էր սպասուհու վրա, որ անկողինը լավ չի շտկել: Չէր կարողանում պառկել ոչ կողքի, ոչ էլ կրծքի վրա: Ամեն կերպ էլ ծանր էր և անհարմար: Փորը

¹ Ի՞նչ գեղեկատութիւն:

² Ոչ, ո՛չ, ո՛չ: Երբ ձեր հայրն ինձ կգրի, թե ձեզ լավ եք պահում, այն ժամանակ թույլ կտամ, որ ձեռս համբուրեք: Գրանից առաջ՝ ոչ:

խանգարում էր նրան: Խանգարում էր ավելի, քան երբեք, մասնավանդ այժմ, երբ Անատոլի ներկայութունն իրեն փոխադրել էր մի այլ ժամանակ, երբ այդ չկար և ինքը թեթև էր ու գլխաթի: Կոֆտան հագած ու շամշիկ դրած նստել էր բազկաթոսին. իսկ Կատյան՝ քնատ ու խճճված մազերով՝ արդեն երրորդ անգամն էր գարձնում ու շտկում ծանր ներքնակը:

— Ես քեզ ասի որ փոսեր ու թմբեր կան, — կրկնում էր փոքրիկ իշխանուհին, — շատ ուրախ կլինեի, որ քնեի, նշանակում է մեղավորը ես չեմ, — և նրա ձայնը դողաց, լացի պատրաստվող երեխայի ձայնի պես:

Մեր իշխանը նույնպես արթուն էր: Տիխոնը քնի մեջ լսում էր, թե ինչպես է նա հերտոտ քայլում ու քթով փնշացնում: Մեր իշխանին թվում էր, թե իրեն վիրավորել են աղջկա համար: Ամենածանր վիրավորանքը, որովհետև դա վերաբերում էր ոչ թե իրեն, այլ աղջկան, որին սիրում է իրենից ավելի: Նա ինքն իրեն ասավ, թե նորից կմտածի այդ առաջարկության մասին և ինչ արդարացի գտնի, այն էլ կանի, բայց դրա հոխարեն ավելի ևս հուզում-գրգռում էր իրեն:

«Առաջին պատահած մարդը, երևաց թե չէ, — մոռացավ թե՛ հայր, թե՛ ամեն ինչ. վազում է վեր, սանրվում ու այդ շարժում... Ուրախ է, որ հորը կթողնի: Եվ իմացել է, որ ես կնկատեմ: Փը... փը... փը... Չեմ տեսնում միթե, որ այդ հիմարը հետևում է միայն Բուրիենին (նրան պետք է վռնդել): Եվ այնքան ինքնասիրություն չունի, որ այդ բանը հասկանա: Ի՞նչ ոչ իր համար, որ հայրտություն չունի, գեթ ինձ համար: Պետք է նրան հասկացնել, որ այդ անասունը իր մասին չի էլ մտածում, այլ աչքը Բուրիենի վրա է: Մարիան ինքնասիրություն չունի, բայց ես կսովորեցնեմ նրան»...

Ի՞նչ աղջկանն ասի, թե նա մոլորության մեջ է, թե Անատոլը մտադիր է սիրաբանել Բուրիենի հետ, ծեղ իշխանը գիտեր, որ այդպիսով կգրգռի իշխանադուստր Մարիայի ինքնասիրությունը և իր ցանկությունը (չբաժանվել աղջկանից) կկատարվի, ուստի հանգստացավ այս որոշումով և Տիխոնին լանջելով՝ սկսեց հանվել:

«Ո՞ր սատանան բերեց գրանց, — մտածում էր նա այն միջոցին, երբ Տիխոնը գիշերային շապիկը հագցնում էր նրա կաշի ու ոսկոր կտրած, պատճառած մարմնին, որի կուրծքը

ծածկված էր ճերմակ մազերով: — Ես նրանց չեմ հրավիրել: Եկել են կարճատև կյանքս տակն ու վրա անելու»:

— Կորչե՛ն, — ասավ նա այն րոպեին, երբ շապիկը դեռ նոր էր գլուխն անցրել:

Տիխոնը գիտեր, որ իշխանը սովորություն ունի մտքերը երբեմն բարձրաձայն արտահայտելու, ուստի և անփոփոխ դեմքով ընդունեց իշխանի՝ շապիկ տակից դուրս եկած դեմքի հարցական-հերտոտ հայացքը:

— Պառկե՛լ են, — հարցրեց իշխանը:

Տիխոնը, բոլոր լավ լաբելյների նման, հոտառությամբ զգում էր իր տիրոջ մտքերի ուղղությունը: Գլխի ընկավ, որ հարցը վերաբերում է իշխան Վասիլիին ու որդուն:

— Բարեհաճել են պառկել և լույսը հանդցնել, ձերդ պայծառափայլություն:

— Լավ, լավ... — ասավ իշխանն արագ-արագ և, հողաթափերն ու խալաթը հագնելով, գնաց դեպի բազմոցը, որի վրա և քնում էր:

Չնայած որ Անատոլն ու m-lle Բուրիենը իրար ոչինչ չէին ասել, բայց կատարելապես հասկացել էին միմյանց, հասկացել էին, որ իրար շատ բան պիտի ասեն ծածուկ, ուստի և առավոտից առիթ էին փնտրում առանձին տեսակներ: Այն ժամանակ, երբ իշխանադուստրը սովորական ժամին գնաց հոր մոտ, m-lle Բուրիենը Անատոլին հանդիպեց ձմեռային պարտեզում:

Իշխանադուստր Մարիան այդ օրն առանձին սրտողով մոտեցավ հոր առանձնասենյակին: Նրան թվում էր, թե բոլորը ոչ միայն գիտեն, որ այդ օրն իր ճակատագիրը պիտի վերջրովի, այլ և գիտեն, թե ինքն ինչ է մտածում այդ մասին: Նա այդ արտահայտությունը կարգաց թե՛ Տիխոնի և թե՛ իշխան Վասիլիի սենեկապահի դեմքին, որ տաք ջուրը ձեռին հանդիպեց միջանցքում և խորը գլուխ տվեց նրան:

Մեր իշխանն այդ առավոտ շափազանց սիրալիր և հոգածությամբ վերաբերվեց աղջկան: Հոգածության այդ արտահայտությունը ծանոթ էր իշխանադուստր Մարիային: Այդ արտահայտությունն իշխանի դեմքին երևում էր այն վայրկյաններին, երբ նրա շորշորուկ ձեռները կծկվում-բռունցք էին դառնում այն պատճառով, որ իշխանուհի Մարիան չէր հաս-

կանում թվաբանական խնդիրները, և տեղից վեր կենալով՝ հեռանում էր աղջկանից և կամացուկ ձայնով միկնուչն խոսքը կրկնում մի քանի անգամ:

Նա անմիջապես գործի անցավ և սկսեց խոսել «դուք»-ով:

— Ինչ առաջարկ արին ձեր մասին, — ասավ նա, բռնազրոսիկ ժպիտով: — Կարծում եմ՝ գուշակած կլինեք, — շարունակեց նա, — որ իշխան Վասիլին որդուն իմ գեղեցիկ աչքերի համար չի բերել այստեղ: Երեկ ձեր վերաբերմամբ ինձ առաջարկ արին: Եվ որովհետև դուք գիտեք իմ սկզբունքները, ուստի և դիմում եմ ձեզ:

— Ի՞նչպես հասկանամ ձեզ, mon père, — ասավ իշխանադուստրը գունատվելով ու կարմրելով:

— Ի՞նչպես հասկանամ, — պոռաց հայրը բարկացած: — Իշխան, Վասիլին քեզ համարում է իր ճաշակին հարմար հարս և առաջարկություն է անում որդու համար: Ահա ինչպես պիտի հասկանալ: Ի՞նչպես հասկանամ.... Իսկ ես քեզ եմ հարցնում:

— Ես չգիտեմ, դուք ինչպես եք վերաբերվում, mon père, — շշնջաց իշխանադուստրը:

— Ես. ե՞ս. ես ի՞նչ գործ ունեմ: Ինձ թող: Ես մարդու գնալու չեմ: Դո՛ւմ ի՞նչ եք մտածում, ցանկալի է այդ իմանալ:

Իշխանադուստրը նկատեց, որ հայրն անբարյացակամ վերաբերում ունի դեպի այդ խնդիրը, բայց միկնուչն ժամանակ մտածեց, որ իր բախտը վճռվելու է այժմ կամ երբեք: Նա աչքերը խոնարհեց, որ շտեմնի հոր հայացքը, որի ազդեցությունները չէր կարողանում մտածել, այլ կարողանում էր ըստ սովորության հնազանդել միայն, ուստի և ասավ.

— Ցանկանում եմ միայն մի բան — ձեր կամքը կատարել, — ասավ նա, — բայց եթե հարկ լինի իմ ցանկությունը հայտնելու...

Նա չկարողացավ վերջացնել: Իշխանն ընդհատեց նրան:

— Գեղեցիկ, գուցե նա: — Քեզ առնելու է օժիտովդ և, ի դեպ հետը տանելու է m-lle Բուրիենին: Նա կինն է լինելու, իսկ դու...

Իշխանը կանգ առավ: Նկատեց, թե խոսքերն ինչ տպավորություն արին աղջկա վրա: Իշխանադուստրը գլուխն իջեցրեց, լացի պատրաստվելով:

— Դե, դե՛, կատակ եմ անում, կատակ, — ասավ նա: — Հիշիր, Մարիա, ես այն կարծիքի եմ, թե աղջիկը լիակատար իրավունք ունի ամուսին ընտրելու: Եվ քեզ ազատություն եմ տալիս: Հիշիր միայն, որ քո որոշումից է կախված կյանքիդ երջանկությունը: Իմ մասին ավելորդ է խոսել:

— Բայց ես չգիտեմ... mon père.

— Ավելորդ է խոսել: Նա ազատ չի. նրան կարգադրում են ամուսնանալ, և նա կամուսնանա ոչ միայն քեզ հետ, այլև ո՛ւմ հետ որ կամենան. իսկ դու ազատ ես ամուսին ընտրելու... Գնա սենյակդ, մտածիր և մի ժամ հետո արի այստեղ ու նրա ներկայությամբ ասա՝ այո կամ ոչ: Գիտեմ, պիտի գնաս աղոթես: Է՛՛հ, աղոթիր: Միայն ավելի լավ է մտածես: Գնա՛: Այո կամ ոչ, այո կամ ոչ, այո կամ ոչ, — կրկնելով պոռում էր նա դեռ այն միջոցին էլ, երբ իշխանադուստրը, կարծես մշուշի մեջ, օրորվելով, դուրս եկավ հոր առանձնասենյակից:

Նրա բախտը որոշվեց և որոշվեց շատ հաջող: Բայց ինչ ասավ հայրը m-lle Բուրիենի մասին, — այդ ակնարկը սարսափելի էր: Ծիշտ չէր, ասենք, բայց և այնպես դա սարսափելի էր, և իշխանադուստրը չէր կարող այդ մասին չմտածել: Իր մտածումներով տարված՝ անցավ ձմեռային պարտեզով և հանկարծ m-lle Բուրիենի ծանոթ շշուկն սթափեց նրան: Իշխանադուստրն աչքերը բարձրացրեց և երկու քայլ հեռու տեսավ Անատոլին, որ ֆրանսուհուն գրկած՝ ինչ-որ բան էր շշնջում նրան: Անատոլը գեղեցիկ դեմքի մի սարսափելի արտահայտությամբ նայեց իշխանադուստր Մարիային և առաջին վայրկյանին մոռացավ թողնել թիկունքը Մարիային դարձած m-lle Բուրիենի մեջքը:

«Ո՞վ կա այդտեղ: Ի՞նչ կա: Սպասեցե՛ք», ասում էր կարծես Անատոլի դեմքը: Իշխանադուստր Մարիան անխոս նայում էր նրանց: Նա չկարողացավ ըմբռնել այդ: Վերջապես, m-lle Բուրիենը ճշաց ու փախավ: Անատոլը մի գվարթ ժպիտով գլուխն տվեց իշխանադուստր Մարիային, կարծես հրավիրելով, որ ծիծաղի այս տարօրինակ դեպքի վրա և ինքն ուսերը թոթվելով՝ ուղղվեց դեպի իր սենյակը:

Մի ժամ հետո Տիխոնն եկավ իշխանադուստր Մարիային կանչելու իշխանի մոտ և հայտնեց, թե իշխան Վասիլի Սերգեյիչն էլ այնտեղ է:

Այն ժամանակ, երբ Տիխոնն եկավ, իշխանադուստրն իր սենյակի բազմոցին նստած՝ գրկել էր արտասվող m-lle Բուրիենին ու հանդարտ շոյում էր նրա գլուխը: Մարիայի գեղեցիկ աչքերն իրենց նախկին անդորրութեամբ ու ճառագայթալից պայծառութեամբ՝ քնքշանքով ու կարեկցանքով նայում էին m-lle Բուրիենի սիրունիկ դեմքին:

— Non, princesse, je suis perdue pour toujours dans votre coeur¹. — ասում էր m-lle Բուրիենը:

— Pourquoi? Je vous aime plus, que jamais, — ասում էր իշխանադուստրը, — et je tâcherai de faire tout, ce qui est en mon pouvoir pour votre bonheur².

— Mais vous me méprisez, vous si pure, vous ne comprendrez jamais cet égarement de la passion. Ah, ce n'est que ma pauvre mère...³

— Je comprends tout⁴, — պատասխանեց իշխանադուստրը, տխրութեամբ ժպտալով: — Հանգստացեք, բար՛կամս: Ես գնամ հայրիկիս մոտ, — ասավ նա ու դուրս եկավ:

Իշխան Վասիլին, ծունկը վեր ծալած, քթախոտի տուփը ձեռին և կարծես շափից ավելի հուզված՝ նստած էր խանդաղատանքի ժպիտը դեմքին, երբ իշխանադուստր Մարիան ներս մտավ: Նա հասցնեպ մի պտղունց քթախոտ տարավ դեպի քիթը:

— Ah, ma bonne, ma bonne⁵, — ասավ նա, վեր կենալով և Մարիայի երկու ձեռք բռնելով: Նա հոգոց քաշեց և ավելացրեց. — Le sort de mon fils est en vos mains. Décidez, ma bonne, ma chère, ma douce Marie, qui j'ai toujours aimée, comme ma fille⁶.

Նա հեռացավ: Աչքերում իսկապես արցունք երևաց:

¹ Ոչ, իշխանադուստր, ես ընդմիշտ կորցրի ձեր բարեկամութունը:

² Ինչո՞ւ: Ես ձեզ ավելի եմ սիրում, քան երբևէ, և ձեռքս եկածը պիտի անեմ ձեր երջանկության համար:

³ Բայց դուք այնքան մաքուր եք, դուք կարճամարճեք ինձ. դուք երբեք չեք հասկանա կրքի այդ հրապուրը: Ա՛հ, խեղճ մայրս...

⁴ Ես ամեն ինչ հասկանում եմ:

⁵ Ահ, սիրելի՛ս, սիրելի՛ս:

⁶ Որդու քախուր ձեր ձեռին է: Վճռեցեք, իմ սիրելի, իմ թանկագին, իմ հեղարար Մարի. ես միշտ աղչկաս պես սիրել եմ ձեզ:

— Փր՛... հը... — փնչացնում էր իշխան Նիկոլայ Անդրեյիչը:

— Իշխանն իր որդու կողմից քեզ առաջարկ է անում: Ցանկանո՞ւմ ես արդյոք իշխան Անատոլ Կուրագինի կինը լինել, թե՞ ոչ: Դու ասա միայն՝ այո՛ կամ ո՛չ, — պտուաց իշխանը, — այնուհետև ես ինձ իրավունք եմ վերապահում՝ հայտնել և իմ կարծիքը: Այո, իմ կարծիքը, միայն իմ կարծիքը, — ավելացրեց իշխան Նիկոլայ Անդրեյիչը, դառնալով իշխան Վասիլիին և նրա աղերսագին արտահայտությունը պատասխանելով: — Այո՞ թե ոչ:

— Ես, mon père, ցանկանում եմ ձեզ երբեք չթողնել, երբեք կյանքս չբաժանել ձեր կյանքից: Ես չեմ ուզում ամուսնանալ, — ասավ նա կտրուկ, իր գեղեցիկ աչքերով նայելով իշխան Վասիլիին ու հորը:

— Դառարկ, հիմար բաներ ես ասում, — հոնքերը կիտելով պտուաց իշխան Նիկոլայ Անդրեյիչը, բռնեց աջկա ձեռը, քաշեց դեպի իրեն, բայց չհամբուրեց, այլ ճակատը նրա ճակատին դիպցնելով, աղջկա ձեռն այնպես պինդ սեղմեց, որ իշխանադուստրը դեմքը կնճուց ու ճչաց:

Իշխան Վասիլին վեր կացավ:

— Ma chère, je vous dirai, que c'est un moment que je n'oublierai jamais, jamais; mais, ma bonne, est-ce que vous ne nous donnerez pas un peu d'espérance de toucher ce coeur si bon, si généreux. Dites, que peut-être... l'avenir est si grand. Dites, peut-être¹

— Իշխան, ինչ որ ասի — դա բոլորն էր, ինչ կար իմ սրբունամ: Շնորհակալ եմ ձեր արած պատվի համար, բայց երբեք ձեր որդու կինը չեմ լինի:

— Է, ամեն բան ուրեմն վերջացավ, սիրելիս: Շատ ուրախ եմ քեզ տեսնելուս, շատ ուրախ եմ, — կրկնեց ծեր իշխանը, գրկելով իշխան Վասիլիին: — Շատ ուրախ եմ քեզ տեսնելուս: Իսկ դու, Մարի, գնա, գնա սենյակդ:

¹ Սիրելիս, ձեզ պիտի ասեմ, որ այս վայրկյանը երբեք չեմ մոռանու, բայց, իմ ամենաբարի, ինձ տվեք հնարավորության գոնե մի փոքրիկ հույս՝ ձեր այնքան բարի ու վեճ սիրտը հուզելու: Ասեք՝ թերևս... Ապագան այնքան մեծ է: Ասեք՝ թերևս:

«Իմ կոչումն այլ է, — մտածում էր իշխանադուստրն ինքն իրեն, — իմ կոչումն է — երջանիկ լինել այլ երջանկությամբ, սիրո և անձնազոհության երջանկությամբ: Ինչ գնով էլ լինի՝ ես խեղճ Amelie-ին պիտի երջանկացնեմ. նա այնպես բուռն է սիրում նրան: Այնպես զղջաց: Ամեն ինչ պիտի անեմ, որ հաջողեցնեմ նրա և Անատոլի ամուսնությունը: Եթե Անատոլը հարուստ չէ, ես Amelie-ին օժիտ, միջոցներ կտամ. և դրա համար հայրիկին կխնդրեմ, Անդրեյին կխնդրեմ: Ես ինձ շատ երջանիկ կզգամ, երբ Amelie-ն նրա կինը դառնա: Նա այնպես գոթախոտ է, օտար, մենակ, անօղակալ: Եվ աստված իմ, որքա՛ն բուռն է սիրում, որ այդպես ինքնամոռացության մեջ էր ընկել: Թերևս՝ ինքս էլ նույնն անեի», մտածեց իշխանադուստր Մարիան:

VI⁴

Ռոստովները երկար ժամանակ լուր չունեին Նիկոլայի մասին. ձմեռվա կիսին միայն կոմսին մի նամակ տվին, որի հասցեագրից նա ճանաչեց որդու ձեռքը: Նամակն ստանալով՝ կոմսը վախեցած ու հապճեպ, աշխատելով շնկատվել, ոտի ծայրերի վրա վազեց իր առանձնասենյակը, փակվեց ու սկսեց կարդալ: Աննա Միխայլովնան, իմանալով (ինչպես և իմանում էր տանը կատարվող ամեն բան) նամակ է ստացվել, կամացուկ քայլերով կոմսի առանձնասենյակը մտավ և տեսավ, որ կոմսը նամակը ձեռին հեկեկում է և միևնույն ժամանակ ծիծաղում:

Աննա Միխայլովնան, չնայած որ իր գործերը կարգի էին ընկել, շարունակում էր ապրել Ռոստովների տանը:

— Mon bon ami? — ասավ Աննա Միխայլովնան հարցական-տխուր շեշտով, պատրաստ ամեն տեսակի կարեկցության:

Կոմսը հեկեկաց ավելի սաստիկ:

— Նիկոլուշկաս... նամակ... վիրավորված է... եղել... ma chère... վիրավորված... աղավնյակս... կոմսուհիս... ըստ պայտեթյան աստիճան է ստացել... փառք աստծո... Սիրելի կ'ամուսնուս ի՞նչպես հայտնեմ...

¹ Իմ լավ բարեկամ:

Աննա Միխայլովնան նստեց կոմսի մոտ, իր թաշկինակով սրբեց նրա աչքերը, թրջված նամակը, ապա իր արցունքները, կարդաց նամակը, հանգստացրեց կոմսին և որոշեց, որ մինչև ճաշը, մինչև թեյը ինքը կնախապատրաստի կոմսուհուն, իսկ թեյից հետո, աստծու օգնությամբ, ամեն ինչ կհայտնի:

Ճաշի ժամանակ Աննա Միխայլովնան շարունակ խոսում էր պատերազմի լուրերից, Նիկոլուշկայի մասին. մի երկու անգամ հարցրեց, թե նրա վերջին նամակը ե՞րբ է ստացվել, թեև այդ գիտեր առաջ էլ, նկատեց, թե շատ կարելի է հիմա էլ նամակ ստացվի: Ամեն անգամ, երբ այդ ակնարկների ժամանակ կոմսուհին սկսում էր անհանգստանալ ու տագնապալից հայացքներ նետել մերթ կոմսի, մերթ Աննա Միխայլովնայի վրա, Աննա Միխայլովնան աննկատելիորեն խոսքը դարձնում էր աննշան բաների վրա: Նատաշան, որ ամբողջ ընտանիքի մեջ ա՛նհից ավելի ուշիմն էր, որ օժտված էր առանձին շեշտերից, նայվածքներից և դեմքերի արտահայտությունից շատ բան զգալու կարողությամբ, ճաշի հենց սկզբից ականջները սրեց և գլխի ընկավ, որ ինչ-որ մի բան կա հոր և Աննա Միխայլովնայի միջև, մի բան, որ եղբորն է վերաբերում, և որ Աննա Միխայլովնան նախապատրաստում է: Չնայած իր համարձակության (Նատաշան գիտեր, թե որքան զգայուն է մայրը Նիկոլային վերաբերող ամեն բանի նկատմամբ) նա չհամարձակվեց ճաշի ժամանակ հարց տալ և անհանգստությունից բան չըկերավ, տրորվեց աթոռի վրա, ականջ չդնելով իր դաստիարակչուհու դիտողություններին: Ճաշից հետո նա գլխապատառ վազեց Աննա Միխայլովնայի ետևից և բազմոցարանում նրա վզովն ընկավ:

— Մորաքույր, սիրելիս, ասե՛ք, ի՞նչ է պատահել:

— Ոչինչ, սիրելիս:

— Ոչ, հոգալիս, աղավնյակս, սիրելի մորաքույր, չե՛մ թողնի մինչև շասեք. գիտեմ որ մի բան գիտե՛ք:

Աննա Միխայլովնան գլուխն օրորեց:

— Vous êtes une fine mouche, mon enfant¹, — ասավ նա:

— Նիկոլայից նամակ է եկել, այնպես չէ՞, — պատասխա-

¹ Դու սուր խելք ունես, թիթեռնիկս:

եւց Նատաշան, դրական պատասխան կարողալով Աննա Միխայլովնայի դեմքին:

— Բայց, ի սեր աստժո, զգուշ կաց. գիտես չէ, թե ինչպէս կարող է ազդել այդ բանը մորդ վրա:

— Այո, անպայման զգուշ կլինեմ, բայց ասեք տեսնե՞ք Ձե՞ք պատմում: Դե որ այդպէս է՝ իսկույն կերթամ հասեմ:

Աննա Միխայլովնան համառոտ խոսքերով պատմեց Նատաշային նամակի բովանդակութիւնը, պայմանով, որ ոչ ոքի չասի:

— Ազնիվ խոսք, — երեսը խաշակնքելով ասավ Նատաշան, — ոչ մեկին չեմ ասի, — և անմիջապէս վազեց Սոնյայի մոտ: — Նիկոլենկան... վիրավորված է... նամակ կա... — ասավ նա հանդիսավոր և ուրախ:

— Nicolas! — արտասանեց Սոնյան ու գունատվեց:

Նատաշան, նկատելով թե եղբոր վիրավորելու լուրն ինչ ազդեցութիւն արավ Սոնյայի վրա, նոր միայն հասկացավ հազորդած լուրի տխուր կողմը: Ու Սոնյային գրկելով՝ լաց եղավ:

— Մի քիչ վիրավորված է, բայց սպայի աստիճան են տրվել, իսկ հիմա առողջ է, և նամակը գրողն ինքն է, — ասավ նա արտասովալից աչքերով:

— Այ երևում է արդեն, որ բոլոր կանայք էլ լալկան եք, — ասավ Պետյան, վճռական քայլերով սենյակում անց ու դարձ անելով: — Ես շատ ուրախ եմ, իսկապէս, շատ ուրախ եմ, որ եղբայրս աչքի է ընկել, աստիճան է ստացել: Դուք բոլորդ լալկան եք, ոչինչ չեք հասկանում:

Նատաշան ժպտաց արցունքների միջից:

— Դու նամակը չե՞ս կարդացել, — հարցրեց Սոնյան:

— Չեմ կարդացել, բայց Աննա Միխայլովնան ասավ, որ ամեն ինչ անցել է, և որ Նիկոլայն արդեն սպա է...

— Փառք աստժո, — ասավ Սոնյան երեսը խաշակնքելով: — Բայց գուցե խաբել է քեզ, ամեն բան չի ասել: Արի գնանք maman-ի մոտ:

Պետյան անխոս գնում-գալիս էր սենյակում:

— Եթե ես Նիկոլուշկայի տեղը լինեի, ավելի՛ շատ Ֆրանսացի կսպանեի, — ասավ նա, — այնքան զզվելի են դրանք:

Այնքա՛ն կարողեի, որ նրանցից դեզեր դնեին, — շարունակեց Պետյան:

— Ձայնդ կտրի, Պետյա, ի՛նչ հիմարն ես...

— Հիմարը ես չեմ, այլ դուք, որ շնչին բաներից լաց եք լինում, — ասավ Պետյան:

— Դու նրան հիշո՞ւմ ես, — լուպեական լուռութիւնից հետո հարցրեց հանկարծ Նատաշան: Սոնյան ժպտաց. «Հիշո՞ւմ եմ արդյոք Նիկոլային»:

— Ոչ, Սոնյա, հիշում ես այնպէս, որ ամեն բան լա՛վ մտաբերես, — առանձին շեշտով ասավ Նատաշան, ըստ երեւոյթին, կամեհալով իր խոսքերին շատ լուրջ նշանակութիւն տալ: — Ես էլ եմ հիշում Նիկոլային, — ասավ նա: — Բայց Բորիսին չեմ հիշում: Բոլորովին չեմ հիշում...

— Ի՞նչպէս: Բորիսին չե՞ս հիշում, — հարցրեց Սոնյան զարմանքով:

— Ոչ թե՛ չեմ հիշում. գիտեմ՝ ինչպէս էր, բայց այնպէս չեմ հիշում, ինչպէս Նիկոլենկային: Երբ աչքերս փակում եմ՝ նրա՛ն հիշում եմ, բայց Բորիսին՝ ոչ (նա աչքերը փակեց), այսպէս, ոչինչ չկա:

— Ա՛հ, Նատաշա, — ասավ Սոնյան, խանդավառ ու լուրջ տեսքով ընկերուհուն նայելով, կարծես նրան արժանի չէր համարում լսելու այն, ինչ մտադիր էր ասել, և կարծես այդ պատրաստ էր ասել ուրիշ որևէ մեկին, որ լավ կհասկանա իրեն: Քանի որ եղբորդ սիրել եմ. ինչ էլ պատահի նրան, թե ինչ, երբեք ամբողջ կյանքումս չեմ դադարի նրան սիրելուց:

Նատաշան զարմացած, հետաքրքիր աչքերով նայեց Սոնյային ու լսեց: Ձգում էր, որ Սոնյայի ասածը ճիշտ էր. նրա ասածի նման սեր եղել է. բայց ինքը՝ Նատաշան այդպիսի բան դեռ չէր զգացել: Հավատում էր, որ այդպիսի բան կարող էր լինել, բայց չէր հասկանում:

— Դու նրան նամա՞կ ես գրելու, — հարցրեց նա:

Սոնյան մտածեց: Այդ խնդիրը, — թե պետք է արդյոք Նիկոլային նամակ գրել և ինչպէս պետք է գրել, — նրան տանջող մի խնդիր էր: Այժմ, երբ նա սպա էր արդեն և վիրավորված հերոս, արդյոք լավ բան արած կլիներ, եթե հիշեցներ նրան իր գոյութիւնը և այդպիսով կարծես այն պարտավորութիւնը, որ հանձն էր առել Նիկոլայը իր նկատմամբ:

— Զգիտեմ. կարծում եմ՝ եթե նա գրի, ես էլ կգրեմ, — կարմրելով ասավ նա:

— Եվ չե՞ս ամաչի որ գրես:

Սոնյան ժպտաց. «ոչ»:

— Ես կամաչեի Բորիսին գրել, և չեմ գրի:

— Ամաչելու ի՞նչ կա որ:

— Այնպես, չգիտեմ: Անհարմար է, ամոթ է:

— Իսկ ես գիտեմ դա ինչո՞ւ է ամաչում, — ասավ Պետյան, Նատաշայի առաջին նկատողութունից վիրավորված, — ներանից, որ սիրահարվել էր այն հաստ ակնոցավորի վրա (Պետյան այդպես էր կոչում իր անվանակիցին, նոր կոմս Պիեռ Բեզուխովին). հիմա էլ սիրահարված է երգչի վրա (Պետյան ակնարկում էր Նատաշայի երգեցողութայն իտալացի ուսուցչին). դրա համար էլ ամաչում է:

— Պետյա, դու հիմար ես, — ասավ Նատաշան:

— Քեզանից հիմար չեմ, քույրիկս, — ասավ ինք տարեկան Պետյան, ինչպես հասակն առած մի բրիգադիր:

Աննա Միխայլովնայի ճաշի միջոցին արած ակնարկներն արդեն նախապատրաստել էին կոմսուհուն: Իր սենյակը գրե՛նալով՝ նստեց նա բազկաթոռին ու էլ աչքը չէր հեռացնում որդու մանրանկար պատկերից, որ շինված էր քթախոտի տուփի վրա, և շուտով արցունքը թրջեց նրա աչքերը: Աննա Միխայլովնան նամակը ձեռին, ոտների ծայրի վրա քայլելով, մտավ կոմսուհու սենյակը և կանգ առավ:

— Գուք մի մտեք, — ասավ նա իր ետևից եկող ծեր կոմսուհուն, — հետո կկանչեմ, — և դուրը ծածկեց իր ետևից:

Կոմսն ականջը դեմ արավ բանալու անցքին և սկսեց ականջ դնել:

Նախ անտարբեր խոսակցութուն լսեց, հետո Աննա Միխայլովնայի ձայնը, որ երկար ճառ ասավ, ապա մի ճիշ, նորից լռութուն տիրեց, և կրկին երկու ձայները միասին խոսեցին ուրախ շեշտերով, հետո քայլեր, և Աննա Միխայլովնան դուռը բաց արավ: Աննա Միխայլովնայի դեմքը դժվարին անհամահատութուն կատարող վիրաբույժի տեսք ունեւր, որը մարդկանց ներս էր թողնում նրա համար, որպեսզի իր հմտութունը գնահատեն:

— C'est fait¹, — ասավ նա կոմսին, հանդիսավոր ձևով ցույց տալով կոմսուհուն, որը մի ձեռով բռնել էր որդու պատկերով զարդարած քթախոտի տուփը, մյուսով՝ նամակը, և մերթ տուփն էր համբուրում, մերթ նամակը:

Կոմսին տեսնելով՝ նա ձեռները պարզեց նրան, գրկեց նրա ճաղատ գլուխը և ճաղատ գլխի վրայից նորից նայեց նամակին ու պատկերին և որպեսզի դարձյալ կարողանա հպել դրանք իր շուրթերին, թեթևակի հրեց մարդու ճաղատ գլուխը: Վերան, Նատաշան, Սոնյան ու Պետյան ներս մտան, և սկսեցին նամակը կարդալ: Նիկոլայը համառոտ նկարագրում էր արշավանքը և այն երկու ճակատամարտը, որոնց մասնակցել էր ինքը. գրում էր սպայի աստիճան ստանալու մասին և վերջում ավելացնում էր, թե համբուրում է maman-ի ձեռը և papa-ին, խնդրում է նրանց օրհնութունը, և համբուրում է Վերային, Նատաշային և Պետյային: Բացի դրանից, բարևում է Մուր Ծելինգին և m-me Շոսին և դայակին, և, դրանից բացի, խնդրում է համբուրել թանկագին Սոնյային, որին սիրում է առաջվա պես ու միշտ հիշում: Այս լսելով՝ Սոնյան այնպես կարմրեց, որ աչքերը լցվեցին արցունքով: Ու չկարողանալով դիմանալ իր վրա դարձած հայացքներին՝ վազեց դահլիճ, պտույտ տվեց շրջագզեստն ուղցնելով և, կարմրած ու ժպիտը դեմքին, նստեց հատակին: Կոմսուհին լալիս էր:

— Բայց ինչո՞ւ ես լալիս, maman, — ասավ վերան: — Նրա գրածների համար պետք է ուրախանալ, և ոչ թե լաց լինել:

Դա միանգամայն ճիշտ էր, բայց թե՛ կոմսը, թե՛ կոմսուհին և թե՛ Նատաշան — բոլորը հանդիմանանքով նայեցին նրան. «Մա տեսնես ո՞ւմ է քաշել», մտածեց կոմսուհին:

Նիկոլայի նամակը հարյուր անգամ կարդացվեց, և նրանք, ովքեր արժանի էին համարվում այդ նամակը լսելու, պետք է գային կոմսուհու մոտ, որ նամակը միշտ իր մոտ էր պահում: Եկան դաստիարակները, դայակները, Միտենկան, մի քանի ծանոթներ, և կոմսուհին ամեն անգամ նամակը կարդում էր մի նոր բավականությամբ և ամեն անգամ այս նամակով նոր առաքինութուններ էր հայտնաբերում իր Նիկոլայի մեջ: Նրա

¹ Գործը վերջացած է:

համար տարօրինակ, զարմանալի և ուրախալի էր, որ իր որդին — այն որդին, որ սրանից 20 տարի առաջ մարմնի փոքրիկ անդամներով հազիվ շարժվեց իր արգանդում, այն որդին, որի համար նա կռվում էր երեխաներին երես տվող կոմսի հետ, այն որդին, որ խոտելիս առաջ «տանձ» խոսքը սովորեց, հետո «կնիկը», — որ այդ որդին այժմ այնտեղ է, օտար երկրում, օտար միջավայրում, քաջ ուղմիկ է, մենակ, առանց օգնության ու դեկավարութեան, կատարում է տղամարդու ինչ-որ մի գործ: Արար աշխարհի դարավոր փորձը, որ ցույց է տալիս, թե մանուկներն աննկատելի ճանապարհով օրորոցից տղամարդ են դառնում, գոյութուն շուներ կոմսուհու համար: Որդու արբունքի հասնելը (արբունքի յուրաքանչյուր շրջանում) նրա համար նույնքան անսովոր, զարմանալի էր, կարծես թե երբեք միլիոնավոր ու միլիոնավոր մարդիկ այդպես չէին արբունքի հասել: Ինչպե՞ս 20 տարի առաջ չէր հավատում, որ այն փոքրիկ էակը (որ ապրում էր սրտի տակ ինչ-որ մի տեղ) ճշա, կուրծքը ծծի ու խոսի, այդպես էլ հիմա չէր կարողանում հավատալ, թե այդ իսկ էակը կարող է լինել այն ուժեղ քաջ տղամարդը, ինչպիսին հիմա էր, այս նամակից դատելով:

— Ի՞նչ ոճ է, որքան լավ է նկարագրում, — ասում էր նա, կարդալով նամակի նկարագրական մասը: — Եվ տեսե՞ք ի՞նչ սիրտ ունի: Իր մասին ոչինչ... Ո՛չ մի խոսք: Գրում է ինչ-որ Դենիսովի մասին, իսկ ինքը, երևի, այդ բոլորից քաջ է ավելի: Ի՞նչ սիրտ ունի: Բոլորին հիշել է: Ոչ մեկին չի մոռացել: Ես միշտ, միշտ ասում էի, երբ դեռ ա՛յս այսքան էր, միշտ ասում էի...

Շաքաթից ավելի տնով-տեղով Նիկոլային նամակներ զրբելու համար պատրաստութուն էին տեսնում, սևագրութուններ անում և արտագրում. կոմսուհու հսկողութեամբ և կոմսի հոգածութեամբ հավաքում էին անհրաժեշտ իրեր ու դրամ՝ սպայութուն ստացած Նիկոլային զգեստավորելու և հարկավոր իրերով ապահովելու: Աննա Միխայլովնան, որպես գործնական կին, կարողացել էր բանակում անգամ իր որդու համար պրոտեկցիա սարքել՝ նամակագրութեան համար: Նա պատենութուն ուներ իր նամակներն ուղարկելու մեծ իշխան կոնստանտին Պավլովիչին, որ գվարդիայի հրամանատարն էր: Ռոստովները ենթադրում էին, թե ռուսական գվարդիան առ-

տասանամեծ մի բոլորովին հաստատ ու որոշ հասցե է և եթե նամակը հասնի գվարդիայի հրամանատար մեծ իշխանին, անպատճառ կհասնի և Պավլոգրադյան գունդը, որը պետք է որ նրա մոտ մի տեղ լիներ: Ուստի և որոշվեց նամակներն ու դրամը մեծ իշխանի սուրհանդակի միջոցով ուղարկել Բորիսին, իսկ Բորիսն արգեն կհասցնեի Նիկոլային: Նամակներ գրել էին ծեր կոմսը, կոմսուհին, Պետյան, Վերան, Նատաշան, Սոնյան, և, վերջապես կոմսը որդուն ուղարկում էր 6 000 ռուբլի զգեստավորման համար և զանազան իրեր:

VII

Նոյեմբերի 12-ին Օլմյուցի մոտ բանակած Կուսուզովի զորաբանակը պատրաստվում էր հաջորդ օրվա գործառնելին, որ պետք է տեղի ունենար ուսաց և ավստրիացոց կայսրների առջև: Գվարդիան, որ Ռուսաստանից հենց նոր էր տեղ հասել, գիշերեց Օլմյուցից 15 վերստ հեռու և մյուս օրը, առավոտյան ժամը 10-ին, դուրս էր եկել Օլմյուցի դաշտը:

Նիկոլայ Ռոստովն այդ օրը Բորիսից մի գրութուն ստացավ, թե Իգմայիլովյան գունդը գիշերում է Օլմյուցից 15 վերստ հեռավորութեան վրա, և թե ինքն սպասում է նրան՝ նամակ ու դրամ հանձնելու: Ռոստովը փողի մեծ կարիք էր զգում մանավանդ այժմ, երբ զորքն արշավանքից վերադառնալով, բանակել էր Օլմյուցի մոտերքը, և լավ մատակարարվող զորական մթերավաճառները, և ավստրիական հրեաները, բանակատեղը գալով, առաջարկում էին ամեն տեսակ գայթակղիչ բաներ: Պավլոգրադյան գնդի սպաններն ամեն օր կերութումով տոնում էին իրենց աստիճանի բարձրացումներն ու ստացած պատվանշանները, հաճախ Օլմյուց էին գնում, նորից այնտեղ վերադարձած հունգարուհի Կարոլինայի մոտ, որ ճաշարան էր բացել կին սպասուհիներով: Մի քանի օր առաջ Ռոստովը տոնել էր իր կորնետի աստիճան ստանալը, գնել էր Դենիսովի Բեդուին անունով ձին, ու պարտ էր մնացել. թե՛ ընկերներին թե՛ մթերավաճառներին: Բորիսի գրութունն ստանալով՝ Ռոստովը մի ընկերոջ հետ գնաց մինչև Օլմյուց, այնտեղ ճաշեց, մի շիշ գինի խմեց, ու մենակ գնաց գվարդիայի բանակատեղը՝ իր մանկութեան ընկերոջը որոնելու: Ռոստովը

դեռ չէր կարողացել իր նոր աստիճանի համեմատ զգեստավորվել: Հագինը յունկերական մաշված բաճկոն էր՝ զինվորի խաչը վրան, նույնպիսի վարտիք և սպայական սրետիքով սուր. տակի ձին գնել էր դոնեցի կազակից. հուսարական տրորված գլխարկը իգիթի պես դրել էր ետ ու ծոնել մի կողմի վրա: Իզմայլովյան գնդի բանակատեղին մոտենալով՝ նա մտածում էր, որ Բորիսին և ընկեր-զվարդիականներին կգարմացնի իր մարտական հուսարական տեսքով:

Գվարդիան իր ամբողջ արշավանքը կատարել էր զբոսանքի պես, ցուցադրելով իր մաքրութունն ու կարգապահութիւնը: Անցումները կայանից կայան՝ կարճ էին եղել, պայուսակները փոխադրել էին սայլերով, ամեն մի կայանում ավատրիական զինվորական մարմինները հիանալի ճաշեր էին տվել սպաներին: Գնդերը մտել և քաղաքներից դուրս էին եկել երաժշտախմբի նվագով. և ամբողջ ճանապարհը (որով և հպարտանում էին զվարդիակալները), մեծ իշխանի հրամանով, զինվորները քայլել էին համաշափ քայլերով, իսկ սպաները ոտով՝ իրենց տեղերը բռնած: Արշավանքի ընթացքում Բորիսը միշտ եղել էր Բերդի հետ, որը հիմա վաշտի հրամանատար էր արդեն: Բերդը արշավանքի միջոցին վաշտի հրամանատարութուն ստանալով, իր լավ ծառայությամբ և ճշտապահությամբ, կարողացել էր շահել հրամանատարության վստահութիւնը և լավապես կարգադրել իր անտեսական գործերը. Բորիսն արշավանքի ընթացքում շատ ծանոթութիւններ էր հաստատել, որոնք կարող էին իրեն օգտակար լինել, իսկ Պիեռից վերցրած հանձնարարական նամակով ծանոթացավ իշխան Անդրեյ Բալկոնսկուն, որի միջոցով հույս ուներ մի պաշտոն ստանալ գլխավոր հրամանատարի շտաբում: Բերդն ու Բորիսը, կոկ և մաքուր հագնված, վերջին ցերեկվա անցումից հանգստացած, իրենց հատկացված մաքուր բնակարանում՝ կլոր սեղանի շուրջը նըստած՝ շախմատ էին խաղում: Բերդը ծխամորճը բռնել էր ծընկնների արանքում: Բորիսն իրեն հատուկ ճշտապահությամբ, սպիտակ նուրբ ձեռներով դասավորում էր ֆիգուրները, ըստ պասելով Բերդի խաղին, և խաղակցի դեմքին նայելով, ըստ երևույթի մտածում էր խաղի մասին, ինչպես և միշտ մտածում էր միայն այն մասին, ինչով զբաղված էր լինում:

— Հապա տեսնենք, ի՞նչպես դուրս կգաք այստեղից, — ասավ նա:

— Կաշխատենք, — ասավ Բերդը, ձեռը պեշկային դիպցընելով ու ետ քաշելով:

Այդ միջոցին դուռը բացվեց:

— Վերջապես քեզ գտա, — բացականչեց Ռոստովը: — Բերդն էլ այստեղ է: Այ դու պետի զանֆան, ալե կուշե դու՛միր¹, — գոչեց նա, կրկնելով դայակի խոսքերը, որոնց վրա մի ժամանակ ծիծաղում էին Բորիսի հետ:

— Վա՛յ. ինչպես փոխվե՛լ ես: — Բորիսը վեր կացավ Ռոստովին դիմավորելու, բայց, վեր կենալով, շմուռացավ, ընկնող շախմատները բռնել և իրենց տեղը դնել և ուզեց բարեկամին գրկել, բայց Նիկոլայը մի կողմ քաշվեց: Նա չէր ուզում սովորական ձևով, ուրիշներին ընդօրինակելով, արտահայտել իր զգացումները. ուզում էր իրենց տեսակցության ժամանակ մի առանձին բան անել. կամթել, հրել Բորիսին, բայց ոչ մի դեպքում չհամբուրել, ինչպես անում են բոլորը: Իսկ Բորիսն ընդհակառակը, հանգիստ, մտերմաբար գրկեց Ռոստովին ու երեք անգամ համբուրեց:

Վեց ամիս էր գրեթե իրար չէին տեսել և այդ այն հասակում, երբ երիտասարդները կյանքի ճանապարհին իրենց առաջին քայլերն են անում: Երկուսն էլ իրար շատ փոխված գտան. երկուսն էլ իրենց վրա կրում էին դրոշմը այն միջավայրի, ուր արել էին իրենց առաջին քայլերը: Ուրովհետև վերջին տեսակցութիւնից ի վեր շատ էին փոխվել՝ ուզեցին ցույց տալ միմյանց իրենց մեջ կատարված փոփոխութիւնները:

— Էյ դու, անիծյալ: Այնպես մաքուր, թարմ են, կարծես զբոսանքից են եկել, ոչ թե մեզ՝ մեղավորներին նման, — ասում էր Ռոստովը՝ Բորիսի համար բոլորովին նոր բարիտոնային հնչյուններով և զինվորի շարժ ու ձևերով, ցույց տալով իր ցեխոտված վարտիքը:

Ռոստովի բարձր ձայնից՝ տանտեր-գերմանուհին գլուխը հանեց դռան արանքից:

— Հը, լավի՛կն է, — աչքով արավ Ռոստովը:

¹ Երեսա՛, գնա պառկիր-քերի:

— Ի՞նչ ես գոռում: Կվախենան,— ասավ Բորիսը:— Ես քեզ այսօր չէի սպասում,— ավելացրեց նա:— Գրությունս երեկ միայն Կուտուզովի՝ ժանոթ ագյուտանտի՝ Բալկոնսկու միջոցով ուղարկեցի քեզ: Չէի կարծում, թե այսքան շուտ կըհասցնի... է, ի՞նչպես ես: Արգեն մկրտված ես,— հարցրեց Բորիսը:

Ռոստովն, առանց պատասխանելու, ձեռք խփեց իր կրծքի ա. Գեորգի խաչին և կապած թեղ ցուլց տալով, ժպտալով նայեց Բնրգին:

— Ինչպես տեսնում ես,— ասավ նա:

— Ա՛յ թե ինչ,— ասավ Բորիսը ժպտալով:— Մենք էլ փառավոր արշավանք կատարեցինք: Գիտես, նորին բարձրությունը, մեծ իշխանը շարունակ մեր գնդի հետ էր, այնպես որ ամեն տեսակ հարմարություններ ունեինք: Լեհաստանում այնպիսի ընդունելություններ, ճաշեր, պարահանդեսներ եղան,— որ պատմել չի կարելի: Եվ թաղածառանգը շատ ողորմած վերաբերմունք ուներ դեպի մեր բոլոր սպաները:

Եվ ընկերները պատմեցին միմյանց — մեկն իր հուսարական կերտիստմաների և ուղղական կյանքի մասին, մյուսն այն մասին, թե որքան հաճելի ու շահավետ է ծառայել բարձրաստիճան անձերի հրամանատարության ներքո և այլն:

— Օ՛, գլխարդիան,— ասավ Ռոստովը:— Գե, ուրեմն գինի բերել տուր:

Բորիսը դեմքը կնձռեց:

— Եթե անպատճառ ուզում ես,— ասավ նա:

Եվ, մահճակալին ժողովելով, մաքուր բարձի տակից հանեց քսակն ու հրամայեց գինի բերել:

— Այո, և դրամք ու նամակդ տամ քեզ,— ավելացրեց նա:

Ռոստովը նամակը վերցրեց և, դրամը բազմոցի վրա նետելով, արմուկները հենեց սեղանին ու սկսեց կտրդալ: Կարդաց մի քանի տող ու Բերգին նայեց շարացած: Սակայն, նրա հայացքին հանդիպելով, երեսը ծածկեց նամակով:

— Երևում է կարգին գումար են ուղարկել,— ասավ Բերգը, նայելով բազմոցին ընկած ծանր քսակին: Մենք միայն ուճիկով ենք ապրում, կոմս: Ես իմ մասին կարող եմ ասել...

— Գիտեք, սիրելի Բերգ,— ասավ Ռոստովը,— եթե դուք ձեր տնից նամակ ստանաք և հանդիպեք մի բարեկամ մարդու,

որին ուզենաք հարցուփորձել ամեն ինչից, և եթե ես այստեղ լինեմ, իսկույն կհեռանամ, որ ձեզ շխանագարեմ: Լսեք, գնացեք, խնդրում եմ, մի որևէ տեղ, որևէ մի տեղ... Թեկուզ սատանայի ծոցը,— պոռաց նա և անմիջապես, նրա ուսերից բռնելով ու մեղմությամբ երեսին նայելով, աշխատելով մեղմել իր խոսքերի տպավորությունը, ավելացրեց.— գիտեք, շքարկանաք. ես բարեկամաբար եմ ասում, որպես հին ծանոթի:

— Ա՛խ, կոմս, ես շատ լավ եմ հասկանում,— ասավ Բերգը, վեր կենալով և ինքն իրեն խոսելով կոկորդային ձայնով:

— Տանտիրոց մոտ գնացեք. նա ձեզ կանչել է,— ասավ Բորիսը:

Բերգը հագավ իր մաքուր, անբիծ սյուրթուկը, քունքի մազերը հայելու առաջ կտրեց դեպի վեր՝ թագավոր Սլեքսանդր Պավլովիչի նման և, Ռոստովի հայացքից համոզվելով, որ իր սյուրթուկը նկատվեց, ժպիտն երեսին դուրս եկավ սենյակից:

— Ա՛հ, ինչ անասունն եմ եղել,— ասավ Ռոստովը, նամակը կարդալով:

— Ի՞նչ է պատահել:

— Օ, կատարյալ խոզ եմ եղել, որ ոչ մի անգամ նամակ չեմ գրել և այնպես վախեցրել եմ նրանց: Օ՛հ, ինչ խոզն եմ եղել,— կրկնեց նա, հանկարծ կարմրելով:— է՛, Գավրիլոյին ուղարկիր օդի բերելու:

Հարավատների նամակների հետ կար և մի հանձնարարական նամակ՝ իշխան Բագրատիոնի անունով, որ Աննա Միխայլովնայի խորհրդով, կոմսուհին ձեռք է բերել ծանոթների միջոցով և ուղարկել որդուն, խնդրելով հանձնել ըստ պատկանելույն և օգուվել դրանից:

— Ա՛յ քեզ հիմարություն: Շատ էլ հարկավորս է,— ասավ Ռոստովը, նամակը սեղանի տակ նետելով:

— Ինչո՞ւ նետեցիր,— հարցրեց Բորիսը:

— Ինչ-որ հանձնարարական նամակ է, ի՞նչիս է պետք:

— Ի՞նչպես թե ինչից է պետք,— ասավ Բորիսը, նամակը հատակից վերցնելով ու հասցեն կարդալով:— Այս նամակը քեզ համար շատ հարկավոր նամակ է:

— Ինձ ոչինչ էլ հարկավոր չէ, և ես չեմ ուզում որևէ մեկի աղյուտանտը դառնալ:

— Ինչո՞ւ, — հարցրեց Բորիսը:

— Հաքեյի պաշտոնն է:

— Ինչպես տեսնում եմ, դու նույն երագողն ես մնացել, — ասավ Բորիսը, գլուխն օրորելով:

— Իսկ դու նույն դիպլոմատը: Բայց այդ կարևոր չի... Դու ինչպե՞ս ես, — հարցրեց Ռոստովը:

— Այ, ինչպես տեսնում ես: Մինչև հիմա ամեն բան լավ է. բայց, խոստովանում եմ, շատ կուզեի աղյուտանտի պաշտոն ունենալ, և զորքի մեջ շմնալ:

— Ինչո՞ւ:

— Նրա համար որ, երբ միանգամից սկսում ես զինվորական ծառայության կարիերան, պետք է աշխատել, որքան կարելի է պայլուն կարիերա անել:

— Ահա թե ի՞նչ, — ասավ Ռոստովն, ըստ երևույթին ուրիշ բանի մասին մտածելով:

Նա սևեռն ու հարցական նայեց բարեկամի աչքերին, իզուր օրոնելով իրեն զբաղեցնող հարցի լուծումը:

Ծերունի Գավրիլոն գինի բերեց:

— Չկա՞ չ՞նք հիմա Ալֆոնս Կարլիչին, — ասավ Բորիսը: — Նա կիմի քեզ հետ, ես չեմ կարող:

— Կանչի՛, կանչի՛: Իսկ այդ գերմանացին ինչպե՞ս է, — ասավ Ռոստովը արհամարհական ժպիտով:

— Շատ լավ, ազնիվ և հաճելի մարդ է, — ասավ Բորիսը:

Ռոստովը մի անգամ ևս ուշադիր նայեց Բորիսի աչքերին ու հառաչեց: Բերզը վերադարձավ, և մի շիշ գինու շուրջը կենդանացավ երեք սպայի զրույցը: Գվարդիականներն Ռոստովին պատմում էին իրենց արշավանքի մասին և այն մասին, թե ինչպես են պատվել իրենց Ռուսաստանում, Լեհաստանում և արտասահմանում: Պատմում էին իրենց հրամանատար մեծ իշխանի խոսքերից ու վարմունքներից, անեկղտոներ նրա բարության ու դյուրագրգռության մասին: Բերզն, ըստ սովորության, լուռ էր. քանի խոսքն անձամբ իրեն չէր վերաբերում, բայց անեկղտոների և մեծ իշխանի դյուրագրգռության ատիթով՝ հաճույքով պատմեց, թե ինչպես Գալիցիայում իրեն հաշողվեց խոսել մեծ իշխանի հետ, երբ նա ձի նստած գնդից-

գունդ էր անցնում և զայրանում զորքի անկարգ-անկանոն շարժվելու համար: Հաճույքի ժպիտը դեմքին՝ Բերզը պատմեց, թե ինչպես մեծ իշխանը, սաստիկ զայրացած, մոտեցել է իրեն ու պոռացել. «Առնառտնե՛ր» (բարկացած ժամանակ թագածառանգը սիրում էր այդ բառը գործածել) և սլահանջել վաշտի հրամանատարին:

— Կհավատաք արդյոք, կոմս, ես բոլորովին չվախեցա, որովհետև գիտեի որ իրավացի եմ: Ես, գիտե՞ք, կոմս, առանց պարծենալու կարող եմ ասել, գնդերին տրված հրամանները նույնպես և կանոնագիրքը «Հայր մերի» պես անգիր գիտեմ: Այդ իսկ պատճառով, կոմս, իմ վաշտում զանցառություններ չեն լինում: Խիղճս Հանգիստ էր: Ներկայացա (Բերզը վեր կացավ և ցույց տվեց, թե ինչպես է ներկայացել ձեռք քունքին դրած: Իսկապես, դժվար էր պատկերացնել դրանից ավելի հարգանք ու ինքնագոհություն արտահայտող դեմք): Նա ինձ, ինչպես ասում են, մի լավ շշպրեց, հանդիմանեց, մահացու նախատինք տվեց, է՛լ «Արնառտներ», է՛լ սատանաներ, է՛լ Միբրքշել, — ասում էր Բերզը մի նուրբ ժպիտով: — Գիտեմ՝ իրավացի եմ, և դրա համար լուռ եմ: «Դու հա՞մր ես, ինչ է», — գոռաց նա: Ես շարունակում եմ լուել: Եվ ի՞նչ եք կարծում, կոմս: Մյուս օրը ոչինչ էլ չեղավ. ա՛յ ինչ է նշանակում գլուխ շիտոցնել, շշպրթվել: Այսպես բաներ, կոմս, — ասավ Բերզը, ծխամորճը ծխելով և ծխի օղակներ թողնելով:

— Այո, հիանալի է, — ժպտալով ասավ Ռոստովը:

Բայց Բորիսը նկատելով, որ Ռոստովն ուզում է Բերզին ծաղրել, վարպետորեն խոսակցությունը փոխեց: Ռոստովին խնդրեց, որ պատմի թե ի՞նչպես և ո՞րտեղ է վերավորվել: Այդ Ռոստովին դուր եկավ, և նա սկսեց պատմել, հետզհետե ոգևորվելով: Նա պատմեց նրանց Շենգրաբենի կոլիլը ճիշտ այնպես, ինչպես սովորաբար մասնակիցները կպատմեն իրենց ճակատամարտի մասին, այսինքն այնպես, ինչպես ցանկալի կլինեն, որ լինեն, այնպես, ինչպես լսել էին ուրիշ պատմողներից, այնպես, ինչպես ավելի գեղեցիկ կլինեն պատմել, բայց բնավ ոչ այնպես, ինչպես եղել էր: Ռոստովը ճշմարտախոս երիտասարդ էր, և ոչ մի դեպքում սուտ չէր խոսի: Նա սկսեց, մտադիր լինելով պատմել բոլորը, ինչպես իսկությամբ եղել է, բայց իր համար էլ աննկատելի, ակամա և անխուսա-

փելի կերպով անցավ անճշտութիւններին: Եթէ նա: Ճշմարտութիւնը պատմեր իր ոմնկողմնորդներին, որոնք իր նման շատ պատմութիւններ էին լսել կոիմներին մասին և որոշակի հասկացողութիւն ունեին, թե ինչ բան է հարձակումը, և սպասում էին ճիշտ այդպիսի մի պատմութեան, — կա՛մ իրեն չէին հավատա, կա՛մ որ ավելի վատ է, պիտի կարծեին, թե Ռոստովն ինքն է մեղավոր, որ իրեն չի պատահել այն, ինչ պատահում է սովորաբար հեծելազորի հարձակումներին պատմողներին: Չկարողացավ նա հասարակ, պարզ ձևով պատմել, թե բոլորը ձիերը քշում էին սրարշավ, ինքն ընկավ ձիուց, թեք դուրս գցեց և հետապնդող Ֆրանսիացիներին առջևից փախավ մտավ անտառ: Բացի դրանից, որպեսզի պատմեր, թե բոլորն ինչպես է եղել, պետք է ջանք գործադրեր, որպեսզի պատմեր միայն այն, ինչ եղել է: Ըճմարտութիւնը պատմելը շատ դժվար բան է. և երիտասարդներից շատ քչերն են ընդունակ դրան: Նրանք սպասում էին, որ նա պատմի, թե ինչպես կրակ կտրած, ինքն իրեն մոռացած, մրրիկի պես հարձակվել է Ֆրանսական կառնի վրա, սուրը ձեռին կտորել է աջ ու ձախ և թե ինչպես ընկել է ուժասպառ, ու նման բաներու Եվ Ռոստովը պատմեց երբանց այս բոլորը:

Նրա պատմութեան կիսին, այն միջոցին, երբ ասում էր. «չես կարող երեւակայել, թե կատաղութեան ինչ տարօրինակ զգացում ես ունենում հարձակում գործելիս», ներս մտավ իշխան Անդրեյ Բալկոնսկին, որին սպասում էր Բորիսը: Իշխան Անդրեյը, որ սիրում էր հովանավորող վերաբերմունք անհնալ դեպի երիտասարդները, շոյված, որ պրոտեկցիայի համար դիմել էին իրեն, և լավ արամազրդած լինելով դեպի Բորիսը, որն առաջին օրը կարողացել էր դուր գալ նրան, կամեցել էր երիտասարդի ցանկութիւնը կատարել: Կատաղովի գրութիւններով եկել էր թագաժառանգի մոտ, և Բորիսի սենյակը մտավ, կարծելով նա մենակ կլինի: Ներս մտնելով և տեսնելով իր ռազմական արկածները պատմող հուսարին (Մարդկանց այդ տեսակը իշխան Անդրեյը տանել չէր կարողանում), նա սիրալիր ժպտաց Բորիսին, հոնքերը կիտեց ու աչքերը կկոցեց Ռոստովի վրա և, թեթև գլուխ տալով, հոգնած ու ծուլորեն նստեց բազմոցին: Տհաճութիւն զգաց, որ ընկել է վատ հասարակութեան մեջ: Ռոստովն, այդ հասականալով,

կարմրեց: Բայց այդ նրա համար միևնույն էր. դա օտար մարդ էր: Սակայն Բորիսին նայելով՝ նկատեց, որ կարծես թե նա էլ էր ամաշուժ բանակային հուսարի պատճառով: Չնայած իշխան Անդրեյի անհաճո, հեզնական տոնին, չնայած այն ընդհանուր արհամարհանքին, որ ուներ Ռոստովը շտաբի բոլոր աշխատանքների նկատմամբ, որոնց թվին, ըստ երևույթի, պատկանում էր և ներս մտնողը, — Ռոստովը շփոթվեց, կարմրեց և լռեց: Բորիսը հարցրեց, թե ի՛նչ նորութիւններ կան շտաբում և ի՛նչ են խոսում մեր անելիքների մասին:

— Հավանաբար առաջ կերթանք, — պատասխանեց Բալկոնսկին, ըստ երևույթին, շցանկանալով ավելին ասել կողմնակի մարդկանց ներկայութեամբ:

Բերգն առիթից օգտվեց առանձին հարգանքով հարցնելու, թե հիմա վաշտի հրամանատարներին, ինչպես խոստում են, տալու են արդյոք կրկնակի խարաղրամ: Դրան իշխան Անդրեյը ժպտալով պատասխանեց, թե ինքն այդքան կարևոր պետական կարգադրութեանց մասին դատել չի կարող, և Բերգը զվարթ ծիծաղեց:

— Դալով ձեր գործին, — դարձավ իշխան Անդրեյը նորից Բորիսին, — մենք հետո կխոսենք, ու նայեց Ռոստովին: — Մոտս եկեք գորատեալից հետո. կարեւորն՝ կանենք:

Եվ, սենյակը դիտելով, դարձավ Արտուսովին, որի մանկական շփոթութիւնը կատաղութեան էր փոխադրում (Իշխան Անդրեյն այդ շուգեց նկատել) և հարցրեց.

— Դուք, կարծեմ, Շենգրաբենի կողմի մասին էիք պատմում: Դուք եղե՞լ եք այնտեղ:

— Ես եղել եմ այնտեղ, — շարաթշուկաբար ասավ Ռոստովը, համենայնով կարծես դրանով փրախտեղ ազդու ասանափն:

Բալկոնսկին նկատեց հուսարի տրամադրութիւնը, և ասք նրան ծիծաղելի թվաց: Թեթևակի արհամարհանքով ժպտաց:

— Այո, այդ կովի մասին հիմա շատ պատմութիւններ են անում:

— Այո, պատմութիւններ, — խոսեց Ռոստովը բարձր, հանկարծորեն կատաղած աչքերով մեկ Բորիսին, մեկ Բալկոնսկուն նայելով, — այո, պատմութիւնները շատ են, բայց մեր պատմութիւնները — թշնամու կրակի մեջ եղած մարդու պատմութիւններ են, մե՛ր պատմութիւնները կշիռ և արժեք

ունեն, և ո՛չ թե շտաբի ճարպիկ տղերանցը, որոնք, ոչինչ չանելով, պարզեններ են ստանում:

— Որոնց թվին, ձեր ենթադրութեամբ, պատկանում եմ և ե՞ս, — հանգիստ և առանձնապես հաճելի ժպիտով ասավ իշխան Անդրեյը:

Ռոստովը շարութեան և գրա հետ միաժամանակ հարզանքի մի տարօրինակ զգացում ունեցավ դեպի այդ հանգիստ մարդը:

— Ես ձեր մասին չեմ խոսում, — ասավ նա, — ես ձեզ չեմ ճանաչում և, խոստովանում եմ, ճանաչել չեմ ուզում: Ես խոսում եմ առհասարակ շտաբականների մասին:

— Իսկ ես ձեզ ահա թե ինչ կասեմ, — հանգստութեամբ ընդհատեց նրան իշխան Անդրեյը: — Դուք ուզում եք վիրավորել ինձ, և ես պատրաստ եմ համաձայնել ձեզ հետ, որ դա շատ հեշտ բան է, եթե ինքներդ բավականաչափ հարզանք չունենաք դեպի ձեզ. բայց ընդունեցեք, որ դրա համար վատ ժամանակ և վատ տեղ եք ընտրել: Այս քանի օրը մենք բոլորս պիտի մասնակցենք մի մեծ, ավելի լուրջ մենամարտի, բացի դրանից, Դրուբեցկոյը, որ ասում է, թե ինքը ձեր հին ընկերն է, բնավ մեղավոր չէ, որ իմ ֆիզիոնոմիան դժբախտություն ունի ձեզ դուր չգալու: — Ասենք, — ավելացրեց նա, ոտքի կանգնելով, — դուք գիտեք իմ ազգանունը, գիտեք, թե որտեղ եմ լինում. բայց մի մոռանաք, որ ես թե՛ ձեզ, թե՛ ինձ բնավ վիրավորված չեմ համարում, և խորհուրդ կտամ, որպես ձեզ-նից ավելի տարիքով մարդ, թողնել այս գործը անհետևանք: Ուրեմն ուրբաթ օրը, զորատեսից հետո, սպասում եմ ձեզ, Դրուբեցկոյ, ցտեսութեամբ, — ասավ իշխան Անդրեյը և, երկուսին էլ գլուխ տալով, դուրս եկավ:

Ռոստովն իր ասելիքն իշխան Անդրեյին մտաբերեց այն ժամանակ միայն, երբ նա արդեն դուրս էր գնացել: Ուստի ավելի բարկացավ, որ առիթը փախցրել էր: Ռոստովն անմիջապես պահանջեց ձին և, Բորիսին սառը հրաժեշտ տալով, մեկնեց: Վաղը գնա՞լ շտաբ և այդ կոտորտով ազդուտանտին մենամարտի հրավիրե՞լ, թե՞ գործն, իսկապես, թողնել այդպես. — ամբողջ ճանապարհին այս հարցն էր տանջում նրան: Մերթ շարութեամբ մտածում էր, թե որպիսի՞ բավականութեամբ կուզեր տեսնել այդ փոքրիկ, թույլ ու հպարտ մարդուկի վախվորած դեմքն իր ատրճանակի առաջ, մերթ զարմանքով

զգում էր, որ իրեն ճանաչած բոլոր մարդկանցից ոչ մեկին այնպես չէր ցանկանա բարեկամ ունենալ, ինչպես այդ իրեն ատելի ազդուտանտիկին:

VIII

Բորիսի և Ռոստովի տեսակցութեան հետևյալ օրը ավստրիական ու ռուսական զորքերի զորատեսն էր, որին մասնակցում էին թե՛ Ռուսաստանից նոր եկած թարմ զնդերը և թե՛ Կուտուզովի ղեկավարութեամբ արշավանքից վերադարձած զորամասերը: Ռուս կայսրն իր թագաժառանգի հետ և ավստրիական կայսրը՝ էրցհերցոգի հետ՝ կատարեցին դաշնակից 80-հազարանոց բանակի զորատեսը:

Վաղ առավոտից մաքուր հագնված զորքերն սկսեցին շարժվել ու շարվել դաշտում՝ բերդի առաջ: Մերթ շարժվում էին հազարավոր ոտներ ու սվիններ՝ փողփողուն դրոշակներով և սպաների հրամանով կանգ էին առնում, պտտվում ու դասավորվում միջանցներում, անցնելով ուրիշ նույնպիսի հետևակ բազմութեան կողքով. մերթ համաչափ քայլատրոփով ու զրնգոցով առաջ էր գալիս գեղեցիկ-կանոնավոր հեծելազորը՝ կապույտ, կարմիր, կանաչ ասեղնագործ մունդիրներ հագած նրաժիշտներն առջևից — սև, շեկ, մոխրագույն ձիեր նստած. մերթ՝ լաֆետների վրա դրած մաքրած փայլուն թնդանոթներով, հետևակի ու հեծելազորի արանքով, առաջ էր սողում հրետանին և բռնում իրեն հատկացրած տեղը: Ոչ միայն զորահանդեսային համազգեստով գեներալները՝ իրենց շափազանց սեղմված հաստ և բարակ իրաններով, ցածից դեպի վեր օձիքների մեջ սեղմված, շարժերով փաթաթված կարմիր վզերով՝ ու իրենց բոլոր շքանշաններով, ոչ միայն պոմադոված, զուգված սպաները, այլև յուրաքանչյուր զինվոր, — որ մաքրվել, ածիվել էր ու զենքերը փայլեցրել ծայր աստիճան, յուրաքանչյուր ձի, որի մազը թրջած ու կանոնավոր սանրած՝ մաքրութեամբ փայլում էր ատլասի պես, — բոլորն էլ զգում էին, որ կատարվում է մի նշանակալից ու հանդիսավոր բան: Յուրաքանչյուր գեներալ ու զինվոր զգում էր իր ոչնչությունը, գիտակցելով, որ ինքը ավագի մի հատիկ է մարդկային այդ

ծովում, և միաժամանակ զգում էին իրենց հզորութունը, գիտակցելով իրենց այդ վիթխարի ամբողջութեան մի մասը:

Վաղ առավոտից սկսվեց մի լարված աշխատանքի եռ ու զեռ, և ժամը 10-ին ամեն ինչ կարգի ընկավ: Զորաշարքերը բռնեցին ընդարձակ դաշտը: Ամբողջ բանակը կանգնել էր երեք շարք: Առջևից հեծելազորը, ապա հրետանին, վերջում հետևավ:

Յուրաքանչյուր շարքի արանքը կարծես փոզոց լիներ: Բռնակի երեք մասերը շատ որոշ կերպով բաժանված էին իրարից. — Կուտուզովի գործող բանակը (որի առաջին գծի աջ թևը բռնել էին պավլոգրադցիները), Ռուսաստանից եկած բանակային ու գվարդիական զնդերը և ավատրիական զորքերը: Բայց բոլորը կանգնած էին մի գծով, մի հրամանատարութեան ներքո և միատեսակ կարգով:

Տերևների վրայից անցնող քամու նման մի հուզված շրշունջ տարածվեց. «ապի՛ս են, գալիս՛ են»: Լավեցին վախեցած ձայներ, և ամբողջ բանակով՝ վերջին պատրաստութեան մի ալիք անցավ:

Առջևում երևաց Օլմյուցից եկող մի խումբ: Եվ այդ իսկ միջոցին, թեև անքամի օր էր, մի թեթև հով անցավ բանակի վրայով և թեթևակի օրորեց նիզակների ֆլյուգերները և բացված զրոշակները, որ թրթռալով դիպան իրենց ձողերին: Կարծես բանակն ինքը այդ թեթև շարժումով իր ուրախութունն էր արտահայտում թագավորների մոտենալու առթիվ: «Ըզգա՛ստ», — լսվեց մի ձայն: Ապա, ինչպես քաղաղները լուսարացին, այդ բառը կրկնեցին բանակի տարբեր ծայրերում: Ու ամեն ինչ լռեց:

Մեռելային լուռության մեջ լսվում էր միայն ձիերի ոտնատրոփ: Դա երկու կայսեր շքախումբն էր: Թագավորները մոտեցան բանակի մի թևին և առաջին հեծանդի փողահարները նվագեցին գլխավոր մարշը: Թվում էր՝ թե փողահարները շեն նվագում, այլ բանակն ինքը, թագավորի մոտենալուց ուրախացած, քնականորեն այդպիսի ձայներ է հանում: Այդ հրնշյունների միջից որոշակի լսվեց Ալեքսանդր կայսեր ջահել և զրզվող ձայնը: Նա ողջույնի խոսք ասավ, և առաջին գունդը բացականչեց՝ ուտո՛ւ, — այնպես խլացուցիչ, երկարատև ու զվարթ էր այդ «ուտան», որ գինվորներն իրենք սարսափեցին

այն ահեղի բազմութեան ուժից ու քանակից, որ կազմում էին իրենք:

Ռոստովը, որ կանգնած էր Կուտուզովի բանակի առաջին շարքում, որին նախապես մոտեցավ թագավորը, նույն ապրումներն ունեցավ, ինչ որ այդ բանակի յուրաքանչյուր անդամը, — ինքնամոռացութուն, հզորութեան հպարտ գիտակցություն և բուռն համակրանք դեպի այն մարդը, որը այս հանգեսի պատճառն էր:

Նա զգում էր, որ այս մարդու մի խոսքից է կախված, որպեսզի այս ահեղի բազմութունը (և ինքը, նրա հետ կապված — ավագի շնչին մի հատիկը) նետեր իրեն հրի ու ջրի մեջ, զնար ունիներ գործելու, մեռնելու կամ մեծագույն հերոսութունը կատարելու, ուստի և նրա սիրտը գողում ու մարում էր շուտով արտասանվելիք այդ խոսքից:

— Ուտո՛ւ: Ուտո՛ւ: Ուտո՛ւ, — աղաղակում էին ամեն կողմից, և զնդերն փրար ետևից թագավորին ընդունում էին գլխավոր-մարշի նվագով. հետո՛ Ուտո՛ւ... Գլխավոր-մարշ և նորից ուտո՛ւ և ուտո՛ւ, որոնք հետզհետե ուժեղանալով՝ միանում-դառնում էին մի խլացուցիչ դղրդյուն:

Քանի զեռ թագավորը չէր մոտեցել, յուրաքանչյուր գունդ իր շուտյամբ ու անշարժութեամբ՝ անկենդան մարմին էր թվում, բայց հենց որ թագավորը հավասարվում էր նրան, գունդը կենդանանում էր ու որոտում, ձայնը միացնելով մյուս զնդերի ձայններին, որոնց մոտով թագավորն անցել էր արգեն: Այդ ձայների սարսափելի, խլացուցիչ որոտների մեջ, անշարժ, կարծես քառակուսիների մեջ քարացած զորքերի արանքում անփոփոքրեն, բայց համաշափ և, որ գլխավորն է, ազատորեն շարժվում էին շքախմբի հարյուրավոր ձիավորներ և նրանց առջևից՝ երկու կայսրը: Եվ հենց նրանց վրա էր կենտրոնացած այս ահազին բազմութեան գապված-բուռն ուշադրությունը: Գեղեցիկ, ջահել Ալեքսանդր կայսրը՝ հեծյալ-գվարդիական մունդիր հագած, եռանկյունի գլխարկով, իր գոտրեկան դեմքով և հնչել ու ոչ բարձր ձայնով գրավում էր բոլորի ուշադրությունը:

Ռոստովը, որ կանգնած էր փողահարների մոտ, զեռ հեռավոր իր քրատես աչքերով ճանաչեց թագավորին և հետևեց նրա առաջ գալուն: Երբ թագավորն արգեն քսան քայլի վրա

էր և Նիկոլայը պարզ, ամենայն մանրամասնութեամբ, դիտեց կայսեր գեղեցիկ, ջահել ու երջանիկ դեմքը, նրան տոգորեց գորովի և հիացումի մի զգացում, որի նմանը երբեք չէր ապրել: Թագավորի յուրաքանչյուր դիմագիծը, յուրաքանչյուր շարժումը նրան հիանալի էր թվում:

Կանգ առնելով Պավլոգրագյան գնդի դիմաց, թագավորը ֆրանսերեն ինչ-որ բան ասավ ավստրիական կայսրին ու ժպտաց:

Այդ ժպտը տեսնելով, Ռոստովն ինքն ակամա սկսեց ժպտալ և էլ ավելի ուժգին գորով զգաց դեպի նա: Ուզում էր մի որևէ բանով իր սերն արտահայտել դեպի թագավորը: Նա գիտեր, որ այդ անկարելի է, և քիչ էր մնում լաց լինել: Թագավորը կանչեց գնդի հրամանատարին ու մի քանի խոսք ասավ նրան:

«Աստված իմ, ինչ կլինեք իմ դրուժյունը, եթե հանկարծ թագավորը դիմեր ինձ, — մտածում էր Ռոստովը, — ես երջանկութունից կմեռնեի»:

Թագավորը դարձավ և սպաներին.

— Ամբողջ սրտով շնորհակալ եմ բոլորիցդ, պարոններ: Թագավորի յուրաքանչյուր խոսքը Ռոստովին երկնքից լավող ձայն էր թվում: Որքա՞ն երջանիկ կլինեք Ռոստովը, եթե կարողանար հենց հիմա մեռնել իր թագավորի համար:

— Դուք վաստակեցիք ս. Գեորգիի դրոշները և արժանի եղեք նրանց:

«Միայն մեռնել, մեռնել՝ նրա համար», մտածում էր Ռոստովը:

Թագավորը դարձյալ ինչ-որ խոսք ասավ, որ Ռոստովը շսեց, և զինվորներն ուժ տալով իրենց կրծքերին՝ աղաղակեցին. — Ուռո՛ւ:

Ռոստովը նույնպես, թամբի վրա կռանալով, աղաղակեց որքան ուժ ունեւր, կամենալով այդ աղաղակով վնասել իրեն, միայն թե իր հիացումը լիովին արտահայտած լինի դեպի թագավորը:

Թագավորը մի երկու վայրկյան, կարծես տատանման մեջ, կանգնեց հուսարների առաջ:

«Ինչպե՞ս կարող է թագավորը տատանման մեջ լինել», մտածեց Ռոստովը, իսկ հետո այդ տատանումն անգամ Ռոս-

տովին վեհ ու հմայիչ թվաց, ինչպես և ամեն բան, որ անում էր թագավորը:

Թագավորի անվճռականութունը տեսեց միայն մի ակընթարթ: Թագավորի նեղ, սրաքիթ կոշիկի ծայրը (ինչպիսին հազնում էին այն ժամանակ) դիպավ իր՝ պոչը կտրած խայտախար մադյանի փորատակին. ճերմակ ձեռնոցով ձեռը սանձը հավաքեց, ու նա շարժվեց բազմաթիվ աղյուտանտների ուղեկցութամբ: Հետզհետե հեռանում էր նա, ուրիշ գնդերի մոտ կանգ առնելով, և Ռոստովը, երկու կայսեր շրջապատող շքախմբի մեջ, տեսնում էր միայն նրա գլխարկի ճերմակ փետուրը:

Ռոստովը շքախմբի մարդկանց թվում տեսավ և Բալկոնսկուն, որ ծուլորեն ու անփուլթ նստել էր իր ձին: Ռոստովը հիշեց իր երեկվա վեճը նրա հետ և երեկվա հարցը ծառացավ նրա առաջ, — պե՞տք է նրան մենամարտի հրավիրել, թե չարժի: «Իհարկե, չարժի, — մտածեց նա... — Եվ արժի՞ արդոք մի այսպիսի հանդիսավոր վայրկյանին մտածել ու խոսել դրա մասին: Սիրո, հիացումի և անձնազոհության մի այսպիսի րոպեին ինչ արժեք ունեն մեր վեճերն ու վիրավորանքները: Ես բոլորին սիրում եմ, բոլորին ներում եմ այժմ», մտածում էր Ռոստովը:

Երբ թագավորը դիտեց գրեթե ցուր գնդերը, զորքերն սկսեցին հանդիսավոր երթով անցնել նրա առջևից, և Ռոստովը՝ Դենիսովից նոր գնած Բեդուիների վրա անցավ իր հեծվաշտի առաջից, այսինքն մենակ և միանգամայն թագավորի աչքի առաջ:

Թագավորին չհասած՝ Ռոստովը, որպես գերագանց հեծվոր, երկու անգամ խթանեց իր Բեդուիներն և նրան հասցրեց իր ուզած կատաղի ու արագ քելքի, որով ընթանում էր Բեդուիները տաքացած ժամանակ: Փրփրած մուլթը կրծքին թեքած, պոչը մարմնից առանձնացրած և կարծես օդում թռչելով ու հողին չդիպչելով, ոտները վայելչորեն բարձր փոխելով, Բեդուիները, նույնպես զգալով թագավորի հայացքն իր վրա, անցավ հիանալի:

Ինքը Ռոստովը, ոտները ետ պահած, փորը սեղմած և իրեն զգալով ձիուն ձուլված, հոնքերը վրա տված, բայց երանավետ

դեմքով, Դենիսովի ասած, սաւառնի պէս անցաւ թագավորի մոտով:

— Կեցցե՛ք, պավլոզրագցիներ, — ասավ թագավորը:

«Աստված իմ, որքան հրշանիկ կլինեի, եթէ հրամայեր ինձ անմիջապէս կրակը նետուել», մտածեց Ռոստովը:

Երբ զորատեսը վերջացաւ, թե՛ նոր եկած գնդերի և թե՛ Կուսուզովի բանակի, սպաները խմբեր կազմելով՝ սկսեցին խոսել պարզներին, ավստրիացիներին, նրանց զգեստների ու ֆրոնտի մասին, Բոնապարտի մասին և այն մասին, թե որքան վատ կլինի նրա դրութիւնը հիմա, մանաւանդ երբ էսսենի կորպուսն էլ մոտենա, և Պրուսիան մեր կողմն անցնի:

Բայց բոլոր խմբերում էլ ամեն բանից ավելի խոսում էին Ալեքսանդր թագավորի մասին, բերնե-բերան պատմում էին նրա յուրաքանչյուր խոսքը, շարժումն ու հիանում էին նրանով:

Բոլորը միայն մի բան էին փափագում. թագավորի առաջնորդութեամբ շուտով գնալ թշնամու դեմ: Ի՛ր, թագավորի հրամանատարութեան ներքո անկարելի էր շհաղթել՝ ո՛վ էլ լիներ թշնամին. այսպէս էին մտածում Ռոստովն ու սպաների մեծ մասը:

Ձորատեսից հետո բոլորն էլ վստահ էին հաղթութեանը ավելի, քան կարող էին վստահ լինել երկու ճակատամարտ շահելուց հետո:

IX

Ձորատեսի հաջորդ օրը Բորիսը, իր լավագույն համազգեստը հագած և իր ընկեր Բերգի՝ հաջողութեան բարեմաղթութիւններն առած, գնաց Օլմյուց՝ Բալկոնսկու մոտ, ցանկանալով օգտվել նրա սիրալիրութեանից և լավագույն մի գիրք ստեղծել իր համար, հատկապէս մի կարևոր անձնաւորութեան աղյուսանտը դառնալ, որը նրան առանձնապէս գրավիչ էր թվում բանակում: Մոտոսովի համար, որ հորից տասը հազարներ է ստանում, հեշտ է ասել, թե չի ուզում որևէ մեկին գլուխ ծռել և որևէ մեկի լաքելը դառնալ. բայց ես, որ ոչինչ չունեմ իմ չոր գլխից բացի, պետք է աշխատեմ

կարիերա անել և առիթներ չփախցնել, այլ օգտվել այդ առիթներից»:

Իշխան Անդրեյն այդ օրը Օլմյուցում չէր: Բայց Օլմյուցը, ուր գտնվում էր գլխավոր կայանը, դիվանագիտական կորպուսը, ուր ապրում էին երկու կայսրներն իրենց շքախմբով, պալատականներով ու մերձավորներով, — ավելի ևս բորբոքեց նրա՝ այդ բարձր շրջանին պատկանելու փափագը:

Նա ոչ ոչին չէր ճանաչում, և, շնայած իր պճնամոլի դվարդիական համազգեստին, բոլոր այդ բարձրագիւր մարդիկ, որ փողոցներով անցնում էին շքեղ կառքերով, փետրազարդ գլխարկներով, ժապավեններով ու շքանշաններով զարդարւած, բոլոր այդ պալատականներն ու զինվորականները, թվում էր, այնքան բարձր են կանգնած իրենից, զվարդիական մի փոքրիկ սպայից, որ ոչ միայն չէին ցանկանում, այլ և չէին կարող ճանաչել իր գոյութիւնը: Գլխավոր հրամանատար Կուսուզովի տանը, ուր ուզեց տեսնել Բալկոնսկուն, բոլոր աղյուսանտները և անգամ սպասակները նրան նայում էին այնպէս, կարծես ցանկանում էին ներշնչել, թե նրա նման սպաներ շատ են թրև գալիս այստեղ և թե նրանք բոլորն արդեն ձանձրացրել են շատ: Չնայած դրան կամ, ավելի շուտ, դրա հետևանքով, մյուս օրը, ամսի 15-ին, ճաշից հետո, նորից գնաց Օլմյուց և, Կուսուզովի բնակած տունը մտնելով, հարցրեց Բալկոնսկուն: Իշխան Անդրեյը տանն էր. Բորիսին առաջնորդեցին մի ընդարձակ դահլիճ, ուր առաջ, հավանորեն, պար էր տեղի ունեցել, իսկ այժմ դրված էին հինգ մահճակալ, սեզան, աթոռներ և մի երգեհոն: Մի աղյուսանտ, պարսկական խալաթի հագին, դռան մոտ դրված սեղանի առաջ նստած՝ գրում էր: Մի ուրիշը՝ կարմրած, գիրուկ նեպոլիցկին, պռոկել էր անկողնի վրա, ձեռները գլխի տակ, ու ծիծաղում էր մոտը նստած սպայի հետ: Երրորդը երգեհոնի վրա վեննական վալս էր նվագում, չորրորդը պռոկել էր այդ երգեհոնի վրա ու ձայնակցում էր նրան: Բալկոնսկին այդտեղ չէր: Բորիսին նկատելով՝ այդ պարոններից և ոչ մեկն իր գիրքը չփոխեց: Իսկ գիր գրող աղյուսանտը, որին դիմեց Բորիսը, դժկամութեամբ ետ դարձավ ու ասավ, թե Բալկոնսկին հերթապահ է, և եթե ուզում է նրան տեսնել, պետք է գնա դեպի ձախ՝ ընդունարանը: Բորիսը

շնորհակալութիւն հայտնեց ու գնաց ընդունարանը, ուր տասի շափ գեներալներ ու սպաներ կային:

Այն միջոցին, երբ Բորիսը ներս մտավ, իշխան Անդրեյը, աչքերն արհամարհանքով կկոցած (վայելուչ հոգնածութիւն մի առանձին տեսքով, որն ասում է թե՛ եթե պարտականութիւնս չլինէր, մի րոպե անգամ ձեզ հետ չէի խոսի) ականջ էր դնում կուրծքը շքանշաններով զարդարած մի ոռու գեներալի, որը գրեթե ոտների ծայրի վրա, ձգված, զինվորի ստորաքարշ արտահայտութիւնը կարմիր դեմքին, ինչ-որ բան էր գեկուցում իշխան Անդրեյին:

— Շատ լավ, հաճեցեք սպասել, — ասավ նա գեներալին, ոռուներենն արտասանելով Ֆրանսական մի այնպիսի առոգանութիւնը, որով խոսում էր այն ժամանակ, երբ ցանկանում էր խոսել արհամարհանքով, և, Բորիսին նկատելով, այլևս չըզառնալով գեներալին (որ աղերսանքով վազում էր նրա ետեւից, խնդրելով դարձյալ ինչ-որ մի բան լսել), իշխան Անդրեյը զվարթ ժպիտով, նրան գլխով անելով, դարձավ Բորիսին:

Բորիսն այդ րոպեին արդեն պարզ կերպով հասկացավ այն, ինչ նախատեսնում էր առաջ, այն է՛, թե բանակում, բացի այն ենթակայութիւնից ու կարգապահութիւնից, ինչ գրված էր կանոնագրքում, և որը գիտեին գնդում, և ինքը գիտեր, դրանից դուրս կար մի այլ, ավելի էական մի ենթակայութիւն, որն ստիպում էր այդ կարմրագեմ գեներալին հարգանքով սպասել, այն ժամանակ, երբ կապիտան իշխան Անդրեյը իր բավականութիւն համար ավելի հարմար էր գտնում խոսակցել վառակիր Դրուբեցկոյի հետ: Ավելի քան երբէք Բորիսը որոշեց այսուհետև ծառայել ոչ թե կանոնագրքում գրածի համաձայն, այլ այս չգրված ենթակայութիւն համաձայն: Նա այժմ գտնում էր, որ ինքը իշխան Անդրեյին հանձնարարված լինելու հանգամանքովն իսկ՝ արդեն ավելի բարձր է կանգնած գեներալից, որը ուրիշ դեպքերում, զորամասում կարող էր ոչնչացնել իրեն, զվարդիական վառակիրին: Իշխան Անդրեյը մտտեցավ նրան ու ձեռը բռնեց:

— Շատ ափսոս, որ երեկ այստեղ չեմ եղել: Ամբողջ օրը քարշ էի գալիս գերմանացիների հետ: Վեյրտտերի հետ զենացիքը դիսպոզիցիան ստուգելու: Երբ գերմանացիների ակուրատութիւնը բռնում է — էլ դրան վերջ չկա:

Բորիսը ժպտաց, կարծես հասկանում էր այն, ինչի մասին, որպես հանրածանոթ բանի, ակնարկում էր իշխան Անդրեյը: Բայց նա առաջին անգամն էր լսում թե՛ Վեյրտտերի ազգանունը, թե մինչև իսկ դիսպոզիցիա բառը:

— Հը, ինչ կա, սիրելիս, ուզո՞ւմ եք աղյուստանտ դառնալ էլի: Ես ձեր մասին մտածել եմ:

— Այո, մտադիր էի, — ականա ինչ-որ բանից կարմրելով, ասավ Բորիսը, — խնդրել զլիսավոր հրամանատարին. իշխան Կուրագինը նրան նամակ է գրել իմ մասին. ուզում էի խնդրել միայն նրա համար, — ավելացրեց նա, կարծես ներողութիւն խնդրելով, — որովհետև վախենում եմ զվարդիան կովին շմասնակցի:

— Լա՛վ, լա՛վ, այդ ամենի մասին կխոսենք, — ասավ իշխան Անդրեյը, — թույլ տվեք միայն գեկուցեմ այս պարոնի մասին, և այնուհետև ձեր տրամադրութիւն տակ եմ:

Այն ժամանակ, երբ իշխան Անդրեյը գնաց կարմրագեմ գեներալի մասին գեկուցելու, այդ գեներալն, ըստ երևույթին, համամիտ չլինելով Բորիսի՝ չգրված ենթակայութիւն շահավետութիւն մասին ունեցած հասկացողութիւն, աչքերն այնպես սևեռեց հանդուգն վառակիրի վրա, որը խանգարել էր նրան իր ասելիքն աղյուստանտի հետ վերջացնելու, որ Բորիսն անհարմար զգաց: Նա երեսը շրջեց և անհամբեր սպասում էր, թե երբ պիտի վերադառնա իշխան Անդրեյը զլիսավոր հրամանատարի կաբինետից:

— Ահա թե, սիրելիս, ի՛նչ եմ մտածել ձեր մասին, — ասավ իշխան Անդրեյը, երբ անցան այն ընդարձակ դահլիճը, ուր երգեհոն էր գրված: — Գլխավոր հրամանատարի մոտ գնալու հարկ չկա, — ասավ իշխան Անդրեյը, — նա ձեզ շատ սիրալիր խոսքեր կասի, ճաշի կհրավիրի («դա այնքան էլ վատ չէր լինի ծառայութիւն համար՝ այն ենթակայութիւն տեսակետից»), — մտածեց Բորիսը), բայց դրանից ոչինչ չի ստացվի: Աղյուստանտներին և պատվիրակներին թիվը շուտով մի գումարտակի կհասնի: Բայց ահա թե մենք ինչ կարող ենք անել. ես մի լավ բարեկամ ունեմ — դա գեներալ-աղյուստանտ և սքանչելի մարդ՝ իշխան Դուրոուկովն է. և թեև դուք այդ կարող եք չիմանալ, խնդիրն այն է, որ այժմ Կուստուզովն իր շտաբի հետ միասին և մենք բոլորս ոչ մի նշանակութիւն չունենք: Այժմ

ամեն ինչ կենտրոնացվում է թագավորի ձեռքին: Դե ուրեմն գնանք Դուգորուկովի մոտ. ես պետք է գնամ նրա մոտ. ձեր մասին արդեն խոսել եմ հետը. նրա հետ կմտածենք-կտեսնենք. արդյոք հնարավոր չի համարի ձեզ մի պաշտոն տալ իր գնդում կամ մի որևէ տեղ... արևին ավելի մոտ:

Իշխան Անդրեյը միշտ առանձնապես ոգևորվում էր, եւր իրեն վիճակվում էր ղեկավարել մի երիտասարդի և նպաստել նրա աշխարհիկ հաջողութեան: Ուրիշին օգնութիւն հասցնելու պատրվակով, օգնութիւն, որ ինքը հպարտութիւնից երբեք չէր ընդունի իր համարը նա գտնվում էր այն միջավայրին մոտիկ, որը հաջողութեան էր շնորհում և որը քաշում էր նրան դեպի իրեն: Նա ամենայն սիրով Բորիսին իր հովանավորութեան տակ առավ և նրա հետ միասին գնաց իշխան Դուգորուկովի մոտ:

Ուշ երկու էր արդեն, երբ նրանք բարձրացան Օլմյուցի պալատը, ուր ապրում էին թագավորներն իրենց մերձավորներով:

Այդ օրը ռազմական խորհրդակցութիւն կար, որին մասնակցում էին հոֆկիրգաւտի բոլոր անդամները և երկու կայսր. խորհրդակցութիւնը — հակառակ ծերունիների կարծիքի, այն է՝ Կուտուզովի և իշխան Շվարցենբերգի կարծիքի, որոշեց անմիջապես հարձակում գործել և գլխավոր ճակատամարտ տալ Բոնապարտին: Ռազմական խորհրդակցութիւնը հենց նոր էր վերջացել, երբ իշխան Անդրեյը, Բորիսի ուղեկցութեամբ, պալատ եկավ՝ իշխան Դուգորուկովին փնտրելու: Գլխավոր կայանի բոլոր մարդիկ դեռ գտնվում էին այսօրվա, երիտասարդների պարտիայի համար հաղթական, ռազմական խորհրդակցութեան տպավորութեան տակ: Նրանք, ովքեր խորհուրդ էին տալիս չհարձակվել, այլ դեռ սպասել ինչ-որ բանի, նրանց ձայնները խեղդել էին և բերած պատճառաբանութիւնները հերքել, ապացուցելով հարձակման շահաւետութիւնը, այնպես որ այն, ինչի մասին խոսել էին խորհրդակցութեան մեջ. — ապագա ճակատամարտ և, անկասկած, հաղթանակը, թվում էր այլևս ոչ թե ասպագա, այլ անցյալ: Բոլոր առավելութիւնները մեր կողմն էին: Հսկայական բանակը, որ անկասկած գերազանցում էր Նապոլեոնի զորքին, հավաքված էր մի տեղ:

զորքերը, կայսրների ներկայութեանը ոգևորված, վառվում էին կովելու ցանկութեամբ. ստրատեգիական այն կետը, ուր պետք է տեղի ունենային զործողութիւնները, ամենայն մանրամասնութեամբ ծանոթ էր ավստրիական գնեհրալ վեյրտտերին, որ ղեկավարում էր զորքը (կարծես երջանիկ դիտվածի արդյունք էր այն, որ ավստրիական զորքերն անցյալ տարի զորաշարժ էին կատարել հենց այն դաշտերում, ուր սրէտք է կովելին հիմա Ֆրանսացիների դեմ). ամենայն մանրամասնութեամբ ծանոթ էր և քարտեզի վրա գծված նրանց առջև բնկած տարածութիւնը. իսկ Բոնապարտին, ըստ երևույթին, թուլացած, ոչինչ չէր ձեռնարկում:

Դուգորուկովը, հարձակման ամենախանդավառ կողմնակիցներից մեկը, հենց նոր վերադարձել էր խորհրդակցութեանից հոգնած, տանջված, բայց տարած հաղթանակով զվարթ և հպարտ: Իշխան Անդրեյը իր հովանավորյալ սպային ներկայացրեց նրան, բայց իշխան Դուգորուկովը քաղաքավարութեամբ և ամուր ս'ղմելով նրա ձեռք, ոչինչ չասավ Բորիսին և, ակներև չկարողանալով զսպել իրեն այդ վայրկյանին ամեն բանից ավելի փրեն զբաղեցնող մտքերն արտահայտելուց, Փրանսերեն դարձավ իշխան Անդրեյին.

— է, սիրելիս, գիտես ի՞նչ ճակատամարտ մղեցիրք քիչ առաջ: Տա աստված, որ դրա հետևանքը լինի նույնքան հաղթական: Սակայն, սիրելիս, — ասավ նա կցկտուր ու զվարթ, — պետք է խոստովանեմ մեղքս ավստրիացիների և մանավանդ վեյրտտերի հանդեպ: Ի՞նչ ճշտութիւն, ի՞նչ մանրամասնութիւններ, տեղի, վայրի ի՞նչ պիսի ծանոթութիւն և ամեն տեսակ հնարավորութիւնների, պայմանների ու փոքրիկ մանրամասնութիւնների որպիսի՞ կանխատեսութիւն: Ուշ, սիրելիս, սրանից ավելի ձեռնտու պայմաններ, որոնց մեջ գտնվում էնք, դիտավորութեամբ էլ չէր կարելի ստեղծել: Ավստրիական ճշտութիւնը ռուսական քաջութեան հետ միացած, — սրանից ավել էլ ի՞նչ եք ուզում:

— Ուրեմն հարձակումը վերջնականապես դրոշված է, — ասավ Բալկոնսկին:

— Գիտեք ինչ, սիրելիս, ինձ թվում է, թե Բոնապարտն ուղղակի գլուխը կորցրել է: Գիտեք, քիչ առաջ նրանից նամակ էր ստացվել կայսեր անունով:

Դուրսորդովը նշանակալից ժպտաց:

— Այ թե ինչ: Իսկ ի՞նչ է գրում, — հարցրեց Բալկոնսկին:

— Ի՞նչ կարող է գրել: Տրադիթիոնը ապա, բոլորը միայն ժամանակ շահելու նպատակով: Ես ձեզ ասում եմ, որ նա մեր ձեռքին է արդեն, համոզված եմ: Բայց որ ամենից զվարճալին է, — ասավ նա, հանկարծ բարեհոգությամբ ժպտալով, — այն է, որ ոչ մի կերպ չկարողացան իմանալ թե ինչպես հասցեագրեն պատասխանը: Ինձ թվում էր՝ եթե ոչ կոնսուլին, ինքնին պարզ է ոչ կայսեր, գոնե պետք է գրել գեներալ Բոնապարտին:

— Բայց կայսր չճանաչելու և գեներալ Բոնապարտ կոչելու միջև մեծ տարբերություն կա, — ասավ Բալկոնսկին:

— Բանն էլ հենց այդ է, — ծիծաղելով և խոսակցին ընդհատելով, ասավ Դուրսորդովն արագությամբ: — Բիլիբինին ճանաչում եք, շատ խելոք մարդ է, առաջարկեց հասցեագրել. «Հափշտակիչին և մարդկային ցեղի թշնամուն»:

Դուրսորդովն ուրախ քրքջաց:

— Միայն այդ չա՞փ, — նկատեց Բալկոնսկին:

— Այնուամենայնիվ Բիլիբինը հասցեի համար լուրջ տիտղոս գտավ: Թե սրամիտ, թե խելոք մարդ է:

— Իսկ ինչպե՞ս:

— Ֆրանսական կառավարության պետին (au chef du gouvernement français), — լուրջ ու բավականությամբ ասավ իշխան Դուրսորդովը: — Լավ է, այնպես չէ՞:

— Լավ է, բայց նրան բոլորովին դուր չի գա, — նկատեց Բալկոնսկին:

— Օ՛, բոլորովին: Եղբայրս ճանաչում է նրան. մեկից ավելի անգամ Փարիզում ճաշել է նրա՝ այժմյան կայսրի մոտ և ինձ պատմել է, որ ավելի նուրբ ու խորամանկ դիվանագետ չի տեսել. գիտե՞ք, Ֆրանսական ճարտարությունը միացրած իտալական դերասանության հետ: Գիտե՞ք նրա և կոմս Մարկովի միջև պատահած անեկդոտային դեպքը: Միայն կոմս Մարկովն է կարողացել նրա հետ վարվել ինչպես հարկն է: Թաշկինակի պատմությունը գիտե՞ք: Սքանչելի՛ բան է:

Նվ գրուցասեր Դուրսորդովը մերթ Բորիսին, մերթ իշխան Անդրեյին դառնալով, պատմեց, թե ինչպես Բոնապարտը կամենալով մեր դեսպան Մարկովին փորձել, դիտմամբ թաշ-

կինակը գցում է հատակին ու կանգնում, աչքերը Մարկովի երեսը գցած, սպասելով, երևի, թե նա կվերցնի այն ու կմատուցի իրեն. բայց Մարկովն անմիջապես դրա կողքին գցում է իր թաշկինակը և իրենը վերցնելով, Բոնապարտի թաշկինակը թողնում է տեղում:

— Charmant¹, — ասավ Բալկոնսկին, — բայց ահա թե ինչ իշխան, եկել եմ ձեզ մոտ այս երիտասարդի համար բան խընդրելու: Գիտե՞ք ինչ...

Բայց իշխան Անդրեյը խոսքը դեռ չէր ավարտել, երբ մի աղյուտանտ ներս մտավ և իշխան Դուրսորդովին կանչեց կայսեր մոտ:

— Ա՛հ, ցավում եմ, — ասավ Դուրսորդովը, հապճեպ տեղից ելնելով և իշխան Անդրեյի ու Բորիսի ձեռքերը սեղմելով: — Գիտեք, շատ ուրախ կլինեմ անել այն ամենը, ինչ որ ինձնից կախված է՝ թե՛ ձեզ համար, թե՛ այս լավ երիտասարդի համար: — Նա մի անգամ ևս սեղմեց Բորիսի ձեռք բարեհոգությամբ ու անկեղծությամբ: — Բայց տեսնո՞ւմ եք... մյուս անգամ:

Բորիսին հուզում էր բարձրագույն իշխանությանը մոտ լինելու միտքը: Նա գիտակցում էր, որ ինքն այստեղ շփվում է այն զսպանակների հետ, որոնք ղեկավարում էին մասսաների վիթխարի շարժումները, որոնց (զսպանակների) փոքրիկ, հնազանդ ու շնչին մասն էր համարում նա իրեն՝ երբ գտնվում էր իր գնդում: Նրանք իշխան Դուրսորդովի ետևից դուրս եկան միջանցքը և հանդիպեցին քաղաքացու հագուստով մի ոչ բարձրահասակ մարդու (որը դուրս եկավ թագավորի սենյակի այն դռնից, որից ներս մտավ Դուրսորդովը), որ խելացի դեմք ուներ և զգալիորեն առաջ ընկած մի ծնոտ, որը նրա դեմքը շողարտելով, տալիս էր նրան առանձին կենդանություն և ճարտարամիտ արտահայտություն: Այդ ոչ բարձրահասակ մարդը, որպես յուրային, գլխով արավ Դուրսորդովին և սեղմուն սառը հայացքով նայեց իշխան Անդրեյին, ուղիղ նրա դեմը գնալով և, հավանորեն, սպասելով, որ իշխան Անդրեյը գլուխ խոնարհի կամ ճանապարհ տա իրեն: Իշխան Անդրեյը

¹ Սքանչելի:

չարավ ոչ մեկը, ոչ մյուսը. նրա դեմքին շարունթյուն երևաց, և երիտասարդը, շուտ գալով, անցավ միջանցքով:

— Այդ ո՞վ է, — հարցրեց Բորիսը:

— Դա ամենանշանավոր, բայց ինձ համար ամենաանհաճո մարդկանցից մեկն է: Արտաքին գործերի մինիստր իշխան Ադամ Չարտորիժսկին է:

— Այս մարդիկ են ահա, — ասավ Բալկոնսկին հոռաշանքով, որը չկարողացավ պահել պալատից դուրս գալու միջոցին, — այս մարդիկ են ահա վճռում ժողովուրդների բախտը:

Հետևյալ օրը զորքերը դուրս եկան արշավանքի, և Բորիսն էլ մինչև Աուստերլիցի ճակատամարտը չկարողացավ լինել ոչ Բալկոնսկու, ոչ Դուլցորուկովի մոտ և մի առ ժամանակ մնաց Իզմայլովյան գնդում:

X

Նոյեմբերի 16-ի արշալույսին Դենիսովի հեծվաշտը, որտեղ ծառայում էր Նիկոլայ Ռոստովը, և որը գտնվում էր իշխան Բագրատիոնի ջոկատում, գիշերատեղից գնաց կռիվ և ինչպես ասում էին, մի վերստաշափ գնալով մյուս գորասյունների ետևից, կարգադրություն ստացավ՝ կանգ առնել: Ռոստովը տեսավ, թե ինչպես իրենց կողքով առաջ անցան կազակները, հուսարների 1-ին և 2-րդ հեծվաշտերը, հետևակ գումարտակները՝ հրետանիով, քեներալներ Բագրատիոնն ու Դուլցորուկովը՝ իրենց ադյուտանտներով: Այն վախը, որ նա, ինչպես միշտ զգում էր կովից առաջ, այն ներքին պայքարը, որով հաղթահարում էր այդ վախը, իր բոլոր երազանքները, թե հուսարաբար քաջություն կգործի այդ կռվում, — իզուր անցան: Նրանց հեծելազորը թողնվեց իրրև սահաստի ուժ, և Նիկոլայ Ռոստովն այդ օրն անցրեց տխուր ու ճանձրալի: Առավոտյան ժամը 9-ին դիմացից հրացանածգության տրաքտըրաքոց լսեց, ոտառներ, տեսավ ետ բերվող վիրավորներ (ղրբանք սակավաթիվ էին) և վերջապես տեսավ, թե ինչպես կազակների մի հարյուրակ շրջապատած բերում է Ֆրանսական հեծելակների մի ամբողջ ջոկատ: Ըստ երևույթին, կռիվը վերջացել էր և ակներև դա եղել էր մի թեթև, բայց հաջողակ կռուվ: Ետ եկող զինվորներն ու սպաները պատմում էին, որ

մերոնք իհայլուն հաղթանակ են տարել, գրավել են Վիշաու ըստաբը և գերել են Ֆրանսական մի ամբողջ հեծվաշտ: Գիշերվա սաստիկ ցրտից հետո օրը պարզ էր, արևոտ, և աշնանային այդ օրվա զվարթ պայծառությունը զուգադիպում էր հաղթանակի լուրերին, հաղթանակ, որի մասին պատմում էին ոչ միայն մասնակիցները, այլև Ռոստովի կողքով անցնող ու դարձող զինվորներին, սպաներին, գեներալների ու ադյուտանտների զեմքերի. ուրախ արտահայտությունը: Նիկոլայի սիրտը ճնշվեց մանավանդ, որ ճակատամարտից, առաջ իզուր երկյուղ ունեցավ և այդ ուրախ օրն անցրեց անգործության մեջ:

— Ղոստով, աղ՛ի այստեղ, դաղ՛դից խմե՛ք, — ձայն տվեց Դենիսովը, ճանապարհի եզրքին նստելով, զինով լիքը ջրամանը և ակուտոն առջևը: Ղենով:

Սպաները ուտելով ու խոսակցելով շրջան կազմեցին Դենիսովի ուտելիքների շուրջը:

— Ահա մի գերի էլ, — ասավ սպաներից մեկը, ցույց տալով Ֆրանսական մի գերի դրագունի, որին ոտով բերում էին երկու կազակ:

Նրանցից մեկը սանձից բռնած բերում էր գերուց ասնված Ֆրանսական խոշոր ու գեղեցիկ ձին:

— Ձին ծախիր ինձ, — ձայն տվեց Դենիսովը կազակին:

— Համեցեք, ձերդ ազնվություն...

Սպաները ելան շրջապատեցին կազակներին ու գերի Ֆրանսացուն: Ֆրանսական դրագունը երիտասարդ էր, ալյասցի, Ֆրանսերեն խոսում էր: գերմանական առոչանությամբ: Հուզումից դժվարությամբ էր շունչ քաշում, դեմքը կասկարմիր էր կտրել, բայց Ֆրանսերեն լսելով, արագ-արագ խոսեց սպաների հետ, մերթ մեկին, մերթ մյուսին. դառնալով: Նա ասում էր, որ իրեն չէին կարող գերի վերցնել, և որ ինքը մեղավոր չէ, որ գերի է ընկել, այլ մեղավոր է le caporal-ը, որ ուզարկեց իրեն ձիու տապակներ վերցնելու, ասելով թե ոտաներն արդեն հետու են: Եվ ամեն մի խոսքից, հետո ավելացնում էր. mais qu'on ne fasse pas de mal à mon petit cheval¹, ու փաղաքում էր ձիուն: Երևում էր, որ լավ չի հասկանում, թե ո՞ւր է գտնվում: Նա մեկ ներողություն էր խնդրում, որ իրեն գերի են վերցրել,

¹ Բայց ձիուս մի նեղացներ:

մեկ էլ, ենթադրելով թե գտնվում է իր իշխանավորների առաջ, ցույց էր տալիս զինվորի կարգապահություն և հոգածություն իր ծառայութեան նկատմամբ: Նա իր հետ մեր արիերգարը բերեց Ֆրանսական զորքի թարմ մթնոլորտը, որ այնպես խորթ էր մեզ համար:

Կազակները ձին ծախեցին երկու շերվոնեցով, և Ռոստովը, որ փող ստանալուց հետո, ամենահարուստ սպան էր, գնեց այն:

— Mais qu'on ne fasse pas de mal à mon petit cheval, — բարեսրտութեամբ ասավ ալզասցին Ռոստովին, երբ ձին հանձնելուց հուսարին:

Ռոստովը, ժպտալով, հանգստացրեց դրագոնին և դրամ տվեց նրան:

— Ալյո: Ալյո: — ասավ կազակը, հրելով գերու թևը, որ առաջ գնա:

— Թագավո՛րը, թագավո՛րը, — հանկարծ բացականչեցին հուսարները:

Եվ ամեն ոք վազեց, շտապեց իր տեղը, և Ռոստովը նկատեց որ ետևից ճանապարհով մի քանի ձիավորներ են գալիս՝ ճերմակ ցցունքները զլխարկների վրա: Մի ըոպեի մեջ բոլորն իրենց տեղերը բռնելով՝ սպասում էին:

Ռոստովը չհասկացավ և չզգաց, թե ինչպես վազեց իր տեղը ու նստեց ձին: Մի ակնթարթում անցավ կովին շմասնակցելու ափսոսանքը, այդ մարդկանց շրջանում անցավ առօրյա տրամադրությունը և վայրկենապես անհետացավ իրեն վերաբերվող ամեն մի միտք. նա ամբողջ վին կլանվեց թագավորի մերձավորութունից բխող երջանկութեան զգացումով: Այդ մերձավորութեամբ միայն իրեն վարձատրված էր զգում այս օրը կորցնելու համար: Նա երջանիկ էր, ինչպես մի սիրահար, որ արժանացել է սպասված տեսակցութեան: Զհամարձակվելով շուրջը նայել և, իրոք, չնայելով, խանդավառ հոտառութեամբ զգում էր նրա մոտեցումը: Եվ նա այդ զգում էր ոչ միայն մոտեցող շքախմբի ձիերի ոտնատրոփից, այլև զգում էր նրանից, որ նրանց մոտենալուն հետ, շուրջն ամեն ինչ պայծառանում ու տոնական տեսք էր ընդունում: Հետզհետե ավելի էր մոտենում Ռոստովի համար այդ արևը, իր շուրջը տարածելով հեզ և վեհ լույսի ճառագայթներ, և ահա նա իրեն զգում է

¹ Բայց ձիուս մի նեղացնեք:

արգեն այդ ճառագայթների տակ, լսում է թագավորի ձայնը — զգվող, հանդարտ, վեհ, և դրա հետ միասին այնքան պարզ-հասարակ: Ինչպես և Ռոստովն զգում էր՝ մեռելային լուսթյուն տիրեց, և այդ լուսթյան մեջ հնչեցին թագավորի խոսքերը:

— Les huzards de Pavlograd?¹, — հարցականորեն ասավ նա:

— La réserve, sire!² — հնչեց մի ուրիշ ձայն, որ այնքան մարդկային էր այն ոչ-մարդկային ձայնից հետո, որն ասավ: Les huzards de Pavlograd?

Թագավորը հավասարվեց Ռոստովին ու կանգ առավ: Ալեքսանդրի դեմքն ավելի գեղեցիկ էր, քան երկու օր առաջ — զորատեսին: Նա փայլում էր այնպիսի զվարթութեամբ ու ջահելութեամբ, այնպիսի անմեղ ջահելութեամբ, որ հիշեցնում էր տասն շորս տարեկան մանկան կայտառություն, և դրա հետ միասին նա այնուամենայնիվ վեհապանծ կայսեր դեմք էր: Հեծվաշտին նայելիս՝ թագավորի աչքերը պատահաբար հանդիպեցին Ռոստովի աչքերին և երկու վայրկյանից ոչ ավելի սևեռած մնացին նրանց վրա: Հասկացա՞վ արդյոք թագավորը, թե ի՞նչ է դառնում Ռոստովի սրտում (Ռոստովին թվաց, թե նա ամեն ինչ հասկացավ), բայց նա իր երկնագույն աչքերով երկու վայրկյանի շափ նայեց Ռոստովի դեմքին: (Թագավորի աչքերից քնքուշ ու հեզ լույս էր ծորում): Հետո հանկարծ հոնքը բարձրացրեց, խիստ շարժումով ձախ ոտով խփեց ձիուն և սրարշավ առաջ գնաց:

Երիտասարդ կայսրը չկարողացավ զսպել ճակատամարտին ներկա լինելու ցանկությունը և, շնայած պալատականների բոլոր առարկություններին, ժամը 12-ին, բաժանվելով 3-րդ զորասյունից, որին հետևում էր, արշավեց դեպի առաջապահը: Դեռ հուսարներին չհասած, մի քանի աղյուտանտ հանդիպեցին և լուր տվին նրան կովի հաջող ելքի մասին:

Տեղի ունեցած ճակատամարտը, որի աղյուտները եղել էր միայն այն, որ գերի էր առնվել ֆրանսական մի հեծվաշտ, համարում էին ֆրանսացիների վրա տարած մի փայլուն հալթանակ, ուստի և թագավորը և ամբողջ բանակը (մանավանդ

¹ Պովոզրադյան հուսարները:

² Պահեստի զորաբաժինն է, ձերդ մեծութուն:

երբ վառողի ծուխը դեռ չէր վերացել կովի դաշտից) հավատացած էին, թե ֆրանսացիները պարտված են ու նահանջում են՝ հակառակ իրենց կամքի: Քաղաքի գնալուց մի քանի րոպե անց, կարգադրվեց, որ պավլոգրադցիների դիվիզիոնը առաջ գնա: Վիշաուի մեջ, գերմանական այդ փոքրիկ քաղաքում, Ռոստովը մի անգամ ևս տեսավ թագավորին: Քաղաքի հրատարակում, ուր մինչև թագավորի գալը բավական ուժեղ հրապանակներ էին եղել, ընկած էին մի քանի սպանված ու վիրավոր մարդիկ, որոնց դեռ չէին կարողացել հավաքել: Քաղաքում, զինվորականների և ոչ զինվորականների շքախմբով շրջապատված, արդեն ոչ թե զորատեսի ժամանակվա, այլ մի ուրիշ, պոչը կտրած շիկակարմիր ձի նստած և մի կողմի վրա թեքված, շնորհալի շարժումով ոսկե լոռնետն աչքին բռնած, նայում էր երեսն ի վար պառկած առանց գլխարկի, արյունոտած գլխով զինվորին: Վիրավոր զինվորն այնքան անմաքուր էր, կոպիտ ու անճոռնի, որ Ռոստովին վիրավորում էր նրա մոտիկությունը թագավորին: Ռոստովը տեսավ, թե ինչպես, կարծես հանկարծակի սառնամանիքից, ցնցվեցին թագավորի փոքր-ինչ կոացած ուսերը, ինչպես ձախ ոտը շղաձգորեն ըսկրսեց խթանելով խփել ձիու կողին, և թե ինչպես ձեռնասուն ձին նայում էր անտարբեր ու տեղից չէր շարժվում: Մի աղյուտանտ ձիուց իջնելով՝ բռնեց զինվորի թևատակերից և դրեց բերված պատգարակի մեջ: Զինվորը տնքաց:

— Կամաց, կամաց, մի՛թե կամաց չի կարելի, — ըստ երևույթին, մեռնող զինվորից ավելի տանջվելով, ասավ թագավորն ու ձին քշեց հեռացավ:

Ռոստովը տեսավ թագավորի աչքերն արցունքով լցված և լսեց թե ինչպես նա, հեռանալով, ֆրանսերեն ասավ Չարտորիժսկուն.

— Ի՞նչ սարսափելի բան է պատերազմը, ի՞նչ սարսափելի բան է: Quelle terrible chose que la guerre!

Առաջապահ զորամասերը տեղավորվեցին Վիշաուի այն կողմը, թշնամու զորաշղթայի հանդեպ, որ տեղի տվեցին մեզ օրվա րնթացքում եղած թեթև հրացանաձուլության ժամանակ: Առաջապահ զորամասին կարդացվեց թագավորի շնորհակալությունը, խոստացան պարգևներ, և զինվորներին կրկնակի շափով օղի բաժանվեց: Ավելի ուրախ ճարձատեցին բանակա-

տեղի խարույկները և ավելի ուրախ հնչեց զինվորների երգը: Դենիսովն այդ գիշեր տոնեց իր նոր ստացած մայրուժյան աստիճանը, և Ռոստովն արդեն բավական խմած՝ խնջույքի վերջում առաջարկեց թագավորի կենացը, բայց «ոչ թագավոր-կայսեր, ինչպես ասում են, պաշտոնական ճաշերին, — ասավ նա, — այլ թագավորի, բարի, հմայիչ ու մեծ մարդու կենացը. խմենք նրա կենացը և ֆրանսացիների վրա անվիճելի հաղթություն տանելու համար»:

— Եթե մենք առաջ էլ կովեինք, — ասավ նա, — և ֆրանսացիներին մոտ շթոգնեինք, ինչպես Շենգրաբենի մոտ... իսկ ի՞նչ է լինելու հիմա, երբ նա առաջներիս է: Մենք բոլորս կմեռնենք, հաճույքով կմեռնենք նրա համար: Այդպես, պարոններ: Թերևս, ես այնպես չեմ խոսում, ես շատ խմել եմ. այո, ես այդպես եմ զգում, և դուք նույնպես: Ալեքսանդր առաջինի կենացը, Ուոռա՛:

— Ուոռա՛, — ղողանջեցին սպաների ոգևորված ձայները: Եվ ծեր ոտամխտոր Կիրստենը բացականչեց ոգևորված և ոչ պակաս անկեղծ, քան քսան տարեկան Ռոստովը:

Երբ սպաները խմեցին ու բաժակները շարդեցին, Կիրստենը լցրեց մյուսները, և միայն շապկով ու վարտիքով, բաժակը ձեռքի մոտեցավ զինվորական խարույկներին և վեհապանծ դիրքով ձեռը բարձրացրեց վեր, ու երկար ճերմակ բեղերով և շապկի արանքից երևող սպիտակ կրծքով կանգ առավ խարույկի լույսի մեջ:

— Տղերք, թագավոր-կայսեր կենացը, հանուն հաղթության, ուոռա՛, — բացականչեց նա կտրիճի պես, պառավ հուսարական բարիտոնով:

Հուսարները խմրվեցին և արձագանքեցին նրան բարձր կանչերով:

Դիշերվա ուշ ժամին, երբ բոլորը ցրվեցին, Դենիսովն իբ կարճ ձեռով թոթվեց իր սիրելի Ռոստովի ուսը:

— Բանակում մեկը չկա, ոգ՛ի վղ՛ա մաղ՛դ սիղ՛ա հաղ՛վի, նա էլ սիղ՛ա հաղ՛վել է թագավոր՛ի վղ՛ա, — ասավ նա:

— Դենիսով, դու այդ բանը մի ծաղրի, — գոչեց Ռոստովը, — դա մի այնպիսի բարձր, այնպիսի գեղեցիկ զգացմունք է, այնպիսի...

— Հավատում եմ, բաղ՝ եկամ, հավատում եմ. համամիտ եմ և հավանութուն եմ տալիս....

— Ոչ, չես հասկանում:

Եվ Ռոստովը վեր կացավ ու գնաց շրջելու խարույկների շուրջը, երազելով այն մասին, թե ինչ երջանկություն կլինե՞ր մեռնել, առանց կյանքը փրկելու (նա այդ մասին չէր էլ ուզում երազել), այլ ուղղակի մեռնել թագավորի աչքի առջև: Նա իսկապես տարված էր թե՛ թագավորի, թե՛ ուսական զենքի փառքի սիրով և թե՛ ապագա հաղթանակի հույսով: Եվ մենակ նրան չէր համակել այդ զգացումը այն հիշատակելի Աուստերլիցի ճակատամարտին նախորդող օրերին. ոուս բանակի տասը զինվորից ինը այդ ժամանակ տարված էր, թեև պակաս խանդավառությամբ, իր թագավորի և ուսական զենքի փառքի սիրով:

XI

Հետևյալ օրը թագավորը կանգ առավ Վիշաուում: Թագավորի անձնական բժիշկ Վիլհելմ մի քանի անգամ կանչվեց նրա մոտ: Գլխավոր կայանում և մոտիկ գտնվող զորքերի մեջ լուր տարածվեց, թե թագավորը հիվանդ է: Նա ոչինչ, չէր կերել և գիշերը վատ էր քնել, ինչպես ասում էին մերձավորները: Տրկարության պատճառը այն ուժեղ տպավորությունն էր, որ ստացել էր նրա զգայուն սիրտը վիրավորներին ու սպանվածներին տեսնելով:

Նոյեմբերի 17-ի արշալույսին մեր առաջապոստից մի ֆրանսացի սպա Լկավ բանազնացի դրոշակով, որ տեսակցություն էր խնդրում ոուս կայսեր հետ: Այդ սպան Սավարին էր: Թագավորը նոր էր միայն քնել, ուստի և Սավարին ստիպված էր սպասել: Կեսօրին թագավորն ընդունեց նրան և մի ժամ հետո նա իշխան Դոլգորուկովի հետ գնաց ֆրանսական բանակի առաջավոր պահակակետը:

Լուր կար, թե Սավարին եկել էր առաջարկելու, որ Ալեքսանդր կայսրը տեսակցություն ունենա Նապոլեոնի հետ: Անձնական այս տեսակցությունը, ի մեծ ուրախություն ամբողջ բանակի, մերժվեց, և թագավորի փոխարեն Նապոլեոնի հետ բանակցություններ վարելու ուղարկվեց Վիշաուի մոտ հազ-

թանակ տանող իշխան Դոլգորուկովը, եթե իսկապես այդ բանակցությունները, հակառակ ակնկալության, հաշտության նպատակ ունենին:

Երեկոյան Դոլգորուկովը վերադարձավ, ուղիղ գնաց թագավորի մոտ և երկար մնաց նրա հետ առանձին:

Նոյեմբերի 18 և 19-ին ոուս զորքն ավելի առաջ գնաց, և թշնամու առաջավոր պահակակետերը՝ կարճատև հրացանաձգությունից հետո՝ նահանջեցին: 19-ի կեսօրից սկսած բանակի վերին շրջաններում սկսվեց մի տենդային ու հուզումնալից շարժում, որը շարունակվեց մինչև հետևյալ օ. վ.ս. նոյեմբերի 20-ի առավոտը, երբ տեղի ունեցավ Աուստերլիցի անմոռաց ճակատամարտը:

Մինչև 19-ի կեսօրը շարժումը, բուն խոսակցությունները, վազվզուքը, ադյուտանտների առաքումն այս ու այն կողմ կենտրոնացած էր միայն կայսրների գլխավոր կայանում. կեսօրից հետո այդ շարժումն անցավ Կուտուզովի գլխավոր կայանը և զորասյունների հրամանատարների շտաբները: Երեկոյան, ադյուտանտների միջոցով, այդ շարժումը տարածվեց բանակի բոլոր ծայրերում ու մասերում, և 19-ի լույս 2-ի գիշերը դաշնակից զորքի 80 հազարանոց բազմությունը վեր կացավ քնից, աղմկալի ձայներով ու խոսակցությամբ շարժվեց ու ձգվեց, որպես ինը վերստ երկարություն ունեցող մի ժապավեն:

Կենտրոնացած շարժումը, — որ առավել տես սկսվեց կայսրների գլխավոր կայանում և ընթացք տվեց հետագա ողջ շարժմանը, — նման էր աշտարակային խոշոր ժամացույցի կենտրոնական անիվի առաջին շարժմանը: Նախ դանդաղորեն շարժվեց մի անիվը, պտտվեց երկրորդը, երրորդը, և հետզհետե արագ-արագ սկսվեցին պտտվել անիվները, ճախարակները, ատամնավոր անիվը, հետո խփեցին զարկերը, ֆիզուրներ դուրս թռան, և սլաքներն սկսեցին համաշափությամբ առաջ խաղալ, ցույց տալով շարժման արդյունքը:

Ինչպես ժամացույցի մեխանիզմում, այնպես էլ ռազմական գործի մեխանիզմում մի անգամ արդեն ընթացք ստացած շարժումը անարգել է մինչև վերջին կայանը, և ընդհակառակը՝ միանգամայն անշարժ են մեխանիզմի այն մասերը, որոնք դեռ շարժման մեջ չեն դրվել: Ճնշում են անիվները,

ատամներով բռնելով իրար, արագությունից վզդում են դարձող ճախարակները, իսկ հարևան անիվը այնպես հանգիստ ու անշարժ է, կարծես հարյուրավոր տարիներ պատրաստ է մնալ այդ անշարժություն մեջ. բայց ահա եկավ ժամանակը — լրծակը շարժվեց ու դիպավ նրան, և անիվը, հնազանդելով շարժմանը, սկսում է դառնալ ու շխշիկալ և միախառնվել այն ընդհանուր շարժմանը, որի նպատակն ու արդյունքը անհասկանալի են իրեն:

Ինչպես բազմաթիվ ու բազմապիսի անիվների ու ճախարակների բարդ շարժման արդյունքը միայն ժամանակը ցույց տվող սլաքի դանդաղ ու համաշափ շարժումն է, այնպես էլ այդ 160 000 ուղևորների ու ֆրանսացիների բոլոր մարդկային բարդ շարժումների, — այդ մարդկանց բոլոր կրթերի ու հույզերի, իղձերի, զղջումների, նվաստացումների, տառապանքների, հպարտության ու գոռոզության բռնկումների, սարսափի և հիացմունքի հետևանքը — Առևտրիցի պարտությունն էր միայն. մի պարտություն, որ արդյունք էր այնպես կոչված երեք կայսրնների ճակատամարտի, որն առաջ բերեց համաշխարհային-պատմական սլաքի դանդաղ առաջադաշտումը մարդկային պատմության ցիֆերըլատի վրա:

Իշխան Անդրեյն այդ օրը հերթապահ էր և շարունակ զբլխավոր հրամանատարի մոտ էր:

Երեկոյան ժամը 6-ին Կուտուզովը գնաց կայսրների գլխավոր կայանը և, մի կարճ միջոց թագավորի մոտ մնալով, գնաց օրերհոֆմարշալ կոմս Տոլստոյի մոտ:

Բալկոնակին օգտագործեց այդ ժամանակահիշոցը և գնաց Դուգորուկովի մոտ՝ կրվի մանրամասնություններն իմանալու: Իշխան Անդրեյն զգում էր, որ Կուտուզովն ինչ-որ բանից հուզված է ու դժգոհ, և որ գլխավոր կայանում նրանից դժգոհ են, և որ կայսերական գլխավոր կայանի մարդիկ նրա հետ խոսում են այնպիսի տոնով, կարծես իրենք գիտեն մի բան, որ ուրիշները չգիտեն: Ուստի և իշխան Անդրեյն ուզում էր խոսել Դուգորուկովի հետ:

— Բարև, mon cher, — ասավ Դուգորուկովը, որ թեյում էր Բիլիբինի հետ նստած: Տոնակատարությունը վաղն է լինելու: Ինչպե՞ս է ձեր ծերուկը. տրամադրությունը վատ է:

— Չեմ կարող ասել, թե տրամադրությունը վատ է, բայց նա, կարծեմ, ուզում է, որ իրեն լսեն:

— Բայց իրեն լսեցին ուղղակի խորհրդում և կլսեն, եթե կարգին բան ասի. սակայն ձգձգել ու ինչ-որ բանի սպասել այժմ, երբ Բոնապարտն ամեն բանից ավելի վախենում է գլխավոր ճակատամարտից, — անկարելի է:

— Դուք նրան տեսա՞ք, — ասավ իշխան Անդրեյը: — է, ինչպիսի՞ մարդ է այդ Բոնապարտը: Ի՞նչ տպավորություններ էր ձեզ վրա:

— Այո, տեսա և համոզվեցի, որ աշխարհում ամեն բանից ավելի վախենում է գլխավոր ճակատամարտից, — կրկին Դուգորուկովը, ըստ երևույթին, թանկ գնահատեցավ այդ ընդհանուր եզրակացությունը, որ աքե էր նապոլեոնի հետ տեսակցելուց: — Եթե ճակատամարտից չվախենար, էլ ինչո՞ւ էր տեսակցություն խնդրում, բանակցություններ վարում և, որ գլխավորն է, ինչո՞ւ էր նահանջում, երբ նահանջը այնպես հակառակ է պատերազմ վարելու իր ամբողջ մեթոդին: Հավատացե՛ք ինձ, նա վախենում է գլխավոր ճակատամարտից. նրա ժամը հնչել է: Այդ ասում եմ ես:

— Բայց պատմեցե՛ք-տեսնենք ինչպիսի՞ մարդ է, — նորից հարցրեց իշխան Անդրեյը:

— Դուր զույնի սյուրթուկ հագած մարդ է. շատ էր փափագում, որ ես իրեն ձեռք մեծություն ասեմ. բայց ի մեծ վիշտ իրա, ինձնից շատացավ և ոչ մի տիտղոս: Ահա ի՞նչ տեսակ մարդ է, և ուրիշ ոչինչ, — պատասխանեց Դուգորուկովը, ժպտալով Բիլիբինի երեսին նայելով: — Չնայած ծերունի Կուտուզովի հանդեպ ունեցած իմ խորին հարգանքին, — շարունակեց նա, — մենք հիմարներ կլինեինք, եթե սպասեինք ինչ-որ բանի և այդպիսով առիթ տալինք նրան հեռանալու կամ մեզ խաբելու, մինչդեռ այժմ նա հաստատապես մեր ձեռին է: Ոչ, չպետք է մոռանալ Սուլթրովին և նրա սկզբունքը — շղենք մեզ հարձակման ենթարկվողի վիճակում, այլ հարձակվենք ինքներս: Հավատացե՛ք, պատերազմում երիտասարդների եռանդը հաճախ ավելի ճիշտ է ցույց տալիս ուղին, քան ծեր դանդաղկոտների ողջ փորձառությունը:

— Բայց նրա ո՞ր դիրքի վրա ենք հարձակվելու: Ես այսօր եղա մեր առաջավոր պահակակետերում, և պետք է ասեմ, որ

դժվար է որոշել, թե որտեղ են գտնվում նրա գլխավոր ուժերը, — ասավ իշխան Անդրեյը:

Նա ուզում էր իշխան Դուգորուկովին պարզել իր կազմած հարձակման ծրագիրը:

— Ա՛հ, դա բոլորովին միևնույն է, — ասավ Դուգորուկովը, վեր կենալով ու քարտեզը սեղանին փռելով: — Ամեն ինչ նախատեսված է. եթե նա գտնվում է Բրյուննի մոտերքը...

Եվ իշխան Դուգորուկովը հապճեպ ու ոչ պարզ ձևով պատմեց Վեյրոտերի թևանց շարժման ծրագիրը:

Իշխան Անդրեյն սկսեց առարկել և ապացուցել, որ իր ծրագիրը ոչնչով պակաս չէ Վեյրոտերի ծրագրից, բայց այն պակասությունն ունի, որ Վեյրոտերի ծրագիրն ընդունված է արդեն: Հենց որ իշխան Անդրեյն սկսեց ապացուցել իր ծրագրի առավելությունները և մյուսի պակասությունները, իշխան Դուգորուկովը դադարեց նրան լսելուց և ցրված նայում էր ոչ թե քարտեզին, այլ իշխան Անդրեյի դեմքին:

— Ասենք, Կուտուզովի մոտ այսօր ուղղակիան խորհրդողակցուհյուն է լինելու. դուք այդ բոլորը կարող եք այնտեղ ասել, — ասավ Դուգորուկովը:

— Այդպես էլ կանեմ, — ասավ իշխան Անդրեյը, քարտեզից հեռանալով:

— Եվ ինչի՞ մասին եք այդպես հոգում, պարոններ, — ասավ Բիլիբինը, որ մինչ այդ զվարթ ժպիտով ականջ էր դնում նրանց զրույցին և այժմ, ըստ երևույթին, պատրաստվում էր կատակել: — Վաղը հաղթություն կլինի թե պարտություն, միևնույն է, ոուս զենքի հաջողությունն ապահովված է: Ձեր Կուտուզովից բացի, այլևս ոչ մի ոուս զորավար կա: Զորավարներ՝ Heer general Wimpfen, le comte de Langeron, le prince de Lichtenstein, le prince de Hohenloe et enfin Prsch... prsch... et ainsi de suite, comme tous les noms polonais¹.

— Taisez vous, mauvaise langue², — ասավ Դուգորուկովը: Ծիշտ չէ, արդեն երկու ոուս ունենք — Միլորադովիչը

¹ Վիմպֆեն, կոմս Լանցերոն, իշխան Լիխտենշտեյն, իշխան Հոհենլոե և Պրիշպրշիպրշ... ինչպես լեհական բոլոր անունները:

² Զսպեք ձեր շար լեզուն:

և Դոխտուրովը, պիտի ունենայինք երրորդն էլ. կոմս Արակչեևը, բայց նրա ջղերը թույլ են:

— Սակայն, Միխայիլ Իլարիոնովիչը, կարծում եմ, եկած կլինի, — ասավ իշխան Անդրեյը: — Երջանկություն և հաջողություն եմ ցանկանում, պարոններ, — ավելացրեց նա և, Դուգորուկովի ու Բիլիբինի ձեռները սեղմելով, դուրս եկավ:

Տուն վերադառնալով՝ իշխան Անդրեյը չկարողացավ իրեն զսպել և լուռ նստած Կուտուզովին հարցրեց, թե ի՞նչ է մտածում նա վաղվա հակառակորդի մասին:

Կուտուզովը մի խիստ հայացք գցեց իր աղյուտանտի երեսը և, մի փոքր լսելուց հետո, պատասխանեց.

— Ես կարծում եմ, որ հակառակորդը տանուլ ենք տալու, ես այդպես ասի կոմս Տոլստոյին և խնդրեցի իմ այս կարծիքը հայտնել թագավորին: Ի՞նչ ես կարծում՝ ինձ ինչ պատասխանեց. — Eh, mon cher général, je me mêle du riz et des cotelettes, mêlez vous des affaires de la guerre¹. Այո... Ահա ի՞նչ պատասխան տվին ինձ:

XII

Երեկոյան ժամը 10-ին Վեյրոտերն իր ծրագիրներով եկավ Կուտուզովի բնակարանը, ուր և նշանակված էր ուղղակիան խորհրդի նիստ: Բոլոր զորասյունների հրամանատարները կանչված էին գլխավոր հրամանատարի մոտ, և բոլորը, բացի իշխան Բագրատիոնից, որ հրաժարվել էր զալ, ներկայացան նշանակած ժամին:

Վեյրոտերը, որ լիակատար տնօրենն էր նախատեսվող հակառակորդի, իր աշխուժությամբ ու փութկոտություններով կատարյալ հակապատկերն էր ներկայացնում դժգոհ ու քնատ Կուտուզովի, որ ակամա կատարում էր ուղղակիան խորհրդի նախագահի ու ղեկավարի դերը: Վեյրոտերն, ակներև, զգում էր իրեն շարժման գլուխ, մի շարժում, որ այլևս անարգել էր դարձել: Նա նման էր մի լծած ձիու, որ սայլի հետ վազում է ասարն ի վար: Ինքն էր քաշում սայլակը, թե սայլակն էր քշում

¹ Է՛հ, սիրելի գեներալ: Ես զբաղված եմ բրնձով ու կոտլետներով, դուք էլ զբաղվեցեք ուղղակիան գործերով:

իրեն, — չգիտեր. բայց որքան կարելի էր, առաջ էր վազում, ժամանակ չունենալով այլևս մտածելու, կշռադատելու, թե ուր կտանի այդ շարժումը: Վեյրոտերն այդ երեկո երկու անգամ դնացել էր թշնամու զորաշրթանները անձամբ դիտելու, երկու անգամ եղել էր ուսուց և ավստրիացոց թագավորների մոտ՝ գեկուցում և բացատրութուն տալու համար, նաև իր գրասենյակում, ուր գերմաներեն լեզվով թելադրեց իր դիսպոզիցիան: Այժմ հոգնած եկել էր Կոստուզովի մոտ:

Նա, ըստ երևույթին, այնքան զբաղված էր, որ մոռանում էր անգամ քաղաքավարի լինել գլխավոր հրամանատարի հետ. ընդհատում էր նրան, խոսում էր արագ, անորոշ, առանց խոսակցի երեսին նայելու, չպատասխանելով իրեն տրված հարցումներին: Յեխոտված էր, տեսքը ողորմելի, տանջված, շփոթված և դրա հետ միասին ամբարտավան ու գոռոզ:

Կոստուզովն ապրում էր Օստրալիցի մոտ գտնվող ագնրվականի մի փոքրիկ դղյակում: Գլխավոր հրամանատարի առանձնասենյակը դարձած ընդարձակ հյուրասրահում հավաքվել էին — ինքը Կոստուզովը, Վեյրոտերը և ռազմական խորհրդի անդամները: Նրանք թեյում էին և սպասում միայն իշխան Բագրատիոնին, որ խորհրդակցութունն սկսեն: Ժամը 8-ին Բագրատիոնի սուրհանգակը լուր բերեց, թե իշխանը գալ չի կարող: Իշխան Անդրեյը եկավ այդ բանը հայտնելու գլխավոր հրամանատարին և, օգտվելով Կոստուզովի կողմից նախապես իրեն տված՝ խորհրդակցութւյանը ներկա լինելու թույլտվութւյանից, մնաց սենյակում:

— Քանի որ իշխան Բագրատիոնը չի գալու, մենք կարող ենք սկսել, — ասավ Վեյրոտերը. հասկանալի տեղից ելնելով և մոտենալով այն սեղանին, որտեղ փոխված էր Բրյուննի շերտակայքի ահագին քարտեզը:

Կոստուզովը (կոճակները բաց մոնդիրի օձիքից դուրս էր ընկել նրա պարարտ վիզը) նստել էր վոլտերյան բազկաթոռում, փափրիկ պառավական ձեռները արմնկատակերին դրած, և գրեթե քնել էր: Վեյրոտերի ձայնից դժվարութւյամբ բաց արավ իր միակ աչքը:

— Այո, այո, խնդրեմ, թե չէ՝ ուշ է, — ասավ նա և, գլուխով անելով, գլուխն իջեցրեց ու աչքը փակեց նորից:

Եթե առաջին պահին խորհրդի անդամները կարծում էին, թե կոստուզովը քնած է ձևանում, բայց վերջին ընթերցումի ժամանակ նրա քթի հանած խոռոցները ցույց տվին, որ այդ թողելին գլխավոր հրամանատարն ավելի կարևոր գործով է զբաղված, քան թե ցանկութուն ունի արհամարհել դիսպոզիցիան կամ ինչ-որ մի այլ բան. նա բավարարում էր մարդկային անդիմադրելի պահանջը — նա իրոք քնել էր: Վեյրոտերը շափազանց զբաղված մարդու շարժումներով, որ շափազանց զբաղված է՝ թեկուզ մի ընդհանուր կորցնելու համար, նայեց Կոստուզովին և, համոզվելով, որ նա քնած է, թուզթը վերցրեց և բարձր միօրինակ ձայնով սկսեց կարգալ ապագա ճակատամարտի դիսպոզիցիան հետևյալ վերնագրով, որը նա նույնպես կարդաց.

«Կորելնիցի և Սոկոլնիցի ետևը գտնվող թշնամու գիրքերի վրա հարձակվելու դիսպոզիցիան, 30 նոյեմբեր 1805 թ.»:

Դիսպոզիցիան շատ բարդ էր և դժվարին: Դիսպոզիցիայի բնագրում ասված էր.

Da der Feind mit seinem linken Fluegel an die mit Wald bedeckten Berge lehnt und sich mit seinem rechten Fluegel laengs Kobelnitz und Sokolnitz hinter die dort befindlichen Teiche zieht, wir im Gegentheil mit unse-rem linken Fluegel seinen rechten sehr debordiren, so ist es wortheilhaft letzteren Fluegel des Feindes zu attakiren, besonders wenn wir die Doerfer Sokolnitz und Kobelnitz im Besitze haben, wodurch wir dem Feind zugleich in die Flanke fallen und ihn auf der Flaechen zwischen Schlapanitz und dem Thuerassa-Walde verfolgen koennen, indem wir dem Defileen von Schlapanitz und Bellomitz ausweichen, welche die feindliche Front decken. Zu diesem Endzwecke ist es noethig... Die erste Kolonne marschirt... die zweite Kolonne marschirt... die dritte Kolonne marschirt¹... և

¹ Պրովհետև թշնամին իր ձախ թևով հենվում է անտառածածկ սարերին, իսկ աջ թևով տարածվում է Կորելնիցի և Սոկոլնիցի երկարութւյամբ, նրանց ետև գտնվող լճակների այն կողմը, իսկ մենք, ընդհակառակը, մեր ձախ թևով գերազանցում ենք նրա աջ թևը, ուստի մեզ ձեռնտու է հարձակվել թշնամու սույն վերջին թևի վրա, մահապանդ ելնել գրավենք Սոկոլնից և Կո-

այլն, կարգում էր Վեյրտտերը: Գեներալները կարծես, դժկամութեամբ էին լսում այդ դժվարին դիսպոզիցիան: Խարտայշ բարձրահասակ գեներալ Բուկասնիզենը կանգնել էր՝ մեջքը պատին տված և, աչքերը վառվող մոմին հառած, կարծես չէր լսում և անգամ մինչև իսկ չէր ուզում, որ կարծեն, թե լսում է: Վեյրտտերի ուղիղ դիմացը, բաց փայլուն աչքերը նրա վրա սեռած, ուղմատենը դիրքով, արմունկները ծնկներին հենած՝ նստել էր կարմրագույն Միլտրադովիչը՝ բեղերը և ուսերը վեր ցցած: Նա համառորեն լուծում էր, Վեյրտտերին նայելով, և աչքը նրան՝ ց կտրեց այն ժամանակ միայն, երբ ավատրիական շտաբի պետը լռեց: Այդ ժամանակ Միլտրադովիչը նշանակալից նայեց մյուս գեներալներին: Բայց այդ հայացքից դժվար էր հասկանալ՝ համաձայն է նա դիսպոզիցիային թե ոչ, գո՞հ է թե՞ դժգոհ: Վեյրտտերին ամենից ավելի մոտ նստող կոմս Լանժերոնը հարավային ֆրանսացու նուրբ ժպիտով, ընթերցման ամբողջ ընթացքում, նայում էր իր բարակ մատներին, որ արագորեն քթախոտի մի պատկերազարդ տուփ էին խաղացնում: Հետագա պարբերութուններից մեկի կեսին նա դադարեցրեց քթախոտի տուփի շարժումը, գլուխը բարձրացրեց և, անախորժ քաշաքավարութունը նուրբ շուրթերի ծայրին, ընդմիջեց Վեյրտտերին և ուզեց ինչ-որ բան ասել. բայց ավատրիացի գեներալը, ընթերցումը չընդհատելով, հոնքերը կիտեց բարկացած և արմունկները թափահարեց, որ կարծես ուզում էր ասել. — հետո, հետո կասեք ինձ ձեր կարծիքը, այժմ համեցեք նայել քարտեզին ու ականջ դնել: Լանժերոնը տարակուսանքով աչքերը բարձրացրեց վեր, նայեց Միլտրադովիչին, կարծես բացատրութուն փնտրելու համար, բայց սենեկով Միլտրադովիչի նշանակալից, սակայն ոչինչ արտահայտող հայացքը, աչքերը խոնարհեց տխրութեամբ և նորից սկսեց քթախոտի տուփը խաղացնել:

բելից գլուղերը, և այդպիսով հնարավորութուն ստանալով հարձակում գործել թշնամու զորաթևի վրա, և հետագանդի նրան Շլապանիցի և Տյուրասի անտառի միջև գտնվող դաշտավայրում, խուսափելով միաժամանակ Շլապանիցի և Բելովիցի միջև գտնվող նեղ անցքից, որով պաշտպանվում է թշնամու ճակատը: Դրա համար անհրաժեշտ է... Առաջին զորասյունը գնում է... երկրորդ զորասյունը գնում է... երրորդ զորասյունը գնում է...

— Une leçon de géographie¹, — ասավ նա, կարծես ինչ իրեն, բայց բավական բարձր, որպեսզի բոլորը լսեն:

Պրծիբիշևսկին հարգալիբ, բայց արժանավայել քաղաքավարութեամբ ձեռով ականջը դարձրեց դեպի Վեյրտտերը, մի այնպիսի տեսքով, ասես կլանված է ուշադրութեամբ: Կարճահասակ Դոխտուրովը նստել էր ուղիղ Վեյրտտերի դիմաց՝ ջանասեր ու համեստ տեսքով և, փոված քարտեզի վրա կուցած, բարեխղճութեամբ ուսումնասիրում էր դիսպոզիցիան և իրեն անձանթ վայրերը: Նա մի քանի անգամ խնդրեց Վեյրտտերին՝ կրկնել լավ չլսած խոսքերը և գլուղների դժվար անունները: Վեյրտտերը կատարեց նրա ցանկութունը, և Դոխտուրովը գլխի առավ դրանք:

Երբ ժամից ավելի տևող ընթերցումը վերջացավ, Լանժերոնը, նորից քթախոտի տուփը թողնելով և առանց Վեյրտտերին և առանձնապես որևէ մեկին նայելու, սկսեց խոսել այն մասին, թե որքան դժվար կլինի իրագործել մի: այսպիսի դիսպոզիցիա, ուր թշնամու դիրքը ենթադրվում է իբրև հայտնի ու որոշ, մինչդեռ այդ դիրքը կարող է մեզ հայտնի չլինել, որովհետև թշնամին շարժման մեջ է: Լանժերոնի առարկութունները հիմնավոր էին, բայց ականբեր էր, որ այդ առարկութունների նպատակը պիտավորապես այն էր, որ գեներալ Վեյրտտերին (որ ինքնավստահութեամբ, ինչպես պարտական-աշակերտների առաջ, կարողում էր իր դիսպոզիցիան) զգացնել տա, թե նա գործ չունի միայն հիմարների հետ, այլև այնպիսի մարդկանց, որոնք կարող են ուղմական գործից իրեն ևս բան սովորեցնել: Սրբ Վեյրտտերի միօրինակ ձայնը լռեց, կուտուզվին աչքը բաց արավ, ինչպես շաղաքսանը, որ արթնանում է քնաբեր շախախի դադարի միջոցին, ու ականջ դրեց Լանժերոնի խոսքերին, և կարծես ինքն իրեն ասում էր. «դուք դեռ այդ հիմար բաների մասին եք խոսում». և աչքը փակեց արագ ու գլուխն ավելի կախ գցեց:

Աշխատելով որքան կարելի է խայթիչ վիրավորանք հասցնել Վեյրտտերի ուղմական հեղինակութեան ինքնասիրութեանը, Լանժերոնն ապացուցում էր, թե Իոնապարտը, հարձակման ենթարկվելու փոխարեն, գլուղութեամբ կարող է հար-

¹ Աշխարհագրութեան դաս:

ճակվել ինքը և այդպիսով այս ամբողջ դիսպոզիցիան բոլորովին անօգուտ դարձնել: Վեյրտտերը բոլոր առարկություններին պատասխանում էր մի արհամարհոտ ժպիտով, որ հավանորեն առաջուց էր պատրաստել ամեն տեսակ առարկության համար, անկախ այն բանից, թե ինչ են ասելու:

— Եթե Բոնապարտը կարողանար հարձակվել մեզ վրա, այսօր իսկ կհարձակվեր, — ասավ նա:

— Դուք, ուրեմն, կարծում եք թե՛ նա ուժ չունի¹, — ասավ Լանժերոնը:

— Շատ է, եթե 40 000 էլ ունենա, — պատասխանեց Վեյրտտերը մի բշշիկ ժպիտով, որին բուժակը բուժելու միջոց է ցույց տալիս:

— Այդ դեպքում նա իրեն կորստի է մատնում, սպասելով մեր հարձակման, — նուրբ հեզնական ժպիտով ասավ Լանժերոնը, հավանություն ստանալու համար նորից նայելով մոտիկ նստած Միլորադովիչին:

Բայց Միլորադովիչն այդ բոպիկն, հավանորեն ամենից քիչ մտածում էր այն մասին, թե ինչի վրա են վիճում գեներալները:

— Ma foi¹, — ասավ նա, — վաղն ամեն բան կտեսնենք կովի դաշտում:

Վեյրտտերը քմծիծաղեց նորից մի ժպիտով, որ ասում էր, թե ի՞նչ համար ծիծաղելի և տարօրինակ է առարկություններ լսել ուս գեներալներից և ապացուցել մի բան, որին ոչ միայն ինքն էր խորապես հավատացած, այլև թագավոր-կայսրները:

— Թշնամին կրակները հանգցրել է, և նրա բանակից անընդհատ աղմուկ է լսվում, — ասավ նա: — Այդ ի՞նչ է նշանակում: Կամ հեռանում է, որից մենք պետք է վախենանք, կամ գիրքերն է փոխում (նա քմծիծաղ տվեց): Բայց մինչև իսկ եթե նա դիրք էլ բռնի Տյուրասում, մեզ կազատի միայն մեծ գլխացավանքից, և բոլոր կարգադրությունները ամենայն մանրամասնությամբ, կմնան նույնը:

— Ինչպե՞ս... ասավ իշխան Անդրեյը, որ վազուց արդեն առիթի էր սպասում իր կասկածները հայտնելու:

Կուտուզովն արթնացավ, ժանր հազաց² և փեներալներ նայեց:

— Պարոններ, վաղվա կամ եույնիսկ այսօրվա (որովհետև արդեն ժամը մեկն է) դիսպոզիցիան չի կարելի փոխել, — ասավ նա: — Դուք լսեցիք այն, և մենք բոլորս կկատարենք մեր պարտքը: Իսկ ճակատամարտից առաջ... (նա լսեց) լավ քննելուց ավելի կարևոր բան չկա:

Նա ցույց տվեց, թե ուզում է վեր կենալ: Գեներալները գլուխ տվին ու հեռացան: Կես զիշերից անց էր արդեն: Իշխան Անդրեյը նույնպես դուրս եկավ:

Ռազմական խորհուրդը, ուր իշխան Անդրեյը, սպասածի հակառակ շկարողացավ իր կարծիքը հայտնել, անորոշ ու տագնապալի տպավորություն թողեց նրա վրա: Ո՞վ էր իրավացի, — Դուգորուկովն ու Վեյրտտերը, թե՛ Կուտուզովը, Լանժերոնը և մյուսները, որ հավանություն չէին տալիս հարձակման ծրագրին, — չէր իմանում: «Բայց մի՞թե Կուտուզովը չէր կարող իր կարծիքն ուղղակի ասել թագավորին: Մի՞թե դա այլ կերպ չի կարող լինել: Մի՞թե պալատականների և անձնական նկատառումների պատճառով պետք է ոխկի ենթարկել տաանյակ հազարների և իմ, իմ կյանքը», մտածում էր նա:

«Այո, շատ կարելի է, վաղն սպանեն», մտածեց նա: Եվ հանկարծ, մահվան այս մտքի հետ՝ հեռավոր ու սիրելի հիշողություններ զարթնեցին նրա երևակայության մեջ. հիշեց վերջին հրաժեշտը հոր ու կնոջ հետ. հիշեց կնոջը սիրելու առաջին օրերը: Հիշեց կնոջ հղիությունը, և ափսոսաց թե՛ նրան, թե՛ իրեն, և նյարդային ու հուզված վիճակում դուրս եկավ խրճիթից, ուր ապրում էր Նեսվիցկու հետ միասին, և սկսեց հեթեթեղել տան առաջ:

Մատախապատ զիշեր էր, և մշուշի միջից խորհրդավոր կերպով իր շողերն էր արձակում լուսինը: «Այո, վաղը, վաղը, — մտածեց նա: — Վաղը, զուցե, ամեն ինչ վերջանա ինձ համար. բոլոր այս հիշողություններն այլևս չեն լինի, բոլոր այս հիշողություններն այլևս չմի փմառտ չեն ունենա ինձ համար: Իսկ վաղը, թերևս, նույնիսկ հաստատապես կարելի է ասել՝

¹ Հավատքս վկա:

վաղը, ես այդ նախագգում եմ, առաջին անգամ, վերջապես, ես պիտի ցույց տամ այն բոլորը, ինչ կարող եմ անել: Ու նրան պատկերացավ ճակատամարտը.— իրենք պարտվում են, կոնվեները կենտրոնացել են մի կետում և բոլոր հրամանատարները շփոթուած լինում են: Եվ ահա, վերջապես, ներկայանում է իրեն այն երջանիկ վայրկյանը, այն Տուլոնը, որին երկար սպասում էր արևոյես: Նա հաստատ ու պարզ իր կարծիքն է հայտնում թե՛ Կուտուզովին, թե՛ Վեյրտտերին, թե՛ կայսրին: Բոլորը զարմացած են նրա ճիշտ ենթադրութունների վրա, բայց ոչ ոք հանձն չի առնում իրագործել այն, և ահա նա վերցնում է մի գունդ, մի դիվիզիա, պայման է դնում, որ ոչ ոք չխառնվի իր կարգադրութուններին, ու իր դիվիզիան առաջնորդում է դեպի ճակատամարտի վճռական կետը և հաղթութուն է տանում մենակ:— Իսկ մա՞հն ու տանջանքները,— ասում է մի ուրիշ ձայն: Բայց իշխան Անդրեյն այդ ձայնին չի պատասխանում և շարունակում է իր հաջողութունները: Հետևյալ ճակատամարտի դիսպոզիցիան մենակ ինքն է կարգադրում: Նա կրում է բանակի օրապահի կոչումը, բայց ամեն ինչ մենակ է անում: Հետևյալ ճակատամարտը շահում է դարձյալ մենակ: Կուտուզովին փոխում են, և նշանակվում է ինքը... է, իսկ հետո՞,— ասում է նորից մյուս ձայնը,— իսկ հետո, եթե դրանից առաջ տասն անգամ շփրավորվես, ըստ պանվես կամ շխարվես. է, իսկ հետո ի՞նչ:— «է, իսկ հետո,— պատասխանում է իշխան Անդրեյն ինքն իրեն,— չգիտեմ ինչ կլինի, չեմ ուզում և չեմ կարող իմանալ. բայց եթե ա՛յդ եմ ուզում, փառք եմ ցանկանում, ուզում եմ հռչակվել, սիրելի դառնալ մարդկանց. բայց չէ որ ես մեղավոր չեմ, որ ա՛յդ եմ ցանկանում, որ միայն այդ եմ ցանկանում, միայն դրա համար եմ ապրում: Այո՛, միայն դրա համար: Ես երբեք ոչ ոքի չեմ ասի այդ, բայց, աստված իմ, ապա ինչ անեմ, եթե ոչինչ չեմ սիրում, բայց եթե միայն՝ փառք և սերը մարդկանց: Մահ, վերքեր, ընտանիքի կորուստ — այդ բոլորը սարսափելի չեն ինձ համար: Եվ որքան էլ թանկ ու սիրելի են ինձ շատ մարդիկ — հայր, քույր, կին.— իմ ամենասիրելի մարդիկ,— բայց որքան և սարսափելի ու անքնական է թվում այդ, ես նրանց բոլորին կտամ փառքի մի վայրկյանի համար, մարդկանց վրա իշխելու, մարդկանց սերը վայելելու համար, մարդիկ,

որոնց ես չեմ ճանաչում և չեմ ճանաչելու, ահա այդ մարդկանց սերը վայելելու համար», մտածեց նա, ականջ դնելով Կուտուզովի բակից լսվող խոսակցութեան: Կուտուզովի բակից լսվում էր ճանապարհի պատրաստութուն տեսնող սպաշակների ձայնը: Կառապանը, Կուտուզովի ծեր խոհարարին ծաղրելով՝ ասում էր. «Տիտ, ա՛յ Տիտ»:

— Հը, — պատասխանեց ծերունին:

— Տիտ, գնա՛ բանիդ, — ասում էր հանաքչի կառապանը:

— Թո՛ւ, գրողը տանի քեզ, — պատասխանեց Տիտը, ըստ պասյակների և ծառաների ծիծաղի տակ:

«Բայց և այնպես ես սիրում եմ և բարձր եմ գնահատում նրանց բոլորին իշխելը, բարձր եմ գնահատում այդ խորհրդավոր ուժն ու փառքը, որ հենց այստեղ, այս մշուշի մեջ, սավառնում է իմ գլխավերևը»:

XIII

Ռոստովն այդ գիշեր իր դասակով հեծյալ կողմնախույզների շղթայումն էր, Բագրատիոնի զորաբաժնի առջևում: Նրա հուսարները զույգ-զույգ ցրված էին այդ շղթայի մեջ. ինքը ձի նստած անցնում էր շղթայի երկարութեամբ, աշխատելով հաղթահարել քունը, որ անդիմադրելի կերպով իջնում էր նրա վրա: Նրա ետևը երևում էին՝ մեր բանակի ահագին տարածութեան վրա՝ մշուշի մեջ աղոտ կերպով վառվող խարույկները. առջևը բռնել էր մշուշապատ խավարը: Որքան էլ Ռոստովը տեսողութունը լարում էր այդ մշուշոտ խավարի մեջ մի բան տեսնելու, — ոչինչ չէր տեսնում. մերթ գորշանում, մերթ սևին էր տալիս ինչ-որ մի բան. մերթ կարծես կրակներ էին երևում այնտեղ, ուր պետք է թշնամին լիներ. մեկ էլ կարծում էր, թե միայն իր աչքերն են առկայծում այդպես: Աչքերը փակվում էին, և երևակայութեան մեջ պատկերանում էր մերթ թագավորը, մերթ Դենիսովը, մերթ Մոսկվայի հիշողութունները, և նա աչքերը հապճեպ բանում էր նորից ու առջևը տեսնում էր ձիու գլուխն ու ականջները, երբեմն՝ հուսարների սև կերպարանքը, երբ վեց քայլի վրա մտեցած էր լինում նրանց, իսկ հեռվում միշտ նույն մշուշապատ խավարը: «Ինչո՞ւ չէ. շատ կարելի է, — մտածում էր Ռոստովը,—

որ թագավորն, ինձ հանդիպելով, հանձնարարութիւն անէ, ինչպէս և ամեն մի սպայի, թե՛ «Գնա, իմացիր ինչ կա այնտեղ»։ Շատ են պատմում չէ՞, թե ինչպէս պատահաբար ճանաչել է այսպէս մի ինչ-որ սպայի և մոտեցրել իրեն։ Հանկարծ, եթե ինձ էլ մոտեցնի՞ իրեն։ Օ՛, ինչպե՞ս կպահպանեի նրան, ինչպե՞ս ամբողջ ճշմարտութիւնը կասեի նրան, ինչպե՞ս կմերկացնեի նրան խաբողներին», և Ռոստովը, որպեսզի ավելի կենդանի պատկերացնի իր սերն ու նվիրվածութիւնը թագավորին, երևակայում էր մի թշնամի կամ խաբերա գերմանացի, որին հաճուցող ոչ միայն սպանում էր, այլև ասպտակներ էր հասցնում թագավորի աչքի առաջ։ Հանկարծ հեռվից եկող մի աղաղակ սթափեցրեց Ռոստովին։ Նա ցնցվեց և աչքերը բաց արավ։

«Ռոստով էմ։ Այո, շղթայում. լողունգը և պարոլը — առեղ, Օլմյուց։ Ափսո՛ս, որ մեր հեծիւաշտը վաղը պահեստի է... — մտածեց նա։ — Կիսնդրեմ, որ թույլ տան կովին մասնակցեմ։ Սա, թերևս, միակ առիթն է թագավորին տեսնելու։ Այո, այժմ քիչ է մնացել մինչև հերթափոխութիւնը։ Կանցնեմ մի անգամ էլ և, վերադարձա թե չէ, կերթամ գնեցրալի մոտ ու կխնդրեմ»։ Նա թամբի վրա ուղղվեց ու ձին շարժեց, որպեսզի մի անգամ ևս անցնի ու դիտի իր հուսարներին։ Նրան թվաց, թե լուսանում է։ Չախ կողմը երևում էր մի լուսավորված գառիվայր և դիմացի սև բլուրը, որ պատի պես ուղղահայաց էր թվում։ Բլրի վրա մի սպիտակ բիծ կար, որ Ռոստովը չէր հասկանում՝ լուսնի լուսով լուսավորված բացա՞տ է անտառում, թե՞ մնացած ձյուն, թե՞ սպիտակ տներ։ Նրան թվաց նույնիսկ, թե այդ սպիտակի վրա ինչ-որ բան շարժվեց. «Այդ սպիտակը, երևի, ձյուն է, բիծ է — une tache», — մտածեց Ռոստովը։ Ահա քեզ և... Նե տաշ...»

«Նատաշան, քույրս, սև աչքերը։ Նա... տաշկա։ (Այ կզարմանա հա՛, երբ նրան ասեմ ինչպէս եմ թագավորին տեսել)։ Նատաշկին... տաշկին վերցրու... — «Դեպի աչ գնացեք, ձեր գազնվութիւն, այս կողմը թփեր են», ասավ մի հուսար, որի կողքով, քունը գլխին, անցնում էր Ռոստովը։ Նա բարձրացրեց գլուխը, որ կուսեց էր համարյա մինչև ձիու բաշը և ձին կանգնեցրեց հուսարի կողքին։ Մանկական անհաղթահարելի քունը սաստիկ տանում էր։ «Հա, ի՞նչ էի մտածում — շմոռա-

նամ։ Թագավորի հետ ինչպե՞ս պիտի խոսեմ։ Չէ, այդ չէ — դա վաղն է։ Այո, այո։ Նատաշկին, կղա... ո՞ւմ։ — Հուսարներին։ Իսկ հուսարները... Տվերսկոյ փողոցով անցնում էր այդ բեղերով հուսարը, Գուրեի տան դիմաց... Մերուսի Գուրե... է, սքանչելի՞ տղա է Գենիսովը։ Բայց այդ բլուրը դատարկ բան է։ Հիմա գլխավորն այն է, որ թագավորն այստեղ է։ Ի՞նչպէս նայեց վրաս, արդո՞ք ուզում էր մի բան ասել և չհամարձակվեց... Ոչ, այդ ես չհամա րձակվեցի։ Այ՛ դատարկ բան է, գլխավորը — շմոռանամ, որ հարկավորը մտածել եմ, այո։ Նատաշկին... այո, այո, այո։ Այդ լավ է»։ — Եվ նրա գլուխը նորից կախ ընկավ մինչև ձիու վիզը։ Հանկարծ նրան թվաց թե կրակում են իր վրա։ «Ի՞նչ։ Ի՞նչ։ Ի՞նչ... Կոտորի՞ր։ Ի՞նչ...», ասավ Ռոստովն, արթնանալով։ Այն վայրկյանին, երբ աչքերը բացեց, Ռոստովն իր առջևից, այնտեղից, ուր թշնամին էր, լսեց հազարավեր ձայների աղաղակներ։ Նրա և հուսարի ձիերը, որ կանգնած էին իրար կողքի, ալանջները խլշեցին այդ ձայների վրա։ Այնտեղ, որտեղից աղաղակներ լավեցին, մի կրակ վառվեց ու հանգավ, հետո մի ուրիշը, ասպ ֆրանսական զորքերի շղթայովը մեկ, սարի վրա կրակներ վառվեցին, և աղաղակներն ավելի սաստկացան։ Ռոստովը ֆրանսերեն խոսակցութիւն լսեց, բայց չկարողացավ բռնորդ ջոկել։ Աղմկող ձայները շահագանց շատ էին։ Լսվում է միայն՝ ա՛աա՛ և ր՛ ոոոո։

— Ի՞նչ բան է սա։ Ի՞նչ ես կարծում, — դարձավ Ռոստովը կողքին կանգնած հուսարին։ — Ձայները թշնամու կողմից են գալիս, չէ՞։

Հուսարը ոչինչ չպատասխանեց։

— Հը, մի՞թե դու չես լսում, — բավական երկար պատասխանի սպասելով, նորից հարցրեց Ռոստովը։

— Ո՞վ ա իմանում, ձեր գազնվութիւն, — դժկամ պատասխանեց հուսարը։

— Տեղին նայած՝ թշնամին պիտի լինի, — նորից կրկնեց Ռոստովը։

— Եարե՞լ ա նա ա, կարելի ա հենց էնպէս, — ասավ հուսարը, — գի՞շտե՞՞ք բան ա, ինչ իմանաս։ Դե՛, հանգի՛ստ, — պոռաց նա ձիու վրա, որ շարունակ շարժվում էր տակին։

Ռոստովի ձին նույնպես շտապում էր, ոտը խփում էր սառած գետնին, ձայներին սկանչ դնելով ու կրակներին նայելով։ Աղաղակները հետզհետե սաստկանում էին և դառնում-ձուլվում մի ընդհանուր որոտ, որ կարող էր առաջ բերել միայն մի բանի հազարանոց բանակը։ Կրակներն ավելի ու ավելի տարածվում էին, հավանորեն, ֆրանսական բանակատեղի գծով։ Ռոստովի քույր փախավ։ Թշնամու բանակի ուրախ, հաղթական կանչերը գրգռիչ ներգործություն ունեցան նրա վրա։ Vive l'empereur, l'empereur!,¹ հիմա արդեն որոշ լսում էր Ռոստովը։

— Հեռու չեն. երևի, գետակի այն կողմը, հը՞, — ասավ նա կողքին կանգնած հուսարին։

Հուսարը, ոչինչ չպատասխանելով, հոգոց քաշեց ու հազաց բարկացած։ Հուսարների շղթայի կողմից ձիու ոտնատրոփ լավեց, և գիշերային մառախուղի միջից հանկարծ, ահագին փղի նման, երևաց հուսարական ենթասպայի կերպարանքը։

— Ձերդ ազնվություն, գեներալնե՛րը, — ասավ ենթասպան, Ռոստովին մոտենալով։

Ռոստովը, շարունակելով նայել կրակներին ու կանչերին, ենթասպայի հետ եկող ձիավորներին ընդառաջ գնաց։ Մեկն սպիտակ ձիով էր։ Իշխան Բագրատիոնը՝ Դուգորուկովի և աղյուտանտների հետ եկել էին նայելու թշնամու բանակում տեղի ունեցող տարօրինակ երևույթին — կրակներին ու աղաղակներին։ Ռոստովը, Բագրատիոնին մոտենալով, զեկուցում տվեց ու խառնվեց աղյուտանտներին, ականջ դնելով, թե ի՞նչ են ասում գեներալները։

— Հավատացե՛ք, — ասում էր իշխան Դուգորուկովը, դիմելով Բագրատիոնին, — դա ոչ այլ ինչ է, բայց եթե խորամանկություն. ինքը նահանջել է և արիերգարդին հրամայել՝ կրակներ վառել ու աղմուկ բարձրացնել, որ մեզ խաբի։

— Հազիվ թե, — ասավ Բագրատիոնը, — երեկոյան ես ներանց տեսել եմ բլրի վրա. եթե նահանջել են, այնտեղից էլ պետք է քաշված լինեն։ Պարոն սպա, — դարձավ իշխան Բագրատիոնը Ռոստովին, — նրա հեծյալ կողմնախույզները դեռ այնտե՛ղ են։

— Երեկոյան այնտեղ էին, հիմա շփտեմ, ձերդ պայծառափայլություն։ Կհրամայե՛ք, հուսարներս հետ կերթամ, — ասավ Ռոստովը։

Բագրատիոնը ձին կանգնեցրեց և, առանց պատասխանելու, աշխատեց մշուշի միջից դիտել Ռոստովի դեմքը։

— Լավ, գնացե՛ք տեսե՛ք, — ասավ նա, փոքր-ինչ լռելուց հետո։

— Լսում եմ։

Ռոստովը խթանեց ձիուն, կանչեց ենթասպա Ֆեդչենկոյին ու մի երկու հուսարի, հրամայեց հետևել իրեն և ձին քշեց սարն ի վար՝ շարունակվող աղաղակների կողմը։ Ռոստովը և սարսափ էր զգում և ուրախ էր, որ մենակ, երեք հուսարի հետ գնում է այնտեղ, այդ խորհրդավոր ու վտանգավոր մշուշոտ հեռուն, ուր իրենից առաջ ոչ ոք չի եղել։ Բագրատիոնը սարի գլխից ձայն տվեց, որ նա գետակից դենը ղնա, բայց Ռոստովը այնպես ձևացրեց, իբր թե նրա խոսքերը չլսեց, և առանց կանգ առնելու ձին շարունակ առաջ էր քշում, շարունակ խաբվելով՝ ծառերը, թփերը և փոսերն ու խանդակները մարդկանց տեղ ընդունելով և անդադար բացատրություն տալով իր պատրանքներին. լեռան ստորոտն իջնելով, նա այլևս չէր տեսնում ոչ մերոնց, ոչ թշնամու կրակները, բայց ավելի բարձր ու որոշ էր լսում ֆրանսացիների աղաղակները։ Ձորակում իր առջև էր լսում ֆրանսացիների աղաղակները։ Գորակում իր առջև գետի նման մի բան նշմարեց, բայց երբ մոտեցավ՝ տեսավ ճանապարհ էլ չձամփի վրա ոտ դնելով՝ ձին կանգնեցրեց, ինչ անելը չիմանալով. — գնա՞ր ճանապարհով՝ թե՞ կտրեր անցներ այն ու սև դաշտով սարը բարձրանար։ Մշուշի մեջ սպիտակին տվող ճանապարհով գնալը անվտանգ էր, որովհետև մարդկանց ավելի շուտ կարելի էր ջոկել։ «Ճտևիցս եկեք», ասավ նա, անցավ ճանապարհի մյուս կողմը և սկսեց քառաքաշով բարձրանալ սարը, այն տեղը, ուր իրիկվանից կանգնած էր ֆրանսական պահակախումբը։

— Ձերդ ազնվություն, հրե՛ն, — ասավ հուսարներից մեկն իր ետևից։

Ով Ռոստովը դեռ չէր կարողացել նայել հանկարծ մշուշի մեջ սևին տվող բանին, երբ մեկեն կրակ փայլատակեց, հրապեն ճայթեց, և գնդակը, կարծես ինչ-որ բանից գունատվելով վրգ-դաց բարձր մշուշի մեջ և ապա անլսելի դարձավ, կորավ։

¹ Կեցցե կայսրը, կայսրը։

Երկրորդ հրացանը չկրակեց, բայց խանձոցի վրա կրակ փայլատակեց: Ռոստովը ձիու գլուխը շուռ տվեց ու քառատրոփ ետ վերադարձավ: Չորս կրակոց էլ լավեց ընդհատումներով և զբոսողակները տարբեր ձայններով երգեցին մշուշում: Ռոստովը՝ իր նման, կրակոցներից ուրախացած ձիու սանձը ձգեց ու քայլով առաջ գնաց: «Հապա էի՛, էի՛», ասում էր նրա սրտում մի ինչ-որ ուրախ ձայն: Բայց այլևս կրակոցներ չեղան:

Միայն Բագրատիոնին մոտենալիս Ռոստովը նորից բաց թողեց ձիու գլուխը և, ձեռը քունքի մոտ բռնած, մոտեցավ նրան:

Դուզբորուկովը շարունակում էր պնդել, թե Ֆրանսացիները նահանջել են և այդ կրակներն արել են մեզ խաբելու համար միայն:

— Դա ի՞նչ է ապացուցում, — ասում էր նա այն ժամանակ, երբ Ռոստովը մոտեցավ նրան: — Նրանք կարող էին նահանջել և պահակախմբեր թողնել:

— Ինչպես երևում է, բոլորը դեռ չեն հեռացել, իշխան, — ասավ Բագրատիոնը: — Առավոտն ամեն բան կիմանանք:

— Ձերդ պայծառափայլություն, պահակախումբը դեռ սարի վրա է, իրիկվա տեղը, — զհիուցեց Ռոստովը՝ առաջ թեքված, ձեռը քունքին բռնած, չկարողանալով զսպել ուրախության ժպիտը, որ ինքը գնացել թշնամու պահակախմբին էլ հասել և մանավանդ գնդակների ձայն էր լսել:

— Լավ, լավ, — ասավ Բագրատիոնը, — շնորհակալ եմ, պարոն սպա:

— Ձերդ պայծառափայլություն, — ասավ Ռոստովը, — թույլ տվեք խնդրել...

— Ի՞նչ կա:

— Վաղը մեր հեծվաշտը մնում է պահեստի. խնդրում եմ ուղարկեք ինձ 1-ին հեծվաշտը:

— Ինչպե՞ս է ձեր ազգանունը:

— Կոմս Ռոստով:

— Ա, լավ: Մնացեք ինձ մոտ պատվիրակ:

— Իլյա Անդրեիչի որդի՞ն ես, — ասավ Դուզբորուկովը:

Բայց Ռոստովը նրան չպատասխանեց:

— Ուրեմն հույս ունենամ, ձերդ պայծառափայլություն:

— Ծն կհրամայեմ:

«Շատ կարելի է հենց վաղը մի հանձնարարություն ուղարկեն ինձ թագավորի մոտ, — մտածեց նա: — Փառք աստծոն»:

Թշնամու բանակի կրակներն ու աղաղակները հետևանք էին այն բանի, որ այն ժամանակ, երբ զորքին կարողում էին Նապոլեոնի հրամանը, ինքը Նապոլեոնը ձի նստած անցնում-դիտում էր իր բացօթյակները: Զինվորները, կայսր տեսնելով՝ ժողտի փնջեր էին վառում և «Vive l'empereur!»՝ աղաղակներով վազում ետևից: Նապոլեոնի հրամանը հետևյալն էր.

«Զինվորներ՛ր: Ռուս բանակը գալիս է մեզ վրա՝ ավտորիական, Ուլմի բանակի վրեժն առնելու: Դրանք նույն գումարտակներն են, որոնց դուք ջարդեցիք Հոլաբրունի մոտ և հետապնդեցիք շարունակ՝ մինչև այստեղ: Մեր գրաված դիրքերը — շատ ամուր են, և մինչև թշնամին կփորձի անցնել իմ թիկունքն աչից, նա իր թևը ցույց կտա մեզ: Զինվորներ՛ր, ես ինքս պիտի ղեկավարեմ ձեր գումարտակները: Ես կրակից հեռու կմնամ, եթե դուք, ձեր սովորական քաջությամբ, անկարգություն ու շփոթություն մտցնեք թշնամու շարքերը. բայց եթե հաղթությունը գեթ մի րոպե կասկածելի դառնա, դուք ձեր կայսեր կտեսնեք թշնամու առաջին հարվածների տակ, որովհետև տարակուսանք չի կարող լինել հաղթության նկատմամբ, մանավանդ այն օրը, երբ խոսքը վերաբերում է Ֆրանսական հետևակի պատվին, որ այնքան անհրաժեշտ է իր ազգի պատվի համար:

Վիրավորներ տանելու պատրվակով շարքերը չբայցայնել: Ձեզնից յուրաքանչյուրը թող տողորվի այն մտքով, թե պետք է հաղթի Անգլիայի վարձկաններին, որ այնպես բուռն ատելություն ունեն մեր ազգի դեմ: Այս հաղթությամբ կվերջացնենք մեր արշավանքը, և կարող ենք վերադառնալ մեր ձմեռոցները, ուր կզան միանալու մեզ Ֆրանսական նոր զորամասեր, որ այժմ կազմակերպվում են Յրանսայում. և այն ժամանակ իմ էնքած հաշտությունը արժանի կլինի իմ ժողովրդին, ձեզ և ինձ:

Նապոլեոն»:

¹ Կեցցե կայսրը:

Առավոտյան ժամը հինգին դեռ բոլորովին մուխն էր: Կենտրոնի զորքերը, պահեստայինները և Բագրատիոնի աջ զորաթևը դեռ անշարժ էին. բայց ձախ թևում հետևակի, հեծելազորի և հրետանու զորասյունները, — որ առաջին հերթին իրենք պիտի իջնեին բարձունքներից՝ Ֆրանսական աջ թևի վրա հարձակվելու և նրան, ըստ դիսպոզիցիայի, Բոհեմյան լեռները շարժողով, — արդեն զարթնել, շարժման մեջ էին: Խարույկների (որոնց մեջ նետում էին բոլոր ավելորդ բաները) ծուխը աչք էր կուրացնում: Յուրտ էր և մուխ: Սպաները շտապ թեյում էին և նախաճաշում, զինվորները պարսիմաթ էին ծամծամում և, տաքանալու համար, ոտերնին խփում էին գետին, հավաքվում էին խարույկների առաջ և նրանց մեջ նետում հոլիկի մնացորդները, աթոռներ, սեղաններ, անիվներ, տակառիկներ, բոլոր ավելորդ բաները, ինչ չէին կարող հետները վերցնել-տանել: Ավստրիացի ձիավորները շրջում էին ոռու զորքի մեջ, որպես կովի դուրս գալու նախակարապետներ: Հենց որ ավստրիական սպան երևում էր գնդի հրամանատարի կայանի մոտ, գունդն սկսում էր շարժվել, զինվորները վազում գալիս էին խարույկների մոտից, ծխամորճները թաքցնում էին կոշիկների ճաքերում, տոպրակները դնում էին սայլերի վրա, և հրացանները վերցնելով՝ սկսում էին շարքեր կազմել: Սպաները կոճկվում էին, թրերն ու պայուսակները գցում ուսները և, անցնում շարքերի առջևից: Գումակի զինվորներն ու սպասյակները սայլերը բարձում էին, կապկպում և լծում: Ադյուտանտները, գումարտակների և գնդերի հրամանատարները ձի էին նստում, երեսները խաշակնքում և վերջին հրամանները, ցուցմունքներն ու հանձնարարությունները տալիս մնացող գումակավարներին, և լսվում էր հազարավոր ոտների միօրինակ դոփշունը: Զորասյունները շարժվում էին՝ չիմանալով ուր, և իրենց շրջապատող մարդկանց, ծխի ու խտացող մառախուղի պատճառով չէին կարողանում տեսնել ոչ այն տեղը, որից հեռանում էին, ոչ էլ այն, ուր ոտք էին դնում:

Շարժման մեջ գտնվող զինվորը նույնքան շրջապատված, սահմանափակված է ու տարվում է իր գնդով, որքան նավի վրա գտնվող նավագր: Որքան էլ հեռունիքը գնա նա, որքան էլ

խորթ, անհայտ ու վտանգավոր տարածություններ մտնի, նրա շուրջը — ինչպես նավագրի համար միշտ և ամենուրեք իր նավի նույն տախտակամածներն են, նույն կայմերը, նույն ճոպանները, — միշտ և ամենուրեք նույն ընկերներն են, նույն շարքերը, նույն վերակա Իվան Միտրիչը, վաշտային նույն Ժուլյակ շունը, նույն հրամանատարությունը: Զինվորը հազվադեպ է ցանկանում իմանալ-ճանաչել այն տարածությունը, ուր գտնվում է իր նավը, բայց ճակատամարտի օրը, աստված գիտի թե ինչպես և որտեղից, զորքի բարոյական աշխարհում լսվում է բոլորի համար մի ներքին ահեղ ձայն, որը հնչեցնում է ինչ-որ մի վճռական ու հաղթական բանի մոտեցումը և արտակարգ հետաքրքրություն է առաջանում նրանց մեջ: Ճակատամարտի օրերին խողահույզ զինվորներն աշխատում են դուրս գալ իրենց գնդի շահերի շրջանակից, ականջ են դնում, դիտում և ազահորեն հարցուփորձում, թե ինչ է կատարվում իրենց շուրջը:

Մառախուղն այնպես խտացավ, որ չնայած լուսանում էր, բայց տասը քայլի վրա բան չէր երևում: Թփերը թվում էին վիթխարի ծառեր, հարթ տեղերը — փոսեր ու զառիվայրներ: Ամենուրեք և ամեն կողմ տասը քայլի վրա անտեսանելի թըշնամուն հանդիպելու վտանգը կար: Բայց զորասյունները երկար գնում էին միշտ նույն մառախուղի միջով, սարերից իջնելով ու սարերը բարձրանալով, այգիների ու ցանկասպտերի մոտով անցնելով, նոր, անծանոթ տեղերով, առանց թշնամուն հանդիպելու: Դրան հակառակ, մեր զինվորները տեսնում, իմանում էին, որ թե ետևից, թե առջևից, թե ամեն կողմից նույն ուղղությունը գնում են մեր ոռու զորասյունները: Յուրաքանչյուր զինվորի հոգին հրճվում էր, երբ իմանում էր, թե այնտեղ, այն անհայտ կողմը, ուր ինքն է գնում, գնում են և մերոնցից շատ-շատերը:

— Տե՛ս, Կուրսկի գնդի զինվորներն էլ անցան, — խոսում էին շարքերում:

— Չտեսնված բան ա, ախպեր ջան, էնքան զորք ա հավաքվել: Իրիկունը, կրակ վառելու ժամանակ, որ մտիկ արի՛ծերը չէր երևում: Մի խոսքով — Մոսկվա է:

Թեև զորասյունների պետերից ոչ ոք չէր մոտենում շարքերին և չէր խոսում զինվորների հետ (զորապետները, ինչպես

տեսանք ուղղական խորհրդում, լավ տրամադրություն մեջ չէին և դժգոհ էին ձեռնարկելով կովից, ուստի և հրամաններ էին կատարում միայն և հոգ չէին տանում դինվորների տրամադրությունը բարձրացնելու մասին), այնուամենայնիվ զինվորները բայում էին ուրախ-զվարթ, ինչպես միշտ, կովի գնալիս, մանավանդ հարձակողական կովի: Բայց մի ժամի շփթանձր մտախուղի մեջ առաջ գնալով, զորքի մեծ մասն ստիպված էր կանգ առնել, և շարքերին համակեց կատարվող անկարգության տեսուր գիտակցությունը: Ինչպես է այդ գիտակցությունը անցնում-համակում մարդկանց, — շատ դժվար է որոշել. բայց անկասկած է, որ դա փոխանցվում է անսովոր կերպով — տարածվում է արագ, աննկատելի ու անարդել, ինչպես ջուրը ձորակում: Եթե ոուս զորքը լիներ մենակ, առանց դաշնակիցների, այդ դեպքում, գուցե, դեռ շատ ժամանակ անցներ մինչև որ անկարգության այդ գիտակցությունը դառնար ընդհանուր համոզում. բայց այժմ, առանձին գոհունակությամբ ու բնական զգացումով անկարգության պատճառը վերադրելով անհասկացող գերմանացիներին. բոլորը համոզվեցին, որ վնասակար շիտթ է տեղի ունենում, մի շիտթ, որ առաջացրել էին երշիկամոլները:

— Ինչո՞ւ ենք կանգնել: Առաջնիս կտրե՞լ են: Թե ֆրանցուզին ենք հանդիպել:

— Չէ, էդպես բան չի երևում: Նա լինել — կկրակեր:

— Սրա համար էին շտապեցնում, թե ճամփա ընկեր. հիմի էլ ճամփա ենք ընկել, բերել են հանդի միջին կանգնեցրել անտեղի, — բոլորն էդ անիծած գերմանացիներն են սրխալեցնում: Ի՞նչ անհասկացող մարդիկ են:

— Դրա համար էլ նրանց առաջ կրքեի: Թե չէ, ով գիտի, ետևում կուչ են գալիս: Դե հիմի արի ու անթի կանգնել:

— Հը, շուտ առաջ կերթա՞ն: Հեծելազորն, ասում են, ճանապարհը կտրել է, — ասում էր մի սպա:

— Էհ, անիծյալ գերմանացիներ, իրենց երկիրն էլ չեն ճանաչում, — ասում էր մի ուրիշը:

— Դուք ո՞ր գիվիլիայից եք, — մոտենալով պոռաց մի աղյուտանտ:

— Տասնութերորդ:

— Հապա ինչո՞ւ եք այստեղ. դուք վաղուց պետք է առաջ գնացած լինեիք, հիմա մինչև երեկ: տեղ չեք հասնի:

— Ա՛յ բեզ հիմար կարգադրություն. իրենք էլ չգիտեն ինչ են ասում, — ասում էր սպան ու ձին քշում հեռանում:

Հետո ձիով անցնում էր մի գեներալ բարկացած և օտար լեզվով ինչ-որ գոռոռում:

— Տաֆա լաֆա, թե ինչ ա փնթփնթում, բան չես ջոկում, — ասում էր մի զինվոր, հեռացող գեներալին տնազելով: — Գնդակահար կանեի ես էդ սրիկաներին:

— Հրամայված է, որ ժամը իննին տեղ հասած լինենք, բայց ճամփի կեսն էլ չենք անցել: Ա՛յ քեզ կարգադրություն, — կրկնում էին ամեն կողմից:

Եվ եռանդի այն զգացումը, որով զորքերը ճամփա ընկան կովի գնալու, սկսեց տեղի տալ դժգոհության ու զայրույթի՝ անմիտ կարգադրությունների ու գերմանացիների դեմ:

Այս խառնաշփոթության պատճառն այն էր, որ երբ ավստրիական հեծելազորը ձախ թևում առաջ էր շարժվում, բարձր հրամանատարությունը գտավ, որ ոուսական կենտրոնը աջ թևից անշփ հեռացել է և ամբողջ հեծելազորին հրամայեց աջակողմն անցնել: Մի քանի հազար զինվորներ էին անցնում հետևակի առջևից, և հետևակն ստիպված էր սպասել:

Առջևում մի ընդհարում տեղի ունեցավ ավստրիական զորասյունի առաջնորդի և ոուս գեներալի միջև: Ռուս գեներալը պոռում էր, պահանջելով, որ հեծելազորը կանգ առնի. ավստրիացին ապացուցում էր, որ մեղավորն ինքը չէ, այլ բարձր հրամանատարությունը: Մինչ այդ՝ զորքը մնացել էր կանգնած, ձանձրացած ու հոգեպես ընկճված: Մի ժամաշփ կանգ առնելուց հետո, վերջապես, զորքերը շարժվեցին առաջ և սկսեցին ինչնել սաբի ստորոտը: Մառախուղը, որ ցրվել էր սարի վրա, ավելի խտացել էր ներքևում, այնտեղ, ուր իջնում էին զորքերը: Առջևում, մառախուղի մեջ լսվեց մի երկու կրակոց, նախ անհավասար, տարբեր ընդմիջումներով — ճրթ-ճրթ... ճրթ, — ապա ավելի կանոնավոր ու ավելի հաճախ, և կռիվը ծայր առավ Հուլբախ գետի շուրջը:

Չսպասելով, թե ներքևում, գետի մոտ կհանդիպեն թշնամուն և հանկազո՞ մառախուղի մեջ նրան հանդիպելով՝ ոուս զորքը, ոգևորության խոսք չլսելով բարձրագույն պետերից ե,

որ գլխավորն է, թանձր մտախառնի մեջ իր առջևն ու շուրջը ուշիւն շտեմանելով, ծուլորեն ու դանդաղ կրակում էր, առաջ գնում և նորից կանգ առնում, ժամանակին հրամաններ շտապանալով պետերից ու աղյուտանտներից, որոնք, իրենց ղորամասերը ղտնելով, խարխափում էին անծանոթ տեղում, մառախուղի մեջ: Ներքև իջած առաջին, երկրորդ և երրորդ զորասյունների համար կռիվն այսպես սկսվեց: Չորրորդ զորասյունը, որի հետ էր ինքը կուտուղովը, գտնվում էր Պրացի բարձունքների վրա:

Ստորոտներում, ուր կռիվն սկսվել էր, դեռ թանձր մառախուղ էր, վերքը պարզել էր, բայց դեռ ուշիւն չէր երևում, թե ինչ է կատարվում առջևում: Արդյոք թշնամու բուրբուլները, ինչպես մենք էինք ենթադրում, տասը վերստ հեռու էին մեզնից, թե՞ այստեղ էին, մառախուղի այս շրջանումն, — մինչև ժամը իննը ոչ ոք չգիտեր:

Առավոտյան ժամը 9-ն էր: Մառախուղը համատարած ծովի պես բռնել էր սարի ստորոտը, բայց Շլապանից գլուղի մոտ՝ բարձունքի վրա, ուր գտնվում էր Նապոլեոնն՝ իր մարշալներով շրջապատված, բոլորովին պարզ էր: Նրա գլխավերև ծավալվում էր պայծառ կապույտ երկինքը, և արևի հագին գունդը, վիթխարի դատարկ կարմիր լողանի նման, օրորվում էր մառախուղի կաթնագույն ծովի երեսին: Ոչ միայն ֆրանսական ամբողջ զորքը, այլև ինքը Նապոլեոնն իր շտաբով գտնվում էին ոչ թե գետակի և Սոկոլնից և Շլապանից գլուղերի այն կողմը (որոնց ետև մենք մտադիր էինք դիրք բռնել ու կռիվ սկսել), այլ այս կողմը, մեր զորքերին այնքան մոտիկ, որ Նապոլեոնը հասարակ աչքով կարող էր մեր չորքերի մեջ հեծվորը տարբերել հետևակից: Նապոլեոնը կանգնած էր իր մարշալներից փոքր-ինչ առաջ՝ իր փոքրիկ արաբական մոխրագույն ձին նստած, կապույտ շինելը հագին, այն շինելը, որով կատարել էր իտալական արշավանքը: Նա նայում էր մառախուղի ծովից դուրս եկող բլուրներին, որոնց վրա հեռվում շարժվում էին ոռու զորքերը, ու ականջ էր դնում ձորակից լսվող հրացանաձգության: Այդ ժամանակ նրա տակավին նիհար դեմքի և ոչ մի մկանը չէր շարժվում. փայլուն աչքերը անշարժ սեեեել էր մի կետի: Նրա ենթադրությունները ճշտվեցին: Ռուս զորքերը մասամբ արգեն իջել էին ձորը՝ լճակների ու լճերի մոտերքը,

մասամբ ազատել էին Պրացի այն բարձունքները, որոնց վրա մտադիր էր հարձակվել և որոնք իր դիրքի բանալին էր համարում: Նա մառախուղի մեջ տեսավ, թե ինչպես Պրաց գլուղի մոտ, երկու սարի արանքով, միևնույն ուղղութամբ, սվինները փայլեցնելով, դեպի ձորն էին գնում ոռու զորասյունները և մեկը մյուսի ետևից անբեռնութանում մառախուղի ծովում: Իրիկունն ստացած տեղեկություններից, գիշերը առաջավոր պահակակետներից լսվող անիվների ու քայլերի ձայներից, ոռուական զորքերի անկարգ առաջխաղացումից նա պարզ տեսնում էր, որ դաշնակիցներն իրեն շատ հեռու են կարծել, իրենցից շատ առաջ, որ Պրացի մոտ շարժվող զորասյունները ոռուական բանակի կենտրոնն են կազմում, և որ կենտրոնը բավականաչափ թուլացած է, և ինքը կարող է հաջող հարձակում գործել: Բայց դեռ չէր սկսում:

Այսօր հանդիսավոր օր էր նրա համար — նրա թագադրության տարեդարձն էր: Առավոտյան դեմ քնեց մի քանի ժամ և արթնացավ առողջ, զվարթ, թաղամ, մի այնպիսի լավ տրամադրության մեջ, երբ ամեն ինչ հնարավոր է թվում և ամեն բան հաջողվում է, ձի նստեց ու դուրս եկավ դաշտը: Նա անշարժ կանգնել ու նայում էր մշուշի միջից երևացող լեռնագագաթները, և նրա սառը դեմքի վրա կար աներկբա երջանկության մի արտահայտություն, որ ունենում է սիրահարը և բախտավոր տղան: Մարշալները կանգնել էին նրա ետևը, չէին համարձակվում ցրել նրա ուշադրությունը: Նա նայում էր մերթ Պրացի բարձունքներին, մերթ մառախուղից դուրս եկող արևին:

Նրա արևը բոլորովին դուրս եկավ մշուշից և իր կուրացուցիչ շողերը ցրեց դաշտի ու մառախուղի վրա (Նապոլեոնը կարծես հենց դրան էր սպասում ճակատամարտն սկսելու համար), նա ձեռնոցը հանց գեղեցիկ սպիտակ ձեռից, նրանով նշան արավ մարշալներին և հրամայեց կռիվն սկսել: Մարշալներն իրենց աղյուտանտների հետ սլացան դանազան կողմեր և մի քանի րոպե հետո ֆրանսական բանակի գլխավոր ուժերն արագորեն շարժվեցին դեպի Պրացի այն բարձունքները, որտեղից ոռու զորքերը քաշվում էին հետզհետե և իջնում ձախ կողմը գտնվող ձորը:

Առավոտյան ժամը 8-ին Կուտուզովը ձի նստած, շորրորդ զորասյունի գլուխն անցած, գնաց Պրաց: Գա Միրուրադովիչի այն զորասյունին էր, որ պետք է բռնեի Պրոխորիչևսկուսու և Լանսկոնի զորասյունների տեղը, որոնք արգեն ցած էին իջել: Նա բարև տվեց առաջին զնդի զինվորներին և հրամայեց առաջ շարժվել, ցույց տալով, թե մտադիր է ինքն անձամբ առաջնորդել այդ զորասյունը: Պրաց գյուղին հասնելով՝ նա կանգ առավ: Իշխան Անդրեյը, գլխավոր հրամանատարի շքախումբը կազմող բազմաթիվ անձանց հետ միասին, կանգնել էր նրա ետև: Իշխան Անդրեյն իրեն զգում էր հուզված, գրգռված և դրա հետ միասին զուսպ-հանգիստ, ինչպես լինում է մարդ վաղուց փափագած վայրկյանը հասնելու պահին: Նա հաստատապես համոզված էր, որ այսօր իր Տուլոնի կամ Արկոլյան կամուրջի օրն է: Թե ինչպես կլինեի — չգիտեր, բայց համոզված էր հաստատապես, որ կլինի: Տեղը և մեր զորքերի դիրքը հայտնի էր նրան, որքան հայտնի կարող էր լինել մեր բանակից որևէ մեկին: Իր սեփական ստրատեգիական պլանը, որի իրադրոժման մասին հիմա կարիք էլ չկար մտածելու, նա մոռացել էր: Այժմ Վեյրտերի պլանին հասու եղած՝ իշխան Անդրեյը մտածում էր, թե ինչ պատահականություններ կարող են տեղի ունենալ ու անում էր նոր ենթադրություններ, այնպիսի ենթադրություններ, որոնց մեջ կարող էր հարկավորվել իր թափանցամտությունն ու վճռականությունը:

Ձախ կողմի վրա, ներքևում, մառախուղի մեջ, հրացանաձգություն էր լավում աներևույթ զորքերի միջև: Իշխան Անդրեյին թվում էր, թե հենց այդտեղ էլ կկենտրոնանա ճակատամարտը, այդտեղ մերոնք խոչընդոտի կհանդիպեն և «ինձ մի բրիգադով կամ դիվիզիայով կուղարկեն այնտեղ, — մտածում էր նա, — և այդտեղ էլ դրոշակը ձեռիս առաջ կբրթում և կշարդեմ-կխորտակեմ առջև եղած ամեն բան»:

Իշխան Անդրեյը շեր կարողանում անտարբեր նայել անցնող գումարտակների դրոշակներին: Այս կամ այն դրոշակին նայելով՝ նա մտածում էր. թերևս սա է այն դրոշակը, որով վիճակվելու է ինձ առաջնորդել զորքը:

Գիշերվա մառախուղը առավոտյան դեմ բարձունքների վրա թողել էր միայն եղյամ, որ հետո փոխվեց ցողի, իսկ ձորերում դեռ փռված էր մառախուղի կաթնագույն ծովը: Ձախակողմի այն ձորում, ուր իջել էին մերոնք և որտեղից հրացանաձգություն էր լավում, ոչինչ չէր երևում: Բարձունքների վրա պարզ երկինքն էր, իսկ այդ կողմի վրա արևի ահադին գունդը: Առջևում, հեռու, մառախուղի ծովի մյուս ափին, երևում էին անտառոտ բլուրներ, որոնց վրա և պետք է լինեի թշնամու բանակը, այնտեղ երևում էր նաև ինչ-որ բան: Աջ կողմի վրա մառախուղի շրջանն էր մտնում գլխարդիան՝ քայլերի ու անիվների աղմուկով և սվինների երբեմնի շողշողունով. ձախ կողմից, գյուղից դեռ հեծելազորի նույնպիսի բազմություններ էին անցնում ու աներևույթանում ծով-մառախուղում: Առջևից ու ետևից շարժվում էր հետևակը: Գլխավոր հրամանատարը կանգնել էր գյուղի պոնկին, և զորքերը անցնում էին նրա առջևից: Այդ առավոտ Կուտուզովը հոգնած ու ջղայնացած էր թվում: Առջևից անցնող հետևակն առանց հրամանի կանգ առավ, երևի նրա համար, որ առջևում մի բան էր պատահել:

— Ասացեք, վերջապես, որ գումարտակներ կազմեն և գյուղի բոլորքով գնան, — բարկացած ասավ Կուտուզովն իրեն մտանցող զենեքալին: — Ինչպես դուք չեք հասկանում, ձեր դերագանացություն, ողորմած տեր, որ գյուղի այս նեղ փողոցով տարածվել չի կարելի, երբ թշնամու դեմ ենք գնում:

— Ես մտադիր էի գյուղից դուրս դասավորել զորքը, ձեր բարձր գերագանցություն, — պատասխանեց գնեքալը:

Կուտուզովը մաղձոտ ժպտաց:

— Խելացի՞ բան եք մտածել — զորքը դասավորել թշնամու աչքի առաջ. հիանալի՞ է:

— Թշնամին դեռ հեռու է, ձեր դերագանցություն: Գիսպոգիցիայի համաձայն...

— Գիսպոգիցիա՞, — մաղձոտ պոտաց Կուտուզովը, — իսկ այդ ո՞վ է ձեզ ասել... Հաճեցեք անել, ինչ ձեզ հրամայում են:

— Կտում եմ:

— Mon cher, — շնչաց իշխան Անդրեյին Նեսվիցկին, — le vieux est d'une humeur de chien¹.

¹ Սիրելիս, մեր ձերուկի սրամաղրությունը շատ վատ է:

Կուտուզովին սրարշավ յոտեցավ ճերմակ համազգեստ հագած և կանաչ փետրավոր գլխարկով ավստրիացի մի սպա և կայսեր անունից հարցրեց, թե շորրորդ զորասյունը գնացե՞լ է արդյոք ճակատամարտի:

Կուտուզովին, առանց պատասխանելու, երեսը շրջեց, և նայվածքը պատահաբար ընկավ կողքին կանգնած իշխան Անդրեյի վրա: Բալկոնսկուն տեսնելով՝ Կուտուզովը մեղմացրեց նայվածքի շար ու կծու արտահայտությունը, գիտակցելով կարծես, որ աղյուտանտը մեղավոր չէ կատարվածի համար: Եվ, ավստրիական աղյուտանտին չպատասխանելով, դարձավ Բալկոնսկուն:

— Alle voir, mon cher, si la troisième division a dépassé le village. Dites-lui de s'arrêter et d'attendre mes ordres¹.

Հազիվ իշխան Անդրեյը մի քայլ էր արել, նորից կանգնեցրեց նրան:

— Et demandez-lui, si les tirailleurs sont postes, — ավելացրեց նա: — Ce qu'ils font, ce qu'ils font!² — ասավ ինքն իրեն, դեռ չպատասխանելով ավստրիացուն:

Իշխան Անդրեյը ձին քշեց հանձնարարություն կատարելու: Հասնելով առջևից անցնող գումարտականներին, նա Յ-րդ դիվիզիան կանգնեցրեց և համոզվեց, որ իրոք մեր զորասյուների առջևում հրացանածիգների շղթա չկա: Գնդի առջևից գնացող հրամանատարը շատ զարմացավ գլխավոր հրամանատարի իրեն հայտնված հրամանի վրա, թե հրացանածիգներին պետք է ցրել զանազան տեղեր: Գնդի հրամանատարը կանգնել էր այդտեղ լիովին հավատացած, թե իր առջևը դեռ զորք կա և թե թշնամին չի կարող 10 վերստից ավելի մոտ լինել: Իսկապես, առջևում ոչինչ չէր երևում, բացի ամայի տարածությունից, որ թեքվում էր ցած ու ծածկված էր թանձր և՛առախուղով: Գլխավոր հրամանատարի անունից հրամայելով ուղչել գանցառությունը, իշխան Անդրեյը սրարշավ ետ եկավ:

¹ Գնացեք, սիրելիս, տեսեք երրորդ դիվիզիան գյուղից դուրս է եկել արդյոք: Կարգադրեցեք կանգ առնի և հրամանիս սպասի:

² Հարցրեք նաև, հրացանածիգները տեղավորված են արդյոք: — Ի՞նչ են անում դրանք, ի՞նչ են անում:

Կուտուզովը նույն տեղը կանգնած, իր գեր մարմնով պստավի պես թամբին ընկած, ծանր հորանջում էր աչքերը խփած: Զորքերն էլ չէին շարժվում. կանգնել էին հրացանները ցած բռնած:

— Լավ, լավ, — ասավ նա իշխան Անդրեյին և դառնալով գինեբալին, որ ժամացույցը ձեռին բռնած ասում էր, թե ժամանակն է շարժվելու, որովհետև ձախ թևի զորասյուններն արդեն իջել են ցած:

— Դեռ ժամանակ ունենք, ձերդ գերազանցություն, — հորանջելով ասավ Կուտուզովը: — Ժամանակ ունենք, — կըրկենց նա:

Այդ միջոցին Կուտուզովի ետև հեռվում լսվեցին ուռույթի ձայներ, որոնք արագ տարածվեցին ուսական հարձակվող զորասյունների գծի ամբողջ երկարությամբ: Երևում էր, որ նա, որին զորքերն «ուռույթ» էին կանչում, գալիս էր արագություն: Երբ Կուտուզովի մոտ գտնվող գունդն էլ «ուռույթ» կանչեց, նա մի փոքր առաջ գնաց և դեմքը կնճռելով՝ նայեց: Պրացենի ճանապարհով գալիս էր երփներանգ ձիավորների մի հեծվաշտ կարծես: Նրանցից երկուսը խոշոր քայլերով արշավում էին իրար կողքի, բոլորից առաջ ընկած: Մեկը սև մունդիրով էր, ճերմակ ցցունքով, սյուր կտրած շիկակարմիր ձիու վրա, մյուսը՝ սպիտակ մունդիրով, սև ձիու վրա: Դրանք երկու կայսրների էին իրենց շքախմբով: Կուտուզովը զորքի շարքերում գտնվող զինվորականի հատուկ շեշտով, կանգնած զորքերին հրամայեց «զգաստ» և, ողջունելով, մոտեցավ կայսեր: Նրա ամբողջ կերպարանքն ու ձևերը միանգամից փոխվեցին: Ընդունեց ստորադրյալի և դատողություն չանող մարդու տեսք: Հարկանքի անբնական արտահայտությամբ, որը, երևի, տհաճ տպավորություն արավ Ալեքսանդր կայսեր վրա, մոտեցավ ու ողջունեց նրան:

Տհաճ տպավորությունը, պարզ երկնքի երեսին մնացած մառախուղի մնացորդի պես, անցավ երիտասարդ կայսեր երջանիկ դեմքով ու շքացավ: Նա, տկարությունից հետո այդ օրը մի փոքր նիհար էր երևում, քան Օլմյուցի դաշտում, ուր արտասահմանում առաջին անգամ տեսավ նրան Բալկոնսկին. բացյ վեհություն ու հեզություն նույն հմայիչ արտահայտությունն էր իր մոխրագույն աչքերում, իսկ նուրբ

շուրթերի վրա՝ դանազան տեսակի արտահայտութիւնների միևնույն հնարավորութիւնը և բարեհազի ու անմեղ երիտա-
սարդութեան գերակշռող արտահայտութիւնը:

Օլմուցի գորտտեսին նա ավելի վեճ էր, այստեղ ավելի
ուրախ ու եռանդոտ: Այս երեք վերստն արշավելուց կարմրել
էր մի քիչ. ձին կանգնեցնելով՝ հանգստացած շունչ քաշեց և
նայեց շքախմբի անգամների իր նման ջահել ու աշխույժ դեմ-
քնդին: Չարտորիժակին ու նովոսիցևը, թե՛ իշխան Վալ-
կոնսկին, թե՛ Սերոգանովը, թե՛ մյուսները, բոլորը հարուստ
հագնված, ուրախ երիտասարդներ, գեղեցիկ, թարմ, հենց նոր
թեթև քրտնած ձիերով, խոսակցելով ու ժպտալով, կանգ առան
թագավորի ետև: Ֆրանց կայսրը, կարմիր երկարողնած երիտա-
սարդ, զարմանալի շողիլ նստել էր իր գեղեցիկ սև նժուլզը և
մտահոգ ու հանգարտ շուրջն էր նայում: Նա իր սպիտակազգեստ
աղոյւտանտներից մեկին կանչեց ու հարցրեց ինչ-որ: «Ճիշտը,
որ ժամին են սրանք դուրս եկել», մտածեց իշխան Անդրեյը,
գիտելով իր հին ծանոթին, մի ժպիտով, որ չէր կարողանում
զսպել, հիշելով իր ունկնդրութիւնը Ֆրանց կայսեր պալա-
տում: Կայսրների շքախմբում կային ընտրովի կտրիճ պատ-
վիրակներ: Ուսաներ ու ավատարիացիներ՝ պլարդիական և մյուս
գնդերից: Գրանց արանքում բերեցողները ման էին ածում
աստղալար ծածկոցներով թագավորական պահեստի ձիեր:

Կարծես բաց լուսամուտից հանկարծ դաշտային թարմ օդ
լցվի հեղձուցիչ մթնոլորտով լի սենյակը, այդպիսի սպավորու-
թիւն թողին Կուտուզովի անուրախ շտաբի վրա սրարշավ
եկած այս փայլուն երիտասարդները, իրենց հետ բերելով
ջահելութիւն, եւանդ և հաջողութեան վստահութիւն:

— Ինչո՞ւ չեք սկսում, Միխայիլ Լարիոնովիչ, — հապնեալ
դարձավ Ալեքսանդր կայսրը Կուտուզովին, միևնույն ժամա-
նակ հարգանքով նայելով Ֆրանց կայսեր:

— Ես սպասում եմ, ձերդ մեծութիւն, — պատասխանեց
Կուտուզովը, հարգանքով առաջ թեքվելով:

Կայսրն ականջը թեքեց մատով, հոնքերը թեթևակի կի-
տելով ու ցույց տալով, թե չլսեց:

— Սպասում եմ, ձերդ մեծութիւն, — կրկնեց Կուտու-
զովը (իշխան Անդրեյը նկատեց, որ Կուտուզովի վերին շուրթը,
այդ օտպասում եմ խոսքն ասելիս, ցնցվեց անբնական կեր-

պով): — Բոլոր գորասյունները դեռ չեն հավաքվել, ձերդ մեծու-
թիւն:

Թագավորը լսեց, բայց այդ պատասխանն, ըստ երևույթին,
դուր չեկավ նրան. նա թոթվեց ուսերը, նայեց կողքին կա՛ գ-
նած նովոսիցևին, այդ հայացքով կարծես ասելով, թե գան-
գատվում է Կուտուզովից:

— Չէ՞ որ մենք Յարիցին հրապարակում չենք, Միխայիլ
Լարիոնովիչ, ուր գորահանդեսը չեն սկսում, մինչև բոլոր
գնդերը չհավաքվեն, — ասավ թագավորը, նորից նայելով
Ֆրանց կայսեր, կարծես նրան հրավիրելով, եթե ոչ մասնակ-
ցելու, գոնե լսելու, թե ինչ է ստում ինքը. բայց Ֆրանց կայսրը,
շարունակելով շուրջը նայել, չէր լսում:

— Իրա համար էլ չեմ սկսում, թագավոր, — ասավ Կու-
տուզովը. հնչուն ձայնով, կարծես շլվելու հնարավորութիւնը
կանխելով, և նրա դեմքի վրա ինչ-որ մի բան ցնցվեց զարձ-
յալ: — Նրա համար էլ չեմ սկսում, թագավոր, որովհետև մենք
ոչ գորահանդեսում ենք և ոչ էլ Յարիցին հրապարակում, —
արտասանեց նա պարզ ու որոշ:

Թագավորի շքախմբի անգամները մի ակնթարթում իրար
նայեցին, և նրանց դեմքերին երևաց դժգոհութիւն ու հանդի-
մանութիւն: Որքան էլ ծեր է, բայց չպետք է, չպետք է այդ-
պես խոսեր», կարդացվում էր այդ դեմքերի վրա:

Թագավորն ուշադիր նայեց Կուտուզովի աչքերին, սպասե-
լով, թե դեռ ինչ կասի: Բայց Կուտուզովն իր հերթին, հարգան-
քով գլուխը խոնարհելով, նույնպես, կարծես, սպասում էր:
Լուսնութիւնը տևեց մոտ մի րոպե:

— Բայց, եթե հրամայում եք, ձերդ մեծութիւն, — ասավ
Կուտուզովը, գլուխը բարձրացնելով և նորից բուժ, իր գառտ-
ղութիւնը յունեցող, բայց հնազանդող գնեբրալի նախկին
տոնն ընդունելով:

Նա ձին առաջ քշեց և, գորասյունի պետ Միլորազովիչին
իր մոտ կանչելով, հարձակվելու հրաման տվեց:

Չորքը նորից շարժվեց. նովոգորոյան գնդի երկու գումա, •
տակ և Սպլիտոյան գնդի մի գումարտակ, թագավորի առջևից
անցնելով, գնացին առաջ:

Սպլիտոյան գումարտակի անցնելու միջոցին, կարմրա-
դեղ Միլորազովիչը, առանց շինելի, մունդիրով և շքանշան-

ներով, ցցունազարդ գլխարկը թեք դրած, առաջ սլացավ և, ձին ետ-ետ պահելով, ողջունեց թագավորին:

— Աստծու օգնութեամբ, գեներալ,— ասավ թագավորը նրան:

— Ma foi, sire, nous ferons ce que qui sera dans notre possibilité, sire¹, — պատասխանեց նա զվարթ, բայց և այնպես հեղնական ժպիտ առաջացրեց թագավորի շքախմբի մարդկանց դեմքին՝ իր վատ ֆրանսական առողանութեամբ:

Միլորադովիչը ձիու գլուխը թեքեց հանկարծ ու գնաց կանգնեց թագավորի ետև, փոքր-ինչ հեռու: Ապշերոնցիները, թագավորի ներկայութեանից հուզված, խրախուսված, աշխուժորեն ու համաշափ քայլերով, անցան կայսրների ու նրանց շքախմբերի առջև:

— Տղե՛րք, — գուցեց Միլորադովիչը բարձր, ինքնավստահ ու զվարթ ձայնով, ըստ հրևույթին հրացանածգությունից, սպասվող ճակատամարտից, և թագավորի առջևից անցնող ապշերոնցիներին՝ իր սուվորովյան ընկերների խիզախ տեսքից հուզված էր այն աստիճան, որ թագավորի ներկայութեանը մոռացավ: — Տղե՛րք, առաջին գյուղը չէ, որ պիտի գրավեք, — բացական չեց նա:

— Այլևի կաշխատե՞նք:

Թագավորի ձին խրտնեց այս անակնկալ աղաղակից: Այս ձին որ դեռ մուսաստանում թագավորին զորատեսների էր տանում, Առևտերլիցի դաշտում, դիմանալով իր հեծվորի ձախ ոտի ցրված-անուշադիր հարվածներին, ականջները խլշում էր կրակոցների ձայնից, ճիշտ այնպես, ինչպես անում էր այդ Մարսյան դաշտում, չհասկանալով ոչ այդ լավող կրակոցների, ոչ Ֆրանց կայսեր սև ձիու հարևանութեան նշանակութեանը և ոչ էլ այն բոլորը, ինչ ասում, մտածում, զգում էր այդ օրն իր վրա նստողը:

Թագավորը ժպիտը դեմքին դարձավ իր մերձավորներից մեկին և, խիզախ ապշերոնցիներին ցույց տալով ինչ-որ բան ասավ:

Կուսուզովն, իր աղյուտանտների ուղեկցութեամբ, ձի նրստած՝ քայլով գնաց հրացանակիրների ետևից:

Կես վերստաշափ գնալով՝ նա կանգ առավ մի մենավոր լքյալ տան մոտ (հավանորեն, նախկին պանդոկ էր), երկու ճանապարհի ճյուղավորման տեղում: Երկու ճանապարհն էլ իջնում էին սարն ի վար, և երկուսով էլ զորքեր էին գնում:

Մառախուղն սկսել էր ցրվել և, անորոշ կերպով, երկու վերստ տարածութեան վրա, երևում էին արդեն թշնամու զորքերը՝ դիմացի բարձունքներին: Զախակողմը, ներքևում, հրացանածգությունն ավելի լսելի դարձավ: Կուսուզովը կանգ առավ, ավստրիացի գեներալի հետ խոսակցելով: Իշխան Անդրեյը, փոքր-ինչ հեռու կանգնած, նայում էր նրանց և, կամենալով հեռագիտակեր խնդրել աղյուտանտից, դիմեց նրան:

— Նայեցեք, նայեցեք, — ասավ այդ աղյուտանտը, նայելով ոչ թե հեռվում գտնվող զորքին, այլ իր առջև, սարի ստորոտին: — Ահա ֆրանսացիները:

Երկու գեներալն ու աղյուտանտները նայեցին, հեռագիտակն իրար ձեռից խլելով: Բոլորի դեմքերը փոխվեցին և բոլորի դեմքի վրա սարսափ երևաց: Ֆրանսացիներին երկու վերստ հեռու էին կարծում, բայց հանկարծ, անսպասելի հայտնվեցին իրենց առաջ:

— Իա թշնամի՞ն է... Ո՛ր... Այո, նայեցե՛ք, նա՛ է... անկասկած... Սա ի՞նչ բան է, — լսվում էին այս ու այն կողմից:

Իշխան Անդրեյը հասարակ աչքով տեսավ ներքևում, աջ կողմից ապշերոնցիների դեմ ելնող ֆրանսական մի զորասյուն, որ ոչ ավելի, քան հինգ հարյուր քայլ հեռու էին Կուսուզովի կանգնած տեղից:

«Ահա վճռական վայրկյանը: Եկավ իմ գործելու ժամը», մտածեց իշխան Անդրեյը և, ձիուն խփելով, մոտեցավ Կուսուզովին:

— Ապշերոնցիներին պետք է կանգնեցնել, ձերդ բարձր գերագանցութուն, — աղաղակեց նա:

Բայց այդ վայրկյանին ամեն ինչ ծածկվեց ծխով, հրացանների ճարձատեցին մոտիկ և, իշխան Անդրեյից երկու քայլ հեռու, մեկն աղաղակեց մանկական, վախեցած ձայնով. «է,

¹ Ձերդ մեծութուն, կանեք, ինչ, ձեռնիրիցս կգա, ձերդ մեծութուն:

եղբայրներ, բաններս պրծալ:» Եվ այդ ձայնը կարծես հրաման լիներ: Այդ ձայնը լսելով բոլորն սկսեցին փախչել:

Իրար խառնված, հետզհետե ավելացող բազմութունները փախչում էին ետ, դեպի այն տեղը, ուր հինգ բույս առաջ գործերն անցնում էին կայսրների առջևից: Ոչ միայն դժվար էր կանգնեցնել այդ բազմութունը, այլև անկարելի էր շնթարկվել այդ խուճապին և շնահանջել մյուսների հետ: Բալկոնակին աշխատում էր միայն ետ շմնալ բազմութունից և տարակուսած նայում էր, չկարողանալով հասկանալ, թե ի՞նչ է կատարվում իր առջև: Նեսվիցկին՝ բարկութունից կարմրած, այլափոխված դեմքով՝ գոռում էր Կուտուզովին, թե եթե նա անմիջապես չհեռանա, գերի կընկնի անկասկած: Կուտուզովը կանգնած մնաց նույն տեղը և, պատասխան չտալով, թաշկինակը հանեց գրպանից: Նրա այտից արյուն էր գնում: Իշխան Անդրեյը, մի կերպ ճամփա բանալով, մոտեցավ նրան:

— Գուց վիրավորված եք, — հարցրեց նա, ներքին ծնուտի դուրը հազիվ զսպելով:

— Ահա ուր է իմ վերքը, — ասավ Կուտուզովը, թաշկինակը վիրավոր այտին սեղմելով ու փախչողներին մատնացույց անելով: — Կանգնեցրեք դրանց, — պուռաց նա և միևնույն ժամանակ, հավանորեն համոզվելով, որ նրանց կանգնեցնել անկարելի է, ձիուն խփեց ու գնաց դեպի աջ:

Փախչողների նոր հորդած բազմութունը նրան իր մեջ առավ ու ետ տարավ:

Ձորքերը փախչում էին այնպիսի հոծ բազմությամբ, որ մի անգամ այդ բազմության մեջն ընկնողը՝ դժվար կարող էր դուրս գալ: Մեկը գոռում էր. «Գնա՛, ի՞նչ ես ետ ընկնում»: Մի ուրիշը հենց այդտեղ, ետ դառնալով, կրակում էր օդի մեջ. երրորդը խփում էր Կուտուզովի ձիուն: Մեծ դժվարությամբ բազմության հոսանքից ազատվելով՝ Կուտուզովն իր շքախմբով, որը պակասել էր կրկնակի շափով, գնաց դեպի ձախ, մոտիկից լավող թնդանոթածագության կողմը: Փախչողների բազմութունից ազատվելով, իշխան Անդրեյը, աշխատելով Կուտուզովից ետ շմնալ, սարի վայրէջքին, ծխի մեջ տեսավ դեռևս կրակոշուռական մարտիցը և վազեկվազ նրան մոտեցող Ֆրանսացիներին: Քիչ վերև կանգնած էր ուռևական հետևակը, որ ո՛չ առաջ էր գնում մարտիցին օգնելու, ո՛չ էլ ետ էր գնում՝ փախչողների ուղղությամբ: Ձի նստած մի գեներալ չուկվեց այդ հետևակից ու մոտեցավ Կուտուզովին: Կուտուզովի շքախմբից մնացել էին միայն շորս հոգի: Բոլորը գունատ և անխոս իրար էին նայում:

— Կանգնեցրեք այդ սրիկաներին, — շնչասպառ լինելով ասավ Կուտուզովը գնդի հրամանատարին՝ փախչողներին մատնացույց անելով. բայց հենց այդ վայրկյանին, կարծես այդ խոթքերին ի պատիժ, գնդակները, թռչնակների երամի պես, սուլելով թռան անցան գնդի և Կուտուզովի շքախմբի վրա:

Յրանսացիք հարձակվում էին մարտիցի վրա, բայց Կուտուզովին տեսնելով, կրակ բացին նրա կողմը: Այդ համազարկի հետևանքով՝ գնդի հրամանատարը ոտը բռնեց, մի քանի զինվոր ընկան, և դրոշակը բռնող ենթասպան՝ դրոշակը թողեց ձեռից, որ ցնցվեց ու ընկավ, կախվեց հարևան զինվորների հրացանների վրա: Զինվորներն առանց հրամանի սկսեցին կրակել:

— Ո՞՞՞՞, — հուսահատորեն տնքաց Կուտուզովն ու շուքը նայեց: — Բալկոնակի՛. — շնչաց նա, ծերության անզորությունն արտահայտող դողդոջուն ձայնով, — Բալկոնակի՛, — շնչաց նա, ցույց տալով քայքայված գումարտակը և թռչամուն, — սա ի՞նչ բան է:

Բայց նա իր խոսքը դեռ չէր վերջացրել, իշխան Անդրեյն, զգալով որ ամոթի և կատաղության արցունքները մոտենում են կոկորդին, ձիուց ցատկեց ու վազեց դեպի դրոշակը:

— Տղե՛րք, հառա՛ջ, — գոռաց նա մանկան-ծղրտան ձայնով:

«Ահա նա», մտածեց իշխան Անդրեյը, դրոշակի ձողը բռնելով և հաճույքով լսելով գնդակների սուլոցը, որոնք, ակներև, ուղղված էին իր դեմ: Մի քանի զինվոր ընկան:

— Ուռա՛, — բացականչեց իշխան Անդրեյը, ծանր դրոշակը հազիվ ձեռին պահելով, և առաջ վազեց մի աներկբա հավատով, թե ամբողջ գումարտակը կհետևի իրեն:

Իսկապես, նա մենակ առաջ վազեց միայն մի քանի քայլ. դրանից հետո շարժվեց մի զինվոր, հետո մի ուրիշը և ապա ամբողջ գումարտակը «ուռա՛» կանչելով վազեց առաջ ու անցավ նրանից: Գումարտակի ենթասպան մոտ վազեց, բռնեց իշխան

Անդրեյի ձեռնի ծանրությունից ճոճվող դրոշակը, բայց անմիջապես սպանվեց տեղնուտեղը: Իշխան Անդրեյը նորից բռնեց դրոշակը, ձողից բռնած քաշ տալով, վազեց գումարտակի հետ: Իր առջև տեսավ մեր թնդանոթածիգներին, որոնցից ոմանք կոպում էին, մյուսները թնդանոթները թողած՝ վազում դեպի իրեն. նա տեսավ և Ֆրանսացի հետևակ զինվորների, որոնք հրետանու ձիերին բռնելով՝ թնդանոթները դարձնում էին: Իշխան Անդրեյը գումարտակի հետ միասին գտնվում էր թնդանոթներից 20 քայլ հեռու: Նա լսում էր գնդակների անընդհատ սուլոցը իր գլխավերև, և նրա աչ ու ձախ կողմը շարունակ հատաչում ու ընկնում էին զինվորները: Բայց իշխան Անդրեյը նրանց չէր նայում, նայում էր միայն, թե ի՞նչ է կատարվում առջևում՝ մարտկոցում: Նա պարզ տեսնում էր արդեն կիվերը գլխին ծոված մի թնդանոթածիգ զինվորի, որ փարատիչի ծայրը բռնած քաշում էր դեպի իրեն, իսկ մյուս ծայրը իր կողմն էր քաշում Ֆրանսացի զինվորը: Իշխան Անդրեյը պարզ տեսնում էր այդ երկու զինվորների շփոթված և կատաղի արտահայտությունը, որոնք, ըստ երևույթին, չէին հասկանում, թե ինչ են անում:

«Այդ ի՞նչ են անում» — մտածեց իշխան Անդրեյը, նրանց նայելով. — Ինչո՞ւ այդ շեկ թնդանոթածիգը չի փախչում, երբ հրացան շունի: Ինչո՞ւ Ֆրանսացին նրան սվինահար չի անում: Բայց բավական է մի քանի քայլ անի, հրացանը Ֆրանսացու միտը կընկնի և նրան սվինահար կանի»:

Արդարև, մի ուրիշ Ֆրանսացի վազեվազ մոտեցավ կովոզներին, և շեկ թնդանոթածիգի բախտը (որը դեռ չէր հասկանում ինչ է սպասում իրեն, ու փարատիչը հանդիսավոր ձևով խլեց հակառակորդից) պիտի վճռվեր: Բայց իշխան Անդրեյը շտեսավ, թե այդ ինչով վերջացավ: Հանկարծ, նրան թվաց թե՛ մոտիկ գտնվող զինվորներից մեկը մի ամուր փայտով խփեց իր գլխին: Դա մի քիչ ցավ պատճառեց, բայց, գլխավորապես, տհաճութուն, որովհետև այդ ցավը գրավեց իր ուշադրությունը և խանգարեց տեսնել այն, ինչի նայում էր:

«Սա ի՞նչ բան է. վայր եմ ընկնո՞ւմ. ծնկներս թուլանո՞ւմ են», մտածեց նա ու ընկավ մեջքի վրա: Նա աչքերը բաց արավ, հույս ունենալով տեսնել, թե ինչով վերջացավ Ֆրանսացիների ու թնդանոթածիգների կռիվը, և ցանկանալով իմանալ՝

շեկ թնդանոթածիգը սպանված է թե ոչ, թնդանոթները թըշնամու ձե՞ռն են ընկել, թե՞ ազատվել են: Սակայն ոչինչ չտեսավ: Նրա գլխավերևն այլևս ոչինչ չկար, բացի երկնքից — բարձր երկնքից, որ պարզ չէր, բայց և այնպես անսահման բարձր էր. նրա երեսով հանդարտ սողում էին մոխրագույն ամպեր: «Որքան հանգիստ, անդորր ու հանդիսավոր է. բոլորովին այնպես չէ, ինչպես վազելուս միջոցին, — մտածեց իշխան Անդրեյը, — այնպես չէ, երբ վազում էինք, գոռում ու կովում. բոլորովին այնպես չէ, երբ Ֆրանսացին ու թնդանոթածիգը՝ կատաղած ու վախեցած դեմքերով՝ փարատիչն ուզում էին խլել իրար ձևից, — ամպերն էլ բոլորովին այնպես չեն սողում այս բարձր, անսահման երկնքի երեսին: Ի՞նչպես է որ ես առաջ չեմ տեսել այս բարձր երկինքը: Եվ որքան երջանիկ եմ, որ տեսա վերջապես: Այո, ամեն ինչ ունայն է ու պատրանք, բացի այս անսահման երկնքից: Ոչինչ, ոչինչ չկա, նրանից բացի: Բայց նույնիսկ այդ էլ չկա, ոչինչ չկա, բացի լուսթյունից ու անդորրությունից: Եվ փա՛ռք աստծուն»:

XVII

Բագրատիոնի աչ զորաթևում ժամը 9-ին կռիվը գլու չէր սկսվել: Չկամենալով համաձայնել Դուգորուկովի կռիվն սկսելու պահանջին և ցանկանալով պատասխանատվությունը հեռացնել իրենից, իշխան Բագրատիոնը Դուգորուկովին առաջարկեց՝ մարդ ուղարկել այդ մասին գլխավոր հրամանատարին հարցում անելու: Բագրատիոնը դիտեր, որ եթե սուրհանդակը ճանապարհին չսպանվի (ինչ որ շատ հավանական էր) և եթե անգամ հրամանատարին գտնի, ինչ որ շատ դժվար էր, նա իր կլանից շուտ չէր կարող վերադառնալ, որովհետև մի թևը մյուսից բաժանողը գրեթե 10 վերստ տարածություն էր:

Բագրատիոնն իր խոշոր, ոչինչ չարտահայտող, քնատ աչքերով նայեց իր շքախմբին, և առաջինը նրա աչքին ընկավ՝ Ռոստովի հուզումից ու հույսից մարող դեմքը: Բագրատիոնը նրա՛ն ուղարկեց որպես սուրհանդակ:

— Իսկ եթե, ձերդ պայծառափայլություն, նորին մեծությանն ավելի շուտ հանդիպե՛մ, քան գլխավոր հրամանատարին, — ասավ Ռոստովը, ձեռը քունքին բռնած:

— Կարո՞ղ եք հայտնել նորին մեծութեան, — հապճեպ Բարդատիոնին ընդհատելով, պատասխանեց Գոլգորուկովը։
Հերթապահութիւնից հետո Ռոստովը կարողացել էր առաւելոյն դեմ մի քանի ժամ քնել և այժմ իրեն զգում էր զվարթ, համարձակ ու վճռական. շարժումների ճկունութեան ունեւոր, հավատում էր իր բախտին և լավ տրամադրութեան մեջ էր, երբ ամեն ինչ թվում է ճիշտ, ուրախալի ու հնարավոր։

Նրա բոլոր ցանկութիւններն իրականացան այդ առավոտ. զլխավոր ճակատամարտը տեղի ունեցավ. նա մասնակցեց դրան. բացի դրանից՝ նա պատվիրակի պաշտոն ունեւոր ամենաբաշ զանկարալի մոտ. բացի դրանից, հատուկ հանձնարարութեամբ գնում էր Կուտուզովի մոտ, և գուցե իրեն՝ թագավորի մոտ։ Առաջնոր պայծառ էր, տակի ձին լավը։ Հոգեպես ուրախ էր և երջանիկ։ Հրաման ստանալով՝ նա ձիու գլուխը բաց թողէջ ու արշավէջ զորագծի երկարութեամբ։ Սկզբում գնում էր Բագրատիոնի այն զորքերի կողքով, որոնք դեռ կովին չէին մասնակցել և կանգնած մնացել էին անշարժ. ապա նա ոտք դրէջ Ուլարովի հեծելազորի բոնած տարածութեանը, և այստեղ արդեն նկատեց շարժում և կովի պատրաստվելու նշաններ. Ուլարովի հեծելազորից հեռանալով, նա պարզորոշ թնդանոթաճգութեան ու հրանոթաճգութեան լսեց առջևից։ Հրաձգութեանը քանի գնում սաստկանում էր։

Առաջնոր թարմ օդում լսվում էին արդեն, ոչ թե առաջնա պես անհավասար ընդմիջումներով, երկու-երկու, երեք-երեք կրակոցներ և աւել մի կամ երկու թնդանոթաճգութեանը, այլ լինելով լանջին, Պրացի առջև լսվում էին հրացանածրագութեան սրտաբնդոտ համազարկեր, որոնց ընդմիջում էին թնդանոթի նույնպիսի զարկեր, այնպէս, որ երբեմն մի քանի թնդանոթաճգարկեր արշին ոչ թե ջակվում էին իրարից, այլ ձուլվում-միանում էին մի ընդհանուր օրոտի մեջ։

Երևում էր, թե ինչպէս հրացանի կրակոցի ծխերը, մեկը մյուսի ետևից, կարծես վազում էին լեռնալանջերով, և ինչպէս թնդանոթները ծխերը դուրս էին գալիս կծիկ դառած, ցրիվ էին գալիս և ձուլվում-միանում մեկը մյուսին։ Միսի մեջ փայլող սվիններից նկատելի էր հետևակի շարժվող բազմութեանը և հրետանին՝ իր կանաչ արկղներով։

Ռոստովը բլրի վրա մի րոպե ձին կանգնեցրեց, որ լավ տեսնի, թե ինչ է կատարվում. բայց որքան էլ ուշադրութեանը լարում էր՝ ոչինչ չէր կարողանում հասկանալ, թե ինչ է կատարվում. ծխի մեջ ինչ-որ մարդիկ էին շարժվում. թե՛ առջևում թե՛ հետևում շարժվում էին ինչ-որ զորամասեր. բայց ի՞նչու համար. ո՞վքեր էին, ո՞ւր էին գնում, — դժվար էր հասկանալ։ Այդ տեսարանն ու լսվող կրակոցները նրա սրտում չէին հարուցանում ոչ միայն վճատութեան ու երկչոտութեան զգացում, այլ, ընդհակառակը, եռանդ և վճռականութեան էին հազորում նրան։

«Դե, էլի՛, էլի՛...», — դիմում էր նա մտքում այդ ձայներին ու նորից ձիու գլուխը բաց թողնում զորագծի երկարութեամբ. բավական առաջ գնալով, հասավ մի տեղ, ուր զորքերն արդեն կովի մեջ էին։

«Թե ինչ կլինի այնտեղ՝ չգիտեմ, բայց կարծում եմ ամեն ինչ լավ կլինի», մտածում էր Ռոստովը։

Ավստրիական ինչ-որ զորաբաժիններից անցնելով, Ռոստովը նկատեց, որ հետևյալ զորաբաժինն արդեն կովի մեջ էր։ (Դա զվարդիան էր)։

«Ավելի լավ, մոտիկից կնայեմ», մտածեց նա։

Նա գնում էր գրեթե առաջավոր գծով։ Մի քանի ձիավորներ գալիս էին իր կողմը։ Դրանք մեր կայսեր անձնապահ լեյբուլաններ էին, որ ցրիվ շարքերով վերադառնում էին հարձակութից։ Ռոստովը տվեց անցավ դրանց, ակամա նկատեց արյունոտված մեկին, ու ձին քշեց առաջ։

«Իմ ի՞նչ գործն է», մտածեց նա։ Հազիվ մի քանի հարյուր քայլ էր արել, ձախ կողմը՝ առջևից երևաց ամբողջ դաշտովը մեկ հեծելակների մի հոծ բազմութեան, բոլորը սև ձիերի վրա, ճերմակ փայլուն համազգեստներ հագած, սնգանգալով գալիս էին դեպի իրեն։ Ռոստովը ձիու գլուխը բաց թողեց, որ հեռանա այդ հեծելակների ճանապարհից, և նա կանցներ, կհեռանար, եթե նրանք շարունակեին նույն քայլվածքով առաջանալ, բայց նրանք շարունակ արագացնում էին իրենց ընթացքը, այնպէս որ մի քանի ձի արդեն արշավում էին։ Ռոստովին հետզհետե ավելի լսելի էին դառնում ձիերի ոտնատրոփը և զննքերի շրխոցը, ապա նա տեսավ նրանց ձիերին, նրանց կերպարանքը և միջև խակ նրանց դեմքերը։ Դա մեր ընտիր. և

արտոնյալ հեծվաշտն էր, որ հարձակման էր գնում իր դեմ եկող ֆրանսական հեծելազորի վրա:

Հեծելակները արշավում էին, բայց տակավին ձիերի սանձը պահած: Ռոստովն արդեն տեսնում էր նրանց դեմքերը, և լսում սպայի հրամանը. «Մարշ, մարշ»: Սպան ամբողջ թափով բաց էր թողել իր ազնվացեղ ձին: Ռոստովը՝ վախենալով նրանց ոտի տակն ընկնելուց և ֆրանսացիների դեմ հարձակման դիմող զորքի հոսանքով տարվելուց՝ ձիու ամբողջ թափով սլանում էր ֆրոնտի երկարությամբ, բայց և այնպես չկարողացավ խուսափել նրանցից:

Մայրի ձիավորը, վիթխարի հասակով մի շեշտ տղամարդ, Ռոստովին տեսնելով, հոնքերը կիտեց շարացած: Այդ հեծելակը, անշուշտ, գետին պիտի տապալեր Ռոստովին իր բեղուրի հետ (Ռոստովն ինքն իրեն այնքան փոքր ու թույլ էր թվում այդ վիթխարի մարդկանց ու ձիերի հետ համեմատած), եթե Ռոստովը գլխի շնկներ՝ նրա ձիու աչքի առաջ իր մտրակը թափ տալու: Սև, ծանրամարմին ձին խրտնեց՝ ականջները սրելով, բայց շեշտ հեծվորը ամբողջ ուժով խթանեց նրա կողերը, և ձին, պոչը թափ տալով ու վիզը երկարելով սլացավ ավելի արագ: Հեծվաշտը, հազիվ էր անցել նրա մոտից, երբ Ռոստովը լսեց նրանց «ուուա՛»-ն. և ետ նայելով՝ տեսավ, որ նրանց առաջին շարքերը խանվել են օտար, հավանորեն ֆրանսական, կարմիր ուսադիրներով հեծելակներին: Այնուհետև էլ ոչինչ չէր կարելի տեսնել, որովհետև դրանից անմիջապես հետո, չգիտես որտեղից, թնդանոթներն սկսեցին կրակել, և ամեն ինչ կորավ ծխի մեջ:

Այն րոպեին, երբ հեծվաշտն անցավ ու անհերևելիացավ ծխի մեջ: Ռոստովը տատանվեց՝ ձին քշի՞ նրանց ետևից, թե գնա այնտեղ, ուր պետք է գնար: Դա մեր ընտիր հեծվաշտի այն փայլուն հարձակումն էր, որ հիացում պատճառեց անգամ ֆրանսացիներին: Ռոստովը հետո սարսափով լսեց, որ բոլոր այդ վիթխարի գեղեցիկ տղամարդկանց բազմությունից, բոլոր այդ փայլուն, հազարանոց ձիերի վրա նստած, հարուստ պատանիներից, սպաներից ու յունկերներից — հարձակումից հետո մնացել է միայն տասնութ հոգի:

«Նախանձեղու ինչ ունեմ, դեռ ժամանակ ունեմ և այժմ,

թիրևս, տեսնեմ թագավորին», մտածեց Ռոստովն ու սլացավ առաջ:

Գվարդիական հետևակին մոտենալով՝ նկատեց, որ նրա գլխավորներից ու նրա մոտով ուղմբեր են թռչում, և այդ ոչ այնքան նրանից, որ ուղմբերի ձայն լսեց, որքան այն բանից, որ զինվորների դեմքին անհանգստություն տեսավ, իսկ ըսպաների դեմքին մի անբնական, ուղմաշունչ հանդիսավորություն:

Գվարդիական հետևակ զնդի գծերից մեկի ետևից անցնելիս լսեց, որ մի ձայն կանչում է իրեն:

— Ռոստով:

— Ի՞նչ է, — ասավ նա, Բորիսին շճանաչելով:

— Ինչպե՞ս է, առաջավոր գիծն ենք եկել: Մեր գունդը հարձակումից է վերադառնում, — ասավ Բորիսը առաջին անգամ կովի կրակի մեջ ելած երիտասարդի երջանիկ ժպտով:

Ռոստովը կանգ առավ.

— Ա՛յ թե ինչ, — ասավ նա: — Է, ինչպե՞ս եղավ:

— Ետ մղեցինք, — աշխուժով ասավ Բորիսը, խոսելու տրամադիր: — Կարո՞ղ ես երևակայել:

Եվ Բորիսը պատմեց, թե ինչպես գվարդիան իր առջև զորք տեսնելով՝ ընդունում է այն ավստրիացիների տեղ և հանկարծ այդ զորքի արձակած ուղմբերից իմանում է, որ ինքն առաջավոր գծումն է և անսպասելի պետք է կովի մեջ մտնի: Ռոստովը մինչև վերջը Բորիսին շսեց և ձին քշեց:

— Ո՛ւր ես գնում, — հարցրեց Բորիսը:

— Նորին մեծության մոտ՝ հատուկ հանձնարարությամբ:

— Ահա՛ նա, — ասավ Բորիսը, որն այնպես լսեց, թե Ռոստովին հարկավոր է նորին բարձրությունը, նորին մեծության փոխարեն:

Եվ նա ցույց տվեց մեծ իշխանին, որ հարյուր քայլ հեռու, սաղավարտը գլխին և արտոնյալ հեծելակի կաշե բանկոնով, ուսերը բարձրացրած ու հոնքերը կիտած, պտուտով ինչ-որ բան էր ասում ավստրիական սպիտակաբազուկ ու գունատված սպային:

— Բայց դա մեծ իշխանն է, իսկ ես ուղարկված եմ գլխավոր հրամանատարի կամ թագավորի մոտ, — ասաց Ռոստովը և ուզեց ձին քշել:

— Կոմս, կոմս, — ձայն տվեց Բերգը, Բորիսի նման աշխույժ ձայնով, մյուս կողմից մոտ վազելով, — կոմս, ես աջ ձեռքս վիրավորվեցի (ասավ նա, ձեռի թաթը ցույց տալով, որ արյունոտված էր և թաշկինակով կապած) և մնացի շարքերում: Կոմս, սուրբ ձախ ձեռովս եմ բռնում. մեր ֆոն-Բերգները ցեղով ասպետներ են եղել, կոմս:

Բերգը դարձյալ ինչ-որ բան ասավ, բայց Ռոստովը, չլսելով, ձին քշեց առաջ:

Գվարդիան թողնելով ու մի դատարկ տարածություն անցնելով, Ռոստովը, նորից առաջավոր գիծը շնչկենելու համար, ինչպես հեծելակիների հարձակման ժամանակ, գնաց պահեստների գծով, բավական հեռանալով այն տեղից, ուր տեղի էր ունենում ամենասաստիկ հրացանաձգությունն ու թնդանոթաձգությունը: Հանկարծ իր առջև և մեր զորքերի ետևը, մի տեղում, ուր երբեք չէր կարելի թշնամի ենթադրել, Ռոստովը լսեց մոտիկ հրացանաձգության ձայն:

«Սա ի՞նչ կարող է լինել: — Թշնամին մեր զորքերի թիկո՞ւնքն է անցել, — մտածեց Ռոստովը և սարսափ զգաց, թե իր և թե ամբողջ ճակատամարտի ելքի համար: — Սակայն, ինչ էլ ուզում է լինի, — մտածեց նա, — հիմա այլևս կարիք չկա առաջ անցնելու համար պտույտ գործել: Ես գլխավոր հրամանատարին պետք է փնտրեմ այստեղ, և եթե ամեն ինչ կորած վերջացած է, թող ես էլ կորչեմ բոլորի հետ միասին»:

Հանկարծորեն Ռոստովին համակած վատ նախազգացումը հետզհետե ավելի էր ճշտվում, որքան ավելի առաջ էր գնում Պրաց գյուղի այն կողմն ընկած տարածության մեջ, որը բռնել էին բազմատեսակ զորքերի բազմությունները:

— Ի՞նչ է պատահել: Ի՞նչ է պատահել: Ո՞ւմ վրա են կրակում: Ո՞վ է կրակում, — հարցնում էր Ռոստովը ոռու և ավստրիացի զինվորներին, որ խառը խմբերով փախչում էին իր առջևով, իր ճանապարհը կտրելով:

— Է՛, սատանան գիտի: Բոլորին ջարդեց: Կորավ ամեն ինչ, — պատասխանում էին նրան փախչող խմբերը ոռուներեն, գերմաներեն ու չեխերեն, որոնք, Ռոստովի նման, չէին հասկանում, թե այդտեղ ինչ է կատարվում:

— Պետք է խփել գերմանացիներին, — գոռում էր մեկը:

— Է, գրողը տանի դրանց՝ դավաճաններին:

— Zum Henker diese Russen...¹ — քրթմնչաց գերմանացին:

Ճանապարհով գնում էին մի քանի վիրավորներ: Հայհույանք, գոռգոռոց, հեծեծանք խառնվել էին իրար մի ընդհանուր մոմոոցի մեջ: Հրացանաձգությունը լռեց և, ինչպես Ռոստովը հետո իմացավ, իրար վրա կրակել էին ոռու և ավստրիացի զինվորները:

«Տեր աստված, սա ի՞նչ բան է, — մտածեց Ռոստովը: — Այն էլ այստեղ, երբ թագավորն ամեն բոլոր կարող է տեսնել նրանց... Բայց ոչ, դա, երևի, մի քանի սրիկաներ են: Սա կանցնի, սա այն չի, այդ չի կարող լինել, — մտածում էր նա: — Միայն թե շուտով, շուտ անցնեմ գնամ»:

Ռոստովը չէր կարողանում հաշտվել պարտության և փախուստի մտքին: Թեև ֆրանսական թնդանոթներ ու զորքեր տեսավ Պրացի սարի վրա (հենց այն սարի վրա, ուր հրամայված էր գտնել գլխավոր հրամանատարին), նա չէր կարողանում և չէր ուզում հավատալ դրան:

XVIII

Ռոստովին հրամայված էր Կուտուզովին ու թագավորին փնտրել Պրաց գյուղի մոտերքը: Բայց այստեղ ոչ միայն նրանք չկային, չկար և ոչ մի զորապետ, այլ կային քայքայված զորքերի տարբեր բազմություններ: Նա քշեց իր արդեն հոգնած ձին, որքան կարելի է շուտ այս ամբոխից դուրս գալու, բայց որքան առաջ էր գնում, ամբոխն այնքան խառնճաղանճ էր դառնում: Երբ դուրս եկավ մեծ ճանապարհը — տեսավ այդտեղ խոնվել են ամեն տեսակի կառքեր ու սայլեր, ոռու և ավստրիացի զինվորներ՝ ամեն տեսակ զորքից, վիրավորներ և ոչ վիրավորներ: Այս բոլորն աղմուկով և իրար խառնված առաջ էին շարժվում Պրացի բարձունքներին դրված ֆրանսական մարտկոցներից եկող ուժերի ահեղ բոմբյունների ներքո:

— Որտե՞ղ է թագավորը, որտե՞ղ է Կուտուզովը, — հարց-

¹ Գրողը տանի ոռուներին...

նում էր Ռոստովը բոլորին, ում կսրոպանում էր կանդեցնել, ու ոչ մեկից չէր կարողանում պատասխան ստանալ:

Վերջապես, մի գինվորի օձիք բռնելով, ստիպեց պատասխանել իրեն:

— Է՛, ախպերս: Նրանք բոլորը վազուց էնտեղ են, ճղեցին, — ասավ գինվորն ինչ-որ բանի վրա ծիծաղելով և Ռոստովի ձեռից դուրս պրծնելով:

Քողնելով այդ գինվորին, որն, ակներև, հարբած էր, Ռոստովը կանգնեցրեց մի կարևոր անձնավորություն սպասյակի թե բերեյտորի (Յիավարժ) ձին և սկսեց հարցուփորձել: Սպասյակը Ռոստովին հայտնեց, թե մի ժամ առաջ թագավորին կառքով ամենայն արագություն տարան այս ճամփով, և թե թագավորը ծանր վիրավորված է:

— Չի կարող պատահել, — ասավ Ռոստովը, — երևի, ուրիշ մեկն է եղել:

— Իմ աչքով տեսա, — ասավ սպասյակն ինքնավստահ բաժիժազուգով: — Ես որ շճանաչեմ թագավորին, էլ ով պիտի ճանաչի. Պետերբուրգում քանի անգամ այ էսպես եմ տեսել: Գուցնը գցած, սիրթնած նստած էր կառիժում: Չորս սև ձի էր լծած. եկան գոռոզալով անցան. ևս որ թագավորական ձիերին ու Իլյա Իվանիչին շճանաչեմ, էլ ով պիտի ճանաչի. կարծեմ՝ կառապան Իլյան մենակ թագավորի կառքն աքշում ու ոչ թե ուրիշներ:

Ռոստովը թողեց դրան և ուզեց գնալ առաջ: Մտտից անցնող մի վիրավոր սպա դիմեց նրան:

— Դուք ո՞ւմ եք փնտրում, — հարցրեց նա: — Գլխավոր հրամանատարի՞ն: Ռումբն սպանեց նրան մեր գնդում.

— Սպանված չէ, վիրավորված է, — ուղղեց մի ուրիշ սպա:

— Ո՞վ, Կուտուզովն է վիրավորված, — հարցրեց Ռոստովը:

— Կուտուզովը չէ, ինչպես էր նրա անունը, — է, բոլորը մեկ է, միևնույն է, կենդանի քիչ մարդ է մնացել: Այ գնացեք այնտեղ, այն գյուղի կողմը, բոլոր զորապետները հավաքված են այնտեղ, — ասավ այդ սպան, Գոստիերադեկ գյուղը ցույց առալով, ու անցավ-գնաց:

Ռոստովը քայլով առաջ գնաց, շիմանալով, թե ո՛ւր է գեռւմ և ո՛ւմ է փնտրում: Թագավորը վիրավորված է, ճակատաժարտը տանուլ տրված: Այլևս անկարելի էր դրան շճավատալ: Ռոստովը գնաց ցույց տրված ուղղութեամբ, ուր հեռվում երևւում էր մի աշտարակ ու մի եկեղեցի: Էլ ո՞ւր է շտապում: Հիմա էլ ի՞նչ պիտի ասի թագավորին ու Կուտուզովին, եթե նույնիսկ նրանք ողջ լինեն և առողջ:

— Չերդ ազնվություն, էս ճամփով գնացեք, թե չէ էդպես կսպանեն. — ձայն տվեց նրան մի գինվոր: — Էդպես կսպանեն՞ն:

— Օ՛, ի՞նչ ես ասում, — ասավ մի ուրիշը: — Էնպես ո՞ւր է գնում: Էսպես ավելի մոտ է:

Ռոստովը մի րոպե մտածեց ու գնաց հենց այն ուղղութեամբ, ուր, գինվորների ասելով, պիտի սպանեին:

«Հիմա միևնույն է. երբ թագավորն արդեն վիրավորված է, ես իմ անձը պիտի պահպանեմ», մտածեց նա: Հասավ մի տարածություն, ուր շատ մարդ էր սպանվել՝ Պրացից փախչելիս: Ֆրանսացիներն այդ տեղը դեռ չէին գրավել, իսկ ռուսները, ովքեր կենդանի էին մնացել կամ վիրավոր, այդտեղից վազուց էին հեռացել: Դաշտում, ամեն մի դեսյատինաչափ տարածության վրա, ինչպես լավ արտի խուրձեր, ընկած էին տաս-տասնուհինգ սպանվածներ, վիրավորներ: Վիրավորները երկու-երկու, երեք-երեք սողում էին միասին, և լավում էր նրանց անհաճո, երբեմն, ինչպես Ռոստովին էր թվում, կեղծ աղաղակներն ու հեծեծանքները: Ռոստովը ձիու քայլերն արագացրեց՝ այս մարդկանց տառապանքները շտեմնելու համար, ու վախ դգաց: Վախեցավ ոչ թե իր կյանքի համար, այլ այն արիության համար, որ պետք էր իրեն, և որը, գիտեք, չէր կարող տանել այս դժբախտների տեսքը:

Ֆրանսացիները, որ դադարեցրել էին կրակը սպանվածներով ու վիրավորներով ծածկված այդ դաշտի ուղղութեամբ, — որովհետև նրա վրա այլևս կենդանի մարդ չկար, — ձիավոր աղյուտանտին տեսնելով՝ թնդանոթն ուղղեցին նրա կողմը և մի քանի ռումբ արձակեցին: Այս սուլող, ահարկու ձայները և շրջապատող մեռելները սարսափելի տպավորություն արին Ռոստովի վրա և սրտում կարեկցություն զարթեցրին դեպի իրեն: Հիշեց մոր վերջին նամակը: «Ինչ կզգար նա, եթե հիմա

տեսներ ինձ այստեղ, այս դաշտում և ինձ վրա ուղղած թըն-
գանոթները», մտածեց Ռոստովը:

Գոստիերոզի գյուղում թեև խառնված, բայց բարեկարգ
ոռու գործեր կային, որոնք հեռանում էին ճակատամարտի
դաշտից: Ֆրանսական ուժերն այստեղ չէին հասնում այլևս,
և հրացանաձգության ձայները թվում էին հեռավոր: Այստեղ
բոլորն արդեն պարզ տեսնում և ասում էին, թե ճակատա-
մարտը տանու է տրված: Ում էլ դիմում էր Ռոստովը, ոչ ոք
չէր կարողանում ասել, թե ո՛ւր է թագավորը, ո՛րտեղ է Կու-
տուզովը: Ոմանք ասում էին, թե թագավորի վիրավորվելու
լուրը ճիշտ է, մյուսներն ասում էին — ո՛չ, և այդ սուտ տա-
րածված լուրը բացատրում էին նրանով, թե, իրոք, թագավորի
կառեթով կովի դաշտից ետ է գնացել սփրթնած ու վախեցած
օբեր-հոֆմարշալ կոմս Տոլստոյը, որ կայսեր շքախմբի հետ
եկել էր կովի դաշտը: Մի սպա Ռոստովին ասավ, թե գյուղի
այն կողմը, դեպի ձախ, տեսել է բարձրագույն հրամանատար-
ներից մեկին, և Ռոստովը գնաց այն կողմը, այլևս հույս չու-
նենալով, թե կգտնի որևէ մեկին, այլ միայն նրա համար,
որ ինքն իր խղճի առաջ արդար լինի: Երեք վերստ գնալով և
ոռուսական վերջին գործերն անցնելով, խրամատով շրջապատ-
ված մի բանջարանոցի մոտ՝ Ռոստովը տեսավ խրամատի
դեմը կանգնած երկու ձիավոր: Մեկը, որ գլխարկի վրա ճերմակ
ցցունք ուներ, Ռոստովին ծանոթ թվաց. մյուսը, անծանոթ
հեծվորը, իր սքանչելի շիկակարմիր ձիով (այդ ձին Ռոստովին
ծանոթ թվաց) մոտեցավ փոսին, խթանեց ձիուն և, սանձը
թողնելով, հեշտությամբ թռավ-անցավ բանջարանոցի առ-
վից: Միայն ձիու ետին ոտները մի քիչ հող թափեցին հողաթըմ-
բից: Ձին դարձնելով՝ նա նորից անցավ փոսը և հարգանքով
գիմեց ցցունազարդ գլխարկով ձիավորին, ակներև, առաջար-
կելով նրան՝ անել նույնը: Ձիավորը, որի կերպարանքն Ռոս-
տովին ծանոթ թվաց և, չգիտես ինչու, ակամա գրավեց նրա
ուշադրությունը, գլխով ու ձեռով բացասական շարժում
արավ, և այդ շարժումից Ռոստովն իսկույն ճանաչեց իր պաշ-
տելի թագավորին, որին ողբում էր քիչ առաջ:

«Բայց սա չի կարող նա լինել, այս ամայի դաշտի մեջ մե-
նակ», մտածեց Ռոստովը: Այդ միջոցին Ալեքսանդրը գլուխը
գարձրեց, և Ռոստովը տեսավ իր հիշողության մեջ կենդանի

տպավորված սիրելի դիմագծերը: Թագավորը գունատ էր,
այտերն ու աչքերը փոս էին ընկել. բայց դիմագծերն այդպես
ավելի գրավչություն և հեզություն էին ստացել: Ռոստովն
իրեն երջանիկ զգաց, համոզվելով, որ թագավորի վիրավոր-
վելու լուրը ճիշտ չէր: Նրան տեսնելով իսկ երջանիկ էր: Գիտեր,
որ կարող է, նույնիսկ պարտավոր է ուղղակի դիմել նրան և
հայտնել Դուգորովի պատվերը:

Բայց ինչպես սիրահար պատանին առաջին հանդիպումին
դողում է և կարմրում, չհամարձակվելով պատմել իր անբուն
գիշերն՝ իր երազները, ու աղջկա կողքին կանգնած, վախեցած
շուրջն է նայում, փնտրելով բացատրությունը հետաձգելու և
փախուստի հնարավորություն, երբ հասել է ցանկալի բոպեն
և նա կանգնած է մենակ՝ իր սիրելիի հետ. այնպես էլ Ռոստովն
այժմ աշխարհի մեջ իր ամենամեծ նպատակին հասնելով,
չգիտեր ինչպես մոտենա թագավորին, և հազար ու մի ենթա-
դրություններ էր անում, թե ինչու՞ և այդ անհարմար է, ան-
պատշաճ ու անկարելի:

«Ի՞նչպես: Կարծես ուրախ եմ՝ օգտվել առիթից, որ նա
մենակ է ու վհատության մեջ: Տխրության ու վշտի այս
վայրկյանին անծանոթ մեկը կարող է նրան անախտո՞ւ ու ծանր
թվալ. հետո ի՞նչ կարող եմ ասել նրան հիմա, երբ նրան նա-
յելուց իսկ սիրտս մարում է և լեզուս շոբանում»: Երևակայու-
թյան մեջ, թագավորին դիմելու համար, պատրաստած բազ-
մաթիվ ճառերից և ոչ մեկը չէր հիշում հիմա: Այդ ճառերը
մեծ մասամբ ասվելու էին այլ պայմաններում, մեծ մասամբ
հաղթության բոպեններին և առավելապես ստացած վերքերից
մեռնելու ժամին, այն վայրկյանին, երբ թագավորը շնորհա-
կալություն պիտի հայտնեք նրան՝ ցույց տված հերոսության
համար, և ինքը, մեռնելով, պիտի արտահայտեր զործով ասա-
ցուցած իր սերը:

«Հետո ի՞նչ պիտի հարցնեմ թագավորին՝ աչ զորաթևին
հրաման տալու մասին, երբ իրիկվա ժամի 4-ն է արդեն, և
ճակատամարտը տանուլ տված: Ոչ, չպետք է մոտենամ նրան,
բոլորովին: Չպետք է խանգարեմ նրա մտածումները: Հազար
անգամ մեռնելն ավելի լավ է, քան թե նրա վատ հայացքի՝
վատ կարծիքին արժանանալը, — որոշեց Ռոստովը և տխրու-
թյամբ ու հուսահատությունը սրտում հեռացավ, շարունակ

ետ դառնալով ու նայելով թագավորին, որ տակավին մնացել էր նույն անվճռական դիրքում:

Այն պահին, երբ Ռոստովն այս ենթադրութիւններն անելով՝ տիրութեամբ հեռանում էր թագավորից, կապիտան Փոն-Տոլը պատահաբար եկավ այդ նույն տեղը և, թագավորին տեսնելով, մտեցավ ուղղակի. իր ծառայութիւնն առաջարկեց և օգնեց ոտքով առուն անցնելու: Թագավորը կամենալով հանգստանալ և իրեն մի փոքր տկար զգալով, նստեց խնձորենու տակ, և Տոլը կանգնած մնաց նրա մոտ: Ռոստովը հեծից նախանձով ու զոջումով տեսավ, թե ինչպես Փոն-Տոլը երկար ու տաք-տաք խոսում էր թագավորի հետ, ինչպես թագավորն, ըստ երևույթին, լաց լինելով, աչքերը ծածկեց ձեռով ու սեղմեց Տոլի ձեռքը:

«Նրա փոխարեն ես կարող էի լինել», մտածեց Ռոստովը հազիվ պահելով ափսոսանքի արցունքները և թագավորին խղճալով, բոլորովին հուսահատ հեռացավ, շիմանալով, թե ո՛ւր է գնում և ինչո՛ւ:

Նրա հուսահատութիւնը սաստկանում էր մանավանդ այն պատճառով, որովհետև զգում էր, որ իր վշտի պատճառը իր սեփական թուլութիւնն է:

Նա կարող էր... ոչ միայն կարող էր, այլև պարտավոր էր մոտենալ թագավորին: Եվ դա միակ առիթն էր՝ իր նվիրվածութիւնը թագավորին ցույց տալու: Եվ ինքն այդ առիթը շօգ-տագործեց... «Ի՛նչ արի ես», մտածեց նա: Եվ նա ձիու գլուխը շփեց ու սլացավ դեպի այն տեղը, ուր տեսել էր կայսեր. բայց ձիուսի այն կողմն այլևս մարդ չկար: Սայլեր ու կառքեր էին անցնում միայն, Ռոստովը մի պաշարակիր զինվորից իմացավ, որ Կուտուզովի շտաբը գտնվում է մոտակա գյուղում, ուր գնում էին մթերակիր սայլերը: Ռոստովը հետևեց դրանց:

Առջևից գնում էր Կուտուզովի ձիապանը, տանելով սթարներով ծածկված ձիերին: Զիապանի ետևից գնում էր մի սայլ, սայլի ետևից մի ծուռ ոտներով ձերուսի ճորտ ծառա՝ կարտուլը գլխին, կիսամուշտակը հագին:

— Տիտ, ա՛յ Տիտ, — ասավ ձիապանը:

— Ի՛նչ ա, — ցրված հարցրեց ձերուսին:

— Տիտ, գնա բանիդ:

— Խ, հիմար, թո՛ւ, — բարկացած թքելով՝ ասավ ձերուսին:

Բավական տեղ գնացին անխոս, և նույն կատակը կրկնվեց նորից:

Իրիկվա ժամը հինգին մերոնք պարտութիւն կրեցին բոլոր ռազմակետերում: Հարյուրից ավելի թնդանոթներ ընկան Ֆրանսացիների ձեռքը:

Պրծեբիշևսկին իր զորաբանակով գնեքը վաթ դուրս: Մյուս զորասյունները, իրենց կիսից ավելին կորցրած, նահանջում, էին անկարգ, իրար խառնված բազմութիւններով:

Լանժերոսի և Դոխտուրովի զորամասերի մնացորդները իրար խառնված, կուտակվել էին Աուգեստա գյուղի լճակների ամբարտակների վրա ու ափերին:

Ժամը 6-ին Աուգեստա ամբարտակի մոտ լավում էր միայն Ֆրանսացիների սաստիկ թնդանոթածգութիւնը. նրանք Պըրացի բարձունքների վայրէջքին շարել էին բազմաթիվ մարտկոցներ և ուբակոծում էին մեր նահանջող զորքերը:

Վերջապահում Դոխտուրովն ու մյուսները, գումարտակները հավաքելով, պաշտպանվում էին Ֆրանսական հեծելազորից, որ հետապնդում էր մերոնց: Սկսեց մթնածոռել: Աուգեստի նեղլիկ ամբարտակի վրա, ուր երկար տարիներ ձերուկ-ջրաղացպանը հանգիստ նստում էր կառիթը ձեռին, իսկ նրա թոռը, վերնաշապիկի թևքերը քշտած, խաղում էր դուլլում թպրրտացող ձկան հետ. այդ ամբարտակի վրա, որով բոլորտ փափախով և կապույտ բաճկոն հագած մորավները իրենց զույգ եղներով, ցորենաբարձ սայլերը խաղաղ բերում էին ջրաղաց, և այլաթաթախ ու սպիտակած սայլերով վերադառնում նույն ամբարտակով, — այդ նեղ ամբարտակի վրա այժմ՝ մթերակիր սայլերի ու թնդանոթների արանքում, ձիերի և անիվների արանքում խմբվել էին մահվան երկյուղից այլափոխված մարդիկ, որ միմյանց ճնշելով, անցնելով մահացողների վըրայից, իրար մեռցնում, ոտնակոխ էին անում նրա համար միայն, որպեսզի մի քանի քայլ անելուց հետո, իրենք ճիշտ նույնպես սպանվեն:

Յուրաքանչյուր տասը վայրկյանը մի անգամ մի ումբ կամ նոնակ, օղը ճնշելով, գալիս պայթում էր այս խիտ ամբարտակի:

մէջ, սպանում մարդկանց և արյունաթաթախ անում մոտիկ գանձողներին: Այստեղ էր ձեռից վիրավորված հետիոտն Դոլոխովը իր վաշտի (նա արդեն սպայի աստիճան էր ստացել) տասի շափ գինվորի հետ և նրա գնդի հրամանատարը՝ ձի նըստած. այս էր նրանց ամբողջ գնդի մնացորդը: Ամբոխի հոսանքով տարված՝ նրանք սեղմվել էին ամբարտակի մուտքի առաջ և, ամեն կողմից ճնշված, կանգ էին առել, որովհետև առջևում մի ձի էր ընկել, թնդանոթի տակ, և մարդիկ աշխատում էին դուրս քաշել նրան: Նրանց ետև ուումբն սպանեց ինչ-որ մեկին, մի ուրիշն ընկավ իրենց առջև և արյան շիթեր ցանեց Դոլոխովի վրա: Ամբոխը հուսահատ առաջացավ, սեղմվեց, մի քանի քայլ արավ և նորից կանգ առավ:

Յուրաքանչյուրը մտածում էր, եթե հարյուր քայլ էլ առաջ գնա, անշուշտ, կփրկվի, իսկ եթե երկու բաշկ էլ մնա, կորած է անկասկած:

Դոլոխովն ամբոխի մեջտեղից դուրս եկավ, նետվեց ամբարտակի ծայրն ու վազեց կանգնեց լճակի երեսը բռնող սառցի վրա:

— Թնդանոթն այս կողմը դարձրեք, — ձայն տվեց նա, թռչկոտելով սառցի վրա, որը ճռճում էր նրա ոտների տակ, — դարձրեք դեպը: Դիմանում է...

Սառույցը պահում էր նրան, բայց ճկում էր և ճռճում, և պարզ էր, որ ոչ միայն թնդանոթին ու ժողովրդի բազմությանը չէր դիմանա, այլև հենց իր Դոլոխովի ծանրության տակ խորտակվելու էր անմիջապես: Մարդիկ նայում էին նրան և սեղմվում ափին, սիրտ շանելով ոտ դնել սառույցի վրա: Գնդի հրամանատարը, որ ձին նստած-կանգնած էր ամբարտակի մուտքի առաջ, ձեռը բարձրացրեց և բերանը բաց արավ՝ Դոլոխովին բան ասելու: Հանկարծ ամբոխի գլխավերև, շատ ցած, մի ուումբ շաշեց. բոլորը գլուխները կացրին: Ինչ-որ մի բան շրպպաց, գններալն իր ձիու հետ ընկավ արյան մեջ: Ոչ ոք չնայեց գններալին, ոչ ոք չմտածեց նրան տեղից բարձրացնելու:

— Գնացե՛ք սառույցի վրա, գնացե՛ք սառույցով: Գնացե՛ք, չեք լսո՛ւմ: Գնացե՛ք, — հանկարծ, գններալին գիպչող ումբից հետո, լավեցին բազմաթիվ ձայներ, իրենք էլ չէին իմանում, թե ինչո՛ւ էին ճշում:

Ծուրը գտնվող թնդանոթներից մեկը, որ ուզում էր տեղավորվել ամբարտակի վրա, բռնեց դեպի սառույցը: Զինվորների խմբերը ամբարտակից վազեցին դեպի սառած լիճը: Առաջ անցած զինվորներից մեկի ոտի տակ սառույցը ճաքեց և գինվորի մի ոտն ընկավ ջուրը, նա ուզեց իրեն հավաքել, բայց մինչև գոտկատեղը խրվեց: Մոտիկ կանգնած զինվորները կանգ առան, թնդանոթը վարող զինվորը կանգնեցրեց իր ձիերը, բայց ետևից դեռ աղաղակում էին. «Գնացե՛ք սառույցով, ի՛նչ եք կանգնել, գնա՛ցեք, գնացե՛ք»: Ու բազմության մեջ լավում էին սարսափի ճիչեր: Թնդանոթը շրջապատող զինվորները բշտում, խփում էին ձիերին, որ թեքվեն, գնան սառույցով: Զիերը ափից շարժվեցին դեպի սառույցը: Հանկարծ, հետիոտն զինվորների տակ գտնվող սառույցը կտրվեց և վրան գտնվող քառասուն հոգին նետվեցին ետ ու առաջ, իրար ջրերի մեջ գցելով:

Ռումբերը շարունակում էին նույն համաշափությամբ շաշել ու խփել սառույցին, ջրին և մանավանդ ամբարտակը, լճակն ու ափը ծածկող բազմության:

XIX

Պրացի սարի վրա, հենց այնտեղ, ուր ընկավ նա դրոշակը ձեռին, պառկած էր իշխան Անդրեյ Բալկոնսկին, արյունաքամ լինելով, և ինքն էլ այդ շիմանալով, հեծեծում էր կամացուկ ու մանկան ողբագին հեծեծանքով:

Նրեկոյան դեմ նրա հեծեծանքը դադարեց և նա բոլորովին լռեց: Զգիտեր որբան երկար տևեց իր ինքնամոտացումը: Հանկարծ իրեն նորից ողջ զգաց և դրա հետ միասին՝ մի տանջող ու այրող գլխացավ:

«Ո՛ւր է նա, այն բարձր երկինքը, որ չէր տեսել մինչև այժմ և տեսավ քիչ առաջ», եղավ նրա առաջին մտածությունը: «Այս տանջանքը նույնպես չէի զգում, — մտածեց նա: — Այո, ես ոչինչ, ոչինչ չեմ իմացել մինչև այժմ: Բայց որտե՞ղ եմ»:

Նա սկսեց ականջ դնել, ու լսեց մոտեցող ձիերի ոտնատրոփ և ֆրանսերեն խոսակցություն: Իշխան Անդրեյն աչքերը բաց արավ: Նրա գլխավերևը դարձյալ նույն բարձր երկինքն էր՝ ավելի ևս բարձր լույացող ամպերով, որոնց միջից տեսնու-

վում էր կապուլտին տվող անսահմանութունը: Նա գլուխը չթեքեց և շտեսավ նրանց, ովքեր, — ինչպես կարելի էր ենթադրել սմբակների ու ձայների աղմուկից, — մտեցան իրեն ու կանգ առան:

Մտեցող ձիավորները — Նապոլեոնը և իր երկու աղյուտանտն էին: Բռնապարտը, ճակատամարտի դաշտը շրջելով, տալիս էր իր վերջին հրամանները՝ Աուգիստի ամբարտակն ուժակոծող մարտկոցն ուժեղացնելու վերաբերմամբ, և դիտում էր սպանվածներին ու կովի դաշտում մնացած վիրավորներին:

— De beaux hommes!¹ — ասավ Նապոլեոնը, նայելով սպանված ուս գրենադերին, որ երեսը հողի մեջ խրած և ծոծրակը սևացած պտուկել էր փորի վրա, փայտացած ձեռք իրենից հեռու պարզած:

— Les munitions des pièces de position sont épuisées, sire!² — ասավ այդ միջոցին աղյուտանտը, որ գալիս էր Աուգեստն ուժակոծող մարտկոցից:

— Faites avancer celles de la réserve³, — ասավ Նապոլեոնը ու, մի քանի քայլ առաջ գնալով, կանգ առավ իշխան Անդրեյի գլխավերև, որ պտուկած էր մեջքի վրա, դրոշակի ձողը կողքին (դրոշակն արդեն, որպես հաղթանիշ, տարել էին Ֆրանսացիք):

— Voilà une belle mort⁴, — ասավ Նապոլեոնը, Բալկոնսկուն դիտելով:

Իշխան Անդրեյը հասկացավ, որ այդ խոսքերն իրեն են վերաբերում և որ այդ ասողը Նապոլեոնն է: Նա լսեց, թե ինչպես sire⁵ էին կոչում այդ խոսքերն ասողին: Բայց նա այդ խոսքերը լսեց այնպես, ինչպես ճանճի տզզոցը կլսեր: Նա զննեց միայն չհետաքրքրվեց նրանցով, այլ և շնկատեց էլ, ու անմիջապես մոռացավ նրանց: Նրա գլուխն այրվում էր. զգում էր որ արյունաքամ է լինում, և իր գլխավերև տեսնում էր միայն

հետու-հետու, բարձր ու հավերժական երկինքը: Նա գիտեր, որ դա Նապոլեոնն է — իր հերոսը, բայց այդ վայրկյանին Նապոլեոնը նրան թվում էր փոքրիկ, շնչին մի մարդ՝ համեմատությամբ այն բանի, ինչ կատարվում էր իր հոգու և այս բարձր, լողացող ամպերով անհուն երկնքի միջև: Այդ րուպին նրա համար բոլորովին մեկ էր, թե ո՞վ է կանգնած իր գլխավերև, ինչ են խոսում իր մասին. ուրախ էր միայն, որ մարդիկ կանգ են առել իր մոտ, և կուզեր միայն, որ այդ մարդիկ օգնեն իրեն և կյանք տան, կյանք, որ այնքան սքանչելի էր թվում նրան, որովհետև այժմ բոլորովին այլ կերպ էր ըմբռնում այն: Նա հավաքեց իր բոլոր ուժերը, որպեսզի շարժվի և մի որևէ ձայն հանի: Թույլ կերպով շարժեց ոտը և արձակեց մի թույլ, հիվանդագին հեծեծանք, որից ինքն իսկ խղճահարվեց:

— Ա՛, ողջ է, — ասավ Նապոլեոնը: — Վերցրեք այս երիտասարդին, ce jeune homme, և տարեք վիրակապուլտյան կայանը:

Այս ասելով Նապոլեոնը գնաց դեպի մարշալ Լանը, որ գլխարկը հանած, ժպտալով և հաղթութունը շնորհավորելով մոտենում էր կայանը:

Իշխան Անդրեյն այնուհետև բան չէր հիշում. պատգարակի վրա դնելու սարսափելի ցավերից, փոխադրության ցնցումներից և վիրակապուլտյան կայանում վերքը գննելուց — նա գիտակցութունը կորցրեց: Ուշքի եկավ միայն երեկոյան դեմ, երբ նրան, մյուս վիրավոր ու գերի ուս սպաներին միացնելով, տարան հիվանդանոց: Այս փոխադրության միջոցին նա փոքրին թարմացած զգաց իրեն և կարողացավ շուրջը նայել և մինչև իսկ խոսել:

Առաջին խոսքերը, որ լսեց ուշքի գալիս — դա Ֆրանսացի ուղեկցորդ սպայի խոսքերն էին:

— Պետք է այստեղ կանգ առնել. կայսրը հիմա պիտի անցնի. նա բավականութուն կզգա այս գերի պարոններին տեսնելով:

— Այսօր գերիներն այնքան շատ են, համարյա ամբողջ ուս բանակը գերի է. այնպես որ, նա, երևի, ձանձրացած կլինի, — ասավ մի ուրիշ սպա:

— Այնուամենայնիվ: Այս մեկը, ասում են, Ալեքսանդր կայսեր ամբողջ գվարդիայի հրամանատարն է, — ասավ առա-

¹ Գեղեցիկ տղամարդիկ:

² Մարտկոցային ուժերը այլևս չկան, ձեռք մեծութուն:

³ Հրամայեցեք պահեստի ուժերից բերեն:

⁴ Ահա մի գեղեցիկ մահ:

⁵ Ձերդ մեծութուն:

չին սպան, ցույց տալով արտոնյալ հեծգնդի ճերմակ նշանազգեստով ոռու վիրավոր սպային:

Բալկոնակին ճանաչեց իշխան Ռեպնինին, որին հանդիպել էր Պետերբուրգի բարձր շրջաններում: Նրա կողքին կանգնած էր մի ուրիշը — 19 տարեկան մի տղա, նույնպես արտոնյալ հեծգնդի վիրավոր սպա:

Բռնապարտը մոտեցավ քառամբակ ու ձին կանգնեցրեց:

— Ո՞վ է ավագագուլնը, — հարցրեց նա, գերիններին տեսնելով:

Ասին՝ գնդապետ իշխան Ռեպնինը:

— Դո՞ւք եք Ալեքսանդր կայսեր արտոնյալ հեծգնդի հրամանատարը, — հարցրեց Նապոլեոնը:

— Ես հեծվաշտի հրամանատար էի, — պատասխանեց Ռեպնինը:

— Ձեր գունդը պատվով կատարեց իր պարտքը, — ասավ Նապոլեոնը:

— Մեծ զորավարի գովեստը զինվորի համար լավագույն պարգևն է, — ասավ Ռեպնինը:

— Այդ գովեստը տալիս եմ սիրով, — ասավ Նապոլեոնը: —

Ո՞վ է ձեր կողքի երիտասարդը:

Իշխան Ռեպնինը տվեց տեղակալ սպա Սուխտելենի անունը:

Նրան նայելով՝ Նապոլեոնը ժպտալով ասավ.

— Il est venu bien jeune se fortter à nous¹.

— Ջահելությունը չի խանգարում քաջ լինելուն, — խոսեց Սուխտելենին ընդհատվող ձայնով:

— Սքանչելի պատասխան, — ասավ Նապոլեոնը: — Երիտասարդ, դուք շատ առաջ կերթաք:

Իշխան Անդրեյը, որին (գերի հաղթանիշների պատկերը լիակատար դարձնելու համար) ցուցադրել էին առջևում՝ կայսերն ի տես, չէր կարող նրա ուշադրությունը չգրավել: Նապոլեոնն, ըստ երևույթին, հիշեց որ նրան տեսել է դաշտում և, նրան դառնալով, գործածեց այն երիտասարդ բառը, — jeune homme, որով Բալկոնակին առաջին անգամ սպավորվել էր նրա հիշողության մեջ:

— Et vous, jeune homme? է, իսկ դո՞ւք, երիտասարդ, — դարձավ Նապոլեոնը նրան՝ ի՞նչպես եք զգում ձեզ, mon brave?

Ջնայած, որ հինգ րոպե առաջ իշխան Անդրեյն իրեն փոխադրող զինվորներին կարող էր մի քանի խոսք ասել, բայց հիմա, աչքերը հառելով Նապոլեոնի վրա, լուռ էր... Նրան այդ վայրկյանից այնքան շնչին էին թվում Նապոլեոնին ըզրաղեցնող խնդիրները, այնքան մանր, աննշան էր թվում նրան իր հերոսը՝ իր մանր սնափառությամբ և հաղթության ուրախությամբ — համեմատած այն բարձր, արդար ու բարի երկրնքի հետ, որը տեսնում էր, — և հասկացավ, որ ինքը չի կարող պատասխանել նրան:

Սվ առհասարակ նրան ամեն ինչ թվում էր անօգուտ ու շքնչին՝ համեմատած մտքերի այն վեհ ու հոյակապ աշխարհի հետ, որ առաջացրել էին նրա մեջ արյունաքամությունը, ուժասպառությունը, տառապանքը և մոտալուտ մահը: Նայելով Նապոլեոնի աչքերին՝ իշխան Անդրեյը մտածում էր փառքի ու մեծության ոչնչության մասին, կյանքի ոչնչության մասին, կյանքի, որի նշանակությունը ոչ ոք չի կարողացել հասկանալ, և՛ մանավանդ՝ մահվան ոչնչության մասին, որի իմաստն ապրողներից ոչ ոք չի կարողացել հասկանալ ու բացատրել: Կայսրը, պատասխան չստանալով, երեսը շփեց և, հեռանալով, դիմեց իր զորապետներից մեկին.

— Թող հոգ տանեն այս պարոնների մասին և տանեն իմ բացօթյակը. և թող իմ բժիշկը՝ Լաոնյը քննի սրանց վերքերը: Ցտեսություն, իշխան Ռեպնին, — և նա, ձին շարժելով, քառատրոփ հեռացավ:

Նրա դեմքը փայլում էր ինքնագոհությունից ու երջանկությունից:

Իշխան Անդրեյին փոխադրող զինվորները վերցրել էին նրա ոսկյա սրբապատկերը, որ իշխանադուստր Մարիան էր կախել եղբոր կրծքին. բայց տեսնելով կայսեր գերինների հանդեպ ցույց տված սիրալիր ու բարեհամբույր վերաբերմունքը, շտապեցին սրբապատկերը վերադարձնել:

Իշխան Անդրեյը շտեմավ, թե ո՞վ և ի՞նչպես նորից կապեց այն իր վզին, բայց հանկարծ նկատեց ոսկյա շղթայով սրբապատկերը կրծքին, մոռնդիրի վրայից կախված:

¹ Այսքան փոքր եք և այժմյանից ուղում եք մեզ հետ շփվել:

լավ կլինենր, — մտածեց իշխան Անդրեյը, և այնչով այդ սրբապատկերին, որ այնպես շերմեռանդութեամբ քույրը կախել էր իր կրծքին. — լավ կլինենր, եթե ամեն ինչ այնպես պարզ ու հասարակ լինենր, ինչպես իշխանազուտոր Մարիային է թվում այդ: Որքան լավ կլինենր, եթե մարդ իմանար, թե ո՛ր կարելի է օգնութիւն գտնել այս կյանքում և ինչ կարելի է սպասել դրանից հետո այնտեղ, հանդերձ ի կյանքում: Որքան երջանիկ ու հանգիստ կլինեի ես, եթե կարողանայի հիմա ասել. — Տեր, ողորմյա ինձ... Բայց ո՛ւմ կարող եմ ասել այդ: Դա կա՛մ մի ուժ է — անորոշ, անհասանելի, որին ոչ միայն դիմել չեմ կարող, այլև որը չեմ կարող խոսքերով արտահայտել, — մեծ ամբողջը կամ ոչինչ, — ասում էր նա ինքն իրեն, — կա՛մ թե դա այն աստվածն է, որը կարված է ահա այստեղ, այս սպրկուկի մեջ իշխանազուտոր Մարիայի ձեռքով: Ոչինչ, ոչինչ չկա հաստատ, բացի այն ամենի ոչնչութիւնից, որ ես հասկացել եմ, և բացի ինչ-որ անհասկանալի, բայց կարևորագույնի վեհութիւնից:

Պատգարակները շարժվեցին: Յուրաքանչյուր շարժումից նա դարձյալ անտանելի ցաւեր էր զգում. տենդային վիճակը սաստկանում էր, և նա սկսել էր զառանցել: Նրա խոկումները հոր, կնոջ, քրոջ և ասպզա որդու մասին և այն խանդաղատանքը, որ նա զգում էր ճակատամարտի նախօրեին՝ գիշերը, փոքրիկ, աննշան Նապոլեոնի կերպարանքը, և այդ բոլորից վեր ծավալվող բարձր երկինքը կազմում էին նրա տենդային մտապատկերների գլխավոր հիմքը:

Նրան պատկերանում էր անդորր կյանք և խաղաղ ընտանեկան երջանկութիւն իսիյե Գորիում: Նա արդեն վայելում էր այդ երջանկութիւնը, երբ հանկարծ հայտնվում էր փոքրիկ Նապոլեոնն իր անտարբեր, սահմանափակ և ուրիշների զրգրախտութեամբ երջանիկ նայվածքով, ու սկսվում էին տարակուսանքներ, տանջանքներ, և միայն երկինքն էր անդորրութիւն խոստանում: Առավոտյան դեմ բոլոր խոկումներն ու մտապատկերները խառնվեցին ու միաձուլվեցին այն անհուշութեան ու ինքնամոռացութեան քառսի ու խավարի մեջ, որոնք, Նապոլեոնի բժիշկ Լաոնյի հավանական ենթադրու-

թեամբ, ավելի շուտ պետք է վերջանային մահով, քան ապաքինումով:

C'est un sujet merveux et bilieux, — ասավ Լաոնյը, — Il n'en rechappera pas!

Իշխան Անդրեյը, մյուս անհուսալի վիրավորների հետ միասին, հանձնվեց բնակիչների խնամքին:

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ

12
F u y u p p m J m l l l l p
F u l n J u y p m J m l l l l p

Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս

1

էջ. 27 Վեպի ամբողջ առաջին հատորը նվիրված է ռուս-Ֆրանսական արտասահմանյան 1805 թ. պատերազմին, որը վերջանում է Աուստրիայի ճակատամարտով: Այս հատորի ամբողջ պատմական մասը հասկանալու համար՝ սկսած առաջին իսկ էջերից, առաջին իսկ նախադասությունից, պետք է նկատի առնել նապոլեոնի միջազգային դրուժությունը այդ ժամանակաշրջանում, և պատկերացնել Եվրոպայի բոլոր խոշոր պետությունների դերը:

1799 թվի Բրյուսելի 18-ի (նոյեմբերի 9) հնդաշրջումից հետո նապոլեոնը ռևոլյուցիոն Դիրբկտորիայի ստեղծման գնեկերով աստիճանից հասավ Ֆրանսիայի գլխավոր կառավարչի պաշտոնին՝ առաջին կոնսուլի կոչումով: Երեք տարի հետո, նա դարձավ կառավարության գլուխ՝ ցմահ: Իսկ երկու տարի հետո էլ (1804 թ. դեկտեմբեր) հռչակվեց Ֆրանսիայի կայսր: Դեռ 1796-97 թ. թ. առաջին իտալական արշավանքին, Կամպո-Ֆորմիոյի դաշնագրով թիվար իրավունք ստանալով տեր-տնօրեն լինել Իտալիայի հյուսիսում և Հաենտի ձախ ափին, նապոլեոնը 1800 թ. երկրորդ իտալական արշավանքով վերջնականապես ամրապնդեց իր այդ իրավունքը և մինչև իսկ ընդարձակեց այն: Եվրոպայում նա կարող էր ունենալ միայն երկու խոշոր հակառակորդ՝ Ռուսաստանը և Անգլիան: Ռուս երիտասարդ թագավորը շատ շուտ հասկացավ, թե որքան վտանգավոր են Եվրոպայի համար նապոլեոնի նվաճողական ձգտումները, սակայն հեշտ չէր նրա համար միանգամից հաղթահանել Պրուսիայի և Ավստրիայի ինքնիշխան և զգուշ էր իր ծրագրերի հետ, այնպես որ նապոլեոնը նախ և առաջ սկսեց պատրաստվել պատերազմելու Անգլիայի դեմ: 1803 թ. նա Բուլոնում, ծովափին մի հակալական ռազմական ամուր համար է պատրաստում՝ զորքեր կենտրոնացնելու համար, Սպանիայի հետ գաշակեցած մեծ նավատորմ է պատրաստում՝ Անգլիայի ափերը զորք իջցնելու, և գրավում է Եվրոպական ցամաքի վրա գտնվող Անգլիային պատկանող Հաննովերը: Հաջորդ, 1804 թ. նապոլեոնյան նավատորմը պետք է ակտիվ ծովային կռիվ շունչեր Անգլիայի հետ և նախապատրաստեր այսպես կոչված Բուլոնի արշավանքը. պատերազմն սկսվեց և 1805 թ. դեռ շարունակվում էր, բայց ծովակալ Վիլհելմը արևմտյան էլ հաջողությամբ չէր գործում, իսկ 1805 թ. Ֆրանսական ամբողջ նավատորմը գլխովին չարվեց Տրաֆալգարի մոտ: Նույն 1804 թվին տեղի ունեցավ մի դեպք, որը թեև վերաբերում էր Ֆրանս-

սայի ներքին քաղաքականության, բայց մեծ տպավորություն գործեց Եվրոպայում և առաջին անգամ շարժեց Եվրոպայի ակտիվությունը: Նապոլեոնը օգտվելով այն հանգամանքից, որ իր դեմ կազմված և բացված դավադրության (Կադուզայի և Պիշեգրյուի) մեջ խառն է Բուրբոնների մասը և, օտար երկրում (Քաղենի) բռնելով էնգիստի թագաժառանգին, մահապատժի ենթարկեց իր մոտ վեհաժողովի ղեկավար: Բուլոն արքունիքներում երկար ժամանակ դժգոհություններ էին լսվում Քաղենի թագաժառանգի մարտիրոսական մահվան առթիվ, բայց ակտիվ վերաբերմունք ցույց տվեց միայն Ալեքսանդր I, ետ կանչելով Ֆրանսիայից իր դեսպանին և խզելով դիվանագիտական հարաբերությունները: 1805 թվին Ֆրեյլիկ Շերբրի սպունում տեղի ունեցող զրույցները (որոնցով սկսվում է «Պատերազմ և խաղաղություն») տակավին չի են արքունական բուռն զայրույթով՝ նապոլեոնի դեմ:— նրան անվանում են հրեշ, նեռ, հախշտակիչ: ոչ ոք նրան չի անվանում կայսր (թեև նա արդեն կես տարի բացահայտորեն ու պաշտօնապես դա՛հ էր բարձրացել), ոչ էլ նապոլեոն, այլ պարզապես Բոնապարտ կամ նույնիսկ Բուռնապարտ, հեզոտորեն ընդգծելով նրա ոչ ֆրանսական ծագումը:

Բայց 1805 թ. հունիսի սկզբներին Վերդիո մեղքերն էլ ավելի շատացան, բորբոքելով Եվրոպայի զայրույթը. նախ՝ մարտ ամսին նա Իտալիայում թագավորություն կազմեց և Միլանում թագադրվեց որպես Իտալիայի թագավոր, իսկ քիչ հետո Ֆրանսիային կցեց Ջենովայի հանրապետությունը և Լուկան շնո: Հեց իր էլիզե քոչը. այս թարմ նորույթներով էլ սկսվում է վեպը:

Ա. Պ. Շերբրն ամեն կերպ աշխատում է, որ իշխան Վասիլին ասի իրեն, թե Ռուսաստանը Ֆրանսիային պատերազմ է հայտարարելու. Շերբրն իրավացի էր. այդ ժամանակ վերջանում էին Ալեքսանդրի նախածնունդով սկսված բանակցությունները Եվրոպական արքունիքների հետ: Մարտին դաշնագիր կնքվեց Անգլիայի հետ. այդ դաշնագրի նպատակն էր ստիպել նապոլեոնին, որ նա զորքերը հանի Հաննովերից ու Իտալիայից և ճանաչի Հոլլանդիայի ու Շվեյցարիայի անկախությունը: Սախիսն Ավստրիա ուղարկվեց գեներալ Վինցենտերոզին, որն իր հետ տարավ նոր դաշնակցության (Անգլիա, Ռուսաստան, Շվեդիա, Ավստրիա և Նեապոլ) ընդհանուր գործողությունների ծրագրերը: Ենթադրվում էր տատանվող Պրուսիային մասնակից անել դաշնակցության մասամբ հարկադրաբար: Այդ ծրագրի մասին ավելի մանրամասն խոսվում է XXV գլխում, ուր ժերունի Բալկոնսկին քննում է այն՝ որդու՝ իշխան Անդրիյի հետ: Հիշենք նաև Վոլոսիցևի հեռագրերը: Նապոլեոնը, տեղեկանալով իր դեմ կազմված դաշնակցության մասին. անսպասելի հաշտություն առաջարկեց Անգլիային, նպատակ ունենալով քայքայել այդ կոալիցիան: Անգլիան ինքրից Ալեքսանդրի միջնորդությունը, որը և Փարիզ ուղարկեց նույնիսկ էին, իրեն իր ներկայացուցչի: Բայց Բուլոնի հասնելով (հունիսի 15-ին) նույնիսկ էր տեղեկացավ Ջենովայի գրավման մասին և այլևս Փարիզ չգնաց: Պատերազմն այժմ անխուսափելի էր, և շուտով սկսվեց:

էջ. 30. Հաուզվից և Հարդենբերգ.— Պրուսական երկու միևնույններ, որոնք 1802 և 1803 թ. թ. փոխարինեցին միմյանց արտաքին գործերի վարչության մեջ, բայց երկուսն էլ, նապոլեոնի երկյուղից, անվճարական քաղաքականության էին հետևում:

էջ 31. Արքա Մորիս.— Այս անվան տակ հեղինակը նկատի է ունեցել իտալացի արքա Պիատոյին, որը մի ժամանակ եղել է դատախարակը երիտաւարդ Ադամ Չարտորիժակու (Ալեքսանդր I հայտնի խորհրդական, մինիստր)»
էջ. 32. Լաֆաւեր.— Շվեյցարացի գրող (1741—1801):

II

էջ 35 Շիֆր կամ Վենգել միապետական Ռուսաստանում նշանակում էր թագավորող կայսեր անվան առաջին տառը, որը, որպէս աչքի ընկնող նշան, կրում էին զգեստների վրա: Սասնավորապէս շիֆրը կրում էին պալատական կանայք, զարդարելով այն գահաբեզմանով:

էջ 36. «Փոբրիկ իշխանուհի Բալկոնեկայան» — ունեցել է իր նախատիպը, Տոլստոյն օգտվել է Լուիզա Վալկոնսկայայի (ծնյալ Տրուզոն) գծերից, որին Տոլստոյը ճանաչել է դեռ 1850 թ.:

էջ. 37. Ժարս — տղամարդու հնօրյա հագուստի մի մասը. վերին շապկի առաջին մասն ու օձիքը զարդարված անկվածներով ու ժանյակներով:

III

էջ 43. Մաղմուազել ժորժ (1786—1867).— Ֆրանսացի նշանավոր ողբերգու դերասանուհի, որ մի քանի տարի կապված էր Նապոլեոնի հետ: 1808 թ. հրավիրվեց Պետերբուրգի բեմի վրա խաղալու, ուր աղմկալի հաջողություն ունեցավ: Այդ ժամանակ Նատաշան լսում է նրա դեկլամացիան էլեն Բեզուսովայի սալոնում (վեպի II հատորը):

էջ 45. Մ. Ի. Կուտուզով (1745—1813). 1805 թվին արդեն ռազմական խոշոր համբավի տեր էր: Նկատերինայի ժամանակ մասնակցել է: տանկական պատերազմներին, վերցրել է Օչակովը, Իզմայիլը (Սուլտորովի հետ միասին), մի քանի անգամ վիրավորվել էր և զրկվել մի աչքից: Ավստրիային 50 հազարանոց բանակով օգնելու համար թագավորը կանչում է նրան գյուղից, ուր երեք տարի ապրում էր աչքից ընկած, որովհետև որպէս Պետերբուրգի ընդհանուր նահանգապետ շահնոյացավ Ալեքսանդր I-ին:

IV

էջ 50. Բուրբոններ.— Ֆրանսական թագավորական տուն, որ կառավարում էր Ֆրանսիան XVI դարից սկսած:

էջ 50. Կոնդի տոմմանիշը.— Կոնդե — մեծ գերդաստան էր Ֆրանսիայում, որ ազգակցական կապեր ուներ Բուրբոնների հետ:

էջ 53. Ռոյալիստներ կոչվում էին այն ժամանակ գահընկեց արված թագավորական տան կողմնակիցները:

էջ 54 Contrat Social (Հասարակական դաշինք) — Ժան Ժակ Ռուսսոյի քաղաքական գրվածքի անունը, որ բարձր էր գնահատվում ռևոլյուցիայի ժա-

մանակ. այնտեղ խոսվում է ժողովրդի՝ միապետին իշխանութունից զրկելու իրավունքի մասին:

էջ 53. Քրյուսերի 18-ը.— Հատ ռևոլյուցիոն օրացույցի 1799 թ. նոյեմբերի 9-ը, երբ Նապոլեոնը՝ Սիբեռի հետ՝ կատարեցին պետական հեղաշրջում, ռևոլյուցիոն իրենիտորիայի իշխանութունը փոխարինելով Նրեք կոնսուլի իշխանութամբ: Դա առաջին քայլն էր դեպի Նապոլեոնի կայսրութունը, որը բացարձակորեն հռչակվեց հինգ տարի հետո:

էջ 55. Գերինեի սպանությունը Աֆրիկայում.— Խոսքը վերաբերում է այն դատան միջոցներին, որոնցով ճնշեց Նապոլեոնը իր դեմ բարեբացած խռովութունը՝ Եգիպտական արշավանքի ժամանակ:

էջ 55. Հիվանդանոց Յաֆայում.— Եգիպտական արշավանքի ժամանակ Նապոլեոնը մարշալներ Բերտինեի և Բեսսիեի հետ այցելեց ժանտախտավորների հիվանդանոցը՝ սիրիական Յաֆայի նավահանգստում:

V

էջ 58. Ռեյինգոտ.— Այն ժամանակները նոր գործածվող անգլիական տղամարդու կրտսե վերին հագուստ, որ երկար էր ու լայն:

էջ 60. Կեսաւի երշտակաբան.— Հռոմեական զորավար Հուլիոս Կեսարի հիշատակարանը՝ Գաղիայում ունեցած պատերազմի մասին:

էջ 60. Կավալերգաղ.— Հեծգունդ՝ Ալեքսանդր I-ից սկսած: Այդ գեղի, ինչպես և ամբողջ գվարդիայի սպաները կազմված էին հարուստ և նշանավոր ազնվականներից:

VII

էջ 76. Իլյա Ռուստով.— Այս անձնավորութանը Տոլստոյը ավել է իր պապի Իլյա Անդրիյիչ Տոլստոյի ոչ միայն առանձին գծերը, այլ նրա ամբողջ դիմագիծը, ընտելությունը, ապրելակերպն ու սովորությունները, այն բուլորը, ինչ որ Տոլստոյը նկարագրում է և իր հիշողությունների մեջ. այդ ամենը մոտ նմանություն ունեն, այնպես, ինչպես կոմսուհի Ռոստովան ընդհանուր շատ բան ունի հեղինակի տատի՝ Պ. Ն. Տոլստայայի հետ:

էջ 76. Ռանիվիլով.— Ավան Վոյնյան նահանգում, որ մոտ էր այն ժամանակվա ավստրիական սահմանին: Ռուսական բանակը, Կուտուզովի գլխավորությամբ, պետք է հաղթարժեք Ռանիվիլովում և գնար Ավստրիա՝ ավստրիական զորքին միանալու:

էջ 79. Մոյկա.— Նեվա գետի բազուկը Պետերբուրգի սահմանագծում:

էջ 79 Փառասուն հազար հողի.— Սովորույթ էր հին Ռուսաստանում կազմածատիրոջ կարողությունը որոշել ճորտ բնակչության թվով:

էջ 80. Լոսեն.— Այն ժամանակվա հայտնի բժիշկ:

IX

էջ 87. Սալամանի.— 1805—1806 թ. թ. օպերային դերասանուհի, որ նկրկապայուցումներ էր առլին Ստեփանյան:

XI

էջ 91. Ա. Մ. Գրուբեցկայա.— Այս քրեդիանուր մորաքրոջ ազգանունը, որը միայն մի անգամ է հիշվում նրա վեպում, թեթևակի փոփոխությունն է Տրուբեցկոյ ազգունվան. նրա անձնավորությունը ազքատացած ազնվականի մի պայծառ տիպ է, ճարպիկ ու ամեն տեղ մտնող, որդու կարիերի համար ամեն ինչի պատրաստ:

էջ 93. Մաղամ դե-ժանլիս.— Ֆրանսացի կին-գրող XVIII և XIX դարերում, բազմաթիվ վեպերի հեղինակ:

XIII

էջ 103 «Անգլիայի վերջն էս.— կարծում է Պիեռը, նկատի ունենալով, որ նապոլեոնը հենց 1805 թ. ամառը վճռեց վերջնապես իր զորքը Անգլիայի ափը հասնել և Բուլոնում երկար սպասեց իր նավատորմին, մինչև որ համոզվեց, որ ծովակալ Վիլյուվյն իսկապես «անփուլթ է հղել», և շտապեց կանխել իր դաշնակիցների ելույթն իր դեմ՝ ցամաքում:

էջ 103. Պիբ.— Սա Վիլյամ Պիթ կրտսերն է, անգլիական գլխավոր միջնատր, որ ղեկավարում էր Եվրոպայի ամբողջ պայքարը նապոլեոնի դեմ՝ մինչև 1806 թիվը:

XVI

էջ 118. «Սուվորովին էլ ջարդեցին a plate couture».— Ֆրանսական արտահայտություն, որ բառացի անթարգմանելի է, նշանակում է՝ միանգամայն գլխովին: Խոսքը Սուվորովի շվեցարական արշավանքի մասին է: Շենշինն, այստեղ թերագնահատում է Սուվորովին: Ռազմական պատմությունն այլ կերպ է նայում Սուվորովի՝ Շվեցարական արշավանքին և ոչ ոք նրան սգրելու խովին չի շարդել:

XVII

էջ 121. Բոստոնի սեղաններ.— Այսինքն՝ թղթախաղի սեղաններ՝ բոստոն խաղալու համար, մի խաղ որ շատ տարածված էր այն ժամանակ:

էջ 126 Էֆոսեզ.— Հին շոտլանդական պար:

էջ 126. Անգլիեզ.— Անգլիական պար, որը փոխադրվելով Ֆրանսիա՝ կառվեց կոնարդանս, այսինքն մի պար, ուր պարող զույգերը կանգնում են դեմ-դիմաց:

XIX

էջ 137. «Ե՛րկու մարդ ֆաղֆե՛նու նագուտով...».— Սրանք դադաղավաճառներ են, որտեղ հուժմը ակնդետ հետևում էին մահամերձ հիվանդ ունեցող տներին և հարուստ թաղումներին, կաշռում էին սպասավորներին, ծածուկ

մտնում էին սենյակները, որպեսզի կանխեն իրենց մրցակիցներին և դադաղի պատվեր ստանան:

էջ 138. «Մեր սպասավորը զուլյա է զործում».— Մեր սպասավորները ճանախ կատարում էին կանացի աշխատանք:

XXIII

էջ 174. Կատակ-երգը Մալբորոկի մասին, որ կոճվ է գնացել, բայց հայտնի չէ երբ կվերադառնա. երգվում էր Ֆրանսիայում՝ XVIII դարի սկզբում, երբ անգլիական հերցոգ Մալբորոն (Malbrough)՝ անգլիական զորքի գլուխ անցած՝ կռվում էր Ֆրանսիայի դեմ: Մերուների Բալկոնսկին կանխակալ կերպով չի հավատում դաշնակիցների հաջողության:

XXIV

էջ 178. Նոֆու-կրիդ-վուրս-շնապս-աատ.— Բալկոնսկին ծագում է ավստրիական բարձր զինվորական հաստատությունը, որն իրոք շատ խանգարում էր Սուվորովին պատերազմների ժամանակ՝ Ավստրիայի հետ դաշնակցած միջոցին, այդ զորույցից 5 թե 6 տարի առաջ: Նա կռվում էր ապալատական ռազմական խորհուրդ, իսկ Բալկոնսկին դարձնում է այն «Պալատական ռազմական երշիկ-օղիական խորհուրդ»: Ստորև Տոլստոյն իր պատմվածքով հաստատում է Բալկոնսկու կարծիքը:

էջ 178. Սուվորով.— Ալեքսանդր Վասիլևիչ (1729—1800) ռուս ականավոր զորավար: Սասնակցեց Յոթնամյա պատերազմին՝ ռուս-տաճկական պատերազմներին Նկատերինա II-ի օրոք և մի շարք հաղթանակներ տարավ:

XXV

էջ 180. «Մի արկղիկ...».— Ծանապարհի փոքրիկ սնդուկ՝ ուտելու և խմելու պարագաներով, երբեմն և կերակրի պաշարով: Հնումը, երբ երկաթուղիներ չկային, շատ անհրաժեշտ էր ճանապարհորդության համար:

էջ 180. Օշակով.— Տաճկական բերդ՝ Դանուբի գետաբերանի մոտ, որ գրավեց Սուվորովը Պոտյոմկինյան պատերազմների ժամանակ:

էջ 182 «Ինչպես առում է Ս տ եր նը».— Անգլիական ռոմանտիկ և երգիծարան: Ստերնը (1713—1768) Տոլստոյի պատանությունների օրով նրա սիրած Նեղինակներից մեկն էր:

էջ 189. Լոմբարդի ռոմս.— Ռուսական լոմբարդները զեռ Նկատերինայի օրոք արքունական էին և տոկոսաբեր դրամական թղթեր էին բաց թողնում: Ահա այդպիսի տոմսի մասին է խոսում Բալկոնսկին:

I

- էջ 192. Բառուճառ.— Քաղաք Ավստրիայում, Իննե գետի ափին:
- էջ 193. Սանգվիհիկ.— Կենդանի, շարժուն, դուրազրգիւ մարդ:
- էջ 194. Յարիցիե Լուզ.— Հրապարակ լեռնազրադում՝ նեվայի ափին: Վաղուց կոչվում է Մարսյան դաշտ: Ծկատերինա II ժամանակից ծառայում էր իբրև զորատեսների և զորահանդեսների վայր:
- էջ 196. Կազախիե — Զինվորական կիսակաֆտան, կարճիկ պատմունճան:

II

- էջ 197. Կոտանեք.— Այսպես են անվանում գերմանացիները սլավոն ցեղին պատկանող խորվատներին, որոնք արյունակից են սերբերին:
- էջ 199. «Իզմայիլյան ընկեր».— Կուսուղովն ուղում է ասել, թե Տիմոխինին հիշում է տաճկական արշավանքի և Իզմայիլ բերդը վերցնելու ժամանակից:
- էջ 204. Հուսարական կոռնետ.— Հեծգեղի կրտսեր սպայական աստիճաններից մեկը:

III

- էջ 308. Էրցնեցոգի նամակը Կուսուղովին.— Տոլստոյը վերցրել է այդ ընդարձակ նամակի մեջտեղը (նամակն ամբողջութամբ տպված է Միխայլովսկի-Դանիլևսկու «Պատմության» մեջ):
- էջ 208 Կոմսեիկացիոն զիծ.— Զրային կամ ցամաքային հաղորդակցության գիծ:
- էջ 208. Ուլմ.— Բերդաքաղաք Դանուբի ափին: Ավստրիացիք այն ժամանակ ամրացել էին այդտեղ, հավատացած լինելով, թե Նապոլեոնը սովորական ճանապարհով՝ Շվարցվալդով գալով՝ դուրս կգա ուղիղ Ուլմի գիմաց: Նապոլեոնն իհարկե, անցավ մի ճանապարհով, ուր նրան չէին սպասում, հաջողից շարժել իր ճանապարհի վրա գտնվող մի քանի վաշտերի և կտրել զենքերը Մակի (որ բթամաորեն սպասում էր նրան Ուլմի ճամբարում) նահանջի ճանապարհները, այնպես որ Մակը՝ բանակի հետ գերի ընկավ առանց կռվի և ազատ արձակվեց մեն-մենակ, պարտավորվելով դուրս շլալ այլևս Ֆրանսացիների դեմ: Սակի էպիզոդը նկարագրելիս՝ Տոլստոյն օգտվել է ռազմական մի քանի պատմագիրների գրվածքներից:

IV

- էջ 216 Վասկա Դենիսովին Տոլստոյն ստեղծել է Հայրենական պատերազմի մի ինքնատիպ հերոսի՝ Դենիս Դավիդովի տպավորություններ:
- էջ 217. Մենտիկ.— Հեծելակի վերին բաճկոն:

էջ 217. «Միմպիլը տալիս է, պաղ՝ ուլը՝ խիում» — ազատ թղթախաղի տեր-միսնեք են:

VI

- էջ 228. Կովի տեղը և հանգամանքները VI և IX դուխներում այսպիսին են և լինել: Սակի պարտութունից հետո Կուսուղովն սկսեց նահանջել դեպի Վեննա, շարունակ պահելով ֆրանսական առաջապահի (Մյուրատի) առաջխաղացումը, «Հոկտեմբերի 23-ին նա՝ էնս քաղաքի մոտ անցավ սրընթաց էնս գետը: Մյուրատն ամբողջ օրը սեղմում, ճնշում էր իշխան Բագրատինի բանակը, աշխատելով անցնել նրա թիկունքը և կտրել գետն անցնելու ճանապարհը: Չհաջողելով իր մտադրության մեջ՝ նա գրեթե Բագրատինի հետ միաժամանակ մոտեցավ էնս գետին, աշխատելով կամուրջը տրեհել: Վերջնապահում գտնվող պավլոգրադյան հուսարների գունդը շտապով, կարտելային կրակի տակ վառեց կամուրջը, որը նախապես ծածկված էր դուրապառ նյուսթերով (Միխայլովսկի-Դանիլևսկի): Մյուրատը, որի հետ շարունակ ընդհարվում է Կուսուղովը, Նապոլեոնի զորավարներից էր, որին Նապոլեոնը մոտեցրել էր իրեն դեռ իր հյուսիստուսության օրերին. քրոջը տվեց նրան կնուսթյան, զարժրեց մարշալ և տվեց նրան նախ կայսերական պրինց, ապա — նեապոլիտանական թագավոր տիտղոսը: Իր ամբողջ ճարպկութամբ և անձնվեր քաջությամբ հանդերձ՝ նա սահմանափակ խելքի տեր էր, և հաջողություններից գլխապտույտի մեջ էր (նա եղել էր ճաշարանի հասարակ սպասավոր և զին. ծառայությունն սկսել էր, որպես շարքային): Նա հաճախ է երևան գալիս վեպում, և Տոլստոյը հաճախ զգացնել է տալիս նրա սահմանափակությունը, կսիկական լրջութունը և արտաքին արվ ու զարդի սերը:
- էջ 229. Գոպպելիլյուսմել.— Անիտնի օդի կամ լիկյուր:
- էջ 231. «Առաջին ճամար ժրությամբ ետ ցատկեց» — Հրետանու մարտկոցի կազմի մեջ մտնում էր 4—8 թնդանոթ, յուրաքանչյուրին սուպասավորում էին որոշ թվով զինվորներ՝ հատուկ համարներով, որոնց ամեն մեկի պարտավորությունը ճշտորեն սահմանված էր. մեկը թնդանոթի փողը մաքրում էր հատուկ խոզանակով, մյուսը ումբն էր տեղավորում, երրորդը նշան էր արժողում, իսկ ֆեյերվերները դնում էր «կալանք» (վառ պատրուկով մի բան, որ կովի ժամանակ ծխում էր շարունակ):

VII

- էջ 232. Բաճրգաղի գլխակներ (կիվեր). — որոնք ուս զորքի մեջ մասն Ալեքսանդր I-ի օրոք (առաջ եռանկյունիներ էին): Կիվերները զարդարված էին կապիչներով և փնջերով («թուխաններ») և բկի տակ կապում էին երկու կաշեկապով, որոնք պղնձ կոճակներ ունեին:
- էջ 233. «Երջիկներն էլ են փախչում» — Թուս զինվորներն ակնարկում են գերմանացիներին, նկատի ունենալով նրանց երջիկաթրությունը կամ այն, որ երջիկաթրությունը գերմանացիների աչքի ընկնող արհեստներից մեկն է:

VIII

էջ 244. Եւառեի է հեծվառը ներկայացնել...— Փրժավոր հրամանա- տարին՝ ալքի ընկնող գործաւոր մասին զեկուցելու դեպքում պետք բա- ինջյան պարզե կատանար:

IX

էջ 247. Մորոյն.— Նապոլեոնի մարշալներինց մեկը, որ կրում էր Տրեփի- զոյի (իտալական գավառ՝ Վենետիկի շրջանում) հերցոգ տիտղոսը:

էջ 248. Բոյունն.— Քաղաք Սորաւիայում. բնակիչներին կես մասը շխեր են: Նրանից քիչ հեռու շուտով տեղի ունեցավ Աուստրիացի ճակատամարտը, որով և վերջացավ ուսանկան արտասահմանյան արշավանքը 1805 թվին:

X

էջ 252. Բիլիբին.— Ենթադրում է, որ Տուստոյը վեպի այս էպիզոդիկ հերոսի նկարագիրը տալիս՝ նկատի է ունեցել Ա. Մ. Գորչակովին, որ 1856— 1883 թ. թ. վարում էր Ռուսաստանի արտաքին քաղաքականութիւնը:

էջ 257. Tete de pont.— Կայսերական ամառային պալատ Վեննայում:

էջ 257. Tete de pont.— Կամուրջի ամբուստիւն: Հնումը խոշոր կամուրջ- ների վրա բերդի պես բան էին կառուցում, որի հրետանինով պահպանում և պաշտպանում էին կամուրջը թշնամուց:

էջ 258 Ալեքսանդրի և պուլաւական բաղաժողի տեսակցութիւնը Բեռլի- նում.— Դա տեղի ունեցավ այդ զրոյցից (Պոտոսդամի) մի քանի օր առաջ: Սիապետները բարեկամութեան երգում տվին միմյանց, ձուկն խոնարհելով Ֆրիդրիխ II գերեզմանի առաջ, բայց Պրուսիան այսուամենայնիվ փաստորին հետացավ պատերազմից:

էջ 258. Կամպո ֆաւրմո.— Առաջին գլխի սկզբում. հիշվեց այնտեղ 1797 թվին կնքած հաշտութիւնը, որն ամրապնդեց Նապոլեոնի իշխանութիւնը Իտալիայում և Հռենոսի ակերում:

XI

էջ 262. ռՊ, Գեմուսքենս, ես հաճախում եմ քեզ ոսկի բերանից քառօթ.— Ասում են՝ հույն նշանավոր հոեոտր Գեմուսքենսը երիտասարդ ժամանակ ալքի էր ընկնում իր վատ առողջանութեամբ ու աշխատում էր այն շտկել, բե- բանը մանր քարեր դնելով, որպեսզի, որքան կարելի է, խոսքերը պարզ արտա- սանի: Ըստ Բիլիբինի՝ Իպպոլիտը նման էր Գեմուսքենսին միայն նրանով, որ մշտ մի բան խանգարում էր կապակցված խոսելուն:

XII

էջ 267. Էւնա դա է այն Տուլունը...— Տուլունը ծովափնյա քաղաք է Ֆրանսիայի հարավում: Ռեուլուցիայի ժամանակ՝ 1793 թ. ես անհետուր

եղամ անգլիացիներին: Առաջին անգամ Նապոլեոնն ալքի ընկավ այդ քաղա- քի ապստամբութիւնը ճնշելով. քաղաքը վերջնելուց հետո՝ գեներալի աստի- ճան ստացավ, և ալքոեղից էլ սկսվեց նրա կարիերան:

էջ 267. Կասկոնացի կամ դասկոն.— Կասկոնը գավառ է Ֆրանսիայի հարավում. գասկոնացիք օմտված են մեծ ֆանտազիայով. հայանի են որպես պարծենկոտներ:

XIII

էջ 275. Բագրատիոն.— Իշխան Պյոտր Իվանովիչ, գեներալ (1765— 1812), ալքի է ընկել շատ պատերազմներում. 1805 թ. ճակատագրական դրութիւնից փրկեց ուսական բանակը Շենգրաբենի մոտ. մասնակցեց Աուստրիացի, էյ- լաուի, Ֆրիվլանդի ճակատամարտերին: Սեռավ Բորոգիտիւում ստացած վեր- քից:

XIV

էջ 279. Նապոլեոնի համակը Մյուլուստին վերցված է Թիեոի «Histoire du Consulat et de l'Empire» գրքից:

XVIII

էջ 297. Կառն.— Հեծելազորի հարձակումը հետ մղելու համար, հետեա- կը դասավորվում է քառակուսի ձևով ու կազմում շորս արտաքին ճակատ: Սա կոչվում է կառն:

Ե Ր Ր Ո Ր Գ Մ Ա Ս

II

էջ 340. Պարիս և Հեղինե.— Հուկական միջակայն անձնավորութիւն- ներ, որոնք նկարագրված են Հոմերոսի «Իլիական» պոեմում:

IV

էջ 364. Քրա անվայել կո.— Կանանց ձեռք համբուրելն ընդունված էր բառը հասարակութեան մեջ: Բայց Բուրիներ վարձու մարդ էր, ուստի և նրան ալքոնական կնիչ հետ միեւնույն մակարդակի վրա դնելը՝ համարվում էր ան- վայել:

VII

էջ 379. Իգմայիլովյան զունդ.— Վեպի առաջին մասի X գլխում Բորիս Գրուբեյկոյը փոխադրվում է Սեմյոնովյան գվարդիական զունդը: Հեղինակը մտացել է այս հանգամանքը և նրան համարում է Իգմայիլովյան զնդի սպա:

էջ 301. «Կետի զանփան ակն բուշն-զորվիւ».— Ֆրանսերի ֆրագ նշանակում է քերիխնք, գնացեք քննելու»։ այս խոսքերը բերելով՝ հեղինակն ուզում է ցույց տալ, թե ինչպես էր արտասանում դայակը լսած ֆրանսերեն խոսքերը։
էջ 385. Առնաուտներ.— Ասում են տանիկները ալրանացիներին։

IX

էջ 395. Վեյրտներ.— Ավստրիական ռազմական զխավոր տեսարանը, որը կազմում էր ճակատամարտերի ծրագիրները։

XVII

էջ 444. Ուլան զնդի և արքայական հեծվաշտի փայլուն, բայց անհաշոգ հարձակումները տրված են դարձյալ ըստ Միխայլ-Դանիլևսկու։

XVIII

էջ 451—459. Ճակատամարտի վերջի առանձին էպիզոդները.— Ալեքսանդրի շքախումբը կորցնում է նրան, իսկ թագավորը ոչ մի կերպ չի կարողանում տեսնվել Կուսուզովի հետ,— ոչ ոք չի կարողանում ցույց տալ Ռոստովին, թե որտեղ են նրանք՝ երկուսն էլ, նաև Աուգեստի ամբարտակի տեսարանները— բոլորը Տոլստոյն ստեղծել է նույն պատմագրի պատմածների հիման վրա։

XIX

էջ 458. Նապոլեոնի՝ կավի դաշտը շրջելը և նրա զույցը իշխան Ռեպնիցի և Սուխուեյենի հետ.— Վերարտադրված է ըստ Միխայլ-Դանիլևսկու։

Ա և Նիկոլաևիչ Տոլստոյ

ՊԱՏԵՐԱԶՍ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

խմբագիր՝ Գ. Պ. Սարգսյան
Սուպերշապիկը Ռ. Ս. Զուլհակյանի
Նկարիչ և գեղ. խմբագիր՝ Ան. Ջ. Գասպարյան
Տեխ. խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան
Վերստուգող սրբագրիչ Լ. Ա. Դուկասյան

Лев Николаевич Толстой
ВОЙНА И МИР
(Роман)

Т О М I

(На армянском языке)
Издательство «Айастан»

Հանձնված է արտադրության 19/Ճ1
1974 թ.: Ստորադրված է տպագրու-
թյան 15/Վ 1975 թ.: Թուղթ տպագրա-
կան Մ 1, $84 \times 1081/32$ տպագ. 15,0
մամ. = 25,2 պայմ. տպ. մամ., հրատ.
22,4 մամ.: Պատվեր 2322: Տպաքա-
նակ 50000: Գինը՝ 88 կ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երե-
վան—9, Տերյան 91:

ՀՍՍՀ Մինիստրների Սովետի հրատա-
րակչությունների, պոլիգրաֆիայի և
գրքի առևտրի գործերի պետական կո-
միտեի Հակոբ Մեղապարտի անվան
պոլիգրաֆկոմբինատ: